



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



2010

~~150~~
~~180 - 001~~

ԱՐՈՒԵՍ

ԲԱՆԱԿԱՆ

2004.022

150 16
179-ԱՊ. Ս-65 Կ.

ԱՐՈՒԵՍՏ ԲԱՆԱԿԱՆ

ԿԱՄ

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՓՐԱՆԿԻՍԿԱՊՈՍԻ ՍՈՍԻԿԻ

ՓՈԽԵԱՅ Ի ՀԱՅ

Հ. ԱՐՍԵՆ Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ի ՄԻՒԹԱՐԵԱՅ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻՒԹԱՐԵԱՅ 45000

1857-ԱՅՀ

०८

ग्रन्थ-संकाल

९१५४

२०८८-५७

१००८

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂԸ

Ի բազմագէմ իմաստասիրացն գրոց յառաջի
կայիս թարգմանութիւն ածեալ մեր ըստ հարկե-
ցուցող հրամանի և ընտրութեան ուսմնասիրի ու-
րումն և արդարեւ իմաստասիրի առն վսեմականի,
թէպէտ և գործ ոչ ըստ արժանի նորա իմաստա-
սիրութեանն չափոյ համարիմք կատարեալ, սա-
կայն զփափաք ցանկացելոյն ընուլ կարծեմք՝ զնո-
րատի համբակացն օգուտ, պարզիմաց ոճով մա-
տենիս: Որ զի թէ և ընդ մեծամեծ իմաստասէրմն
ոչ կշռեցի խոր և նուրբ բանիւ և անօսր ընտրու-
թեամք, այլ շահիցն մասամք ոչ ինչ կարի պա-
կաս ՚ինոցանէն գտանիցի:

Սովոր խորհրդով ամենեցուն զսա դիւրահաս և
հեշտալուր առնելոյ, զգուշացաք ըստ կարի յամե-
նայն խրթնատեսակ անսովոր բառից, որ յատուկ
իմաստասիրականիքն կարծին կամ ուսմնականիք.
առ որ բազում են մեզ տալ իրաւունս, բայց ըզ-
մեծն ասել և զհամառուս, որ ինչ մէքս ոչ իմա-
նայաք՝ անվաւեր թուեցաւ զայլ ՚ինոսին աշխատ
ունել տարապարտուց: Եւ քանի զիսորախօս իմաս-
տասիրի կերպարանս՝ շատ համարիմք փոքր մի
յատակ հայեցի խօսել, որպէս առնէր մինչեւ ցայժմ
և առնէ ամենայն հայկազն, յորժամ իմաստասիրէ
քաջ՝ առանց իմաստասիրել կարծելոյ: Վկայեմք
զի չեւ ևս որպէս ցանկալին էր ՚ի կատարումն ա-
ծաք զայս յատակութիւն ոճոյ. այլ առ ժամայս

մեք այսչափ կարացաք կամ այսչափ իշխեցաք . ըն կալցի ոք որսպէս ախորժէ . եթէ գործն ոչ գովեսցի , գէթ անբասիր լիցի յօժարութիւնն :

Ի զանազան տպագրաց իտալական բնագրին հարազատագոյն գտեալ ընտրեցաք զՄիդուլանին , որ ընդ համօրէն այլ մատեանս Սուաւէի 'ի լոյս ելյամի 1815 . յորում ոչ սակաւ փոփոխումն յայլոցն տեսանի 'ի կարգ և յուղղութիւն : Բայց թէպէտ և ոչ ուրեք բառից և բայից եմք թարգմանիչ , այլ իմաստից և մտաց՝ 'ի գիրս յայս , ուր ոչ նոյն երկիւղածութիւն պահանջի որ ինչ յաստուածախօս տառմն կամ 'ի հարց և վարդապէտաց և կամ 'ի քաջ բնագիրս արտաքնոցն օրինակագրաց , սակայն առ ծայրաքաղ պատմութիւն իմաստասիրութեանն ազատօրէն ևս վարեցաք : Ուր ինչ ինչ մեզ ոչ ըստ մտի թուեցաւ , այլ է զի թերի և է զի աւելորդ և յանդէպս , զաւելին 'ի բաց զեղչեալ , զպակասորդսն՝ ընդ որս և զհայկականն՝ ուստեք ուստեք լցուցանել ջանացաք ըստ ժամուն փութոյ , առանց քակելոյ զհամնառօտութեանն ոճ : Յաւելաք զկնի և տեղեկութիւնս ըստ պիտոյից , և զհատուածս ինչ բանից մեկնութեանց առասպելեացն Նոննոսի ըստ հին թարգմանութեանն , և կամ զայլոյ ուրուք 'ի մերոց , որպէս ինչ առ ժամն յիշել մարթացաք . է որ առ հմտութիւն այլ և այլ կարծեաց և զրուցաց , և է որ 'ի զբօսանս ընթերցանելեացն : 'Նոյն պէս և 'ի տեղեկութեանց անտի որ 'ի վերջս բուն մատենին՝ էր ինչ որ մեզ 'ի զուր երևեալ , զանց արարաք . և որ հարկ ինչ և պատշաճ թուեցաւ՝ խառնեցաք 'ի կարգին փոքր 'ի շատէ կարձառօտս , աստեղանշան 'ի սկիզբն նոցա գրոշմեալ , որոշել յայլոցն՝ որ մատենագրին են :

ՅԱՌԱԶԱԲՈՆ ՄԱՏԵՆԱԳԻՐԻՆ

Բազմաց յիմաստասիրացն հաճոյ թուեցաւ մի բաժանել զբանականն արուեստ՝ ի բնագանցութենէ. և առ զանուանցն անգամ՝ որոշմունս խափանելը՝ զերկաքանչիւր միանդամայն յորջորջեն այժմ. Վերլուծութիւն գաղափարաց :

Եւ ինձ իսկ գլխովին այնպէս թուեցաւ, միահետ տանել զերկոսին գիտութիւնս, անդստին՝ ի 1778 ամէ հետէ, յորում ժամանակի յաթուոյ բարոյականին՝ ի բանականն հրաւիրեալ և՝ ի բնագանցականն, սկիզբն արարի հասարակաց դասատութեան՝ ի Միդուշան։ Եւ երկուս արարեալ գիրս, մի յաղագս քննելը և ձանաչելը զՃշմարտութիւն, և միւս յաղագս առաջարկելը զնոյն և ցուցանելը այլոց, յառաջնում անդ սկիզբն առեալ՝ ի մեկնութենէ ընութեան և զօրութեանց և գործոց հոգւոյն, բովանդակեալ էր իմ զամենայն որ ինչ հոգեբանութեան են կարեոր մասունք։ Անցեալ ապա՝ ի ձառս սկզբան գաղափարաց և ծանօթութեանց, բովանդակէի անդսանօր զամենայն առ էակաբանութիւն պատշաճեալմ։ Անտի առ հմտութիւնս անցանելով, ցուցեալ և անդ՝ թէ զիարդ հասանեմք՝ ի գիտութիւն գոյութեանն Առառուծոյ և յատկութեանցն՝ այլովքն հանդերձ, նուի զիարեոր մասն ընազանցութեան՝ զբնականն անուանեալ աստուածաբանութիւն։

Քաջ իսկ և սմին հետեւցի կարգի մինչդեռ ձայնիւ աւանդէի զդաս գիտութեանցս : Զի առ սղութեան ժամուն հարկաւորեալ 'ի կարծառօտ կացուցանել զամենայն , և ձայնիւ ընդարձակել ըզփոքը 'ի շատէ նշանակեալմն 'ի դրի , ամփոփումն լինէր իւրաքանչիւր գրոց : Բայց իբրև յամին 1791 կամ եղել ինձ 'ի տիպ արձանացուցանել զայսուիկ , և յայնժամ անթերի և ճոխագոյն բանից կարօտէին , տեսի զի վերլուծութիւն զօրութեանց և գործոց հոգւոյն՝ հանդերձ միանդամայն և գաղափարաց և ծանօթութեանց , այնչափ թանձրանայ 'ի հասակ , մինչ զի առաջնոյ գրոցն յոյժ անհամեմատ գոլ երկրորդին : Վասն որոյ 'ի հաւասարութիւն երկոցուն գրոցն՝ պատշաճ դատեցայ զկարևորմն և թ 'ի նախագրելոցդ վերլուծութեանց ակնարկել յառաջնումն , զկատարեալ գիտութիւնն այլում տեղւոյ թողեալ :

Այսպէս ահա բնազանցականին հրահանգք , յորում բաց 'ի հոգեբանութենէ , յէակաբանութենէ և 'ի բնական աստուածաբանութենէ՝ յաւելի և զտիեզերաբանութիւն , անշատեցան 'ի բանական արուեստէն : Բայց ոչ եթէ իբրև նոր իմն և առանձին գիտութիւն լինել , այլ որպէս թէ յաւելուածս՝ յառաւել բացայացտութիւն մասանցն յօդելոց ընդնմա :

'Նոյն կարգ պահեցաւ յերկրորդ տպագրութեան յամի 1793 փոփոխութեամբ իւկիք , նոյն և յայսմ պահեցի այլով իւկիք բարեձևութեամբ , յաւելեալ ոչ սակաւս 'ի կարևորաց և 'ի նոյն ինքն 'ի համառօտ պատմութեան անդ իմաստասիրութեան , որ 'ի մասունս մասունս անեաց և զարդարեցաւ :



ՀԱՄԱՌՕՏ ՊՈՏՄՈՒԹԻՒՆ

Ի Մ Ա Ս Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ՄԱՆԵՏՈՒԴԻՆ ԸՍՏ ՄԵՍԻՆ ԲԱՆԱԿԱՆ ԵՐՈՒԵՍԻ ,

ԲՆԱՉԱՆՑՈՒԹԵՍՆ ԵՒ ԲԵՐՈՅԱԿԱՆԻ

Փիլիսոփայութիւնն 'ի հելլենականէն 'ի մերս փոխաբերեալ իմաստասիրութիւն , ոչ զսէր միայն իմաստից և զմեծարանս յայտ առնէ , այլ և զպարապումն նոցին և ըզջան հմտութեան : Եւ զի ըստ կիկերոնի իմաստութիւն է գիտութիւն բնականաց իրաց և աստուածայնոց՝ հանդերձ պատճառօք , ապա և իմաստասիրութիւնն սահմանեսցի , Ուսումն բնական և աստուածային իրաց , և պատճառաց նոցին :

Աւանդէ նոյն ինքն կիկերոն , առեալ 'ի Հերակլիդեայ պոնտացւոյ՝ աշակերտէ Պլատոնի , թէ 'ի Պիւթագորայ անուանեցաւ իմաստասիրութիւն : Քանզի , ասէ , պարապեալքն յէիցս քննութիւն յառաջագոյն իմաստունք համարէին , և այնպէս իսկ յորջորջէին . այլ Պիւթագորայ գնացեալ 'ի Փլիուս , և անդ իմաստնաբար պերճաբանեալ զիրաց բազմաց առաջի 'Լեռնդեայ իշխանի փլիացւոց , զարմացաւ սա ընդ հանճար նորա և ընդ ճոռոմութիւն , և եւ հարց , ուստի իցէ նմա այնքան իմաստութիւն . իսկ նա ցածութեամբ արար պատասխանի . Ես ոչ իմաստուն եմ , այլ իմաստասէր : Աակայն պարկեշտ անունն՝ յապա ժամանակի և առ մեօք 'ի հակառակ պարծանս ամբարտաւա-

նութեան փոխեցաւ յոմանց : Զո՞ր ինչ ոչ թիւրեաց անձնահաճ տգիտութիւն :

Առ հինսն սովորութիւն էր բաժանել զիմաստասիրութիւն 'ի չորս մասունս . որոց երեք՝ արուեստ բանական , բնազանցութիւն ¹ և բարոյական՝ ընդ որով բովանդակի և քաղաքականն , տիրապէս մնաց պատշաճն . իսկ չորրորդն՝ բնաբանութիւն ընդ չափաբերութեան ² ունի զամենայն գիտութիւն զգալեաց :

Անդստին յառաջ ժամանակաց կարիք և բնաբոյս հետաքրքրութիւն 'ի զարմանալիս բնութեան յորդորեցին զմարդիկ յայլ և այլ հնարս՝ աճեցուցանել զհմտութիւնս իւրեանց : Սակայն իմաստասիրութեան հնագունիցն ազանց , ընդ որս և մեր Հայոցս , որ 'ի վարժս արհեստից և գիտութեանց կանխեցին քան զՅոյնս , և ապա խուժ և դուժ անուն առին 'ի նոցանէ , գոյզն ինչ ևեթ յիշատակք հասին առ մեզ 'ի վիպաց . վամն որոյ և մեք զնովաւ սղադունիւ անցանեմք :

ԳԼՈՒԽ Ա.

ԻՄԱՍՏԱՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. Խ. Տ. 8

•Բաղդէացոց .

Առաջինս 'ի մարզս գիտութեանց զքաղդէացիսն ասացին ոմանք , և թէ 'ի Զրադաշտէ ³ ընկալան նոքա զսերմանսն , զոր Խորենացին և սուրբն Եպիփան ժամանակակից Ներքրովթայ դնեն , բայց այլք զկնի : Բէլ որոյ նոյնպէս անստոյդ է ժամանակ , համարի սկզբնահայր աստեղաբաշխութեան առ նոսա :

Անացորդք ինչ իմաստասիրութեան նոցա որ կանս առ մեօք , բնազանցականք են և բարոյականք : Սակայն եթէ 'ի քաղդէացւոց և եթէ յայլաց հնագոյն աղդաց՝ զորոց խօսել կայ յառաջիկայսդ , չիք ինչ ուրուք մատեան բա-

բոյական, այլ առաճք ինչ և վճիռք միայն։ Իսկ զբնազան-ցութենէ՝ որ առաւելապէս զԱստուծով և զսկզբամբ աշ-խարհի պարապէր, սուղ ինչ միայն և անհաւաստի զըսցք են ՚ի միջի։

Ըստ ոմանց խոստովանէին Աստուած զոմն վեհագոյն, և ընդ նովաւ զանազան կարգս մոտաւորաց ՚ի նմանէ յառա-ջազայեալ։ Որոշէին երիս աշխարհս, զգալի, օդային և արփային։ և յիւրաքանչիւր ՚ի նոսա գնէին երիս երեւելի յատկութիւնս, ձե, լըյս և շարժումն։ Նմին իրի և զթիւն երեք՝ խորհրդաւոր իմն իմանային։ Իսկ ըստ այլոց, համա-րէին նորա զաշխարհ համօրէն իրեւ ծագումն ինչ Աստու-ծոյ. և Աստուած իմանային զհրեղէն տարբն ծաւալեալ ընդ բովանդակ բնութիւնս։ Յորմէ և տարրացաւ առ նո-սա կրակապաշտութիւն և արևապաշտութիւն, զի զարե-դակն միջակէտ հրոյ կարծէին։

Համարեցան ևս կարողութիւն ունել մարդկան խօսա-կից լինելոյ ՚ի ծածուկ և առնուլ զինդրելին ՚ի գասուց ան-տի աստուածածնունդ մոտաւորացն ընակաւորաց յաստեղս և յօդս կամ յերեսս երկրի, զոր և կոչէին գաղտնի գի-տութիւն կամ մոգութիւն։ Եւ ՚ի զանազան դրից աստե-ղաց խոստանային կանխագուշակ լինել մոտաւորացն ազ-դեցութեան ՚ի կենցաղականս, որ և անուանէր ախտարք կամ քաւդէութիւն։ Վասն որոյ և քան զամենայն ազգս քաղդէացիքդ մոլեցան միշտ ՚ի ժամադէտ և ՚ի ծննդաբաշխ ախտարս և յըլձութիւնս։ Սակայն աստեղագիտութեամ-բըն իւրեանց յառաջեցին դոքա յամենայն ազգաց՝ յաս-տեղաբաշխականն գիտութիւն։ Ինքեանք գտին նախ ըզ-կարգաւոր ընթացս արեգական ընդ աստեղատունս կեն-դանակամարին։ և առաջինք որոշեցին զմոլորական աս-տեղան յանմոլարից, նշանակեցին զփոփոխմունս լուսնի և զմոլորակաց, և հաստատեցին զերեսին հռչակաւոր շրջանս աստեղաբաշխականս, շար, ներ և սոս, և ՚ի յոգունց իսկ արդի աստեղաբաշխից յաւէտ դրուատեալ։

Առաջին ՚ի նոցանէ բերող քաղդէական գիտութեանց ՚ի Յոյնս գտաւ Պերող ոմն անուն, որ առ քոյրասէրն Պլոտ-լումեաւ իրը 280 ամաւ յառաջ քան զհասարակ թուա-կանն, և արձանաւ պատուեցաւ յաթենացւոց ըստ Պլի-նիոսի։

Պարսից և Հայոց .

ԶՀայս և զՊարսիկս 'ի մի կարգեմք , զի ոչ դո՞ն մեր յիշատակարանք ինչ ազգային նախնի իմաստասիրութեան , և նոյն համարի եղեալընդ Պարսիցն :

Ի քաղդէացւոց անցին գիտութիւնք առ մեզ և առ Պարսիկս , զօրս և բարգաւաճեցոյց այլ ոմն Զրադաշտ՝ առ ժամանակօք Դարեհի վշտասպեայ : Զրադաշտիս այսորիկ կան պատգամք ինչ , 'ի բազմաց յանվաւերականս գրեալք . որպէս և Զենտ կամ Զենտավեստա և Սադեերն անուանեալ հռչակաւոր մատեանք : Զանդիկն որ է աշակերտ Զենտ դրոցն՝ յիշատակի 'ի գիրս մեր , և առ Եղնկայ մանիքեցին ևս զանդիկ կոչի :

Դնէին սոքա երկուս արմատս հակառակս իրերաց . զմին բարուց սկիզբն և արարիչ , Որմիզդ կամ Որմըզդ անուն , և զմիւն չարի անուն Արհմն կամ Խարաման . և զայլ ոմն միջնորդ ընդ մէջ սոցա Միհր անուն , որ և Միթրա կամ Միթրոս⁴ , այն է սէր կամ Աստղիկ , և արեգակն : Զսոցին առասպելս հանդիերձ եղծմամք նոցին ունիմք և մեք տեսանել առ մերոյն Եղնկայ և Եղիշէի :

Ի բարոյական մասին իմաստասիրութեան , անմահութիւն ոգւոց և անտի կենացն հատուցմունք բարեաց և չարեաց խոստովանեալ էր առ նախնեօքն մերովք որպէս և առ Պարսս , ըստ որում երեի 'ի վէպս և 'ի պատմութիւնս : Եւ Պլատոն 'ի կատարած Քաղաքավարութեանց գրոցն 'ի մէջ առնու զառասպելական պատմութիւն կամ զպատմական առասպելս հայ դիւցազին Երայ կամ թէ ուղիղ ևս արդեօք ասել Արայ , որ սպանեալ 'ի պատերազմի և տամնօրեայ անարատ պահեալ 'ի մէջ դիականց , յերկոտասանին 'ի խարուկէ անտի վերակենցաղէ , և ճառէ անդ եղելոցն զհանդերձեալ դատաստանս ոգւոցն բարեգործաց և չարագործաց , և զկշիռ փոխարինի հատուցման պատուհասի և պսակաց ըստ արժանի որոց գործեաց ինչ ոք յաստի կեանս : Երեսի իմն 'ի վէպս յայս և յարութեան նշմարանք , կամ թէ փոփոխութեան ոգւոց՝ մարմնոց 'ի մարմինս : (Տես Բազմավէպ 1856 , Էջ 541, 566):

Առաջին որ եմոյծ զկարծիս սոցա առ Յոյնս՝ եղեւ Ոսթան

ոմն . և են ցայսօր առ Պարսիկս հետեղը հնոյ իմաստասիրութեան մոգաց , որ այժմ՝ ՚ի տաճկաց կեպր կամ կաւր անուանին :

Արարացոց .

Նախնի արաբացիք ես , մանաւանդ սաբայեցիքն , ունէին իւրեանց մոգս . և ՚ի վաղ ժամանակաց զարդարեալ էին գիտութեամբ բազմաւ , որպէս երեխ և ՚ի զրոցն Յորայ : Այլ յաղագս սկզբան չարի ՚ի վիճաբանութենէ անտի բարեկամացն Յորայ թուի թէ յոյժ միտեալք էին ՚ի կարծիս Պարսից :

Լոգման ոմն անուն յարաբացոց , զոր ոմանք Դաւթի ասեն ժամանակակից , գրեաց առասպելս , որպէս Եսովպոս ՚ի Յունաց :

Եղիպտացոց .

Յարգեցաւ մոգեանն և առ Եղիպտացիս , որք և ըստ հնութեան գիտութեանց զքաղդեացւովքն ելեել առնէին :

Ի սոցանէ ելնն սկզբնատարերը երկրաշափութեան , առ որ առաջնորդեաց նոցա հարկն որոշելս զչափ և զսահմանս անդաստանաց իւրեանց , որք շփոթէին ստէպ յողողելս Նիլոսի : Զճարտարութիւննոցա և յարուեստո հնարագիտութեան շարժմանց և գործեաց , վկայեն բրգունքն և կոթողք ՚ի նոցանէն կանգնեալք :

Ոչ սակաւ աջողակ էին և յաստեղաբաշխութեան . զոր ցուցանեն նոյն բրգունք կշիռ կառուցեալք առ չորեսին գլխաւոր կէտս երկնից , և կոթողքն՝ որ արեային ժամացոյցք լինել կարծին : Խելամուտ էին ես ստոյգ պատճառաց խաւարման արեւու և լուսնի , և գիտէին իսկ գուշակել , որպէս աւանդեն Դիոդոր և Դիոգինէս ՚Լյոերտացի կամ ՚Լյոերտեան : Յօրինեալ էր նոցա և աղիւսակս աստեղաբաշխականս պարագայութեան մոլորակաց և ուղղաշարժութեան նոցա և յետադարձութեան և առկայութեան : Բայց ոչ սակաւ հետամուտք էին և սոքա ըղճապատումն քաւդէութեան և մոգութեան :

Դիցաբանութիւն նոցա յոյժնման էր պարսկայնոյն, և Ուսիրիս էր առ նոսա Որմիզդ, Տիւփոն՝ Արհմն, և Արոս կամ Հորոս, որ է հուր, Միհր: Կարծի հաւանաբար թէ 'ի խորհուրդս իսիսի կամ իսիդեայ, զոր և ընկալան Յոյնք՝ խորհրդատօնս ասելով Դեմետրի կամ ելեսեանս, ուսուցանեին զմիութիւն Աստուծոյ և զինամակալութիւն, ըզհոգւոց անմահութիւն և զշատուցմունս ընդ բարեաց գործոց և չարեաց 'ի հանգերձեալ աշխարհին: Այս էին իսիդեան և ելեսեան խորհուրդքն թաքնութեանն այնքան բամբառեալք: Ի մնապաշտ ռամեկն, և վասն թաքնութեանն այնքան բամբառեալք:

Նախկին խնամակալու գիտութեանց գտաւ առ նոսա Աղողի ոմն կամ Հերմէս. զոր յետ բազում ժամանակաց յաջորդեաց Սոփոա ոմն նոյնպէս Հերմէս անուն կարդացեալ և Տրիսմեգիստոս, այն է եռամեծ⁶: Ի սորա անուն յածին մատեանք ինչ, զորս առ ստայօդս ունին բազումք:

Այնպիսի էր համբաւ իմաստութեանն եգիպտացւոց, զի 'Լիկուրգոս և Սոլոն մեծ օրէնսդիրքն Յունաց, և Թաւլէս, Պիւթազորաս և Պլատոն նախահարք իմաստափրութեան նոցա, և գրեթէ ամենայն իսկ երեելի գիտունք նոցա և բանաստեղծք ճանապարհ արարին յԵգիպտոս՝ լսել և ուսանել 'ի նոցանէ զիրօնս աստուածպալաշութեան նոցա և զիմաստասիրութիւն, և անտի անցուցին բազումք ինչ առ Յոյնս: Բազումք ևս ուսմամբ և գրովք 'ի հեռաստանէ աշակերտեցան նոցա. մինչև յիրաւի ասել զեղիպտացիսն վարդապետս Յունաց, և այնու բոլոր աշխարհի:

Հրեից .

Ըսթերցեալ ոմանց 'ի Գործս Առաքելոց, թէ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաստութեամբ եգիպտացւոցն, պատճառս առին կարծելոյ՝ զամենայն գիտութիւնս իւրեանց յեգիպտացւոց անտի ունել Հրեից: Ասկայն աստուածաբանութեան մասամբ այնչափ հեռի էին 'ի միմեանց, որչափ լոյս 'ի խաւարէ, և ճշմարտութիւն 'ի ստութենէ: Աքանչելի սահմանք և վճիռք բարոյականք՝ զոր ունիմք 'ի խրատական և 'ի մարդարէաճառ գրոցն՝ չեն և չեն բնաւ եգիպտացի մուրացածք:

Բայց յայլ մասունս իմաստասիրութեան ոչ թուին
Հրեայք բազում յառաջադիմութիւն արարեալ մինչեւ 'ի
դարձ բարելական գերութեանն : Այլ յետ այնորիկ բա-
զում ինչ առին 'ի Պարսից և 'ի Յունաց , և պառակտեցան
յայլ և այլ հերձուածս փարիսեցւոց , սադուկեցւոց և
յեսսեանց , զոր փոխանորդեցին ապա խորհրդաբանք կամ
ծածկագետքն անուանեալք : Փարիսեցիք ընկալան զստոյի-
կեանցն վարդապետութիւն , մանաւանդ թէ զշնականացն .
սադուկեցիք զեալիկուրայցն , և յեսսեանք զպիւթագորա-
ցւոցն , զորոց խօսեցուք զինի :

Իսկ ծածկագետ խորհրդաբանութիւն զանազանեալ էր
'ի տեսական և 'ի գործական : Առաջննն էր գաղտնի իմն
աւանդութիւն աստուածայնոց խառն ընդ եգիպտական և
քաղցեացի խորհուրդս , և ընդ պիւթագորեան և պլատո-
նական իմաստասիրութեան : Իսկ երկրորդն էր նոյնպէս
գաղտնի աւանդութիւն , որով արուեստաբար 'ի գործ ար-
կեալ զաստուածական անուանն և զձայնս գրոց , կարգա-
ւոր շարագրութեամբ նոցին մեծամեծս պանծային հրա-
շագործել :

Փիւնիկեցւոց .

Սանքոնիատոն՝ որ հնագոյն ասի լինել ժամանակաւ քան
զտրովական մարտն , և Ոքոս կամ Մոքոս և Մոսքոս՝ ա-
ռաջն վարդապետ հիւլեայ , այսինքն է նիւթոյ և անհատ
և անբաժին մարմնոց , ըստ Ստրաբոնի , զոր յետոյ նշանա-
կեցուք , սոքա երկոքեան ականաւոր իմաստասէքք էին
փիւնիկեցւոց :

Սոցա ընծայի գիւտ գրոյ , յոմանց և նաւարկութեան ,
ասելով՝ թէ սոքա եղին նախ զաստղն բնեռական առաջ-
նորդ նաւարկութեան :

Առ Եւսեբեայ կայ հատած ինչ բանից Սանքոնիատոնի
'ի վերայ աշխարհածնութեան կամ լինելութեան աշխար-
հի , այլ բազումք անհարազատ գնեն :

Հնդկաց .

Մերկիմաստակըն 'ի մերկութենէն անուանեալք՝ էին նախնի իմաստասէրք Հնդկաց : Պարագլուխ եղեւ նոցա բուդաս ոմն, և ապա յայլ և այլ աղանդս հերձան, յորս առաջինք են բրաքմանացն և գերմանաց կամ սամանացոց :

Ոչինչ այլ համարէին նոքա զաշխարհ, քան թէ ծագումն ինչ Աստուծոյ, մանաւանդ թէ և ծաւալումն նորին ինքեան Աստուծոյ. որով և յոյժ ճայնակից քաղղէացոցն գտանէին : Գնէին և մարմնափոխութիւն կամ հոգեփոխութիւն, որ է փոփոխումն շնչոց՝ մարմնոց 'ի մարմննս : Զայս կարծիս յետոյ Պիւթագորաս 'ի սոցանէ առ, մանաւանդ թէ յեգիպտացոց՝ առ որս նոյն կարծիք էին, և տակաւին՝ ցայսօր առ յոլովս Հնդկաց ընդունելի է : Գնէին զիմաստութիւն յանախտութեան և իբրև 'ի բռնի անգայութեան, որում աշակերտեցան զկնի ստոյիկեանք : Հնագոյն մատեան նոցա է անուանեալն վետա, առ մեզ անձանօթ :

Ճենաց կամ Սինեացոց .

Եւ Ճենացն իմաստասիրութիւն նման յոյժ էր հնդկայն յաղագս սկզբան աշխարհի և զկարծեալ անզգայութենէ հոգւոյ : Փոյսո ոմն համբաւի վաղնջական իմաստասէր լեալ Ճենացոց և առաջին օրէնսդիր . զոր յետ բազում ժամանակաց յաջորդեցին կոնֆուկիոս և Մեմսիոս կամ Մէմցու : Ընտիր մատեանք առ Ճենացիս են հնդեակ Գինկ, որ Ճառեն զկրօնից նոցա, զբարոյականէ, զքաղաքականէ և զպատմութենէ :

Են ազգիս այսորիկ վաղեմի դիտողութիւնք աստեղաբաշխականք : Ի գիւտս տպագրութեան, հրացան փոշոյ՝ որ է վառօթ, բեեռացուցի կամ կողմնացուցի և այլոց իրաց, կանխեցին յոյժ քան զեւրոպացիս : Արհեստից և գիտութեանց խնամք 'ի հեռուստ ժամանակաց մուտ կալեալ է առ նոսս : Բայց հայրենատուր խորանք նախնեաց, և անքակութիւն 'ի վաղնջուց սովորութեանց, և գժուարութիւն գրոյ նոցա, զի այնչափ են տառք որչափ բառք,

ուստի և սակաւուց է ուսանել բովանդակ, այս ամենայն նահանջ մէծ արկին նոցա 'ի զարգացումն գիտութեանց :

Երովացող, Մաշրիտանացոց, Թրակացոց, Ակիրացոց և Լեղտացոց .

Եին և եթովպացոց մերկիմաստակք իբր զՀնդկաց իսկ
այլով ամենայնիւ ընդ եգիպտացիս հաւասարէին :

Ատլաս առ մաւրիտանացիս կարծի յօյժ հմուտ եղեալ
աստեղաբաշխութեան . և աստի է առասպելն՝ բառնալ
նմա զերկինս 'ի թիկունսն :

Որփէի, որ զանզպամ մայրագութիւն թրակացւոցն զգօ-
նացոյց 'ի մի միաբանութիւն զնոսա ժողովեալ, մինչեւ ա-
սել առասպելին, թէ զհետ խոր ձգէր երգով զգազանս,
գտանին ցարդ տաղք ինչ, զոր այժմ առ հասարակ խոր-
թըս գրեն : Ամա ընծայի և կարծիք հրով վախճանելոյ
տիեզերաց և 'ի հրատէ անտի նորոյ աշխարհի ծնանելոյ,
աստեղաց մի մի աշխարհս գոլոյ, և լուսնի՝ երկիր աստան-
դական, լերամիք, ծովուք և քաղաքօք յօրինեալ: Բայց
հնագոյն քան զՈրփես են կարծիքդ, յասիացւոց և յե-
գիպտացւոց առեալ և 'ի Ցոյնս տարածեալ: Կարծեցաւ ո-
մանց թէ չիք ոք եղեալ Որփես կամ Օրփես, այլ այդ Ա-
րէֆ ձայն արաբացի է, ասեն, որ առանց ինչ ուրուք դիմի
զիմաստունն յայտ առնէ:

Աստուածն սկիւթացւոց էր Զամուքսիս, ընդ որում յետ
մահու ակն ունեին երթալ երջանկանալ: Այս էր նոցա
իմաստասիրութիւն :

Կեղոք կամ կեղուացիք ⁷ կոչէին յոլով և մեծամեծ ա-
զինք, ոչ յաւէտ հիւսիսականքն միայն Եւրոպէի, այլ և
գերմանացիք, գալլիացիք, բրիտանացիք, սպանիացիք,
լիւրիկեցիք, պաննունացիք, գէտացիք և մասն ինչ հնոյն
իտալիայ: Դիք կեղուաց էին Տետաս, Խս, Տարանիս, Ո-
դին, Տուխստոն և Ման: Դրուխտք էին նոցա 'ի քուրմն և
յիմաստասէրս, ախտարմոլք իբրև զարեելեայս: Հաւա-
տային 'ի յօյս հատուցման և տանջանաց յետ աստեացս
վճարելոյ. սակայն ոմն այսպէս և ոմն այնպէս: Ի բերդածս
Ոսիանի քերդողի կեղուացոց, ոգիք հրաժարելոցն երեւ-
թանան բազում ուրեք իբրև ընդ ամոց շրջալով: ՐԱՐԱ



ИЧНАЯ БИБ ИОТОЦИ

Ա. Ս. ԱՌԵՒՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԼՈՒԽ Բ.

ՀԻՆ ԻՄԱՍՏԱՄԻՐՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՑ

Գաղթականքն զորս ինաքոս և դանաւոս և կեկրովս
յեգիպտացւոց և կադմոս ՚ի փիւնիկեցւոց ածին յերկիրն
Յունաց, առաջնաք եղեն՝ ՚ի հրահանգել զյունական աղգն՝
զերբեմն վայրենին: ՚ի միջոցի աստ է առասպելապատում
իմաստամիրութեանն ժամանակ, զոր քերդողըն և բա-
նաստեղծք երգեին աղջի աղջի նուագօք. յորս հնագոյն
Ճանաչին ՚լինոս վարդապետ Որդեի, Հերակլի և Թամի-
րայ. Մուսէ՝ զոր ոմանք զնոյն ինքն Մովկէս կարծեն, Ամ-
փիոն, Եւմոլպոս, Մելամպոս, և Արփստէոս, որ այժմ առ-
մեօք անուանք միայն են: Սոցա զշետ եկին Եսիոդոս և
համբաւատենչն Հոմերոս, որոյ քերդաճք շտեմարան ա-
մենայն գիտութեան և իմաստութեան հռչակեին երբեմն,
իսկ այժմ առ բանիբունան արդարապես հաշուին անհա-
մեմատ սքանչելիք միայն և ծայր քերդութեան, և Հոմե-
րոս գլուխ և պսակ բանաստեղծից: Սակայն քերդողք,
մանաւանդ յետինք, ոչ առանձին դաս իմաստամիրութեան
կացուցանեն. զի կամ զօր ընկալան յազգեն՝ զայն պա-
հեն, և կամ ՚ի պանոյն բանի և առասպելեցաց զարդա-
րեալ խանգարեն: իսկ կարի նախնականացն անյայտ և ա-
ռասպելախառն զրոյցք ևեթ՝ ՚ի միջի կան:

Բայց բարդաւաճութիւն գիտութեանց և սէր՝ ծայրս
արձակեաց առ նոսա իբրև վեց հարիւր ամաւ յառաջ քան
զմեր հասարակ թուականս, յորում ժամանակի և համ-
բաւաւորքն ՚ի նոսա իմաստուն անուամք պատուեցան: Եօ-
թանց միայն եղաւ անունդ, Թալէսի միշետացայ, Առլոնի
աթենացւոյ, Փիլոնի լակոնացւոյ, Պիտոսակոսի միտիլե-
նացւոյ, Բիասայ պրիենեցւոյ, Կլէոբուլոսի լինդացւոյ և
Պերիանդրի կորնթացւոյ: Բայց երկու յետինքդ նենդաւ
և բոնութեամբ յափշտակեցին զանունդ, քան թէ վաս-

տակոց փոխարէնս ժառանդեալ։ Վասն որոյ ապա և Հել-
լէնք՝ ի մեհենի դելփականն Ապոլոնի արձանագրեցին ըզ-
տառդ Ե Ե, որ և առ նոսա հինգ նշանակէ, առ ՚ի ցուցա-
նելոյ՝ այնչափս ևեթ համարել նոցա ՚ի կարդ իմաստնոց։
Ավայն յաւելան յումանց ՚ի նոսա և Անաքարնիս յազգէ-
սկիւթացի, Փերեկիդէս սկիւրացի, Եպիմենիդէս կրե-
տացի, և Միտոն՝ զոր ոմանք լակեդեմոնացի ասեն, այլք
արկադացի, և կէպ կրետացի։

Զերկու մասունս իմաստամիրութեան՝ զբարոյականն և
զքաղաքական առաւել պայծառացուցին սոքա, օրէնս-
դրութեամբք և կարգաւորութեամբ պետութեանց, և
պէսպէս խրատուց և բարոյական առածից քարոզութեամբ.
որում ոչ սակաւ օգնեաց և Եսովպոս մերձաւոր ժամանա-
կաւ՝ առակաւոր իւրովքն բարուախօսութեամբք։ Թալէս
միայն պարապեցաւ յերկրաչափութիւն, յաստեղաբաշ-
խութիւն և ՚ի բնազննութիւն. և հիմնարկ յոնիական կամ
լաւ. ևս յունական դալրոցին, յորմէ ելին ապա այլք առ
հասարակ, որպէս առաջիկայդ ցուցանէ։

Յունական կամ Յոնիական դպյոց.

Թալէս հայրենեօք ՚ի Միլետաց քաղաքէ Յոնիոյ, յետ
երկար պանդխտութեանց յԱսիա, յԵգիպտոս, ՚ի Փինի-
կէ և ՚ի Կրետէ, գարձ ՚ի հայրենիսն արարեալ՝ եդ անդ ա-
թոռ վարդապետութեան, ուսուցանել զոր ինչ միանգամ
ճանապարհորդութեամբ իւրով և ջանիւ տեղեկացեալն
էր. և այսպէս սկզբնաւորեաց զառաջին աղանդն, որ յա-
նուն տեղւոյն յոնիական կամ յունական յորջորջեցաւ։

Ծանեաւնա յաշխարհի գերագոյն զոմն էիցս պատճառ.
Եգիտ յերկրաչափութեան զանազան տեխութիւնն. դի-
տեաց և գուշակեաց զիսաւարմունս լուսաւորաց. բաշխեաց
զերկինս ՚ի հինգ գօտիս, և եցոյց զհասարակածն. զամն
առ իւրե անյայտ և անստոյդ ՚ի Յոյնս՝ սահմանեալ կար-
գեաց յաւուրս երեք հարիւր վաթսուն և հինգ. յայտնեաց
զփոքր արջն. և յաւէտ իմն ջան տարաւ ընախօսութեան,
յորում զջուրն դներ նախասկիզբն ամենայն էից։

Յաջորդեաց զնա ՚ի վարժարանին Անաքսիմանդր նոյն-
պէս միլետացի, հնարող ժամացուցից, գնաոյ, արևացու-

ցակ սլաքի , և աշխարհագրական տախտակաց : Ակիզըն իւրաց եղ զանհուն , որով Արքատառէլ իմանայր զԱստուած , իսկ կիկերոն զանհութիւն բնութեան :

Զհետ նորա յարեաւ Անաքսիմենէս , նմանաբար և սա միլետացի , որ առաջին ճարտարեաց զարեային ժամացոյն , և զոդ եղ սկիզբն ամենայնի :

Ամա յաջորդեաց Անաքսագորաս կլազոմենացի , որ միտք ասացաւ՝ վասն քան զամենեսեան յայտնագոյնս խոստովանելոյ միտս ինն աստուածային , տիեզերաց յօրինիչ : Զամենայն ինչ միախուռն ասաց լինել 'ի սկզբանէ , և մըտացն որոշել զնոսա և յարդարել համահաւաքեալ զնմանասեր մասունսն , որ հրեղէն , որ օդային , որ ջրական և որ հողեղէն . զոր և Կմանամասունս անուանակոչեաց : Ժրիտեաց զաստուածութիւն արեգական և զլումնի , և զայլոց լուսաւորաց , որով և յաթենացւոց անտի ընկեցաւ յօտարութիւն՝ յետ հարուստ մի ամաց վարդապետ և մուերիմ լինելոյ Պերիկլի :

Ընդ սորա տեղակալեաց յաթէնս Արքելայոս ընագէտն կարդացեալ . վասն զի նախ ինքն տարաւ անդր 'ի Յոնիոյ զբնազննականն գիտութիւն , և ուսոց ՚ի դպրոցի , յոր և Սոկրատէս յաճախ երթեեկէր :

Առկրատեան դպրոց .

Սոկրատէս ծնեալ յԱթէնս 467 ամաւ նախ քան զհասարակ թուականս՝ 'ի Սոփրոնիսկոսէ արուեստիւ քանդակագործէ և յԱրետեայ մանկաբարձէ , թէպէտ և աշակերտ էր Արքելայոսի , 'ի մի կողմ ծրարեալ զբնաբանութիւն , ետ զանձն բոլորովին 'ի բարոյական իմաստաօիրութիւն , որոյ և հայր իսկ և նախագահ վարդապետ ճանաչի առ Յոյնս :

Բազում երախտիք են սորա և առ բանականն արուեստ . որ մեծ ևս յառաջադէմ ընթանայր առ հնովքն , եթէ սորա օրինակին և խրատուցն քաջ զհետ կրթեալ էին : Զեանայր սա և ասէր զահձնէ ոչինչ գիտել , զի զամբարտաւանութիւն ամենագէտն յոխորտացելոց և զամենայնէ յախուռն վիճողաց՝ իւրով չափաւորութեամբն յամօթարացէ : Եւ էր ուրեք զի տարակոյս մի առաջի արկեալ մե-

ծանուն բանամարտիցն, և էր զի այլ իմն, և մերթ զայս
և մերթ զայն հարցանելով զնոսա, ստիպէր տապնապէր
ճգրիտ տահմանել զբառս իւրեանց, և մանր համար տալ
զգաղափարաց իւրեանց, իջանել յընդհանուր և 'իտար-
տամ' սկզբանցյորս ճոխանային՝ 'ի մամնաւորս և յատուկա:
Եւ այսպէս անհնարին 'ինեղ արկեալ զնոսա՝ բռնադա-
տէր իսոստովանել ակամայ զտգիտութիւն իւրեանց :

Օրինակ զայս ուսոյց նա զուղիղ արուեստն բանական .
ոչ զայն մասն ևեթ՝ որ աւանդէ զօրէնս ցուցանելց զճը-
մարտութիւն, այլ և զեւրուծականն՝ որ 'ի գիւտ նորին
առաջնորդէ : Քանզի լաւագոյն շաւիղ գիւտի ճշմարտու-
թեան այն իսկ է զոր նայն գնայր . սկիզբն առնել 'ի խո-
հական երկբայութենէ, և ոչ մի ինչ ճշմարիտ համարէլ
մինչև յայտնի ապացոյցք վկայեսցեն . որոշել նախ զպայ-
ման ամենայն խնդրոց, մեկին տահմանել զբառմն և քննել
զոր 'ի նոսա դաղափարք . յամենայն քննութիւնս ոտն ոտն
յառաջ խաղալ 'ի մամնաւորաց յընդհանուրս, և մի եր-
բէք ընդ հակառակն :

Բայց Սոկրատէս ոչինչ եթող իւր մատեան . և վարդա-
պետութիւնք նորա բնաւին անհետ լինէին, եթէ աշա-
կերտք նորա Փասենոփոն, կերետ և Պլատոն չէին պէտ ա-
րարեալ աւանդել մեզ 'ի մատեանս իւրեանց :

Հասեալ սորա յեօթանասուն ամ կենաց իւրոց, զպար-
տեցաւ դիցն լինել անարդու . քանզի մի Աստուած դաւա-
նեալ, ուժդին կշտամբէր զառասպելեալ տոփանս և ըզ-
շամբշութիւնս աստուածոցն : Առ այնու դարձեալ թէ և
զմանկունս 'ի ծնողացն քեցէ, իբր 'ի մանկատոփութեան
աղագս ⁸ . քանզի խուռանընթաց դիմէին համբակացն դասք
'ի ըսւը նորա : Եւ այսպէս պարտաւորեցաւ յաթենացւոց
ըմպել մոլախինդ . յորմէ թէէպէտ դիւրին էր նմա ճողով-
րել փրկանաւորեալ զանձն արծաթոյ բարեկամացն՝ զոր
մատուցանէին, կամ փախտուի՝ զոր պատրաստեալ էր
նմա կրիտոն աշակերտն, կամակար յանձն առ զմահ դիւ-
ցագնաբար : Եւ բազում ինչ անխոռվ անձամբ առ աշա-
կերտմն ճառեալ զանմահութենէ հոգւոյ և զհանդեր-
ձեալ երանութենէ արդարոց, մեռաւ խաղաղութեամբ :

Բազում եղեն սորա աշակերտք, յորոց յոլովք յարու-
ցին ապա այլ և այլ աղանդս . որպէս Եւկլիդէս զմեգա-
րեանն՝ որ կոչեցաւ և վիճական և հակաճառական . Փե-

դոն զելիսականն , յորմէ և լերետրիականն . Պլատոն զակադիմեանն , յորմէ սերեցաւ ապա ճեմականն . Անտիսթենէս զշնականն , որ ընծայեաց ապա զատոյիկեանն . Արիստիալպոս զկիւրենեանն կամ զջեշտական , որ մասամբ իւկը սկիզբն ետ եպիկուրականին : Զայսմ՝ ամենայն աղանդոց նշանակեսցուք ինչ ինչ առանձինն :

Մեգարեևան աղանդ .

Եւկլիդէս մեգարացի , ոչ ալեքսանդրացին՝ որ իբրեւ յետ դարու հռչակեցաւ երկրաշափական տառիւքն , այնպէս հարաւ 'ի գիտութեան , զի իբրեւ մահուչափ արգելին մեգարացիք մի ումեք կոխեւ յԱմենս վասն մարտի պատերազմաց յարուցելոց ընդ միմեանս , առեալ զինքեամբ տարադ կանացի՝ զամենայն գիշերս զնայր լսեւ զԱռկրատ :

Քան զամենայն ինչ զբանականն արուեստ , մանաւանդ թէ զհականառութիւն բարգաւաճեցոյց , յօժարեալ յայն՝ ոչ այնչափ յանկեղծ ուսմնասիրութենի ճշմարտութեան , քան թէ 'ի մարմաջանաց բանակոռուութեան . մինչեւ զդըպը զոր կառուց յիւրում գաւառին , և յառաջ 'ի տեղույն մեգարեան անուաններ , վասն վիճող ընութեանն կոչեցաւ զկնի վիճական : Եւ քանզի վիճաբանութիւնքն լինեին առաջարկութեամբ և պատասխանատութեամբ , աստի հականառական ևս յորչորչեցաւ :

Յաջորդեաց ընդ նորա Եւկուլիդէս՝ հնարող բազմապատիկ իմաստակութեանց , որոց և զանազան այլանդակ անուանս կարդայր , խարու , գրուժան , զանխուլ , քօղաւոր , դիզան , եղջերիկ , ճաղատ , ասի և վարդապետ լւալ Դիմութենի իշխանի պերճախօսացն հելենացոց : Զկնի նորա յարեան Ալէքսինոս , Եւփանդ , Ապոլոնիոս , Դիոդոր կրոն , իքթիաս , կլինոմաք և Ստիլպոն , անխոնջ և կարկաչող վիճաբանք յաջ և յահեակ կոտորելով զամենայն ինչ , յորմէ և իմաստակ անուն ժառանգեցին :

Ելիսական և Երեսորիական աղանդ .

Փեղոն ելիսացի ,մի 'ի սիրելի աշակերտացն Առկրատայ ,
երաց դպրոց՝ որ նախ անուանեցաւ ելիսական , յորում և
փոխանորդեաց զնա Պլիսթենէս . և անցեալ առաջ 'ի Մե-
նեղեմ երետրիացի , կոչեցաւ երետրիական . և զնա փո-
խանակեաց Ասկլեպիագէս : ԶՄենեղեմէ և զԱսկլեպիա-
գեայ պատմի , թէ առ աղքատութեան իւրեանց և ուսմնա-
սիրութեան զցերեկ իմաստասիրացն ունկնդրութեան պա-
րապէին , և զցայդ աղային յերկանս 'ի պաճարանս պարենի:

Ակադիմեան աղանդ .

Յաշակերտս Առկրատայ գերահոչակ գտաւ Պլատոն ,
ծնեալ յԱթէնս 429 ամաւ յառաջ քան զհասարակ թը-
ւականս : Յետ մահուն Առկրատայ ելնա շրջել . եկն յի-
տալիա լսել 'ի պիտիագորեանց . զնաց և յԵփիպտոս հար-
ցանել զքուրմնն : Դարձեալ 'ի գաւառու իւր՝ կառոյց անդ
դպրոց 'ի տեղի ուրեք 'ի ներբռոյ հովանաւոր ծառոց , որ յա-
նուն տեառնն Եկադիմոսի անուանեցաւ նախ Եկադիմիա ,
և ապա Ակադիմիա :

Մշտնշենաւոր ասաց զնիւթ , բայց անկազմ և անկեր-
պարան , և խառն 'ի խուռոն վարեալ և ապա յԱստուծոյ
ածեալ 'ի կարգ և 'ի կերպարանս ըստ յաւիտենական գա-
ղափարին , զոր ոմանք ինքնուրոյն գոյացութիւն իմացան ,
և ոմանք զաստուածեղէն բանն կամ զօրինակն պատկե-
րացեալ 'ի միտսն Աստուծոյ : Եդ աշխարհի հոգի մշտնշե-
նաւոր , ամենայնի վարիչ ըստ Աստուծոյ տեսչութեանն :
Բայց 'ի վեհագունէս աստի Աստուծոյ՝ կարգեաց այլս ևս
կրսերագոյնս աստուածոց . և գես աստուածազարմն կամ
դիցազունս : Նոյնապէս աստուածածնունդք էին ըստ նման
և ամենայն հոգիք մարդկան , և նմին իրի մշտնշենականք
և անմահք 'ի բնէ . սակայն 'ի մարմինս արգելեալք՝ կորու-
սեալ իցեն կամ նսեմացուցեալ զառաջին տիպմն կամ
զտեսակմն , զորս հարկ է ստանալ վերստին հոգեորական
վարուք հայեցողութեան կամ խոկման , առ 'ի միւսանգամ

նմանող Աստուծոյ լինելցյ և դառնալ առ նա յետ մահու : Աւանդէ Եզնիկ մերս վարդապետ, թէ « Զաստուածեղէն շունչմն (մարդկան) և նա իբրև զառաջիննն փոփոխելիս 'ի մարմնոց 'ի մարմինս համարէր, մինչեւ 'ի սողունս անդամ և 'ի Ճճիս » : Զայս մարմնափոխութիւն 'ի պատիժ և 'ի քաւարան մեղաւորաց գնեւ Պլատոն . և նախ յարանց փոխին ասէ 'ի կանայս, և 'ի կանանց յանասունս, եթէ չգան յուղղութիւն . իսկ եթէ 'ի զգաստութիւն դառնան, յաստեղս երկնից վերառեալ դասին :

Ի պլատոնական դպրոցին յաջորդեցին կարգաւ Ապեսիպասու քեռորդի նորա, ապա Քսենոկրատէս⁹, Պոլեմոն, Կրանդոր, Կրատէս, որը անփոփոխ պահեցին զգարդակետութիւնս նորին, վասն որոյ և նախնի ակադիմիայն սորօք յօդանայ :

Բայց Արկեսիլայոս յաջորդ Կրատէսի եմոյծ անդը ոչ սակաւ փոփոխութիւնս, և ձեւացոյց զմիջին ակադիմիայն, յորում յաջորդք եղեն նորա Լակիդէս, Եւանդը և Եզեսինոս :

Զենի ապա կարնէադէս յաջորդ Եգեսինոսի արար այլ ևս փոփոխութիւնս, և կազմեաց զնորն ակադիմիա, յորում փոփոխեցան ընդ նորա կլիտոմաք, ապա Փիլոն ոմն, որոյ եկեալ 'ի Հռոմ 'ի պատերազմին Միհրդատայ՝ ստացաւ իւր աշակերտ և զկիկերոն . և հուսկ յետոյ Անտիոքոս ասկալոնացի, որում և կիկերոն և Ատտիկոս լսող եղեն յԱթէսս :

Առաջին անմիաբանութիւն երից ակադիմեան ուսմանցս էր 'ի վերայ ստուգութեան մարդկային գիտութեանց : Զի որովհետեւ է ինչ որ անընդմիջաբար զգայութեամբք ուսանիմք, և է ինչ որ մտաւորական խոկմամք, զսա յետինդ յատուկ ասէր Պլատոն ճնող Ճշմարիտ գիտութեան և ստուգութեան, իսկ զզգայութիւնս՝ կարծեաց և հաւանականութեան միայն : Արկեսիլայոս ընդ հակառակն՝ ոչ ինչ հնար է ասէր գիտել ; և իրաց իսկ բնութիւն չտանի զՃշմարիտ գիտութիւն . և կարնէադէս, թէ գոյ արդարե 'ի բնութեան իրաց Ճշմարտութիւն, բայց մեզ անհասանելի :

Յարեաւ և այլ աղանդ պլատոնական 'ի յետին ժամանակս՝ ասացեալ Պլատոնեանց կրսերաց, զորոց զկնի :

Ճեմական կամ Արիստոտելեան աղանդ .

Արիստոտել որդի Նիկոմաքի՝ բժշկի՝ ծնաւ. 'ի Ատագիրա 584 ամաւ յառաջ քան զբրիստոս։ Աշակերտեցաւ. Պլատոնի, որ կոչէր զնա հոգի և միտք իւրում վարժարանին։ Փիլիպպոս մակեդոն խնդրեաց զնա 'ի վարժապետ Ալեքսանդրի մեծի, ընդ որում եկաց ամս ութ. որ և ասէր 'ի հօրէն զեկեանսն ունել, և յԱրիստոտելէ զբարւոք կեանսն։ Մինչդեռ Քսենոկրատէս ուսուցանէր յԱկադիմիայն, ինքն դարձ արարեալ յԱմէնս երաց դասատուն 'ի վարժարանին կառուցեալ 'ի Պերիկլեայ երիտասարդանոց մարմնոյ կրթարանաց և զինուորական հրահանգաց։ Եւ քանզի Ճեմելով ուսուցանէր նա անդ, աշակերտք նորուն անուանեցան Ճեմականք, և յոյն ձայնիւ պերիպատիկեանք։ Աակայն են որ զնոսա յայդ անուն ասեն կոչեցեալս 'ի Ճեմելեաց վարժարանին, զոր Ճեմարանն ձայնէին։

Վարեաց զդպրանոց իւր ամս երեքտասան, և ապա 'ի զրապարտութենէ թշնամեաց փախուցեալ 'ի փալկիս, եթող անդ ընդ իւր զթէոփրաստոս երեսացի, որում յաջորդեաց Ստրատոն լամփակեցի, ապա 'Նիկոն տրովացի, Արիստոն կէացի, հուսկ ապա կրիտոլյայոս և դիոդոր։ Բաց 'ի սոցանէ 'ի նախնի Ճեմականաց են համարի Եւգեմոս և Հերոնիմոս հռոդացիք, Փանիաս երեսացի, Դիկէարք մեսանացի, Արիստոդրսէն տարենտացի, Դեմետրիս փալերեան և Երասիստրատ կէացի բժիշկ և անդամագնին։

Արիստոտելէս այր մեծ և ըստ արժանի գերահամըսւեալ 'ի գլուխս անձուկ դասակարգի տիրապէս գիտնաւորաց և ուժաւորաց ոմանց յիմաստափրութեան, իւրով ընդարձակամութեամբ և սուր հանճարով հաս կալաւ զրեթէ զբովանդակ արուեստից և զգիտութեանցն հոյլս, զքերդողականն, զճարտասանականն, զբանականն, զբնազնականն, զբարոյականն, զքաղաքականն, զքնազննականն, և մանաւանդ զեկենդանաբանութիւնն, յորում Ալեքսանդրի օժանդակելով զննութիւնն և գիւտս 'ի վեր երեկոյց, արդեաց իսկ սքանչելիս ¹⁰ :

Առաջին եղեւ որ ընդ զբով արկ զբանականն արուեստ,

թէպէտ և առաւել՝ 'ի հակածառական մասին պարապեալ քան 'ի վերլուծականն, և ուսուցեալ յաւէտ զօրէնս ապացուցանելոյ զճշմարտութիւն քան թէ գտանելոյ զայն։ Սակայն արդարանայ այնու զի որովհետեւ իմաստակացն պատիր արուեստք զօրացեալ էին յոյժ 'ի ժամանակին, կարեւոր քան զամենայն դատեցաւ ուսուցանել զյեղանակ պատերազմելոյ ընդ նոսա և յաղթահարելոյ։ Բայց և յայսմ բաւական է 'ի պարծանս անուան իւրոյ հրաշալին այն և խորին առած, թէ Զիք ինչ 'ի միտս մինչ չե եղեալ 'ի զգայութեան. զոր դաւանեցին աներկբայաբար և Արիստիպպոս, Եպիկուրոս և Զենոն կիստացի և Դարրոցականք. թէպէտ ոչ նա և ոչ սոքա կարացին զամենայն հետեւանս ուղիղ հանել վերլուծաբար յառածէ աստի, որոյ զօրութիւն և պիտանութիւն բացայատի յայժմու բանական արուեստոս. զի 'ի վերայ նորա հիմնի ամենայն ողջաւ խոհիցն իմաստափրութիւն։

Բանական արուեստի և այլ իմաստասիրական մատեանք բազում են նորա, զորոց ցանկ երկարատող հիւսէ Դիովինէս լայերտացի։ Այնմ ամենայնի ժառանգ եթող ըզթէոփրաստոս, յորմէ կտակաւ անցին առ Նելէս և առ ժառանգս նորուն. որոց երկուցեալ թէ գուցէ գրաւեցեն զնոսա թագաւորքն Պերգամայ, և տարցին 'ի մեծ մատենադարանն զոր 'ի կողմանց կողմանց ժողովէին անդք ժիրաժիր փութով, թաղեցին զնոսա յերկիր, ուր ապականեցան ըստ բազում մասանց։ Հանեալ անտի յետ հարիւր երեսուն ամի, վաճառեցան Ապելիկոնի տէացւոյ. որ 'ի քըմաց իւրոց և ըստ մտի խրամակարկատ արար զայն։ Զնոյն արար յետոյ և Տիրանիոն քերական, որում աւանդեցան 'ի Լուկիոսէ Աիլայէ. որոյ 'ի պարտութիւն մատնեալ զաթենացիս՝ ընդ այլ աւարն և զայնոսիկ տարեալ էր ընդ իւր 'ի Հռովմ։ Որպէս զիարդ և էինն խաթարեալք և եղծեալք՝ զառաջննն 'ի լոյս ընծացեցան յԱնդրոնիկէ հռոդացւոյ. որոյ 'ի կարգի եղեալ զբանականսն, զբարոյականսն և զբնախօսականսն, իբրև ետես եթէ են և մատեանք ինչ որ ճառեն զէակէ սեռականաբար, չգիտելով յոր դաս կարգել զնոսա, եղ զհետ ընախօսականացն, և անուն կոչեաց նոցա յետաբնական կամ բնազանցական, յորմէ սկիզբն կալաւ բնազանցութիւնդ անուն, ընծացյեալ յետոյ այնմ մասին իմաստասիրութեան՝ որոյ է զհոգեղէն գոյացութեանցն ճառել։

Կինիկեան կամ Շնական աղանդ .

Կինիկեանն աղանդ էառ զանուն նախ 'ի տեղւոջէն ,ուր Անտիսթենէս կանգնեաց զդպրոց իւր , հուպ 'ի մեհեանն Ներակի արտաքոյ Աթենայ Կինոսարգէս կամ Կինոսարգոս անուն ,որ այն ինքն է շուն սպիտակ կամ երագ¹¹ , և ապա 'ի շնական ցոփութենէ և 'ի խածանողութենէ , որ սովորութիւն էր այսր աղանդոյ¹² :

Ի վարդապետութեանցն Սոկրատայ այն առաւել հաճոյական թուեցաւ Անտիսթենի¹³ , որ ինչ հայեր 'ի վըշտամբերութիւն և 'ի կենցաղականացս ամենայնի արհամարհութիւն : Բայց յանչափս ձգեալ զայս վարդապետութիւն , ետ զանձն ոչ 'ի կամաւոր աղքատութիւն միայն , այլ ընաւ իսկ 'ի գծութիւն հատաւ , յաւելեալ 'ի նոյն և զանպատկառութի՝ , զոր նա ինքն աղքատութիւն անուանէր :

Նշանաւոր հետեւողք եղեն աղանդոյս Դիոգինէս սինուպեցի¹⁴ , Մոնիմոս , Անեսիկրիստոս , Կրատէս թերացի¹⁵ իսպարքեաւ կնաւ իւրով , Մետրոկլ , Մենիպպոս և Մենեդեմ :

Ստոյիկեան աղանդ .

Զենոնի կիտացւոյ 'ի կիսլրացւոց՝ որ առ ժամանակս ինչ աշակերտեցաւ Կրատէսի , տաղտուկ թուեցաւ շնական գծութիւնն և անպատկառութիւն , մանաւանդ իբրև 'ի լուր մատեաւ իմաստամիրաց այլոց աղանդոց , Դիոգորի կրոնի և Ստիլպոնի մեգարեանց , Քսենոկրատեայ և Պուլեմոնի ակադիմեանց : Վասն որոյ պահեալ զիստամբերութեանն վարդապետութիւն շնական , և զայն ամենայն մերժեալ , յարոյց նոր դպրոց 'ի դահլըճի միում՝ որ համբաւաւոր էր նկարուք Պոլիխնոտեայ . և աստի աշակերտք նորա առ Յոյնս ստոյիկեան կոչեցան , այսինքն սրահական :

Անդանօր յաջորդեաց նմա կլէանթ՝ զոր առ թանձրամտութեանն էշ ձայնէին աշակերտակիցք նորա . բայց ապա պինդապէս ջանիւ ուսմասիրութեան կարող գտաւ տալ նոցա պատասխանի , թէ Այն էշ եմ՝ որ ես միայն եմ բա-

ւական տանել զբեռն Զենոնի : Զհետ սորա յարեան Փրի-
սիպպոս , Զենոն տարսոնացի , Դիոգինէս սելեկիացի , Ան-
տիպատրոս սիդոնացի , Պանետիոս հռոդացի և Պոսիդո-
նիոս ապամեացի : Ստոյիկեան էր 'ի յետնոց և Եպիկու-
տոս ¹⁶ , որոյ խեցեղէն ճրագարան իբրև գանձ ինչ ցան-
կալի վաճառեցաւ , ասեն , երեք հազար դենարի . թերեւս
կարծելով գնողին թէ 'ի լոյս նորա ճարտար իմաստասի-
րեսցէ իբրև զԵպիկուտոս : Մատեան մի սորա կայ մինչեւ
ցայսօր , ոչ խրով գրութեամբ , այլ Փլարիոսի Արրիանոսի
աշակերտի իւրոյ , որ զիրատական վարդապետութիւնո
նորա 'ի մի հաւաքեալ դրեաց :

Ստոյիկեանք յոյժ հպատակեցին հակաճառութեան ,
զոր և օրինակէին 'ի փակ բուռն . որպէս և զճարտասա-
նութիւն՝ ձեռին պարզելոյ . և կարի նրբախօսք էին . բայց
բազում այն էր՝ զի նրբութիւն նոցա յարուեստ իմաստա-
կացն դառնայր , զոր 'ի մեկարեանց անտի ուսեւալ էր Զե-
նոնի :

Ի բարոյականին զառաքինութիւն միայն համարէին բա-
րի , և չար զախտս ևեթ , զայն ամենայն անզանազան ,
անխտիր և ումալէտ ասելով : Կամէին զիմաստունն ազատ
ամեննեին յախտից գոլ , զի սորա հակառակ են , ասեին , ա-
ռաքինութեան : Ճանաչէին մի միայն Աստուած , բայց հո-
գի աշխարհի զնա գնէին , և ընդ կոյր բախտին իշխանու-
թեամբ անկեալ . գովին ևեթ որոշեալք 'ի պլատոնեանց ,
որք զհոգի աշխարհիս արտաքոյ աստուածայնոյն զնէին :
« Ոմանք 'ի նոցանէ , ըստ մերոյն Եզնկայ , 'ի հրոյ էութենէ
ասեն զբնութիւն աշխարհիս , վասն զարեգակն առաւել
զարմանալի համարելոյ և զբնութիւն հրոյ սաստկագոյն
իմանալոյ : Եւ հայեցեալ 'ի միտոս , թէ զամենայնէ մտօքն
նկատել մարթեն , վասն այնորիկ զմիտս Աստուած համա-
րեցան , իբրև զշունչ երկնից և երկրի և ամենայնի որ 'ի
նոսա , և աչս զուսաւորան : Եւ զմարմին իբրև զայլն կո-
րըստական համարին , և զշունչսն փոփոխելի 'ի մարմնոց 'ի
մարմինս » :

Կիւրենեան աղանդ .

Հակառակ ամենեւին Անտիսթենի էին վարդապետութիւն և վարք Արիստիպոսի՝ ազգաւ 'ի Կիւրենեայ 'Լիւրիոյ . և զարմանք են զի 'ի միոյ դպրոցէն Սոկրատայ ելին երկու աղանդք այսչափ հակառակք : Զամենայն երջանկութիւն եղեալ Արիստիպոսի 'ի հեշտութեան միայն , զայն խնդրէր յամենայնի , կենցաղ վարելով հեշտակեաց . ուսաի և աղանդոյ նորա 'ի Յոյնն անուն կոչեցաւ Հեշտական : Փոխանորդեաց զնա որդի դստեր իւրոյ Արեւելայ 'նոյնպէս Արիստիպոս անուն . յորոյ աշակերտացն էր և Թէոդորոս ոմն , որ 'ի ցոփութիւն անդր յաւել և զյայտնի ամպարշտութիւն՝ համարձակ ուրանալով զէութիւն գերաբուն էին . յորմէ և անաստուած յորջօրջեցաւ : Ընդսորա յաջորդեաց Անտիպատրոս , ապա Եպիստիմիդէս , Պարերատէս , Եգեսիաս և Անիկերիս :

Եպիկուրեան աղանդ .

Եպիկուրոս Նեոկլի որդի Ծնեալ իբր 3/40 ամաւ յառաջքան զհասարակ թուականս 'ի Գարդեսիոն դիւղ մօտ յԱմէսս , թէպէտ և ոչ ումեք աշակերտեցաւ 'ի Կիւրենեանց , մանաւանդ թէ և պարծէր ևս ոչ զոք ունել վարդապետ , սակայն ընկալաւ զնոցա առածն , ծայր երջանկութեան զհեշտութիւն ասել : Այլ սա յաւելոյր զկնի թէ հեշտութիւն մեծ անդրորութիւն հոգւոյ է , և զայն չիք ունել առանց ողջախոհութեան և այլոց առաքինութեանց . և ինքն 'ի վարս իւր շափաւոր էր , ուրակեշտ և հրահանգ ¹⁷ : Բայց ոչ այնպիսի գտան աշակերտքն , որ եպիկուրեան անուամբ՝ արդեամբք և կրօնիսք գրեթէ առ հասարակ Հեշտականք եղեն :

Եպիկուրոս զառաջինն վարեաց զիւր դպրոց 'ի Միտիլինէ . ապա 'ի Լամփսակոն , և յետոյ 'ի դրախտի ուրեմն առերի Ամէնայ , զոր զնեաց 'ի նոյն պէտոս : ՅԱմէնս փախանակեցին զնա Հերմաքոս , Պոլիստրատոս , Դիոնիսիոս և Բասիլիդէս . 'ի Լամփսակոն Մետրոդորոս , Պոլիենոս և 'Առնդիոս :

Եթող կանոնս ինչ բանական արուեստի, զոր և վասն այնորիկ ախորժեաց կոչել կանոնական։ Երիս գնէր իրաւադաւոս կամ միջնորդս ուղղադատութեան։ զգայութիւն, նախագիտութիւն և հեշտութիւն կամ ցաւ։ ի զգալիս զգայութիւնք ինքնին ոչ խաբեն, ասէր, և որ անտի յառաջ գան կարծիք՝ ճշմարիտ են կամ սուտ, եթէ համաձայն և կամ հակառակ իցեն վկայութեան զգայութեանց։ Յիմանալիս հիմն ամենայն ստուգութեան գնէր զպայծառ ծանօթութիւն իրին և զծշգրիտ սահման։ ի գործնականս կամ բարոյականս պատուիրէր սիրել զհեշտութիւն՝ որ 'ի ցաւոց անմասն իցէ, և փախչել 'ի ցաւոց որում ոչ ինչ հեշտութիւն լծորդիցի. բայց հրաժարել 'ի դոյզն հեշտութենէ՝ որ մեծին խափան լինեցի, և տանել փոքր ցաւոց՝ առ 'ի մեծաց պահելոյ։

Ի բնազանցութեան մասին, այլ ինչ գոյացութիւնն քան զգգալիս ոչ իմանալով, ըստ նմին և զոգիսն կրոստականս ասաց և ապականացուս իբրև զմի 'ինիւթականաց։ Խոստովանէր զգոյութիւն աստուածոց, բայց բանիւ քան արդեամբք. քանզի մարմնաւորս ասէր և բնաւ պարապորդս 'ի իննամակալութենէ, մինչեւ ոչինչ գիտել և ոչինչ իննամտանել իրաց աշխարհի։ Այլ և յարարչութենէ աշխարհի կողղպտեաց զրիս. և ինքնակաց եղեալ հաւատաց զնս 'ի պատահական զուգաւորութենէ հողամազ նիւթոց, այս է՝ մանրիկ և անբաժանելի մասանց նիւթոյ։ Զայս կարծիս առեալ էր 'ի 'Աւկիալպոսէ և 'ի Դիմոկրիտեայ ելեականաց, զորոց տեսցուք զկնի. և բազումք, որպէս ասացեալ է, համարին զայն գիւտ Մոսքոսի փիւնիկեցւոյ։

Ահա այսքան և այսպիսի աղանդք կամ հերձուածք ելին 'ի յունական դպրոցէն, մանաւանդ թէ 'ի սոկրատեան։ Այլ ևս զնովին ժամանակօք ետ 'ի դուքս խոալականն դըպրոց, թէպէտ և ոչ այնչափ յորնաթիւս։

ԳԼՈՒԽ Գ.

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ ՆԱԽՆՈՑՆ ԻՑԱԼԻԵՑ

Պիհրագորեան աղանդ .

Առաջնորդ և հիմնադիր իտալական դպրոցին եղեւ բազմահռչակն Պիվժագորաս կամ Պիվժագոր, ծնեալ 'ի Սամոս իբրև 564 ամօք նախ քան զհասարակ թուականն : Առաջին վարդապետ նորա եղեւ Երմողամնդ, ապա Փերեկիդէս սկիւրացի 'ի 'Եսբոս, յետոց 'ի Միլետոս Անաքսիմանդր, և ինքն իսկ թալէս : Սորա խորհրդով սկսաւ ճանապարհորդել 'ի Փիւնիկիա և յԵգիպտոս, ուր ՚ի քրմաց անտի ուսաւ զամենայն խորհուրդս նոցա և զերկրաչափութիւն և զաստեղաբաշխութիւն, յորս յաւել և զերաֆըշտութիւն և զժուականութիւն վարժեալ 'ի մոգացն քաղդէացւոց և պարսից, առ որս գերի վարեցաւ 'ի Կամբիւսեայ եգիպտացւոց աշխարհակալէ : Գրաւաթափ եղեալ յիշխանէն կրոստնացւոց եին 'ի Ամոս . այլ տեսեալ թէ ոչ ուղիղ իմանան և խոտեն զուսումն իւր՝ անց 'ի Կրոտոն քաղաք տարենտեան ծոցոյն՝ յեղերս ծայրից խտալիոյ, զոր յայնժամ յունական հասուածք բնակիչք տեղոյն մեծ յունաստան կոչեին . և անդէն կառուցեալ իւր համալսարան, արար վաղվաղակի աշակերտս յոլովս :

Սորա յերկուս դասս եին բաժանեալ . 'ի հպատակս պիւթագորական կարդացեալս, և 'ի լոկ ունկնդիրս պիւթագորեան անուանեալս : Առաջինքն միշտ ընդ նմա կէին իբրու հասարակութեան իմն օրինօք, և հազորդ եին խորին խորհրդոց, և աւագ բանից վարդապետութեան նորա, արժանի եղեալ այնմ յետ երկար փորձոյ և երեմեան կամ հինգամեայ սաստիկ լութեան, և զցայդ միայն լըսէին 'ի նմանէ . և այն 'ի ներքոյ վարագուրի : Յերկրորդաց սակի եին ամենեքին որ ընթանային 'ի լուր վարդապետու-

թեանցն՝ զոր հրապարակախօս լինէր յաղագս գլխաւոր կարգաց բարոյականին :

Զիմաստասիրութիւն՝ զոր նախ ինքն անուանակոչեաց, բաժանէր ՚ի տեսական և ՚ի գործական : Յառաջնումն ճառակը զԱստուծոյ և զՀոգւոց և զզգալեաց . յերկրորդումն զկարգաց բարոյականին : Ընդ քողով թուոց առագաստեալէր բնազանցական վարդապետութիւննորա: Միակն նշանակէր զԱստուած, երկակն զնիւթն աստուածաստեղծ յաւիտենից, երրեակն զարարչագիր համեմատութիւն կարգի և խառնուածոյ նիւթոյն: Այլ պէսպէս ցոյցս իմաստից ունէին ամենայն ընդարձակ թիւք . և տասնեակն՝ յորում բովանդակին ամենեքին, անուանէր հանդիսարան ամենայն թուական և երաժշտական բանի, և նշանակ տիեզերաց: Ընդ ձեռամբ վեհագումին Աստուծոյ գնէր այլս ստորին աստուածս՝ այսս կամ գես և զիւցազունս սերունդըս նորա: Ի լումոյ ՚ի վեր ամենայն ինչ ըստ նորա յաստուածայնոյն տեսչութենէ ուղղեալ լինէր. իսկ ենթալումնեայքս՝ է ինչ որ ՚ի խնամակալութենէ, է որ ՚ի հրամանաց կապելոց կամ ՚ի ճակատագրէ և ՚ի բախտէ, և է որ ՚ի խորհրդոց մարդկան :

Եւ զՀոգիս մարդկան իբրև մասն ինչ աստուածական էութեանն խոստովանէր . և գնէր փոփոխումն շնչոց ՚ի մարմնոց ՚ի մարմինս մարդկան կամ անամնոց, ուսեալ ՚ի Հնդկաց և յեգիպտացւոց: Նմին իրի և Հրամայէր սպանանե զկենդանիս, և մի՛ ուտել: Սակայն զայդ ոմանք կարծեն արարեալ նմա առ ՚ի խորչեցուցանելոյ զմարդիկ յարենէ, և զբանշարակերութիւն առողջագոյն ճանաչելոյ¹⁸: իսկ մերն Եզնիկ, « Յայտ են, ասէ, պատճառքն ուստի զմիսն շնչաւրացն հրամայէր չուտել. որպէս թէ հոգի աստուածեղէն իցէ ՚ի մսեղիսն, և վասն այնորիկ չիցէ պարտուտել զմիս կենդանեացն: . . . Նոյնպէս . . . ոչ հրամայէ անաստնս զոհել դից, որպէս թէ չիցէ պարտ զոհել աստուածս աստուածոց. քանզի հոգի աստուածեղէն ասէ յանասունսն, և յայտ անտի է, զի երկիր պագանել (աստուածոցն) հրամայէ, և զոհել ոչ»: Բայց զպատուէրն չզոհելոյ անասունս այլք Եմակեդոկիլ ընծայեն :

Մարդկան երջանկութիւն գնէր զարձակուրդ ՚ի կապից և յարդելանաց մարմնոյ. յորում համամիտ գտաւ նմա և Պլատոն: Եւ յայտ հայեցուցանեն զանազանեալ աստիւ

ճանք մաքրութեան , համբարձման մոտաց , հայեցողութեանց և խոշտանդանաց մարմնոյ՝ զորս պատուիրէր :

Յաւիտենական համարէր զաշխարհս առ ՚ի յԱստուծոյ յարդարեալ , և նախ ինքն անուանեաց զնա յունարէն չօժուօչ , ծովոս որ է կարդ , արդ , զարդ : Եւ ՚ի շարժմունս լուսաւորաց իմանացը երաժշտական ինչ յարմարութիւն եղանակաւոր նուագաց և միաբանութիւն արուեստականաց , որ առ բացարձակ հեռաւորութեանն ոչ լինի մեզ լսելի : Ըստ ոմանց ՚ի միջակէտ աիեզերաց եղ զարեգակն անշարժ ետեղակալ , և զնովաւ շրջեցոյց զերկիր և զայլ մոլորակս այլ և այլ հեռաւորութեամբ : Եցոյց զլուսարերն և զգիշերավար զնոյն ինքն զարուսեակն գոյլ զաստեղմն եղ մէն մի աշխարհս , զլուսին և զայլ մոլորակն ընակաւորս . և զգիսաւորսն աստեղս ասաց լինել , ընդ ժամանակս ինչ իւրեանց շրջանին երեւեալս մեզ : Ազգի ազգի գիւտիւք ճնիսացոյց զերկրաչափութիւն և զերաժըլտութիւն , ընդ որս համարի և հոչակաւոր տեսութիւն հակուղղոյն և գիւտ միալարին :

Յաջորդեաց ՚ի վարժարանին Արիտեսոս , որ և առ իւր ՚ի կնութիւն զայրի նորին զԹիւանով¹⁹ , և ուսոյց զերկոսին որդիս նորա զՄնեսարք և զՃելաւգէս , որոց առաջինն յաջորդեաց զԱրիտեսոս . և զամ Տիւդաս կրոտոնացի . առ որով աղմուկ շփոթիւղեալ ՚ի կրոտոն՝ լուեաց դպրոցն պիւժագորական : Սակայն ուսումն նոցա մնաց բազում ժամանակս . և բաց ՚ի Զալեկոսէ լոկրացւոցն օրէնսդրէ և ՚ի Քարոնդասայ օրինադրէ սիբարիացւոց , զորս ոմանք երիցացուցանեն ժամանակաւ , ընդ հոչակաւոր աշակերտս Պիւժագորայ դասին Արիտեսա տարենտացի , որ գրեաց զբնութենէ աիեզերաց , յուն և ՚ի ձև արուեստի արկ զշարժաբանութիւն ²⁰ և Ճարտարեաց ՚ի նմա զՃախարակ և զպտուսակ : Փիլոլայոս կրոտոնացի աշակերտ նորին , որ առաջին համարի ուսուցող լեալ շարժման երկրի : Եւ փանտոս նոյնպէս կրոտոնացի , որ եցոյց զշարժումն երկրի ոչ տեղւոջէ ՚ի տեղի անցանել , այլ իբրև անուոյ միոյ զառանցիւքն : Ալկմէոն նմանապէս կրոտոնացի , զորմէ ասեն նախ ձեռնարկեալ ՚ի հերձուլ և զննել զմարդկային մարմինս : Տիմէոս լոկրացի . ՚ի սորա դրոցն որ յաղագս հոգւոյ աշխարհի և ընութեան՝ առ Պլատոն զբազում կարծիս իւր : Ոկելոս լուկացի , յորոյ աշխարհապա-

տում գրոցն բազում ինչ ընկալաւ Արիստոտէլ՝ ի գիրս
ձննդեան և ապականութեան : Եսպիքարմոս սիկիլիացի
իմաստասէր և բանաստեղծ, որ գրեաց զքնութենէ և ըզ-
բժշկականէն . արար կատակերգութիւնս հին ոճով, և
՚ի հելլենական այբուբենն՝ յաւել զերկոսին տառան ①
և X : Եմակեդոկլէս սիկիլիացի, որ սկիզբն ամենայն գոյ-
ից եդ զմիաբանութիւն կամ զսիրելութիւն և զհակա-
ռակութիւն, և տոչորեալ մեռաւ ՚ի բոց հրոյ Եսնէ լե-
րին, ուր կամաւ հոսեալ ասեն ոմանք զանձն ²¹ : Եւդոք-
սոս կնիդացի իշխան աստեղաբաշխութեան ժամանակին,
որոյ են և բազում մատեանք աստեղաբաշխականք, չափա-
բրականք և բնախօսականք : Իպատոս մետապոնտացի, որ
ուխտանենք պիւթագորական դատեցաւ, քանզի փոխեաց
զսահմանս վարժարանին և նշաւակեաց զծածուկան :

Ի սմին աղմնդոյ յետ ոչ սակաւ ժամանակաց երևեցաւ
և իպարքոս նիկիացի, որ առաջին յայտնեաց զյետախա-
ղաց շարժումն աստեղաց յարեւմոից յարեւելս, յորմէ լինի
կանխումն գիշերահաւասարից, որոց և զաղիւսական իսկ
յօրինեաց : Ոչ օտար համարելի է ՚ի գպրոցէ աստի և Ար-
քիմիդէս սիրակուսացի, երկրաչափական, գործիական և
բնագննական գիւտովք և ստեղծուածովք աշխարհաքա-
րող սյր, և մի ՚ի ճշմարիտ գիտնոց նախնի ժամանակաց :

Ելեական աղաւնու .

Այս սկիզբն առ ՚ի Քանականեայ կոլոփոնացւոյ, և ա-
նուն՝ ՚ի Պարմենիդեայ աշակերտէ նորա, որ էր բնիւ յԵ-
լէա կամ Վելիա քաղաքէ ՚լուկանիայ : Քանականէս վուա-
րանդեալ ՚ի Հայրենեաց, յետ հարուստ մի աստ անդ շըր-
ջելոյ՝ անկաւ ՚ի կատանիա և ՚ի Զամնկլէս, այժմս Մեսինա.
ուր ձեռն տուեալ ՚ի կարծիս պիւթագորեանց՝ որ յաղագս
մշտնջեննաւորութեան աշխարհի, մի միայն դոյացութիւն
ընկալաւ ՚ի նմա, զամենայն ինչ մի ասելով, մշտնջենա-
ւոր, անբաւ, անշարժ, անփոփոխ, գնդատեսակ, և զմին
զայն՝ Աստուած :

Ցարեաւ ընդ նորա Պարմենիդէս, որ միեցաւ և ՚ի ընա-
գիտութիւն . ապա Մելիսոս սամիացի, և Զենոն ելէացի՝
առաջին գրիչ օրինաց ինչ հակածառութեան, որք ըստ

Արիասոտելի առաւել յիմաստակացն առաջնորդէին առուեստ : Աշակերտ գտաւ Զենոնի Լևկիալպոս արգերացի ՚ի թրակիայ, որ զՔսենոփանեայ կարգածն թիւրեաց ՚ի նիւթական իմաստասիրութիւն, և կամ ասել՝ ՚ի վարդապետութիւն աշխարհակերտ հիւլեայց : Նմին իմաստափրութեան անսաց և Դիմոկրիտոս աբգերացի՝ աշակերտ նորուն Լևկիալպոսի, ընդարձակեալ զայն յոյժ . և այր եղեալ անխոնչ և սաստիկ հետամուտ բնագիտութեան, և յառաջեալ քան զամենեսին, անուանի եղեւ և զամենայնէ ծաղը ածելով : Խնոյն անկաւ և Հերակլիտոս եփեսացի . յայն ինչ ևեթ չմիաբանեալ Դիմոկրիտեայ՝ զի զամենայնէ արտասուէր, և արհամարհոտ մարդատեցութեամբ աւուրս բազում ՚ի կենաց իւրոց անցոյց յանտառ : Եւ ոչ գնաց և ոչ յարգեցաւ ուսումն նորա վասն անիմանալի մը-թութեան ոճոյ և բանիցն նորա, որով միայն հռչակաւոր եղեւ :

Ժամանակակից և բարեկամ Դիմոկրիտեայ, այլ և աշակերտ ասի լեալ մեծն այն և բազմահռչակ յամենայն ողջամիտ գիտութիւնս բնութեան, և անմահ ՚ի բժշկականին բանիւ և արդեամբք գերազանցեալն զամենեքումըք Հիպոկրատէս . որոյ պատառ մի ՚ի գրոցն թերթից մեացեալ մինչ առ մեզ՝ սքանչացումն է և պատգամ բնախօսաց, մանաւանդ բժշկաց :

Իդիմոկրիտեան աշակերտութենէ անտի ել և Պրոտագորաս աբգերացի, որոյ յերկրայս արկեալ զգոյութիւն աստուածոց, աքսորեցաւ յաթենացուց . և Դիագորաս մելցի, զորոյ զգլուխ տաղանդոյ կշռեցին ալթենացիք՝ եթէ ոք սպանցէ զնա, և երկուց՝ եթէ ողջ ՚ի ձեռն տայցէ . քանզի ժարհեցաւ ժխտել համարձակ, լուտալ և հայհոյել զդիսն : Պրոտագորայ աշակերտ եղեւ Պրոդիկոս քիացի անուանին յիմաստակաց, որ ընդ այլ աշակերտուն ստացաւ և զԵւրիպիդէս և զԽոնկրատէս . բայց պարտաւորեցաւ ըմկել մոլախինդ՝ իբրև անկրօնութեամբ խանգարիչ մանկութեան : Վերջին ՚ի նմին աղմանդոյ եղեւ Անաքսարքոս աբդերացի, հռչակելին արիութեամբ ՚ի համերութիւն չարչարանացն՝ զոր խոշտանգեաց զնա գոռոզն Նիկոկրէոն ²²:

Աստանօր գիտելի լիցի, զի չեք գրեթէ և ոչ ոք ՚ի նախնի իմաստասիրաց, որ ընդ ամպարշտութեան դատաստանաւ

չիցէ անկեալ բստ պատմութեանն : Աակայն ողջամիտք ոմանք, որոց փոյթ է պատիւ մարդկութեան և բանականութեան, արդարացուցանեն զբազումն 'ի նոցանէ, իբրև զԱռկրատ, յանկրօն և յանաստուած կարծեացն ամբաստանութենէ. բայց յոմանց, որոց ոչ իմաստասիրի, այլ մոլոյ և խելագարի անուն վայելէ, թէ բնաւ և իցեն ոք եղեալ այնալիսիք: Փանզի ասեն, թէ որ Ճշմարիտ իմաստասէրքն էին, նոքա զբազմաստուած կրօնմն և զպաշտամունս հայրենականս միայն ընդ հենգն հանեալ անարգէին, և զերախանս՝ մանաւանդ թէ զնախիրս դիցն շամբշելոց. այլ 'ի սիրտս իւրեանց, և բանիւ ևս՝ դաւանութիւն գիտութեան բերէին առ մի Աստուած ամենայնի և առ խնամ՝ նորա, և վասն ոգւոցն անմահութեան ճարտարամտէին: Խսկ ռամիկն զամենայն խոտորումն 'ի հարցն խորանաց՝ ամպարշտութիւն և հայհոյանս կարծէ. չպակասեն և թշնամիք որ բարրանս պատճառեալ յօդեն. ուստի և որ համարձակախօս գտան առ նոսա, 'ի մահ և 'ի վրտարանդութիւն կնքեցան: Միւս կարծիքն վտանդ է ևս յանաստուածիցն կողմանէ, որ զամենայն իմաստունս՝ անձանց իւրեանց նմանս կամին և քարոզեն իսկ, ստուարացուցանել զիւրեանց ջոլիքն և հօրան լինել:

Պիւռոնեան և Ակեպտիկեան աղաւեդ.

Պիւռոն կամ Պիհոռն յազգէ ելքացի աշակերտ Անաքսարքոսի համարեցաւ առաջնորդ աղանդոյն՝ որոյ օրէնք էին յերկուանալ զամենայնէ, թէպէտ նոյն օրէնք էին և միջինն ակադիմիոյ՝ զոր սահմանեաց Արկեսիլայոս: Այլ և այլ անուանք են աղանդոյս, պիւռոննեան՝ յանուն առաջնորդին, յերկուական, սկեպտիկեան՝ որ է զննական, խուզակ, անճառական և անհասական. այս ամենայն 'ի կրօնից անտի աղանդոյն, զի յաւէժ երկմտութեամբ ուսուցանէր զննել և խուզել զամենայն, և իբրև անհասից ումանց անքննութիւն խոստովանել և անհաւան կալ:

Արդ՝ ուսուցանէր Պիւռոն չլինել ինչ 'ի բնութեան իրաց Ճշմարիտ կամ սուտ, արդար կամ անիրաւ, բարի կամ չար. և անգիտութիւն ամենայնի և անհասութիւն

կամ անստուգութիւն . և զամենայն ինչ՝ ի կարծեաց և 'ի կոյր սովորութենէ մարդկան :

Եւ այսքան այլանդակ վարդապետութիւն եպիս իւր համախոհս, յորս նշանաւոր եղեն Եւրիոք, Եկատէոս աբդերացի, Նաւսիփանէս տէացի և Տիմոն փլեացի, ընդ ուրում շիջեալ էր աղանդոյս, եթէ յետ բազում ժամանակաց չէր արծարծեալ զնա Պտլոմեայ կիւրենացւոյ, զորոյ զբազմութիւն աշակերտացն թուէ Լայերտացին . յորս և անուանի գտաւ Աեքսոս ներհմտականն կարդացեալ առինքնակալութեամբ Անտոնինոսի Պիոսի, և ճոխ և հարուստ հմտութեամբ արար տասն գիրս իմաստակութեան, թէ անհնար է ունել ինչ գիտութիւն . որ կարծի ՚ի ծաղը և յայլանումն համարձակախօս և վճռալւան իմաստասիրաց ժամանակին :

Յաղագս Ետրուրացոց և 'Ղատինաց .

Ճարտարարուեստ անօթքն ետրուրացիք՝ գեղեցկաձեյօրինուածովք պէճնազարդք, որ առատ գտանին ՚ի թանգարանս Փլորենտիայ, Հռովմայ և Նէապոլսի, որպիսէք ոչ սակաւ զարդիս ևս ՚ի վեր երևեցան ՚ի գաւառս կապուայ և Նորլայ, թող զհոչակաւոր յիշատակարանս Պետառսի՝ զորս համարին հմուտք ձեռակերտս ետրուրացւոց քան զհելլենականն անդամ հնագոյնս, այս ամենայն ցուցանեն բաւականութեամբ, որչափ զարդացեալ էր յազատական արուեստս և յառաջ քան զհելլենացիս՝ աղգնայն վաղնջական, որ զաշխարհ մի մեծ իտալական կողմանցն ընյր յայնժաման : Աստի դիւրաւ է ևս հասանել քանիօն բարդաւաճեալ էին նորա և ՚ի գիտութիւնս, որ կից գնան կամ զինի ազատական արհեստից : Ի կրօնից սոցա բազում կարգս և ձես արարողութեանց գիտեմք առեալ հոռվմայեցւոց, մանաւանդ զհաւահմայութիւն և զիերդահմայութիւն : Իսկ այլոց կորուսեալ է յիշատակ, և չէր ինչ զնոցանէն հաւաստիք :

Ընդ հակառակն՝ նախնի հոռվմայեցիք, որ և լստինացիք, ՚ի սպառ պատերազմաց պարապեալք, ոչինչ հոգ տարան ազատական արուեստից և գիտութեանց . վասն որոյ ոչ մի ոք յիշատակինոցա իմաստասէր առ թագաւորօք, և

սակաւք ումանք առ բգեշխօքն։ Իմաստասիրութեան ինչ փոյթ ոչ երեւեցաւ առ նոսա, մինչև սկսան ելումուտ ու նելընդ Յոյնս. ուստի և ոչ մի ինչ աղանդ սահմանեցին իւրեանց, այլ 'ի բազմապատիկ աղանդոց անտի Յունաց՝ էր որ այսմ, և էր որ այնմ՝ աշակերտեցաւ։

Յակադիմեանն նուրիեցան Մ. Բրուտոս, Մ. Տերենտիոս Վարրոն ամենահմուտ այր, Մ. Պիսոն, և Մ. Տուլլիոս Կիկերոն, գլուխ ճարտասանից և իմաստասիրաց հռովմայեցոց, որոյ բազում մատեանք կան և առ մեօք։ Ի սույիկեանն Սկիալիոն ափրիկեցի, Մուտիոս Սկեւոլա, կ. 'Լէլիոս, 'Լ. Փելլապատոս, Մ. Կատոսկ, և յետոյ 'Լ. Աննէոս Սենեկա կորդովացի 'ի Սպանիոյ՝ վարժապետ Ներոնի. 'Լուկանոս, Պերսիոս, Դիոն ոսկիբերան, Եպիկտետոս 'ի Ներապոլսէ Փոխոգիայ ստրուկ Եպափրոդիտեայ՝ զոր և վերագոյնդ յիշեցաք, Փլարիոս Արքիանոս, և Մարկոս Աւրելիոս կայսր։ Յեպիկուրեանն 'Լուկրետիոս կարոս, որ զուսումն զայն աւանդեաց գրով 'ի քերդածին բնութեան էից, Տ. Պոմպոնիոս Ատալիկոս, 'Լ. Տորկուատոս, կ. Վելլյոս, կ. Տրեբատիոս, կ. Կաստիոս, Որատիոս Փլակիոս բանաստեղծ, ըստ ոմանց և կրսերն Պլինիոս։ Ի Ճեմականն Տիրանիոն, Անդրոնիկոս հռոդացի, Պլինիոս երեց՝ բարեացապարտն բնապատմութեան, թէպէտ զբաղեալ 'ի հոգս հասարակաց սակաւ ինչ ժամանեաց անձամբ քննել, և բազում ինչ 'ի մատենագրաց հաւաքեաց կամ 'ի բերանոյ ժողովրդեան, որով և յոլով առասպելս իներքս ընկալաւ, և Ալեքսանդր Ափրոդիտեան 'մեկնիչ կամ լուծիչ Արիստոտելի կարդացեալ, որ նախ 'ի Հռովմ առաջնորդեկաց Ճեմական դպրոցին կանգնելոյ 'ի Մարկոսէ Աւրելիոսէ և 'ի 'Լ. Վերոսէ, յետ մեծաւ նախանձու ուսուցանելոյ յԱլեքս և յԱլեքսանդրիա զարիստոտելեան աղանդն անխառն յամենայնէ։ Սա համարի գլուխ մեկնչաց Արիստոտելի, և այլք առ հասարակ յամենայն աղքաց սմա անսացին։ Առ Մարկոսիւ Աւրելիոսիւ էր և բժիշկ տան նորա, մեծ իմաստասէրն և բժշկապետ Գալենոս կամ Գալիանոս, երկրորդ յետ Հիպոկրատեայ. որ թէպէտ ճաշակեաց փոքր մի յայլ և այլ աղանդոց, բայց առաւել Պլատոնի ուսմանցն եղեւ սիրող և մեկնիչ։

ԳԼՈՒԽ Դ.

ՅԱՂԱԳԸ ԸՆՏՐԱԿԱՆ Ա-Ց

Մինչդեռ ազգ աղանդոց առ Նելլէնս և առ իտալիացիս
մարտնչէին ընդ միմեանս, մանաւանդ որ յառաջադէմք և
և պերճագոյնքն էին 'ինոսս հնդեքին սոքա, պիտօքագո-
րականն, ակադիմեանն, ձեմականն, ստոյիկեանն և եպի-
կուրեանն, այլ իմն նորօրինակ ոճ իմաստասիրութեան՝ որ
միայն է ուղիղ և հարազատ, սկիզբն կալաւ յԱլեքսան-
դրիա 'ի մուտս անդ հասարակ թուականիս. և ոճն այս
ինչ է. չյարել յաղանդ ինչ, այլ ընտրել յամենեցունց
զբանաւորն :

Նորս այս գպրոց յոճոյ անտի էառ զանուանակոչութիւնն
Ընտրական. և սորա հայր եղել Պոտամն ընիկ Ալեքսան-
դրու, ուր վասն առատաձեռնութեան Պոտլոմեանց և վասն
մեծի մատենադարանին 'ինոցանէ կառուցելց՝ ընթանայր
յայնժամ աստի և անտի խուռն բազմութիւն գիտնաւո-
րաց և իմաստասիրաց յամենայն կարգէ :

Յաշս անձանց ընտրական իմաստասէրք թուեին և մո-
լեքն այնոքիկ աղանդապետք նորածին եկեղեցւոյ, Ակմոն
մոդ, Մենանդր, Սատուռնինոս, Բասիլիդէս, Վալնտի-
նոս, Կերինթոս, Մարկիոն և Մանի և այլք, որոց արեւե-
լեան, եգիպտական, հելլենական և ալեքսանդրեան ա-
ղանդոցն արբեցութեամք և մրրկաւ գլխագարութեան
դանդաշեալ, ժայթքեցին զայլանդակ հրեշտ մոտաց իւր-
եանց, և յարուցին հերձուածու իմաստասիրութեան և աս-
տուածաբանութեան, և թքալից մերժեցան 'ի բանէ և յե-
կեղեցւոյ :

Իսկ 'ի խոհական ոճ ընտրական իմաստասիրութեան
ձեռն ետուն առ ժամայն նախնի քրիստոնեայք . որոց հեր-
քեալ ընաւին զեպիկուրեանն աղանդ՝ իբրեւ յոյժ հակա-
ռակ աւետարանին, յայլում ամենայնի որ ոչ ընդդէմ ե-
լանէր նմա՝ ընտրեին 'ի հակաճառականն զԱրիստոտել, 'ի
բարոյականն զստոյիկեանս, և յաստուածաբանականս և

որ յաղագս դիւաց կամ հրեշտակաց և հոգւոց մարդկան՝ զՊլատոն, իմաստասիրացն բոլորեցունց վեհագոյն զսա դասելով, վասն վարդապետութեանց սորա ընտանեգոյն քրիստոսական կրօնիցս թուելոյ :

Առաջին ՚ի դպրոցէ աստի ՚ի քրիստոնեայս եղե ըստ Աիդետայ Աթենագորաս, որում յաջորդեաց Պանդենաս, ապա մեծն Կլեմէս ալեքսանդրացի, Երանոս, Յուստինոս վկայն, Տերտուլիանոս, Մինուտիոս կամ Մինուկիոս Փելիքս, Որոդինէս, Հերակլէս, Անատոլիոս լաւոդիկեցւոց եպիսկոպոս, Առնոբիոս, Ղակտանտիոս, Եւսեբի, Սինեսիոս, Ամբրոսիոս, Աւգոստինոս, Հերոնիմոս, Բասիլիոս, Գրիգոր աստուածաբան, Յովհան Ոսկերերան, և այլք բազումք ՚ի հարց սրբոց նախնոյն եկեղեցւոյ :

Եւ ՚ի մեզ ՚ի հայս, յետ երկուց մեծամեծ լուսաւորացն իմաստից, Ասհակայ և Մեսրովպայ, Եղիկ իմաստասէր և պերճաբան վարդապետ կողըացի, որ քաջ և ճարտար կշտամբեաց զզանազան մոլորութիւնս նիւթապաշտից, զքեշին Պարսից և զմանիքեցւոց և զՄարկիոնի, և ինչ ինչ ՚ի թիւր կարծեացն հելենացւոց: Եւ թէպէտ ինքն ևս զթէ ուրեք ուրեք ՚ի բնագիտականս, սակայն և այնպէս այն մատեան նորա սքանչելի օրինակ է, որպէս հայերէն շարագրութեան, նոյնպէս և ուղղախոհութեան և կարգաբանութեան: Զկնի նորա պայծառացաւ Դաւիթ անյաղթ ներդինացի գրովքն Ասհմանաց, յորում ոչ սակաւ հմտութիւնք երևին և կարգաբանութիւն. Թարգմանեաց և մեկնեաց և զգիրս ինչ Արիստոտելի, եթէ արդարե մեծին Դաւիթի իցեն այն թարգմանութիւնք և լուծմունք, բարի կարծելով առնել ազգին: Բայց եթէ ոչ այնպիսի այլանդակ ոճով և լեզուով եր վարեալ յայն շարագրածս, թերեւս փոքր մի աւելի օգուտ գործէր: Մովսիսի խորենացւոյ մերոյ քերթողահօր յոյժ գերահռչակեալ եր անուն զայնու ժամանակօք քերթողութեամբ և իմաստասիրութեամբ. բայց առ մեօք գրեթէ ոչինչ գտանեմք յամենածախ ժամանակէն մնացորդ այնքանոյ անուան արժանաւոր, բաց ՚ի համառօտ գրոցն աշխարհագրութեան, զորմէ և ոմանք երկրայաբար ունին զկարծիմն: Ասկայն այլ ամենայն գրուածք նորա թէպէտ և ոչ բնիկ իմաստասիրականք, անշուշտ վկայութիւն մատուցանեն աստ անդ բազմահմուտ իմաստասիրութեան նորա և մեծի անուանն :

ԳԼՈՒԽ Ե.

ՏԵՂԱԳՍ ՊԼԱՏՈՆԵՑԱՑ ԿՐՍՆՐԵՑ ԿԵՄ ՑԵՑՆՈՑ

Յընտրականացն դպրոցէ յարեաւ աղանդ Միաւորչականաց կամ պլատոնեանց կրսերաց, որոց ջան էր իբրև թէ զամենայն աղանդաց վարդապետութիւնս 'ի մի միաբանութիւն բերել, որոց և գլուխ եղեւ Ամմոնիոս Սակկա ալեքսանդրացի յազգէ, 'ի ծնողացն քրիստոնեայ : Որոյ վարժեալ նախ յընտրականն իմաստափրութիւն՝ ըստ ոմանց 'ի Պանդենայ, և ըստ այլոց 'ի մեծէն Կլեմայ ալեքսանդրացւոյ, բայց ապա վտարանիցեալ և 'ի դիցապաշտութիւն զառածեալ ապականեաց չարաչար զուսումնն, զոր յընտրականացն էր ընկալեալ : Տեսեալ թէ իմաստասէքք քրիստոնէից առ մեծ ինչ ունին զՊլատոն, առ 'ի յաղթահարել զքրիստոսական հաւատո՞ գուն գործեաց ցուցանել թէ որ ինչ բարի գտանի 'ի վարդապետութիւնս քրիստոնէից 'ի Պլատոնէ աւանդեալ էր յառաջագոյն : Վասն որոյ յամենայն զօրութենէ հնարեցաւ առ իմաստս աստուածեղէն տառիցն 'ի քարշ ածել զբանսն Պլատոնի թիւր նշանակութեամբք և բռնի մեկնութեամբք աստանդելով, մինչեւ կարծիս տալ թէ բազում ինչ այլայլեալ իցէ 'ի նմա և յեղծումն տարեալ : Կազմեալ այսպէս իսաւուրդ ինչ պլատոնական իմաստից, արկեալ 'ի նոյն և փոքր ինչ 'ի պիտիագորականէն և 'ի ծածկագիտականէն, զի Պիտիագորաս և Պլատոն հիմունք էին ուսման աղանդոյս՝ իբրև աստուածարեալք և աստուածարիչք, յօդեաց նոր իմն ոճ իմաստափրութեան և հաւատոց, զոր և ընդ քրիստոնէականին 'ի կշիռ բերել ժպրհեցաւ :

Յոլովք աշակերտեցան նմա 'ի սոյն, ընդ որս Երեննիոս, և Պլոտինոս, որ զնոր ուսումնն եմոյն 'ի Հռովմ, և աշակերտեցաց անդ զԱմելիոս կամ զԱմերինոս թոսկացի, ըզՊլատինոս սկիւթուպոլսեցի, զԵւստոքիոս ալեքսանդրացի, զԶեստարիկոս, զՓերմոս, զՄարկելոս, զՈրոնտիոս, զԱրինիլոս, և զՊոգատիանոս :

Հզօր ախոյեան յայսմ աղանդոյ և ոխերիմ քրիստոնէից եղե քան զայլս Պորփիւր, որում աշակերտեցան Թնէոդոր ասինեցի, և Յամբէլիկոս քալկիսացի՝ ոչինչ պակաս հռչակաւոր քան զվարդապետն։ Փոխանակեաց զսա Եգեսիոս, որ ընծայեցոյց զԵւստաթիոս, զԱնտոնինոս, ըզ-Սոպատրոս, զԵւսերի մինդացի, զՊրիսկոս թեսավրոտացի, զՄաքսիմոս եփեսացի և զՔրիստոնթիոս, որոց յինքեանս արկեալզուլիանոս կայսր, յուխտէ քրիստոնէութեան ետուն ապստամբել։

Եւ յԱտտիկէ բազումք ընծայեցան աղանդոյս այսմիկ, զոր տարաւ անդր Պլուտարքոս աթենացի, այլ 'ի համբաւաւոր պատմաբանէն Պլուտարքեայ քերոնացւոյ որ առ Տրայիանոսիւ ընտրական իմաստասէր և ամենահմուտ բանիբուն։ Ուսեալ նորա զայն յԱլեքսանդրիա 'ի Յերոկլէ և յՈլիմպիոդորայ, կառոյց վարժարան յԱթէնս 'ի չորրորդ դարու 'ի ժամանակս թագաւորութեան Թնէոդոսի, և փոփոխեցան անդր ընդ նորա Սիրիանոս, Պրոկլ, Մարինոս, Դամասկիոս և Ախմալիկիոս։

Ի վախճանին Յուլիանոսի ուրացողի՝ Հզօր ձեռնկալուի այսր աղանդոյ, սկսաւ և նա անկանել 'ի հինգ դարուն. մինչև ապա 'ի վեցն առ Յուստինիանոսիւ կայսերաւ սպառըսպուռ խաղաղացաւ 'ի միջոյ։

ԳԼՈՒԽ Զ.

ԱՆՑԱՆԵԼ ԻՄՍՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՌ ՄՈՒՂԻՄ
ԿԱՄ ԱՐՏԲԱՑԻՍ

Արշաւան հիւսիսական ազանց վայրենեաց 'ի հինգ դարէ հետէ բարձեալ էր յարևմտից զհռովմէականն ինքնակալութիւն, և թաղեալ ընդ նմին զդպրութիւնս և զգիտութիւնս. մինչ զի յերկոսին հետագայ դարս չերեւցաւ ոք անուանի, բաց 'ի Սեւերինոսէ Բոյետիոսէ, 'ի կասիոդորոսէ, 'ի սրբոյն Գրիգորէ մեծէ Հռովմայ և 'ի կրսերն

Դիօնիսեայ: Եւ յարեելեայս յիշատակին ինիաս գաղացի, Նեմեսիոս համբաւաւոր գրովքն յաղագս բնութեան մարդոցն ²⁵, յորում կարծեօք յիշատակեաց զմի յերեելի գիւտից արդեաց, իմա զլըան արեանն. Զաքարիա միտիւնեցի, Յովհաննէս Փիլոպոն և սուրբն Յովհան դամասկացի: Զայնու ժամանակօք իմաստափութեան անուամբ պերճացեալ էին և առ մեզ՝ ՚ի հայս համարող և աստեղաբաշխն Անանիա շիրակունի, Յովհան իմաստասէր, Մտեփանոս միւնեցի, և այլք: Ապա այնուհետև յերեսաց ծանր հակառակութեանց ժամանակին և բուռն հալածանաց զոր յարոյց զկնի յութ դարու ՚Առն իսաւրացի կայսր ՚ի վերաց իմաստափրաց, ՚ի յետին վատթարութիւն անկեալ գնէր իմաստափրութիւն, մինչև եգիտ իւր ասպնջականութիւն առ Մուղրիս կամ արաբացիս, որ անակնունելին էր:

Իբառնալ ազգին Օմայունեաց՝ սրոց սիրելի էր սնապաշտ տգիտութիւն գենին իւրեանց, իշխանք երկու ապազունիք Ալմանզօր և Հարոն Ռաշիդ ժողովեցին զոմանս ոմանս ՚ի գիտնոց՝ յաթոռ թագաւորութեան իւրեանց ՚ի Բարելոն, և վարձս և պատիւս առաջի գնելով ետուն թարգմանել յասորի և յարաբացի լեզու զբազում մատեանս Յունացն իմաստափրաց, և մանաւանդ զԱրիստուելին: Զհետ նոցա Ալմամուն ոմն նոցին նախանձաւոր զանցոյց զնորդօք, և զկնի ապա այլ ևս ամիրապետք ՚ի բաժանել և տարածանել զսահմանս թագաւորութեան իւրեանց, յորդորեալ ծաւալեցին զգիտութիւնս յԱսիա, յԱֆրիկէ և ՚ի Ապանիա, զոր կալան ՚ի մոնից դարուն հինգերորդի մինչ յելս հնգետասանին:

Յովհան Դամանսկացի՝ յարաբացւոց Ալմանզօր կարդացեալ որ առաջին անուանեաց զմարդս իւր աշխարհ, և Հոնայն իսկն իսահակ եղեն առաջին հարք արաբացի գիտութեանց, ընդ որոց յաջորդեցին ապա Ալկենտի, Ալփարաբի՝ որոյ քառասուն անգամ ընթերցեալ ասի զբնախօսութիւնն Արիստուելի, և երկերիւր անգամ զՃարտասանութիւնն նորա, և վաթսուն գիրս լուծմանց արարեալ ՚ի վերայ իմաստափրին այնորիկ. Աբասարի, Ալռազի, Ավերբուէս և Ավիկեննա, որք զամենայն աշխատութիւն թափեցին ՚ի վերայ Արիստուելի. բայց ոչ շատացեալք թարգմանութեամբ եեթ, լցին զայն և բիւրաւոր մեկնութեամբ, և ՚ի տեղիս տեղիս խանգարեցին իսկ, և

այսպէս արկին զառաջին սերմանս իմաստասիրութեան Դալրոցականաց :

Գրիգոր իշխանն մեր մագիստրոս՝ այր Հմուտ իրաց նոցա , այսպէս աւանդէ եղեալ առ նոսա զգիւտ իմաստից և գիտութեանց . « Սահմ ոմն որդի Շապհոյ քաղդէացի և Ահարոն քահանայ , ոոքա թարգմանիչք և յոյժ տեղեակք յունական լեզուին և արաբացւոց , թարգմանեցին նախ զբժշկականն : Եւ իբրեւ ոչ եղեն հասու Ասկլեպիայ և Հիպոկրատեայ բառիցն , հարկ եղեւ նոյն զքերականութիւն . և զկնի այնորիկ զիմաստասիրութիւն . և ապա մի ըստ միոջէ : Եւ զի քաղաքականք էին , և հարատութիւն իսմայելական ազգին տակաւին գոյր , բազում փոյթ յանձին կալեալ , մինչ զի այսպէս գրեալ է 'ի մատեանս իւրեանց ստուգութեամբ , թէ որչափ թուղթս թարգմանեալ ցուցանէին արքային , յոսկւոյն արաբացւոց յազնուէն պարածածկեալ լինէին » :

ԳԼՈՒԽ Է .

Ի Մ Ա Տ Ե Ս Ա Ւ Ր ՈՒ Թ Ի Ւ Ն Դ Պ Ո Ց Ե Կ Ե Ն Ա Ց

Առաջ ի վախճան ութերորդ դարու յաջորդեալ մեծին կարուսի ՚ի թագաւորութեան գալլիացւոց աշխարհին զՊիպին դշայր իւր , իբրեւ խորտակեալ զիեսիդեր վերջին թագաւոր լոնդոնարատացւոց առ զնոցա թագն և պասկեցաւ ՚ի Հռովմ կայսր հռովմայեցւոց , գուն գործեաց ամենայն ջանիւ ՚ի զարգացումն գիտութեանց ըստ սադրելց հռչակաւորին Ալկուինի աշակերտին Բեդայի . կանգնեաց զհամալսարանն Փարիզու , հիմն արկ և այլոց ոմանց , որպէս Բոնոնիայ և Պապիայ խտալացւոց : Իմաստասիրութիւն որ մուտ կալաւ յայնժամ առ նոսա , ոչ այլ ինչ էր քան զարիստոտելեամն , և այն արաբացի ծպտեալ , որպէս տեսաք ՚ի վերոյ . և ՚ի տիրապետութենէ անտի զոր յայնց ժամանակաց հետէ պահեաց յերկար յամենայն դպրոցս , Դալրոցական յորջորջումն լնկալաւ :

Ի յաջորդաց մեծին կարողոսի գլխաւոր օժանդակիչ և
նպաստամատոյց ուսմանց յարեաւ 'ի յաջորդ դարուն՝ Լո-
թարիս կայսր, որպէս երեխի ՚ի հրովարտակէ իւրմէ 829
ամին, յորում սահմանին դպրոցքն Պապիայ, Եպորե-
դեայ կամ Խվրէայ, Աւգոստեայ տաւրինացւոց, Կրեմո-
նայ, Բոնոնիայ, Փլորենտիայ, Փիրմոնի, Վերոնայի, Վե-
կենտիայ, Փորոնին Յուլեայ, և այլք, որք և բացան առ-
հասարակ առաջի ուսմանասէր համբակացն դասուց այլոց
քաղաքացն խտալիացւոց։ Այսմ հրովարտակի բարեյոր-
դոր պատճառք ճանաչին երկու եղբարք միանձունք, Ա-
դելարդ և Վալլա, որոց վերջինն Արսենիոս անուն առեալ,
եկաց աբբայ Կորրէյայ, և այլ ոմն կրօնաւոր Դունդալ
անուն սկզբունքի, որ վարեաց դպրոց 'ի Պապիա :

Աակայն ջանք ՚Լոթարիսի սակաւ ինչ արդիւնս ետուն։
քանզի աշխարհաւեր վրդովմոնք երկպառակութեանց՝
յետ նորա ծագեալք 'ի յաջորդս իւր, բաժանմունք գաւա-
ռաց զհետ եկեալք, ապստամբութիւնք մարզպետաց և ա-
զատաց բռնացելոց յանուն կայսերացն՝ յորմէ սկիզբն կա-
լսաւ վիճակական պետութեան, հինահարութիւնք հուն-
դարացւոց և աւարեանց կամ հագարացւոց և տաճկաց
աստի և անտի 'ի միջերկրայս խտալիայ, և անդադար պա-
տերազմունք յորս պաշարեցաւ համօրէն Եւրոպէ, շիջու-
ցին 'ի սպառ զսէր գիտութեանց, և ընկղմեցին դարձեալ
զԵւրոպէ 'ի խորին տգիտութիւն։ յորում և մնաց զինն և
զտամն դարն ողջոյն և զմեծ մասն ինչ մետասանին։ Ընդ
պյն ամենայն ժամանակս սակաւք ոմանք յիշատակին ո-
րոց կայծակն ինչ գիտութեան պահեալ իցէ :

Ի կէս մետասան դարուն սկսան գիտութիւնք կենդա-
նանալ 'ի մեռօրինակ թմբը ութենէն, և աստ անդ երեւ-
ցան գիտնականք ոմանք։ Յորում ժամանակի ընտրական
իմաստափրութեամք ծաղկէին 'ի հայս յետ Նարեկացւոյն
մեծ իշխանն և իմաստասէր Գրիգոր մագիստրոս, և փոքր
մի զկնի Յովհաննէս Սարկաւադ վարդապետ՝ թուական
և տումարական արուեստիցն ներհուն։ Գուիդոն ոմն ա-
նուն արեւացի նորոգեաց յիտալիա զերաժշտութիւն, իր-
ներիս զիրաւագիտութիւն։ Յերկոտանանին աճեցին գի-
տութիւնք, յորոց սկզբան ծաղկեաց սուրբն Բեռնարդոս։
'ի կէս նորին վանական ոմն Գրատիանոս՝ զահմանս և ըղ-
կոնդակս քահանայապետից հաւաքեաց 'ի մի, և եղե հայր

դպրոցաց կանոնական իրաւանց . և Պետրոս 'Լոմբարդոս նորաձեւ իմն յարդարեաց զաստուածաբանական գիտութիւնն գրովք վճռոցն , յորս բացայացտեաց գերեւելի բանս գրոց սրբոց և հարց . և յելս այնր դարու համբաւեցան յոյժ Գերարդ կրեմոնացի և կամպան նովարացի չափաբերութեան և աստեղաբաշխութեան հրահանգօք : Առ այսու ժամանակօք աստուածաբանական և իմաստափառական ուսմամբք և գրովք ականաւոր էին 'ի հայս Սարգիս և իգնատիոս վարդապետք , երկոքին Ներսէսք Շնորհալին և 'Լամբրոնեցին , և Մխիթար Գոշ առակախօս և օքէնսգէտ :

Զաստեղաբաշխութիւն առաւել ջանացաւ պայծառացուցանել 'ի Սպանիա յերեքտասան դարուն Ալմոնտոս թագաւոր կաստիլիայ , որ ետ ուղղել զատլումեան աղիւսակմն , և նովաւ անուանի եղեն ալփոնսեան աղիւսակք . իսկ յիտալիա Բ. Փետերիկոս կայսր , որ զԱլմանէսդն Պտլումեայ , այսինքն զմեծ մատեանն երկրաչափական և աստեղաբաշխական , հանդերձ գրովքն Արիստոտելի և այլոց իմաստափառաց և բժշկաց , ետ թարգմանել յարաբացւոյ 'ի լատին լեզու . կանգնեաց համալսարան 'ի Նեպոլիտին , և թիկունս և օգնականութիւն ետ բժշկական գպրոցին Սալէռնոնի : Բայց աստեղաբաշխութիւն այնց ժամանակաց խառն էր ընդ աստղահմայութեան : Ի սմին դարու 'Լէռնարդ Փիլոնակեան պիզացի եմոյծ նախ յիտալիա զարաբացի թուանշանս համարողութեան , և յօրինեաց գիրս ինչ սկզբանց գրահաշուի ²⁴ և արտաչափութեան : Ծիրանազգեաց աւագ ոմն եկեղեցւոյն Հռովմայ Պետրոս այլիեցի եղեւ առաջին յորդորիչ նորոգութեան օրացուցի . Ոիքարդոս Սուխաէտ անուն անգլիացի թուաբանական և աստեղաբաշխական գրովք համարող անուն ժառանգեաց . և Հռովեր Պէքըն անգլիացի յաւել ընդ աստեղաբաշխութեան և զուսումն տարրալուծութեան , և կարծի գտակ լեալ վառօթոյ , և իբրև 'ի հեռուստ նըշմարեալ զգիւտս ինչ արդեաց , որպէս զդիտակի , զստուերատան , և զօդապարիկ գնտոյ . և 'ի ռամկէն կախարդ կարծեցաւ : Գիտունք 'ի հնումն իբրև կախարդք բամբասեալ լինէին , առ մեօք իբրև անկրօնք և հերետիկոսք , ասէ Մոնթէսքէէօ :

Յառաջեաց յոյժ յայնժամ և աշխարհագրականն հըմ-

տութիւն ճանապարհորդութեամբ վենետիկեցւոցն Նիկոլայոսի Մաֆիոսի և Մարկոսի Պոլոյի զոր արարին ընդցամաք մինչ 'ի Ճենաց աշխարհ և 'ի սինէացւոց : Զարգացւ և նաւուղղութեան արուեստ գիւտիւ բևեռացուցին կամ կողմնացուցին , զոր ոմանք այսմ ընծայեն և ոմանք այնմ , բայց սովորաբար ընծայի Փլաբիոսի Ճօյեայ :

Սակայն նախապատիւ ուսումն այնր դարու էր աստուածաբանութիւն և իրաւագիտութիւն : Յառաջնումն հրոշակաւորք եղեն մեծն Ալպերտ , սուրբն Թուվմաս ագուինացի , սուրբն Բննաւենսուրա , Յովհաննէս Տունս սկովուկամ սկովիացի . իսկ յերկրորդումն այլք բազումք : Ոյր աղագաւ . բաց 'ի Բննոնիայ , կառուցաւ համալսարան և 'ի Պատուիոն 'ի նմին դարու . և դպրոցք և վարժարանք յայլ բազումք քաղաքս , որք և բազմաժողովք եին դասուք համեկաց . սկսաւ և սովորութիւն հանդիսի վարդապետական պսակաց :

Իսկ արուեստն բանական , բնազանցութիւն , բարոյական և բնագիտութիւն 'ի Ճեմական և 'ի դպրոցական աղջամդջի , այս է յիմաստակական և 'ի մնութի նրբախօսութիւն անօգուտ մանաւանդ թէ և միասակար ինդրոց պատանդեալ կային : Եւ Ռայմոնդոս 'Լուլոս մայորիկեցի յազգէ՝ զուր աշխատ եղեւ իւրով Անք Արուեստիւն մուծանել նոր իմն ոճ ուղղախոհութեան : Ամենայն ուսումն և ջան ժամանակին՝ էր գտանել , թէ զինչ մեկնութիւն , զինչ միտս արժան իցէ տալ բանից Արիստոտելի , առանց ինչ փոյթ տանելոց՝ քննել տեսանել , թէ բանք Արիստոտելի՝ ըստ կամս կարկատեալք նախ յԱպելիկոնէ և 'ի Տիրանիոնէ և ապա յարաբացւոց , համաձայնք իցեն արդեօք բանի և ճշմարտութեան և բնութեան իրաց :

Մարթ է զՃաշակ ինչ առնուլ զայնր իմաստասիրութեան յերկուց աղանդոց անտի յորս Ճեղքեցաւ նա յայնժամ . մի՛ իրականաց կոչեցեալ , որք պնդէին թէ արտաքոյ անհատից և մասնաւրաց գոն տեսակք ինչ և բնութիւնք ընդհանուրք , որոց եկեալ զմամնաւրօքն՝ որոշեն զնոսա յայս և յայն սեռ կամ տեսակ . և միւս՝ Անուանականաց կարդացեալ՝ որ ընդհակառակն ասէին , ընդհանուր բնութիւնք 'ի ձայնս ևեթ են և 'ի միտս մեր , և ոչ 'ի ընութեան իրաց . քանզի սեռ և տեսակ ոչ այլ ինչ են , եթէ ոչ մտաւոր յօրինուած չանձնաւոր գաղափարաց , ոոր

մեք մեղէն առեալ յանհատից իրաց և 'ի մասնականաց , կազմեմք 'ի միտս , և կապեմք ընդ ձայնս ինչ . զի բնութեան զանհատմն և զառանձնաւորմն միայն է 'ի գոյութիւն ածել : Առաջին կարծիքն , նշանակեալ յառաջագոյն 'ի Աեւերինուէ Բոյետիոսէ , արծարծեցաւ վերստին յերկոտասան դարու 'ի հիւսիսակողմանս գալլիացւոց աշխարհին յՈդուարդէ աբբայէ , յոր և անկան Պետրոս 'լոմբարդոս , Ալպերտ մեծն , սուրբ Թովվմաս , Բոնաւենտուրա , Ակովտ , և այլք . երկրորդ կարծիքն ելնախ 'ի Ուսուկելինոսէ անգլիացւոց , որում անսացին ապա վերոյիշեալքն Պետրոս այլեցի , Առևիսէտ , և Յովհաննէս Գերբոն , և այլք յայլոց ազգաց : Եւ այսպէս սոնքացեալ ստուարացեալ երկոցուն կողմանցն , այնքան սաստկապէս ամեհաբար եկին բախեցան բանակոխ մարտիւ 'ի գիմի իրերաց , մինչ երիցս վտարանդութեամբ հալածական լինել անուանականացն յաշխարհէն գալլիացւոց , թէպէտ և նիզակակից 'ի կողմ իւրեանց ունէին զիրաւանցն ճշմարտութիւն : Բայց 'ի լուսանալ ճշմարիտ իմաստասիրութեան՝ միւս կողմն մերժեցաւ յամենայն ողջամուաց . յորս երևելի գտաւ Գուլիելմոս Ովկամոս , ուղիղ իմաստասիրութեան աշակերտ և վարդապետ ինմիին դարու . և մեծաւ քաջութեամբ եղծ կործանեաց զմնուտի նրբութիւնս ժամանակին , մանաւանդ զՈկովտայն :

Եւ չորեքտասան դարուն են արք հռչակաւորք 'ի չափաբերութեան , 'ի բնագիտութեան , յաստեղաբաշխութեան , յիրաւագիտութեան , յարուեստս , 'ի գիւտս թղթարարութեան և աչոցաց՝ որ եղել յիտալիա , անուաւոր ժամացուցի՝ որ նախ յԱնդիլա հնարեցաւ և 'ի Պատաւիոն զկատարումն առ . նոյնպէս 'ի գրականութեան , 'ի քերթողութեան , յաստուածաբանութեան , և յայլսն : Մոնդին ոմն բոնոնիացի ուսոյց նախ ոչ չափաւորապէս զհանգամանս հերձոյ և զննելոյ ամենայն մասանց մարմնոյ . որ մեծ ինչ է ըստ ժամանակին . քանզի ամելաբաշտութիւն համարեալ եր երբեմն հերձանել և յօշել զդիակունս վասն գիտելոյ զցաւան և օգնելոյ ախտացելոց : Փրանկիսկոս ոմն Ստաբիլեանց Զէքքօ Տասքօլի ասացեալ խտալացի , ախտարաց և դիւթութեան զհետ կրթեալ ըստ կարծեաց ռամկին , դատապարտեցաւ կենդանւոյն 'ի հուր ըստ խստութեան ժամանակին : Աակայն առ բազում տակաւին 'ի գալրոցական

խաւարի մնաց իմաստասիրութիւն, մանաւանդ ըստ բանական արուեստի և ըստ բնազանցութեան մասին:

Առ մեզ յերեքտասան և 'ի չորեքտասան դարին ծաղկեին իմաստասիրական բանիւք Վանական վարդապետ, Վարդան մեծն, Յովհան եղնկացի, Եսայի նշեցի, և այլք. բայց սոցա գեռ անծանօթ էր գալրոցական ոճն, որ եմուտ ճարակեցաւ յազգս մեր 'ի նմին չորեքտասան դարուն 'ի բարթուղիմէոսէ լատինացւոյ, 'ի Ներսիսէ Պալիենց և 'ի Յակոբայ թարգմանէ և 'ի ջահկեցւոց, մանաւանդ 'ի գրոցն Արաքինութեանց և Մոլութեանց: Եւ այնմ ոճոյ՝ իբրև լաւի իմիք և գիտնականի հպատակեցին և այլ բանիրունք և իմաստասէրք ժամանակին, քաջ 'ի բաց անկեալք 'ի լուսահետ շաւլաց նախնի ճարտարացն. և սակաւք ոմանք ազաւա մնացին 'ի նորաձեռութենէ անտի, մանաւանդ թէ յապականութեննէ. որով և պղծեցաւ ոչ միայն իմաստամիրութեանն և կարգաբանութեանն ոճ, այլ և հայերէն յստակ շարագրութեանն:

ԴԼՈՒԽ Ը.

ԱՌԵՋԻՆ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ԻՄՍՍՏԱՍՍԻՐՈՒԹԵԱՆ

Առաջին պարծանք նորոգելոյ իմաստասիրութեանն յիտալիա, յորմէ տարածեցաւ ապա յայլ կողմանս Եւրոպայ, առաւելապէս խոստովանելի գոլ թուի Յունացն՝ որոց խուռն բազմութեամբ փախուցեալ 'ի մէջ հնգետասան դարուն յերեսաց Բ. Մուհամմէտի, որ 'ի 1453 առեալ զկոստանդնուպոլիս բնաբարձ արար զյունական ինքնակալութիւնն, եկին անկան յիտալիա, և թիկունս ինքեանց արարեալ զՄեդիկեան տուռն, մտին բնակեցին 'ի Փլորենտիա: Բերեալ սոցա ընդ խրեանս զքաջ բնագիրս հելենացւոցն իմաստասիրաց, որ յայնժամ առաւել արաբացի թարգմանութեամբ ծանօթ էին քան բուն սկզբնագրօք, և նորոգեալ զնախնեացն ուսումն, թէպէտ և ոչ այլ ինչ

արարին քան թէ յարուցանել միւսանգամ զհին աղանդս հելենացւոց , սակայն նովին իսկ գրգիռ նոր ետուն հանձարոյ մարգկանն . որով առ սակաւ սակաւ յայլ իմն կերպարան փոխեցաւ իմաստասիրութիւն , մանսաւանդ ջանիւք ուամսարանին Փլորենտիոյ , Հռովմայ , Նէապոլսի և Վենետիկոյ , որ ժրացեալք էին 'ի ժամանակին յիմաստասիրական յորդորմունս :

Կէաք 'ի նոցանէ միամուեցին ընդ Արիստոտելի՝ ուղղագրեալ զնա ըստ հելենբնագրացն , և այլք 'ի Պլատոնի կողմելին : Եղեն և խեղաթիւքը ոմանք , որ կամակորելով ըզբանս Արիստոտելի՝ նոքօք հնարեցան հաստատել զբաջաղանս իւրեանց զմշտնջենաւորութենէ աշխարհի և ըզմահկանացութենէ հոգւոյ :

Յովհաննէս Պիկ իշխան Միրանդուլայ լոնգոբարտացւոց , վասն ընդարձակ մտացն փիւնիկ կարգացեալ իւրոյ դարուն , ընդ պլատոնական իմաստասիրութեանն զուգեաց և զպիւթագորեանն և զծածկագիտականն , զոր ընկալան և այլք ոմանք յիտալցւոց և 'ի գերմանացւոց , արք կախարդասարք մոլեալք 'ի պատիրս կիւսահմայ ախտարաց և մողութեան :

Իսկեղքն վեշտասան դարու սահմանեցաւ 'ի թուփիրաստոսէ Պարակելսոսէ այլ իմն աղանդ ոչ ինչ ընդհատ 'ի ծածկագիտականնէն . այն է՝ աղանդն բանդագուշելց կամ աստուածիմաստից , որում անսացին և այլք ոմանք՝ յիմարաբար զակատեալք 'ի սոստի խարեկութիւն ոսկեխոյզ բնալուծութեան , զայլ և այլ հրահալելիս յոսկի կարծելով փոխարկել :

Ինմին դարու Բեռնարդին Տելեսիոս կոսենդացի յարց զիմաստասիրութիւն Պարմենիդեայ , և կառոյց զառաջին ուամսարանն 'ի Նէապոլիս՝ տելեսեան կամ կոսենտեան անուամբ , յորում առաջին սկիզբն կալաւ փորձական ոճոյ բնազննութեան : Անտի ելին արք անուանիք նորանոր և յանդուգն վարդապետութեամբք . յորոց ոմն թուփմաս կամսաննէլ ամն քսան և եօթն բանտարգել մնաց 'ի Նէապոլիս , և այլ ոմն Յորդանան Բրունոս անուն կենդանւոյն այրեցաւ 'ի Հռովմէ : Առաջինն՝ յոյժ երախտաւոր գըտաւ ընական իմաստասիրութեան , հաստատելով զչորեսին ճշմարտութիւնս . թէ չմարթեմք գիտել զէութիւն իրաց յինքեանս , այլ միայն զերեոյթս նոցին և զհամեմա-

տութիւնս . թէ ներքին գիտակցութիւն գոյութեան մեռոյ՝ է առաջին հաստատուն գիտելին մոտաց . թէ ամենայն իմացական զօրութիւնք մեր բովանդակին 'ի զօրութեան զգալոյ . թէ համեմատութիւնն որ առաջնորդէ 'ի ծանօթէ յանձանօթն , սկիզբն է ամենայն գիտից :

Եին և որ զստոյիկեանցն կենդանացուցին զիմաստասիրութիւն . որպէս և այլք , մանաւանդ գալլիացիք , զեպիկուրեանն , մաքրեալ յամենայնէ որ հակառակ կայ մերոյ բարեպաշտութեանս :

Իսկիզբն այսր վեշտասան դարու յարեաւ յԵւրոպէ հերձուածն նորաղանդից , որոյ աղանդապետք եղեն 'Լութեր , Զուինգիոս գերմանացիք , և Կալվին գալլիացի : Զայս նըշանակեմք աստանօր , զի կեշտդ նոր ոչ սակաւ փոփոխութեան պատճառ եղեւ քրիստոնէական իմաստասիրութեան և աստուածաբանութեան յԵւրոպէի :

Սակայն 'ի բազմամբոխ հակառակութեան անդ աղանդոցս , է որ նոր և է որ նորոգեալ զօրհանապազ տիրեաց Արիստոտէլ 'ի գալրոցս առաւել քան զամենեսին , թէպէտ և ուժգին ընդդէմ կացին բազումք յիստալիա և 'ի ծիրանաւոր աւագաց անգամ եկեղեցւոյն Հռովմայ , 'ի Գալլիա , 'ի Գերմանիա , 'ի Հոլանդիա և յԱնգլիա . որք ոչ պյնչափ զարիստուտելեան ուսումնն , քան թէ զարաբացի և զգալրոցական զանշահ մոտածութիւնսն և զրաջան խընդիրս սաստկապէս կշտամբեալ աղարտեցին 'ի մատեանս իւրեանց . յորոց է և Երասմոս հոլանդացի , մի 'ի մեծամատեան գրչաց ժամանակին : Ի ջերմանալ խելապատակաց , անդուստ Պետրոս ոմն Ռամոս գալլիացի 'ժիտեաց 'ի սպառ և զհարազատութիւն և զստուգութիւն գրոցն Արիստոտէլի , և ումնպէտ աղճատանս եցոյց զվարդապետութիւն նորա :

ԳԼՈՒԽ Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Պարոցական իմաստասիրութիւնն արիստոտելեան՝ յամենուստ պաշարեալ անհնարին մարտիւ, սկսաւ սասանել և մի ըստ միոդէ անկան ախոյանքն իւր, թէպէտ և խրախուսական ձայն զօրավարացն ոչ հատանէր լսելի լինել: Առաջին բարեբաստութիւն իմաստասիրութեան այն եղեւ, զի բաժանեցաւ յաստուածաբանութենէ. և այսուապահարզանիւ եղեւ ուսումն ինչ աշխարհական կամ արտաքին, որով և բազմաց այնուհետեւ համարձակելի եղեւ նորին պարապումն, և սկսան միտք մարդկան խմորել և եռալ՝ ի նորանոր ծնունդս:

Առաջինք տիրապէս 'ի նկատել խոհեմ' և աներկիւղ ակամք զխրտուիլն արիստոտելեան, և 'ի թափել զմիտս մարդկան' 'ի ճեմական և 'ի դպրոցական լծոյ, և հանել 'ի նոր և 'ի դիւրագոյն շաւիդ իմաստասիրութեան, եղեն Փրանկիսկոս Պաքոն յանդլիացւոց, Գալիլէոս Գալիլէի յիտալացւոց, և Ռենատ Տէքառդ կամ կարդէսիոս 'ի գալլիացւոց:

Պաքոն կամ ըստ անդլիականին Պէքըն, ծնեալ՝ ի 'լոնդոն յամի 1560, իւրով անմահական գրովք՝ որոց մի է Յաղագս աճման գիտութեանց, և միւսն Նոր գործի գիտութեանց, արդարապէս անուանեցաւ կարապէտ երագ ընթացից իմաստասիրութեան, զոր յառաջացաւ յապաժամանակի. թէպէտ և ինքն Պաքոն շմսեցաւ 'ի գործ, այլ եցոյց միայն այլոց զճանապարհն զոր պարտ էր գնալ, և գուշակեաց ևս ինչ ինչ յորոց ընդ այն գտանելոց էին:

Աւելի իմն գործեաց քան զնա Գալիլէոս՝ ծնեալ՝ ի Փլորենտիա 'ի 1564: Քանզի ոչ շատ համարեցաւ այլոց միայն ցուցանել զճանապարհ ճշմարիտ և անվորէպ գիտութեանց՝ զոր գտեալն էր, այլ և անձամք գնալ կամեցաւ: Վասն որոյ մերժեալ՝ ի բնագիտութենէ զգաղտնի որակս և զանդէպ խրթնաբանութիւնս ճեմականաց, եմոյծ անդր ըզ-

փոյթ դիտողութեան և փորձոյ՝ զոր և Պաքոն պատուիրէր անդադար . Ծորդեաց 'ի նոյն զճշդութիւն երկրաչափութեան և զհաշուի , և ճարտարեալ ճոխ և լուսաւոր գիւտո՝ հորդեաց ասպարէս ընդարձակ յայլ ևս նորանորմ՝ որոց կամեցան գնալ զաւիղս նորա . որպիսիք ելին ոմանք յամենայն երեւելի ազգս եւրոպէացւոց :

Իսկ 'ի բանականութեան արուեստի , 'ի բնագանցութեան և 'ի բարոյականի մեծագոյն փոփոխութիւնն մուծաւ 'ի կարդեսիոսէ ծնելոյ յԱյա Տիւրենայ յամի 1596 : Նորագիւտ ոճն իմաստասիրութեան՝ զոր յամս քսանեհինդ հնարեալ և կազմեալ 'ի լոյս եհան 'ի Հոլանդիա՝ ուր եր նորա բնակութիւն , թէպէտ և զառաջինն ծանր ծանր հակառակութիւնս կրեաց առ ոմանս , բայց 'ի սուղ ժամանակի ընդարձակեալ ծաւալեցաւ , և առ սակաւ սակաւ կարդեսեանն իմաստասիրութիւն յաղթական արձանացաւ . 'ի վերայ աւերակի ճեմականին : Աակայն մեծագոյն 'ի շահիցն , զոր արար նա քաջի իմաստասիրութեան , եղե ընդվզելն 'ի լոյս գերութեան կարծեաց այլոց և կանխակալ մոտահաջութեանց իմարդկային գիտութիւնս , ընդ որով 'ի բազում կողմանս դեռ ևս հեծէին հանճարը . որոց ուսոյց վարել փոքր մի և խելօք իւրեանց , խոհեմաբար երկբայելզանյայտից , քննել զամենայն՝ արժանաւոր ինամով և իմաստութեամբ , և ջանալ 'ի պայծառութիւն և 'ի յստակութիւն գաղափարաց : Բայց ուղղադատութեանն սահման զոր ետ նա յընտրութիւն ճշմարտութեան կամ ստուգութեան , զայն ամենայն ստոյգ համարել որոյ է 'ի մեզ պայծառ և յստակ գաղափար , ոչ է անսխալ յամենայնի , այլ բազում ուրեք և վրիսպական : Հանդերձ պյուտ և կարծիք ընածին գաղափարաց , և թէ հոգին միշտ խորհիցի , և թէ էութիւն հոգւոյ է խոկումն , անբանք ընդ սոսկ նիւթեղէն կազմածս դատակնքեալը , բնաջինջ բարձումն դատարկութեան 'ի բնութենէ , և տիեզերակալըւթիւննուրբ և ամենալից նիւթոյ անծանօթի , և յորձանքն որ ըստ նորա կազմեն զյօրինուած տիեզերաց , այս ամենայն այլովքն հանդերձ , որոց 'ի յայտ եկն անտեղութիւն , ոչ ետուն ինքնակալել յերկար կարդեսեան իմաստասիրութեան :

Աակայն 'ի զրոց անտի ելելոց 'ի կարդեսեան դպրոցէ 'ի վերայ արուեստի բանաւորութեան , բնազանցութեան և

բարոյականի , բաց 'ի ճառէ անտի նորին կարդեսեայ որ
յաղագս ոճոյ ուղիղ վարելոյ բանիւ և խնդրելոյ զշմար-
տութիւն 'ի գիտութիւնս , և բաց 'ի միւս գրոց նորա որ
յաղագս կրից , են և երկուք այլ ընտիրք յոյժ . մին' բա-
նականն կամ արուեստ խորհելոյ , որ կարծի Առնոլդոսի և
Նիկոլայ , և միւս՝ յաղագս հետազօտութեան ճշմարտու-
թեան , գործ հօրն Մալպրանշի : Արուեստն խորհելոյ ,
թէպէտ և ոչ ամենեին ազատ 'ի թերութենէ , ընտրե-
լադոյն է 'ի բանական արուեստի գիրս ժամանակին , և գո-
վի մինչեւ ցայժմ : Ի հետազօտութեան ճշմարտութեան
սքանչելի զննութիւնք գոն 'ի վերայ սխալմանց զգայարա-
նաց , երեակայութեան , ախորժակաց , կրից և մտահա-
ճութեանց . բայց և բազում ինչ արտաքոյ քան զարժանն
բերի . և վարկածն թէ ամենայն ինչ երեկի մեզ յԱռ-
տուած , անդոյ է ամենեին և մտացածին :

Հետեւող Պաքոնի եղեւ գալլիացին Գասենտոս , որ պար-
զեաց զո՞ճ և զվարդապետութիւննորա և յարմարեաց յայլ
և այլ մասունս իմաստափակութեան , մանաւանդ 'ի քննու-
թիւնս մարդկային հոգւոյ և մտաց , և իբրև առաջնորդ եղեւ
'Լոքի : Առաւել քան զնա զօրացաւ Յուվմաս Հոպպէս անդ-
լիացի , որ ընդ բազում եպիկուրեան վրիպանսնիւթակա-
նութեան՝ և 'ի յոլով ճշմարտութիւնս առաջնորդ եղեւ
զկնեացն գրովք իւրովք :

Յոյժ օտար գտաւ 'ի սոցանէ բենեդիկտոս Սպինոզա ,
թէպէտ և կարդեսեան աշակերտութեամբն պանծացեալ :
Ծնաւ սա յԱմսդըրտամ 'ի 1672 յերայեցի ծնողաց . մը-
տեալ ընդ կրօնիւք քրիստոնէութեան՝ անկաւ 'ի նմանէ , և
'ի բարոյականի իւրում զերկրաչափական առեալ զերեսօք
նենգապատիր կերպարան , յարոյց վերստին զանտեղի վար-
դապետութիւնն ուրուագրեալ երբեմն 'ի Քանոնովանեայ .
այն՝ թէ մի միայն գոյացութիւն կայցէ յաշխարհի՝ զոր և
Աստուած անուանէ , և հոգիք և մարմինք՝ ըստ մեզ զանա-
զան և որիշ գոյացութիւնք , ոչ այլ ինչ իցեն , եթէ ոչ
այլ և այլ կերպարանք միայնոյ և տիեզերական գոյացու-
թեանն :

Կոնդուլըէ Գուլիէլմ 'Լայզնից կամ 'Լէյիբնիտիոս
ծնեալ 'ի 'Լիպսիա յամի 1646 , այր սրամիտ , հանճարեաց
և սա կարգ ինչ նոր վարդապետութեան բազում մասամբ
համաձայն կարդեսեայ : Տարեըք մարմնոց ըստ նորա պարզ

են առ հասարակ և անբաժանելի , զորս և Արիութիւնս անուանէ կամ Արիակս . և տիեզերք ամենայն 'ի միութեանց աստի են յօդեալ : Արիութիւն մի է և հոգին , որ ունի իշխանութիւն 'ի վերայ միութեանցն յորոց զօդեալ են մարդինքն . և սմա անուն կոչեաց Տիրական կատարունութիւն : Յառաջին վայրկենէ անտի միաւորութեան ընդմարդունոյ՝ տայ Աստուած հոգւոյն բազմապատիկ իմացուածս և գաղափարս՝ որ մի ըստ միոջէ յաջորդեն իրերաց . իսկ 'ի մարմնի յոլով շարժմունս ըստ համեմատութեան յաջորդական գաղափարաց հոգւոյն , առանց ինչ ազդեցուցանելց ընաւ հոգւոյ և մարմնոյ 'ի միմեանս . և զայս աստուածադիր համեմատութիւն կոչէ Նախակարգեալ Դաշնակութիւն :

Այս վարդապետութիւն հանձարեղ քան հաստատուն՝ որ յիշեցուցանէ փոքր մի զՊիւթագորաս և զՊլատոն , կարի տարածեցաւ 'ի Գերմանիա , մանաւանդ յետ մեկնաբանութեանց Քրիստիանոսի Վոլփիոսի , որ և 'ի ըստ եհան ընագիտութիւն մի ամբողջ՝ բազմահատոր՝ երկրաչափական ոճով . գործ յարգոյ յոյժ . բայց և զյայտնիան ցուցանել կամելով՝ բազում ուրեք զլուսաւորագոյննան անդամ խաւարեցոյց . թող զտաղտուկ շոայլութիւն բանից :

ԳԼՈՒԽ Ժ.

ԵՐՐՈՐԴ ԿՈՐՈԳՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱԸ

Ի մէջ եօթնուտամն դարին սկիզբն եղև երրորդ նորոգութեան իմաստասիրութեան , զոր և մարթի ասել վերջին ըստ մեզ , այլ ոչ կատարեալ : Գործոյս մեծի հեղենակը և առաջին ճարտարապետք եղեն Նետոն և 'Լոք , երկոքեան անդլիացիք :

Խահակ Նեւտոն , ըստ անդլիացի հնչմանն Ախութըն , ծնեալ 'ի 1642 , ցրուեաց և քայլքայեաց 'ի բնագիտութենէ զմեկ վայրապար և հնարիմաց յօրինուածոյն կարդեսեայ , փոխանակ ինքնահածոյ վարկածից 'ի ձեռն առեալ

զդիտողութիւն, զփորձ և զՃշդութիւն համարողութեան, յորս յեցեալ քաջաբար, յստակեաց և ճոխացոյց զընաբանութիւն, և եղե հայր բնական իմաստասիրութեան :

Իսկ Յովհաննէս 'Լոք ծնեալ 'ի 1652, առաջնորդ կամ ուղեցոյց ունելով զՊաքոն և մանաւանդ զԳասենտոս, ձեռնարկեաց և նա ՚ի նմին ժամանակի փարատել 'ի բանական արուեստէն և ՚ի բնազանցութենէ զխաւարն տղիտութեան, որ դեռ ՚ի վերայ կայր : Վտարեաց ՚ի բանական իմաստասիրութենէ զերեւութական ցնորս մտաց և զանգոյ վարկած . և փոխանակ ՚ի ներքս եբեր զվերլուծական մանր քննութիւնս և զգուշաւոր մտածութիւնս, անաչառ և սուր դիտողութեամբ և փորձով առաջնորդեալ, որ ոչինչ ընդհատ ՚ի բանական իմաստասիրութիւն քան ՚ի բնականն միայն առաջնորդք են մեր : Վասն որոյ արդարապէս ասացաւ զսմանէ, թէ ուր այլք զառասապելս մարդկային մտաց և զՀոգւյ կցկցէին, սա զբուն զՃշմարիտ պատմութիւն նորա յօրինեաց : Զայս նոր և լուսահետ ճանապարհ հորդեաց մեզ մատեան նորա մակագրեալ Ճաշակ իմաստասիրական կամ քննութիւն ՚ի վերայ մարդկային մտաց : Բաժանի սա ՚ի չորս առաջն . ՚ի միումն բացէ ՚ի բաց հերքէ զկարդեսեան վարկադրութիւն բնածին գաղափարացն և սկզբանց կամ օրինաց մտաց . ՚ի միւսումն հաւաստաբանէ զառածն արխատուելեան, թէ ամենայն գիտութիւնք մեր և հմտութիւն և իրաց խելամնութիւն ՚ի զգայութեանց է և ՚ի մտածութենէ . յերրորդումն ճառէ զբանից, որովք ՚ի յայտ ածեմք զտեսակս կամ զգաղափարս մտաց, և բազում ինչ շահաւոր աւանդէ յաղագս բնութեան նոցա, պիտոյից և թիւրութեան . ՚ի չորրորդումն անցանէ ՚ի գիտութիւնս, ցուցեալ զնոցա աշտիճանսն, զընդարձակութիւն, զսառուգութիւն, զյեղանակ գիւտի հաւաստեաց նոցա և հաւանականութեան . ՚ի յայտ բերէ և զարմատս մոլորութեանց, և ստուերագրէ զմասունս համօրէն գիտութեանց : Ընտիր ընտիր մտածութիւնս գործնական արուեստի բանականութեան յաւել նա և ՚ի գիրմն իւրում մակագրեալ Առաջնորդ մտաց ՚ի քնին Ճշմարտութեան, որ յետ վախճանի նորա ՚ի լոյս ընծայեցաւ : Այս ամենայն, բաց ՚ի մարդկօրէն սխալանացն, ուղղապէս տան մեզ ասել, թէ բանականն իմաստասիրութիւն յառնէ աստի առ զառաջին հաստատութիւն իւր և զվերջին մեծու-

թիւն՝ յոր եհաս զկնի . և որչափ գիտացեն մարդիկ իորհել՝ ի վերայ երկրի , անմահացուսցեն զյիշատակ սորա :

Արդ այսպէս ՚ի ծագել արուսեկի ուղիղ և լուսաւոր իմաստամիրութեան , կէսք ողջախոհութեամբ պատուեալք՝ զուարձանային ՚ի լցյս նորա . բայց խառնաղանջն զիտնաւորաց՝ կանխակալ սովորութեամբ և մոտահաճութեամբն պաշարեալ , աստղ ինչ օրհասաբեր կարծելսվ տեսանել , գոյժ արկանէր անիծիւք և հայհոյիչ զրպարտութեամբք : Եւ զի կամ մատեանք ՚լոքի դեռ բազմաց խիստ ինչ էին և անծամ , կամ զի ժամանակին է միայն քաղցրացուցանել մարդկան զՃշմարտութեանն ճաշակ , ընդ ամս յիսուն չիշխեաց ոք հրապարակաւ ՚ի բերան առնուլ զայն , և ՚ի յարու և ՚ի կերպարանս ածել զնորն զայն զիտութիւն :

Թողեալ զերկոսին մեծանուն գերմանացիս , Զիոնհաւզն և Յումասիոս , որոց առաջինն վաստակաւոր եղեւ ՚ի բնախօսութեան , և երկրորդն ՚ի բարոյականի և յիրաւագիտութեան , եկեսցուք ՚ի կրաւեսանդ , որ զհետ եկեալ ՚լոքի . թէպէտ և ոչ իշխեաց միսիլ ՚ի խորին քննութիւնս հոգւոյ , բայց կարգաւորեաց զվարդապետութիւնս անգլիացի իմաստամիրին , փոխանսակ բազմաբանութեան նորա զհամառօտութիւն պատուելով : Յաւել և յիւրմէ բազում ինչ զարմանալի զննութեամբ և հանճարով , առաւելսպէս ՚ի վերայ պարզ և խառն հաւանականութեան , ՚ի վերայ պատճառաւաց բնազանցական մոլորութեանց , ՚ի վերայ ոճոյ և վարկածից և արուեստի ուսանելոյ : Կոյնսպէս Պիւֆիէ գալլիացի առաջին եղեւ որ զկազմութենէ գաղափարաց գեղեցիկ ճշգրտաբանեաց ըստ մոտաց ՚լոքի : Եւ յիսալիացւոց Անտոն Ճէնովէզի քաջ գտաւ կոխել առաջին զշաւիզո ՚լոքի , և ողջմուութեամբ ծանօթացուցանել իւրոց ազգայնոց զնոր ոճն իմաստասիրութեան : Վարժապէտ հզօր կացեալ ՚ի համալսարանին Նէապոլի , ընդ բանականին յաւել և զդատողականն արուեստ . և ՚ի բնազանցութեան խորագոյնս և մանունս քննեալ ճառեաց զամենայն ինդիրս կարեւորս : Զկնի նորա եկին Տուակէթթի , Սառթի , Ծանօթթի , Կալսւփի , Թրոյիզի , և այլք բազումք :

Իսկ Պետրոս Պէլ և Ֆուէռէ ՚ի գալլիացւոց , ՚ի զգայապաշտ նիւթականութիւն և յանհաւատութիւն միտեալ շարաչար , խառնակութեամբ լցին զմիտս իւրեանց և ըզ-

գիրս, մինչև բազում հանձարովն խրեանց՝ յոլով ուրեք ցոփարքան և յանձանց իսկ հերձեալ երեխն : Զհետ նոցա և Հելուետիոս բժիշկ, լըքեան իմաստափրութեամբն պանձացեալ, այլ արդեամբք եպիկուրեան, անց ըստ չափ 'ի ջատագովութիւն զգայութեանց, մինչև 'ի նիւթականութիւն գթեաց և գթեցոյց ոչ սակաւս : Նոցին սակի և համամիտ ընդ նոսա գտան յետ ամաց՝ համբաւաւորք ոմանք յանցեալ դարու, Վօլթեռ, Յ. Յ. Ռուսո . Տալանակեռ, Քօնտոռսէ, Տիտոս, Օլլաք, և այլք . որոց օրինակն և բանքն բազում յեղափոխութեանց և խառնակրօնութեանց պատճառք եղեն, և լինին ցարդ մատեանք նոցա : Եւ չափցեմ ընդէք համարձակ . զի թէ գիտունք ոմանք սուս բամբասին, այլ ոչ և ամենայն բամբասեալքն սուս իցեն :

Այլ զի յայտնի լինիցի հիքութիւն և անմիաբանութիւն մարդկեղեն մոտաց, 'ի նմին ժամանակի մինչդեռ դոքա 'ի զգայութիւն ընկղմեալ՝ բաց 'ի նիւթոյ և 'ի զգալեաց ոչինչ ճանաչէին, փոքր ինչ հեռի 'ի նոցանէ յԱնդիս Պըքըլ ոմն անուն, նոր պիւռնական, ժխտեաց բնաւ և զգոյութիւն ամենայն զգալեաց, և ընդ երազս և անուրջս գրեաց զամենայն . որում ոչ պակասեցին համախոհք : Բայց դիւրաւ յանդիմանեցան . զի և յուրանալն անդ բանիւ զմարմնոց գոյութիւն, արդեամբք հաստատէին զայն, գրութեամբն, մատենիւքն, ճայնիւ առ այլն խօսելով, և ջանիւքն 'ի հաւան զնոսա ածելոյ :

Եւ մինչդեռ սա զազդմունս զգայութեանց իբրեւ անգոյինչ և անհաստատ մերժեալ, 'ի դերեւ հանէր զվկայութիւն նոցա, մերձ առ նմին 'ի նմին աշխարհի և 'ի Հոլանդիա նըստեալ այլք ոմանք, ոչինչ ընդհատ քան զնա պիւռնականք, ստեղծանէին վեցերորդ իմն զգայարան բարոյական, որ ծննդակից մարդոյն կարգեալ իցէ 'ի ընէ յընտրութիւն բարույ և չարի, ինքնաբաւ և անկարօտ գործակցութեան մտացն, իբրեւ զմի 'ի թանձը և մարմնաւոր ըղդայութեանցս, որովք ընտրեմք զքաղցր և զգառն, զցուրտ և զչերմ : Եւ այս, որպէս թուփ, 'ի զերծուցանել զբարոյական կարեւոր ճշմարտութիւնս՝ յանստուգութենէ և 'ի սուս վկայութենէ այլոց հնգից զգայարանացն, յորոց է և մտացն ամենայն գործ . բայց ծայրն 'ի նիւթականութիւն ելանէ, թէ ոք մանք քննեացէ : Գտիչք կամ չատա-

գովք այսր կարծեաց եղեն անդլիացիքն Քըմպըրլընտ ,
Շաֆթսպըրի , Հիում , Հըշիսրն , և այլք : Եւ այսր կար-
ծեաց ընդ բնածին գաղափարսն է տեղի , թէպէտ և կեր-
պարանքն նոր Ծուեցուցանեն զնա : Շատ լցի յիշեցու-
ցանել , զի բարութիւն և չարութիւն գործոց ոչ պարզա-
բար յիրսն են , թէ զգայութեան ազդիցին , այլ 'ի բազմա-
պատիկ բնական և բարդյական համեմատութիւնս նոցին
առ իրեարս . որոց զանազան գաղափարացն միաբանու-
թեան կարօտին միտք յընտրութիւն բարւոյն և չարի : Օ-
րինակ իմն , այր մի սպանեալ ընկեցեալ և նոյն իսկ սպա-
նութեանն գործ՝ ինքնին ոչինչ յայտնէ անիրաւութիւն .
այլ եթէ 'ի վերայ յաւելցի այնմ և սպանողն , և սմա՝ բըռ-
նութիւն և հարատահարութիւն և զրկումն :

Աակայն ճշմարիտ և ուղիղ իմաստասիրութեանն 'Լոքի
աշակերտք և զարդացուցիչք ոչ պակասէին , այլ մանա-
ւանդ օր քան զօր բազմանային , ջանացեալ 'ի կատարե-
լութիւն զայն հասուցանել : Յորոց Պօնէ ոմն գալլիացի , որ
ձեռնարկեաց 'ի վերլուծութիւն զօրութեանց հոգւոյ , ցու-
ցեալ զարձակումն նոցին 'ի մարդն գեռ անզգայ՝ իբրև 'ի
չնչաւոր արձանի , բաւական գտանէր յայն գործ մեծ և
կարեւոր , եթէ եր գիտացեալ չափ դնել իւրում հանճա-
րոյ : Բայց արկ նա զմիտսն 'ի փորձ , որում ոչ իւրն զօրու-
թիւն և ոչ ուրուք մաշկանացուի կարէր հանդարտել .
վասն որոյ և մոլորեցաւ ոչինչ ընդհատ յայնցանէ , որ ե-
րազայոյզ կեղծեօք ուղղախոհել կարծեն : Աակայն ընդ
վրխանաց՝ է առ նմա և օգուտ բազում . չիք ոք հմուտ
քան զնա կազմածոյ խորհրդոց մտացն , և զօրութեանց և
գործոց հոգւոյն . և ուր 'Լոք երկայնաբան է , աս համա-
ռոտախօս , երբեմն և յանդէպս : Աակայն 'ի վերածնու-
թեանն մատենի յորում առ նա ցուցանել զհանգամանս
յարութեան մարմնոց , ընդ արտուղի անկեալ երեի :

Այլ նշանաւոր յողջամիտ աշակերտս 'Լոքի , որ իբրև
յիւրմէ բյլսելով զվարդապետութիւնս նորա , ուղղեաց և
կատարելացոյց զամենայն , եղեւ Փոնտիյլեաք՝ բազմարդիւն
իմաստասէրն գալլիացի . որ այնչափ քաջացաւ 'ի վերլու-
ծական արուեստին , զի 'ի ձեռին նորա փոխեցաւ հոգեբա-
նութիւնն իբրև 'ի փորձական իմն ընազննութիւն : Զանա-
զան ընտիր ընտիր մատենիւք , որոց զլիսաւորք են Քննու-
թիւն սկզբան մարդկային գիտութեանց , յաղագս զգայու-

թեանց, յաղագս ինքնօրէն կարգածոց, յաղագս կենդանեաց, յաղագս արուեստի խորհելոյ, արուեստ բանական և հանդէս ուսմանց, ձեռն արկ 'ի բացայայտել և հաստատել զամենայն որ ինչ ճշմարտութիւնք կային 'ի գիրս իմաստափրաց մինչև 'ի 'Լոր, յուղղել զսխալանս նոցա, և տապալել հիմնովին զինքնագիւտ կամամտածութիւնս կարդեսեանց և մալպրանշեանց, որը դեռ ունեին գրբպրոց : Մանր զննութեամբ և գիտողութեամբ պայծառացոց և գրեթէ ստեղծ զգիտութիւն գաղափարաց, ըստ նմանէ և զըառից և զլեզուի հմտութիւն : Ի զգայութեանցն ճառի եղեալ ըստ Պօնէի արձան մի շնչաւոր կամ մարդ գեռ անզգայ, և տուեալ նմա մի առ մի զգգայարանսն ըստ հածոյս, ցուցանէ զօրինակ և զհանգամանս արձակելոյ 'ի նմա զօրութեանց հոգւոյն և գործոց նորա : Որով եցոյց և հաւաստեաց յամենայնի զառածն արիստոտելեան, թէ ամենայն գիտութիւնք մեր ընդ զգայութիւնս մտանեն 'ի մեզ : Եւ ուր 'Լոր ինքնին՝ հզօր գիմամարտն բնածին գաղափարաց՝ յանդէտս սահեալ էր 'ի նոյն, ընդածինս գնելով զգօրութիւնս հոգւոյն, սա բացէ 'ի բաց հերքեաց յիմաստափրութենէ զամենայն՝ որ բնածին կարծիցի 'ի մարդումս և առանց զգայութեանց հմտութիւն : Եցոյց, թէ պէտ և 'ի հարեանցի՝ իբրև զթովմաս կամպանէլ, թէ ամենայն հոգեղեն զօրութիւնք մարդոյն՝ եթէ մանր կըրկտեացին՝ երթան յանդին 'ի միայն զօրութիւն զգայութեան, և են այլ և այլ կերպարանք նորա ²⁵ : Զգօրութեանց և զազգեցութեանց հոգւոյ խուն ինչ ևեթ նշանակեալ էր 'Լոր . սա խնամոտ և կատարեալ քննութեամբ մանրապատում ճշգրտաբանեաց մեզ զայնս ոճով իմն և գեղեցիկ կարգաբանութեամբ : Նշաւակեաց զանշահութիւն և զվոտանգ մտաւորական յօրինուածոց . հորդեաց արահետ 'ի գիւտ ճշմարտութեան, յայտ ածեալ 'ի բանական արուեստին զսկիզբնն զայն ցայն վայր անծանօթ, թէ որպէս բնութիւն՝ ամենեցուն մայր՝ կրթէ զմարմնոցս զօրութիւն, սոյնպէս նմա միայնոյ է անկ անմոլար առաջնորդել մոտաւոր զօրութեանցս և ուղղել զնոսա ընդ հետս ճշմարտութեան :

Այսքան և այսպիսի գիւտովք պայծառացեալ նորս այս ոճ իմաստափրութեան՝ պատուեցաւ առ անաշառ և մանրակրկիտ ճշմարտասերս, և յորդորեալ սփուեցաւ ընդ ա-

մենայն իմաստախնդիր աղբնու , և 'ի ընաւ գիտութիւնս և յարուեսսու և մատենագրութիւնս ընծայեցոյց արդիւնս շայեկանս , և դասս ականաւոր մատենագրաց կարգ ըստ կարգէ . զրոց և ոչ զցանկ անուանցն ներէ մեզ տեղիս ընդ գրով առնել . նա զի և յանուանց գիտութենէ ոչինչ է շահ , և կասկածեմք իսկ թէ գուցէ ձանձրացուցաք ևս յաճախութեամբ անուանց : Եւ ոչ այդ միայն , այլ և բացաւ դաշտ և ասպարես համարձակ յառաւել յառաջադիմութիւն և 'ի կատարելութիւն ամենայն հմտութեանց մերոց , և նորին իսկ բանական իմաստասիրութեան , 'ի լուծումն ամենայն տարակուսութեանց և 'ի յայտնութիւն ծածուկ խորհրդոց և գաղտնեաց նորա :

Ի վերայ ամենայնի այսորիկ , փոխանակ զի չմնայր ինչ առնել , բայց հաւաքել 'ի մի զամենայն ուղիղ վարդապետութիւնս փոնտվլեաքայ և այլոց իմաստնոց , և յո՛մ և 'ի կարգ գիտութեան աւանդել , յարեաւ յանկարծակի 'ի գերմանիա այլ իմն նոր յօրինուած բանական իմաստասիրութեան , յաղմկել զամենեցուն միտս : Քանի՛ ոմն անուն եհան 'ի ըյս զանազան մատեանս յաղագս Դատողութեան տեսական և գործնական բանի և դատման , յորս աւանդէ զգերազանցականն անուանեալ իմաստասիրութիւն : Թէ պէտ և ոչ 'ի սպառ վտարեաց զգայութիւնս յիշանութենէ իմացական գործոց և հմտութեանց , սակայն յոյժ ընդ փոքրու գրաւեաց զահման նոցա , զամենայն ծանօթութիւնս մեր ասելով փորձիւ կամ ի զգայութենէ : Քանիզի համարի ունել մեզ 'ի ծնէ զգայութիւն մի ներքին , յորում յառաջնութ գանձեալ կան ամենայն ընդհանուր տեսակք էւութեան , գոյացութեան , միջոցի , ժամանակի , միութեան , տեղութեան , քանակի , որակի , առաքինութեան , շարութեան , և ամենայն ջշմարտութիւննք տեսական երկրաչափութեան : Որոց ամենեցունց քամնզի չիք անձնաւոր ընութիւն կամ թանձրացեալ էւութիւն , և նմին իրի դըժուարին և անմարթ էր վեր 'ի վերայ տեսողի՝ քննութեամբ հասանել , թէ զիարդ զգայութեանց աղդիցին , կամ որով մանուածոյ ճանապարհաւ 'ի զգայութեանց առնուցու զայնս միտքն , այսորիկ աղագաւ՝ որպէս 'ի բազմաց՝ նոյն և 'ի փանթէ , ըստ որում յայտնի երևի 'ի վարդապետութիւնս նորա , ընածինս կարծեցան և ապստամբու

'ի զգայութեանց : Բայց թէպէտ և զայդոսիկ ոչ ասաց նա բնածինս , այլ աւանդեալս կամ գանձեալս 'ի մեզ , զի ըստ պիտոյից կենացս զարթնուցուն 'ի ժամու . 'ի ձեռն զգայութեան և փորձոյ , դիւրաւ իմանայ ամենայն ոք՝ թէ ոչ նոր ինչ է այդ ուսումն , քան թէ պլատոնական տեսակացն կամ գաղափարացն երազք . և թէ կայ ինչ աւելի ինքնաստեղծ յօդուած՝ իւրում՝ ոճոյն սեփական , մթարք են ամենայն և խրթնաբանութիւնք : Սակայն և 'ի մթան անդ բաւականապէս յայտնի եղեւ , թէ միտք այսր վարդապետութեան է նախապատուել զշարադրական ոճն քան ըզվերլուծականն , իմա ոչ զյառաջադոյն լուծեալս ինչ վերըստին յօդաւորել , այլ միայն կարգաւորել զինքնահնար և զմնացածին կամ զանսոյդ մտածութիւնս . որով և լինի 'ի հարկէ տարերս գիտութեանց առդնել զներքին զգացումն կամ իմացուած հոգւոյն և զգիտակցութիւն , ոչ մանրախուզիւ նկատեալ , այլ յախուռն և վեր 'ի վերոյ տեսեալ : Որում հարկաւ հետեանայ՝ ամենայն ընդհանուր գաղափարաց յառաջ քան զմանաւորսն ընածինս լինել 'ի միտս մեր , և մասնաւորացն յընդհանրոցն ծնանել . կամ եթէ մասնաւորքն 'ի ձեռն զգայութեանց գայցեն մեզ , գոնէ ընդհանրոցն այլ պատճառս ունել : Որ է ասել պարզ բանիւ , թէ միտք մարդոյ յառաջ քան զաշխարհս իցէ . զի այս է ասել ընածին գաղափարս : Խրե զի չիք ինչ գաղափար 'ի միտս , որոյ նախատիպն ոչ գտանիցի 'ի զգալի ընութեան , կամ չիք 'ի զգալեաց գուշակութիւն կամ մտաւոր տեսութիւն ընդ զգալուց իրիք կապեալ : Որոյ վասն իսկ այնքան զանազանութիւնք կարծեաց և տեսութեանց են . որ չպարտէր լինել , եթէ ընածին ինչ էին և անկարօս զգայութեանց : Այս կարծառօս հերքումն է ընածին գաղափարաց . ինդիր մեծ և ընդարձակ :

Այլ զմուրբութիւն այսր վարդապետութեան յուղիղ շաւղաց իմաստասիրութեան , լիով և քաջաբար յամնիմանեցին բազումք և 'ի նոցին իսկ գերմանացւոց . որպէս Քրիստիանոս Սէլ , Մաքօ , Շթօռքէնաւ և այլք , որք առարկու ելին Քանթի և հետեւողաց նորա , մանաւանդ հռչակաւորն Եաքօպի , ցուցեալ թէ չիք բնաւ 'ի միտս մեր պարզ տեսական բան և իմացութիւն , կամ պարզ զգայականութիւն . և թէ բովանդակ այդ ոճ հիմնի 'ի մոլար ճա-

նաշումն անմարմին գաղափարաց և ընդհանուր սկզբանց , և 'ի թիւր կարծիս հնոց , որպէս թէ զմանաւորաց ընդհանրօքն դատիցիմք , և ընդհանուրքն յառաջ քան զմասնաւորսն կայցեն 'ի միտս մեր : Որ այն ինքն է , այլովք բանիւ դՊլատոնի նախագաղափարան ուսուցանել : Եւ թէ ուսումնդ այդ նոր կարծեցեալ , վասն նորութեան մեկնութեանցն կամ ցուցմանց , խառնուրդ է յամենայն աղանդոց հնոց և նորոց , և յանդի 'ի պաճուճեալ տպիտութիւն , յանհնարութիւն ձշմարիտ գիտութեան , 'ի պիտոնական յերկուականութիւն և յոչինչ , այլ որ չար ես է , 'ի կատարեալ նիւթանականութիւն , արտաքոյ կարծեացն վանիթի : Ի գերմանացւոց որք խոտորեցան 'ի գայթի գայթ շաւղաց 'Աէիբնիտիսսի և վանիթի , երեւելի գտայոյժ 'ի կողմն ուղիղ իմաստասիրութեան Տիրվինկ ոմն անուն , որ խոհական ընտրութեամք և գրեթէ առանց ուրուք աշակերտութեան կամ աշառութեան եկաց 'ի մէջ ըզդայապաշտից և մոտամոլց :

Մինչեռ այսպէս բազում արք աւագք 'ի Գերմանիա և և 'ի Գալլիա 'ի կուր կային ընդ գերմանացւոյն ընդ այնմիկ , յարեաւ յԱնդլիա այլ իմն այլանդակագոյն վարդապետութիւն , զոր մօտ յաւուրս մեր երազեաց Տարուին ոմն անդլիացի 'ի մատենի Աէնսական օրինաց . յորումբազում հանճարով և չքնաղ զննութեամք հնարի հիմն 'ի վեր տապալելու ոչ զսկզբունս միայն գիտութեան մոտաց , այլ և զլեցուն սովորական , յօտար միտս տարեալ զբառս ուսմանն . և ստուերաց և ցնորից մարմին զգեցուցանել , և անէից էութիւն տալ և զէսն յոչութիւն տանել . և անընտրողնիւթական մեկնութեամք հոգեղին զօրութեանց և գործոց մոտացն փոքր մի և խախտէր արդեօք զհաստատուն հիմն ամենայն իմաստասիրութեան մերոյ՝ զբանաւորութիւն հոգւոյ և զիմացականութիւն :

Արդ յանկ ել աւասիկ համառօտագիծ պատկեր իմաստասիրութեան , ըստ ականաւոր արանց և գլխաւոր կարծեացնոցա , յորս բովանդակին և այլք յուլովք 'ինախնեաց և յարդեաց : Յընդարձակ պատմութեան իրացդ , ընդ յուլութեանն տեսանի և յետին աղքատանք , աղջամուղջ և անկատարութիւն , յաւել թէ և գարգաշնք և եղկութիւն մարդկային գիտութեանց : Ըստ խոստարաննութեան մերոյ յերկարեցաք փոքր մի 'ի վերայ բանական և բնա-

զանցական մասին իմաստասիրութեան , որ յաղագս սկըզբան մարդկային հմտութեանց , յաղագս ո՞նց մեկնութեան հոգեղէն զօրութեանց և գործոց , բնածին կարծեցեալ գաղափարաց և ընդհանրոց կամ չանձնաւորաց : Վասն զի սոքա են հիմն գիտութեանցն այնոցիկ և այլոց բաղմաց . և բատ հիմանն արկանելոյ ՚ի հաստատուն վիմին բնութեան և ճշմարտութեան , կամ յաւազուտս ինքնակամ վարկածից և կարգածոց , և շինուածոյն լինի կանգնութեն՝ ոչ բանականին և եթի իմաստասիրութեան , այլ և բնագննականին : Եւ զի մանր քննութեամբ գտանեմք գըլխաւոր պատճառս երկպառակութեան այսքան և այսպիսի աղանդաց և հերձուածոց և դպրոցաց ՚ի սկզբանէ լիեալ զհակառակ կուսակցութիւն նոցա , ոմանց զիորձոյ և զզգայութեանց և եթ կողմ ունել , և ոմանց զմտախոհութեան , զմտածութեան և զբանական գուշակութեան միայն , ՚ի քնին և ՚ի գիւտ ճշմարտութեան . կիսոց աներկըայ և վճռաբար վարդապետել զամենայնէ , և այլոց յերկուանօք և անստուգութեամբ լնուլ զամենայն . կիսոց գործ մտաց և իմացական գաղափարս և եթ առդնել զամենայն , և այլոց զամենայն ինչ նիւթացուցանել կամ արտաքոյ զգալեաց ոչինչ խոստովանել : Փանզի գտանի իմաստասիրութիւն ՚ի սկզբանէ և այսր , ՚ի թալեսէ և ՚ի Պիւթագորայ մինչև ցայսօր , հերձեալ յայդ վեցեակ աղանդս հակառակս միմեանց , որ են համառօտաբար՝ փորձականութիւն և բանականութիւն , վճռաբանութիւն և յերկուականութիւն , մտաւորականութիւն և նիւթականութիւն կամ զգայականութիւն . որք և առհասարակ յերկուս ամփոփին , ՚ի կուսակցութիւն մտաւոր իմացականութեան և ըզդալի գիտաւորութեանց . որով և իմաստասէրքն ջոկին յերկուս դասս՝ մտամոլաց և զգայապաշտից :

Յետ այսր ամենայնի քննութեանց , արժան է մեզ այսուհետեւ յերկոցունց ծայրայեղ խոտորմանցն զգուշացեալ արդարակ կշռութեամբ խոհեմագունի կողմանն ընծայութիւն հաւանութեան մատուցանել ընդ Սոկրատայ , Արիստոտելի , Պաքոնի , Ղոքի և ընտիր ընտիր համապատիւաթոռակցաց նոցա , յորոց յառաջեալ յոյժ տեսանի ՚ի վերջինս փոնտիլյեաք , որ ըստ վերոյ ճառելըս հոգ տարեալ և ջան սաստիկ , մեկնեաց և յստակեաց զգեղեցիկ աւանդս իմաստասիրութեան և ճոխացուցեալ պայծա-

ուացոյց : Բայց քանզի վարդապետութիւնք նորա ցան և ցիր սփոեալ են 'ի զանազան գրուածս նորա , և ոչ 'ի մի կարգ ուսման աւանդեալ , և ըստ սխալու մարդկութեան կան և 'ի նոսա վրիպակը ուղիղ տեսութեան , կարօտէր տակաւին իմաստասիրութիւն քրոտանց առն միոյ , որ զպէսպէս ցանկալի աւանդս հանճարոյ նորա և զայլոց իմաստնոց զրտեալ և պարզեալ յամենայն եկամուտ խառնուածոյ , 'ի մի յարմարեալ կարգէր յո՞ք և 'ի ձեւ և 'ի քանակ վայելուշ առ 'ի պէտս կրթաւէր մանկուոյ : Զայդ հոգացաւ և կարծեաց առնել յաւուրս մեր մեծ սեպուհն գալլիացի Տէսթիւթ Թոռասի , քառահասոր մատենիւ : Բայց և սորա մանրապատում ո՞ք և սաստիկ անաշառութիւն՝ երկարաբան թուեցաւ ոմանց և անհաճոյ զգուշաւոր և խոհեմ լսելեաց : Այսչափ դժուարին է զուղղորդն գնալ յիմաստասիրութեան : Սակայն ոչինչ եղեալ յուսահատ բազում վարժապետք յարդեաց ձեռն արկին և արկանեն զօրհանապազ 'ի գոյն վաստակ մեծ և կարեոր , զանացեալ հասուցանել զհամբակսն 'ի բուն նալատակ նորոյ իմաստասիրութեան , որ է ըստ Տէժէռանտոյի խոհական անաշառութեամբ 'ի միջոցին կալ վերասացեալ վեցեցունց հերձուածոց , և ըստ կարի միաբանութիւն առնել 'ի մէջ նոցա , որ ոչ յանցուացից ինչ է : Գանզի զգայութիւնք հաշտին ընդ բանին , յորժամ զգալի փորձք և հաւաստիք իրաց և դիտողութիւնք խառն և զոյգ ընթանայցեն ընդ մտախոհութեան և բանաւոր գուշակութեան , իբրև հիմունք սոցա և արմատք : Վճռաբանութիւնն միամտեալ հաւանի ընդ յերկուականութեան , եթէ իմաստասիրութիւն ոչինչ հաստատեսցէ՝ առանց նախ երկրայելոյ և քննելոյ և չափ գնելոյ հասողութեան մտաց : Խակ մտաւորականութիւնն միաբանէ ընդ նիւթականութեան և ըզդայականութեան , յորժամ ընկալցի իմաստասիրութիւն կրկին հաւաստի ճշմարտութիւն էից զգալեաց . մի՛ զի արտաքոյ մեր կան և զգայարանաց ազդին . և միւս ևս՝ զի 'ի ներքս 'ի մեզ կերպանան և 'ի ներքին զգայութենէ կամ 'ի վկայութենէ մտաց ճանաչին :

Այսու երրեակ միջոցօք վեցեցունց հակառակ ուսմանցն վայելչապէս խառնեալ յօդանայ ուղիղ ո՞ք իմաստասիրութեամն նորոյ , զոր իւրաքանչիւր ողջամիտ վարժապետք աւանդեն այժմ ըստ իւրեանց կարի : Եւ այսպէս

գեղեցիկ մեկնաբանին երեք գլխաւոր խնդիրք բանական իմաստասիրութեան, որ են՝ սկիզբն մարդկային հմտութեանց, ստուգութիւննոցին և հաւաստի ճշմարտութիւն. որ և են միանդամայն հիմունք բովանդակ իմաստասիրութեան : Առվին սահմանի և քննողական և ուսուցչական ոճ այսր իմաստասիրութեան, և դատաւոր ուղղութեան սորա. զի ուր մտամոլքն՝ ոճ ունին զշարադրականն, յընդհանուր սկզբանց և առածից առ մասնաւորս և առ իրս իշանելով, սա ընդ հակառակս զվերլուծական ոճն առնու ՚ի ձեռու, ՚ի մասնաւորաց և ՚ի յայտնեաց ելանել յընդհանուրս և յանձանօթ ճշմարտութիւնս : Ուր նոքա ընտրող ուղղութեան գնեն զբացայայտութիւն, կամ զընդհանուր սահմանս և օրէնս բանական արուեստին, կամ զվկայութիւն ՚ի գերաբնական կարգէ, սա ատեան ուղղագատութեան ճանաչէ ըստ տեղւոյն և ըստ պատշաճի իրին՝ է զի զզգալի ազգմունս իրաց, է զի զմիաբանութիւննոցա առ միմեանս և առ բանն, կամ զանմիաբանութիւնն յորմէ անհնարութեան կամ հակասութեան օրէնքն ելանեն, և է զի զներքին զգայութիւնս մեր և զհասարակաց խելս, որ է գիտակցութիւն և վկայութիւն մտաց :

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

1. Այս այն է զոր ումանքը պիտակաբար համաբնագույն ասացին . սակայն այդ ձայն սոսկալի՝ ոչ գտաւ ուրեք առ հարս լեզուիս, և ոչ իրացն ՚ի դեպ գայ: Զի յոյնն բէտօ ժամանակած, մէն նա ֆէուի տա, յորմէ առ եւրոպացիս Meta-physica կոչեցաւ գիտութիւնն, ըստ կարգի դասառութեան դրոցն Արիստոտելի, իմանի յետ բնականացն, որպէս տես-ցուք զկնի: Իսկ ՚ի վերայ իրացն առեալ՝ իմանալի է գեր քան զբնականան, ըստ որում իմանան ամենեքեան . յոր միտս և մեք ՚ի նախնեաց ունիմք զբնազանցական ձայնն: Իսկ յաղագսբանական արուեստին տես զտեղեկութիւնն որ ՚ի վերջ մատենիս:

2. Զափաբերութիւն է ըստ նախնեաց և ըստ հայերէն լեզուիս՝ գիտութիւնն որ ուսուցանէ ուղիղ բերել զչափս քանակի մարմնոց և թուոց: Զյոյն ձայնն սահմանաւութիւնն, կամ սահմանաւութիւնն, ունանց ՚ի հնորոց ըստ բառին թարգմանեալ եղին Ուսողութիւն և ուսումնականութիւն: Անչափ սերն և յարդ այնք գիտու-թեան թերեւս յայդ անուն կոչեցին զնա, որպէս թէ այն միայն իցէ արժանի ուսումն: Ավակայն ամենայն գիտու-թիւնք են ուսումն, և հմտութիւն նոցա՝ ուսումնականու-թիւն. յոր միտս յաճախագոյն առնուն և Յոյնք զիւրեանց ձայնն, որ և է յատուկ միտք բառին: Ապա առաջի անա-շառ և ուղիղ քննութեան ոչ կարե կալ ձայնդ: Իսկ չա-փաբանութիւն առաւել զչափով բանից յօրինողն ասէ, որ են տաղաչափ:

3. Կոչի և Զարաւրշտ և Զէրտիւշտ կամ Զարտիւշտ: Առ Գրիգորոյ Մագիստրոսի գտանեմք և Զրադաշեշտ ա-

նուանեալ զհամանուն քէշակարկատն Պարսից . զի ասէ այսպէս վասն նորա 'ի թղթին առ Աբրեհիմ ամիրայն . « Զրադաշտ մոդ Պարսից , զոր Զրադահեշտն կոչեն , որ յաստեղաց մոլորականացն ասէ լինել երկրի , և վարել նոքօք մեզ մինչեւ եօմն դար , և ապա ապականիլ : Սա առաջին Աղամ ասէ լւալ , բայց զկնի ոչ ասէ կատարած լինել երկրի . քանզի 'ի նոյնն , ասէ , դարձեալ յեղափոխեալ շրջեսցի և նորոգեսցի » :

4. « Միթրոս կարծի պարսիցն արեգակն գոլ . և զոհս առնեին նմա և տօն կատարեին : Արդ ոչ կարէ ոք ձօնել նմա , եթէ ոչ յառաջագոյն ընդ աշտիճանս տանջանացն անցանիցէ . և աշտիճանքն են թուով ութասուն , ունելով նուազութիւն և առաւելութիւն . և տանջէին յառաջագոյն թեթեագունովքն , և ապա դժուարագունովքն . և յետ անցանելոյ ընդ ամենայն տանջանսն լինի կատարեալ որ կատարելոցն իցէ : Իսկ տանջանքն , ընդ հուր անցանել ընդ սառնամանիս , ընդ քաղց , ընդ ծարաւ , ընդ երկայն Ճանապարհս և ընդ ծով գնալ , և պարզաբար ընդ ամենայն այսպիսիս դժուարութիւնս » : Անհոս . մէին . առասապ :

5. Բազում ինդիքը և երկպառակութիւնք են առ հնագէտ քննիչս , մականոնն իցէ Լայերատիոն , եթէ 'ի քաղաքէն յորջորջութիւն :

6. Չիցէ արդեօք օրէն կարծել , թէ Հերմեսն անուն՝ նոյն իսկ Եռմեծ կամ Եռամեծ ձայնն իցէ հայկական , զոր և յիւրեանց լեզու յեղլով Հելլենաց՝ Տրիսմեդիստոս ասացին , որ է երիցս մեծ :

7. Թուի ոմանց թէ կեղտն անուն , որ և գաղատացի , ծագեալ իցէ 'ի գաղութ կամ գաղթ բառէ մերմէ . զի էին իսկ ազգքն այնոքիկ գաղթականք արեւելց :

8. « Սոկրատէսս այս էր ազգաւ աթենացի , իմաստասէր հրահանգաւ : Զսա իբրև գե ինչ մուծանելով 'ի քաղաքաբութիւնս Անիտոս և Մելիտիս հայցեցին 'ի սպանդ , և դատապարտեալ եղեւ մեռանել վասն ապականելոյ զհամբական , և ապա ըմբռնելով կոնիոն և արբեալ մահացաւ : . . . իմաստասէր գոլով շրջէր 'ի մէջ ամբոխին , և զհամբական յորդորէր յիմաստասիրութիւն , և մանաւանդ եթէ թուէին նմա առ 'ի յիմաստութիւն Ճահաւոր գեղեցկագոյնքն 'ի համբակացն . քանզի զքաջակերպն ասեն և քաջաբանս գոլ : Արդ էր կարծիս առ աթենացիսն , եթէ մանկամոլ էր Սոկրատէս , վասն ընտրելոյ զգեղեցկակերպն . այլ գտան 'ի Պլատոնի և 'ի Թեէտիտոսի տրամաբանութեան , և յամենայնի այսպէս ասելով 'ի դէմս Սոկրատայ , եթէ գեղեցիկ է թեէտիտոս , և գեղեցիկ է Քարամիդէս : Արդ շրջափոխի բանս , և ցուցանէ մեզ Պլատոն , եթէ գեղեցիկ զհոգին ասէ և ոչ զերեսս : Ա.Յ. կաս-

կած եղեւ թէ և ընդ Ալկիպիդէս շաղաշարեցաւ ըստ գարւ շելի տռփութեան . այլ սոկրատեանքն ասելով ասեն, թէ շաղաշարեցաւ ընդ ամենայնի, ոչ ախտաւոր տռփմամբ, այլ աստուածային . այսինքն զիմաստասիրութիւն 'ի յուլովս անցուցանել . և զայն ասեն շաղաշարութիւն աստուածային » : Կանոն . մը ին . տուասով :

9. « Փանենոկրատէս և Արիստոտէլ Պլատոնի էին աշակերտը, որը և յետ նորա փոխանորդք եղեն համալսարանի նորա : Իսկ Փանենոկրատէս արար զստոյիկեան հերձուածն, իսկ Արիստոտէլ զճեմարանին : Արդ ասի թէ այնպէս ողջախոչ էր Փանենոկրատէս, որպէս զի՝ խրախանի յափրոդիսականն ոչ շարժէր, զի հնազանդեցուցեալ էր զախտանասաւ բանին : Արդ երանելին Գրիգորիոս չարախօսէ զնըմանէ իրու զորովայնամոլէ, և ասէ թոշակակեր, և ոչ 'ի մի ինչ կերակրոց հրաժարող, որպէս օրէն է իմաստասիրի » : Կանոն անոր :

10. « Արիստոտէլէս իմաստասէր աշակերտ լեալ Պլատոնի, թէպէտ և մանաւանդ յաղագս բնաբանական մասինն իմաստութեան յոլովացեալ, փութացաւ ամենեցունց՝ որ յետ երկնայնոցն մարմինք՝ զպատճառս նոցա ասել և զբնութիւն, իբրև զերկրի, զծովու, զօդոյ, զեթերին, զկենդաննեաց, զտնկոց, զշարժմանց և զորոտմանց, և պարզաբար ասել՝ զամենեցունց զայդախեացդ : Իսկ յետ քննելոյն զամենայնի զբնութիւնս, կամեցաւ և զիւրիպոսի բնութիւնն բնաբանել . և ոչ կարացեալ հասանել, ընկեց զինքն յայն տեղի ծովուն, բարբառելով այսպէս . Փանզի Արիստոտէլէս զԵւրիպոս ոչ ըմբռնեաց, ըմբռնեալ լիցի Արիստոտէլէս յԵւրիպոսէ : Եւ մեռաւ Արիստոտէլէս այսպէս : Այլ Եւրիպոս տեղի է 'ի ծովուն 'ի մէջ բիովտացւոց կղզւոյն և Ատտիկէոյ, որ եօթնեկի յաւուր դարձեալ լինի և փոխեալ լինի ջուրն, (իմա ժողովի և տեղի տայ) : Որ յայսմ 'ի կողմանս ճողովրել թուեցեալ և ընկլեալ, և դարձեալ բղիսեալ և լցեալ որպէս էր յառաջնումն . և այս լինի, որպէս ասացաւ, յաւուրն եօթն անգամ » : Կանոն անոր :

11. « Կինովսարգէս ասացաւ տեղին, քանզի զոհ մերձնորա լինելով 'ի տաճարի ուրեք, մտեալ շան յափշտակեաց 'ի զոհէ անտի միս, և երեք 'ի տեղին՝ ուր տաճարն լինեցաւ . և կոչեցաւ կինովսարգէս, իբրև թէ միս բերեալ 'ի շանէ » : Կանոն անոր : Զի հնայ, հսնէս իմոն, իմոն շուն է . արցօս և արցին, արծոս և արծիս սպիտակ և արագ . Իսկ օքրէ, տարօս, սորդս, սորդս միս :

12. « Եւ ասի շնականն 'ի փոխարերութենէ շան ցամաքայնոյ : Զի որպէս շունք ունին զպահպանականն և զընտրողականն իւրեանց յօտարաց, քանզի հալածեն զօտարս և պահէն զընտանիս . այսպէս և նա յընտրողականն և 'ի

պահպանսականն նոցունց : Եւ պահեր զիմաստասիրութեան աւանդութիւնս , և ընտրեր զճահաւորսն և զանյաջողակսն առ իմաստասիրութիւն » : Այնո՞ւ անդ :

« Վասն որոյ և զշնական իմաստասէրն եռապատուեան յորջորջմամբ սահմանեն : Կախ զի որպէս շունս զգաստագոյնք են և պահապանք գանձուց , այսպէսնոքա իմաստասիրութեան և օրինացն աւանդութեանն : Որպէս շունք զտեարս սիրեն և ընդ բարեկամնն ոչ յաշաղին , այսպէս և նոքա վարդապետաց իւրեանց և առ ընկերսն ողջախոհք և միամիտք : Եւ որպէս շունք զօտարսն հալածեն , թէպէտ և համասեռոիցն հանդիպին՝ ոչ նոցա դիւրաւ ծանօթանան , այսպէս և նոքա օտարուոի ձայնի ոչ անսան և զաւանդութիւն իւրեանց ոչ մոռացեալլինին » : Մատիսոր . ՚ի Շառողնուն :

15. « Անդեսթենէս շնական իմաստասէր էր . հարեալ և գան առեալ ՚ի դեմնն , առեալ քարտ գրեաց ՚ի նմա ըզ-հարկանողն , և կառուցեալ ՚ի ճակատն զքարտն՝ այնպէս շրջէր : ... Շնական իմաստասէր ոմն , ոմանք զԱնդեսթենէս ասեն և ոմանք զԶենոն գոլ զնա՝ երկելոյաբար , նաւելով նորա ՚ի ձմերայնի , և նաւաբեկութեան եղելոյ , գոհ-հութեամբ տանէր անանգութեան , և բարբառէր բախտին . Ով բախտ , շնորհ քաջ խոստովանիմ քեզ ունել , զի զգոյս իմ կացուցեր մինչ յաղաբողոնս : Յայտ է եթէ ըզ-դոյս իւր ՚ի նաւան բարձեալ ունէր , և կորոյս » : Աննոն . Թին .

*** *** *** :

14. « Արդ Դիոգնէսն այն այնպէս գոլով (շնական) , վայելքապէս քաջահամարձակ էր , և յանդիմանէր զզօրաւորս և զխոհեմականս և զամենայն մարդ . սակս բարե՞յ թերեւս ուստուցանէր , այլ քաղաքականագոյն և ծաղըապէս յանդիմանէր : Արդ առ այս հայելով աստուածայինն Գրիգորիս ասէ , թէ Դիոգնէս ծաղըական , մանաւանդ և պատրող , քան թէ իմաստասէր . այլ խառնախօսութիւն է ըստ քաղաքականութեան և պատրանաց յառաջ բերեալ բան : Արդ ասի թէ սա յաւուրս ձմերայնոյ յերեկուրեայ ՚ի կարաս իջանէր վասն ցրտոյն , և ՚ի տուրնջեան արտաք ելանէր վասն արեւոյն : Վասն որոյ և երբեմն ջեռոնլով սորա , հասեալ Ալեքսանդրոս մակենդոնացի ստուեր առնէր , ՚ի վերայ նորա , զի մի ջեռոցի . ասելով ցնա . Ասա . Դիօգնիսիս , զի՞նչ կամիս զի շնորհեցից քեզ : Եւ նա ասէ . Զայս ինչ շնորհեա ինձ , փոքր ինչ ՚ի բաց կացցես յինէն զի ջեռուցյ » : Այնո՞ւ անդ :

15. « Կրատէս թերայեցի էր բիովտացի ազգաւ . սա կամեցեալ իմաստասիրել ըստ նշանակի իմաստասիրութեան , առեալ զգոյս իւր ընկեց ՚ի հանդէսն բողոքելով այսպէս . կրատէս արձակեմ զոր ինչ կրատեսիս են . զի

մի յաղթեսցեն կրատեսի գոյքս կրատեսի : Եւ թողացոյց զվայրս իւր լինել միջօրօտք . և միջօրօտք է վայրն ուր արձակեալ լինին ոչխարքն ՚ի ճարակս . քանզի միջօ զոչխարքն է ասացեալ Հոմերոս . ասոուստ և միլաճարակք են հովեք , և միլովտ է մորթ ոչխարքն » : Այսն անդ :

16. « Եպիկուրոս այս իմաստասէր էր , և կապեցաւ զրուանցն ՚ի բռնաւորէն մակեդոնացոց : Եւ յետոյ կամեցեալ բռնաւորն լուծանել զիմաստասէրն , հարցանէր զնա այսպէս . կամին ով Եպիկուրէ զի լուծից զքեզ : Եւ նա տայր պատասխանի . Եւ զիարդ , կապեալ եմ ես : իբր հոգւոյնորա ոչ գոլով կապեալ : Արդ ասի մարմինն ոչ գոլ մարդ , այլ հոգին : Եւ ապա խորտակեցին զարունս նորա » : Այսն անդ :

17. « Եպիկուրոս իմաստասէր էր , և այնպէս կարծէր թէ աստանօր իրողութեանց Աստուածնախամութիւնն ոչ առնէ : Սա և կատարած ամենայն բարութեան զհեշտութիւնս զնէր : Խոկ արդ այժմիկ մեկնողք իմաստասիրացն ասեն՝ կատարած եղեալ նորա ոչ զանմաքուր հեշտութիւն , այլ զընականացոյն զհաստատութիւն : Սակայն իմաստասէրքն անարգեն զնա , և վասն զի կատարած բարութեան զհեշտութիւն զնէ՝ և ոչ զառաջին բարին միայն որ է Աստուած , և վասն զի նախախնամութիւնն ոչ առնէ » : Այսն անդ :

18. « Պիթագորականքն իմաստասէրք յառաջ եկեալք ՚ի Պիթագորէ սամիացւոյ . սոքա ՚ի ձեռն նշանաց զիմաստասիրութեան զաւանդս ուսանէին : Արդ աւանդեալ լինէր նոցա ընդ այլն և այս նշան , այսինքն որուունս ոչ ուտել , որ է ոչ մատնել զիրաւունս կաշառօք ընչից : Փանզի աթենացի դատաւորքն կանխաւ փոխանակ դատակինք տալց՝ որուամբ վարէին ՚ի դատապարտութիւն այնոցիկ որ ՚ի դատարանին հանգիպէին . արդ ասէին , եթե յոլուանց դատարանին ոչ է պարտ ուտել » : Այսն անդ :

« Պիթագորականքն աշակերտք Պիթագորայ , որ և Պիթագորոս , ուսեւալ ՚ի Փերեքդեայ , այսպէս հաւանեցան ձունել . զքառեակն պատուեցին , ՚ի քառեացս բնութեանց մեզ բաղկանալ . խոկ զքառեակն ՚ի չորից տարերց մեզ գոյանալ , իսկ զտարերսն պատուեցին ինքնեղ : ... Պիթագորա բականքն այսպէս ասեն . Աստուած մի է , և զսա ոչ որպէս ոմանք կարծեն՝ արտաքոյ յարդարման զարդուս է . ՚ի սմաբուրի բոլորում շրջանակի , ակն ածի , գէտ ամենայն սերման ծննդեան , խառնումն բոլորից ունելով գործօղ իւրոյ զօրութեանն , և գործոց սկիզբն , շնչացութիւն բոլոր շրջանակիս և ամենեցուն շարժումն » : Մադիսո . ՚ի նուողնուն :

19. « Կինս այս թէանով ՚ի բռնաւորէ ումեմնէ ըմբըռեալ հարկաւորէր ասել զանճառս հայրենիս : իսկ նա

զլեզուն ծամեալ՝ ի բաց եթուք, ոչ կամելով՝ ի հարկէ ասել ինչ բռնաւորին, ՚ի բաց խլելով գործարանին ձայնականի» : Կանոնն . մէին . առաջապ:

20. Յունական ձայնիւ մեքենականութիւն ասացեալ. որ երկու ինչ խառն յայտ առնէ. զգիտութիւն օրինաց շարժման, և զհնարագիտութիւն գործեաց և անօթոց և պէսպէս կահից կազմածոց ՚ի պէտս շարժման: Գնոյնս յայտ առնէ և ՚ի մեզ շարժաբանութիւն կամ շարժագիտութիւն: Այլ եթէ կամք իցեն և պէտք յառաւել Ճշդութիւն, օրէն է գերկրորդն կոչել ևս գործիագիտութիւն: Տես զտեղեկութիւնն ԿՅ ՚ի վերջ տրամաբանութեանն :

21. « Եմպեգոկլէսս այս սիկիլացի էր ազգաւ, վարժեալ պիթագորական իմաստութեամբ. և կամեցեալ սնափառիւ եթէ սրբազնեալ յերկինս վերացաւ, արկ զանձն իւր ՚ի հուրն որ ելանէ ՚ի լեռնէն սիկիլացոց յԵտնէ, զի այս է անուն լերինն. այլ հուրն ասի թէ Հեփեստոսի խառնելիքն է: Այդ նա կորեալ ՚ի ծեռն հրոյն, այլ Աստուած կամեցեալ հրապարակել զմնափառութիւննորա, և զդի նորա ողջ հրոյն ՚ի բաց ետ թքանել, նախ զհողաթափն, և ապա զմարմինն այրեցած խանձողեալ: Եւ այսպէս ծանուցաւ թէ ոչ վերացաւ, այլ կիզաւ ըստ արժանի սնափառութեան իւրոյ »: Կանոնն . մէին . առաջապ:

22. « Անաքսարքոս իմաստասէր էր. սա ըմբռնեալ յԱրքելայոսէ բռնաւորէ և արկեալ ՚ի սանդ՝ հարեալ լինէր նըգով փայտեղինս, և ՚ի սանդահարին մանրիւ և փոճոկել ՚ի նմանութիւն հնդոյ ինչ: Այլ սանդահարելով սորա՝ աղաղակէր և ասէր. Սանդահարեա սանդահարեա ըղպարկս Անաքսարքեայ, քանզի ոչ կարես զԱնաքսարքոս սանդահարել: Զայս ասէր նշանակեալ թէ իմաստասէր գոլով մարմնոյն և ոչ մի ինչ փոյթ առնէր »: Կայնն անդ :

23. Մատեանս այս և ՚ի մեր գրչագիրս գտանի մակարեալ Գրիգորինիւսացւոյ, վրիպակաւ խառնակութեամբ Նեմեսիոսի ընդ Կիւտացւոյ :

24. Գրահաշիւ ընտրեմք կոչել զԱլճէպրա, զոր ամենայն ոք դիւրաւ իմանայ ազգ ինչ հաշուի լինել գրովք. զի հաւանեալ եմք ազգային ձայնիւք իմանալի անուանս տալ իրաց, քան այլազգացի մուրացածիւ անիմայ մնալ և զիւզուն խժդժել: Կոյնսլէս փոքր մի զկնի զՓիմիայն կոչեցաք տարրալուծութիւն, կոչեմք և տարրախուզութիւն և բնալուծութիւն, որով և հարստութիւն լեզուիս տեսանի: Իսկ զԱլճիմիա կոչեմք ոսկեխոյզ տարրալուծութիւն և ոսկեխնդիր բնալուծութիւն: Տես զտեղեկութիւնն ԿՅ որ ՚ի վերջ գրոցս :

25. Եւ մեծն Պօսիւէ, հզօր աստուածաբան վարդապետն ուղղափառութեան, ՚ի նոյն կարծիս էր, թէ ամենայն զօ-

բութիւնք մտաց մերոց բովանդակեալ ամփոփին 'ի մի մի-
պյն : Բայց թէպէտ և ոչ բացայացտէ թէ որ այն իցէ, սա-
կայն մանր քննութիւն իրացն յայտ առնէ, թէ բաց միայն
'ի զգայութենէ՝ այլում իմիք չմարթի մատչել յայդ յա-
ռաջապատիւնախաթութիւն : Խակ այս ճշմարտութիւն
կամ կարծիք՝ անհաճոյ իմն թուի Սուտէի . և բազում
ինչ ըստգտանելի տեսանէ 'ի ճառս զգայութեանց չնշա-
ռոր արձանին Քոնտիլեաքայ :





ԱՐՈՒԵՍՏ ԲՈՆԱԿԱՆ

ԿԱՄ

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՆԱԽՆԱՇԱՏԻԴ

Բանաւորութեամբ առաւել պատուեալ մարդ քան զամենայն կենդանիս, իմա զօրութեամբն՝² որով ՚ի մամնաւորաց յընդհանուրս ելանէ, ՚ի պարզից ՚ի յօդուածոյս, յանձնաւորաց յանանձնաւորս, ՚ի զգալեաց յիմանալիս, և կշռադատութեամբ իրաց գտանէ զհամեմատութիւնս նոցին, ՚ի լրյա ածէ զսկզբունսն և հանէ զհետեռութիւնսն, գիտէ աճեցուցանել զօրհանապազ և կատարել զհմութիւնս իւր, որոշել ՚ի նոսա այլ և այլ չափս հաւանականութեան, և յամենայնի ընարել խորագիտութեամբ զճշմարիտն ՚ի ստոյ, զայս բնատուր պարգև գերազոյն՝ սիրեսցէ ՚ի վեր քան զամենայն, և մեծապէս հոգ տարցի ուղիղ վարել զայն ՚ի պէտո: Կա զի որպէս բանիւ առաւել է մարդ քան զանասուն, նոյնպէս ուղիղ և ճարտար վարելով բանիւ՝ առաւելու այր քան զընկեր, և մին զմիւսով անցանէ:

Սմին իրի բանականն արուեստ, որ ուսուցանէ բարւոք վարել բանիւ, կարեորագոյն է քան զամենայն, և արժանի բազմապատիկ և խնամուտ ջանից: Զի թէպէտ և ամենայն արուեստից և գիտութեանց մեծամեծ են օգուտք յաշնարհի, և յիրաւի է կրթել յամենեսին, սակայն չիք իբրև զա պիտանի և հարկաւոր: Մարթ իսկ է զըազմօքն զանց առնել, և այլովք ոմամբ պատիւ գտանել. իսկ ա-

ռանց անսխալ վարելոյ բանիւ՝ ոչ ոք երբէք պատուեսցի։ Եւ որ կամիցին ոք զայլով ինչ արհեստիւ և զգիտութեամբ դալ, սկիզբն ՚ի սմանէ պարտին առնել. զի առանց բանականութեան արուեստի, յայլ ինչ մի կալցին ակն յառաջդէմ լինելոյ՝⁴ :

Իցեն ապաքէն ոմանք, որ առանց ուսման գրոց ինքնին բաւական լինիցին ըստ կարգի գտակաւ ուղղաբանել զբազում ինչ իրաց, և ունիցին զբնատուր և զընդակից բանականութեանն շնորհ՝⁵ Բայց և սա ոչ ծննդակից մերէ, այլ բազում աշխատութեան գիւտ, յաճախ մտածութեան զիւրոյ և զայլոցն խորհրդոց և բանից, օժանդակութեամբ անագան փորձոյ, և բազում անգամ զկնի ստէպ դարձադարձի մոլորութեանց : Վասն որոյ ընդ ընդաբոյս և մննդակից բանականութիւն և ընդ արուեստաւորն անուանեալ՝ առաջին այս ինչ է ընդ մէջ կրծիմ, զի մննդակիցն դժուարահաս է . քանզի իւրաքանչիւր ինքնին պարտի ըստեղծանել զայն, առանց ուրուք օգնականութեան՝ իւրով ևեթ խորհրդով և հմտութեամբ : Երկրորդ՝ անձուկ է սահման նորա . զի յոյժ դժուարին է թէ ոք ինքնին միայն և յիւր ևեթ պէտս կարօղ լինիցի գտանել զամենայն օրէնս ուղղախոհութեան, զոր բազում մարդիկ հարուստ ժամանակաց խուզողութեամբ հազիւ գտին մինչեւ ցայժմ։ Երրորդ՝ նիազ է յանսխալութենէ . քանզի այնչափ են վտանգք մոլորութեան մտաց և շփոթելոյ զՃշմարիտն ընդ ստոյ, զստուգութիւն ընդ կարծեաց, մինչեւ կարի սպակաւուց է չգթել կամ չմոլորել, յորժամ առանց ուրուք ճարտարի առաջնորդութեան ընդ այս ոք արշաւիցէ ճանապարհ՝⁶ :

Ի ստէպ մոլորութենէ մարդկան ապաւինելոց յընդակից ևեթ բանականութիւն, այս ինքն է յանձանց մտածութիւն միայն և ՚ի փորձ, շարժեալ իմաստնոց և հանճարեղաց՝ ձեռն արկին զուղղախոհութեան օրէնսն ժողովել՝ ՚ի գլուխս գլուխս, սահմանել նոցա կարգս, և յօրինել զարուեստաւորն անուանեալ ուղղախոհութիւն։ Որոյ կրկին են դիտաւորութիւնք . զի ուսուցանէ նախ քննել և ճանաչել զՃշմարտութիւն, և ապա յառաջ բերել և հաւաստաբանել այլում։ Առաջինն վերլուծութիւն անուանեցաւ ՚ի նախնեաց . քանզի Ճշմարտութիւն իրաց ոչ ՚ի յայտ դայ, եթէ ոչ նախ կրկտեալ քըքրեսցի այն՝ յո-

բում պատեալ և թաքրոցեալ կայ : Զերկրորդն կոչէին Հակաճառութիւն . զի առ այլս խօսիւք յայտնի առնեմք և ցուցանեմք զՃշմարտութիւն :

Յերկուց մասանց աստի առաջինն է անշուշտ առաւել պիտանի և հասարակաց կարեւոր : Զի ՚ի գիտութիւն Ճշմարտութեան ամենեքին պարտին փափաքել . և բազում այն է՝ զի յանձնանց պէտս հարկիմք գտանել զՃշմարտութիւն , քան այլում ցուցանել : Եւ զի եթէ ոք չգիտիցէ նախ գտանել զՃշմարտութիւն , այլում աւանդել և ցուցանել զիարդ է կարելի :

Աակայն նախնի հակաճառողքն , մանաւանդ Դապրոցականք , գրեթէ երկրորդ մասին ևեթ ուշ եղեալ , ՚ի նոյն թափեցին դամենայն աշխատութիւն : Եւ յայնմ իսկ փոխանակ ուղիղ առաջնորդելոյ ընդ հաւասարիս Ճշմարտութեան , թերևս օրէն իցէ ումեք ասել՝ թէ ուսուցին մանաւանդ խառնախնդորել զայն և խրթնացուցանել : Փանզի յաւելորդ սէր բանակուուութեան ըմբռնեալ , քաջութիւն մեծ և շնորհ զվիճաբանականն համարէին արուեստ : Զոր և այնքան օրինօք խճողէին , այնչափ և այնպիսի սնոտի և դուժնաքեայ պատուիրանօք և խուժադուժ աղլսազուր բառիւք , մինչեւ զազնուականն արուեստ , զպիտանին և զՃեշտալի , եթէ արժանապէս աւանդեսցի , դարձուցին ՚ի խաւարչուտ ինչ և անշահ և տաղտկալի :

Այսմ վեասու , որ թերի և վրիպակ ցուցաներ զնախնեացն արուեստ բանական , զանազան օրինակաւ գարման մասուցին արդիք : Բայց զի ոչ Ճշդիւք բաժանեալ որոշեցին զվերլուծականն ՚ի հակաճառական մասնէն , տակաւին մռայլինչ մնացեալ երեկի ՚ի նմա և շփոթ , զոր մեք փոյթ կացուք , որքան է կարողութիւն , ՚ի միջոյ ՚ի բաց սրբել : Վասն որոյ կրկնն գրովք՝ երկուս առաջս եղեալ բանական արուեստիս , միոյն գործ արասցուք զօրէնս քննելոյ և ճանաչելոյ զՃշմարտութիւն , միւսումն զօրէնս առաջարկելոյ և ցուցանելոյ այլում :

Յառաջնում գիրս սկիզբն արասցուք և , յայտնել սուշ բանիւ զմասունս կամ զզօրութիւնս և զներգործութիւնս հոգւոյն , որովք ՚ի քնին մատչի Ճշմարտութեան :

Ե . Յուցցուք՝ զիարդ նովին զօրութեամբք և գործովք հասնէ ՚ի ծանօթութիւնս և ՚ի գաղափարս , որ հիմն են և սկիզբն հմտութեանց նորա : Յայտնի արասցուք ևս իւ զա-

նազանին՝ ՚ի բնէ ծանօթութիւնք և գաղափարը, իւ ըստ տեսութեան հոգւոյն, և իւ առ իրացն համեմատութեամբ զորս յանդիման առնեն :

՚. Քանզի ՚ի համեմատութենէ ծանօթութիւնց և գաղափարաց ընդ միմեանս ծնանին հմտութիւնք, անցեալ առ սոսա՝ ցուցցուք նախ յոր ինչ իրս դտանիցին . ապա զգանազանութիւնս նոցա և զայլ և այլ չափ հաւանականութեան և ստուգութեան իւրաքանչիւր, և զատեան ընտրութեան կամ զանստերիւր օրէնս ուղղադատութեան, զգիտութեանն ասեմ՝ որ տայ ընտրել յամենայնի զըստոյգն յանստուգէ, և զՃշմարիտն ՚ի ստոյ :

՚. Որովհետեւ կրկնակի ստանամք հմտութիւնս, կամ մերով դիտողութեամք և մտածութեամք, կամ յայլմէ ուսանելով, հարկ է նախ տեսանել զիարդ ստանայցեմք մեզէն ճշգրիտ և անվիճակ հմտութիւնս : Եւ յայնմ տեղ պատեհ առեալ պարապով անցցուք թեթեակի ընդ համառօտ և գլխաւոր սահմանս ազգի ազգի արուեստից և գիտութեանց, որոց մէն մի առանձինն յայլ և այլ իրս հմտութեանց մերոց պարապին :

՚ . Եւ քանզի զոր յայլմէն ուսանիմք հմտութիւնք՝ կամ զմտաւորական ինչ իրաց են, և կամ զեղելոց ինչ արդեանց և գործոց, նմանապէս յայտ առնել պարտ է յերկաքանչիւրսն զնշանակս ընտրութեանն, թէ ոյք այնոքիկ իցեն՝ որ յաւէտ և որ նուազ ընդունելիքն իցեն, և ոյք որ հերքելիքն : Եւ այս ինքն է արուեստն դատողական կամ քննողական ընտրութիւն, յամենայն արուեստիցն կարեւորագոյն :

՚ . Եւ զի մոլորութիւնք, որ օցտեն զմեզ ՚ի Ճշմարտէն, կամ յոչն վարելոյ բանիւ գան յառաջ և կամ ՚ի չարւոքն վարելոյ, արժան է տեսանել զգանազան պատճառս մխալմանց, և զՀնարս զգուշութեան նոցին :

՚ . Յերկրորդ գիրսն սկիզբն դնեմք ա, քննել կարճառօտս զբնութիւն և զպէտս բառից, զնշանմն ասեմ՝ որով յայտնեմք և ցուցանեմք այլոց զՃշմարտութիւն :

՚ . Ի բառից որ նշանքն են գաղափարաց՝ անցցուք ՚ի բանս կամ յասացուածս իմաստից, որ են պէսապէս հիւսուածք բառից ՚ի յայտնել զյօդաւորութիւնս գաղափարաց կամ զդատմունս, ցուցեալ զգանազան տեսակս նոցա և զպէտս :

՚ . Եկեսցուք յապացոյցս, այս է ՚ի շարս ինչ բանից՝ ու-

բով յայտնին խորհուրդք մոտաց և կազմին փաստք , ցուցեալ և զորցա այլ և այլ ազգս և զօրէնս նոցին :

Դ . Փանզի ստեղ պատահէ ոք՝ զի իմաստակութեամբ , իմա մնոտի և պատիր փաստիք , կամակորել խնդրէ զՃըշմարտութիւն և ըմբռնել զպարզամիտս , ինսամով մերկասցուք զբազմապատիկ իմաստակութեանցն կերպարանս , զի մի մեք ինչ ախտացուք , այլ և զայլն ըմբերանել :

Ե . Եւ զի յոլով ուրեք երկմոտէ ոք ընդ Ճշմարտութիւն կամ հակառակ կայ , ուստի լինին վէճք և բանակուռութիւնք , ցուցուք զկարգ և զօրինակ պայքարելցյն . զի Ճշմարտութիւնն ինքնին իւրով լուսաւորութեամբն 'ի յայտեկեսցէ :

Կ . Եւ որովհետեւ ոչ սակաւ հասանէ մեզ՝ զծանուցեալն մեր Ճշմարտութիւնս յայտնաբանել և ցուցանել այլոց արտաքոյ վիճաբանութեան , դիցուք առաջի և զայսր իրի ոճ վայելչական :

ԳԻՐՔ Ա. Ա. Զ Ե Կ

ՕՐԵՆՔ ՔՆՆԵԼՈՅ ԵՒ ՃԱՆԱՉԵԼՈՅ

ԶՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Ճշմարտութեան երեք դէմք որոշին յիմաստասիրաց .
բնազանցական , բանական և բարյական :

Բնազանցօրէն ճշմարիտ ասի ինչ , յորժամ զամենայն
իւրում բնութեան պատշաճեալսն յինքեան բովանդա-
կեալ ունի . որպէս ճշմարիտ ոսկի և ճշմարիտ արծաթ
այն է , յորում են ամենայն հանգամանք ուկւյ և արծա-
թոյ պատկանեալք : Յայս միտս ամենայն ինչ ինքնին ճըշ-
մարիտ է ⁷ . վասն զի են 'ինմա տիրապէս ամենայն հան-
գամանք իւրում բնութեանն սեփականք , այսինքն ամե-
նայն ինչ է որ ինչ էն : Եւ յասելն , օրինակ իմն , այս ինչ
սուտ ոսկի է կամ սուտ արծաթ , ոչ եթէ ինքնին չիցէ
ինչ ճշմարիտ , այլ զի սուտ կարծի ոսկի կամ արծաթ՝
զայն յայտ առնէ , փոխանակ զի ստոյդ 'ի բնէ այլ ինչ է
ամենեին :

Բանական ճշմարտութիւն է հանգիտութիւն գաղա-
փարաց մերոց և դատմանց ընդ իրան զոր ցուցանեն . ըստ
որում բանական ճշմարտութիւն է զբոլորակն բոլորչ
ասել , և բանական սուտ լինի առել թէ քառակող և քա-
ռանկիւնի իցէ :

Բարյական ճշմարտութիւն է միաբանութիւն խորհըր-
դոց մտացն ընդ բառից և շարժուածոց որով յայտնին :
Վասն որոյ ճշմարիտ խօսի որ ասէն թէ արարի զոր արա-
րեալն է արդեամիք . և սուտ խօսի որ ժխտէ զոր արարն
կամ զհակառակն հաստատէ :

Զընազանցական և զբարոյական ճշմարտութենէ ոչ է
մեզ ճառել աստանօր, այլ զբանականէն եեթ: Եւ զի
յայդմ մասին 'ի չորս այլ և այլ կիրս գտանին միտք, 'ի
տգիտութեան, յերկբայութեան, 'ի կարծիս և 'ի ստու-
գութեան, արուեստն քննելոյ և ճանաչելոյ զճշմարտու-
թիւն պարտի ուսուցանել զհանգամանս լուծանելոյ զտգի-
տութիւն և զերկմուութիւն, յայտ ածել զնշաննն որով
խարին կարծիքն 'ի հաւաստի ստուգութենէն, ցուցանել
զճանապարհս հաւանական կարծեաց կամ ստուգու-
թեան, և նշանակել զպատճառս սխալանաց առ 'ի զգու-
շութիւն :

Յայս ամենայն չժամանեն միտք առանց 'ի գործ արկա-
նելոյ զմասուսս կամ զզօրութիւնս իւր և զյաջողու-
թիւնս, և առանց հարկաւոր ծանօթութեանցն և գաղա-
փարաց ստանալոյ: Ապա յառաջ քան զօրէնս քննութեան
ճշմարտութեան՝ ցուցանել պարտ է զզօրութիւնս և զյա-
ջողութիւնս հոգւոյն որովք յայն քննութիւն միելոցն
է, և թէ զիարդ հասանէ նորօք ծանօթութեանց և գա-
ղափարաց, յորոց ընդ բուն իրացն համեմատութենէ յան-
դիմանի ճշմարտութիւն :

ՊՐԱԿ Ա. Ո. Ա. Զ Ի Ն

ՄԱՍՈՒԽՆՔ ԿԱՄ ԶՕՐՈՒԹԻՒԽՆՔ ԵՒ ԳՈՐԾՔ

ՀՕԴԻՈՑ

Հոգի է Էակն խոհուն 'ի մեզ . և 'ի ճառս անդ բնազանցութեան՝ որ առանձինն զհոգւոյ խօսելով Հոգեբանութիւն անուանի, ցուցի Էակս այս 'ի բնէ աննիւթական գոլ, այս է անխառն, պարզ, անբաժանելի և այլաբուն 'ի նիւթոյ. որ քանզի 'ի յօդաւոր մասանց է զօդեալ 'ի բնէ իւրմէ չէ պատշաճ խորհրդոյ :

Երբեակ մասունք կամ զօրութիւնք որոշին սովորաբար 'ի հոգւող. միտք, ուշ և կամք. զոր ոմանք երկուս միայն ասեն, միտք և կամք : Թէպէտ և յիրաւի իցէ զամենայն զօրութիւնս կամ զմասունս հոգւոյ օրինակաւ իւիք յերկուսն ժողովել, սակայն, որպէս տեսցի 'ի հոգեբանութեան, վասն առաւել յստակութեան և ճշդութեան հարկ է զանազանել 'ի հոգւող վեց մասունս, որ են վեց զօրութիւնք նորա . զգալ, մտածել, ճանաչել, յիշել, կամել և գործել :

Եթէ բովանդակ մանր կրկտեմք զայս մասունս և զօրէնս արձակելոյ նոցա մի ըստ միոջէ 'ի մարդում, յոյժ երկարի աստ բանս : Իբրև դիպողագոյն տեղւոյ՝ Հոգեբանութեան ժողովմք . զայն և եթ նշանակեալ աստանօր 'ի հարեւանցի, որ բաւական իցէ և կարեւոր յառաջիկայիցն դիւրահասութիւն :

ԳԼՈՒԽ Ա.

ԶՕՐՈՒԹՔԻՆ ԶԳԱՎՈՅ ԵՒ ՄՏՏԱԾԵԼՈՅ

Յ Յ Դ Ո Ւ Խ Ա Ծ Ա .

Զգալ .

Զօրութիւն զգալոյ կամ զգայումութիւն, հասարակաց մարդկան ընդ այլ կենդանիս, է իմանալ զազդեցութիւնս եղեալս 'ի նոսա: Եթէ ոք շօշափիցէ զմեզ կամ խայթիցէ, նոյնժամայն իմանամք թէ շօշափեցաք կամ խայթեցաք: Զնոյն իմանալ երեխն յայտնապէս և թռչունք, ձկունք, չորբուտանիք և միջատք: Իսկ փայտ և քար և հրահալ որշափ և խոցիցին և հարցին, չտան ինչ նշան թէ իմանան, այս ինքն ոչինչ ցուցանեն զգայութիւն:

Այսր աղագաւ՝ յերկուս դասս բաժանին էակք, 'ի զգայունս և յանզգայս: Զգայուն ասին շնչաւորքն, քանզի զգան. մարթ է կոչել և զգացող կամ զգայական: Անզգայ ասին այլ ամենայն արարածք, զի ոչինչ զգան:

Բայց քանզի զգայական սկիզբն 'ի մեզ՝ հոգին է, իբրև զի մարմինն՝ որպէս տեսցի յիւրում տեղւոջն՝ ինչ ոչ ըզդայ. նմին իրի յամենայն զգայուն էակս համարի լինել հոգի ինչ կամ շունչ. և հոգեբանութիւնն ցուցցէ զիրաւունս այդք վարկածի: Եւ ամենեքին կոչին շնչաւոր էակք, կամ միով ձայնիւ շնչաւորք և կենդանիք. իսկ անզգայքն՝ անշունչք և անկենդանք ասին:

Յաջողութիւնն զգալոյ՝ կոչի զգացումն կամ զգայութիւն. վասն որոյ հոտ, համ՝ և ձայն, կամ այլ զինչ ազդմունք և իցեն զգացեալ 'ի հոգւոյն, զգացումն ինչ են:

Արտաքուստ ազդեցութիւնք ընդ հինգ դրունս անցանեն՝ ի հոգին, որ և վասն այնորիկ ասին հինգ զգայարանք կամ՝ զգայութիւնք, և են՝ հոտոտելիք, ճաշակելիք, լսելիք, տեսանելիք և շօշափելիք։ Ա.Հ. թէ զիարդ ընդ զգայարանս հասանեն ազդեցութիւնք՝ ի հոգին, չէ դիւրին սահմանել։

Հանգամանք հերձլոյ զմարմինս կամ՝ անդամազնութիւնն աւանդէ մեզ, թէ յուղղոյ խելացն, յերկայն ուղղոյ և յուղղոյ ողին ելանեն լարք կամ թելք, որ ջիլք կոշին։ յորոց կէպ ձգին մինչև յունգունս, կէպ ՚ի լեզու, այլք յականջս, ոմանք յաչս, և ոմանք սփռեալ աղամողեալ բաժանին յառաջս առաջս ընդ բովանդակ մարմինն։

Փորձ իրացն իսկ յայտ առնէ, թէ ՚ի հատանել կամ՝ պրկել զմի ՚ի ջաց անտի, մասն որ ՚ի ներքոյ մնայ հատածոյն կամ կապոյն, հատեալ յամենայն հաղորդութենէ խելացն կամ այլոցն գոյացութեանց՝ որ են շառաւիզք նորա, բիւր դէպ թէ խոցիցի, հարկանիցի, կիզցի և յօշ կոտորիցի, չզգայ ամենեին։

Յայտ ուրեմն է, զի առ զգայութիւն ՚ի հոգւոջն գործելց՝ հարկ է նախ արտաքին ազդամանցն ՚ի խելան ժամանել ընդ ջիլսն։ Իսկ զիարդ տանիցին ջիլք զնոսա անդք, յոր մասն ուղղոյ գլխոցն, և որ ևսն է՝ որպէս իրեւ հասանեն յուղեղն՝ ազդին հոգւոյ. այսոքիկ ինդիքք են գեռ ևս թանձր խաւարաւ մածեալք, զորս և հոգեբանութեան թողցուք։ Ուր յայտնապէս տեսցի ևս, զի հոգք, համք, ջերմութիւն և ցրտութիւն և գոյնք՝ չեն տիրապէս ՚ի մարմինն՝ ըստ որում սովոր է կարծել ուամիկն, այլ միայն կիրք են հոգւոյ կամ հանգամանք և կերպք, որոց ոչ ինչ նմանութիւն է ընդ հանգամանս մարմնոցն յորոց ծնանին⁸։

Ծանուցանեմք միայն առ տեղեաւս, զի թէպէտ և ամենայն զգացմունք ինքնին համաբուն են, զի բնիւ նոյնգունակ հանգամանք են հոգւոյ, սակայն զանազանութիւն դնել հարկ է ՚ի նոսա ըստ զանազանել արդասեացն նոցա ՚ի մեզ։ Են ազգմունք, որպէս հոտոցն և համոց և ձայնից, ջերմոյ և ցրտոյ և այսպիսեաց, որ ՚ի բուն իսկ ՚ի մեզ ազգեցուցանեն զհաճոյական կամ զանհաճոյ հանգամանցն կիրս. և են դարձեալ՝ որ արտաքին ևեթ կերպարանս մատուցանեն մեզ, զոր օրինակ գունոցն և ձեւոց։

Արդ զգործն որով իմանամք զներքին հեշտալի կամ ա-

նախորժ հանգամանս , մեք կոչեմք յատուկ զգացումն : իսկ զգործն որով արտաքին ինչ կերպարանս միայն իմանամք , ասեմք իմացուած , ըմբռնումն : Ուստի 'ի հոտոտելն զվարդ՝ ունել ասեմք զգգացումն հոտոյն կամ զգալ հոտոյն . իսկ 'ի հայելն ընդ նա՝ ունել զիմացուած և զըմբռնումն գունդյն և զձեղյ , կամ իմանալ և ըմբռնել զգոյնն և զձեն ⁹ :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Բ .

Մոածել .

Յորժամ բազում զգացմունք կամ իմացուածք միանգամայն իցեն 'ի մեզ , ոչ յամենեսին նոյնպէս ուշ ունի հոգին , այլ մերթ յայս՝ մերթ յայն ուժգին և սաստիկ : Օրինակ իմն , ընդ բանալ աչաց բազում ինչ առաջի գտանեմք մեր . բայց ոչ միով մոտադիւրութեամք հայիմք յամենեսին , այլ է զի զայս և է զի զայն՝ առանձին իմն 'ի քնին առնումք : Այս գործ որով հոգին տիրաբար յառի յայս ինչ էամ յայն՝ կոչի մոտադրութիւն կամ ուշադրութիւն : իսկ յորժամ խորհրդով տանի ածէ զմոտադրութիւնն յայլմէ յայլ , այն գործ կոչի մոտածութիւն կամ խորհրդածութիւն : Ապա զօրութիւն մոտածելց ոչ այլ ինչ է , քան թէ կամաւ ձկտել և յառել զուշադրութիւնն մերթ յայս և մերթ յայն ¹⁰ :

ԳԼՈՒԽ Բ.

ԶՕՐՈՒԹԻՒՆ ՃԱՆԱՋԵԼՈՅ ԵՒ ՑԻՉԵԼՈՅ

ՅՈՒՂՈՒԱԾ Բ.

Ճանաչել .

Տարուբեր մտադրութեան այսր անդր՝ ինքնին պատճառ տայ համեմատութեան իրացն : Աա առաջնորդէ 'ի գիւտ կցորդութեանցն որ ընդ մէջ նոցա , իմա զոր ինչ է մին առ միւսով , և յորում հաւասարին ընդ միմեանս կամ որոշին : Արդ զօրութիւնն գտանելոյ զնմանութիւն կամ զաննմանութիւն իրաց՝ կոչի զօրութիւն ճանաչելոյ . և գործն որով գտանի նմանութիւնն և աննմանութիւն , ասի ճանաչումն , հմտութիւն , գիտութիւն :

Ի հմտութենէ ճնանի դատումն կամ դատաստան , գործ հոգւոյ՝ որով հաստատէ կամ ժխտէ առ իւր՝ զծանուցեալ նմանութիւն կամ աննմանութիւն երկուց իրաց : Յորժամ համեմատեալ զգաղափար բոլորակի ընդ բոլորշութեան , և տեսեալ զհանգիտութիւն նոցա , յանձն առեալ հաւանիմք 'ի միտս և հաստատեմք՝ թէ բոլորակն է բոլորշի , զայն առնեմք՝ որ կոչի դատումն յանձնառական կամ հաստատութեան : Իսկ իրեւ համեմատեալ զնոյն գաղափար բոլորակի ընդ քառակուսւոյ և տեսեալ զնոցին անհանգիտութիւն՝ դնեմք 'ի մտի թէ բոլորակն չէ քառակուսի , կամ որ 'ի նոյն բերի՝ ժխտեմք և յուրաստ կամք թէ բոլորակի իցէ քառակուսի , կազմեմք զանուանեալն դատումն ժխտական կամ ուրացութեան ^{11:}

Աակայն չէ միշտ հսարաւոր առաջին տեսութեամբ ճա-

նաշել զհաւասարութիւն կամ զանհաւասարութիւն երկուց գաղափարաց . յայնժամ զերկոսին մերձ եղեալ առ , այլ ինչ երրորդ ընդամենք , որպէս զի ՚ի նմանութենէ կամ յաննմանութենէ նոցա ընդ երրորդին՝ իմասցուք թէ և նոքին նմանք իցեն արդեօք եթէ աննմանք : Եւ այս գործ կոչի խորհուրդ մտաց , խելամնութիւն , մտախոհութիւն , ԱՀ կարացեալ , օրինակ ինն , ՚ի միտ առնուլ վաղվաղակի թէ հանգէտք իցեն գաղափարք օդոյ և մարմնոյ , մինչեւ իշխել ասել թէ օդն մարմին է , համեմատեմք զերկոսին ընդ թանձրութեան կամ սերտութեան : Գիտեմք յառաջագոյն թէ գաղափար թանձրութեան միաբանի ընդ մարմնոյ . զի տիրական յատկութիւն է այն մարմնոց . իսկ թէ միաբանիցի և ընդ օդոյ՝ առնումք ՚ի փորձոյ . զի օդ փակեալ յուռուցիկ փամիշտի՝ ուժգնակի դիմակալէ Ճնշման : Աստի յառաջ բերեմք , թէ ուրեմն երկաքանչիւր գաղափարք օդոյ և մարմնոյ՝ հաւասարին ընդ իրեարս , կամ թէ օդն ճըշմարիս մարմին է . և ասեմք ՚ի մտի . Որ թանձր է և սերտ , մարմին է . օդն է թանձր և սերտ , ասկա օդն մարմին է :

Երրորդ գաղափարն որ ՚ի ծանօթութիւն ածէ զմիաբանութիւն կամ զանմիաբանութիւն այլոց երկուց , այն իսկ է որ առաւել ընտանի ձայնիք կոչի վասն էրն կամ պատճառ իրին : Զօդ մարմին ասեմք , վասն զի թաղուն և հոծ է , որ ուրոյն յատուկ է մարմնոց : Ասեմք՝ ՚ի դատարկութենէ փախչելի է , վասն զի վեսակար է . սիրելի են գիտութիւնք և նոցին պարապել արժան , վասն զի օգտակար են և պատուական : Եւ քաջ խոհական նա ասի , որ ոչինչ ժիտէ կամ հաստատէ առանց զիրաւացի վասն էրն մերձ դնելոյ , իմա առանց արդար իրաւանց :

Յ Օ Դ Ո Ւ Խ Ա Ծ Բ .

Յիշելու .

Զօրութիւնն յիշելոյ , որ և ուշ և յիշողականն և յիշութիւն , սովորաբար սահմանի՝ Զօրութիւն՝ ի միտ ածելոյ զանցեալ գաղափարս : Բայց բազում ինչ է նկատել յիրիդ յայդմիկ , որ ընդարձակագոյն զսահմանդ ցուցանեն և բազմայեղանակ :

***. Յորժամ , օրինակ իմն , տեսեալ իցէ ուրուք և հոտոտեալ զվարդ , տեսանէ զի թէ բարձցի՝ ի միջոյ վարդն , տակաւին կարէ զմուաւ ածել զձեւ նորա , զգոյն և զհոտ առանց առաջի ունելոյ զայն . զայս գործ Լոք կոչէ նկատողութիւն ¹² : Բայց խտիր կայ յայսմ : Զի զգունոյն և ըզձեւոյն կերպարանս դեռ յանդիման մտաց նկարեալ տեսանէ . և այս է որ գաղափարն կոչի , և յունական ճայնիւ իդոս կամ իդէա , տեսիլ , տեսակ , կերպարան : Խակ ըզհոտոյն ոչինչ կերպարան ունի , այլ միայն զծանօթութիւն զգայութեանն զոր առ : Զապատճառս իրացդ հոգեբանութիւնն տեսցէ : Ա.ՅԼ մեք , զոր օրինակ զներկայ ազդեցութիւնն որոշեցաք յայնս՝ որ տան մեզ ներքին իմն հանգամանս հեշտականս կամ անախորժս , որպիսի ինչ հոտքն են , համք , ձայնք , ջերմ և ցուրտ , և յայնս՝ որ արտաքին ինչ կերպարանս ևելթ ընծայեցուցանեն , ըստ որում ձեք և գոյնք . և զգործն իմանալոյ զներքին հեշտալի կամ անհաճոյ հանգամանս՝ զգացումն կոչեցաք , և ըզգործն իմանալոյ զարտաքին կերպարանս՝ իմացուած . նոյն պէս և այժմ յազդեցութեանց անտի՝ զոր նկատողութիւնն պահէ՝ ի մեզ , զայնոսիկ որ կերպարանս ինչ մեզ յանդիման առնեն , որպիս ձեքն և գոյնք , կոչեսցուք գաղափարս . և զորս ոչն ցուցանեն ինչ կերպարանս , իբրև զհոտ և զհամ , անուանեսցուք սոսկ ծանօթութիւնս ¹³ :

Է . Հայեցեալ միւսանգամ՝ ի վարդն , ոչ միայն վերստին առնու զիմացուած ձեւոյ նորա և գունոյ , այլ և յիշէ թէ և այլ երբեմն եղեալ է այն ինմա : Արդ այս գործ յո-

մանց ուշաբերութիւն անուանի , զոր լաւագոյն թուի մեզ
յիշելութիւն կոչել :

Դ . Թէպէտ և բոլորովին հեռացի վարդն , և կորիցէ
ամենայն գաղափար ձեռյ և գունոյ նորա , և ամենայն ծա-
նօթութիւն հոտոյ , ստէպ պատահէ զի գաղափար ձեռյն
և գունոյն , և հոտոյն ծանօթութիւն՝ գառնայ ՚ի միտս :
Զայս գործ կոչեմք մեք յատուկ յիշատակութիւն :

Ե . Կարողութիւն է հոգւոյն ոչ միայն վերստին յուշ
ածել զանցելոց իրաց գաղափարս և ծանօթութիւնս՝ նովին
կարգաւ որով ՚ի զգայարանսն են ազդեցեալք , այլ և միա-
ւորել զբազումն յայնցանէ , և բազմօրինակաբար յարա-
դրել զայնս ըստ մտի . այսմ զօրութեան անուն կոչի ե-
րեւակայութիւն : Ըստ սմին օրինակի առասպելարկուքն
ստեղծին ՚ի մտաց այծամարդս , ձիացուլս , պարիկս , յուշ-
կապարիկս , պայս , մարդապայ քաղս^{1/4} , եղջերուաքաղս ,
արալէզս , համբարուս , նհանգս : Սմին նման և մեք ինք-
նին կազմեմք զգաղափար պատերազմի , հրդեհի , նաւա-
բեկութեան , և առանց իսկ բնաւ տեսանելոյ :

Զայսմ ամենայնէ մեկին խօսեսցուք այլուր . աստանօր
մարդ է սահմանել զյիշողութիւնն , Զօրութիւն պահելոյ
և վերստին ընդ միտ ածելոյ և յիշատակելոյ զգաղափարս
և զծանօթութիւնս անցելոց իրաց : Պահելն գործ է նկա-
տողութեան . վերստին յուշ ածելն՝ յիշելութեան : Վերս-
տին յուշ կամ ընդ միտ ածել ասեմք քան թէ յիշատա-
կել , զի յիշատակութիւն է ոչ միայն յորժամ կամաւ ինչ
ոք զուշով ածիցէ , այլ և յորժամ ինքնին ինչ քրքրեալ
զարթնուցու : Յիշելն գործ է յիշելութեան : Իսկ երեւա-
կայութիւն , քանզի միաւորիչ է զանազան գաղափարաց
և նորանոր յօդուածոյից ստեղծիչ , կարի պէտս ունի յի-
շղականին՝ առանց որոյ ոչինչ կարէ գործել . սակայն ո-
րիշ յայնմանէ համարելի է :

ԳԼՈՒԽ Գ.

ԶՕՐՈՒԹԻՒՆ ԿԱՄԵԼՈՑ ԵՒ ԳՈՐԾԵԼՈՑ

Յ Յ Ո Ւ Ա Ծ Ա .

Լրամել .

Զօրութիւն կամելոյ կամ կամք է , որով հոգին հաւանի ընդունելինչ կամ խորշել յիմեքէ , և 'ի բազմաց ընտրել զմին քան զմիւսն :

Այդ գործ որով հոգին 'ի դոյն հաւան գտանի , 'ի դպրոցականաց անուանէր կամելութիւն . մեք սովորաբար կոչեմք գործ կամաց կամ կամեցողութիւն : Արդ ոչ իմիք հաւանի հոգին անպատճառ . և պատճառ լինել սովոր է կամ հեշտութեան հայթայթանք կամ փախուստ ցաւոց : Իսկ հեշտութեանց և ցաւոց կեսք զգալիք կամ բնականք կոչին , և կեսք իմանալիք կամ բարոյականք : Բնական և զգալի հեշտութիւն է որ 'ի զգալի ազդեցութենէ ծնանի , որպէս անոյշ հոտոյ և համոյ : Իմանալի և բարոյական հեշտութիւն է որ ծագէ 'ի ներքին կրից հոգւոյն , որպէս զոր զգամքս 'ի գիւտ նորոյ ինչ ճշմարտութեան կամ առ գիտելոյ ինչ զանձին բարեգործութիւն : Նոյնպէս զգայական ցաւ է զոր օրինակ գլխոյ կամ ատաման ցաւ . բարոյական ցաւ է զոր կրեմք ընդ կորուստ բարեկամի կամ այլոյ սիրելոյ :

Ինչ որ հեշտութիւն բերէ կամ զցաւս փարատէ , բարի կոչի . իսկ որ ցաւս գործէ կամ հատանէ զհեշտութիւն , չար ասի . և բարիք և չարք զգալի և իմանալի անուանին , ըստ որում կրկնակի հեշտութիւն կամ ցաւս գիտեն հասուցանել :

Որ ինչ բարւոյ կերպարանօք առաջի լինի, զարթուցանէ 'ի մեզ ձկտումն ինչ առ այն և յարձակումն, որ յօժարութիւն յորջորջի, իղձ, տենչ, բաղձք, փափագ, տոխիք. և որ ինչ ընդ կերպարանօք չարի յանդիման ելանէ, ծնանի 'ի մեզ մերժումն և խորշումն, որ կոչի դժգմութիւն, դժկամակութիւն, տհաճութիւն։ Այս ձկտումն և խորշումն սովորաբար կոչին սէր և ատելութիւն։ Ի գլխաւորաց աստի կրից յառաջ գան այլք համօրէն, որպէս տեսցի յիւրում տեղւոջն։

Որ զինչ և իցէ ձկտումնն կամ խորշումնն զոր կերպարանք իրաց ծնանին 'ի մեզ, միշտ 'ի ձեռու մեր է հաւանել կամ ընդդէմ կալ այնմ։ Այս իշխանութիւն անուանի ազատութիւն և կամակարութիւն։ զորմէ լիով ճառելի է պյլուր, ցուցեալ յորում մասին ընտանութիւն ունիցի ընդ կամաց, և յորում արտաքոյ նմին դնիցի։

Յ Ս Դ Ո Ւ Խ Ա Ծ Բ .

Գործել .

Ամենայն իշխանութիւն հոգւոյ յառնել ինչ ներքոյ և արտաքոյ իւր՝ է 'ի զօրութեանն գործելոյ։ Ի զգայունութեան կամ 'ի զօրութեան զգալոյ՝ հոգին կրէ մանաւանդ քան գործէ. զի ոչ 'ի մեր ձեռու է տալ մեզ զգացումն ինչ առանց ազդելոյ մարմնոց 'ի զգայարանս. ապա թէ ոչ և կոյրք անգամ իշխան լինէին առնուլ զաղդ գունոց և ունել իբրև զայլ 'ի մարդկանէ։ Նոյնակէս չեմք իշխան չզգալոյ զաղդմունս մարմնոց մինչդեռ արդեամբք ազդեն ինչ 'ի մեզ. քանզի չունի ոք ասել թէ 'ի խոցել կամ հարկանել ձեռինն՝ իշխանութիւն իցէ նմա զգալ կամ չզգալ ցաւոյն։

Ի զօրութեան մտածելոյ՝ սկսանի հոգին 'ի գործ քանզի նմա անկանի յառել զմտադրութիւնն յայս ինչ քան յայն, և աստի անդր դարձուցանել։ Գործող է նոյնակէս 'ի զօրութեան ճանաչելոյ, մանաւանդ 'ի դատմունսն և 'ի մըտախոհութիւնն։ Ի զօրութեան յիշելոյ՝ կրաւոր է, յոր-

ժամ՝ գաղափարք ինքնին զարթնուն, և գործող՝ մինչ ինքն ջանայ պահել զայնս նկատողութեամբ, կամ յուշ ածել: Իսկ ՚ի զօրութեան կամելոյ միշտ է գործուն, յորժամ ինքնին իւրովի հաւանի այսմ կամ այնմ: Յայսմ ամենայնի զօրութիւն գործելոյ նոյն է ընդ զօրութիւնս մտածելոյ, Ճանաչելոյ, յիշելոյ և կամելոյ:

Սակայն գործական ոյժ հոգւոյ ձգի և արտաքոյ իւր ՚ի մարմինն. և յայնժամ զօրութիւնն գործելոյ բնաւին որիշ է ՚ի նախասացելոցդ, և բազումք անուն կարդան նմա շարժիչ զօրութիւն, զի գործ է նորա յարուցանել ՚ի մարմինի շարժմունս պէսապէս:

Բայց ՚ի մարմնական շարժմունս են որ հարկաւորք են և բնականք, և են որ ազատք և կամաւորք: Բնաւոր և խաղացական շարժմունք են որ լոկ ՚ի պատճառս կազմածոյս լինին՝ առանց հոգւոյն ջանալոյ, նա բազում անգամ յանկամս և յանդէտս իսկ. զոր օրինակ թնդումն սրտի և երաշկաց, խլրտմունք աղեաց, և այլք յոլովք յազդեցական և յանշնչական խաղացից յորս կախին կեանքս մեր: Ազատ և կամածին շարժմունք այն են, որ յառաջ գան ՚ի հաւանութեննէ հոգւոյն, որպէս յորժամ կամաւորաբար զոտն շարժիցէ, զբազուկ կամ զձեռն:

Այլ որպէս անծանօթ է մեզ օրինակ գործելոյ մարմնեղէն ազդեցութեանց ՚ի հոգին և զգացմունս ՚ի նմին ծնանելոյ, նոյնպէս անյայտ են օրէնք գործոց հոգւոյ ՚ի մարմնն և զշարժմունսն կատարելոյ: Զայս ևեթ գիտեմք, զի մարմնոյ շարժմունք ընդարձակելով և ամփոփելով դնդերացն կատարին. այլ ուստի իցէ այս ընդարձակութիւն և ամփոփումն, գժուարին և տաժանելի իրք են. զորմէ փոքր ՚ի շատէ նշանակեսցէ հոգեբանութիւնն:

ՊՐԱԿ ԵՐԿՐՈՒԴ

Գ Ա Դ Ա Փ Ա Ր Ք Ե Ւ Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Պլատոնի և յառաջ քան զնա Պիթագորայ կարծիք էին, [թէ հոգիքն 'ի բնէ մշտնշենաւորք իցեն, և ընդ իւրեանս բերիցեն զգաղափարս իւրեանց և զծանօթութիւնս. բայց քանզի 'ի խառնելն ընդ մարմինան նաևմանան, ուսմամբ և տեսական կենօք պարզեալ զմթարս՝ միւսանգամ պարս է յատակել: Ընդդէմ նմին ասաց Արիստոտել, [թէ չմարթի իմիք 'ի միտսն լինել մինչ չե եղեալ նախ 'ի զգայարանմն. այս է, չիք ծանօթութիւն կամ գաղափար՝ որ ոչ նախ 'ի զգայութեանց առնուցու սկիզբն: Հաւան գտան ընդ նմա Ճեմականք¹³ առ հասարակ և Դալրոցականք. բայց զվճիւն միայն ընկալան, և անփոյթարարին հաւատարմացուցանել զայն:

Նորին աղագաւ բազումք յետ ժամանակաց, և մանաւանդ կարգեսեանք, չեղեալ խելամուտ [թէ զիարդ ծանօթութիւնք Աստուծոյ, առաքինութեան, Ճշմարտութեան, և այլք սոցին սակի, որ աչաց չտեսանին և ձեռին չզննին, և ոչինչ ազգեցուցանեն 'ի զգայարանս, 'ի նոցանէ ունիցին սկիզբն, հերքեցին համարձակ զկարծիս Արիստոտելի, և յառաջ կալան ըստ մասին զՊիթագորայն և և զՊլատոնին: Քանզի ընկալան ասել զայն ամենայն ծանօթութիւնսնախ քան զգգայութիւնան լինել 'ի հոգւոջ, տպաւորեալս 'ի նմա անդատին յառաջին վայրկենէ էութեան իւրոյ:

Բայց սոքա երիս աղգս գաղափարաց զանազանեցին. բնածին, եկամուտ և ստեղծական. ընդ միով անուամբ խառն իմացեալ զըուն գաղափարսն և զծանօթութիւնս: Բնածին իմանային զորս 'ի բնէ յԱստուածուստ դրոշմեալս կարծէին, որպէս գաղափարք Ճշմարտութեան, առաքի-

նութեան , արդարութեան , ամիրաւութեան : Եկամուտս
որք ճշմարտիւ ընդ զգայութիւնս ծնանին , որպէս գաղա-
փարք գունց , ձայնից , հոտոց , համոց : Եւ ստեղծականս՝
զորս ինքն հոգին ստեղծանէ , զոր օրինակ ուղտաքաղ , փը-
ղաքաղ , ձիակապիկ , և ընդհանուր գաղափարք մարդոց ,
ծառոց , կենդանուց , և որ 'ի նոյն բերին :

Այլ զի 'ի սկզբան էութեան իւրոց չիք ինչ 'ի հոգւոջ
գաղափար բնածին , և ամենեքեան ստացականք են զգայու-
թեամբք և մոտածութեամբ , ուստի և 'ի հարկէ եկամուտք
առ հասարակ և կամ ստեղծականք , զայն բաւականապէս
ցուցեալ է 'Լոք , և մեք ինքնին ակն յայտնի տեսցուք 'ի
տեղւոջ իւրում 'ի հոգեբանութեան : Ավկայն առ 'ի նշա-
նակելցյ աստանօր զազգի ազգի զանազանութիւնս նոցա 'ի
տրամաբանիցն սովորութենէ , առցուք զնոսա 'ի քնին ընդ-
երիւք այլ և այլ կերպարանօք . ըստ բնութեան նոցա , ըստ
տեսութեան հոգւոյն , ըստ իրացն զորս 'ի դէմս ածեն :

ԳԼՈՒԽ Ա.

ԳՏԱՆԱՓԵՐԻ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԻ ԸՍՏ ԲՆՈՒԹԵԱՆ

ԻՒՐԵԱՆՑ

Գաղափարք և ծանօթութիւնք 'ի բնէ իւրեանց ունին
լինել նկարագիր կամ աննկարագիր , պարզ կամ յօդուա-
ծոյ , անձնաւոր կամ չանձնաւոր , մասնաւոր կամ ընդ-
հանուր :

ՅՈՒԻԱԾ Ա.

Եկարագիրք և աննկարագիրք .

Եկարագիրք են՝ որ պատկերս ինչ 'ի դէմս բերեն , և յա-
սուկ կոչին գաղափարք , որպիսի են ձևոցն և գունց և

ամենայնի որում կից է գաղափար տարածութեան . յորոց սակի են ըստ մասնէ և ձայնք , որպէս տեսցուք յայլում վայրի :

Աննկարագիրք են՝ որ ոչ կից ունելով՝ ի բնէ զգաղափար տարածութեան , ոչ ինչ պատկեր առաջի առնեն , վասն որոյ և փոխանակ գաղափարի ծանօթութիւն անուն տամբք մեք նոցա . որպիսի գոն ա , հոտոցն , համոց , ջերմոց , ցըրտոց , քաղցի , ծարաւոյ , հեշտութեան և ցաւոց . բ , ամենայն զօրութեանցն , կրից և գործոց հոգւոյն . դ , լաւութեանն և չարութեան , գիտութեան և տգիտութեան , ճշմարտի և ստոյ , և այլոցն ամենեցուն , որոց քանզի չիք անձնաւոր բնութեան հաստատութիւն արտաքոյ մտաց , անուանին իմանալի կամ բարոյական էակք , որոշել յայնցանէ՝ որոց ստոյգ էութիւն է 'ի բնութեան իրաց , և կոչին զգալի կամ բնական գոյակք ¹⁶ :

Յ Ո Ւ Խ Ա Ծ Բ .

Պարզք և յօդուածոյք .

Օանօթութիւնք և գաղափարք՝ մերկ և առանձինն տեսեալք , պարզ ասին , որպէս հոտոյ , գունոյ կամ ձայնի . իսկ յօդուածոյ և յօդաւոր և կցուածոյ կամ պարունակ , յորժամ յանդիման առնիցեն զբովանդակութիւն բազում գաղափարաց կամ ձանօթութեանց միաւորելոց . որպիսի են գաղափարք մարմնոց , յորս բովանդակին գաղափարք տարածութեան , սերտութեան , ձեռյ , գունոյ և այլք . և ձանօթութիւնք բարոյական էակաց , որպէս արդարութեան կամ անիրաւութեան . որոց առաջինն պարունակէ զծանօթութիւնս և զգաղափարս կիրթ սովորութեան չըրկելս զոք , և տալ իւրաքանչիւր անվրէալ զիւրն . իսկ երկրորդն զծանօթութիւնս և զգաղափարս հակառակին սովորութեան :

Յ Օ Ւ Խ Ա Ծ Գ .

Ա ն ձ ն ա շ ո ր ք և ա ն ա ն ձ ն ա շ ո ր ք .

Յորժամ՝ հանդամանք իրաց 'ի նոսին յիրան մտածին իբրեւ միացեալս ընդ ենթակայի , ծանօթութիւնք նոցա և գաղափարք ասին անձնաւոր , մարմնաւոր , նիւթական , ենթակացեալ , թանձրացեալ . իսկ յորժամ՝ անջատաբար մեկուսի յենթակայէ սոսկ և առանձինն , կոչին անանձնաւոր կամ՝ չանձնաւոր , անմարմին , աննիւթ , անենթակայ : Որպէս ահա գաղափար և ծանօթութիւն գունոյ և հոտոյ վարդին՝ անձնաւորք են մինչդեռ 'ի վարդի անդ մտածեմք զնոսա . և չանձնաւորք՝ յորժամ՝ զգոյն կամ՝ զհոտ մէն մի մեկուսի առեալ խորհիմք իրեւ զինքնակաց ինչ :

Անձնաւոր գաղափարք և ծանօթութիւնք սովորաբար վերադրօք կամ՝ ածականօք յայտնին . և յորժամ՝ զատ և ուրոյն նշանակել զնոսա կամք իցեն վերառեալ յամենայն ենթակայէ , ստեղծանին անուանքն զորս քերականք էականս կամ՝ գոյականս կոչեն : Բատ այսմ՝ սպիտակ և բոլորակ ասի գնդակ արծաթի՝ մինչև այն համբամանք 'ի գընդակին մտածին : Բայց եթէ պէտք ինչ իցեն խօսելոյ զյատկութենէ սպիտակն գոլոյ և բոլորակ , 'ի բաց տարեալ խորհրդիւ յամենայն ենթակայէ , թէ գնդակ իցէ արծաթի կամ՝ թէ այլ ինչ ; չանձնաւոր գաղափարք այնց յատկութեանց կոչին գոյական անուամբքն սպիտակութիւն և բոլորակութիւն : Վասն որոյ գոյականք՝ որ ոչ նշանակեն ճշմարիտ բնութիւնս , առ հասարակ անենթակայ անուանք են՝ յայտնիչք անանձնաւոր ծանօթութեանց և գաղափարաց , որպէս հոտ , համ , ճայն , գոյն . նոյնութիւն , զանազանութիւն . հաւասարութիւն , անհաւասարութիւն . գեղեցկութիւն , տգեղութիւն . առաքինութիւն , չարութիւն . գիտութիւն , տգիտութիւն . ճշմարտութիւն , ստութիւն , և սոյին նմանք :

Յ Օ Ւ Խ Ա Ծ Դ .

Մասնաշորք և ընդհանուրք .

Չիք ինչ տիրապէս 'ի բնութեան' որ մասնաւոր և մի ինչ
առանձինն ոչ իցէ : Գոյ , օրինակ իմն , այս ինչ թեղօշ , այն
ինչ կաղամախ , այս նիշ եղեին . իսկ թեղօշ , կաղամախ ,
եղեին սեռօրէն , ևս առաւել ծառ սեռօրէն , չիք երբէք
եղեալ : Վասն որոյ , առաջին գաղափարը զոր առնումք՝
մասնաւորք են և առանձնաւորք առ հասարակ :

Սակայն տեսեալ թէ բազում ինչ է որոց նոյն հանգա-
մանք են յատուկ , առեւալ 'ի մի զայն ամենայն հասարակ
հանգամանս , և յօդուածոյ ինչ նոքօք յօրինեալ , կազ-
մեմք տակաւ զընդհանուր գաղափարն : Որպէս զժառոյն
գաղափար ստեղծանեմք , յորժամ տեսեալ զթեղօշն , բզ-
կաղամախն , զնշդարին և զձիթենին , առնումք մտածել
աննիւթաբար մեկուսի յենթակայէ զայն հանգամանս մի-
այն՝ յոր հաւասարեն ամենեքին . այս ինքն է՝ մնանել ար-
մատով 'ի հողոյ , արմ ունել , ոստս , տերես . և սոքօք ևեթ
բարդեալ յօդուածոյ ինչ գաղափար , կապեմք ընդ ա-
նուանն ծառ : Զնոյն օրինակ ստեղծանեմք և զընդհանուր
գաղափարս մարդոյ , ձկան , միջատի , թռչնոյ , ծաղկի ,
պտղոյ , և զայլ ամենայն իրաց՝ որ վամն նմանակցութեանն
սովոր են ընդ մի համար կարգել 'ի մի դաս , և զնոյն առ-
նուլ յորջորջութիւն անուան :

Աստանօր գիտելի լիցի , զի յանուանս՝ յոգունք ընդհա-
նուր գաղափարաց և ծանօթութեանց են յայտնիչք . սա-
կաւք են անուանք գոյացութեանց որ զմի ինչ միայն և ա-
ռանձինն նշանակիցեն . և սոքա կոչին իսկ կամ յատուկ
անուանք , զոր օրինակ արեգակն , լուսին , Դուին , Խլաթ ,
Տիգրան , Վահան : Իսկ այլք՝ առասական կամ հասարակ
անուանեալք . իբրև զի նոքօք բազում ինչ յորջորջի , որ-
պէս աստղ , մոլորակ , քաղաք , գետ , թագաւորութիւն ,
դաւառ , հող , քար , հանք , և այլք անբաւք , համայն հա-

սարակական անուանք են՝ ընդհանուր գաղափարաց յայտնիչք :

Իսոյն առցես ինձ և զանուանս իմանալի և բարոյական էակաց . արուեստ բանական , ընազանցութիւն , առատաձեռնութիւն կամ աղահութիւն , ատելութիւն կամ սէր , յատուկ անուանք են . իսկ արուեստ , գիտութիւն , լաւութիւն , յոռութիւն , կիրք , ախտք , առ հասարակ ընդհանուր անուանք :

Ընդհանուր ծանօթութեանց և գաղափարաց առաւել կամ նուազ է ընդարձակութիւն՝ ըստ որում բազում ինչ կամ թէ սակաւ բովանդակեն յինքեանս : Օրինակի վասն , գաղափար ծառոյ ընդարձակագոյն է քան զթեղօշի և ըզկաղնոյ . կենդանւոյ գաղափար՝ յոյժ առաւել է քան զձըկան և զմիջատի : Արդ՝ ընդհանրագոյն դասք կամ կարգք , ընդ որովք անկանին և այլք , սեռ կոչին . պակասագոյնքն՝ որ ընդ այլովք դասին , տեսակ ասին . և ամենայն ինչ մասնաւոր՝ ընդ տեսակաւ կարգեալ , անուանի անհատ , մի իմ առանձնաւոր : Ուստի ծառ՝ է սեռ , թեղօշք և կաղնիք՝ տեսակ , այս թեղօշ կամ այն կաղնի յատուկ՝ անհատ , մի ինչ առանձնին : Բայց 'ի միտ առնուել է , զի նոյն մի դաս միջին՝ սեռ լինի առ այլով և տեսակ առ այլով . զոր օրինակ ծառ առ սարդիւ , թեղօշիւ և կաղնեաւ սեռ է , իսկ առ ըռուսով՝ տեսակ :

ԴԼՈՒԽ Բ.

ԳԱՐԱՓԱՐԻ ԵՒ ՇԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ ԲԱՏ ՏԵՍՈՒԹԵԱՆ

ՄՏԱՑ

Ըստ յեղանակի մտացն տեսութեան զգացմունք և իմացուածք , որով և ծանօթութիւնք և գաղափարք , լինին պայծառ կամ աղօտ , յատակ կամ շփոթ :

Յ Յ Դ Ա Խ Ծ Ա .

Պայծառք և աղօտք .

Զգացմունք և իմացուածք , ըստ նոցանեւ և ծանօթութիւնք և գաղափարք , պայծառ և յայտնի են , եթէ հոգին ՚ի միտ առնուցութէ զինչ այնոքիկ իցեն կամ զինչ ցուցանիցեն . աղօտ են և անյայտ , եթէ չառնութինչ ՚ի միտ : Եթէ հոտ զոր առնումք , իմանայցեմք վարդի լինել կամ կիտրոնի , զգացումն և ՚ի նմանէ ծանօթութիւն պայծառ է . իսկ եթէ չգիտիցեմք ընտրել , աղօտ է զգացումն և ծանօթութիւնն : Նոյնպէս աղօտ իմացուած է և գաղափար իրի՝ զոր յայնչափ հեռաստանէ տեսանեմք , մինչեւ չնշմարել աշտարակ արդեօք իցէ , եթէ ծառ , եթէ այլ ինչ ամենենքն . և եթէ յիրն մատուցեալ յայտնի նշմարեսցեմք զոր էն , ՚ի յայտ եկեալ պայծառանայ իմացուածն և գաղափար ¹⁷ :

Յ Յ Դ Ա Խ Ծ Բ .

Յստակք և շփորք .

Տրամաբանք ոմանք յստակ և որոշ զգաղափարսն աւեն , զորոց Ճանաչեմք և կարեմք իսկ ցուցանել զյատուկն կամ զնշանսն , որովք որոշին ՚ի միմեանց . և շփոթ և խառնակ , զորոց զյատուկն չճանաչեմք և չզօրեմք ՚ի յայտ բերել : Վասն որոյ ըստ նոցա բանին յստակութիւն և որոշումն՝ յօդուածոյ գաղափարաց միայն անկ է , և պարզքն ՚ի բնէ շփոթ են և խառնակ . քանզի չունիմք ցուցանել օրինակ իմն իւ զանազանիցի կարմիր դղն ՚ի դեղնոյ , քաղցր համ ՚ի դառնէ : Ասկայն ամենենեին պիտակ յորջորջումն թուի շփոթ և խառնակ ասել զպարզ գաղափարսն . զի ուր

շիք խուռան, անդ և ոչ մի շփոթ, և 'ի պարզ գաղափարի շիք գտանել ամբոխութիւն :

Ապա ընդ հակառակն շփոթութիւն պատշաճ թուի յօդուածոյ գաղափարաց իսկ յստակումն և որոշութիւն՝ յօդուածոյից և պարզից զոյգ 'ի դեպ քանզի յստակ և որոշ ասին երկու իրք՝ յորժամ մին չէ միւսն : Արդ եթէ ունիցի ոք համանգամայն զգաղափար երկուց գունոց՝ կարմրոյ և դեղնոյ, և խտրիցէ յայտնապէս՝ որ կարմիրն իցէ և որ դեղնն, չմանամ ընդէր չիցէ օրէն ասել, թէ ունի յստակ գաղափար զերկոցուն գունոցն : Զի թէպէտ և չիցէ բաւական 'ի յայտ ածել զբուն յատուկս նոցա՝ որով որոշին 'ի միմեանց, սակայն յստակ և յայտնի տեսանէ յինքեան զայնն :

Նմանագոյն թուի սահման յստակ և շփոթ գաղափարաց զոր տայ ՚լոք, յստակ կոչելով զամենայն յորում տեսանեմք կամ զգամք յայտնապէս խտրօց ինչ որ յայլմէ ամենայնէ բաժանէ զնա, և շփոթ՝ զոր չկարեմք բաւական զանազանել յայլմէ : Եւ բազում իրաւամբք յաւելունա, թէ առաւել անուանք են պատճառք խառնակելոյ գաղափարաց. վասն զի ամենայն գաղափար է որ զինչ և էն, ուստի և ինքնին զատեալ է յայլմէ ամենայնէ, և չմարթի շփոթել բայց եթէ անունն յատկացեալ նմին՝ ոչինչ ընդհատ և այլում պատշաճիցի :

Այսմ՝ իմաստութեամբ զհետ բերէ, թէ միայն յօդուածոյ գաղափարաց է շփոթ լինել. որ և պատահէ ա, եթէ 'ի կարի սակաւաթիւ պարզ գաղափարաց իցեն յօդեալ, որք և այլոց ևս գաղափարաց նոյնապէս յօդաւորական մասունք լինիցին : Զոր օրինակ շփոթ է գաղափար ընձառիւծու, եթէ բաց 'ի գաղափարէ խայտաբղէտ կենդանւոյ այլ ինչ չգտանիցի 'ի նմա . զի այդ և 'ի վագեր կայ, և 'ի յովազի, և յայլս յոգունս :

Բ. Եթէ թիւ պարզ գաղափարաց իւրաքանչիւր յօդեալ գաղափարի չիցէ անփոփոխ և յայտնի : Ամին իրի մանաւանդ ծանօթութիւնք բարոյական էակաց յոյժ իստակ են առ բազումն . և հասանէ իսկ տեսանել բազում ուրեք զարիութիւն ընդ յանդգնութեան խառնակեալ, զառատաճեռնութիւն ընդ շռայլութեան, զչափաւորութիւն ընդ ոշտութեան, զճշմարիտ պատիւ ընդ սուտ : Եւ չիցէ ոք արդեօք որ ոչ 'ի նեղ մոտեալ 'ի վարանի կայցէ, ե-

թէ յանկարծ ստիպեսցի սահմանել մեկին զամենայն ան-
ենթակայ բառո զոր 'ի կիր ածէ . այս է՝ բացայայտակի
ցուցանել զամենայն գաղափարս և զժանօթութիւնս՝ զորս
ընդ նոքօք իմանայ : Սակայն որոց սիրելի են անվրէպ և
ճշգրիտ ծանօթութիւնք , զայն արժան է առնել ամենե-
ցուն , որպէս և յայլում վայրի ասասցուք :

Գիտուն լիցի ես , զի որպէս ինքն իսկ 'Լոք նշանակէ ,
կցուածոյ գաղափարը լինին երբեմն ըստ մասնէ պայծառ
և յստակ , և ըստ մասնէ աղօտ և շփոթ , կամ լաւ ես ա-
սել բազում ինչ է զորոց ունիմք պայծառ և յստակ ծա-
նօթութիւն , այլ ոչ գաղափար : Ծանօթութիւն հազա-
րակողմ ձևոյ յստակ յոյժ է քան զայնը՝ որոյ են կողմունք
ինն հարիւր իննսուն և ինն , մինչև կարող լինելոյ ցուցա-
նել յայտնապէս զերկաքանչիւրոցն յատկութիւնս : Բայց
եթէ երկոքին ձեքն առաջի աչաց գնիցին , չկարեմք ընտ-
րել 'ի միմեանց , թող թէ 'ի միտ տանել զնոցա յստակ
գաղափարս : Նոյն բան է և 'ի թիւմ՝ յորժամ ըստ սահ-
ման ինչ ելանեն : Յստակաբար առնումքը զգաղափար ե-
րից՝ չորից կամ հնգից միութեանց . այլ ոչ զբանից , ևս
առաւել զհարիւրոց կամ զհազարաց , թէպէտ և յստակ
են 'ի մեզ ծանօթութիւնք թուոցս :

ԳԼՈՒԽ Գ.

ԳԱՎԱՓՄՐՔ ԵՒ ԾԱՀՈԹՈՒԹԻՒՆՔ ԸՍՏ ԻՐԱՑՆ

ԶՈՐ ՑԱՆԴԻՄԱՆ ԱՌՆԵՆ

Գաղափարը և ծանօթութիւնք ըստ իրացն զոր յերեսս
ածեն՝ լինին կատարեալ և անկատար , ճշգրիտ և վեր'ի-
վերոյ , հաւաստի և մտացածին , ճշմարիտ և սուտ :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Ա .

Կատարինալք և անկատարք .

Կատարեալ գաղափարը են որ անթերի առաջի առնեն զսկզբնատիպմն կամ զնախագաղափարմն իւրեանց , և անկատար՝ որ զնոսա ըստ մասնէ ՚ի դէմն ածեն :

Արդ ա , ՚ի բնէ կատարեալ են պարզ գաղափարք . զի ոյր չիք ինչ մասն , ՚ի մասնէ առաջի առնել զայն անմարթ է :

Բ . Յօդաւոր ծանօթութիւնք իմանալի և բարոյական էակաց , որովհետեւ չիք նոցա ՚ի բնութեան էից ՚նախատիպ՝ բայց ՚ի կամաց յօրինողին , ՚նմին իրի ինքնին կատարեալք են , ասէ ՚լոք . և յայնժամ միայն անկատար լինին , յորժամ յար և նման ընդ այնս համարիցիմք՝ զոր այլ ոք նովին անուամբ յորջորջիցէ : « Օրինակ իմն , ասէ , միաւորեմ զչորեսին զայս գաղափարս . ա , տեսանեմ այր մի ՚ի ծանր վտանգի . բ , երկիւղ ոչ խոռովշ զնա և ոչ տագնապէ . հ , արի և անվրդով սրտիւ հնարս խորհի փախստեան . դ , ըստրէ զճանապարհն և կատարէ անդրդուելի քաջութեամբ և անվկանգ վտանգից որ նոր ՚ի նորոյ խոչ ընդ ոտան անկանիցին : Զայս ծանօթութիւն կոչեմ արիութիւն . և ըստ իս կատարեալ է այն : Ա.ՅԼ ոք անդուստ ստեղծանէ այլ իմն յօրինուած , և զնոյն դնէ նմա անուն . եթէ այնու զիւր յօրինուածն իմանայ , ծանօթութիւն նորա կատարեալ է և ըստ նորա . բայց թերակատար լինի եթէ զիմն դնիցէ իւրումն նախատիպ » : Յայս վայր ՚լոք :

Բայց քանզի յոլովք յանենթակայ բառից վաղուց են սահմանեալ յիմաստասիրաց , և յայտնեալք որ ՚ի նոսս պարզ գաղափարք և ծանօթութիւնք , ապա որ ոք անուանիցէ այսօր արիութիւն կամ յանդգնութիւն , առատաձեռնութիւն կամ շոայլութիւն , չափաւորութիւն կամ ժլատութիւն , և այսպիսիս , և ոչ ժողովիցէ ընդ նովին անուամբք զամենայն գաղափարս և զճանօթութիւնս կապեալ յիմաստասիրաց , ինձ իրաւունս թուի ասել զնմանէ կիսամասնեայ ունել զճանօթութիւնս :

է. Յօդուածոյ գաղափարը դոյլից ինքնին առ հասարակ անկատարը են. վասն զի անձանօթ է մեզ բունն նոցա, և յոլովք՝ ի հանգամանացն անյայտք։ Աակայն որպէս ինչ և իցէ, մարթեմք ասել թէ կատարեալ իցէ գաղափար սոկւոյ ՚ի միտս ուրուք, որ գիտիցէ անթերի զամենայն հանգամանս երևեալս ցայսօր ՚ի հրահալելով անդ, առեալ ընդ գաղափարին զբովանդակութիւն հանգամանացն իբրև սկզբնատիպ. իսկ անհմուտն այնց հանգամանաց՝ թերի ունել ասիցի զգաղափարն :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Բ .

Ճշգրիտք և վերիվերոյթ .

Ճշգրիտ են գաղափարը և ծանօթութիւնք՝ որոց ոչ միայն ծանօթ են ամենայն նշանիք զանազանութեան, այլ և յատուկքն նշանացն. և վերիվերոյ են՝ որոց ոչ ճանաչին յատկութիւնք նշանացն : Վասն որոյ գաղափար կամ ծանօթութիւն մարթի թէ իցէ պայծառ, յատակ և կատարեալ, այլ ոչ ճշգրիտ . և սակաւք են ՚ի մեզ գաղափարը և ծանօթութիւնք զորս օրէն իցէ ասել ճշգրիտս : Որինակի աղագաւ, գաղափար եռանկեան պայծառ է յատակ և կատարեալ, յորժամ զմտաւ ածեմք ձեւ երեքանկիւնի և եռակողմ. զի ՚ի լրումն գաղափարի եռանկեան այլ ինչ չպահանջի. բայց զի ճշգրիտ լինիցի, գիտել պարտիմք և զամենայն յատկութիւնս անկեանց և կողմանց նորա :

Եւ զի զգոյիցս չեմք ատակ ունել կատարեալ գաղափար, ապա և ոչ ճշգրիտ : Աակայն ընազնինք, ընդ որս մանաւանդ տարրալոյցք այժմ ՚ի սոյն տաժանին, զհետ կրթեալ ոչ միայն բազում հանգամանս գտանել ըստ կարի ՚ի մարմինսն, այլ և զպատճառս նոցա և զառ միմեանս համեմատութիւն . որպէս զի ըստ մարթելոյ մի յոյժ անկատար իցեն և վերիվերոյ գաղափարքն :

Զնոյն օրինակ և բնազանցագէտք, բարոյախօսք, քաղաքավարք, և որ այլն ևս, գուն գործեն միշտ ուղիղ և

մանր կրկտելով՝ ճշգրտել զգաղափարս և զանօթութիւնս իմանալի և բարոյական էակաց, որք ընդ իւրաքանչիւր անուամբք իմանին, զի օր ըստ օրէ առաւել՝ ՚ի կատարումն եկեսցեն ծանօթութիւնք նոցին. և ՚ի վեր հանել զնշանակս և զհամեմատութիւնս մասնական դաղափարացն և ծանօթութեանց՝ յորոց բարդեալ են, զի և ճշգրիտ լինիցին :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Գ .

Հ աւաստիք և մտածինք .

Հ աւաստի գաղափարք և ծանօթութիւնք այն են, որ նման են իսկութեան իրացն, և մտացածին՝ որ հակառակքն են : Վասն որոյ ա, պարզ գաղափարք և ծանօթութիւնք հաւաստի են առ հասարակ, զի ամենեքին իրաւնման են զգացմանց և իմացուածոց յորոց առեալք են :

Ի . Յօդեալ գաղափարք էից հաւաստի են, եթէ առաջի առնեն ճշմարիտ գոյակս կամ որ երբեմն էացեալ են ստուգիւ. որպէս գաղափարքս մարդ, ծառ, Անի քաղաք, Տրդատ . և մտացնոյցք են, եթէ որոց չիք երբէք գոյացեալ՝ յայնպիսեաց ինչ յանդիման առնիցեն. զոր օրինակ դաղափարքն ուսկի լեառն կամ յուշկապարիկ¹³:

Դ . Յօդուածոյ ծանօթութիւնք իմանալի և բարոյական էակաց. որ քանզի մտաց յօրինուածք են, չմարթի նոցա աննմանս լինել նախատալից իւրեանց, այս ինքն ինքեանց : Ա ակայն անկանին ՚ի հաւաստեաց և ՚ի կամամտածական դառնան՝ եթէ ընդ նոքօք արկանել կամիցիմք անսմիասնական գաղափարս, կամ թէ ընդ միով անուամբ խմբիցեմք գաղափարս բնաւին հակառակս ՚ի սովորութենէ հաստատելոցն :

Յ Ո Դ Ա Խ Ա Ծ Դ Ի Ւ Թ Ի Ւ Թ .

Ճշմարիտք և սուստ .

Յաղագս ճշմարտութեան կամ ստութեան գաղափարաց և ծանօթութեանց բարւոք ծանուցանէ ՚լոք , թէ ճշդիւ խօսելով՝ միայն գատմանց է ճշմարիտ լինել կամ սուստ , ըստ որում զի գաղափարք որ միաւորին կամ զատանին՝ յարմարին արդարեւ կամ չյարմարին ընդ միմեանս : Իսկ գաղափարք և ծանօթութիւնք ինքնուրոյն մոտածեալք , յայս միտ՝ որ է բանական առումն ճշմարտութեան (յէջ 80) , ոչ ճշմարիտ են տիրապէս և ոչ սուստ . և ճշմարիտ են միայն 'ի բնազանցական միտս . ըստ որում ամենայն ինչ է ճշմարիտ , զի որ ինչ էն՝ այնէ : Աակայն և 'ի բանական միտս ճշմարիտ կամ սուստ կոչին գաղափարք և ծանօթութիւնք՝ ըստ որում ճշմարտիւ նմանք են նախատպից իւրեանց կամ չեն . վասն զի միտք 'ի տանելն զայնս առնախատիպսն՝ գատին միշտ լռելքայն զնմանութենէ նոցա :

Արդ ա , ճշմարիտ են միշտ պարզ ծանօթութիւնք և գաղափարք որ զզգացմունս և զիմացուածս մեր ցուցանիցեն . իսկ գաղափարք սեղմութեան և տարածութեան՝ թէպէտ և հանգամանս ինչ իրաց յայտ առնեն , ճշմարիտ են . վասն զի տարածութիւն , որպէս տեսցի այլուր , գոյակցութիւն է բազում մասանց միաւորելոց , և սեղմութիւն է յատկութիւն մարմնոց գրաւելոյ զյայտնի ինչ միջոց՝ անտեղիտալի և դիմահար այլում մարմնոյ 'ի միում ժամանակի . և այս յատկութիւնք ճշմարիտ են 'ի մարմինս : Իսկ գաղափարք գունոց , համոց , հնչմանց , և այլն ևս , սուստ լինին եթէ նոյնպիսի ինչ հանգամանս 'ի բուն իսկ յիրսն դնիցեմք . զի հաւաստեաւ չիք ինչ այնպիսի 'ի մարմինսն անդ , որպէս յիւրում տեղւողն տեսցի :

Է . Յօդուածոյ գաղափարք գոյից կամ բովանդակեն միայն զամենայն ճշմարիտ հանգամանս իրին զոր 'ի դէմս բերեն , կամ ոչ զամենեսին , կամ թէ և այլս ինչ որ 'ի նմաչգոն : Ըստ առաջնոյ պայմանին ճշմարիտ են , ըստ այլոց

երկուցն սուտ . բայց ըստ երկրորդին սուտ ասին միայն ե-
թէ կարծեսցի ումեք չլինել յիրի անդ այլ ինչ ստոյգ հան-
գամանս բաց 'ի թուելոցն ինքեան . և փոխանակ անկա-
տար , պակասաւոր և թերի ասին , եթէ չգիտիցէ բնաւ թէ
են անդ և այլ հանգամանք : Վասն որոյ գաղափար ուկւոյ
ճշմարիտ է , եթէ առաջի առնիցէ հրահալ ինչ ամենա-
ծանր , դեղին , կռանելի , տարածուն , խիտ , լուծանելի
յարքայաջուր և անլուծանելի 'ի ժանդաջուր ¹⁹ : Անկատար
լինի կամ թերի , եթէ իմն իմն 'ի հանգամանաց աստի բո-
վանդակիցէ առ այլոցն չգիտութեան : Եւ սուտ լինի , եթէ
այլ յատկութիւնքն անընտանի համարիցին 'ի նմանէ ,
կամ յոչ նորայոցն ինչ 'ի նմա հաշուիցի . զոր օրինակ թէ
թեթե քան զմնդիկ իցէ կամ լուծանելի 'ի ժանդաջուր ,
կամ այլ ինչ այսպիսի :

† . Յօդեալ ծանօթութիւնք իմանալի և բարոյական
էակաց՝ այնու զի մերաստեղջ յօրինուածս գաղափարաց
յայտ առնեն , որպէս կատարեալք են և հաւաստիք , նոյն-
պէս և միշտ ճշմարիտք : Խսկ եթէ յօրինուած ինչ գաղա-
փարաց յայտ առնիցեն , զոր հասարակաց սովորութիւն՝
մանաւանդ գիտնոց՝ հասաստութեամբ իմանայ ընդ ձայ-
նիւ իւիք , ծանօթութիւնն ճշմարիտ լինի և կատարեալ՝
եթէ յօրինուածոյն այնմիկ ճշգրիտ համեմատիցի . ան-
կատար՝ եթէ ինչ մի յէական գաղափարաց առ տգիտու-
թեան պակաս առնիցի . և սուտ՝ եթէ մի յէական գաղա-
փարաց անտի կամաւ արտաքս ընկեսցի , կամ որ ոչն իցէ
անկ 'ի ներքս խառնիցի : Յայն աղակս ճշմարիտ և կատա-
րեալ լինիցի ծանօթութիւն արիութեան , եթէ պարու-
նակիցէ զըորեսին նախասացեալ գաղափարս . անկատար՝
եթէ մի ինչ պակաս իցէ . և սուտ՝ եթէ հատցէ ոք մի յայն-
ցանէ , կամ 'ի ներքս ընդունիցի այլ ինչ անպատեհ , որ-
պիսի ինչ՝ անքննաբար և կուրաբար դիմագրաւն լինել
վտանգաց , որ ոչ արութեան՝ այլ յանդգնութեան է :

ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

ՀՄՏՈՒԹԻՒՆՔ , ԶԱՆՅՉԱՆՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԻՆ , ԵՒ
ՕՐԵՆՔ ԳԻՒՏՏԻ ՀԵԽԱՆԱԿԱՆՈՒԹԵՍՆ ՆՈՑԱ
ԿԱՄ ՍՏՈՒԳՈՒԹԵՍՆ , ՈՐ Է ՈՒՂԱԾԴԱՏՈՒԹԻՒՆ

Հմոռութիւն , որպէս 'ի վերագոյն ասացաւ , գործ է՝ որով
հոգին իմանայ զնմանութիւն և զաննմանութիւն երկուց
զգացմանց և իմացուածոց կամ զբազմաց , և զերկուց կամ
զբազում ծանօթութեանց և գաղափարաց : Վասն որոյ
զգացմոնք և իմացուածք կամ ծանօթութիւնք և գաղա-
փարք որ 'ի նոցունց , ատաղձք են մերոց հմոռութեանցս :

Զգացումն ինչ կամ իմացուած ինքնին սոսկ՝ հմոռու-
թիւն ոչ է : Արձանն Փանտլյեաքայ և Պօնէի²⁰ յառնուլ
անդ զառաջին հոտն՝ ոչինչ աւելի ունի քան զմերկ զգա-
ցումն , և հմոռութիւն չէ՝ մինչև առցէ և զայլին , և ի-
մասցի զլստիրն , կամ բաւական լիցի իմանալ զուստն և
համեմատել ընդ նմա , կամ ուսցի ուշ 'ի կուրծս առնել
և որոշել զանձն 'ի զգացմանէ անտի :

Առ հմոռութիւն հարկաւ պահանջի համեմատութիւն
գոնէ երկուց իրաց . և 'ի տղայս առաջին գործ ճանաչման
հաւանելի է թէ ընտրողութիւնն իցէ . զայն ասեմ , որով
յերկուց զանազան զգացմանց՝ զոր փորձեն մի առ մրոջ , ի-
մանան զի մին այլ է և միւսն այլ : Ապա առ սակաւ սակաւ
և 'ի ծանօթութիւն գան իրացն յորոց զգացմոնքն են , և
այլ և այլ հանգամանաց և համեմատութեանց նոցա . և
այսպէս հմոռութիւնք նոցա գամ քան զգամ ընդարձակին :

Սակայն զհանգիտութիւն կամ զանհանգիտութիւն եր-
կուց գաղափարաց և ծանօթութեանց՝ է զի առանց միջ-
նորդի ծանաչեմք լոկով համեմատութեամք նոցին . և այս
հմոռութիւն կոչի անընդմիջաբար և ինքնադիմի . և է զի
հարկ լինի համեմատել զնոսա ընդ այլս , և այն ասի հըմ-
տութիւն միջնորդաւ , խելամտութեամք և ցուցիւք :

Հմտութեանն մարթի ևս լինել ազդմամբ կամ սովորութեամբ . և բնաւիցն մարթի ստոյգ լինել և հաւանական կամ երկրայելի :

Զայս ամենայն ազգս հմտութեանց ճառել առեալ եմք մի ըստ միոջէ , և հասարակ քննել ուր այս և ուր այն ազգ հմտութեան իցէ մեր :

ԳԼՈՒԽ Ա.

ՀՄՏՈՒԹԻՒՆՔ ՈՐ ԻՆՔՆՍԴԻՄԻ ԵՒ ՈՐ ՑՈՒՑԻՒՆՔ ,

ՈՐ Ֆ.ՁԴՄԱՄՄԲ ԵՒ ՈՐ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՄՄԲ

Հմտութիւնք են իրաց էութեան կամ հանգամանաց և կամ համեմատութեանց : Եթէ արդեամբք ազդէ ինչ 'ի զգայութիւնս , հմտութիւն էութեան նորա անընդմիջաբար է և ինքնագիմի . իսկ որ ոչն ազդեցուցանէ ինչ արդեամբք 'ի զգայարանս , ոչ է մարթելի ճանաչել զէութիւն նորա , բայց միջնորդաւ և խելամտութեամբ : Ծնէ իցէ ուրեք հուր , առցուք օրինակ , ամենայն ոք իմանայ անընդմիջաբար տեսութեամբ կամ շօշափմամբ . իսկ եթէ ծուխ միայն տեսանիցէ , ոչ ևս անընդմիջաբար ճանաչէ զհրոյ գոյութիւն , այլ խելամտութեամբ , առ նովին ծխով եղեալ զայլս զորս գիտէ 'ի հրոյ եղեալս , և զնովիմբ ածեալ՝ թէ որպէս անդ ծուխ կից էր ընդ հուր , նոյն և աստ լինիցի : Զնոյն իմա և զգգալի հանգամանաց իրաց . զձանրութիւն ոսկւոյ 'ի միտ առնուցու ոք անընդմիջաբար իբրև զգայ 'ի ձեռին զկշիռ նորա . իսկ իբրև տեսանէ զի բեկոր ինչ ոսկւոյ յերկիր անկամնի , մոտախոհութեամբ անդէն 'ի վերայ բերէ թէ ծանր է . զի գիտէ թէ յատուկ է ամենայն մարմնոց 'ի թողանալն յերկիր անկանել :

Եւ համեմատութեանց հմտութիւն՝ է որ ինքնագիմաբար է , և է որ ցուցիւք : Զհաւասարութիւն երկուց եռանկեանց որոց ամենայն անկիւնք և կողմունք հաւասար են , զմիմեամբք ածեալ՝ գտանէ ոք անընդմիջաբար , տեսեալ զի մասն առ մասն անվրէալ պատկանին միմեանց : Իսկ ըզ-

Հաւասարութիւն այլըց երկուց եռանկեանց, որոց խարիսխ և բարձրութիւն հաւասար իցեն, այլ միւս կողմանք և ամենայն անկիւնք անհաւասար, չմարթէ առնուլ՝ ի միտ, մինչև համեմատեալ մի մի ընդ նոյնախարիսխ և նոյնաբերձ զուգահեռագիծ, և տեսցէ թէ իւրաքանչիւրն է կէս իւրոյ զուգահեռագիծի. և ապա զերկուսին զուգահեռագիծն եղեալ առ իրեարս՝ տեսանիցէ թէ հաւասարը են. առ որ և այլ անդաճմունք պիտին, զորովք զանց առնեմք աստանօր վասն համառօտութեան: Եւ այսպէս ապա իմաստասիրէ, թէ եռանկիւնք որ են կէս երկուց հաւասար զուգահեռագիծից՝ 'ի հարկէ հաւասար են ընդ միմեանս:

Յանընդմիջաբար ծանուցեալ համեմատութեանց ծնանին ակներև ճշմարտութիւնք Առած կոչեցեալք, որպէս այն թէ Բոլոր մեծ է քան զոր և է մասն իւր. Եթէ յերկու հաւասար քանակս յաւելցին երկու այլ հաւասար քանակք, հաւասար մնան. Որ էն՝ է. Անհնարին է լինել իմիք և չլինել միանդամայն, և այլն²¹:

Ի համեմատութեանց՝ որ խելամտութեամք և ապացուցիւ ևեթ՝ 'ի ծանօթումն գան, ծնանին ապացուցական ճշմարտութիւնք, Հայեցողութիւն անուանեալք. զոր օրինակ թէ Յուղղագիծ եռանկիւնն գումար երեցունց անկեանց հաւասար է երկուց ուղղոց. Քառակուսի հակուղղոց ուղղանկիւն եռանկեանց հաւասար է գումարի քառակուսեաց միւսոց երկուց կողմանց, և այլք:

Իսկ Ղոք և այլ ինչ զանազանութիւնն մուծանէ հմտութեանց, բաժանելով՝ 'ի հմտութիւնս որ ազգմամք և որ սովորութեամբ: Ազդմամբ զայն ասէ, յորժամ արդեամբք առ ժամն ծանաչեմք զնմանութիւն կամ զաննմանութիւն դաղափարացն զոր համեմատեմք. և սովորութեամք զայն՝ յորժամ զհանդիտութիւնն և զանհանդիտութիւնն ոչ առ աեղեաւն արդեամբք ծանաչեմք, այլ միայն յայլնուագս ծանուցեալ գիտեմք: Ըստ այսմ հմտութիւնն թէ քառակուսի հակուղղոց ուղղանկիւն եռանկեանց հաւասար է քառակուսեաց այլըց երկուց կողմանց՝ ազդմամք է, եթէ արդեամբք տեսանիցեմք զապացոյց հայեցողութեանն. իսկ սովորութեան զօրութեամբ է, եթէ չտեսանեմք զայն առ ժամայն ազդմամբ, այլ զօրութեամբ ուշիւ յիշատակաց երբեմն տեսութեանն:

ԳԼՈՒԽ Բ.

ՍՏՈՅԻ, ՀԱՒՏՆԱԿԱՆ ԵՒ ԵՐԿԲԱՑԵԼԻ

ՀՄՏՈՒԹԻՒՆՔ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Ա .

Յատուկ նշանք ստուգորեևան , կարծեաց
և երկրայորեևան .

Հաւասարութիւն կամ անհաւասարութիւն երկուց
գաղափարաց , զնոյն իմա և զծանօթութեանց , է զի ան-
ստուեր պայծառութեամբ և յստակութեամբ ծանօթա-
նայ մեզ , և յայնժամ հոգին է 'իգիտութեան կամ ստու-
գութեան պայմանի : Զոր օրինակ ստոյգ գիտութիւն է 'ի
մեզ՝ թէ բոլորակն է բոլորչի , բոլորակն չէ քառանկիւնի .
քանզի պայծառ և յստակ տեսանեմք զնմանութիւն գա-
ղափարաց բոլորակի և բոլորչութեան , և զաննմանութիւն
բոլորակի և քառանկեան : Եւ է զի հաւասարութիւնն կամ
անհաւասարութիւնն չճանաչի բաւական յայտնութեամբ .
և յայնժամ երկու պայմանք են հոգւոյ , կարծեաց կամ
երկբայութեան :

Յերկբայութեան է՝ յորժամ չգտանէ բաւական նշանս
առ . 'ի գատել զնմանութիւն կամ զաննմանութիւն երկուց
գաղափարաց , որ և կոչի պակասական երկբայութիւն .
կամ յորժամ նոյնչափ նշանք իցեն յերկաքանչիւր կող-
ման , որ ասի իսկական երկբայութիւն : Թէ արդեօք յետ
տարւոյ ամալիցէ երկին , եթէ ջեր լինիցի , չիք ինչ նշան
գիտելց զայդ , և երկբայութիւն է պակասական ²² . իսկ
թէ գաղիւ ամալիցէ արդեօք թէ ջեր լինիցի , նոյնչափ մար-

թեն լինել նշանք ըստ երկաքանչչւր կողման, և իսկական են յերկուանքն :

Եթէ իցէ ինչ նշան միոյ կողման և միւսոյն ոչինչ, կամ միոյն մեծ քան զմիւսոյն, այլ անբաւական՝ ի բառնալ զամենայն երկեան կամ տալ անվրէպ ստուգութիւն, այն սահման է կարծեաց : Վասն որոյ, առեալ միւսանգամ՝ զնոյն օրինակ, եթէ ծանրաչափն կամ խոնաւաչափ գործին և կամ այլ ինչ նշանակ՝ ցուցանիցէ ինձ անձրեւ առ վաղիւ, և չգուցէ ինչ այլ նշան ջերոյ, կամ մեծ իցեն անձրեին նշանք քան զջերոյ, կարծիս առնում վաղիւ անձրելոյ : Աստի յայտ է թէ ստուգութիւն լուծանէ բովանդակ զամենայն երկմտութիւն, իսկ կարծիք ոչ՝ ի սպառ:

Բայց մի և նոյն իր՝ ումեմն հաւաստի լինել պատահէ, և ումեմն անհաւաստի . նա պատահէ իսկ հակառակին ումեք հաւաստի լինել: Հակոտնայք թէ իցեն, առ մեօք հաւաստի է . իսկ չեւ գտեալ Ամերիկայ՝ ոմանք յերկբայս էին, և ոմանք աներկմիտ՝ թէ ամենեին իսկ չգոն: Այդմ պատճառք լինին՝ ոչ միայն նշանքն իւրաքանչիւրոց՝ ի ճանաչել և՝ ի դատել զնմանութիւն կամ զաննմանութիւն գաղափարացն, այլ և չափ հաւանութեան զոր տան նշանացն . զի նոյն և մի նշան՝ հնար է թէ ումեմն ստոյդ թուեսցի և ումեմն անառոյգ :

Այդ անուանեալն ուղղադատութիւն, որ է ատեան ընտրութեան ճշմարտութեան, ոչ այլ ինչ է՝ քան գիտել ընտրել զչափ հաւանութեան ըստ արժանի նշանացն . այսինքն թէ որ նշանք փարատիցեն զամենայն երկմտութիւն և կատարեալ ստուգութիւն՝ ի միտսն բերիցեն . ոյք իսկ թիւ տարակուսի թողուցուն, բայց և առնիցեն յայս քան յայն միտել մտացն, և ծնանիցին կարծիս . և ոյք բնաւ իսկ երկեան թողուցուն՝ ի նմա, և շտայցեն երբէք հոգւոյն հաւանել կամ դատել:

Որ բաւականքն են զանխաք ստուգութիւն՝ ի միտսն գործել, ստոյդ նշանք կոչին . որ կարծիս միայն տան, հաւանականք . և որ համակ յերկուանս արկանեն, երկբայականք :

Յ Օ Ւ Խ Ա Ծ Բ .

Պատճառք ստուգորեան , կարծեաց
և երկրայորեան .

Պլատոն ակադիմեան հնոյ աղանդոյն նախահայր՝ ա-
սաց ուրեմն ²⁵ , թէ քանզի է ինչ զոր զգայութեամբ ու-
սանիմք , և է զոր մտօք , սա ճշմարիտ գիտութիւն գործէ ,
և այն կարծիս ևեթ : Իսկ Արկեսիլայոս միջին Ակադիմեայ
առաջնորդ , թէ չիք ինչ ստոյգ գիտութիւն , և բնութիւն
իսկ իրաց ոչ տանի զբուն ստուգութիւն : Կարնէադէս օ-
րէնստիր նորոյն Ակադիմեայ աւանդեաց , թէ է ճշմար-
տութիւն և ստուգութիւն 'ի բնութեան էից , այլ մեզ
անհաս :

Կարծիք անստուգութեան ամենայն իրաց՝ քան յայլոց
առաւել՝ ի Պիւռոնէ ճարակեցաւ , որ յելէական ուսմա-
նէն ելեալ՝ գլուխ եկաց որոց զկնի պիւռոնեայք , յերկուա-
կանք , զնողք և խուզակք անուանեցան , որոց և օրէնք
էին երկրայել զամենայնէ : Բայց որ և զիւրմէ գոյութե-
նէն երկմտիցէ , որպէս 'ի ճահ խորհրդածեաց ձէնովէզի ,
բժշկի կարօտ է քան վարդապետի :

Արդ անյերկուանալի է , թէ զբազում ինչ իրաց կարող
եմք ունել ստուգութիւն . մնայ տեսանել միայն որ այն
նշանք իցեն որ ծնանիցին զայն 'ի մեզ : Կարդեսիոս հիմն
ստուգութեան և ուղղադատութեան եղ զպայծառ և զյրս-
տակ իմացումն հանգիտութեան կամ անհանգիտութեան
գաղափարաց . յաւել Մալլրանչ , թէ զայն ինչ ստոյգ է
համարելի , զորոյ այնպէս պայծառ և յստակ ունիցիմք զի-
մացուածս , մինչեւ չկարելոյ առանց ընդդիմամարտութեան
մտաց 'ի հաւանութենէն հրաժարել :

Ակայն այս նշանք չեն ինչ աներկեան . քանզի աղուաշն
այն աթենացի՝ որ զամենայն նաւս մտեալս 'ի Պիրէոն՝ իւր
համարէր , ապաքէն ունէր 'ի միտս իւր զպայծառ և զյրս-
տակ իմացուած երազայոյս տէրութեան իւրոյ , և առանց

ուժգին հակառակելոյ մտացն չեր կարող անհաւան կալ հաւասարի նմա թուեցելոյ ճշմարտութեանն :

Քոնտիլյեաք Արուեստին արամաբանելոյ փոխանակ ստուգութեան եղեալ յայտնութիւն, յերիս տեսակս զանազանէ զայն, զգայութեան, բանի և իրի : Ակնզբն և պատճառ յայտնութեան զգայութեան դնէ և նա գրեթէ ըզպայծառ և զյօտակ իմացուած ամենայնի զոր զգամք յանձինս մեր : Աակայն ազդ առնէ, թէ որովհետեւ մտահաճութիւնք և ախտք ստեղ խաբեն զմեզ, ծածկելով զմասն ինչ 'ի մեզ եղելոցն, կամ առնելով չեիցն հաստատութիւն տալ, կամ զորս ենն այլայլելով և խանգարելով, պարտ է ուրեմն ուշիմ մտածութեամբ քննել զորս ենն անդ տիրապէս . իմա զոր ինչ ստուգիւն զգամք 'ի մեզ : Վասն յայտնութեան բանի օրէնս դնէ զնոյնութիւն, յայտնի անուանելով զայն բանս, որոց եթէ փոփոխեացին բառք, ցուցանեն զնոյն հաւասար կամ նոյն լինել ընդ ինքեան²⁴ : Ըստ այսմ յայտնի է թէ երկու և երկու հաւասար են չորից . զի ոչինչ այլ նշանակէ, բայց թէ երկու և երկու հաւասարեն երկուց և երկուց : Նոյնակէս ճարտարմուութեամբ ցուցանէ նա, թէ երկրաշափական բանն՝ Զափ եռանկեան է արտադրեալն բարձրութեան կիսով խարսխին, յայտնի է, վասն զի 'ի ձեռն շղթայատող նոյնաբանութեանց 'ի վերջէ ուրեմն 'ի միտ առնուլք, թէ գաղափար չափոյ եռանկեան նոյն է ընդ գաղափարի արտադրելոյ բարձրութեանն ընդ կիսոյ խարսխին :

Ի յայտնութիւն իրի առնու զհաստատուն և զմիօրինակ վկայութիւն զգայութեանց :

Արդ, թէպէտեւ կարի սակաւք քան զսա լաւագոյն սահմանեցին զուղղաղատութիւն, յայտ ածեալ և զարժանսն ստուգութեան, սակայն ես ոչ հաւանիմ նախ անխտիր փոխանակ ստուգութեան դնել յայտնութիւն, զի բազում ինչ է ստոյդ, այլ ոչ յայտնի : Ի ստուգութիւն՝ շատ են նշանք ինչ հաւաստի նմանութեան կամ աննմանութեան երկուց գաղափարաց զորս հաստատեմք կամ ժըխտեմք . իսկ 'ի յայտնութիւն՝ հարկ է ևս զի նմանութիւնն կամ աննմանութիւն ինքնին պայծառ երևեսցի : Օրինակ իմն, եթէ սովորութեամբ իցէ յումեք հմտութիւն, թէ շափ եռանկեան է արտադրեալն բարձրութեան իւրոյ կիսով խարսխին, այս է յուշի ունիցի թէ յայլում նուազի

յայտնապէս հասու եղեալ է ապացուցի այսր ճշմարտութեան , առանց յիշելց այժմիկ թէ զինչ է , ստոյդ է այն առ նմա , այլ ոչ յայտնի : Եւ անուղղորդ ապացուցք , որով ի գէմս ածեմք զՃշմարտութիւն առաջիկայ բանին՝ ցուցանելով զհակառակին ստութիւն , բազում այն է զի ստուգութիւն բերեն , այլ ոչ յայտնութիւն : Եւ համանգամայն ասել , անբաւ բանք են՝ որ ստոյդ գոն առ մեղ , և ոչ յայտնիք :

Ք . Ոչ հաւանիմ , զի չառնէ ինչ յիշատակ բարոյական ստուգութեան , որ և նա ինքն արժանաւորի ստուգութեան անուան , իբրև բաւական լինի լուծանել զամենայն բանաւոր երկայութիւն . և սակայն որոշելի է ՚ի ընազնական և ՚ի ընական զգալի ստուգութեանէն , որպէս ՚ի մօտոյ տեսցուք :

Ք . Ի յայտնութիւն բանի օրէնք նոյնութեան պիտանի են միայն ՚ի հաստատական դատմունս , որպէս երկու և երկու հաւասար են չորից : Խսկ ՚ի ժխտական դատմունս , որպէս՝ երկու և երկու չեն հաւասար հնդի , յայլ օրէնս պարտ է ապաստան լինել . այն ինքն է հակասութիւն՝ որ է անհնարութիւն . ցուցեալ թէ քանզի հինգ հաւասար է կրկին երկուց և միոյ , ապա անհնար է թէ միանգամայն հաւասար իցէ միայն կրկին երկուց : Կա զի ՚ի հաստատական դատմունս դժուարին է ճանաչել զնոյնութիւն դաղափարացն հաստատելոց , մանաւանդ յերկարահիւս համեմատութիւնս և ՚ի խորհուրդս : Վասն որոյ՝ օրէնք նոյնութեան ՚ի հաստատել զսուցութիւն դատաստանաց՝ ոչ դիւրին ինչ է և . ոչ հասարակաց ՚ի պէտս :

Հասարակաց հեշտընկալ և առ ամենայն դատաստան բաւական՝ յանձնառութեան և ուրացութեան , թուի ինձ անհնարութիւնն . զսա միայն համարիմ ես անսխալ սահման և չափ ստուգութեան , և ՚ի սա միայն հաստատեալ զուղղադատութիւն : Ինքն իսկ նոյնութեան օրէնք յանհնարութեան հիմնեալ է . քանզի ոչ այլով իւիք հարկաւ հաւասար և նման է ինչ ինքն ինքեան , բայց միայն զի թէ այնպէս չիցէ լինի միանգամայն և չլինի որ զինչ էն , որ է անհնարին : Ուրեմն ստոյդ ասի նմանութիւն երկուց գաղափարաց կամ ծանօթութեանց՝ յորժամ՝ աննմանութիւնն ասցա չմարթելի ցուցանի . է ստոյդ աննմանութիւնն՝ յորժամ՝ նմանութիւնն անհնարաւոր յանդիմանի : Որ է ա-

սել՝ յստակ և պարզ խօսելով, թէ ճշմարիտ ստոյգ է համարելի որոյ հակառակն ճանաչի անհնարին :

Բայց քանզի երեւակ է ինչ հնարին և անհնարին, ընազանցաբար՝ իմա բնաւ ամենեին և տիրապէս, բնաւորաբար և բարոյապէս, ապա և ստուգութեան այս երեք չափք են : — Բնազանցօրէն և տիրապէս անհնար այն է, եթէ իցէ ինչ և չիցէ միանդամայն : Զոր օրինակ երկու քանակք հաւասար իցեն և անհաւասար 'ի նմին ժամու . անկիւն ինչ իցէ համանդամայն մեծ և փոքր քան զայլ . գիծ ինչ ուղիղ և կոր 'ի նմին պահու : — Բնաբար անկարելի է, որ հակառակի օրինաց զգալի բնութեան, որպէս թէ քար 'ի բաց ընկեցեալ յօդս մնայցէ : Բայց քանզի հնարաւոր է այդ գերաբուն զօրութեան, ոչ ամենեին անհնարին ասի, այլ ըստ բնական զօրութեան միայն : — Բարոյապէս անկարելի է՝ որ թէպէտ չէ ինչ անհնար բնազանցօրէն և ոչ բնապէս, սակայն առ յոյժ գժուարութեանն՝ ամենեին կամ զրեթէ ամենեին ոչ պատահէ . որպէս եթէ խառն 'ի խուռն ընկեցեալ զանազան տառս, և ելցէ անտի տող մի Որատեայ քերդողի կամ Վերդիլեայ :

Արդ ահա ըստ այսմ և ստուգութեան այս երեք չափք են : — Բնազանցօրէն ամենեին իսկ տիրական ստուգութիւն է, որոյ հակառակն պարզպար և բնազանցապէս անհնարին ճանաչի : — Բնաւորապէս և զգալի ստուգութիւն է, որոյ հակառակն ճանաչի անկար 'ի բնէ : — Եւ բարոյական ստուգութիւն է, որոյ հակառակն ճանաչի բարոյապէս անմարթ :

Իսկ որոյ հակառակն ոչ անհնարաւոր թուիցի՝ ոչ բնազանցակի, ոչ 'ի բնուստ, և ոչ բարոյապէս, չմարթի ըստոյգ համարել, այլ հաւանելի կամ երկըայելի : Եթէ 'ի մի թեր միայն իցեն փաստք և 'ի միւսում ոչ, կամ զօրագոյն 'ի մին քան 'ի միւսն, հաւանական գրեսցի : Իսկ եթէ և ոչ միոյ կողման իցեն հաւաստիք, կամ երկոցուն հաւասարք, երկըայական լինի :

Անսխալութիւն այսր օրինաց յայտնագոյն երևեսցի այժմ 'ի վարել մեր զնոյն յայլ և այլ պէտս իրաց հմտութեանց մերոց, իմանալ թէ յիւրաքանչիւրմն զինչ չափ ստուգութեան կամ հաւանականութեան կայցէ ²⁵ :

ԳԼՈՒԽ Գ.

ՀԱՅ ԱՑՈՒԹՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԻԱՆ ԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ա.Զ.Գ.Ի Ա.Զ.Գ.Ի ՀԱՏՈՒԹԵԱՆՑ

Որպէս յառաջագոյն ասացաք, ամենայն հմտութիւնք՝ կամ գոյութեան իրաց են, կամ հանդամանաց և համեմատութեանց նոցին. ժամ է արդ տեսանել զիշիռ ստուգութեան և հաւանութեան զանազան հմտութեանց:

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Ա :

Չափ ստորգործեան գոյորդեան իրաց.

Ակիզբն 'ի գոյութենէ արարեալ, կրկին ազգս գոյացութեան ճանաչեմք, հոգեղէն և նիւթեղէն, կամ աննիւթ և նիւթական, անմարմին և մարմնաւոր, իմանալի և զգալի, անզննելի և զննելի:

Ի հոգեղէն գոյացութեանց գիտեմք զգոյութիւն մերոյ մտացս, զԱստուծոյ, զՀրեշտակաց, զոգւոց այլոց մարդկան, և զշնչոց կենդանեաց: Ընդ անուամբ նիւթեղէն գոյացութեանց, զորոց գիտեմք կամ մարթեմք գիտել զգոյութիւն, պարագրին ամենայն մարմինք կամ զգալիք: Սակայն զգոյութիւն այսր ամենայնի գոյացութեանց՝ ոչ միով օրինակաւ և ոչ նովին չափով ստուգութեամբ ճանաչեմք:

Ե . ԱՆՆԻՒԹԵԱԿԱՆ ԳՈՅՑՑՈՒԹԻՒՆՎ

Գոյութիւն մոտացս՝ այսինքն խոհուն էակին 'ի մեզ, ծառով է ինքնին առանց միջնորդի, տիրական լի և լի ստուգութեամբ : Փանզի իրագետ գործ որ 'ի մեզն խորհրդոց, անհնարութեան օրինօք չմարթեմք անդիտանալ յանձինս մեր՝ գոյութեան խոհուն էակի 'ի մեզ : Զի որովհետեւ խորհուրդ գործ է, և գործ առանց ուրուք գործելոյ ոչ է, ապա յայտ իսկ անհնարութիւն է թէ իցեն 'ի մեզ խորհուրդը, բայց որ խորհիցի՝ և ոչ ոք :

Նոյնպէս և զգոյութեանն Աստուծոյ տիրական ստուգութիւն ունիմք, այսու ևեթ խտրոցաւ, զի զմոտացս գոյութեան առանց միջնորդի ունիմք գիտութիւն և ինքնադիմաբար, կամ ըստ Քոնտիլեաքայ՝ յայտնութիւն զգացութեան. իսկ զԱստուծոյ գոյութեանն ունիմք գիտութիւն՝ խելամտութեամբ և ցուցիւք, կամ ըստ նորուն ասելոյ՝ յայտնութիւն բանի : Աակայն յեղանակ ճանաչման մերոյ, առանց միջնորդի թէ միջնորդաւ, զգայութեամբ թէ բանիւ, ոչինչ յաւելու և ոչ պակասեցուցանէ զկշիռ ստուգութեանն. որ միշտ նոյն է եթէ նոյնպէս յօրէնս անհնարութեան հաստատեալ իցէ, այս է եթէ ոչինչ ընդհատ ծանօթ իցէ հակառակին անհնարութիւն : Արդ գոյութիւնն Աստուծոյ՝ 'ի նմին իսկ գոյութենէ մերոյ հոգւոյ՝ բանիւ այսպէս ցուցանի տիրապէս : Հոգիս մեր կամ իւրով զօրութեամբն գոյ կամ յայլմէ առեալ էութիւն . ստոյդ գիտեմք տիրապէս թէ ոչ իւրով զօրութեամբ կայ . զի ամեննեին իսկ ընդդէմ է, որպէս յիւրում տեղւոջն ցուցցի, թէ որ էակ անկարօտ է յայլմէ էանալոյ, այսչափ կարօտացի ամենայնիւ իւրեւ զսա 'ի հանգամանս իւրոյ էութեանն . ապա հոգիս մեր յայլմէ եկեալ է 'ի գոյս : Բայց գոյացուցիչ սորուն հարկ է թէ և նա կամ յայլմէ է գոյացեալ, կամ ինքնագոյ . այլ եթէ յայլմէ իցէ ածեալ 'ի գոյութիւն, և սա գարձեալ յայլմէ յանբաւս, առանց ուրեք երեւելոյ ինքնակաց անսկիզբն էակի, լինիցի այնուհետեւ շար անհատ գործոց առանց սկզբնապատճառի, որ է անհնարին : Փանզի 'ի բառնալ առաջնոյ անարար պատճառին, ընդնմին բառնայ և առաջին գործն, որով և այլքն

առ հասարակ : Հարկ է ապա՝ թէ իցե ոք առաջին պատճառ , առաջին էակ ինքնեղ և պատճառ հանուրց էութեան . և սա ինքն է նախագոյակս՝ զոր Աստուածն անուանեմք . վասն որոյ և գոյութիւն նորա հաւաստի է տիրապէս :

Գոյութեան հրեշտակաց լոկով ընական բանիւ անմարթէ է 'ի հմտութիւն հասանել . զի գոյակք են՝ զգայութեանց անհպելիք . և չիք հնարաւորութիւն՝ հարկաւոր և էական ցուցանել զգոյութեան նոցին հմտութիւն 'ի յայտնութենէն Աստուածոյ միայն է . և այնպէս ամեննեին ստոյգ է , քանզի յանսիսալութիւնն Աստուածոյ ապաստան կայ : Բայց զի այդ այլս կարգի է բան , ոչ է մեզ ճառել աստանօր :

Չուզոց գոյութիւն յայլ մարդիկ՝ չունիմք ստուգել ոչ բնագանցօրէն և ոչ բնաւորաբար , այլ բարոյապէս ևեթ : Առ 'ի յստակ տեսութեամբ իմանալ զբանս , արժան է կարգելնախ յայսմ վայրի , թէ պատճառք հաստատութեան բարոյական ստուգութեան կրկին են . պատշաճութիւն՝ որ է յարմարութիւն , համեմատութիւն , նմանութիւն . և վկայութիւն կամ բան այլոց : Պատշաճութեան հիմն՝ այս հաստատուն և տիեզերական օրէնք բնութեան են , թէ նման գործք 'ի նման պատճառաց լինին , և փոխագարձաբար : Արդ նշանք ճանաչելոյ գոյութեան ոգւոց յայլս 'ի մարդկանէ , ցոյցքն են զոր տան մեզ թէ զգան , մուածեն , ճանաչեն , յիշեն , կամին և գործեն իրեւ զմեզ . յորոց իմաստասիրեմք , թէ է ուրեմն և 'ի նոսա գոյակ՝ նման այնմ յորմէ յառաջ գան 'ի մեզ այն զօրութիւնք , որ այն ինքն է ոգի :

Նոյն ինքն պատշաճութիւն զեկուցանէ մեզ՝ թէ գոյ ոգի , ո գիտէ ստորին և ախնթոր բնութեամբ , բայց պարզ՝ յայլ կենդանիս . քանզի և յայլ շնչաւորս յայտնի տեսանեմք նշանս , թէպէտ և նուազագոյնս և անկատարս , զզօրութեանցն զայնոցիկ՝ զորս պարզ գոյացութեան ևեթ դիտեմք պատկանաւորս :

Բայց քանզի ոգիք այլ մարդկան և շնչաւորաց՝ պարզական բնութիւնք են և մերոց զգայութեանցս չզննին , չկարեմք ունել զնոցանէ զգալի ստուգութիւն : Եւ զի չէ հնարբացէ 'ի բաց անկարելի ցուցանել , թէ ոչ առանց ոգւոյ տան նոքա զայն ամենայն ցոյցս . զի արդարեւ ոչինչ անհնա-

ըին է առ յԱստուծոյ այսպէս շարժել զանշունչ մարմինն , զի և առանց ոգւոյ զնոյն ցուցանիցէ նշանս . ապա և բնաւ զանցական ստուգութիւն անկար է ունել զնոցանէն : Բայց մնայ մեզ բարոյական ստուգութիւնն , որ այնչափ մեծ է աստանօր , մինչեւ արդեամբք մերձաւոր յոյժ լինել զգաւ լոյն և բնազանցականին : Քանզի իբրև խօսիմք ընդ այլս և առնումք ՚ի նոցանէ յօդաւոր պատասխանիս , ապաքէն չիցէ ոք որ երկմտիցէ ընդ գոյութիւն ոգւոց նոցա . ապա թէ ոչ՝ զնոյն և զանձնէ երկմաեսցէ :

Բ . ՆԻՒԹԱԿԱԾԱ ԳՈՅՑՑՈՒԹԻՒՆՔ

Զոր օրինակ գործք մեր հաւաստեն զմերն գոյութիւն , նոյնպէս զգոյութիւն մարմնոց հաւատարմացուցանեն գործք նոցա զոր անդադար ազդեցուցանեն ՚ի մեզ , մանաւաւնդ որ հակառակն կան կամաց մերոց , ուստի և չմարթի բնաւ մեզ գրել : Յորժամ տեսանիցէ ոք մշեալ զանձն կամ ձգեալ յարտաքին բռնութենէ ուր ոչն կամիցի , կամ յորժամ ՚ի շարժելն պատահիցէ ինչ խոչ ընդ ոտն՝ արգելուլ զնա ակամայ և խափան լինել գնացիցն , չմարթինմա երկմտել այնուհետեւ թէ գոյ որ մղէ զնա կամ խափանէ բռնի :

Զուր ուրեմն խորհեցան սմանք , ընդ որս և Պըրքի և Քանթ , թէ զգոյութեան մարմնոց չիցէ հնար ունել հաւաստիս , այլ ընդ ցնորս իցեն գրելիք : Որովհետեւ հաւաստի են արդիւնք գործոցն զոր կրեմք ՚ի մարմնոց անտի , ապա հաւաստի է և գոյութիւննոցա . վասն զի , որպէս յառաջն ակնարկեցաք , չմարթէ լինել ազդումն կամ գործառանց ուրուք ազդելոյ կամ գործողի :

Հաւանելի է թէ Պըրքի , Քանթ և այլ անհաւանքն գոյցութեան մարմնոց , ՚ի նորասիրութեան հոգւոյ եկեալ իցեն յայն , քան ՚ի վկայութենէ մտաց իւրեանց : Զի որոյ անշուշտ հաւանեալ իցեն միտք ընդ անէութիւն մարմնոց , ապաքէն ոչ փոյթ ինչ առնիցէ նա այնուհետեւ կագել և վիճել զայնմանէ բանիւ կամ գրով : Վասն զի՝ առ արդարախօս երեւելց՝ պարտի հաւանել ևս , թէ չգոն և գործարանք իսկ ձայնի ՚ի բարբառել , և ոչ օճառք ինչ առ ՚ի ըզխորհուրդս իւր ՚ի գիր հանելոյ :

Սակայն ճշմարիտ է և այն , թէ զմարմնոց գոյութենէ

շիք ունել զնոյն ստուգութիւն զօր ունիմք զխոհուն էակեն որ 'ի մեզ : Զի թէպէտ և 'ի կրելն ինչ արտաքոյ կամաց մերոց՝ անշուշտ եմք թէ իցէ արտաքոյ մեր որ զայն գործիցէ , բայց ոչինչ հաւաստէ մեզ թէ այս՝ քան թէ այն իցէ որ գործիցէն . և Աստուծոյ թէ կամեցեալ էր ինքնին կատարել անընդմիջաբար զայն գործ , առանց ուրուք մարմնոյ միջնորդելոյ , չգոյր ինչ ընդդէմ հակառակ :

Արդ գոյութիւն մարմնոց հաւաստի է մեզ բնականն ասացեալ ստուգութեամբ . իբրև զի բնապէս անհնար է թէ առանց էութիւն ունելոյ մարմնոց՝ զգայարամք մեր միշտ միօրինակ ըստ կանխի բանիցս յանդիման առնիցեն մեզ զնոսա և զաղդեցութիւնս նոցին : Իսկ այս ստուգութիւն արդեամբք գրէ եթէ հաւասար է բնազանցականին : Եւ ոչինչ զօրէ ընդդէմ բերել , թէ բազում անդամ յանուրջս թուիմք տեսանել և շօշափել բիւր ինչ իրս , որը առ ժամն չեն 'ի ներքոյ զգայութեանցս , թերեւ և գոյութիւն անգամ չիք նոցա . և թէ չունի ոք հաւաստել մեզ թէ շյերազանայցեմք զօր հանապազ , և թէ մարմնոց գոյութիւն չիցէ ինչ երեւակայութեան պատրամք : Զի ով ոք ոչ տեսանէ զիստիրն ընդ զմտաւ և եթ ածել զարեգակն և ընդ հայելն 'ի նա արկանել : Եւ թէ ոչինչ ընդ մէջ համարիցի ոք նկարելոյն մտօք զհուր և մերձենալոյ 'ի նա , թող՝ ասէ 'լոք՝ նախ խորհրդիւ և ապա ձեռամբ ըմբռնէ զնոյն : Համառօտ և դիւրին խրատ , 'ի միտ առնուլ անդէն՝ ստուգութեան ինչ իրք իցեն , եթէ առ աչօք երեւութեան ցնորք :

Սակայն 'ի ճանաշումն գոյութեան մարմնոց ոչ միշտ զգայութեամբ հասանեմք . այլ է ուրեք զի պատշաճութեամբ , և է զի յայլոց վկայութենէ : Եւ յայնժամ բարոյական և եթ ստուգութիւն է , խոնարհագոյն յոյժ քան զընականն : Զի ոչ ոք է որ 'ի ծխոյ տեսանելոյ կամ 'ի լոյ՝ այնպէս հաւաստի համարիցի թէ ուրեք հուր կայցէ , որպէս եթէ ինքնին ականատես լինիցի :

Պատշաճութիւն և այլոց վկայութիւն ոչ յամենայնի բաւականք են 'ի բարոյական ստուգութիւն . բազում այն է՝ զի ոչինչ աւելի գործեն քան զհաւանականութիւն կամ զերկբայութիւն : Ի բարոյական ստուգութիւն գոյութեան իրիք առ 'ի պատշաճութենէ , հարկ է յայտնի լինել , թէ գործն կամ երեսոյթ որ նշանակն է նորա՝ ըստ

օրինաց բնութեան չունի այլ ուստեղ յառաջագայիլ, բայց միայն 'ի պատճառէ անտի զորոյ զգոյութիւնն հետազօտեմք : Խաղող տեսեալ հաւաստի լինիմք թէ գոյ կամ եղեալ է որթ այնր պաղաբեր : Սակայն իբրև Արիստիվալս վարեալ յալեաց յափն ինչ, ետես դրոշմեալ անդէն ձես երկրաչափս և ուրախ եղեւ, զի համարեցաւ թէ երկրաչափ 'ի տեղւոջն բնակիցեն, բազում հաւանութեամբ էր իմաստասիրելն, այլ ոչ բարոյական ստուգութեամբ . քանզի է երբեք զի երկրաչափից ձեք դրոշմին յորմէ անձաշակն է երկրաչափութեան, նա և լոկոյ գիպուածոյ լինին երբեմն գործ :

Նոյնպէս և առ զօրելոյ վկայութեան այլոց 'ի բարոյական ստուգութիւն, հարկ է բարոյապէս անհնարին լինել թէ խաբեալք իցեն զծմարտութենէ պատմեալ իրին կամ թէ զմեզ կամիցին պատրել : Ստոյգ է առ ամեննեսեան, թէ գոյ 'Լոնդոն և Փարիզ, թէպէտ և չիցէ ուրուք տեսեալ զքաղաքադ . զի այնչափ են որ զգոյութիւննոցա հաւաստեն՝ և այնպիսի միաձայնութեամբ, մինչ զի անհնարին է բարոյարար թէ ամենեքին սխալեալք իցեն կամ միաբանեալք խաղ առնել զմեօք : Իսկ թէ 'ի հարաւայինն Ամերիկա իցէ ազգ ինչ սկայից²⁶, չունիմք հաւաստի գրել, թէպէտ և իցեն 'ի ծանապարհորդաց որ այնմ վկայիցեն, վասն զի սակաւք են և կարի անմիաբանք : Բայց զզօրութենէ և զտկարութենէ վկայութեան այլոց յերկար խօսեսցուք 'ի հինգ պրակին :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Բ .

Չափ հաշանականորեան գոյորդեան իրաց .

Ուր չիք բնազանցական, բնական և բարոյական ստուգութիւն գոյութեան իրիք, մնայ միայն հաւանականութիւն կամ երկբայութիւն և կամ տփիսութիւն : Տգիտութիւն է պակասութիւն գաղափարաց և ծանօթութեանց, կամ նշանաց հանդիտութեան նոցա և անհանդիտութեան : Թէ իցեն արդեօք կենդանիք յարեգական,

տգետ եմք , զի հաշուեալ զնա հուր՝ չիք 'ի մեղ գաղափար կենդանւոյ որ կարող իցէ կեալ 'ի հուր սաստիկ : Անդիտանամք որպիսի կենդանիք իցեն 'ի բևեռոս երկրի , զի թէ պէտ և մարթի թէ իցեն , բայց չունիմք ինչ 'ի ձեռին նշան գոյութեան նոցա :

Հաւանականութիւն և երկբայութիւն ընդ մէջ են տգիտութեան և ստուգութեան , է զի 'ի մին և է զի 'ի միւսն առաւել հուպ մատչելով : Հաւանականութիւն նոյն հիմունք են ընդ բարոյական ստուգութեան , իմա պատշաճութիւն և վկայութիւն այլոց . և այնչափ մեծ է հաւանականութիւն՝ որչափ մերձ է 'ի բարոյական ստուգութիւն : Բայց 'ի հաշուել զհաւանականութիւն՝ յերկու ինչ հայել արժան է . 'ի թիւ նշանացն և 'ի զօրութիւն նոցին :

... Յաղագս թուոյն . եթէ մի միայն օրինակ առաջի կայցէ գործոյ իրիք յայն ինչ պատճառէ լինելոյ , 'ի տեսանեն միւսանգամ գործ ինչ այնալիսի՝ մի ևեթ չափ հաւանականութեան է գոյութեան այնր պատճառի . եթէ կրկին իցէ օրինակն , և չափը հաւանութեան լինին երկու . եթէ օրինակքն տասն , և չափը լինին տասն : Իսկ եթէ օրինակքն բաղում իցեն և ամենեքին նոյնալիսի և անխախուտ , մինչեւ իրաւունս տալ վճիռ ածելոյ , թէ այն գործ յայնմ պատճառէ առնուցու միշտ սկիզբն լինելոյ , 'ի գոյութենէ գործոյն բարոյական ստուգութեամբ իմաստասիրեմք յայնժամ և զպատճառին գոյութիւն :

Այդ՝ եթէ օրինակքն անյեղլի և նմանք իցեն : Իսկ թէ գտցին անդ և հակառակք , մէն մի 'ի սոցանէ նուազեցուցանէ չափ մի 'ի հաւանականութենէն : Եթէ տասնիցս ուրուք տեսեալ իցէ զայն գործ յայնմ պատճառէ եղեալ , և երկիցս յայլոց պատճառաց , հաւանականութեանն ութչափ է . եթէ առաջին օրինակքն իցեն ութ , և երկրորդին չորք , չորք ևեթ մնան չափը հաւանականութեան . եթէ յերկոցունց կողմանց վեց վեց օրինակք իցեն , ջրեցաւ հաւանականութիւն յերկաքանչիւր կողմանց , և մնայ միայն երկրայութիւն : Զնոյն իմա և յաղագս վկայութեան այլոց . եթէ մի ոք վկայեսցէ իրիք գոյութեան , մի չափ հաւանութեան բերէ 'ի հաւատարմութիւն իրին , եթէ երկուք՝ բերեն երկուս , և այսպէս կարգաւ՝ մինչեւ միաբանք իցեն : Իսկ եթէ գտցին և հակառակք , իւրաքանչիւր հաւ

տանէ չափ մի հաւանականութեան . և 'ի հաւասարել թուղ նոցա , չիք ինչ այլ՝ բայց երկմտութիւն :

Բ . Բաց 'ի թուղն ասացաք հայել և 'ի զօրութիւն իւրաքանչիւր նշանաց . զի սա բազում անդամ զակաւն հաւասարէ ընդ բազմին և զանցուցանէ իսկ : Եթէ տամն անգամ ուշ արարեալ գործոյն՝ չորիցս տեսի յայտնապէս յայն ինչ պատճառէ եղեալ , և վեցիցս թուեցաւ ինձ ընդ աղօտ յայլմէ լինել , առաջին չորք օրինակք գլեն զվեց հակառակն : Կմանապէս եթէ գոյութիւն իրէք վկայեցի 'ի չորից արանց բարեաց և իմաստնոց և մանրակրկիտ սովորելոց և ըստ նմին հաւատարիմն 'ի պատմել , և անդուստ դարձեալ այլք վեց իսոնարհագոյնք բարութեամբ և իմաստութեամբ և զգուշաբութեամբ ժխտիցեն զնոյն , սակաւքն յաղթեն բազմաց :

Զպատճառաց ստուգութեան կամ հաւանականութեան գոյութեան իրաց՝ այսչափս հերիքասցի :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Գ .

Չափ ստորգորեան և հաշանականորեան
հանգամանաց իրաց .

Յորմէ գոյութեանն 'ի նմին արմատոյ է և հանդամանաց իրաց ստուգութիւն կամ հաւանութիւն : Արդ նախ ինքնաղիմաբար գիտութեամբ 'ի վկայութենէ մտաց և պարզաբար իսկ և բնազանցօրէն ստուգութեամբ յայտ է թէ 'ի հոգիս մեր զօրութիւն է զգալոյ , մտածելոյ , ճանաչելոյ , յիշելոյ , կամելոյ և գործելոյ՝ հանդերձ այլովք ամենեքումք աղդմամբք որ 'ի նոցանէ կարգեալ գան : Իսկ թէ արդեօք յատուկ իցէ բնութեան նորա պարզութիւն և անապականութիւն , ոչ է այդ ինքնաղիմի տեսիլ յայտական , այլցուցիւք ոչինչ պակաս հաւատարիմ . քանզի նոյնպէս յօրէնս անհնարութեան հաստատի : Իբրև զի բնաւ ամենեին անհնարաւոր թուի , որպէս տեսիլ 'ի հոգեբանութեան , թէ որ յօդուածով գոյացութիւն է , ուս-

տի և քակտելի և կորստական, զօրութիւն ունիցի խորհելոյ :

Իսկ թէ նոյն զօրութիւնք իցեն և 'ի հոգւոջ այլ մարդկան, բարոյական ստուգութիւն միայն է 'ի պատշաճութենէ : Այս առաջնորդէ մեզ 'ի կարծիս լինել, թէ նոյնպիսի զօրութիւնք, թէ պէտ և կարի չափով և խոնարհագոյնք, սակայն իցեն և 'ի հոգիս այլոց կենդանեաց :

ՅԱՄՈՒԱԾ տիրական ստուգութեամբ գտանեմք 'ի ձեռն ապացուցի զյատկութիւնս միութեան, մշտնջենաւորութեան, ամենակարողութեան, ամենագետ իմաստութեան, անչափութեան, բարութեան, արդարութեան, նախախնամող տեսչութեան, անսահման կատարելութեան, որպէս յիւրում տեղւոջն տեսցի :

Ի հրեշտակս ոչինչ գտանեմք մեզէն, բայց զոր 'ի յայտնութենէն Աստուծոյ ունիմք . և ստուգութիւն ամենայնի զոր նովաւ ճանաչեմք 'ի նոսա՝ հաստատի յանխաբութեանն Աստուծոյ . այսինքն թէ հոգիք են պարզական բնութիւնք անմարմինք և քան զմեզ իմացականք, կատարեալք և երջանիկք, և որ 'ի սոյնս յարմարին :

ԶՀԱՆԳԳԱՄԱՆՍ էից զգալեաց բնական ստուգութեամբ ճանաչեմք, յորժամ արդեամբք ազգեցանեն ինչ 'ի զգայարանս մեր, և յորժամ զգայութիւն նոցին պայծառէ և յստակ : Առ այս պահանջն զգայարանացն բարեկազմն լինել և պատշաճաբար կալ առ նորօք : Դավկահար՝ որ ախտացեալ աչօքն զամենայն ինչ գեղնաշորթ տեսանէ, և տենդու՛ որում վասն մաղձին զերզուովն դալոյ՝ դառն թուի ամենայն, սխալեն՝ եթէ զամենայն ստուգապէս դեղին կամ դառն դատեսցին : Ախալեմք և մեք, եթէ աղօտ լուսով կամ 'ի մեծ հեռաստանէ տեսեալ զերինսն լուրթ և գորշ և կապուտակ, այնպէս ինչ համարիցիմք զնոսաճմարտութեամբ :

ԶՀԱՆԳԳԱՄԱՆԱԳ՝ որ արդեամբք ոչինչ ազդումն առնեն 'ի զգայութիւնս, չիք հնար դատաստան առնել, բայց եթէ 'ի պատշաճութենէ կամ այլոց վկայութեամբ : Ի վեր քան զամենայն պատշաճութիւնն է յայսմ առաջնորդ բազում դատմանց . և առանց այնր զրեթէ և ոչ մի ինչ յէիցս համարձակէաք 'ի պէտոս ինչ իրաց առնուլ : Եթէ զօգտակարութեան կամ զմիասակարութեան հանգամանս կերակրոյն կամ ըմպելոյ կամեր ոք ստուգել յառաջ քան

զճաշակելն ինչ, մեռանէր 'ի քաղցոյ և 'ի ծարաւոյ . զի այնմ ստուգութեան չմարթի առանց ճաշակելց ժամանել: Նոյնպէս և ոչ քայլ մի ոտին շարժէր ոք 'ի տեղւոջէն, եթէ յառաջ քան զփոխել ուրեք 'ի զգալի ստուգութիւն հասանել կամք էին, թէ կարող իցէ արդեօք տեղին այն բառնալ զինքն: Բայց պատշաճութիւնն նու զայդ, բազում ուրեք և վկայութիւն այլոց: Վասն որոյ 'ի պէտս մեր պաշտիմք զգալեօքը ընդ շատ և ընդ սակաւ վատահութեամբ կամ հաւանութեամբ՝ ըստ նշանացն զոր պատշաճութիւն կամ այլոց վկայութիւն ցուցանեն մեզ զհանգամանաց նոցա, որ յաւէտ և որ նուազ ստուգութեամբ կամ հաւանականութեամբ:

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Դ Ւ Յ Ո Ւ Յ .

Չափ ստորորեան և հարանականորեան
համեմատորեանց .

Ճշդիւ եօթն ազգ համեմատութեան կամ յարմարութեան որոշին . նոյնութեան և զանազանութեան, նմանութեան և աննմանութեան, մերձաւորութեան և հեռաւորութեան տեղւոյ կամ ժամանակի, չափոյ մեծութեան կամ սաստկութեան կամ թուոյ, ընտանութեան և ներհակութեան, պատճառի և գործոյ, պարտականութեան և կցորդութեան: Ավկայն մարթ է ամփոփել զամենայն յերիս ընդհանուր դասս . նմանութեան՝ ընդ որով է և նոյնութիւն, համագոյութեան՝ ընդ որով տեղին՝ ժամանակն և քանակ, կցորդութեան՝ ընդ որով պատճառ և գործ՝ ընտանութիւն և ներհակութիւն և պարտականութիւն: Զամենայն գաղափարաց և զանօթութեանց յորս գտանին այս ամենայն համեմատութիւնք, ճոխաբար խօսել այնմ մասին ընազանցութեան անկ է, որ էակարանութիւնն անուանի . մեք համառօտեսցաւք և թթ զայլ և այլ չափս ստուգութեան և հաւանականութեան նոցա:

Ա . ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱԶՄԱԿՈՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱՆՆՄԱՆՈՒԹԻՒՆ , ՊԱՏՃԱՌ ԵՒ ԳՈՐԾ ,
ԸՆՏԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՐՀԱԿՈՒԹԻՒՆ

Սայդ է ամենելին թէ բազում միամնական զգացմունք
են 'ի մեզ , յորժամ բազում զգացմունս 'ի միամին յատակ
տեսանեմք յանձինս մեր . բայց տեսութիւն միոյ և եթ
զգացման ոչ հաւաստէ մեզ զմիաբուն պարզութիւն նո-
րա : Փունջ ծաղկանց զառաջինն տայ մեզ զիառն զգա-
ցումն միոյ միայնոյ հոտոյ , թէպէտ և հաւաստի իցէ բնա-
պէս բազում լինել ազդմանցն : Եւ բազումն իսկ գտա-
նեմք յայտնապէս , եթէ յետ հոտոտելոյ մի մի առանձինն
զվարդ , զշահոքրամ և զմանիշակ , առցուք միւսանդամ
հոտոտել զիունցն ողջոյն : Այսպէս 'ի միում հնչման , որ
հասարակաց ականջաց մի ազդումն միայն թուի , կիրթ-
լսելիք բազում զուգախառն հնչմունս յատակաբար գը-
տանեն :

Միութեան և բազմաւորութեան արտաքին իրաց , որ-
պէս և նմանութեան նոցին և աննմանութեան , և համե-
մատութեանց պատճառի և գործոյ , ընտանութեան և
ներհակութեան՝ զոր բնազնինք ճգողութիւն և վանողու-
թիւն կոչեն , զգալի ստուգութիւն է՝ յորժամ ընդ բարե-
կազմ և ընդ քաջայարմար զգայարանս առնուցումք զնո-
ցա պայծառ և յատակ զգացումն և զիմացուած : Իսկ յոր-
ժամ զգացումնն և իմացուած չիցեն ըստ բաւականին
յատակ և պայծառ , կամ զգայարանքն բարեկազմ և քա-
ջայարմար ոչ իցեն , կամ զհամեմատութեանցն ոչ ներկայ
զգացմամբ և իմացուածիւ դատիցիմք , այլ ըստ պատշա-
ճութեան կամ այլոց վկայութեամբ , փոխանակ զգալի
ստուգութեան ունիմք յայնժամ զբարոյական միայն ստու-
գութիւն կամ զհաւանականութիւն և կամ զերկբայու-
թիւն՝ ըստ առաւելութեան և նուազութեան թուոյ և զօ-
րութեան երևեալ նշանացն :

Բ . ՆՈՅՆՈՒԹԻՒՆ

Նոյնութիւն իրի կամ հանդամանաց ինչ նորուն զոր գիտեալ եմք յայլ և այլ ժամանակս , միայն բարոյական ըստուգութեամբ ճանաչի . քանզի այնու իմանամք , զի զներկայ զգացումն կամ զիմացուած նման գտանեմք զգացման կամ իմացուածոյն զոր յուշ ածեմք : իսկ արդ միայն օրէնք պատշաճութեան հաւաստեն մեզ , թէ նման զգացմունք և իմացուածք սկիզբն 'ի նման պատճառաց ունին լինելոյ , ապա աւելի ինչ քան զբարոյական ստուգութիւն ոչ գոյ մեր :

Այլ և զայս իսկ ոչ հանապազ գտանեմք , թէպէտ և առժամայն զգացմունք և իմացուածք ամենեին յար և նըման թուիցին անցելոցն : Ո՞հաւատարիմ առնիցէ , թէ յիշողութիւնն զանցեալ զնացեալ զգացմունս և իմացուածս այնպէս ճշգրտիւ . 'ի միտ ածէ մեզ , որպէս յորժամ արդեամբք ընդ փորձ իրացն անցանեաք : Թէպէտ և այդպէս իցէ , ով ստուգեացէ մեզ թէ առաջիկայ իրն նման ինչ եեթ իցէ արդեօք անցելումն , եթէ և ամենեին նոյն ընդ նմա : Կարծիք 'Եկիբնխտիոսի' թէ չմարթեն լինել երկու իրք բոլորովին նմանք , իրեւ զի անճանաչելի մնային , և շդոյին իրաւունք երկու լինելոյ նոցա քան մի , ըստ քմաց ինչ թուիք են ամենեին : Քանզի գրեսչիք թէ համակ նըմանք իցեն ըստ բոլոր հանդամանաց , սակայն և այնպէս տակաւին ճանաչելի լինին , թէ ոչ այլ իւիք՝ գոնէ զանազանութեամբ տեղեացն զոր ունին : իսկ յաշագոյ հաւանութեանց զանազանեալ էութեան , ով 'ի մէնջ վկայեացէ թէ առ Աստուծոյ առաւել իրաւունք իցեն աննմանս գործել զբնաւ արարածս , քան թէ երկուս կամ հարիւրով և կամ հազարաւ չափ ամենեիմբն նմանս միմեանց . վասն զի այդ յազատ կամս արարչին տեառն կայ :

Ապա 'իբարոյական ստուգութիւննոյնութեան իրի հարկ է գտանել 'ի նմա հանդամանսս ինչ ինքեան միայնոյ սեփականս , և ոչ հասարակորդս այլոց : Վասն մէծամարմին իրի շատ է և լոկ նոյնութիւն տեղույ . թէ զոր տեսանեմքս այսօր , նոյն լերինք իցեն զոր 'ի տեղւոջ անդ տեսաք երեկ կամ թէ հերու և կամ տասն ամաւ յառաջ չիք երկմտել

գիտելով չափ՝ թէ ՚ի տեղով անդ չէ գիպեալ անհնարին ինչ սասանութիւն. վասն զի լերինք ինքնին ոչ տեղափոխին : Նոյն բանք են և ՚ի տունս, ՚ի գետինս և յայլ ինչ որ անշարժք են և ետեղակալք և ՚ի կայի իւրեանց հաստատունք :

Զանձանց նոյնութիւն՝ բաց յարտաքին կերպարանաց մարմնոյ, հանգամանք կենաց նոցա և վարուց լաւ ևս հաւատարմացուցեն : Իբրև զի անհնարին է բարոյապէս, թէ երկուց մարդոց նոյն կերպարանք իցեն, նոյն հասակ, նոյն խորհուրդք, և կենցաղ և գործ առ հասարակ նոյն :

Իսկ այլոց իրաց նշանք առանձին ընտրութեան նոցին բազում են և զանազան . և ըստ յստակ կամ աղօտ յիշատակի նշանացն իւրաքանչիւր՝ յաւէտ կամ նուազ ստուգութեամբ և հաւանութեամբ ընտրի նոյնութիւն նոցին :

Գ. • ՀԱՅԵՍՄԱՏՈՒԹԻՒՆՔ ՔԱՆԱԿԻ

Քանակութեանց ոմն շարունակ կոչի և ոմն տարրուշ շարունակ քանակ իմանամք զտարածութիւն՝ որ ենթակայ է երկրաչափութեան . և տարրուշ կամ տարանջատ քանակ իմանամք զթիւս, որ են ենթակայ թուականութեան և գրահաշուի :

Այդ զհամեմատութիւնս տարրուշ և շարունակ քանակի, ՚ի բաց տարեալ խորհրդիւ յամենայն տարրէ, բնազանցական ստուգութեամբ ճանաչեմք. զի յուղղորդ ապացոյցն առ հասարակ յօրէնս նոյնութեան հաստատին, իսկ յանուղիղն՝ յօրէնս անհնարութեան, կամ թէ յերկաքանչիւրսն իսկ յօրէնս անհնարութեան, որպէս յառաջագոյն ասացաք (յէջ 115): Զի ահա ՚ի շարունակ քանակը՝ հաւասարութիւն երկուց գծից, անկեանց, ձևոց, մակերեւութից, հաստատոց, և զի ուղղակի ցուցանի, յայտ արարեալ թէ համաշափ միմեանց են : Զի այնպէս ցուցանի, օրինակ իմն, թէ յամենայն ուղղագիծ եռանկիւնս գումար երից անկեանցն ՚ի մի՝ հաւասար է գումարի երկուց ուղղոց, և թէ յուղղանկիւն եռանկիւնս քառակուսի հակողոյն հաւասար է գումարի քառակուսաց այլոց երկուց կողմանցն: Եւ է զի անուղղակի ցուցանի, յայտ ՚ի մէջ անեալ զի անհնարին է երկուցն չլինել մի-

մեանց չափակիցս . ըստ որում Եւկլիդէս յութերորդ տեսութեան առաջնոյ գրոցն ցուցանէ , որ զի թէ երկուց եռանկեանց՝ որոց ամենայն համեմատական կողմանք հաւասարք են , նոցին և անկիւնքն չիցեն հաւասարք , ընդդէմելանէ այն , զի նոյն մի անկիւն լինի մեծ և փոքր քան զմի այլ :

Ի տարրորշ քանակս ստուգութիւն համարողական և գրահաջուական ապացուցից հաստատի միշտ յօրէնս նոյնութեան : Զի ոչինչ այլ առնի յամենայն հաւասարութիւնս , բայց ցուցանել կարգաւ՝ թէ առեալ զամենայն քանակս որ 'ի միում կողման , և զամենեսեան որ 'ի միւս սումն , միշտ նոյն մնայ հետևութիւնն :

Բայց 'ի քանակի համեմատութիւնս յայնժամ միայն է բնազանցական ստուգութիւն , յորժամ արտաքոյ ամենայն ենթակայի մտածեք զնոսա . իսկ յենթակայի տեսեալք 'ի վերայ զգալի ինչ իրաց , զգալի կամ բարոյական միայն ստուգութիւն է , կամ սոսկ հաւանականութիւն յաւէտ թէ նուազ ըստ նախազրելոցդ կարգի :

Դ . ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՆՔ . ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ի համեմատութիւնս պարտականութեան , յորում բովանդակին ամենայն բարոյական կցորդութիւնք , օրէնքն չզրկելոյ զոք ինքնին առանձինն տեսեալ՝ ստոյդ է ամենեին : Զի թէ համարձակ էր մարդկան զրկել զմիմեանս , գտանի՝ զի իւրաքանչիւր ումեք լինէին և չլինէին իրաւունք ազատ 'ի զրկանաց մնալոյ : Իրաւունք՝ որում ամենեցուն միոք վկայեն . վասն զի կեց է ընդ իրաւանց պահպանութեան անձին : Յայս օրէնս կախին ամենայն պարտք բնական արդարութեան , ուստի և նոյնպէս ստոյդ են :

Պարտք մարդասիրութեան , որ է օգնել այլոց գոնէ 'ի ծանր վտանգս , իւրովի բղեսեն 'ի կրից կարեկցութեան որ անկալից և սննդակից է բնութեան մարդոյ , որպէս ցուցցի այլուր :

Ի բնական պարտուց մարդոյ առ մարդ ելանեն պարտք քաղաքացւոյ առ քաղաքացի , ընկերութեան առ ընկերութիւն , և առանձինն պարտք իւրաքանչիւր առ միմեանս ըստ իւրաքանչիւր կցորդութեանց կամ դաշնաց 'ի միջի եղելոց :

Սմին իրի պարտք բարոյականին, ասէ 'Ղոք, նովին ստու-
գութեամբ ցուցանին, որով չափաբերական տեսութիւն-
քըն, թէպէտ և նոցա հմտութեան չմարթի այնպէս յայտ-
նի լինել պայծառ և յատակ, որպէս համեմատութիւնքն
քանակի : Զի չեն մեր նշանագիծք ճշդիւ յայտ 'ի գէմս բե-
րել զամենայն պարզ գաղափար կամ ծանօթութիւն՝ որ
խառն է յիւրաքանչիւր բարոյական ծանօթութիւնս, որ-
պիսի կան 'ի նշանակել և զիսուն եեթ զանազանութիւնս
շարունակ և տարանջատ քանակի : Մի 'ի հազար հազար
մասանց գծի և այլց զինչ և է իրի, 'ի չափաբերութեան
նովին յստակութեամբ յայտնեալ որոշի 'ի միւսոյ մաս-
նէն 999999, որով մի գիծն յերկուց . իսկ զիստիրս կրից,
ախտից, առաքինութեանց և նմանից, 'առ 'ի չգոյէ նշա-
նաց՝ չէ մարթ նովին յստակութեամբ 'ի վեր բերել: Բայց
թէպէտ և այսու բարոյական համեմատութեանցն նուազի
առ մեզ յայտնութիւն քան զքանակին, զի ոչ նովին յըս-
տակութեամբ 'ի ծանօթութիւն գան, այլ ոչ եթէ պա-
կասէ ստուգութիւն նոցին . վասն զի նոյնպէս յանչնա-
րութեան օրէնս են հիմնեալ: Եւ տեսաք վերագոյն զի յոյժ
զանազանեալ են 'ի միմեանց յայտնութիւն և ստուգու-
թիւն :

Յուցեալ ցայս վայր զազգ ազգ հմտութեանցս, և յայտ-
նի կացուցեալ զայլ և այլ կշիռ հաւանութեաննոցա կամ
ստուգութեան, բեր այսուհետեւ տեսցուք զիարդ ստա-
նամք զնոսա : Եւ քանզի 'ի նոցանէ է ինչ որ մերով դիտո-
ղութեամբ գտանեմք, և է որ աշակերտաբար յայլմէ ու-
սանիմք, արժան է յայտնի ցուցանել զշաւիղսն ընդ որ ե-
թէ այսպէս և եթէ այնպէս ժամանեմք 'ի գիւտ ճշգրիտ և
անվրէալ հմտութեանց :

ՊՐԱԿ ԶՈՐԾՈՐԴ

ՀՄՏՈՒԹԻՒՆՔ ԶՈՐ ՄԵԶԵԿՆ ՍՏԱՆՍՄՔ,

ԵՒ ՀԱՄԱԲՈՅ ՍՏԱՑՄԱՆՔ ԳԻՏՈՒԹԵՍԱՑ

Քանզի հմտութիւնք, որպէս ասացաք, կամ գոյութեան էից են, կամ հանգամանաց նոցին և կամ համեմատութեանց, և գոյից կէսք աննիւթականք են և կէսք նիւթականք, ապա 'ի խնդիր աստ գիւտի հմտութեանցն վասն առաւել յատակութեան ճառեսցուք նախ զհմտութեանց էութեան և հանգամանաց աննիւթ գոյից, երկրորդ զնիւթականացն, երրորդ զհամեմատութեանցն։ Ուր պատեհ և պարապ առեալ նշանակեսցուք զգլիսաւոր սահմանս երեւելի գիտութեանց որ յայնս պարապին։

ԳԼՈՒԽ Ա.

ՀՄՏՈՒԹԻՒՆՔ ԳՈՅՉՈՒԹԵՍԱՆ ԵՒ ՀԱՆԳԱՄԱՆԵՑ

ԱՆՆԻՒԹ ԳՈՅԻՑ

Հմտութիւն գոյութեան և հանգամանաց աննիւթական գոյացութեանց սեփական գործ է բնազանցութեան։ և մեք ոչ շատ ընդարձակեսցուք յայս. զի այսր ոճոյ քննութեան՝ է ինչ զոր յառաջադոյն հատուցաք, և է որ յիւրում տեղովն ցուցեալ է ընդարձակ։ Զի որպէս ասացաքս (յէջ 117), 'ի ճանաչել զգոյութիւն հոգւոյ մերոյ շատ է զգացումն ինչ և եթ գիտել յանձինս։ իսկ 'ի հմտութիւն զօրութեանց և գործոց հոգւոյ չպահանջի, բայց մտադիւք քննութիւն ամենայնի որ կրի յանձինս մեր՝ յորժամ հոգին զգայ, մտածէ, ճանաչէ, յիշէ, կամի և գործէ ինչ 'ի ներքս յինքեան կամ արտաքոյ իւր, որպէս յառաջին պըրա-

կին մասամբ՝ նշանակեցաք, և ընդարձակագոյն տեսցի ՚ի մանրակրկիտ մեկնութեան նոցին, զոր հոգեբանութեան է առնել:

Միայն երկու զգուշութիւնք պիտին առ այդ. ո., յորժամ մեք մեղյն զմէնջ մտածեմք, քանզի հմտութիւնք յայնժամ ՚ի ներքին զգայութենէ գան, պարտ է առաջի ունել միշտ զիմաստուն խրատոն Քոնտիլեաքայ՝ որ վասն յայտնութեան զգայութեան: Այն՝ թէ ցնորդ մտաց և յոյզք շարժմանց և մտահաճութիւնք մի մոլորեցուացեն զմեզ՝ դոյցուցանել՝ ՚ի մեզ զայն ինչ որ չիք, և մի զոր ինչ էն արդեամբք՝ թաքուցանել կամ այլայլել և խանդարել: Առ ՚ի չգոյէ այսր զգուշութեան՝ քանի իրք բնածինք հաշուեցան՝ որ ստացականք էնին, քանիք վեցերորդ իմն զգայութեան ծնունդք, բարոյական զգայութեան, ազգեցութեան բնութեան, որոց չիք ուրեք էութիւն: Եւ մեք ինքնին քանիցս անգամ յերեսոյթ ցնորս մտաց դանդաչելով զգալ կարծեմք զոր ոչն զգամք, և կուրացեալք յախտից և ՚ի խաբէութենէ մտաց՝ համարիմք գործել յայս ինչ պէտս, ուր արդեամբք յայլ ինչ ելամնէ գործն:

Բ. Որ ինչ ՚ի մեզ ինքեանս գործի, անշուշտ ստուգութիւն է, եթէ զասացեալ զգուշութեամբդ ապախտ չառնիցեմք: Իսկ որ յայլս ինչ գործիցի, ոչ զնոյն ստուգութիւն ունի. զսոցանէ պատշաճութեամբ միայն կարեմք դատաստան առնել, որ յաճախ պատրէ զմեզ. զի աստ զազատ պատճառաց է ինդիր, և ոչ զհարկաւորաց և որ ընդ անփոփոխելի օրինօք իցեն: Վասն որոյ, յորժամ յաղագս զգացմանց և իմացուածոց, ծանօթութեանց և գաղափարաց զըսցք լինիցին, զյօժարութեանց և զախորժակաց, զդատմանց և զկարծեաց, զգուշալի է յոյժ չգնել հաստատուն՝ թէ ՚ի նոյն պատճառաց միշտ նոյն գործք ծնանիցին, և թէ զնոյն զգան և դատին այլք՝ զոր և մեքս յայս ինչ կամ յայն դէպս: Որ զայլս յանձնէ չափել սովոր իցէ յայսպիսիս, դիւրաւ բազում սիսալէ:

ԶԱստուծոյ էութենէն և զյատկութեանցն ոչինչ ունիմք աւանդել աստանօր, զի բնական աստուածաբանութեան պահեսցի: Այլ և ոչ զհրեշտակաց, զի զնոցին հըմտութիւն՝ ՚ի յայտնեալ աստուածաբանութենէն ինդրելի է: Իսկ յաղագս անբանիցն հոգւոյ՝ ասացի ինչ կարճառօտ ՚ի հոգեբանութեան:

ԳԼՈՒԽ Բ.

ՀՄՏՈՒԹԻՒՆՔ ԳՈՅՉՈՒԹԵԸՆ ԵՒ ՀԱՆԳԱՄԱՆԸՑ

ՆԻՒԹԵՎԿԵՑ ԳՈՅՇԻՑ

Զոր օրինակ բնազանցութիւն 'ի հոգեղէնսն պարապէ ,
նոյնպէս բնախօսութիւն 'ի զգալիս : Բայց քանզի ազգ և
ազգ են զգալեաց , և պէսպէս որ զնոցանէն քննութիւնք ,
նմին իրի և բնախօսութիւն 'ի մասունս մասունս հատանի՝
զանազանեալս անուամբ , զորոց 'ի դէպէ է տալ 'ի հարեան-
ցի վեր 'ի վերոյ ինչ տեսութիւն՝ մինչ չև զկարդ բանիս յա-
ռաջ մատոցեալ :

Յ Օ Գ Ո Ւ Ա Ծ Ա .

ՀԱՄԱՅՈՏ ՊԱՏԿԵՐ ԳԻՏՈՒԹԵԸՆ ԶԳԱԼԵՍՑ

Գիտութիւնք որ 'ի զգալեացս քննութիւն լինին պա-
րապ , ամենեցուն նոցա առ հասարակ , որպէս այժմն իսկ
ասացաք , հակիրճ անուն կոչի բնախօսութիւն , բնագի-
տութիւն , բնաքննութիւն , որ է գիտութիւն զգալի և տար-
բեղէն բնութեան :

Սակայն ո , է զի զտիեզերս ամենայն միահաղոյն քննէ ,
զսկիզբն նորա , զկարդ և զբաժանումն մասանցն , զօրէնս
որովք վարի , զտարերսն յորոց կազմեալ և կայ . և այս
կոչի տիեզերաբանութիւն : Ե զի քննէ զհասարակաց հան-
գամանս ամենայն տարրեղինաց , զտարածութիւն , զեր-
տութիւն , զշարժումն գոլ և զբաժանելի , զզօրութիւնս
անտղելի և անխլիքտ անգործութեան , ծանրութեան և
և ձգողութեան , և որ այլն ևս . և կոչի ընդհանուր բնա-
խօսութիւն : Եւ է դարձեալ զի զզգալիսս մասն մասն 'ի
քնին առնու . և ասի մասնաւոր բնախօսութիւն :

բ. Իզգալի բնութիւնս՝ է որ երկնային է և է որ երկրառոր. որ յառաջինն պարապ բերե, դիտէ զերեոյթան, չափէ զմեծութիւնն և զհեռաւորութիւնս, գտանէ ըզշարժմունան, և անուանի աստեղաբաշխութիւն. իսկ որ զերկրորդօքն դայ, պահի նմա հասարակ անունն բնախօսութիւն :

Դ. Յերկրաւոր մարմնոց աստի առաջին քննութեան արժանի նորա են, որ 'ի խառնութիւն այլոց մտանեն, որպէս ջուր, օդ, հուր և հող, որք և նմին իրի աղագաւ չողք տարեց անուանակոչին, թէպէտ և այս տարեցք ոչ այնպէս պարզք են և միաբունք՝ որպէս կարծէր առ հնովքն, և ոչ ինքեանք ևեթ մտանեն 'ի խառնուածս այլոց մարմնոց :

Արդ՝ մասն բնախօսութեան որ զջրոյ ճառէ, կոչի ջրաբանութիւն. և յայսմ դարձեալ ջրակշռութիւն ասի, որ զնորա հարթ հաւասար կշռութիւնն քննէ, ջրաբաշխութիւն՝ որ զշարժումնն, և ջրազօրութիւն՝ որ զզօրութիւն նորա յերկաքանչիւր մասին ցուցանէ : Մասն որ զօդոյ ճառէ զննելով զնորա առածգութիւն, զՃանրութիւն, և զայլն, ասի օդաբանութիւն. և որ զ'ի նմա երեոյթան զննէ, որպէս անձրև, ձիւն, կարկուտ, որոտումն, շանթ, հողմ, այլովքն հանդերձ՝ որ օդերեոյթքն անուանին, կոչի երեութաբանութիւն : Մասն որ աւանդէ զբնութենէ հրոյ, հրաբանութիւն յորջորջի, ընդ որում յոյժ հաղորդութիւն ունի ճառն լուսոյ, ելեկտրութեան և ելեկտրաշոգույն ²⁷ : Իսկ որ զերկրէ խօսի, այն երկրաբանութիւն անուանի, և առանձինն աշխարհագրութիւն՝ որ զդիրս զանազան մասանց նորա պատմէ : Երկրաչափութիւն՝ որ աւանդէ զօրէնս չափելոյ զայն, թէպէտ և այժմ առ եւրոպացիս յայս անուն յորջորջի չափաբերութիւնն առ հասարակ՝ որ ունի զհամար չափոյ ամենայն տարածութեանց. զի զչափաբերն երկրաչափ ասեն : Իսկ որ ուսուցանէ լարաբաժին առնել զերեսս երկրի և կարգել սահմանս գետնոյ, երկրաբաշխութիւն կոչի :

Դ. Մասնաւոր մարմնոց, որ 'ի պէսպէս խառնուածոյ տարեց յօդանան, ոմանք գործարանաւորք են և կենսակերք, միացեալք ընդ սկիզբն ինչ կարող և զօրաւոր 'ի զգալ և շարժել ինքնօրէն կամակարուց . և սոքա ասին կենդանիք : Այլք թէպէտ և գործարանաւորք և կենսառնակք, բայց անգնայուն հարստեալ մնան յերկիր կամ յերեսս

ջուրց՝ յորմէ առնուն մնունդ, զգայազիրկ են և թափուր ՚ի կամական շարժմանէ. և բոյսք և առնենկը կոչին։ Եւ կէսք անկեւալ դնին յերեսս երկրի կամ ընդ հողով, և վրէպք են ՚ի գործարանաց և ՚ի կենաց, ըստ նմին և ՚ի կամակար շարժութենէ և ՚ի զգայութենէ. և անուանին հանք։ Այս երեք կարգը կամ դասք միահամուռ կոչին երբեակ ցեղապետութիւնք բնութեան. և ընդ միով միով կան բազում սեռք և յոլով տեսակը և շատ զանազանութիւնք, որոց իւրաքանչիւր են առանձին նշանք բնտրութեան։

Արդ՝ առաջին գործ բնապատմութեան է ուսուցանել զյատուկ նշանակս իւրաքանչիւր սեռի և տեսակի և պէսպէս փոփոխմանց, զի յերեւել իրիք՝ անդէն ՚ի միտ առցուք զգան յոր կարգեան է։ Սակայն բնապատումք ըստ իւրացն պատմելոյ և զանազան անուանս ետուն նմա։ Մասն՝ որոյ ճառք բանից են զկենդաննեաց, առ հասարակ անուան ՚ի կենդանաբանութիւն. և ՚ի սմա որոշին մասունք, թըռչնաբանութիւն՝ որ խօսի զթունոց, ձկնաբանութիւն՝ որ զձկանց, խեցեբանութիւն՝ որ զկեցեմորթաց և զժիժմակաց, միջատաբանութիւն՝ որ զմիջատ բզիզ ճճեաց, և որ ՚ի կարգին։ Մասն որոյ խօսք են ՚ի վերայ բուսոց ըստ խոտաքնին փորձոյ, միահաղոյն ասի տնկաբանութիւն։ իսկ ծառաբանութիւն ասի մասնաւորաբար որ ճառէ զծառոց։ ի և մասն որ պատմէ համանգամայն զհանաձոյից և զբանաձոյից որ ՚ի բովուց հատանին. և ՚ի զանազան ճառս կոտորի, ՚ի քարանց, ՚ի հրահալից, և որ այլ ևս նորին սակի։ Ե. Բայց յոյժ անկատար լինէր բնապատմութիւն, եթէ ՚ի քննութիւն միայն պարապէր արտաքին նշանաց իրացն։ Վասն որոյ և ևս անդը յառաջ անցանէ, և ինդը գիտել և զներքին արար նոցա, մանաւանդ զգործարանաւոր մարմնոց, այս ինքն զբուսոց և զկենդաննեաց, կոչելով իւր ՚ի թիկունս զմանրակրկիտ զննութիւն մասանց։ Եւ ջանայ գտանել զբնութիւն և զգործ՝ եթէ զթանձր և զսերտ և զսեղմ մասանց յորոց կազմին, և եթէ զհոսանուտ մասանց որ խաղան ՚ի նոսա, օգնական ունելով զմարմնակազմութեանն հմտութիւն։

Վ. Ծանուցեալ զվերին նշանան, զներքին գործուածս մասանց և զպէտս նոցա, անդը ևս յառաջադէմ խաղայ բնապատմութիւն. և ՚ի ճեռն տարրալուծութեան հնարի խուզել զտարերս մածուածոյ մարմնոց։ Զոր և կատարէ

տարրալուծութիւն կամ հըռով, որ կոչի ցամաք ճանապարհ, կամ լուծողականօք՝ որ ասի խոնաւ ճանապարհ։ Եւ նոքօք ճգնի քակել խզել զկապմ, որով մասունք զանազան գոյացութեանց սեղմեալ և պնդեալ կան՝ վակեոյժ լիեալք ընդ միմեանս և կոռուեալք, և ցուցանել ուրոյն ուրոյն զտարերմն՝ յորոց զօդեալ են։

Է. Սակայն անշահից հետաքրքրութիւն միայն էր ճանաչել զբնութիւն մարմնոց, եթե չէր փոյթ՚ի վար արկանել զնոսա ՚ի պէտս ինչ կենցաղօգուտոս։ Այդ՝ զբազումն ՚ի նոցանէ ՚ի գործ արկանէ բժշկականութիւն յառողջութիւն ցաւոց, բաց յիւրոց կարգաց՝ ՚ի ձեռն առեալ և ըզմանրակրկիտ հանգամանս հերձլոյ մարմնոց և զմարմնակազմութեան՝ առ ՚ի խելամուտ ախտից լինելոյ, և զմնկաբանութիւն և զտարրախուզուզութիւն բաց յիւրմէ հմտութենէն ՚ի պէտս գեղոց՝ զորս. տայ գեղարարութեան պատրաստել, որ մասն է տարրախուզուզութեան։ Կա և այն գիտութիւն, որ կոչի յատուկ բնագիտութիւն արհեստից, ՚ի կիր ածէ բազում ինչ յայնցանէ առ ՚ի պէտս զանազան արուեստից և ձեռագիտութեանց, զօրավիպն առեալ ըզտարրալուծութիւն, ՚ի հալել և ՚ի ձուլել զհրահալելիս, յապակեգործութիւն, ՚ի ներկարարութիւն և յայլն. ըզշարժաբանութիւն կամ զուժաբանութիւն և զգործեաց հնարաւորութիւն վասն ամենայն անօժոց և կահից կազմածոց ՚ի շարժել զմարմինս, ոլորել, քակել, հիւսել, յայլ և այլ ձեռ և ՚ի կերպարանս ածել, և զխոտաքնին փորձի մաստնոց ՚ի լսումն երկրագործութեան արուեստի՝ որոյ է արդիւնաբեր առնել զերկիր ՚ի հեթեթանս պաճարանաց ընտիր ընտիր և յորդառատ բուտոց և տնկոց։

Այդ աւադիկ է համառօտ բաժանումն գրեթէ ամենայն գլխաւոր և երևելի մասանց՝ յորս պարապի բնախօսութիւն, և զանազանութիւն անուանց զոր առնու ըստ այլ և այլ գործոյիցն մասանց։ Բայց որով աջողեն նմա գիւտքնորանորք յայնմ ամենայնի՝ երկու ինչ է, դիտողութիւն և փորձ։ Պարզ դիտողութիւն ասի, յործամ քննեմք զերեղիթ ինչ բնական որպէս իւրօվի առաջի լինի մեզ, զոր օրինակ խաւարումն արեգական կամ լուսնի։ Իսկ փորձ կամ փորձութիւն կոչի, յործամ մեք ինքնին դրդեալ յերեան ածեմք զգործն առ ՚ի քննել որպէս առնի ՚ի շընչելոյզ և յելեկտրական անօթս գործեաց։ Սակայն առ ՚ի

դիտողութեամբ և փորձով հասանելոյ հաւաստի և աներկեան հմտութեանց գոյութեան և հանգամանաց էիցս՝ բազում զգուշութիւն պիտոյ է, զոր յառաջիկայսդ նշանակեսցուք :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Բ .

Կարևոր խրատք առ ուղիղ ձանաչելոյ
զբնորիւն և զյատկորիւն մարմնոց .

Ի զգալի ստուգութիւն բնութեան և յատկութեանց իրաց հարկ է նախ քննիչ զգայարանացն առողջս լինել և բարեկազմն, կալ 'ի հանդեպ դիրս և 'ի չափ հասողութեան իրին, և զօնառս կարեոր գործեաց և անօթոց առ ընթեր ունել 'ի պէտո : Որոյ վատեալ են աչք կամ անհրահանգ ականջք և ծանրալուր, ուղիղ զձեոց, զգունոց և զձայնից դատաստան առնել ոչ ունի : Կարճատես ինչ ոք է, զկարի հեռաւորսն աղօտ նշմարէ . և թէ սրակն ոք՝ ըզյոյդ մերձակայսն . քանզի յերկոսին խառն 'ի խուռն նկարին կերպարանք իրաց 'ի ցանցակերպ միզն աշաց : Վասն որոյ զկայս տարակացութեան իրին պարտ է պատշաճել աշաց իւրաքանչիւր, կամ ուղղել գոգաւոր ապակեօք զթերութիւն կարճատեսին, և զարահայեցին կորնթարդիւք : Մանրիկ իրք և քաջ 'ի բաց հեռաւորքն՝ սրատեսաց անդամ աներեւոյթք են մերկ աշաց . ապա վասն առաջնոցն մանրացուցի կամ մանրադիտի պէտք են, և վասն երկրորդացն՝ դիտակաց կամ հեռադիտաց : Են հանգամանք՝ յորոց հասողութիւն պիտի նրբութիւն ինչ զգայարանաց, զոր կրթութեան եեթ է տալ : Քիմք սովորեալք 'ի համադամն խահից ամոքելոց և չնաշխարհիկ գինեաց անուշից խտրել գիտէ 'ի ճաշակսն անօսր զանազանութիւնս, յոր անկիրթ ճաշակելիք չժամանեն : Հմուտ լաւիք իմանան և զդուղնաքեայ խանգարս ոլորակաց երաժշտական հընչամանց, զոր այլ ոք ճանաշել ոչ ունի : Կոյրն առ հարկի չօշափելեօքն միշտ վարելոյ՝ յայնպիսի ընտրութիւն ուսանի, յոր ոչ ոք հասանէ . զնոյն իման և յայլա:

բ. Պարտ է քննել զիրն ամենայն զգայութեամբք որոց զննի, և միով զմիւսոյն սխալանսն ուղղել: Թի կիսամուխ ՚ի ջուր՝ բեկեալ կամ կոր երեկի աչաց, և ՚ի ձեռքին զննելոյ՝ գտանի անվթար և շիտակ: Անդրէն դարձ ճայնից արձագանգաց երբեմն ընդ աջմէ թուեցուցանէ զճայնատուն, և աչք գտանեն զնա ՚ի ճախմէ: Հոտոտելիք բազում անգամ անախորժ ինչ լինելոյ կարծիս տան կերակրոյն, զոր ապա քիմք համեղ գտանեն:

Դ. Զէ պարտ մի անգամ միայն հայել յիրն և ըստ մոյ ևեթ դիմաց, այլ բազում անգամ և դիմակս դիմակս շըրջելով, և ըստ կարի յամենայն իսկ ՚ի դէպօ: Միադիմի տեսեալ, բազում անգամ երեկի այսպիսի ինչ, որ ապա այլազգ գտանի՝ ըստ միւսոյ կողման հայեցեալ: Եղեալ ՚ի տեղի ուրեք յայս նիշ դէպս, կից կամ հուպ այն ինչ իրէ, տայ այնպիսի երեսոյթ՝ զորոյ զհակառակն իմանամք ամենեին յայլում տեղովզ, յայլ դէպս և առ այլ իրօք: Լուսոյ պայծառութիւն՝ շատ թէ սակաւ՝ պատրէ զաչս. Հեռաւորութիւն մեծ կամ փոքր փոփոխէ զտեսիլս. օդ ծանր՝ թէ աւելի թէ պակաս, ջերմութիւն և ցրտութիւն, չորութիւն և խոնաւութիւն, սաստիկ կամ նուազ ելեկտրութիւն միջնորդտի, յայտնի զանազանութիւնն ածեն ՚ի մի և նոյն իրս: Զայս ամենայն պարտ է ճշդիւ գտակաւ դէպուդէպ ՚ի համար արկանել, մանաւանդ ՚ի կարեոր և ՚ի նուրբ դիտողութիւնն և ՚ի փորձս: Յայս պէտս են զանազան կահչք և գործիք ՚ի հաշուել զասացեալ փոփոխմունս, որակէս ծանրաչափ, ջերմաչափ, խոնաւչափ, ելեկտրաչափ, և այլ անօթք:

Ե. Զւ ՚ի դիտողութիւնս և ՚ի փորձս ճեռնարկեալ, քըննեսցին և ընտրեսցին նախ որ ՚ի դիւտ խնդրոյն վաղագոյն հասուցանեն: Ճշմարտութեան գիւտ, ասէ Բերդման, ոչ ՚ի յաճախութենէ ինչ փորձից է, այլ ՚ի հանգամանաց նոցին. և խուռն վայրապար դիտողութեանց և փորձից փոխանակ ՚ի լոյս զիրն հանելոյ, բազում այն է զի առաւել ևս ՚ի մոայլ ընկենու:

Ֆ. Առ ուղիղ և անվթէպ ածելոյ զհետեսութիւնն ՚ի դիտողութեանց անտի և ՚ի փորձից, յամենայնէ որ խառնակէ ինչ կամ այլայլէ զնոսա արժան է զգոյշ լինել: Վասն որոյ ընտրանաւ առցին կատարեալքն ՚ի գործիս, և զետեղեսցին պատշաճ պայմանաւ. ընտրեսցի տեղի պատեհ և

դեպ ժամանակ . 'ի բաց տարցի ամենայն ինչ որ չտայ քննելի իրին ըստ իւրում բնութեանն երևել , կամ զյատուկմն իւր ցուցանել արգասիս :

Վ . Խ դիտողութիւնս և 'ի փորձս որ նուրբ իցեն և անօսր , կամ տաժանելի և դժուարին , կամ որոց ելք անստոյգ իցեն և երկրայելի , մի ոք ամենեխն յանձնապատան լինիցի . որչափ և ճարտար ոք իցէ . այլ կոչել և զայլս յօգնութիւն , 'ի լուր 'ի տես և 'ի զնին իրացն : Ո՞չ ապաքէն բազում անգամ և ճարտարըն 'ի բնաքնինս խաբեցան 'ի պատիր երեւութից . ոչ ապաքէն թեթև ինչ անզուշութիւն այլազգ իմն ելս ետ առաջիկայ իրացն արտաքոյ ճշմարտութեան :

Ե . Զ հանգամանս և զդեպս իւրաքանչիւր դիտողութեան և փորձոյ , և զոր անտի հետեանք , մեծաւ ինսամով նշանակելի է , առ . 'ի համեմատել զնոսա ընդ հանգամանս և ընդ հետեւութիւնս անցեալ և ապառնի դիտողութեանց և փորձոյ :

Հ . Յետ այսր ամենայնի զգուշութեան տակաւին բազում զգաստութեամբ կալ և չափաւորութեամբ 'ի հանելն զհետեւութիւնս յիրաց անտի եղելոց : Մի ինչ ստոյգ առգնելք , մինչ չե հաւաստեալ մեզ և այլոց 'ի բազմապատիկ անփոփոխ և միօրինակ դիտողութեանց և փորձից : Որ ինչ 'ի մի կամ յերկուս իրս միայն գտանի , չէ օրէն ամենայն նոյնափիսեաց հասարակ գրել , եթէ ոչ այնչափ բազում իցեն օրինակքն և միաբանք , մինչեւ ըստ պատշաճութեան դատել արդարապէս թէ և այլոց ևս 'ի դեպ իցէ : Ի մեկնել զեղեալսն՝ մի ինքնահնար ինչ ստեղծանել վարկած , որ ոչ հարթայարմար պատշաճեսցի բոլոր իրացն :

Ա . Հ քանզի վարկածք յոր միեցաւ ճառ բանիս՝ յոյժ 'ի պէտս են բնախօսութեան , և ծանր խոչ 'ի գիւտ ճշմարտութեան , մանաւանդ թէ և ծանրագոյն որ 'ի նոցանէն պատճառս առնուն վրիպակք՝ եթէ ոչ ըստ պատշաճի որ նոքօք վարեսցի , վայելէ կարգել վասն նոցա յօդուած մի առանձին :

Յ Յ Ո Ւ Ա Ծ Գ .

Վարկածք .

Ի բնական երեսութից զսակաւուց գիտեմք տիրապէս զպատճառն . վասն որոյ հարկիմք ստէպ 'ի գուշակութիւնս և 'ի վարկածս ապաւինել :

Վարկած կամ վարկադրութիւն է՝ այսպիսի ինչ համարել զիմն մի . և 'ի բնախօսութեան վարկած առնել ոչ այլ ինչ է, բայց դնել թէ այս գործ յայսմ պատճառէ և այսու օրինակաւ գայ յառաջ :

Երեք են գլխաւոր պատճառք վարկածից . մի՝ զի ուղղիչ միայն լինիցին և առաջնորդ որոց հանդերձեալն եմք առնել դիտողութեանց և փորձից : Երկրորդ՝ զի առաւել իմն յայտնի տեսութիւն առաջի արարեալ, տայցեմք գոնէ հաւանական մեկնութիւն գործոցն , զորոց զբուն պատճառն անկարանամք ցուցանել : Երրորդ՝ զի հաւաստի գտանիցեմք զբուն պատճառս առաջիկայ արգասեացն , կամ գէթ յայտնել ճշգրտիւ զօրինակ լինելութեան իրացն :

Ի պէտա առաջնոյն՝ որ և է վարկած բաւական է, միայն թէ չիցէ յայտնապէս անտեղի և անհնարին : Ըստ չափոյ համեմատութեան իւրոյ ընդ նախածանօթ գործոց՝ նոյնշափ և օգտակարագոյն եղիցի , և լաւ ևս առաջնորդեացէ յայնժամ և տարցի յառաջիկայմ՝ յորս հետազոտել կամք իցեն : Տեսանեմք , օրինակ իմն , զի մարմին ինչ թեթե և փոքրիկ 'ի մէջ երկուց մարմնոց՝ որոց մին ելեկտրացեալ է և միւսն ոչ, երբ առ մին երբ առ միւսն ընթանայ: Դնեմ վարկած այսպիսի , թէ ելեկտրացոգին իբրև զայլ հոսանուտս ծաւալել բնաւորեալ է և կշռութեան 'ի խնդիր լինել . և վասն այնորիկ մարմինն փոքր և թեթե մերթ առ ելեկտրացեալն մատչի առնուլ անտի զառատացեալ շոգին , և մերթ առ ոչ ելեկտրացեալն , առ ՚ի մասնմուտ և հաւասարորդ իւր զայն առնելցյ : Խսկ այլ ոք անդուստ վարկանի , թէ ելեկտրացոգին կրկին հոսանուտ իցէ իբրև զկրկին ինչ ուղիսս , որ մին յելեկտրացեալ մարմնոյն ելանիցէ , միւսն

յուշ ելեկտրացելըյն. և մարմինն փոքր և թե՛թե՛ ՚ի միջին անդ մղիցի և վարիցի այսր անդր ՚ի միոյ ՚ի միւս ուղին²⁸ : իւրաքանչիւր ոք ՚ի մէնջ ըստ իւրահնար վարկածին կարգէ զդիտողութիւնս իւր և զփորձս, տեսանել թէ այլ երևոյթք ելեկտրութեան համեմատ ելանեն նմա, եթէ ընդ հակառակս : Մինչեւ ցայս վայր երկոքեան վարկածքն բարի են և օգտակար . և յայնժամ միայն յանպիտանութիւն և ՚ի վեսասակարութիւն հատանին, եթէ գտեալ ուրուք ՚ի մէնջ երեսոյթս հակառակս յայտնապէս իւրում վարկադրութեան, տակաւին ՚ինմին յամառեալ կայցէ : Եւ զի սովոր է այդ պատահել յորժամ յառաջ քան զՃշմարտեն հարկանիմք յոյժ ՚ի ստեղծեալ մերում վարկածին, նմին իրի մինչ չեւ է գտեալ հաստատուն և անկասկած հաւաստիս ճշմարտութեան նորա, որքան հնար է պարտիմք անխտիր կալ առ այն և անաշառ :

Ի պէտս երկրորդ պատճառին ոչ է բաւական հնարաւոր միայն լինել վարկածին, այլ այնու հետ պարտի և նմանակ ինչ ճշմարտի լինել և հաւանական, մանաւանդ յըստակ տեսութեամբ յանդիման առնել զայն՝ զորոյ մեկնութենէն բուռն հարեալ իցէ : Լիցի մեզ օրինակ մեկնաբանել զգործուած զգայութեանց և զկամաւոր շարժմանց : Գիտեմք թէ ՚ի դրուստ աղդմանց առ ՚ի զարթուցանել զգացումն ՚ի հոգին՝ հարկ է անցանել ընդ ջիլսն ՚ի խելս : Գիտեմք ես, զի իւրեւ կամի հոգին շարժել զոտն կամ ըզձեռն՝ պարտ է գրգիռ առնուլ դնդերացն կամ խաղճանց, զի ճգտեալ ընդարձակեացին և կծկեալ ամփոփեացին . բայց զհանգամանս իրին լինելց ոչ գիտեմք : Արդ վարկցուք թէ ջիլք խողովակը իցեն կամ ցնցուլք, և ՚ի միջին լի նուրբ ինչ հեղանիւթ հոսանուտ, զոր անուանեսցուք հիւթ ջլային կամ կենդանական ոգիք և չունչք : Յայտ է ըստ այսմ վարկածի, թէ ՚ի շօշափել ջլին՝ հեղանիւթն որ ՚ի նմա, վասն միայարութեան մասանցն, մեծաւարագութեամբ տանի հասուցանէ ՚ի խելսն զազդեցեալ շարժումնն : Յայտ է նոյնպէս, թէ ՚ի կամել հոգւոյն շարժել զոտն կամ զձեռն, կարող է ընդ ջիլսն որ սփուեալ կան ընդ ամենայն դնդերան՝ արձակել անդր չափով ինչ կենդանական ոգիս, որոց ճապաղեալ ՚ի դնդերան՝ մղօն տան և գրգիռ արկանեն թելիցն, կտեն, խթեն, պարզեն և գելուն : Մնայ միայն տեսանել թէ գո՞ն ստոյգ այսպիսի

ոգիք . խոստովանելի է , զի որ մինչև ցայժմ՝ դիտողութիւնք՝ չգտին ինչնշան աներկբայ , ոչ խողովակաց 'ի ջիւնն լինելոյ , և ոչ հեղանիւթից ընդ վտառն և ընդ ուրդսն խաղալոյ : Սակայն գեթ հաւանեցուցանէ այն , զի 'ի պըրկել կաշկանդել մրոյ ուրուք 'ի ջլաց , մասն որ 'ի ներքոյ պըրկոցին՝ ոչինչ երեխ զգալ , և ոչ ևս հպատակէ 'ի կատարումն կամաւոր շարժմանց , թէ և ջիլն գեռ ողջ իցէ և անարատ : Զոր այլով իւիք չէ հնար ուղիղ մեկնաբանել բայց զի գելոցն՝ 'ի պնդան արկեալ հատանէ զկցորդութիւնն և զհամարձակ ընթացս կենդանական շնչոցն , որ տանին 'ի խելսն զարտաքուտա ազդմունս , և անդրէն գան իջանեն 'ի դրդել քըրքրել զդնդերմն : Եւ քանզի գոյութիւն շնչոցն կամ ջլային հիւթոյն՝ ոչ է անհնարաւոր ինչ , նա աւանիկ հաւանելի իսկ թուի . այն զի և այս վարկած լաւ ևս քան զայլն ցուցանէ զկազմութիւն հնարաւորութեան զգայութեանցն և կամական շարժմանց . ապա գեթ առ ժամանակ մի և առանց պնդելոյ իբրև 'ի ճշմարտի վերայ՝ մարթէ ունել զայս վարկած մինչև լաւագոյնն 'ի յայտ եկեսցէ : Ասեմ չյամառել ընդ ճշմարտութիւն մեկնութեանն . վասն զի առ այդ հարկ է նախ քան զամենայն հաւաստել անշուշտ զգոյութիւն կենդանական ոգւցոցն :

Ի համար երրորդ պիտոյիցն , որ է տալ զբուն պատճառս առաջի եղեալ երեւութիցն , ոչ է շատ զկերպարանս միայն ճշմարտութեան ունել վարկածին , և դիւրահաս առնել զերեղյթսն , այլ և բովանդակ 'ի նոյնս յարմարեսցի , և ամենայն երեղյթք զնոյն հաստատեսցեն : Այսպիսի է , յօրինակի պէտս , վարկածն նեւտոնեան ճգոյութեան կամ ծանրոյութեան 'ի մեկնել զըլջագայութիւնս մոլորակաց : Վարկադրէ Նեւտոն , թէ մոլորակք 'ի ճախրելն վարին համանգամայն յերկուց զօրութեանց , ընկեցման՝ որով խուսեն 'ի միջակիտէ շարժմանն , զոր և վասն այնորիկ միջախոյս կոչէ , և հակման՝ որ անդադար մղէ զնոսա 'ի միջակէտ անդր , զոր և նմին իրի անուանէ միջաձիգ կամ միջահակ : Ի խառնելոյ կրկին զօրութեանցս՝ վարկանի նա թէ շըջանակին երկրորդական և կրտսեր մոլորակք շուրջ զաւագ գլխաւորօքն , և գլխաւորքն զարեգակամբ : Եւ այս վարկադրութիւն այնպէս ճշմարտեալ է յամենայն աստեղաբաշխական դիտողութեանց , զի չիք և ոչ մի՝ որ նմաընդդէմ ելանիցէ , այլ մանաւանդ ևս առաւել հաստա-

տեն զայն ²⁹ : Այսպիսի է և փրանկլինեան վարկածն , թէ բնութիւն շանթի նղյն իցէ ընդ ելեկտրաշոգւոյն . զի արդեամբք տեսանին 'ի նմա ամենայն արդասիք ելեկտրաշոգւոյն , որ 'ի փոքր տալացուցանէ յելեկտրական անօթի զայն ամենայն գործս , զորս շանթն առաւելագոյն ազդէ ըստ սաստիկ եղելցի ՚ի նմա ելեկտրաշոգւոյն :

Յորժամ վարկածք այսպէս կատարեալ յարմարութեամբ պատշաճին ընդ ամենայն երեսոյթս իրացն , և տան լիով զամենայն պատճառս նոցուն , հաստատութիւն առնուն և անցանեն 'ի կարգ բնական և զգալի ճշմարտութեանց :

Յասացելցս ցայս վայր յայտնի են զգուշութիւնք վարկածից : Յուղել և թ զդիտողութիւնս և զփոքձ՝ ամենայն վարկած բաւական է , եթէ միայն չիցէ անհնարին . բայց մի ինչ կառուցի յայնը հիման վերայ , մինչև դիտողութիւնք և փոքք կացուցեն զայն կամ 'ի սպառ քակտեցեն : Առ 'ի յատակել զսրթին երեսոյթս ընտրեցի վարկած՝ ոչ լոկ կարելի միայն , այլ և որ հաւանականն իցէ ճշմարտութեան կերպարանօք , և պարզ մեկնիցէ զայնս . բայց և 'ի վերայ այսր մի երբէք պնդել , թէ արդիւնքն յիրաւի ըստ վարկանելցյն նոյնպէս և լինիցին՝ և 'ինմին պատճառէ , մինչև այլուտո հաւաստեացի : Իսկ ուր ինդիքք իցեն զտիրապէս պատճառսն ցուցանել զհանգամանաց եղելութեան առաջիկայ իրացն , ոչ զկերպարանս միայն ճշմարտութեան ունիցի վարկածն , այլ և ճշմարիտ եղիցի . իմա ամենեւին համեմատ երեսութիցն , և բաւական 'ի մեկնել զամենեսին մի առ մի , առանց ինչ 'ի բաց հանելցյ կամ հակառակ գտանելցյ : Իսկ եթէ 'ի վերայ օրինակի իրացն ցուցակութեան՝ և զըսն պատճառս իրացն պահանջնիցիմք , հարկ է ևս ցուցանել ուղղակի , թէ արդիւնքն հաւաստեաւ 'ի վարկեալ պատճառէ անտի յառաջ գան , կամ թէ չմարթեն բնաւ յայլմէ իմեքէ լինել ³⁰ :

Յ Ս Գ Ո Ւ Ա Ծ Դ .

Ե ղիպաց գիւտք .

Բ ազումք 'ի գիւտից բնականաց , և բազմագոյնք 'ի կարեւորաց՝ դիսուածոյ քան ճարտարութեան բնազննաց են ծնունդք . օրինակ իմն բևեռացուցին , վառօթոյ , դիտակաց և այլց նմանեաց : Բայց գիտելի այն է , զի 'ի դիպաց արդասիք անպուղ մնան , կամ վաղվաղակի 'ի մոռացօնս դառնան , եթէ չգտանիցի ոք ակն նրբազնին՝ արժանապէս կըռել զայնոսիկ , անցանել կորովութեամբ 'ի պատճառն և 'ի հետևութիւնն , և 'ի պէտս ինչ կարեւոր պատշաճից 'ի գործ արկանել : Ինանիր երեւումն էր անշարժ ուղղութեան խանդումանդ ասղանն 'ի բևեռն կոյս , եթէ ամալփիացին Փլաքիոս Ճօյեա չէր իմաստութեամբ ուշ կալեալ ածել զայն 'ի պէտս նաւարկութեան : Պատահական վառումն և բոմբիւն խառնուածոյ բորակի , ծծմբոյ և փոշոյ ածխոյ անցաւոր ինչ երեւոյթ թուեր , եթէ անգլիացին Հոռոքեր Պէքըն և որ յետ նորուն՝ չեին նշմարեալ ըզպիտանութիւն նորա 'ի հնարաւորութիւն նորոյ պատերազմական արուեստի : Մերձաւորովութիւն և յստակութիւն պատկերի իրին երեւելոյ ընդ կրկին ոսանածե ապակիս՝ գոգաւոր և կորնթարդ , առաջի երկուց մանկանց հոշանդացուոց , որ նախկին եղեն 'ի տեսանել զայն , առ ժամայն ինչ խաղալիկ արդեօք թուեր , եթէ զարմանք իրացն չէր գրգեալ զնոսա զգացուցանել հօր իւրեանց ³¹ , և համբաւ հաւն հնչեալ յիստալիա չէր զարթուցեալ զԳալիլէոս կազմել նովաւ գործի ինչ , մերձեցուցանել զերկնաւոր մարմիննան , և տեսանել անդ զլումնի գէզս և խօփումն և առապարս , զտեսիլս արուսեկի , զարբանեակս կամ զլուաինս Լուսնթագի , և զարեդական բիծս և զարածս և ըզիայտուցս : Եւ գիւտ զուգամանակ երթեեկի ժամաշափ ճօճանին , որ օգնեաց 'ի չափել զանկումն մարմնոց և 'ի հատատել զօրէնս ծանրութեան , զառաջինն 'ի յայտ եկն 'ի ճօճելոյ լապտերի ըստ պատահման դիտեալ 'ի Գալիլէոսէ :

Բաժանումն ճառագայթից լուսոյ յեօթն գլխաւոր գոյնս
ոչ ՚ի գիւտ գայր Նեւտոնի, եթէ չէր նորա ական դիպեալ
երկայնել լուսաւոր պատկերի ճառագայթին ճայթուելոյ
՚ի սենեակ մի միթին ընդ մէջ շերտաձեւ եռադէմ հատուա-
ծակողմ ապակւոյ : Եւ ՞ այն իցեւ արդեօք որ առաջնոր-
դեաց առնս մեծի ՚ի գիւտ տիեզերական ծանրողութեան և
կարգի յօրինուածոյ աշխարհիս : — Խնձոր մի անկեալ ՚ի
գլուխ նորա՝ մինչդեռ զգնայր երիկունն ՚ի լուսնակի յիւ-
րում դրախտին : Յաւն զոր կրեաց, արկ ՚ի միտ նորա զայս
խորհուրդ նորանշան . Բամ զի՞նչ արդեօք լինէր եթէ ան-
կեալ էր ՚ի գլուխ իմ լուսինն : Այս նոր և չքնաղ մոտա-
ծովմիւն, որ ոչինչ աւելի քան զծաղը մի թեթեւ շարժեր
յայլս, առ նմա ՚ի ծանր և ՚ի կարեւոր խնդիր փոխեցաւ . և
արկ ՚ի սիրտ նորա քննել մի թէ և լուսին ըստ օրինակի
այլոց երկրաւոր մարմնոց ոչ հակեալ ծանրանայցէ յեր-
կիր : Եգիստ՝ զի այնպէս է ճշմարտիւ . աստի ՚ի կարծիս ե-
զեւ, թէ թերեւս և երկիր և այլ մոլորակք և գիսաւորք
հակիցին դէպ յարեգակն : Հաշիք և դիտողութիւնք ստու-
գեցին զկարծիսն . և այսպէս մի ըստ միոջէ գիտ և հաս-
տատեաց զօրէնս մեծի կարգի դրից տիեզերաց :

Սակայն քանի լապտերը ճօճեցան յառաջ քան գժա-
մանակսն Գալիլէի, և քանի երկայնեալ պատկերը երևու-
թացան, և քանի խնձորը անկան նախ քան զշարկանել
գագաթան Նեւտոնի : Ապա պատահական ինչ երևոյթ չէ
ինքնին բաւական՝ գիւտս ՚ի լոյս ընծայել . սկիզբն է այն և
կամ ասել առաջին տարր, այլ ինքնին անարգասաւոր՝ ե-
թէ չգուցէ որ խուզարկու լինել գիտիցէ պատճառացն և
նախատես հետեւութեանցին, և ՚ի վար արկանել զայն՝ առ
՚ի դուրս բերելոյ այլ ևս արդասիս, կամ առ զօրէնս ինչ
բնութեան կարեւորս սահմանելոյ : Այս կնիք է և դրոշմ
և արժանք հնարագէտ հանճարոյն . գիւտ՝ թէպէտ դուզ-
նաքեայ, թէպէտ պատահական, չէ երբէք անձննդական
՚ի նորին ձեռու : Գիտէ նոյնժամայն յամենայն կուսէ հայել
յիրն որ ըստ գիտաց առաջի պատահէ . և հեռաւոր ան-
գամ համեմատութիւնք չանցանեն զերեսօք նորա վրի-
պեալք և անտեսեալք յաչաց : Ի միոջէ իրէ՝ բիւր իմն նո-
րանոր արդասիս գիտէ յերեան ածել, և անդէն ՚ի գործ
մէկնութեան հարիւր և հազար անյայտ երեսութից ար-
կանել զօրէնսն, զոր աջողեցաւն գտանել :

ԳԼՈՒԽ Գ.

ՀՄՏՈՒԹԻՒՆՔ ՀԱՄԵՄՍՏՏՈՒԹԵԱՆՑ

Հասուցեալ որ ինչ յաղագս գոյութեան էից և նոցին հանգամանցն էր բան, անցանեմք՝ ՚ի համեմատութիւնս նոցուն, կարճառօտս հատանելով զօրէն քննութեան և պիւտի համեմատութեանց նոյնութեան և նմանութեան, զքանակի՝ յորում է ոչ միայն մեծութիւն և թիւ, այլ միջոց, ժամանակ և շարժումն. զպատճառի և գործոյ՝ ընդորով կայ ընտանութիւն և ներհակութիւն. և հուսկ վերջին զպարտականութեան :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Ա .

Նոյնուրիւն և նմանուրիւն .

Առ. ՚ի դատել զնոյնութիւն իրի և զյարակայութիւն հանգամանաց նորա, չե օրէն՝ մանաւանդ. ՚ի կարեռս և ՚ի դժուարինս, կարի վստահել՝ ՚ի վկայութիւն յիշողութեան և թ, որ ինքնին միայն անհաւատարիմ է յոյժ : Այլ և զգուշաւոր տեղեկութեանց պէտք են՝ ոչ զյատկութեանց միայն երեելոց յիրի անդ, այլ և զդիսլացն յորս գտանի . որպէս զի դատեսցուք առ այլովք դիտողութեամբք, թէ եդեալ զնա միւսանգամ ՚ի նոյն դէպս՝ ցուցանիցէ արդեօք զնոյն յատկութիւնս : Քանզի ՚ի փոփոխել դիսլացն, մարթի թէ նոյն իցէ և այլայլ ինչ երեիցի . որպէս և ընդ հակառակն թէ այլազդ ինչ իցէ և նոյն երեիցի :

Զնոյն զգուշութիւն արժան է ունել՝ ՚ի դէպսն՝ և յորժամ՝ կամիցիմք բարւոք ընտրել զնմանութիւն երկուց կամ յոլով իրաց . զի ՚ի դիսլացն փոփոխել և կարի քաջ նմանագոյնքն աննմանք թուին, և ընդ հակառակս : Եւ

քանզի բազում՝ են նմանութեան համեմատութիւնք, յա-
մենայն կուսէ գիտելի է զիրն, գիտել թէ 'ի քանի և յոր
յատկութիւնս նմանեն միմեանց, և ըստ թուղյ նոցա ընտ-
րել և զնմանութեանն պայման :

ՅՈՒՂԻԱԾ Բ.

Քանակ .

Համեմատութիւնք քանակի, յորս՝ թէ անինիւթաբար
առցին, որպէս ասացաք, ոչ միայն մեծութիւն և թիւ տե-
ղի ունին, այլ և միջոց և ժամանակ և շարժումն, կազմեն
զստուդագոյնն 'ի բնական գիտութիւնս՝ զշափարերու-
թիւն :

Զափարերացն զքանակին խոյզ և քնին՝ առաւել 'ի հա-
ւասարութիւն կամ՝ յանհաւասարութիւննոցաբերի. քան-
զի և համեմատութիւն ոչ այլ ինչ է, որպէս տեսցուք,
բայց հաւասարութիւն երկուց բանից. և բան 'ի մէջ քա-
նակաց ոչինչ այլ է, քան թէ համեմատութիւն հաւասա-
րութեան կամ՝ անհաւասարութեան նոցա : Իսկ զշաւա-
սարութիւն կամ՝ զանհաւասարութիւն երկուց քանա-
կաց՝ է զի ճիշդ գտանեմք հասարակ չափով, որպէս զեր-
կուց եռանկեանց կամ՝ քառակուսեաց, և այն քանակք
կոչին չափակից . և է զի չգտանեմք ճշդիւ՝ առ 'ի չգոյէ հա-
սարակաց չափոյ, և այնք կոչին անչափակից, որպիսի է
համեմատութիւն կողմանն քառակուսեայ առ տրաման-
կիւնն, և տրամագծի բոլորակին՝ առ շրջապատն :

Արդ չափարերացն առաջին ջան է հնարել կամ՝ ուսա-
նել զո՞ճ գտակաւ իմանալց զճիշդ համեմատութիւնս չա-
փակից քանակաց, իսկ զանչափակցացն գոնէ զմերձաւոր
համեմատութիւնս : Առ այս Արքիմիդէս առաջին հոր-
դեաց ճանապարհ ոճով սպառմանց, ապա կավալիերի ո-
ճով անբաժանելեաց, և հուսկ ապա Կեւտոն և Կէիրնի-
տիոս ոճովն՝ զօր մին հոսմանց անուանեաց, և միւսն հա-
ջիւ տարբերական և ամբողջական :

Սակայն եթէ միայն զշանձնաւոր անմարմին քանակօքն

կայր չափաբերութիւն, մնոտի գիտութիւն էր և ժամանակառութիւն և եթ : Ապա այլ ինն կարեռագոյն գործ պաշտաման չափաբերաց է զանմարմին և զիմանալի համեմատութիւնս քանակի՝ պատշաճել՚ի պէտս ինչ իրաց զգալեաց և նիւթականաց : Եւ ահա զայս սպաս հարին մեզ յետ նորոգելոյ իմաստասիրութեան Գալիլոս, կարդեսիոս, կեպլեր, իւգենիոս և Նեւտոն . որով աստեղաբաշխութիւն, տեսաբանութիւն, լրաբանութիւն, աշխարհագրութիւն, երկրաբաշխութիւն, նաւուղղութիւն, ձգաբանութիւն և համօրէն կազմածոյ և շարժուածոյ գիտութիւն սեղմ և լոյծ բնութեանց մեծամեծս յառաջացաւ առ մեօք՚ի յետին ժամանակս :

Բայց յառաջ քան զ՚ի վար արկանել՚ի զգալիս զչափաբերական հաշիւսն և զծարտարագործութիւնս, արժան է գիտել քաջ զբնութիւն և զհանգամանս իրացն՝ զորովք անկանելոց են ծարտարանքն : Զի թէ ոչ ճշդիւք և անվըեալ առաջի զնիցին ծանուցեալք, կամ մոռասցի ինչ ՚ի գլխաւոր հանգամանաց, կամ սուտ ինչ ՚ի կարծ ընդ համար խառնեսցի, դժուարաքիրտն հաշիւք յայսպիսի հիման կառուցեալք ՚ի մոլորութիւն տանիցին ⁵².

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Գ .

Պատճառ և գործ .

Ի համեմատութիւնս պատճառի և գործոյ երկու ինչ խնդրի . եղեալ զգործն՝ ցուցանել զպատճառն, եղեալ զպատճառն՝ իմանալ զգործն :

Ա . ԵԴԵՆԱԼ ԶԳՈՐԾՆ ԽՆԴՐԵԼ ԶՊԱՏՃԱՌՆ

Յորժամ խնդրի պատճառ գործոյ, նախ մուադիւրագոյնս քննելի է զբուն գործն, ապա զամենայն հանգամանաց դէպս՝ որ ՚ի նոյն նպաստ լինիցին :

Պահանջեալ պատճառք գործոյն կրկնակի գտանի . յոր-

ժամ՝ յստակ և ակներեւ տեսանիցի պատճառն յորմէ լինի, և յորժամ ամենելին յայտնի լինիցի, թէ յայլմէ իմերէ չմարթի լինել:

Վասն որոյ յերկուց սխալմանց առաւել զգուշութիւն պիտի. առաջին, պատճառս իրիք իմանալ ինչ մի՝ միայն վասն յառաջելցին քան զնա, թէ և չտեսանի ինչ ընդ նուսա հաղորդութիւն կամ համեմատութիւն պատճառաւորութեան: Այս սխալ է զոր Դապրոցականք անուանէին գուշակութիւն կամ ըստ նոցա լեզուին ժախտելունիւն յէտ այսք՝ սարեհն ձանն այսը, և յոյժ սովորական է մանաւանդ առ ռամլին: Արհաւիրք զոր ՚ի հնումն արկանէին տեսիլք վարսամից կամ այլոց չքնաղ նշանաց երկնից, որ բերող կարծէին սովոյ, մահու, և այլոց այսպիսի աղետից, ուստի արդեօք կալան սկիզբն, բայց յեղելոց ինչ գիտաց, զի երեմն չարիք այդպիսիք զհետ եկին այնց երևմանց: Նշնպէս սերեցան կալան և կարծիք ազդեցութեանց լուսնի, աստեղաց և այլոց նմանեաց: Երկրորդ սխալ է ՚ի մի եեթ պատճառ հանել զայն ինչ, որ ՚ի բազմացն լինիցի. և իմաստունք իսկ անկանին ստեպ ՚ի սոյն: Յոյժ սակաւ են գործք որոց ոչ բազում իցեն պատճառք. վասն որոյ յառաջ քան զարտճառուն հաստատել, հարկ անհրաժեշտ է քաջ կշռել զամենայն հանգամանս դիպաց գործոյն ⁵⁵:

Բ. ԵՒԵՍԼ. ԶՊԱՏՃԱՌԻ ԳՈՒՅԱԿԵԼ. ԶԳՈՐԾՆ

Եթէ պատճառն կայ, և զգործն ինդրի գուշակել, երկու ինչ առաւել նկատելի է. պատճառն հարկաւոր է կամ ազատ. օրէնք գործելցին և հանգամանքն ծանօթ են կամ անծանօթ:

Գործ + հարկաւոր պատճառաց.

Դիւրին է գուշակել զգործ հարկաւոր պատճառի, որոյ օրէնք յայտնի իցեն և հանգամանքն ծանօթ: Եթէ բարձից ՚ի կշռու՝ աստի լուերս տասն և անտի ութ, հաւաստի եմ միտել կշռոյն յառաջին նժար անդր: Եթէ ՚ի ծագ լծակի կախեցից ութ լիոր՝ ոտնաչափ մի հեռի ՚ի յեցակիտէն, և ՚ի միւս ծագ լուերս երկու՝ հեռի ՚ի նմին կիտէ ոտնաչափս

չորս, հաստատեալ եմ թէ լջակն մնայ անշարժ 'ի մէտ
կշռութեանն :

իսկ եթէ պատճառն հարկաւոր իցէ, բայց ոչ հե-
րիք ծանօթ օրէնք գործելցին կամ հանգամանքն յորս է
կամ թէ լինելոց է յերեւել անդ գործոյն, չիք յայնժամ
ստուգութիւն, այլ հաւանականութիւն ևեթ կամ երկ-
բայութիւն : Ի սմին սակի են յոլովք 'ի բնական գոր-
ծոց ուստի և գուն ուրեք է կողմել և վաղակարծել ըզ-
նոսա ստուգութեամբ : Ո՞ այն որ ճշգրտել դիտիցէ,
որչափ ցորեան ժողովելոց իցէ 'ի սերմանացն արկելոց
յագարակ իւր . ով վատահասցի թէ այն ինչ գեղ ապա-
քինեացէ զնա յայս նիշ ախտէ և յայսչափ ժամանակի .
ով կարէ գուշակել հաւաստեաւ յօրէ յայսմանէ, թէ անձ-
րեւ արդեօք լինիցի առ վաղիւ եթէ պարզ և ջեր : Ինոյն
իսկ արուեստական գործիս՝ ուրը յայտնագոյն թուին պատ-
ճառքն, եթէ փոքր մի խառնամառն իցեն, գժուարին է
յոյժ անվրէպ գուշակել զորքանութիւն գործոյն . զի դը-
ժուարին է մանր հաշուել զհանգամանս նիւթոցն և զչափ
խափանածոյ շփմանց և այլոց խոչից արգելչաց գործոյն :
Ապա յայնժամ հաւանականութիւնն է խնդրելք . որոյ
այնչափ է զօրութիւն, որչափ ծանօթագոյն իցեն պատ-
ճառքն և օրէնք նոցա, և ներկայ կամ ապագայ հանգա-
մանքն . և այս ինքն է արուեստ գուշակութեան, յորում և
'ի հարկէ նա է քաջ, որոյ առաւել են հմտութիւնք ի-
րաց : Վասն որոյ 'ի բժշկականութեան, որում առաւել 'ի
պէտս գայ այս արուեստ, նորա են բազում հաւանու-
թիւնք յառաջատես լինելց արդեանց գեղոցն, որոյ զգու-
շաւոր քննութեամբ ներկայ և անցեալ բնական և բա-
րոյական հանգամանաց հիւանդին՝ 'ի միտ առեալ քաջ
զպատճառս և զտեղի ցաւոցն, և անդամազնութեամբ,
մարմնակազմութեամբ, ախտաբանութեամբ և այլովք
մասամբք ծանուցեալ զարդարական ախտին, իւրով կամ այ-
լոց փորձիւ և շարժաբանական, տարրալուծական, անկա-
բանական և գեղագործական հմտութեամբքն խելամուտ
ևս իցէ ազդեցութեան գեղոցն 'ի սեղմ 'ի լոյծ մասունս
զօր հանդերձեալն է բժշկել :

Պատրահութեան դրէպութիւն .

Կամիմք բազում անգամ և այնպիսի գործոց գուշակ լինել՝ որ սոսկ դիպուածոյ արգասիք են, միահաղոյն զոյգ գտանելոյ ասեմ պատճառաց յոր յառաջատեսութիւն ոչ հասանէ: Պատահէ այս առաւել 'ի խաղս վիճակընկեցութեան և բախտի: Ի բազում թուոց արկելոց 'ի սափոր՝ այս արդեօք ելանիցէ եթէ այն, անհնար է նախագուշակել. զի 'ի շարժել սափորոյն ոչ ոք գիտէ որով կարգաւ կայցեն թիւքն, և յոյր վերայ անկանիցի ձեռն հանողին: Ուստի որ անրջովք և հմայիւք և ըղձութեամբք և այլովք տիմարութեամբք յուսան գուշակ լինել թուոցն ելանելոյ 'ի վիճակս կամ յայլ այնպիսի խաղս, յայտնի անմոռութիւն է:

Ի գիւտ հաւանականութեան այսպիսեաց, քննելի է նախ թիւ ամենայն կարելի դիպուածոց, ապա յաջողակացն և ձախողակաց: Եթէ թիւք սափորոյն 90 իցեն՝ որպէս 'ի վիճակին, և ուրուք ընտրեալ իցէ 'ի նոցանէ 'ի խաղ թիւ մի նախկին ելանելի, մարթելի դիպուածքն լինին 90: Եւ զի միում դիպուածի մնայ նորա յաղթութիւն, այսինքն եթէ առաջին ելանիցէ թիւնորա, հաւանականութիւնն է իբրև մի առ. 90: Իսկ եթէ չսահմանիցէ զելուստն, և Յ իցեն հանմունք, որովհետեւ յիւրաքանչիւրմն կարէ շահել, հաւանականութիւնն լինի իբրև Յ առ. 90 կամ իբրև 1 առ. 18:

Նոյնպէս եթէ երկուս թիւս կամ երկեակ մի առեալ իցէ, պայմանաւ՝ զի երկորեան ելանիցեն յառաջին երկու հանմունս, հաւանականութիւնն լինի իբրև մի առ ամենայն զոյգս յ90 թուոյն լծեալս երկու երկու, այս է իբրև 1 առ. 4005: Իսկ թէ չսահմանէ զելուն, հաւանականութիւնն լինի որպէս երկեակքն որ 'ի Յ թիւն առ երկեակս որ յ90, այս է որպէս 10 առ. 4005 կամ 1 առ. 400 $\frac{1}{2}$:

Նմանապէս եթէ առցէ 'ի խաղ երիս թիւս կամ երրեակ մի, սովին պայմանաւ՝ զի երեքին ևս ելանիցեն յերիսնախկի հանմունս, հաւանականութիւնն լինի իբրև մի առ ամենայն երրեակս յ90 թուոյն յարադրեալս, այսինքն իբրև 1 առ. 447480: Իսկ թէ առանց սահմանի թողուցու ըղհանմունսն, հաւանականութիւնն է որպէս երրեակքն Յ

թուղյն առ երբեակս 90 թուղյն, իմա որպէս 10 առ 117480
կամ որպէս 1 առ 11748 :

Ապա ուրեմն հաւանականութիւն պատահական դի-
պուածոց այնպէս ունի, որպէս թիւ յաջողակացն առ թիւ
ամենայն կարելեաց : Ապա զայլ և այլ չափս հաւանակա-
նութեանցն մարթ է ցուցանել կոտորակօք՝ որոց յարա-
նուանող իցեն կարելի դիպուածք իրին, և համարիչ յա-
ջողակքն : Եթէ մարթելի դէպք 10 իցեն, և յաջողակ մի
միայն, հաւանականութիւնն լինի $\frac{1}{10}$. Եթէ յաջողակք 2,

հաւանականութիւնն լինի $\frac{2}{10}$: Բատ առել թուղյ աջողակ
դիպուածոց՝ աճէ և հաւանականութիւնն նովին կարգաւ
 $\frac{5}{10}$, $\frac{4}{10}$, $\frac{3}{10}$, $\frac{6}{10}$, $\frac{7}{10}$, $\frac{8}{10}$, $\frac{9}{10}$. մինչեւ եթէ ամենայն
դիպուածք աջողակ իցեն, հաւանականութիւնն լինի $\frac{10}{10}$,
որ է ստուգութիւն : Բայց ըստ որում ասացաք (յէջ 122)
յորժամ թիւ աջողակ դիպուածոց հաւասար է ներհա-
կաց, երկրայութիւն և եթ լինի : Ապա հաւանութիւնն
ջողակ ելից սկսանի 'ի վերոյ քան զ $\frac{3}{10}$, իսկ 'ի ստորեւ քան
զայն՝ այնչափ է անհաւանութիւնն կամ ձախողակին հա-
ւանութիւնն, որչափ ինչ պակասէ առ զ $\frac{5}{10}$:

Այս օրէնք են ամենայն պատահական դիպուածոց, ե-
թէ յայտնի իցեն ամենայն կարելի դէպքն, յաջողք և հա-
կառակք : Ակայն բազում ուրեք դէպ տայ գուշակել
զհաւանութիւնն կամ զանհաւանութիւնն պատահական
ինչ դիպուածոց առանց գիտելոյ զամենայն կարելինն : Ո՞վ
հմուտ իցէ ամենայն պատճառաց փոփոխելոյ օդոցն յե-
րեկորեայ մինչեւ ցառաւոտ, ըստ նմին և ամենայն մար-
թելի դիպուածոցն : Մնայ յայնժամ կը ուշել զամենայն ծա-
նօթ դէպս, և տեսանել քանիք իցեն յերկուսեան կող-
մանսն : Տասն անգամ տեսեալ ուրուք զերկինս շառագոյն
ընդ երեկս, ութ անգամ այդուցն պարզ գտան երկնիք և
երկիցս ամպոտ և պղտոր . ապա հաւանելի է, թէ շառա-
գունել երկնից առ երեկս նշան իցէ պարզութեան վա-
ղուի : Այլ յայտնի է ամենեցուն, զի որովհետեւ այս հա-

ւանութիւն հաստատի միայն 'ի թիւ յումենէ և եթ դիւտեալ դիպուածոց, և ոչ ամենայն կարելեացն, կարի յոյժոկարագոյն է քան զառաջինն. զի ո դիտէ գուցէ յայլհազար և բիւր դեպս զանխլացեալս յումեքէն՝ անարե և խառնակ աւուրք բազմաթիւ քան զերինսն էին :

Սակայն ունիմք աստանօր 'ի թիկունս և զմիաբան դիւտողութիւն այլոց, աճեցուցանել զհաւանութիւն մեր և նուազել զձախողակին հաւանութիւն : Եւ այս փաստ բաւական պարտ էր լինել 'ի հանդարտել զմնութի զարհուրանս այնոցիկ՝ որ յամենայն փայլական կասկածեն լինել շանթահար : Մերով և այլոց դիտողութեամբք յայտ է, զի բազում անգամ ամք յոլով անցանեն առանց ուրուք ամպահար մեռանելոյ 'ի հազարաւորաց անտի կայծականց ճայթելոց . սկսանիմք ապա հաւանութիւն բազում ունել և առ մեզ նոյնպէս լինելոյ : Բայց աջողակ հաւանութիւնն ամէ և ես, եթէ այր իւրաքանչիւր 'ի հաշիւ մտեալ բնակշաց գաւառին՝ յորոյ վերայ կուտակեալ նստեալ կան ամպրոպքն սպառնականք, տեսանիցէ՝ զի թէպէտ և 'ի պահու անդ հարուածիլ հասցէ ումեք, տակաւին յիւր աջողութիւն ունի զհաւանութիւն հարիւր կամ երկերիւր հազարաց ընդդէմ միոյ : Ապա խառնեալ յարադրութեամբ զերկոսին հաւանութիւնն, յայտ է թէ առ ամենայն փայլատակունս հաւանութիւնն իւրաքանչիւր ուրուք անվնաս պահելոյ 'հաշուի բազում հազարս հազարաց առ մի միութիւն : Խակ արդ յետ այսր ամենայնի աջողակ հաւանութեանց, որում ոչինչ այլ ընդդէմ ելանէ՝ բայց սոսկ հնարաւորութեանն խրտուիլ, զիարդ իցէ 'ի տագնապի կալմարդոյ բանաւորի :

Գործ + ապարան ալուստաց .

Ազատ պատճառաց գործք դժուարահաւանելիք են 'ի գուշակութիւն . ո 'ի մարդկանէ կանխագուշակ լինել մարթացի, թէ առնիցէ ոք զայս ինչ կամ զայն, մինչդեռ յազատ կամս նորա ապաստան կայ գործն : Սակայն են և աստանօր նշանք հաւանական գուշակութեան 'ի հմտութենէ վարուց և բարուց և կրօնից մարդոյն, և 'ի զօրութենէ առթիցն՝ որ տանին զնա 'ի գործ անդք : Քազաքավարութիւն կամ տեսչութեան արուեստ 'ի դոյն համա-

կի. սկսանի նախ մոտագիւր մանր քննել զսիրտ մարդոյ , համեմատել ընդ հմտութիւնս՝ որ 'ի վէպս անցելոց ժամանակաց և 'ի փորձ ներկայինն : Եւ խելամուտ եղեալ հասարակաց և ի փորձ ներկայան մարդկան , բռնութեան ախտից , ախորժակաց և յօժարութեանց , և առ.թից որ ըստ դիպաց դիպաց յիրս իրս սովոր են դրդել , ապա զայ մոտանէ յառանձին քննութիւն քնաւորութեան , բարուց , խառնուածոց , բնական և բարոյական հանգամանաց նոցա՝ որոց առաջնորդելոցն է : Եւ ըստ պատշաճի հմտութեանցն ընտրէ զհնարագիտութիւն կատարման խորհրդոցն :

Ոչ որ զազգի մոյ բազմաւորի դիմաւորութիւն յանձին ունիցի՝ նա միայն այնոցիկ կարօտի հմտութեանց , այլ ըստ իւրում չափոյ և որում յանձն է տնտեսութիւն և վարչութիւն միաբանութեան մեծի կամ փոքրու , կամ հըսկող ինսամակալութիւն գաստիարակութեան , և կամ որ կենաց կցորդ և կենցաղակից այլոց լինել հանդերձեալ իցէ , յորմէ և չունի ոք հրաժեշտ տալ : Զի յայն ամենայն հմտութիւնս հաստատի կենցաղօգուտն ամենեցուն խոհականութեան կրթանք , զոր բարոյականն ցուցցէ :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Դ Ի Շ .

Պարտականութիւն .

Եկեսցուք արդ 'ի համեմատութիւնս պարտականութեան , որ արմատն է բովանդակ բարոյական իմաստափառութեան , ոչինչ պակաս և բնական և քաղաքական և հասարակաց իրաւանց : Եւ քանզի երեք են մարդոյ կցորդութիւնք , առ Աստուած , առ ինքն , և առ համարնեայմն , արժան է և բարոյականին երեակ ազգս պարտուց 'ի քնին մատուցանել զմարդոյ , առ Աստուած , առ անձն և առ այլս :

'Ծանուցեալ միանգամ զարարչին գոյութիւն , որ որպէս տեսնալ եղեւ 'ի մերմէ գոյութենէս իմաստափրի , ապա այնուհետեւ ինքնին գան չնորհակալութեան առ նա և սիրոյ պարտիք , և մեծարանաց և հնազանդութեան , այլովքն հանդերձ :

Յընդաբոյս սիրոյ բարեկեցութեան մերոյ՝ անընդմիջաբար բղխեն պարտք, մանաւանդ թէ անձանց շահ, որ հարկէ զամենեսին յերջանկութիւն թեակոխել առաւելք քան զառաւելք: Եւ ոչ այլ իսկիք կարօտիմք, բայց գիտելոյ զուղիղ ճանապարհն, զոր ցուցցէ ճոխաբար բարոյականն իմաստափական:

Պարտք առ հոմացեղսն բովանդակին առ հասարակ յերկուս պատուիրանս, որ բնականքն անուանին. Մի ումբք առնել զոր չկամիմք թէ արացեն մեզ. և Զոր կամիմքն թէ արացեն մեզ մարդիկ, զնոյն առնելնոցա: Առաջինն բովանդակէ զարգելական պարտս, երկրորդն զհրամայականսն, կամ թէ ասել մին զհրամարականսն և միւսն զյանձնառականսն:

Յտռաջագոյն ակնարկեցաք 'ի հարեանցի՝ զիարդ յիրաւանց իւրաքանչիւր չզըկելոյ յումեքէ, ելանեն փոխարէն պարաք ոչ զոք զրկելոյ: Եւ քանզի երրակի մարդէ է զրկել զոք, վնաս անձիննորա կամ ընչիցն և կամ պատուոյն հասուցանելով, յայտ ուրեմն է թէ յերից աստի անիրաւութեանց պարտիմք զգուշանալ. և այս կոչի պարտք արդարութեան:

Անդանօր նշանակերալ է մեր ևս, որպէս 'ի բնատուր ախտակցութենէ ամենեցուն' արգահատելոյ միմեանց՝ յառաջ գան հրամայական պարտք օգնելոյ այլոց, յորս առանց ինչ մերոյ վնասու կամ նեղութեան կարող եմք, և ձեռնտու լինել յաղէտս ծանունս թէ և վնասու իւիք կամ նեղութեամբ մերով. և այս է որ կոչի մարդասիրութեան պարտք:

Բայց որ զհարկաւոր և զաններելի պարտս միայն արդարութեան և մարդասիրութեան լնուցու, առանց այլ ևս ինչ անոդր անցանելոյ, նա այր արդար է և ոչինչ աւելի: Իսկ և առաքինի անուն ժառանգէ, եթէ առաւել ինչ քան զոր հարկաւն պահանջի յանվրէպ պարտուցն՝ առնիցէ, կամ թէ առաւելագոյն զօրութեամբ՝ ջանիւ և փութով քան զսահմանեալն 'ի հարկէ պարտուցն: Ընդ այս հետս զոր փոքու իմն ծրագրեմք ևեթ, դիւրաւ յարդարին ամենայն մասունք բարոյական իմաստասիրութեան և բնական իրաւանց, որ այլուր յերկար ցուցցի:

Քաղաքական իրաւունք ոչ այլ ինչ են տիրապէս, բայց բնական իրաւունքն յիւրաքանչիւր պէտս ընկերութեանց

պատշաճեալ : Ապա որ օրէնսդիր իրաց ինչ հանդերձեալ իցէ լինել, ուշ կացի և 'ի սահմանս բնական օրինաց, զի արդար լիցին օրէնքն . և յանցնիւր պէտս ընկերութեանն յոր կարգին օրէնքն, զի պատշաճաւոր լինիցին : Եւ որ կամիցի ոք զարդարութենէ կամ զծահաւորութենէ օրինաց օրէնսդրին դատաստան առնել, զայս ոճ պարտի ունել : Եւ զոր զքաղաքականէն ասացաք՝ զնոյն իմա և զհասարակացն իրաւանց :

ԳԼՈՒԽ Դ.

ՎԵՐՋԱԲԱՆ ՊՐԵԿԻՍ, ԵՒ ՈՃ ՀԱՆՈՒՐ ՔՅՈՒՌԹԵԱՆ

Աւանդեալքս ցայս վայր բաւականութեամբ ցուցանեն զծանապարհ մեզէն գտանելոյ զծշմարտութիւն գոյութեան իրաց և հանգամանաց կամ համեմատութեանց նոցին : Մնայ նշանակել համառօտ զզգուշալիսն յամենայն քննութիւնս :

Արդ առ չե 'ի քննութիւն իրիք միսեալ՝ որոշելի է յատակ և պարզ՝ զոր գիտելն կամիմք, զի յայն միայն պարապեսցի ուշն՝ առանց յայլ օտարութի և աւելորդ խնդիրս ցնդելոյ :

Է . Եթէ իցէ ինչ մեր կանխաւ հմտութիւն զառաջիկայ իրացն, քննել՝ որպէս իցեմք հասեալ յայն . զի գտցուք զկշիռ հաւանականութեան կամ ստուգութեան . և թէ երկմտութիւն ընդդէմ ելանիցէ, լուծանել զայն առ տեղեաւն՝ մինչ չե յառաջ անցեալ :

Ֆ . Յայտ արարեալ զալայման խնդրոյն կամ զքննութեանն որ 'ի վերայ կայ, յատակեալ 'ի նմա և զծանօթն յանձանօթէն, եթէ քննելիքն բազում իցեն՝ մէն մի առանձինն 'ի հարցվորձ մատուցանել, զի մի միահամուռ յոլվութիւն իրաց շփոթ արկանիցէ :

Դ . Յայսպիսեաց քննութիւնն՝ սկիզբն միշտ 'ի պարզից առնել և 'ի գիւրնոց . և յետ զայնս հաստատելոյ՝ ոտն ոտն անցանել կարգաւ 'ի գժուարինսն և 'ի բազմամանս :

Ե . Ջանալ ըստ մարթելոյ խորամուխ լինել յիրսն և մանրակրկիտ, և յուզել զնոցա հեռաւոր սկզբունս : Աալս

զիրն քննեալ ինքնին ըստ ամենայն կողմանց, ըստ համայն կերպարանաց, ըստ բոլոր հանդամանաց և դիպաց և ըստ բովանդակ մասանց, և ապա համեմատել ընդ այլն ամենեսին որոց կայցէ ինչ ընդ նմա:

Ա. Մի ինչ ստոյգ առդնել՝ որ բացայացտ ոչ իցէ կամ ցուցիւք չհաւաստիցի: Բազում սխալմանցս պատճառք են դիւրահաւան լինել վեր՝ ի վերոյ կերպարանաց և շտապաւ դատել ըստ աչս:

Ե. Ի մասնաւորաց մի ընդհանուր հետեւութիւնս հանել, ուր չէ յայտ՝ թէ հասարակաբար ասացեալն՝ յիրաւի պատշաճիցի միոյ միոյ իւրաքանչիւր յայնմ կարգէ զորմէ խնդիրն է, կամ այնչափից, մինչեւ ըստ օրէնս պատշաճութեան կարող լինել իմաստասիրելոյ իրաւամբք, թէ ամենեքին ՚ի նմին կարգի հաւասարորդք իցեն: Ի գլխաւոր արմատոց մնարութեան մերոյ մի և այն է, որպէս տեսցուք, զի զառանձին ինչ սեփականս տեսակին՝ յանդգնիմք սեռին դրել, կամ զմիոյն և զսակաւուց ոմանց զյատուկան՝ տեսակին դնել:

ՊՐԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀՄՏՍՈՒԹԻՒՆՔ ԶՈՐ ՑԵՎԵՐԸ ՈՒՍՏԱԽՄՔ , ԵԿ
ԱՐՈՒԵՍՏ ԴԵՏՈՂԱԿԱՆ

Հմոռութիւնք՝ զոր յայլըց ուսանիմք , կամ՝ զմոռաւորական խնդրոց են կամ՝ զարգեանց իրաց եղելըց : Յերկաքանչիւրան գործ հասեալ է դատողական արուեստի , որ է գիտութիւն ընտրելոյ զուտան՝ ՚ի ճշմարտէն յապացոյց կամ՝ ՚ի պատմութիւնս այլոց : Ի բանասիրական դպրութիւնս և յարուեստս՝ է և այլ գործ քննախնդրութեան , ընտրել ընդ գեղեցիկն և ընդ տգեղ , ընդ բարին և ընդ յուրին , ընդ գովելին և ընդ անգուսնելին : Բայց մեք աստանօր որ ինչ բանական արուեստիս է անկ՝ ընտրութիւն ՚ի մեջ ճշմարտին և ասոյ , յայն ևեթ պարապ տացուք . զի այն է միայն սորա փոյթ :

ԳԼՈՒԽ Ա.

ՄՏՏԵՌՈՐԾԱԿԱՆ ԻՐՔ

Ի մոռաւորական խնդիրս երկուս ինչս նկատել կայ . զսկզբունս կամ զօրէնս հաստատութեան ապացուցից , և զհետեռութիւնս ՚ի նոցանէն ելեալս :

Խօսեալքս մինչեւ ցայժմ յաղագս սկզբանց՝ բաւական են յօրէնս դատելոյ ստուգութեան և հաւանութեան և երկբայութեան նոցա , և զօրութեան նոցին : Զիք ինչ յաճախեալ քան զճայնքս , սուսոյն է , յայդոնի , անսիտլ , անժիորէլ , անլուտլ , անդուտլ , անդուտլ , անդուտլ , այլ բազում այն է , զի

զոր ստոյգն ընծայեցուցանէ ոք պիրապէս և բնաղանցօրէն ստուգութեամբ, եթէ արկցի ՚ի փորձ անհնարութեան օրինաց, հազիւ թէ բնական կամ բարոյական և թ ստուգութիւն գտանիցի ՚ի նմա: Եւ ուրեք զի և դոյզն ինչ մէտ հաւանականութեան միայն երեխ, կամ թէ և յայնմանէ իսկ ամայի է ՚ի սպառ: Իսկ հետևութիւնք ուղիղ յառաջ գան, եթէ օրինօք և ըստ կարգի բղլսեսցեն յեգեալ սկըզբանց, զորոյ զօրէնսդրութիւնն երկրորդի գրոցն պահեմք, ուր ճոխագոյն ճառք անկանիցին:

ԳԼՈՒԽ Բ.

ԱՐԴԻՒԽՆՔ ԻՐԵՑ ԿԱՄ ԳՈՐԾԱՔ

Ի ինդիրս արդեանց իրաց երկու են գիտելիք. հանգամանք իրին եղելոյ, և զօրութիւն բանից պատմողին: Եթէ հանգամանք իրին ինքնին անկարելի են կամ հակառակ միմեանց, անհաւատ է պատմութիւն: Եթէ անհաւանելի միայն իցեն հանգամանքն, ոչ անհնարինք և ոչ ընդդիմաբանք, անձնասալահ ՚ի դիւրահաւանութենէ պարտ է լինել, բայց ՚ի սպառ ուրանալ օրէն ոչ է: Իսկ յորժամ ոչ միայն հակառակութիւն ինչ ՚ի հանգամանն չիցէ, նա մանաւանդ յար և նման իցեն երբեք երբեք դիպելոցն, ոչ հնարաւոր և եթէ համարելի զիրն, այլ և հաւանութեան անդամ կշիռս ինչ ընծայել նմա, բայց թեթես: Զի որ անշափ բերիցէ զծշմարտութեանն կերպարանս՝ առաւել պատճառս տայ երբեմն թերեհաւատելոյ ընդ ստուգութիւնն: Վասն զի առ յոյժ հաւանութենէ լինելոյ իրացն ՚ի դէպս ինչ անդէն իրբեւ արդիւնս ինչ իրաց կարծեցուցանեն բազումք զիւրեանցն գուշակութիւնս: Օրինակի աղագաւ, ՚ի դիաել ուրուք թէ այս անուն առ ՚ի մահ ախտացեալ գնի, առժամայն լուր առնէ զմահ նորա. թէ զծակատել երկուց բանակաց ոք գիտիցէ, անդէն զպատերազնն իբրու եղեալ հռչակ հարկանէ, քանզի հաւանական թուի թէ եղեալ իցէ. այսպէս և յայլ հազար և բիւր դէպս:

Ուրեմն հաւատարմութիւն պատմութեան եղելոց ինչ

իրաց՝ կշռելի է մանաւանդ՝ 'ի զօրութենէ բանից պատմողացն։ Ասացաք յառաջագոյն, թէ չէ օրէն բարոյական ստուգութեամբ հաւատաւ իմիք, մինչև յայտնի լիցի բարոյական անհնարութիւն 'ի խաբս կալոյ պատմելեաց բանին, կամ զմեզ 'ի պատրանս արկանելոյ։ Արդ ըստ չորս յեղանակս հասանեն առ մեզ տեղեկութիւնք արդեանց իրաց։ ինքնասաց պատմութեամբ ականատես վկայից, գրաւորական աւանդիւ վիպասանից, յիշատակարանաց վըկայութեամբ, 'ի ձայնաւոր և յանգիր աւանդութենէ։

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Ա .

Վ Կ Ա յ թ .

Յորժամ բազումք զանազանեալք բնութեամբ, տիօք, կարդաւ, հայրենեօք, բարուք և շահիւ, միաբան պատմեն՝ ականատես եղեալ հասարակաց ինչ յայտնի իրի մէծի և հոչակելոյ, զոր օրինակ սասանութեան երկրի, հեղեղաց ջուրց, հրայրեցաց, չէ օրէն 'ի կարծիս ձգել զայն։ Զի այնքան բազմութեան բարոյապէս անմարթ է խաբիլ յայնս, կամ միաբանել առ 'ի զմեզ խաբելոյ։ ուր զի և բարուք, հրահանգօք և օգտիւ բնաւին բաժանեալք են 'ի միմեանց։

Իսկ եթէ վկայն մի իցէ, կամ սակաւք, կամ հակառակք միմեանց, յայնժամ միոյ միոյ քննեացի զօրութիւն, կըշուեալնախ զլաւութիւնն և զճշմարտախօսութիւն։ Որ 'ի սուտ խօսել սովորեալ իցէ, կամ 'ի հանել համբաւ սուտ առ չարութեան կամ թէ միայն առ ունչս առնելոյ զմիամուութեամբ այլոց, այնու իսկ խիթալի լինի։ Նորին սակի գրեսցի և այր խարդախ, յորմէ իրաւ է միշտ պատիրս ինչ կասկածել։

Բ. Եւ արք բարեբարք և ճշմարտաբանք կուրացեալ յախտից կամ 'ի շահէ կամ 'ի կողմնաւոր կամաց և յայլոց այսպիսեաց, է զի 'ի խաբս գտանին, և է զի պէսպէս այլափոխեն զիրսն, երբեմն և յանդաստից ևս։ Վասն ուրոյ խնամով ուշակալ լինել պարտ է, թէ զոր պատմենն ունիցի՞ ինչ կցորդութիւն առ նոսա կամ ընդ բարեկամն

նոցա և կամ՝ առ ընտանիս: Եթէ այնպէս ինչ գտանիցի, նուազ է զօրութիւն վկայութեան նոցա՝ քան յորժամ շեցէ ինչ բնաւ իրին և նոցա:

Դ. Միտ դնելի է և ՚ի հմտութիւն նոցա, յիմաստութիւն և ՚ի խորագիտութիւն: Տիմարն և ապուշ դիւրախար է. պաշարեալ միտք բազում անդամ՝ զստուերն մարմին տեսանեն. որոյ ջերմ է երեւակայութիւն՝ զցնորս մըտացն ստուգութիւն վարկանի: Խակ յորս հերիք է աչս ունել և միտս, որպէս ՚ի զըսյց ողողելոյ ջուրց, կործանման աշտարակի, հրկիզութեան տան, տգիտի և գիտնոյ վկայութիւն զնոյն արժէ գէթ առ բուն իրն: Զի ՚ի հանգամանսն՝ պատմութիւն գիտնաւորին միշտ է նախապատիւ, եթէ և այլով ամենայնիւ զոյգ անուսին գտանիցի:

Դ. Քննեսցի ևս յորմէ հեռաւորութէ և յոր դիրս եղեալ իցէ գիտողութիւն իրին, և աչք պատմողացն որպիտի: Ի բազում հեռաստանէ կամ ընդ ալօտ կամ յանդէպ կայից՝ յոյժ այլ ընդ այլոյ տեսանին իրը. և որոյ ոչ առողջ իցեն տեսանելիք՝ բազում անդամ՝ զանդոյսն կարծէ տեսանել:

Ե. Ոչ սակաւ քննելի է ևս, որով մոտադրութեամբ իցէ եղեալ իրին զնուութիւն, և քանի ժամանակ: Վեր ՚ի վերոյ տեսեալ ինչ կամ յանցի, չլինիմք քաջ խելամուտ և դիւրեաւ պատրիմք:

Վ. Քննեսցի գարձեալ, թէ վկայն ինքն ինքեան միաբան իցէ ՚ի խօսս իւր: Զի եթէ յերեւելի ինչ հանգամանս ժամանակի կամ տեղույզ կամ օրինակի իրացն լինելոյ՝ ինքն ընդ անձին սուր ելանիցէ, չէ այնուհետեւ ամենեին արժանահաւատ:

Դ. Եթէ բազում վկայք կայցեն, մէն մի առանձինն ՚ի հարց և փորձ կոչեսցին; տեսանել թէ միաբանք իցեն: Եթէ անմիաբան նշաւակեսցին, կամ բան կապեալ ընդ միեանս ինքնին յառաջ մատուցեալ կան պատճել զիրսն, և զոյ տեղի կասկածելոյ՝ ՚ի նոցանէ զայն յօդեալ բաղայս. որոց և միաբանեալ ՚ի բուն իրսն՝ ոչ որպէս պարտն է հաստատեալ են ՚ի միջի զայս և զայն հանգամանս: Զսոյն օրինակ ՚ի վեր ել բարուր ստութեան երկուց ծերոցն չարախօսաց Շուշանայ: Եւ կամ չիք նշան ծածուկ դաւաճանութեան վկայիցն. և յայնժամ հաւանելի է պատմութիւն այնոցիկ, որ ըստնախասացեալ օրինաց հաւատարմագոյնքն երեւիցին:

Առաւել մեծարգի լինի բան վկայից՝ եթէ հաստատեացի ՚ի նշանաց որ ինքնին հաւաստեն զիրացն ճշմարտութիւն։ Եթէ զումեքէ սպանութեան վեաս իցէ, օգնէ յոյժ ՚ի պարտաւոր զնա յանդիմանել եթէ ինքն և կամ հանդերձն արիւնաթաթաւ գտցին, եթէ գործի սպանութեան նորա զէնն առ նմա ըմբռնիցի, եթէ գիտիցնեք սպանալիս արարեալ նորա կամ որոգայթ լարեալ և կամ կոռույ ընդ մեջ նոցա պատահեալ դառնութեամբ յառաջագոյն, և ծանր կասկած չարեաց. այսոքիկ ցոյցս տան յայտնի թշնամութեան կամ հզօր առթի դրգելոյ նմա յայն եղեռն։ իսկ առ ՚ի գատել զոք վեասապարտ գողութեան, օգնէ գտանել առ նմա, որպէս ասի, զնիւթյանցանացն՝ զդողոնն ասեմ կամ զդործիս գողութեանն։ կասկած յոյժ արկանէ և տեսանել զնա յանկարծ բարդաւաճեալ փառօք ՚ի վեր քան զչափ, ուր չիք յայտնութիւն՝ որով արդարութեան ճանապարհաւ այնպէս յանկարծակի մեծացեալ իցէ. կամ գիւրութիւնն գիտելոյ նմա քան զայլ զտեղի պահեստի գողունեացն և մուտ ՚ի ներքս գործելոյ. կամ ախտքն յորոց մարթ էր հրապուրել, և այլ սոցին նման բանք։ Բայց քանզի և այս նշանք սխալն, և սխալեալ իսկ են երեքն, արթնութեան զգաստ և արդար գատաւորի է այնուհետեւ գիտել զկշիռ իւրաքանչիւր նոցա առանձինն, կամ ՚ի միասին ընդ բանից վրկայիցն, և զչափ ստուգութեան կամ հաւանականութեան նոցա այսպէս կամ այնպէս։ Այս ամենայն զնոցանէ ասացաւ որ առաջի իւրեանց վկայեն լեալ զոր պատմենն, և կոչին ականատես և ականջալուր վկայք, ըստ որում զի կամ գործ են իրքն կամ բան։

Որք պատմեն ինչ յայլմէ լուեալ ոչինչ է նոցա յայնմզօրութիւն բանից, այլ յորոց լուանն։ Բայց և ՚ի սոցանէ առաւել արժանահաւատատ է խորագէտն դժուարախար, քան տիսմարն և գիւրահաւան՝ որ զամենայն ինչ անխտիր կլանէ, կամ այլ ընդ այլոյ իմանայ։

Սակայն որպէս զիարդ ինչ և իցէ վկայիցն յարդ պատմելեաց բանին, զայս վճիռ ունել սպարտ է՝ զի որում կարեմք ականատես լինել և հաւաստել մեզէն, լաւ է միշտ այնպէս առնել, մանաւանդ ուր ստուգագէտ իմացուածի ճշմարտութեան պէտք իցեն։ Բազում յարացոյցք են արդեանց իրաց յաննենդ և ՚ի խորագէտ արանց պատմեալ

որ ապա զիարդ և է օրինակաւ՝ կամ բնաւ սուտ են յան-
դիմանեալ կամ յոյժ օտար. թող զի բնական ստուգու-
թիւն՝ ուր մարթի գտանելը բնտրելի է քան զբարոյականն։
Զայն առնեն բնազնինք յարգասիս բնութեան. և այս-
պէս եղեւ յայս երկու յետին դարս այնչափ յառաջանալ
բնագիտութեան։ Որչափ և դիտողութիւնք կամ փորձք
աւանդեացին յայլոց, սիրեն նոքա անձամբ ընդ նոյնս ան-
ցանել, քան ՚ի բանս այլոց վատահ լինել. և իրաւամբք
դործեն, վասն զի և արք մեծամեծք և անուանիք բազում
ուրեք գիթեալ գտան ՚ի վրիպակ։

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Բ .

Պատմութիւն .

Պատմաքանիք զանազանելի են նախ ՚ի ժամանակակիցս
և ՚ի յետնորդս. ապա ՚ի ժամանակակիցաց անտի զանազա-
նելի են՝ որ տեսող եղեալ իցեն իրացն զոր պատմեն, և ո-
րոց ՚ի լոյց ևեթ առեալ։

Հաւատք ժամանակակից և ականատես պատմագրաց
նովին օրինօք է չափելի, զոր սակաւիկ մի յառաջ զակա-
նատես վկայիցն աւանդեցաք։ Քննելի է ևս թէ ՚ի ժամա-
նակս դրութեան վիպողին համարձակ էր յայտնի ասել
զՃշմարտութիւն, թէ ոչ։

Ցորժամ ժամանակակից ոք պատմաբան վիպէ ինչ ՚ի
լոյց զոր ինքն չէ տեսեալ, կամ յանուանէ ցուցանէ յորոց
լուեան է՝ ՚ի նոսա ապապարելով զհաւատս բանին, կամ
վկայ առնու զճայն հասարակաց։ Եւ աստ ՚ի դեպէ և այլ
իմն զանազանութիւն։ Կամ պատմեալն մեծ ինչ է և հրա-
պարակաւ եղեալ, որում բազումք իցեն ականատես գը-
տեալ. և պատմութիւն նորա հաւատարիմ է, եթէ ոչ ոք
՚ի ժամանակակիցաց զհակառակն ցուցանիցէ։ Զի չէ ինչ
հաւանելի թէ իշխեացէ ոք լու առնել այսր անդք ստու-
թեամբ նշանաւոր ինչ էր հրապարակաւ դիպեալ, առանց
ուրաւք զստութիւն նորա յանդիմանելց։ Եւ կամ զոր
պատմեն՝ սոսկական ինչ է և դուզնաքեայ, և չկլտամբել

ստութեանն յումեքէ՝ ոչ ինչ առաւելութիւն բերէ 'ի բանս նորա : Զի ահա և 'ի զրոյցս անցից առ մեօք անցելոց' բիւր հանգամանք գոտանին ընաւին սուտք կամ անհնարին այլափոխեալք, որոց ոչ ոք փոյթ առնէ հրապարակաւ ընդդիմաբանել :

Յետին պատմիչք ինքնին չունին ինչ կշիռ բանից, այլ յորոց հանեալ են զտեղեկութիւնս իւրեանց, 'ի ժամանակակից ասեմ' պատմագրաց, յաւանդութենէ և 'ի յիշատակարանաց : Վասն որոյ յորժամ' կրտսերագոյն ոք վեպագիր զըուցէ ինչ զոր հասակակիցքն լուեն, և ինքն չցուցանէ մեզ յորոց առեալ է զվելսն, յիրաւի զգուշալի լինիցի :

Այլ բաց 'ի գիտութենէ, յամբծութենէ, յանաշառութենէ և յազատութենէ ամենայն երկիւղի և մտահաճութեան և կողմնաւոր բարուց, նկատելի է յամենայն պատմագիրս և ոճ պատմութեանն : Եթէ իցէ 'ի նմա ընաւորական իմն աննենդ պարզութիւն, զարդարեալ միայն բնիկ պաճուճանօք, ընդ որս և ճշմարտութիւնն սիրէ միաբանել, առաւել արժանահաւատ գտանի, քան եթէ յաւելորդ ճարտարանս և 'ի սեթելեթս շուայլիցի, կարծիս տալվիւրոց քմացն անսալոյ քան ստուգութեան, և քմազարդ բանիք բերկրեցուցանել ջանալոյ քան ստուգախօսել :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Գ .

Յիշատակարանք ,

Յիշատակարան են համօրէն ամենայն նշանք անցելոց իրաց առ մեզ մնացեալք . զոր օրինակ կամանք, տաճարք, արքունիք, աշտարակք, կամուրջք, շիրիմք, արձանք, դըրամք, նկարք, դրօշեալք, պրտուեղէն թուղթք, դրչագիրք, մագաղաթեայ մատեանք, և այլն : Յերկուս դասս բաժանին . մի՛ յորս չկը ինչ յայտարարութիւն ժամանակի, և ոչ թէ յոր պէտս և զիարդ կանգնեալ իցեն . զոր օրինակ կամուրջ, կամար, աշտարակ առանց ինչ արձա-

նագրի . և միւս եւս՝ որ իբրև թէ ինքնին բարձեալ բերեն զպատմութիւն իւրեանց , որպէս արձանագիրք , դրամք , թուղթք , գրչագիրք :

Յիշատակարանք առաջին դասու ոչինչ նշանակեն , եթէ ՚ի պատմութենէ կամ յաւանդութենէ չիցէ յայտ ժամանակ , օրինակ և պատճառ կառուցմանն : Բայց լոկոյ աւանդութեան չէ արժան հաւատալ որպէս պատմութեան վիպագրաց՝ մանաւանդ ժամանակակցաց . որոց առաւել հաւատարմանան և հաւաստին զրոյցք՝ ՚ի յիշատակարանաց անտի : Խակ երկրորդի դասուն՝ կամ ինքնին յայտնի են և անկարօս այլում մեկնութեան , կամ միմինք են՝ որպէս բազում արձանագիրք , դրամք , նկարք , քանդակք , և այլք որ չեն քաջայալք , կամ եղծեալ են՝ ՚ի հնութենէ . սոքա ևս կարօտին աւանդութեան կամ պատմութեան :

Իսոսա երկու ինչ առաւել խնդրելի է . վաւերականութիւն և նշանակութիւն : Բազում արձանագիրք , դրամք , նկարք , քանդակք , սլրտուեայ թուղթք , գրչագիրք և մագաղաթեայ մատեանք հնարեցան երբեմն ՚ի խարերայից , և համբաւեցան իբրև վաղեմի ինչ , վասն որոյ մեծ զգաստութիւն և յոյժ հնագիտութիւն պիտոյ է ՚ի յանդիմանել զստապատիր նենդութիւն իրացն :

Յարձանագրաց և ՚ի դրամոց և ՚ի նմանեաց բազում այն է որ դժուարիմաց են յոյժ , և հմտութեան բազմի պէտք են և աստանօր ՚ի յաջողումն : Երկոցուն դոցա կան պարագ հնագետքն , կրթասէրք հնութեան , արք՝ զորս երբեմն յընչաց քերեն խրոխտ և թեթեամիտ իմաստակք . սակայն ճշմարիտքն իմաստասէրք շնորհ մեծ խոստովանեսցին նոցին . զի ՚ի նոցանէ մատակարարին մեզ բազում հմտութիւնք պատմութեան կրօնից , օրինաց , արուեստից և գիտութեանց վաղնջական ազգաց :

Յ Օ Դ ՈՒ Ա Ծ Դ .

Արանդութիւն .

Աւանդութեան զօրութիւն մեծ է և կատարեալ , յոր-
ժամ մեծ ինչ պատմէ հրապարակաւ եղեալ և աշխարհա-
լուր . իսկ 'ի փոքունս և յառանձնականս ոչ նոյնպէս . զի
թէպէտ և սուստ իցեն բնաւ կամ յոյժ այլափոխ , գիւրին է
նոցա անցանել բերանոյ 'ի բերան , և ծաւալել ազգեցազգ :

Եւ յիրս անգամ մեծամեծուն՝ հաստատուն աւանդու-
թիւնն հաւաստէ մեզ միայն զիրն մերկ 'ի մասնաւոր հան-
գամանաց . զի հանապազորդ փորձիւ տեսանեմք քանի փո-
փոխին իրք ընթանալով եեթ բերանոյ 'ի բերան , մինչեւ
բազում անգամ անծանօթ լինելոյ :

Թող զայդ , և 'ի հնութիւն աւանդութեանց պարտ է
հայել , և յազգն յորոց ելեալ են կամ առ մեզ կարգեալ :
Ըստ նորութեան աւանդութեանն և առաւել հաւաստա-
րիմ է , զի ոչ շատ այլայլի յերեսաց ժամանակին . ընդ հա-
կառակն ըստ հնութեանն նուազեն և հաւատք , մանա-
ւանդ 'ի հանգամանսն . զի առաւել եղծեալ խանգարի գա-
րուց 'ի գարս փոխելով :

Վակայն աւանդութեան հնութիւն ոչ 'ի սկզբանէ իւր-
մէ ցաւուրս մեր չափի , այլ մինչեւ ցամանակ երեւելոյ յե-
շատակի նորա առ մատենազրի ուրուք : Եւ 'ի սա պարտ է
ապաստան առնել թէ արժանահաւատ ինչ ոք իցէ . առ-
ոչինչ գրելով որ յետամուտ ինչ յաւելուածն իցէ կամ
հատեալ և կամ փոփոխեալ : Եթէ և յիշատակարանս ինչ
'ի մէջ առցէ մատենագիրն յաւուրց անտի իւրոց , որ ա-
պացոյցքն իցեն աւանդութեանն հաստատութեան , ար-
ժան է և զայն 'ի համարի հարկանել . թէպէտ և առ մեօք
ոչ ևս իցէ 'ի միջի :

Քննեսցի և բնութիւն աղգացն յորոց սկսեալ է աւան-
դութիւնն կամ առ այլս անցեալ : Վասն այսորիկ զաւան-
դութիւնս երիցագոյն ժամանակաց , որ կանխեն քան ըզ-
դիւտ գրայ և առասպելական անուանին , ոչ առ մեծ ինչ

ունիմք . զի ծնեալ են և սերեալ 'ի բիրտ և 'ի վայրագամիտ
աղամար աղինս , որ վազվաղակի յապուշ հարեալ սքան-
շանան ընդ որ ինչ ոչն իմանան , և նորանշան հրաշալի
հանդամանս զնովաւ արկանեն , ըստ սադրելոյ հիացեալ
մուաց իւրեանց : Եւ քանզի հնագոյն յիշատակք հանուր
աղմաց հաստատին յաւանութութիւնս դուժ և ճուաղաբա-
րոյ ժողովրդոց , որք յետ բազում ժամանակաց հաւաքե-
ցան 'ի գրչաց , ըստ աւանդիցն է և նոյց հաւատարմու-
թեանն չափ : Յայն աղագմ՝ բաց 'ի պատմութենէ աբրա-
համեան ժողովրեանս , որ ոչ միայն երկցւոգոյն է 'ի վէպս ,
ուստի և հուազ 'ի սկիզբն իրացն պատմեցելոց , այլ և զօ-
րաւոր հաւատարմութեամբ քան զընաւս և աներկբայ՝ աս-
տուածաւանդ գոլով , յայլսն ամենեսեան հազիւ նշմա-
րանս ինչ ճշմարտութեան թէ կարիցէ ոք 'ի միջոյ անտի
առասպելեաց գուշակել զսոսկ իրացն , և այն՝ եթէ երկելի
ինչ իրք իցեն : Այսմ զհետ կրթին որ զառասպելախօ-
սութեանցն վիպատանութիւնն առաջի եղին . յորս նշանա-
որ քան զամենեսեան դտաւ յայսմ դարի Պանիէ :

ԳԼՈՒԽ Գ.

ՎԵՏԵՐԱՆԱՌԻԹԻԿԱ ԴՐՈՑ ԵՒ ՑԱՇՏԱԿՎՐԱՆԱՑ

Իմասանց անտի դատողական արուեստին մի է և ընտ-
րութիւն՝ վաւերական ստոյդ և ինքնագիր զբոց 'ի ստոց
յանստուգից և յանյայտից , և անարատիցն՝ 'ի կրծատե-
լոց , յընդիտառնելոց և յաղաւաղելոց : Յոյժ կարեոր է այս
հմուութիւնն . զի մատեան որոյ անյայտ իցէ ստուգութիւնն
օրինակազրին , ոչ ինչ զօրութիւն ունի . և հարիւր մոլո-
րութեանց պատճառք լինի հարազատ և անվթար համա-
րել զմատեան ինչ ստոյդ կամ աղաւաղ : Եւ սակայն բիւր
են 'ի միջի ապացոյցք առ չարութեան և տգիտութեան
օտարութիւնն մակագրելոյ անբաւ մատենից յառաջ
քան շտապագրութեան գիւտ , որ եղև մօտ 'ի կէս հնգե-
տասան դարին , և 'ի ստոյդ օրինակս իսկ անհուն փոփու-

խութեանց խառնելոյ նովին տղիտութեամբ և չարութեամբ ընդօրինակողաց և այլոց :

Զօրէնս ընարութեան վաւերական և անեղծ գրոց 'ի ստոցն և յաղաւաղելոցն յերկար աւանդէ Յովհաննէս Քլէոք յիւրում՝ դատողական արուեստին . մեք շատասցուք համառօտել :

Արդ ա . մատեան որ 'ի հնագոյն գրչագիրս և առ երիցագոյն մատենագիրս այլում անուան ընծայի , այլոյ համարեսցի : Եւ եթէ համեմատեալ ընդ հին գրչագիրս կամ ընդ հատուածս բերեալս յառաջնոցն քան զմեզ՝ գտցին 'ի նմա կրծատութիւնք , յաւելուածք և այլայլութիւնք , ընդ խանգարեալն կարգեսցի :

Բ . Կասկածաւոր է մատեան՝ զոր ոչ յօրինողն ինքնին յայլ գիրս իւր և ոչ ժամանակակից ոք և մերձաւոր յիշատակէ . մանաւանդ եթէ իցէ 'ի նոսա տեղի , ուր սովորութիւն է նշանակել :

Դ . Խիթալի է ևս եթէ գտցին 'ի նմա կարծիք և բանք որ ընդ հակառակս ելանիցեն որոց 'ի հարազատ գիրս իւր ջատագով կայ նոյն այր , առանց ինչ յիշատակ ուրեք առնելոյ փոփոխութեան կարծեացն :

Ե . Եթէ գտցին 'ի մատենի ուրեք անուանք , քաղաքք , ազգք , իրք , գիւտք , բառք և ձայնք կրսերագոյնք քան զժամանակ կենաց կարծեալ մատենագրին , ընդ անհարազատ գրեսցի այն և ընդ աղաւաղեալս :

Ֆ . Ի նոյն սակի է եթէ ոճն աննման իցէ այլոց գրոց նորին կամ սովորական ոճոյ ժամանակին . և եթէ գտցի ինչ 'ի նմա զոր անհնար էր նմա գիտել , կամ թէ ախմարութիւնք՝ իւրում՝ անուանն անպատեհք և անվայելքականք :

Այս հասարակաբար յաղագս գրոց ասացեալ լիցի , և յաղագս նշանաց ստուգութեան նոցին և ստութեան՝ որ 'ի նոյն ինքն 'ի մատեանսն տեսանին : Ակայն մարթէ և այլ նշանս գոտանել 'ի ձեւոյ գրչագրացն և օրինակաց՝ 'ի հաւաստել գոնեա զհնութիւն նոցա , ըստ այնմ և զզօրութիւն նոցին :

Արդ գրչագիր և հրովարտակ և ամենայն իսկ պրտուեայք, թուղթք և մագաղաթք չհամարին ժամանակին՝ որում ասին , եթէ նիւթին կամ ձեւ տառիցն , և այլ ինչ այսպիսի յատուկ հանգամանք ընդդէմ ելանիցեն և չմիաբանի-

ցեն ընդ այնս զոր գիտեմք զայնու ժամանակօքն սովորեալ, կամ անհամեմատ գտանիցին այլոց յայտնի և ստոյգ դրչագրաց նորա՝ որ յանուան հայրն իցէ նոցա :

Յաղագս արձանագրութեանց, դրամոց և այլոց սոյնպիսի յիշատակաց հասարակ օրէնք ընտրութեան է՝ մերձեղեալ քննել զայնս առ այլովք հանդոյն վաւեր յիշատակարանօք ժամանակին կամ առ նմանիս ինչ նոցա : Եւ որպէս կանխեցաք վայրիկ մի յառաջ ասել, հմտութիւն բազում պիտոյ է առ այս, յոր առանց մեծի ճգանց հասանել ոչ է :

ԳԼՈՒԽ Դ.

ԹԱՐԳՄԱՆ ՈՒԹՏԻՆ ԳՐՈՅ

Ոչ սակաւ կարեոր է ժարդմանողականն արուեստ . զի անպատուղ լինի գրեանն, մանաւանդ թէ փոխանակ օգտակար հմտութեանց մեծամեծ մոլորութիւնք 'ի ներքս սպառդին, եթէ չգիտիցեմք ուղիղ 'ի վերայ կալ իմաստիցն : Բազում նպաստից կարօտ է արուեստու, զորս ցուցցուք յառաջագոյն քան զկարգ գործոյն :

Հարկ է առ գիտել տիրապէս զիեզու գրոցն զորմէ բուռն հարեալն է, իմանալ զզօրութիւն բառիցն, զդարձուածս ոճոյն, զսեփականութիւնս, զարտուղութիւնս, զյատկաբանութիւնս, և առ ձեռն ունել լնտիր ընտիր բառագիրս կամ քաջ մեկնիչս տարակուսանացն եղելոց :

Բ. Ունել զուղիղ և ստոյգ օրինակս նոցին գրոցն 'ի տիպ կամ 'ի գիր :

Դ. Գիտել զժամանակ, զհայրենիս, զհաւատս և զկրօնս, զվարս և զգործ պաշտաման մատենագրին առ բարուք խելամնւս լինելոյ մոտաց նորա :

Ե. Տեղեակ լինելսովորութեանց, բարուց և անցից ժամանակին և ազդին յորում գրեալ է . զի թերեսս ուրեք ուրեք առ նոսա ակնարկիցէ :

Յետ այսր ամենայնի օրէնք թարդմանութեան գրոց այս են .

։ Տեսանել զբուն գրուածն , իմաստասիրակա՞ն իցէ եթէ պատմական , քերդողակա՞ն թէ ճարտասանական , զուարձախօս և սժափակա՞ն եթէ ծանր և լուրջ , հասարակաց աւանդեալ գրով կամ ատենախօսութեամբ՝ յորս առաւել զգուշութիւն է , եթէ առանձինն ումեք հաւատացեալ , որպէս յընտանի թուղթս՝ ուր արձակ համարձակ մերկանամբ զխորհուրդս . արդեօք 'ի ժամանակս և 'ի տեղիս կատարեալ ազատութեան իցէ եղեալ գրութիւնն , եթէ ուր ազատ մատենագրութիւնն արդելեալ է . ինքնայրդոր և ըստ իւրում սրտի , եթէ այլոյ հրամանաւ և ըստ այլոյ ախորժակի . խորհրդով եթէ վարկպարազի և 'ի հարեանցի : Այս ամենայն քննութիւնք մեծապէս օգտեացեն հասու լինել հարազատ մոտաց գրողին և թաքուն զօրութեան իմաստիցն :

Բ . Զամենայն բառ և զո՞ճ մատենին առնուլ ըստ ճառին 'ի յատուկ և 'ի բնական միտս , ուր չգուցէ ինչ իրաւացի պատճառ յայլ միտս առնելոյ :

Գ . Առ քաջ խելամուռութիւն ասացուածոյն ուշի ուշով քննել զբովանդակ հիւսուածն , և մի սոսկ ինչ և առանձինն առնուլ :

Դ . Զերկբայելի և զմիթին տեղիս համեմատել ընդ այլ ազգակից բանս նոյն մատենագրի կամ այլոց , յորս իմաստըն տպաւորագոյնս երևիցին :

Ե . Ի բազում իմաստից յորս բանն հարկանիցէ՝ զայն ընտրել , որ ընտանեգոյն իցէ արժանի և հիւթոյ բանից և դիտաւորութեան մատենին , կամ մոտաց օրինակագրին զոր դիտեմք : Այս օրէնք են և յընարութիւնն ստուգագոյն ընթերցուածոց՝ ուր անմիաբան են օրինակք :

Վ . Զբան ինչ տարակուսելի կամ խրթին եթէ յառաջադոյն մեկնեալ իցէն սյլք , նախամեծար առնել զնոցամեկնութիւնն՝ որոց աշակերտ մատենագրին կամ մոտերիմ կամ հասակակից եղեալ իցեն , կամ առաւել պարապեալ թուիցին՝ հմուտ և խելամուտ լեզուին և ոճոյ նորա , և կամ տեղեկագոյնք կարծիցին իրացն . միայն թէ և յայլում ամենայնի զուգահաւասարք գտանիցին :

Կ . Արդար իրաւունքն պահանջեն յամենայն ողջախոհից զբանս մատենին թարգմանել միշտ ըստ կարի 'ի լաւագոյն միտս . մի ճախողակ ինչ իմաստ կամ կարծիս 'ի ներքս խառնել , մինչդեռ 'ի բանից անտի իւրոց ոչ է ան-

շուշտ հաւաստի : Եւս առաւել մի խեղաթիւրել զբաննսն
կամ ծեքել կամ փոփոխել բնաւ , և մի խոռել և օցտել
և վարատել՝ ի կարգէն՝ առ ՚ի կամակորել և վտարանդել
յօտար միտս . արուեստ՝ զոր յաճախ խորամանկեն նեն-
դաժետք , գրականութեան և իմաստասիրութեան արդա-
րի արհամարհանք և ժանտախտք :

ԳԼՈՒԽ Ե .

ԿԱՐԳ ԿԱՄ ՈՃ ՈՒՍՄԱՆ

Եթէ չդիտիցէ ոք զուղիղ կարգ ուսման , վայրապար
աշխատութիւն է ամենայն , և չհասանէ երբէք յանվրէպ
և ՚ի ստոյդ հմտութիւն :

Արդ ա . կարեւոր քան զամենայն է ճարտար և իմաստ-
նաբար բաշխել զիրն ՚ի մասունս մասունս ; Միտք մեր ան-
ձուկ է յոյժ և ՚ի սահմանի , և բազմաց միախուռն անտար :
Ապա առ մի նուագ մի ևեթ ուսումն առաջի դիցուք . և
յայն միայն , և յորս սերտ կապեալ են ընդ նմա՝ դար-
ձուսցուք զամենայն ջան և զմուագիւրութիւն : Որ ՚ի յո-
դունս և յօտարոտիս համանգամայն բուռն հարկանիցէ ,
փոխանակ ընդ ստոյդ հմտութեանց ամբարեսցէ ՚ի դլուխ
իւր խառնափնդոր շեղջակոյտ աղմկեալ գաղափարաց՝ չար
քան զոտիտութիւն :

Է . Զե յուսումն արուեստին կամ զիտութեանն ձեռ-
նաբեկեալ , կազմ պարտ է լինել ՚ի հրահանգս կարեւորս : Որ
կամիցի ոք ՚ի գրահաշխւ պարապել առանց թուականու-
թեան գիտելոյ , կամ ՚ի բնագիտութիւն՝ յերկրաշափա-
կան հմտութեանցն մերկ և լոկ , կամ ՚ի վիրաբուժից և ՚ի
բժշկացն ճարտարութիւն՝ անճաշակ ՚ի հանգամանաց
մարմեռոցն հերձանելոյ , կամ ՚ի քաղաքական և ՚ի հասա-
րակաց իրաւունս՝ բնական իրաւանցն բնաւ անհմտուտ , կամ
յայլ զինչ և պէտ գիտութիւն՝ առանց գիտելոյ նախ զբա-
նականն արուեստ՝ զամենայնի հիմն և զբանալի , որո՞ւմ
յառաջագիմութեան այնպիսին ակն ունիցի :

Ի . Յամենայնի վաղագոյն ՚ի ձեռն առնուլ զընտիր ըն-

տիրս 'ի գրենոյ : Որ ծրգեալ տարրանայ 'ի տոգորս թիւր սկզբանց և մատախաբութեանց տղէտ և թերաբան մատենից , կամ 'ի տարտամ իմաստոս խառնախօս աղջատաբան և խաւարին գրուածոյ առանցելոց մտաց , դժուարին եղիցի այնպիսւոյն 'ի բաց զմոլորութիւնսն դնել , կամ 'ի կարգ և յարդ վայելուշ ածել զհմտութիւնս իւր ։⁵⁴

Դ . Յընթերցումն և յուսումն գրոց անընդհատ մտադրութիւնն պիտոյ է , վասն որոյ և յամենայն սահեցուցիչ զբաղանաց ազատութիւնն ⁵⁵ : Որ վեր 'ի վերոյ անցանէ հասեխած լինելով իրացն , կամ զըօսեալ մոռօք յայլ հոգս , այնպիսւոյն թեթե իցեն և զաղփաղփուն հմտութիւնք , որոց 'ի սուղ ժամանակի 'ի բաց սրացեալ և անհետ և չի լինիցին :

Ե . Ի մտաւորաբար ընթերցումն այլոցն բանից խառնել և յիւրմեն մտածութիւնս . զհանուր ասացեալսն ածել զմանաւորօք . և զմանաւորսն 'ի նոցին նմանան . Ճշդիք քննել զսկզբունսն , հանել անտի զամենայն քաջայրմար հետևութիւնս , և այլս այսպիսիս : Դոյզն թեթեթք այսպէս մանր որոճացեալք՝ առաւել օպաւեացեն քան զմատեան մի բովանդակ վեր 'ի վերոյ շտապաւ հարեւանցեալ ⁵⁶ :

Վ . Զամենայնի պահանջել 'ի մէնջ զհամարս , և մինչ չել ինչ քաջ իմացեալ՝ չզնալ յառաջ : Առ որ պիտոյ է համեմատել զառաջնսն ընդ վերջինս . և ուր տարակուսանք իցեն անճողոպրելի , 'ի հարցփորձ քննութեան և 'ի խորհուրդ մտանել առ մեկնիչս և թարգմանս մատենին և յայլ նոյնաճառ գիրս , կամ գիտնոց և իմաստնոց 'ի հարցումն մատչել :

Հ . Առ նախակի ընթերցեալսն ստէպ դարձ առնել , վասն երկուց պատճառաց . զի զառաջինսն լաւ ևս իմանամք՝ յետ զվերջինսն ընդ որս լծորդ են տեսանելոյ , և զի ոչինչ օգնէ իմանալն եթէ յուշի ոչ պահիցեամք : Վասն զի զոր 'ի պէտսն ընդ միտ ածեմք , զայն յիրաւի թէ ոխտիցեամք . և որ յաճախ չյեղյեղի 'ի մեզ , դժուարաւ թէ 'ի խոր տպասցի :

Ը . Անվրէպ յուշ արկանելոյ զսահեալսն , 'ի դէպ է 'ի գրի հարկանել զայնս և քաղուածոյ համառօտութիւնս առնել : Կարեոր է այդ մանաւանդ 'ի գիրսն զորնախն ընթեռնումք յանցնիւր կարգի իրաց , զի 'ի փոքու ամփոփեսցուք զհիւթ և զիսմոր իմաստիցն . յայլ զուգաբան գիրս շատ է նշանագրել զնոր երեեալսն 'ի նոսա :

Ա. Կոյնապէս առ պիհնդ ՚ի մտի ունելոց զմերոյ մտածութեան գիւտս և զառ ՚ի յայլմէ ուսեալմն՝ քաջ ՚ի դէպ է խօսել զնոցանէ ընդ այլս . զի լաւ ևս արձակին այսապէս գաղափարք մեր և կարգաւորին։ Խօսակցութիւնն պատճառս տայ և նորանոր գաղափարաց , որ այլով օրինակաւ ՚ի միտ ոչ անկանին։ Բազում այն է զի և մտածութիւնք այլոց սատար լինին ուղղելոց զվրիպակս մեր , և ՚ի գիւտնոր տեսութեանց՝ որ զանց արարեալք իցեն կամ անկեալք ՚ի մէնջ։ Նա և վարժութիւն Շիշդ և յստակ կարգաբանութեան իմստից , ինքնին շահ մեծ է :

ՊՐԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՔ

Ամենայն մոլորութեանց երկու են պատճառք . չվարել բանիւ և չարւոք վարել : Որ անհմուտ զիրացն դատաստան առնե՛ չվարի բանիւ . չարաչար վարի՝ որ առանց բաւական հմտութեան առնե՛ դատաստան , իմա առանց մանր քննելոյ զսկզբունա իրացն կամ ուշիւ խորհելոյ զիրաւ հետեանս նոցա : Ի դիւր արթնամիտ զգուշութեան համառօտեսցուք աստանօր զզանազան պատճառս երկոցունց արմատոց մերոյ սխալանացս :

ԳԼՈՒԽ Ա.

ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՔ ԲԱՆԻՒ ԶՎԱՐԵԼՈՅ

Բազմաց որ 'ի բանիւ ոչ վարելոյ յառաջ գան սխալմունք , առաջին՝ թերեւս և մեծագոյն արմատ են կանխաժաման օրէնք և սովորութիւնք մտաց մանկութեան : Զիք ոք ազատ 'ի նոցանե՛ , և երկու են նոցա գլխաւոր պատճառք . խակ միտք մասաղ տիոց և անկարդ դաստիարակութիւն :

Առ ժամանակ մի հոգին գրեթե բովանդակ հարեալ հատեալ է 'ի զգայութիւնս , և ոչինչ այլ գործե բայց խառն 'ի խուռն շտեմարանել աստի և անտի ծանօթութիւնս և գաղափարս , իբրև 'ի համբար իւրոց հմտութեանց : Օրինակ իմն որպէս ոք զի կամեցեալ թանգարան շինել բնապատմութեան , սկսանիցի կուտել անխտիր ազգս ազգս արարածոց , առանց դասակարգս ինչ 'ի նոսա յօրինելոյ :

Առ. Փոքր փոքր գայ ՚ի մտածութիւն, և սկսանի կարգ դնել
՚ի կոյտ ծանօթութեանցն և գաղափարաց : Ա.Յ.Լ զի չե է
սովորեալ մանրախոյզ լինել առենայն կերպարանաց իրաց
և խելամուտ նմանութեան նոցա և աննմանութեան, բա-
զում անգամ և հարկն կամ ընական անհամբերութիւնն
սոտիպէ դատել ըստ նախ երեւութին, բազում ինչ զորս
պարտ էր բաժանել միաւորէ, և որոց արժան էր միանալ
անջատէ : Եւ այսպէս ստեղծանէ իւր անհամար դատմունս
թիւրս, որ յաճախ յեղյեղեալ ՚ի սովորութիւն դառնան,
և բազմաժամանակեայ ընդելութեամբն զՃշմարտութեան
զօրութիւն առնուն, մինչև մոռացեալ ապա զսկիզբն նո-
ցին և զծնունդ, և ՚ի հարուստ ամաց տեսեալ զնոսս յան-
ձին, բնատուրս և ընդածինս կարծէ :

Իսկ թէ քանի աճեցուցանէ զծուռ. դատմունս վատ-
թար դատիարակութիւնն, անմարթ է ասել: Ի տղայ
հասակի գրեթէ ամենելքեան եմք ՚ի ձեռոս դայեկաց և
կենցաղակից դայեկատոհմ մանր մանկտույ և այլոց հա-
սակակցաց, պարզ ասել ընդ մոտամոլորս և ախմարս, որ
դպաւորանս մտաց իւրեանց հեղեալ ՚ի մեզ՝ անթիւս ստուա-
րացուցանեն զմերման : Ահա մի յառաջնոց անտի կանխա-
մուս սովորութեանց աղայութեան է կարծիքն հոտոց,
հսմոյ, ձայնից, դունոց, ջերմոյ և ցրտոյ ՚ի բուն իսկ ՚ի
մարմինսն լինելոյ ըստ զգայութեանցս : Հակամիտութիւնք
կամ սիրելութիւնք և անսիրելութիւնք և այլ այսպիսի
որակք, զորս Ճեմականք զնէին անկենդան իրաց, և տա-
կաւին դնէ ռամիկն մինչև ցայսօր, ՚ի նմին արմատոյ են :
Անվրէալ և անդարձ ճակատագրին զառանցանք՝ յորմէ ա-
մենայնի բաշխոյք ելանիցեն, սիրիմ և բարերար բախ-
տի՝ որ զամենայն աստի պատահարս ՚ի բարի և ՚ի չար տնօ-
րինիցէ, զոր յոլով իմաստասիրաց ընկալան աղանդք, ո-
րում և խաժամումն անսայ տակաւին, նորին ընոյ են շա-
ռաւիդք : Քաջք և ճիւալդք և այլ ևս խուճաւլք և բան-
դագուշանք ցնորից, բարոյ և չարի ազդեցութիւնք ՚ի մո-
լորակաց և յաստեղաց, բիւրաւոր դաղտնի զօրութիւնք
որ ՚ի տունկս, որ ՚ի հանս, այս ամենայն ՚ի նմին ականէ
բղիսէ : Անտի են և կարծիք բնաւոր ազդեցութեանց, ըն-
դարոյս առածածից, կապելոյ հոգւոյն և աղապատանաց,
ներքին թելադրութեան մտաց սադրելոյ, սրտին գնալոյ
կամ վկայելոյ . կարծեալ արգասիք անյայտ պատճառի, որ

բաց 'ի մէնջ 'ի մեզ ինչ ազդիցէ: Անտի և այնքան մոլար վճիռք արգարութեան և անօրէնութեան, իրաւանց և անիրաւութեան, պատճառաց պատուոյ և անպատուութեան, շնորհաց ազնուականութեան և ճոխութեան, իշխանութեան յափշտակելոյ կամ փոխարէն շորթելոյ և գրաւելոյ և վրէժինդրութեան և այլոց յոդունց. որոց արդիւնքն 'ի գործ եկեալ՝ զգարս և զբարս բազմաց բովանդակ վեր 'ի վայր հարեալ կործանեն: Անտի դարձեալ և բիւր աղճատանք 'ի պատճառս արգասեաց բնութեան, և հազար խեղաթիւր օրէնք և սահմանք ոչինչ պակաս յիմանալի և 'ի բարոյական աշխարհի քան 'ի բնականունն և 'ի զգալո՞յ:

Այս ամենայն թիւր դատաստանք յայտնապէս 'ի բանիւ չվարելոյ գան յառաջ, այս է 'ի սովորութեամբն դատելոյ՝ ինքնօրէն և անքննաբար իբրև զանշունչ ինչ կազմած: Եւ զի ամենեքին 'ի նոյնս եմք սովորեալ՝ որ շատ և որ սակաւ, և ըստ անյայտութեան կամ խոր մոռացութեան սկզբան նոցա՝ առաւել ընդ կարծեօք դնի ուղղութիւն նոցին, ապա որում սիրելի է ճշմարտութիւն՝ մի հաւատասցէ կանխակալ օրինաց և սովորութեանց մըտացն, այլ մի առ մի յատեան քննութեան կոչեալ զնոսա, ապա թէ հաստատեսցի 'ի նոսա: Այն թէ իմ յամենայն ժամ զայն խորհեալ է, և հանապազ զայս առած կալեալ, մի հաստատութեան տացէ հաւատիս խորհըրդոցս, այլ մանաւանդ պատճառս երկմոռութեան և ճըշդագոյն հարցափորձի ⁵⁷:

Երկրորդ՝ բանիւ վարելոյ ոսոխ կայ բազում անդամ՝ կապիլն սովորութեամբ 'ի բան վարդապետին: Օրէնք էին առ պիթագորեանս՝ այնպէս պինդ ունել և պաշտել զկարծիս առաջնորդին իւրեանց, մինչեւ զամենայն երկեան և զվեճ մի միայն Նոտաց լուծանէր առ ժամայն: Նոյն և Ճեմականաց էին օրէնք, յորմէ հետէ արիստոտելէան մատեանքն մատնեցան 'ի ձեռս արաբացւոց: Ամերրուս մի 'ի բազմաց՝ այնքան երկիւղածութիւն կալաւ առ Արիստոտէլ, զի կատար ամենայն ճշմարտութեան կոչէր զբանս նորա, և ըզչափ մոտաց նորա սահման դնէր մարդկեղէն գիտութեան: Վասն որոյ զայնքան դարս անդադար եղեալ իմաստասիրացն 'ի յոյզ և 'ի խնդիր՝ ոչ եթէ ընութեան իրաց, այլ կարծեացն Արիստոտէլի և բառիցն թարգմանութեան, և

ոչ ոտնփոխմի արարին յիմաստասիրութեան, որպէս ասացեալ եմք, և անքակ մնացին 'ի հայրենաւանդ հնացեալ քացախուտ մոլորութեանցն :

Սակայն երկու ինչ խտրելի է 'ի բանս այլոց. այն թէ զանտի իմանալեացն իցեն ինսդիրք կամ զաստի զգալեացս, և այն թէ զարդեանց ինչ իրաց կամ թէ զմտաւորականց : Ի դերաշխարհի իրս, որ զհաւատոց և զկրօնից վարուց աստուածայայտնութիւնք են բանիւ աստուածեղէն տառիցն և յԱռաքելոցն կամ 'ի նոցուն ամոռուակալացն տուչութենէ, և կամ եկեղեցւոյ դատաստանաւ վճռեալ, ամենայնն հաւաստի համարեսցի մեզ, իբրև յանխաբեւոյն Աստուծոյ երաշխաւորեալ: Այլ քանզի Աստուծոյ այն էին կամք 'ի դիրս սուրբս՝ ուսուցանել մեզ զջմարիս բարեպաշտութեան կրօնս և զվարս, և ոչ եթէ զզգալեացս բնագիտութիւն, զի զսոսա մեզ ետ 'ի զբաղումն և 'ի քննութիւն ըստ Ժողովոյն ⁵⁸. ապա ոչ ուղիղ գործեն՝ որ միանգամբ ջատագով բնագիտական կարծեաց իւրեանց դրդեալ յարուցանեն և առնուն բերեն զբանս աստուածատուր գրոյն, ըստ որում երբեմն պաշտպանքն անշարժութեան երկրի: Ի զգալիս, եթէ զարդեանց իրաց են ինսդիրք, հաւատք ըստ արժանի իւրաքանչիւր չափեսցին օրինօքն 'ի հինգ պլակին աւանդեցելովք. իսկ ուր զմտաւորականաց իցէ բանն, ոչ պակուցանող մեծութիւն անուանց, այլ զօրութիւն փաստիցն է կշռելի ⁵⁹: Յայնժամ միայն 'ի մտաւորականս օրէն է երեսս առնել այլում, յորժամ մեզէն քննել զայնս ոչ ատակեմք առ չզիւտ ժամանակի և կարեւոր հմտութեանց: Ի բանակուուել բազմահատոր մատենից՝ շժամանէ ոք անձամբ զնովիմք գալոց, զի դատաստան արացէ. կալցի յայնժամ զկարծիս այնոցիկ՝ զորոց գիտէ զբննութեանն փորձ քաջութեան, զհմտութիւն և զանախտութիւն հօգույն: Անհմուտն երկրաչափութեան և գրահաշուի չմարթէ ինքնին տեսանել զապացոյցս չափաբերական խորին ճշմարտութեանց. թող ապա հաւաստացէ 'ի միաբան հաւանութիւն հմտիցն և տեղեկաց :

Իսկ ձայնի ժողովոդեան քանիօն իցէ զօրութիւն: Լսեմք զօրհանապազ թէ կոյր է ռամիկն և տխմար, և թէ խառնաղանձնն կարծիք յոչինչ են համարելի. իսկ սևիմք ևս զվաղնջական ասացածն, Զայն հասարակաց ձայն է Աստուծոյ, որ է ասել թէ մեծազօր է յոյժ: Աստ ևս պատ-

շաճ է զանազանել զմտաւորականսն յարդեանց իրաց : Յարդիւնս իրաց , որ ինքնին մերկապարանոց կան , և ըաց 'ի զգայարանաց չպահանջեն ինչ , ծանրակշխո է յոյժ բան ժողովրդեան : Իսկ յորս պահանջի մանրակրկիտ դիտողութիւն կամ այնչափ կազմութիւն հմտութեանց , յոր չէ սովոր խաժամուժն , ձայն սակաւ արանց գիտնոց և ըզգաստից՝ առաւել է քան զուամլին : Յիմացականս կամ 'ի դիւրին մտաւորականս , յոր խելք միայն հերիք են , այս ինքն հասարակաց բանաւորութիւն , մեծ են խօսք ժողովրդեան : Իսկ 'ի դժուարինսն և որ բազում հմտութեան և խորհրդոց կարօտին , անուսմանցն կարծիք ռամկականք ոչ առ մեծ ինչ են դրելի , վասն զի սովոր են 'ի մոլար և 'ի պաշարեալ մոտաց գալ յառաջ :

Երրորդ բանիւ չվարելոյն մոլորութեանց՝ կողմնաւոր կամք և մարդահաճութիւն են պատճառք : Դժուարին է յամենայնի հարթայարմար հաւասարութեամբ կալ անմէտ և անաշառ . է ուրեք՝ ուր ցանկութիւն շահից կեկծս 'ի կեղծս եղեալ բիւր կերպարանօք արդարութեան , ուղղութեան , պարտուց և պատուոյ , և է ուրեք ուր գութ բարեկամի և աղքայնոյ , հայրենակցի և ուսմնակցաց սէր , կամ զովողաց ընկերչակութիւն , է զի չնորհ երախտաւորի և մտահաճութիւն ընդ ումեք , և է զի ատելութիւն , հոգի հակառակութեան , նախանձ և խեթ չար զումեքէ , և այլ երբեմն հաճոյք քմաց կամ աւելորդ խնամոյ փոյթ և ջան , կամ կամակոր յամառութիւն , թեեկն ածել տան մրոյ կողման , ակն առնուել և պաշտօն առնել , յախորտի կալ կռուել 'ի վերայ նորա և անքակելի կապել ընդ նմա . մինչեւ ապա ոմանք յանճոռնի և յանհեղեղ խակութիւնս և յանհարթութիւնս այլանդակին , 'ի մոլութիւն և 'ի բանդագուշանս հատանին և 'ի փոխելութիւն դառնան : Այսպիսեաց սովորութիւն է զամենայն հակառակ փաստ արհամարհել . նշկահեն և անկուշեն , և լսել անգամ կամ ընթեռնուել չառնուն յանձն , կամ չլուելոյն առնեն : Իսկ արդ որ զամենայն դուրս ճշմարառութեան ընդդէմ դնիցէ , յայն նմա հասանել զիա՞րդ իցէ . որ կամաւ զաշսն կափուցանէ , և զամենայն նշոյլ 'ի բաց հերքէ , զիա՞րդ զըստ տեսանիցէ : Ապա ջան 'ի մտի դնել և պէտ յանձին ունել պարտ է , ամենայն զօրութեամբ 'ի բաց փախչել 'ի կուտակցութենէ և յակնառութենէ և 'ի սուտակապատու-

թենէ, և զանձն կազմ՝ և պատրաստ ունել յընդունելու-
թիւն ճշմարտութեան, ուր և գտանիցի : Եւ քանզի գը-
ժուարին է հարթ պահել միշտ զայս անաշառութիւն, 'ի
կողմ չելանել, չխօսել չնորհուկս առ ականէ կամ թի-
կունս տալ, և անըմքոնելի կալ 'ի մոտահաճութեանց,
պարտ է գէթ անդարձ վճիռ անձանց սահմանել մի առ
կողմնաւոր կամաց և երեսաց վասն՝ վերջանալ երբէք 'ի
քննելոյ զիաստա հակառակ կողմանն, կամ շողոմն և կամ
հեծուկս ումեք առնել. այլ յոր կոյս առաւել գտանիցին
հաւասարիք, յայն զմոտացն մէտ խոնարհել:

Չորրորդ խափան բանիւ վարելոյ է մեզ՝ տնկակից պղեր-
պութիւնս : Արջամիտ հետազօտութիւն խնդրոց վասն ու-
ղիղ դատաստանի, տաժանաց և աշխատութեան իրք են,
մանաւանդ եթէ բազմակինձիոն և դժուարահաս ինչ լինի-
ցի : Իսկ մարդ կարծոգի և անժուժկալ քրտանց, զոր ընդ
իւր բերէ այսպիսեաց հետաքննութիւն, երբեմն և ապա-
ժաման՝ առ չգոյէ հմտութեան և օճանի, է ուրեք՝ զի և
յայլ իրս զբաղեալ և ցնդեալ և անպարապ բարեարեալ,
բան 'ի թերեւնն կալ և տարտամութեամբ տատանել հապ
յանձն առնու անխոտիր զիարծին զոր առ ոտսն գտանէ, և
անհանճարաբար օտարին բանից զունկն 'ի ներքոյ դնէ :
Ապա զինչ զարմանք, եթէ բազմաց բազում կարծիս յան-
ձին կալեալ է՝ առանց զպատճառուն գիտելոյ : Ավկայն ա-
նաշառատես ճշմարտամէրն և բարույն նախանճախնդիր՝
ոչ այնպէս առնիցէ : Հարցափորձք փաստից յընտրութիւն
դատաստանի՝ իցեն թէ քաջ տաժանելի, սակայն բազում
անգամ ոչ որպէս կարծեմք . և ըստ յառաջել 'ի հմտու-
թիւն և 'ի հրահանգս բանին; դիւրի և յաջողէ, և լիուլի
գտանէ զիոխարեւնսն 'ի հեշտութեան հմտութեանցն, որ
այնչափ մեծ եղիցի՝ որչափ դժուարահաս հմտութիւնքն
իցեն : Իսկ եթէ ոչ առ վեհերութեան ինչ և դանդաղկոտ
հեղգութեան՝ որ չպարտին բնաւ երեւել 'ի մեզ՝ այլ այ-
լովիւիք խափանիցիմք 'ի զգուշաւոր ըստ արժանի քննու-
թենէ, հաստատուն օրէնք եղիցին խոհականութեան՝
յերկրայս թողուլ և չափաւորել զդատումն, ոչինչ հա-
ւաստի համարել, եթէ սոսուգութեամբ ակներև ոչ իցէ,
կշիռ կալեալ զպայմանս կարծեաց և հաւանութեան, ըստ
չափոյ պայմանի հաւանիականութեան յառաջիկայ իրսն
նշմարելոյ :

ԳԼՈՒԽ Բ.

ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՔ ՈՒՂԻԴ ԶՎԱՐԵԼՈՑ ԲԱՆԻ

Պատումն իրաց առանց մանր քննութեան պատճառացն կամ թիւր և անտեղի հետեանաց յառաջըերութեամբ, զեղծանել կամ չարաչար վարել ասի բանիւ խառնավար զմիտոն արարեալ, որ 'ի բազում իրաց լինի: Առաջին՝ առ 'ի չգոյէ հաւաստի ծանօթութեանց և գաղափարաց, զոր Փոնտիլեաք համարի միայն պատճառ ամենայն մոլորութեանց: Պակասեն երբեմն 'ի հաւաստեաց և գաղափարք գոյից, բայց առաւել անմարմին ծանօթութիւնք իմանալի և բարոյական էակաց: Նոյն իսկ հանգամանք ստանալոյնոցա, բաւական ցոյցք են յոլովիցն թերի գոլոց 'ի հաւաստեաց: Լսէ մանուկն, զի զմարմին փայլուն և գեղին՝ ոսկի անուանեն. զառաջինն ոչինչ աւելի իմանայ ընդ ճայնիւր. ժամանակաւ թերեւս հասանէ և այլոց յատկութեանցն. այլ մինչև ոչինչ իմանայ ոսկի քան ըզմարմին փայլուն և գեղին, զիարդ կարասցէ խորհել և խօսել անսիսաւ 'ի վերայ նորա: Նոյն բանք են և զանանձնաւոր ծանօթութեանց բարոյական էակաց, և առաւել: Տեսանէ տղայն զի գաղանաբար վրէժ առնու ոք զանարգանացն, և ազնիւ և գովեստ յընկերացն լսէ. տեսանէ և զայլ ոմն անոխակալ և անքինահան համբերեալ թշնամանաց, և իրեւ կնատ և անարի վատասիրտ այսին և ծանակ եղեալ. և առեալ յօդաւորէ 'ի միտս իւր զպատիւ ընդ ոգւոց վրէժինդրութեան, և զանարգանս ընդ անյիշաչար հեղութեան: Լսէ խորագէտ կարդացեալ զբազմահնար ճարտարամիտն 'ի խորամանդել, պերճ և փառացի զօցտողն և զվատնիչ արարոց, պատեայ և իրահամարձակ զդիմագրաւեալն խենթաբար և խիզախ յամենայն վտանգս, փլիթ անյարիր և քնած զզգուշաւորն 'ի յանդգնութենէ: Այսու իմաստիւք զո՞ր դատաստան ունիցի առնել յաղագս ճշմարիտ պատուց և անարգութեան, խորագիտութեան, առատութեան, քաջութեան և երկիւղի: Եւ սակայն բա-

զումք՝ ի բարոյական ծանօթութեանց այսու ոճով ստեղծանին՝ ի տիս մանկութեան, և անմեկին մնան առ բազումն զամենայն աւուրս կենաց իւրեանց։ Յայտ ուրեմն է թէ յառաջ քան զգոյից ինչ դատաստան առնել քանի կարեոր է հոգ տանել հաւաստի և անվրէալ դաղափարաց, և յառաջ քան զբարոյական էակաց ինչ խօսել ուղղութեան ծանօթութեանցն, քննելով զշմոյից արանց սահմանս՝ ի վերայ բառիցն, և զգաղափարսն ընդ նոսին՝ ի նոցանէ կապեալս։

Երկրորդ պատճառ ոչ ուղիղ վարելոյ բանիւ՝ է զեղծանել ընդհանուր և խմանալի օրինօք և սկզբամբք։ Այր իւրաքանչիւր իմանայ ինքեան առածս և վճիռս հանրականս, և զմասնաւոր դատմունսն ըստ նոցին ուղղէ։ Երրեակ են այս օրենք, ասէ Քոնտալյլեաք. ընդհանուր առածք յամենայնի անվրէալ ճշմարիտք, առածք ուրեք ուրեք ճշմարիտք՝ այլ առ ամենայն՝ ի գործ արկեալք, և համեմատութիւնք ինչ տարատամք երեւութացեալք յիրս իրս՝ ի սպառայլաբունս։ Յառաջին կարգէ են առածքն, բոլորն մեծ է քան զմասն, Զմարթի իմիք լինել և չլինել միանգամայն, և այլք. որ թէպէտ՝ ի մոլորութիւն ոչ տանին, բայց ոչինչ օգտեն՝ ի հմտութիւնս մասնաւորաց, զի նոքա ՚ի սոցանէ բղիւեն մանաւանդ։ Յերկրորդ դասէն է օրինակ իմն կարդեսեանցն օրենք, թէ զամենայն որ՝ ի պայծառ և ՚ի յըստակ դաղափարի իրիք բովանդակի, մարթ է հաստատել զնմանէ. զորոյ զթիւրութիւնն տեսաք յառաջագոյն (յէջ 412)։ Յերրորդ կարգի այն է, զի զգործոց հոգւոյ մարմնապէս խորհին բազումք, որպէս եթէ հոգի և մարմին ոչ ինչ ընդհատք էին։ Ապա մինչ չե զընդհանուր օրէնսն՝ ի վերայ մասնաւորի՝ ի գործ առեալ, յառաջագոյն քննեսցի հաւաստեաւ, եթէ արդեամբք պատշաճիցինմա. և եթէ ոչ, այլով օրինօք ուղղեացի դատաստանն։

Երրորդ պատճառ՝ հապճեալ շտապ դատելոյ։ Բնակաւոր կարճմտութիւն և անսաիրելութիւն վաստակոց՝ որ պահանջին՝ ի խնամոտ քննութիւն իրացն, նկատել ըստ ամենայն զննելի մասանց, համեմատել ընդ սկիզբն նոցին, և կըռադատել զհետեւութիւնսն, պատճառք լինին մեզ բազում անգամ ըստ աչս և ըստ առաջին կերպարանացն դատաստան առնելը. և զի բազումք՝ ՚ի սոցանէ պատրանք են, սխալէ և դատումն։

Չորրորդ պատճառ՝ պաշարմունք մտաց և ախտք : Ուրիշնեն ախտք, ասեր Պլատոն, գերի է բանն . և Պլուտարքոս իմաստութեամբ առակէ զնոսա 'ի գունաւոր ապակիս, որ զամենայն ինչ ըստ իւրեանց երանգոցն ցուցանեն : Աղէ հայեաց գամ մի յերկուս բանակուիւ մարտուցեալս . իւրաքանչիւր յիւր կողմն կարծէ զիրաւն, վիճի և անհնարին համարի թէ ոչ ակն յամսդիման տեսանիցեն ամենեքեան զիրաւունս իւր : Աակայն բազում այն է, զի կողմանքն երկորին հասարակ սխալեն . վասն զի իւրաքանչիւր ըստ ազդեցութեան ախտիցն այնպէս նկատէ զիրմն : Պատկերք զոր ճարտարեն ոմանք 'ի խաղ, աստի գէմք մարդոյ, անտի կերպարանք կապկի, ժանիք առիւծու կամ արջոյ խալամ, եթէ ընդ մի կոյս հայեսցի ոք 'ի նոսա և ասացէ՝ թէ մարդ է, և միւսն ընդ այլ կողմն և ասասցէ թէ արջ է, այր իւրաքանչիւր զիւրն իրաւացուցէ, և զարմանք թուիցին՝ թէ այլ ոք այլ ինչ ազդ գատիցի : Կազեսցին, զրապարտ արասցեն զմիմեանս խենթ և խելար, կոյր և մոլի, գժմիտ, պանդոյր և ախմար . և երկորեան անիրաւ գտցին, զի զայն պատկեր չիք ասել ճշմարտութեամբ՝ ոչ մարդ և ոչ արջ, այլ ստեղծուած ինչ խառնակ և անտիպար ըստ քիմ :

Բազմապատիկ շացուցանեն զմեզ ախտք . մերթ զօշաքաղութիւն և անձնահաճ կամք ճշմարիտ կարծեցուցանէ որ ինչ յօգուտ մեզ է . մերթ ամբարհաւաճութիւն և զանձն առ գիտունս ունել անդէն գատաստան 'ի վերայ տայ ածել անքննաբար . է զի ատելութիւն և գրգռութիւն ընդ այլս, հեռ և մախանք և արհամարհութիւն, զամենայն ինչ զնոցա ծուռ և խօլ և անշնորհ ցուցանէ : Արժան էր առ այս ընթեռնուլ զճուսագոյն բանս մատենագրի Աբուեստին խորհելոյ որ 'ի քսան գլուխ երրորդի մասին :

Որ ինչ զախտիցն ասացաւ, և ամենայն մտահաճութեանց 'ի գէպ ելանէ : Յառաջագոյն 'ի վեր անդք ցուցեալ է, զի կողմնակցութիւն և աշառանք բազում անգամ արգելուն զմեզ 'ի բանիւ վարելոյ, խափան լինելով անակնառու քննութեան փաստից երկաքանչիւր կողման : Բայց թէ բանիւ վարելոյ ոչ ինչ արգել լինիցին, աակայն 'ի բարւոքն վարելոյ գոնէ արկանեն և ստերիւրեն : Որ պաշարեալ մտօք 'ի քննութիւն մատչիցի իրաց, զօրաւոր թուին

նմա իւրում մնացն հաճոյականքն , և հակառակքն՝ քան
զոկարսն տկարագոյն ⁴⁰ : Ապա հարկ է յոյժ ՚ի դատելն
ինչ յամենայն ախտից և ՚ի կանխակալոյ սովորութեանց
մերկանալըստ կարի և ՚ի բաց թօթափել : Որում օգտի
ինչ յոյս կամ ցանկութիւն է յայսմ քան յայնմ կող-
ման գտանելոյ զջմարտութիւն , անդ կարծէ գտանելու ուր
կամին , թէպէտ և նա ՚ի միւսում կողմանն իցէ :

Հինգերորդ պատճառ՝ երեակայութիւն : Սոլորու-
թիւնք զանմարմնոց , զԱպառւծոյ ասեմ և զոգւոց և որ նո-
ցին տակի , սկիզբն անտի առին առաւել ըստ սրբոյն Աւ-
գոստինոսի , զի զոր իմանալ միայն վայել էր՝ կամեցան
մարդիկ և մոոքն նկարել . վասն որոյ եղին նոցա մարմնա-
ւոր կերպարանս և հանգամանս իբրև զմարմնոց : Գոյա-
ցական և իմացական տեսակք , դաշտնի որակք Ճեմակա-
նաց և այլքիւր այսպիսի անուբջք և երազք , նոյնպէս
անտի եկին յառաջ , զի յանդոյլոց կամեցան յերեոյթ ածել
մնաց՝ էռութիւնս և բնութիւնս , և զանմարմին տեսակսն
մարմնակերպ զգեցուցանել :

Վեցերորդ պատճառ՝ զեղծումն օրինակաց : Ի տագնա-
պել ուրուք խելամուտ լինել անօսր ինչ և խորին իրաց ,
որոնէ այլ ինչ ընտանի և նման նմա , և ըստ այնմ դատի
զնա : Ավակայն դուն ուրեք երկու ինչ ամենեին նման մի-
մեանց դտանին , մանաւանդ յայլասեռմն . և հազիւ ոք ՚ի
միոյ ՚ի միւսն գուշակութիւնս բերէ , թէ չմոլորիցի կամ
դէթ չգթիցէ ⁴¹ : Վասն որոյ թէպէտ և ՚ի դէպ է օրինա-
կաւ վարել ՚ի դժուարինան ՚ի լուսաւորել զմիտս , զգուշալի
է չդնել յօրինակսն ապացուցական զօրութիւն , որ չիք ՚ի
նոսա . առակ իսկ է առ մեզ , Օրինակ ոչ է փաստ :

Եօթներորդ պատճառ՝ պիտակութիւն նշանակաց և
նմանաբերութեանց : Աստի դոյացան գրեթէ ամենայն
մոլորութիւնք և բարբաջք ախտարմոլաց և ոսկեխոյզ տար-
րալուծից : Աստեղատուն մի է յերկինս , զոր ոմանց հա-
ճոյ թուեցաւ կշիռ անդւանել . որ թէ կշոյ նմանի , ապա
ոչ ինչ ընդհատ և հողմաղացից , ըստ նրբաբանելոյ մա-
տենագրի Արօւեստին խորհելոյ . իսկ արդ կշիռն նշանակ
է արդարութեան , ուրեմն , ՚ի վերայ բերեին ժամաբաշլս
ախտարմոլք , որ ընդ նովին տանուտերամբն ծնանիցի ոք ,
արդար լինիցի : Արէս , որ է Հրատ , պատերազմնոց է աս-
տուած . ապա որ ծնանիցի ոք ընդ Արիսին հայեցուածով

մարտիկ եղիցի. և այլ ինչ ևս : Գտաւ, յաւելու նոյն այր, և որ երազեաց ոք թէ սրածութիւն զրուանեան ախտ է. և զհետ երեր, թէ որ զցաւն զայն ջերանի, բուժի՝ եթէ զուլամըն կախիցի կոտոր մի կապար՝ յոսկեխոյզ բնալուծացն Զրուան կարդացեալ, յորում քանդակեալ իցէ յաւուր շաբաթու՝ Զրուանայ նուիրելոյ 'ինախնեաց՝ ձեն որով աստեղաբաշլոք նշանագրել սովոր են զայն մոլորակ զոր հինքն Զրուան և մեք Երևակ կոչեմք : Նախնի ուլունք յուռթողաց, կղարթք, բժժանք, դրիճք և հմայեակք և փաթեթք աղապատանաց, և այլք յոլովք 'ի խտրական մնապաշտ նշանակաց՝ գիւտ են սուտանուն և վրիպար-հեստ նշանագիտութեան⁴² :

Ութերորդ պատճառ՝ մոլութիւն ինքնօրէն յօրինուածոց կարդի վարդապետութեան : Որ առանց բաւական գիտողութեանց նոր իմն ո՞ճ իրաց յօրինել փութայ, յիրաւի թէ յանիրաւի զամենայն ինչ 'ի նոյն հնարի ընդ քարշ տանել : Այն նորանոր կարդածք բնագիտութեան, բնազանցութեան, բարոյականին, քաղաքականին և տընտեսականին, որ ընդ ժամանակս ժամանակս յաջորդեցան իրերաց, և զարդիս բազմաց 'ի նոցանէ հազիւ ինչ թէ ուրեք երևիցի յիշատակ, ցոյցք են բազմագիմի մոլորութեանց, յոր զառանցուցանէ անկարգ սէր ինքնօրէն կարգածոց :

ԳԻՐԱԲ ԵՐԿՐՈՐԴ

ՕՐԵՆՔ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՅ ԵՒ ՑՈՒՑԱՆԵԼՈՅ
ԶՃՇՄ ԱՐՏՈՒԹԻՒՆ

Ն Ե Խ Ս Ը Ա Խ Ի Ղ.

Զոր օրինակ՝ ի պէսպէս յօդաւորելոյ գաղափարաց և
ծանօթութեանց գոյանան դատմունք, և ՚ի սոցին զուգա-
ւորութենէ կազմին խորհուրդք մտաց ՚ի դիւտ ճշմարտու-
թեան, նոյնպէս ՚ի զանազան յարադրելոյ բառից՝ որովք
սովոր եմք նշանակել զժանօթութիւնսն և զգաղափարս,
յօդանան բանք յայտարարք դատմանց, և ՚ի սոցուն խառ-
նութենէ հիւսին ապացոյցք՝ խորհրդոցն վերբերիչք, ո-
րով զճշմարտութիւնսն զոր գտաք՝ յայտնաբանեմք այլոց
և ցուցանեմք։ Արդ քանզի զօրէնս առաջարկութեան և
ցուցի ճշմարտութեան կայ մեզ աստանօր աւանդել, ինք-
նին իրացն կարդ պահանջէ ճառելնախ զբառից, ապա
զբանից, և յետոյ ուրեմն որ յապացոյցմն հանգամանք
յուղիղ ցուցակութիւն ճշմարտութեան։

Այլ զի յաճախ պատահէ, առ բանիւ չվարելոյ կամ
խառնավար լինելոյ, ՚ի մոլորութիւն գլորել, թիւր գա-
տել և խորհել և ապա գուն գործել պատիր ցուցիւք ՚ի
թիկունս իջանել թիւրոցն, որ ՚ի բազումն կրի բազում
անգամ ու առ ՚ի զայլս խարելոյ, քան թէ ՚ի խաբէութենէ
մտաց իսկ իւրեանց, ապա կարեոր է տեսանել մանք՝ զե-
րեւելի պատճառս ունայնութեան և ստութեան ապացու-
ցից, անձանց՝ ՚ի իրատ զգուշութեան, զի մի յանկարծ ՚ի
նոյնս գլորեալք՝ զիսաբերայի և զտիտի կարծիս առնու-

ցումք յանձն . և այլոց՝ յամօթ և 'ի յանդիմանութիւն դաւանացն զմեզ ըմբռնելոյ և 'ի մոլորութիւն ձգելոյ :

Եւ յորժամ զՃմարտութեան խնդրոց վէճք և պայքարք անկանիցին , հարկ է դիտել զՃանդամանս իրացն 'ի յայտ յանդիմանութիւն Ճշմարտութեան : Տեսանեմք իսկ զօր հանապաղ զի 'ի չգոյէ ուղիղ կարգի , դիպաւոր և անսխալ օրինաց , բազում վիճմունք երթան յանդին յաղմկայոյզ զրաջան աղաղակ 'ի պէտս ում . և փոխանակ 'ի լոյս զՃմարտութիւնն հանելոյ , և ևս 'ի խոր թաղեալ հետախաղաղ կորուսանեն :

Եւ զի 'ի յատակ տեսաւորութիւն Ճշմարտութեան կարեոր է յոյժ հմուտ լինել ընտրութեան պատշաճաւոր ոճոյ , և կրկին են առաւել 'ի կիր ածեալք առ մատենագիրս , վերլուծականն ասացեալ և շարադրական , 'ի վերջէ ուրեմն տեսանել արժան է զիւրաքանչիւր նոցա զօրէնսն և զընտրութիւն ըստ տեղւոյն :

ՊՐԱԿ Ա. Ռ Ա. Զ Ի Ն

Բ Ա Ռ Ա

Ո անօթութիւնք և գաղափարք որ 'ի պահեստի մտացս
նիւթք են խորհրդոց ; չմարթեմք յայտնի առնել եթէ ոչ
նախ նշանաւ իւկը յերեան ածիցեմք զաներեոյթս խոր-
հրդոցն : Այս նշան կրկին է . է որ բնատուր և բնական , և
է որ 'ի վարողէն ճարտարապետեալ և արուեստական :

Բնական նշանք են ամենայն շարժուածք և կերպարա-
նաց ցոցք , որ ինքնին սովոր են երեել 'ի զանազան հան-
գամանս և 'ի կիրս հոգւոյն , զոր օրինակ ճիշ և հառաջանք
'ի ցաւս , ծաղր և կաքաւ 'ի ցնծութեան , շառագունանք առ
ամօթոյ , դող և այլագունութիւն առ ահի զարհուրա-
նաց : Ի սոցանէ՝ են որ և 'ի գեռածին մանկունս ինքնին ե-
րեին առժամայն , յաւէտ ևս ճշիւն առ ցաւս , և անբանից
իսկ հասարակ են , մանաւանդ սոսկումն , աղաղակ և կաքաւ :

Սակայն և այս նշանք յարուեստական փոխին , յորքամ
ոչ ևս բռնի ըստ սոսկ շարժման բնութեան առնիցին , այլ
խորհրդով և գիտութեամբ , որպէս յամենայն իսկ ման-
կունս լինել սովոր է : Ճշեն նախ կամ լան առ ցաւոցն
սաստկութենէ ստիպեալ , առանց ինչ յայտնել կամելոյ ,
նա և առանց իսկ գիտելոյ թէ բնաւ և հնար ինչ է նոցա
յայտ առնել : Իսկ ապա տեսեալ թէ յօդնութիւն հասա-
նեն այլք , ցաւքն և նշանք և հասեալ օգնականութիւնն՝
սերտիւ կապին 'ի միտս նոցա . և 'ի դառնալ ցաւոցն՝ յուշ
ածեալ զնպաստն զոր գտին նշանօքն , սկսանին կամակա-
րուց 'ի գործ զայնս արկանել , զի յայտնի արացեն զցաւս
իւրեանց և գիւրութեան հանդիպեացին :

Գլխաւորք են յարուեստական նշանս շարժուածք և
բարբառք : Յառաջինսն՝ է ինչ որում կցորդ են և անբանք ,
երկրորդըն ամեննեին սեփականք մարդոյ : Նա աւանիկ տե-
սանեմք իսկ զանասունս , զի առ բուռն ցանկութեանն յեղ-

յեղուկս զձայնսն արկեալ և 'ի քծինս ազգի ազգի շարժ-
մամբք եկեալ, հնարին յայտ առնել զկամս սրտից իւր-
եանց, ողորմուկս արկանել և յաղերս ածել. այլ դեռ չե-
րեեցաւ ոք յանբանից առ 'ի խօսս բաւական: Այս ոք ընդ-
դէմ ըերիցէ, թէ ահա խօսին պապկայք և անծեղք և կա-
շաղակք, սարիկք և կեռնեխք, այնու զի ուսանին բար-
բառ ինչ յօդել պապաջելով իբրեւ անշունչ գործի ձայ-
նատու: Խօսել այն է տիրապէս, յորդամ խորհրդով ոք 'ի
կիր զձայնսն առնուցու՝ յայտնել նոքօք զմիտսն. զորյայտ
է թէ յիշատակեալ թռչունքդ ոչ առնեն, զի ոչ ինչ ի-
մաստք են նոցա 'ի ձայնսն :

Եւ արդ քանզի բարբառ առանձինն շնորհ է մարդոյ, և
առաջին գործի 'ի յայտնութիւն և 'ի ցոյց ճշմարտութեան,
օն առ տեսցուք քանիպատիկ իցեն, և ոյք ոմանկք կարեռ-
բագոյնք 'ի յայտնել զիմաստս մտաց, զինչ զանազանու-
թիւն նոցա 'ի Հակածառից, զիարդ և յինչ պէտս է վա-
րել զնոսա, և յորոց պիտակութեանց զգուշանալ:

ԳԼՈՒԽ Ա.

ԱԶԳԻ ԲԱՐԻՑ, ԵՒ ԿԱՐԵՒՌԱԳՈՅՆՔՆ Ի ՑԱՅՏՆԵԼ

ԶԻՄԱՍՏՍ ՄՏԱՑ

Ուժ ազգ բառից 'ի համար արկեալ են 'ի քերդողացն.
անուն, դերանուն, բայ, դերբայ կամ բայանուն, նախ-
դիր, մակրայ, շաղկապ և ձայնարկութիւն. զորս սովորե-
ցին նոքա մասունս կոչել բանի կամ խօսից, զի 'ի սոցանէ
իբրեւ 'ի մասանց յօդանայ բանն ⁴³: Անունն բաժանի ըստ
նոցա յէական և 'ի վերագիր, կամ 'ի գոյական և ածա-
կան: Առաջինն իրա յայտ առնէ, որպէս ծաղիկ, պտուղ.
երկրորդն որոշմունս կամ հանգամանս որպիսութեան ի-
րաց, որպէս այս, այն, բարի, չար: Դերանուն են ձայնքս
ես, դու, սա, դա, նա, ինքն, և սոյնպիսիք որ վարին փո-
խանակ յայտնի անուանց առ 'ի չկրկնելոյ զնոսա: Բայս
գործ է հաստատել թէ այս նիշ որպիսութիւն է յայս

Նիշ իրի, զոր օրինակ Հոգին խորհի կամ է խոհուն: Դերբայք կամ բայսանուանք վերադիրք են 'ի բայից առեալք և երկոցունցն հաղորդք, որպէս կեցեալ կեցող: Կախդիր են մասնիկք՝ որ դնին 'ի սկիզբն անուանց իրաց 'ի ցուցանել զհամեմատութիւնսնոցա ըստ չարժման, դադարման, զուգութեան, և որ 'ի նոյնս պատշաճն: որպիսի ինչ Գնալ 'ի վան, կալ առ Երասխաւ, կենցաղել ընդ ընտիր բարեկամ: Ամկբայք են 'ի ցուցանել զզանազան առմունս կամ կերպարանս բայից, զոր օրինակ Ընել աստ կամ անդ, կեալ բարւոք կամ չարւոք: Շալկապք, որպիսի՝ և, այլ զի, թէպէտ, իսկ, և այլ սոցին նմանք, նպաստեն 'ի կապէլ զբան ընդ բանի կամ զիմաստս բանից ընդ միմեանս: Զայնարկութիւն են Ճիչք որ դան 'ի խօսս 'ի ցոյց այլ և այլ կրից և ախորժակաց հոգւոյ, ըստ որում, ոչ, այ, էչ:

Իմաստանց աստի բանին՝ անուն և բայ կարեւորագոյնք են 'ի յայտնութիւն իմաստից մոտաց. վամն զի, որպէս յառաջին գիրմն ասացաք, իմաստք մոտաց կամ դատմունք՝ են հաստատութիւն և ժխտումն նմանութեան երկուց ծանօթութեանց կամ դաղափարաց: Իսկ 'ի դաղափարաց աստի և ծանօթութեանց սովորաբար մին 'ի մէջ բերէ իր ինչ բնական կամ բարոյական, և միւսն հանդամանս ինչ որ հաստատի զնմանէ կամ ժխտի. զոր օրինակ Ծովն է աղտաղտուկ. Երկիր չէ անշարժ. Գովելի է բարերարութիւն. Անշահ է դատարկութիւն: Իսկ արդ երբ բնականք՝ իրուծով և երկիր, և բարոյականք՝ որպէս դատարկութիւն և բարերարութիւն, սովորաբար էական անուամբք յայտնին, և հանդամանքն վերադրօք, ըստ որում աղտաղտուկ, անշարժ, դովելի, անշահ: Ապա 'ի յայտնութիւն դատմանց պահանջին էական անուանք 'ի ցոյց իրացն որ ենթակայքն են դատմանց, վերադիրք 'ի ցոյց հանդամանացն հաստատելոց կամ ժխտելոց, և երրորդ՝ նշան ինչ 'ի ցոյց հաստատութեան՝ որպիսի է էական բայն, կամ ժըխտման՝ որպիսի է նոյն բայ կից ընդ ու կամ ։

Եւ զի բան է յայտարարութիւն զանազան դատմանց իրաց, ապա կարեւորագոյն մասունք բանի են էական անուանք և վերադիրք, հանդերձ կրկին նշանօքն՝ հաստատութեան և ժխտելոյ: Եւ չէ ինչ դժուարին ցուցանել թէ ամենայն լեզու նոքօք ևեթ բաւական է յայտնել զամանացն իմաստ:

ԳԼՈՒԽ Բ.

ՊԵՍՊԵՍ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԲԱՌԻՑ ԸՍՏ ՀՅԿԱՑՄՈՒՑ

Հակածառք, ըստ իւրեանց աղխատրոյզ լեզուին, զամենայն բառս առվորեցին ԵՎԵՐ կոչել, իրու զի գործ է նոցա սահմանել և որոշել զծանօթութիւնն և զգաղափարս :

Արդ ա, 'ի բառից կէսք ասին իսկ և յատուկ, որ զոմն մի առանձինն նշանակեն, որպէս Տիրան. և կէսք առասական, հասարակ և ընդհանուր, որ եթէ զտեսակն ցուցանիցեն՝ տեսակարար կոչեն, որպէս մարդ. իսկ թէ ըղսեռն՝ սեռական, զոր օրինակ կենդանի :

Բ. Թանձրացեալ կամ անենթակայ, որ ցուցանեն գաղափարս և ծանօթութիւնս անձնաւորս, որպէս սպիտակ, սեւաւ, բարի, չար. կամ չանձնաւորս՝ որպէս սպիտակութիւն, սեւութիւն, բարութիւն, չարութիւն :

Դ. Բնական կամ բնազանցական, որ հաւաստի դյակս նշանակեն, որպէս ջուր, հուր, ծաղիկ, պտուղ. կամ եակս սուկ մուաւորս և բարյականս, որպէս գիտութիւն, տգիտութիւն, լաւութիւն, չարութիւն :

Ե. Եական և իսկական կամ չեական և պակասական, որ զէութիւն կամ զանէութիւն և զպակասութիւն իրացն յայտ առնեն, ըստ որում լցոյ և խաւար, արգասաւորութիւն և անարգասաւորութիւն :

Ֆ. Պարզ կամ ջոկադիր և բարդ, որ միով ձայնիւ առեն զգաղափարն, զոր օրինակ ապակի, քար. կամ բազմօք, որպէս մարմին թափանցիկ, մարմին անթափանց և գիմահար:

Ա. Բուն, հարազատ կամ փոխաբերական և այլբանական, որ ըստ բուն և յատուկ մտայն ասին, որպէս շարժումն և հանգիստ մարմնոյ. կամ յայլաբանական միտս իբրև շարժումն և հանգիստ հոգւոյ :

Կ. Միանշանակ կամ հոմանուն և համանուն, որ մի ինչ միայն նշանակեն, իրու վագր և ինծ, կամ բազում համանունակի՝ բազմանշանակ գոլով. որպէս ցուլ և խոյ, որ նշանակեն երկուս ազգս կենդանեաց և երկու կենդակս

աստեղատանց կենդանաբերին : Այսպիսի են և ամենայն բառք որոց կրկին են միտք՝ հարազատ և այլաբանական :

Հ. Պայծառ կամ աղօտ, որ առաջի առնեն պայծառ կամ աղօտ գաղափարս, և որ յայտնապէս կամ ընդ աղօտ ցուցանեն զայն : Աակայն բազում բառից յայտնութիւն և մժութիւն՝ ըստ մեզ է քան թէ ըստ ինքեանց . իմաստասիրական ձայնքն, քերդողականք, արուեստագիտականք և այլք՝ յայտնի են որոց հմուտ են իրացն, և անտեղեկացն մժինք :

Ի. Որոշ ճշգրիտ, ճիշդ, որոց նշանակութիւն անփոփոխ կապեալ է ՚ի մի ինչ որոշեալ, զոր օրինակ բոլորակ, քառակուսի, եռանկիւն, և գրեթէ ամենայն չափաբերական բառքն : Իսկ երկդիմի, տարտամ, անորոշ, որոց նշանակութիւն ոչ է սահմանեալ և ճշգրտեալ ըստ բաւականին, այլ անխոտիր են յայլ և այլ միտս, ամփոփելով և ընդարձակելով : Արալիսի է նոյն ինքն ձայնն գաղափար առ յոլովս ՚ի բնազանցախօսաց . զի մերթ զյատուկ գաղափարն նշանակէ, մերթ զծանօթութիւնն, բազում ուրեք և զզգացմունս անգամ և զիմացուածս : Տես զուղեկութիւնն 9 և 15 : Այնպիսի են առ բազումն և ձայնքս առաքինութիւն, իրաւունք, ազատութիւն, արութիւն, քաջութիւն, պատիւ, և բնաւ իսկ դրեթէ ամենայն բառք իմանալի և բարոյական էակաց, որոց ծանօթութիւնք առ սակաւս են ճշգրիտ և ճիշդ, և սակաւք են որ անփոփոխ միշտ պահիցեն զծանօթութիւնն ընդ ձայնիցն :

Դ. Աննշան, որ և ոչ մի ինչ հաւասարի և ճշմարիտ գաղափար կամ ծանօթութիւն յայտ առնեն, որպիսի էին առ գպրոցականն դոյցական տեսակք, մտաւորական տեսակք, ընդ հանուր բնութիւնք, և այլ ինչ բազում այս պիսի ձայնք անիմասաք :

Ետ. Փաղմանուն և նոյնանիշ որ ՚ի նոյն միտս վարին, որպէս ծառ և տունկ, վէմ և քար : Աակայն յամենայն լեզուս սակաւ են ամենեին նոյնանիշք . զի դոգ ամենայն բառք առանձին իմն զօրութիւն ունին ՚ի միտսն, որով ուրոշին ՚ի միմեանց : Ուղիղ իսկ ասասցէ ոք՝ տունկ ցորենոյ, այլ ոչ ծառ ցորենոյ . և քար պատուական կոչեցի զգոհար ակն կամ զյակինթ, այլ ոչ երբեք վէմ պատուական : Յորմէ յայտ եղեւ, թէ տունկ և քար սեռականագյն են քան զծառ և զվէմ, թէպէտ և ոչ սակաւ ՚ի նոյն միտս վարիցին 44 :

ԳԼՈՒԽ Գ.

ՊԵՏՔ ԵՒ ՊԻՏԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԶԵՆԾՈՒՄՆ
ԲԱՌԻՑ

Որ խօսին՝ ապաքէն կամի իմանալի լինել, այս է՝ ազ-
գել յայլս զծանօթութիւնս և զգաղափարս իրացն զորոց
խօսի : Ապա զգուշալի է յամենայն աղօտ, երկդիմի, տար-
տամ և աննշան բառից . զի զո՞ր գաղափար կամ ծանօ-
թութիւն ազդիցեն մլթին և աննշան ձայնք, կամ զո՞րը լըս-
տակ և ճիշդ գաղափար և ծանօթութիւն՝ երկդիմիքն և
տարտամք : Այլ քանզի բազմաց 'ի դոցանե պիտակու-
թեան պատճառք այն են, զի մեք գլխովին օտար եմք 'ի
հաւաստի և յանվրէալ գաղափարաց, կամ անհմուտ բուն
և յատուկ մտաց բառիցն, ապա նախ քան զամենայն ան-
վրէալ և հաւաստի գաղափարաց փոյթ պարտ է ունել, և
գիտութեան հարազատ մտաց ձայնիցն : Եւ յորժամ' ոչ
ըստ արժանի տեղեակ իցեմք իրին կամ բառին, հրաժեշտ
'ի խօսից տալ, քան անկարգ և անհեղեղ ճամարտակել
ըստ քիմս :

Բ. Բառք որոց 'ի հասարակաց պէտս սահմանեալ և
հաստատուն է նշանակութիւն, 'ի նոյն միտս պարտ է առ-
նուլ զնոսա . զի չեմք իշխան փոփոխել զառումն ձայնից, և
զհաց գինի ասել և զգինի հաց : Իսկ որոց 'ի հասարակաց
սովորութենէ չիք աներկբայ և յայտնի զօրութիւն, այլ
ոմն յայս միտս տանի և ոմն յայն, և 'ի նմին միտս՝ են որ
լայնեն, և են որ նրբեն, որպէս առնի 'ի բազում ձայնս
իմացական և բարոյական էակաց, այնպիսիքն սահմանեա-
ցին յառաջագոյն կամ 'ի վարելն անդ, զի յայտնի կացցէ
ամենեցուն թէ յոր միտս ճշդեմք . և անմոռաց 'ի նոյն
միտս հաստատուն պահէսցին ընդ բովանդակ ճառն, որ-
շափ և երկար իցէ, և թէ մատեան ևս ստուարակարկատ
կամ բազմահատոր :

Գ. Այդ հարկ առաւել է յորժամ' պիտոյ լիցի ճար-
տարել նոր բառս 'ի նշան նորոյ գաղափարի, կամ 'ի գործ
ածել ձայնս անծանօթս լսելեացն : Եթէ այսպէս և եթէ

այն, ամենեցուն յայտ է թէ որում կամք են հասկացու-
ցանել զմիտոս իւր, հարկ անհրաժեշտ է բայց այտել
ճշգրտի զձայնսն : Այլ յառաջնում պայմանին, մինչ չե-
տեղեալ զնոր ձայնն՝ տեսանել արժան է, թէ դուցէ
արդեօք 'ի լեզուի անդ բառ կշիռ մերոյ գաղափարին : Զի
ստէպ լինի առ անհմտութեան իրաց կամ լեզուի՝ նոր
կարծել բազում գաղափարս հինաւուրց, կամ նորաձայնս
մուծանել յանհնարին ծանրութիւն լեզուին և ունկն-
դին, փոխանակ զի 'ի նոյն միտս քաջադիպագոյնք վա-
զուց առ ձեռն կան ⁴⁵ : Յերկրորդ պայմանին զգուշալի է
յօտար և յանծանօթ ձայնից, երբ տեղին չպահանջէ
յայտնապէս . զի մերկ գլխով յանդուդն իմաստակութիւն
է յոյն և տաճիկ և լսուին խառնել'ի բանս, ուր 'ի հայումն
ոչ պակասեն հաւասարազօր ձայնք . կամ վեր 'ի վայր յա-
ծաչու խոնջմամբ յուզախնդիր լինել 'ի բառգիրսն թափ
առեալ թարթափեալ զհետ իրթնի և բորբոսեալ և ժան-
գահար բառից, մինչդեռ յստակքն և սովորականք և վա-
յելուչք անդէն առ կուան կայցեն :

Դ . Յայլաբանեալ բառս և յամենայն իսկ ճարտարիօ-
սականս բազում զգուշութիւն պիտի . մանաւանդ յիմաս-
տասիրական բանի . զի բաց յորոց ընտելքն են և անվը-
տանդ 'ի մոլորութենէ, որպէս հանգիստ հոգւոյ, ամբո-
խումն մտաց, յոյզք խորհրդոց, աժխոյժք մտաց, հուր և
եռանդն բարկութեան, և սոցին նմանք, այլքն՝ որպէս
տեսաք՝ բազում ուրեք չեն աներկւան :

Բովանդակ ասել, մի երբէք մոռասցի թէ կամք խօսո-
ղին այն պարտի լինել, զի ամենայն փութով և յստակու-
թեամբ և ճշգրտութեամբ իմացուսցէ ըստ կարի զմիտսն .
ուստի և յամենայն ժամ ինդրելի են և վարելի 'ի դոյն
պէտս յարմարագոյնք և քաջադէպք 'ի բառից, մանաւանդ
առ իմաստասէրսն : Եւ ո՞ր ամօթ ոչ իցէ առն իմաստասի-
րի, որ չգիտիցէ կամ չկամիցի ըստ կարգի թարգմանել
զմիտս իւր : « Թանգարք և խոհակերք, դերձակք, գոր-
ծաւորք և ամենայն իսկ ձեռահմուտ արուեստագէտք, ասէ
'Լոք, հասկանան առհասարակ զմիտս իրերաց, առնեն և
կատարեն զգործս իւրեանց . միայն իմաստասէրքդ և բա-
նակուիւր ոչ գիտասցեն երբէք լսել միմեանց և 'ի գլուխ
հանել զիւրեանցն » : Տրտունջ ծանր . այլ, եղուկ, առ ո-
մանս յոյժ արդարացի :

ՊՐՈԿ ԵՐԿՐՈՐԴ

Բ Ա Կ

Դատումն մտաց բառիւք յայտնեալ՝ կոչի բան⁴⁶, ասացուած, իմաստ, առած, որ է հիւսք բառից յորում հաստատի կամ ժխտի յարմարութիւն հանգամանաց կամ յատկութեան իրիք ընդ այլում իմիք. որպէս, Աստուած է յաւիտենական, Աստուած ոչ է մահկանացու: Ի բանից աստի առաջնն ասի հաստատական, յանձնառական, դաւանական, հաւանողական. իսկ երկրորդն ժխտական կամ ժխտողական, հրաժարական, ուրացական :

Երեք մասունք որոշին՝ ի բանս. բառն յայտնիչ իրին զորմեն բանն է, և ասի ենթակայ, նիւթ բանի. բառն յայտարար հանգամանացն կամ յատկութեան զոր ածեմք զենթակայիւն կամ՝ ի բաց տանիմք՝ ինմանէ, և կոչի մակդիր, առասութիւն, և ըստ յունին՝ ստորոգեալ, ստորոգելի⁴⁷. և երրորդ՝ նշանն հաստատութեան կամ ուրացութեան, յոր պէտով վարի Եւ բայն. որ եթէ միայն իցէ, հաստատութիւն յայտնէ. իսկ եթէ ընդ ու կամ և ժխտումն: Ըստ այսմ յառաջնում բանին՝ առասուած է ենթակայ, յատիտենական՝ մակդիր և առասութիւն, և հաստատութեան նշան:

Ենթակայն և մակդիրն կոչին՝ ի հակաճառից երկու ձայրք կամ եզերք բանին. զի սովորաբար մին՝ ի սկիզբն դնի, միւսն՝ ի վերջն: Փորբագրյն ծայր ասի ենթակայն, զի սակաւ է ընդարձակութիւն նորա. և մեծագոյն՝ մակդիրն, զի նորայն բազում է: Լաւ ևս կոչեսցէ ոք զդոսա հայերէն մասունս և դլուխս բանի:

Սովորաբար ենթակայն էականաւ կամ համազօր բառիւ յայտնի, իսկ մակդիրն՝ վերադրաւ. զոր օրինակ Բարերարութիւնն կամ բարերարելն է գովելի: Բայց և ու-

բեք զի մակդիրն էական թուեի. որպէս Բարերարութիւնն է առաքինութիւն. սակայն գիտելի լիցի, զի աստանօր մակդիրն առաքինութիւն՝ զածականի զօրութիւն բերէ, իբրու ասել Բարերարութիւնն է ինչ յայնցանէ որ առաքինութիւնն կոչին, է մի ՚ի լաւութեանց, առաքինական ինչ :

Բազում բանք ՚ի միոյ անուանէ և ՚ի բայէ ձեանան, և պակաս թուի մակդիրն, բայց բովանդակեալ կայ ՚ի բային. որպէս յասելն Աստուած գոյ, գոյ՝ իմանի է գոյող, գոյեղ: Ուստի և ամենայն բայ նոյն է ընդ Ելբային և մակդրի իմիք. որպէս կեալ ընդ կենդանի կամ կեցող ել, սիրել ընդ սիրող ել: Որպէս զի թէ ասեմք Աստուած է, այդ ես՝ է կատարեալ բան. զի աստ բայն է՝ ոչ հաստատութիւն միայն ցուցանէ, այլ և էութիւն կամ գոյութիւն. և բանն հաւասար է այսմ Աստուած է էակ կամ գոյակ :

Եւ բայ միայն երբեմն ամեռողջ բան կատարէ, մանաւանդ յառաջին և յերկրորդ գեմս, յորս նոյն իսկ յանդումն բային յայտնի առնէ զենթակայն. գում, է ասել՝ ես եմ գոյող: Սոյնպէս երեքին բայքն զոր խօսեցաւ երբեմն կեսար, Եկի, Տեսի, Յաղթեցի, երիս այլ և այլ բանս յայտ արարին:

Այլ զոր օրինակ բայ միայն բաւական է երբեմն ՚ի լրումն բանի, նմին հակառակ երբեմն բազում բառք մի բան կատարեն, եթէ մի ենթակայ և մակդիր իցէ, իսկ այլ ձայնքն՝ հանգամանաց և կերպարանաց եեթ յաւելուած առնիցեն յենթակայն և ՚ի մակդիրն: Օրինակ իմն յասելն, Տիտոս կայսր հոռվմայեցւոց՝ յետ վախճանին Վեսպիանոսի հօր իւրոյ՝ երկեամ՝ մի առանձինն թագաւորեաց ՚ի Հռովմ, քաղցրութեամք իշխանութեանն զմարդկան յարդարելով բարեկենդանութիւն. այս ամենայն բառք առնեն մի բան, վասն միութեան ենթակային Տիտոս, և մակդրին նմա ընծայելոյ, այն ինքն է եղեւ թագաւորող կամ թագաւորեալ. իսկ այլն ամենայն ոչ ինչ այլ ցուցանէ, բայց զզանազան կերպարանս Տիտոսի, և զհանգամանս տեղւոյ ժամանակի և օրինակի թագաւորելոյն :

Եւ բազում բանք ամփոփին ՚ի մի. որպէս ահա սոքա երկոքեան, կիկերոն էր ճարտասան, կիկերոն էր իմաստամէր, մի լինին յասելն՝ կիկերոն էր ճարտասան և իմաստամէր :

Սակայն զազգս ազգս բանից՝ որ բարդքն կոչին և որ բազմամասն, որ գլխաւորքն և եկամուտ, պայմանաւորք և պարզելիք, հաստատականք և ժխտականք, ընդհանուրք, մասնաւորք և եղականք, ընդդիմակը և անդրադարձք, և որ յայլ ևս մի ըստ միոջէ անուանս բաժանին յիմաստասիրաց, փոքր մի ճոխագոյն պարտ է մեզ աւանդել, առիմանալ զգօրութիւն նոցա և զպէտս:

ԳԼՈՒԽ Ա.

ԲԱՐԴ ԵԻ ՊԵՐԶ ԲԱՆ, ԳԼԽԱԿՈՐ ԵԻ ԵԿԱՄՈՒՏ

Բարդ ասի բանն, եթէ մի 'ի մասանցն կամ' բայն բարդիցէ, այսինքն 'ի բազում' բառից յօդեալ՝ որ այլ և այլ գաղափարս յայտ առնիցեն. իսկ պարզ անուանի՝ որոյ պարզ են մասունք, և իւրաքանչիւր միոյ գաղափարի նշանակ: Յասելն Աստուած է յաւիտենական, պարզ բան է. զի քան զշարկաւոր բառս այլինչ չգտանի 'ի նմա: իսկ յասելն, Աստուած գերագոյ արարիչ ամենայն եղելոց անեղ և ինքնագոյ է յամենայն յաւիտենից, լինի բարդ բան. զի ենթակայն՝ բաց 'ի գլխաւոր ծանօթութենէն Աստուածոյ, և յարակից ունի զԳերագոյ արարիչ ամենայն եղելոց. և մակդիրն՝ բաց 'ի գլխաւոր ծանօթութենէ գոյութեան՝ լրծորդ ունի և զինքնեղին գոլ և յամենայն յաւիտեանց:

Ցորժամ ընդ ենթակային կամ ընդ մակդրին կան այլ բառք յայտնիչք յարակից. գաղափարի կամ ծանօթութեան, լինի միշտ բարդ բան. նոյնալես եթէ և ընդ բային ինչ կայցէ. որպէս Աստուած է արդարեւ անժամանակ, կամ բնազանցական ստուգութեամբ և առանց իրիք յերկուանաց և հարկաւ է անժամանակ. ուր այս ամենայն ձայնք ոչինչ առնեն, բայց ազդուութիւն տալ հաստատութեանն:

Բազմօրինակ բարդ լինին մասունք բանի: Վերադրօք. Այլր իմաստուն անխռովք է: Դերբայիւք և բայանուամբք. իկարոս անկեալ 'ի ծով կամ' յանկանելն 'ի ծով հեղձաւ.

Պոմալիոս 'ի պարտութիւն մատնեալ զՄիհրդատ' յաղթանակաւ ել 'ի ճեմելիս և ճաղեաց: Պէսպէս ածանցմամբք, հոլովիւք և նախդրօք, որ զայլ և այլ անուանս ընդ միմեանս կապեն. Անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք կամ յոսկւոյ և յարծաթոյ. իբք խնամով կամ անհոգութեամբ գործեալք. Գոյութիւն յայս ինչ տեղւոջ կամ յայս նիշ ժամանակի. Պատճառառառութիւն յայսմ կամ յայնմ իրէ: Ի ճեռն եկամուտ բանից, որ յարին և խառնին. ընդ բուն զլաւառմն յարաբերականաւն «ր կամ այլով զօդիւ. որպէս, Հեկտոր՝ որոյ սպանեալ էր զՊատրոկլոս, սպանաւ ապա յԱքիլեայ. զոր և մարթ է ասել, Հեկտոր յետ սպանանելց զՊատրոկլոս, իբրև սպան զՊատրոկլոս, սպանեալ զՊատրոկլոս, սպանաւ և ինքն յԱքիլեայ:

Սակայն գիտելի է նախ, զի զամենայն վերոյեղեալ օրինակս մարթ է ասել եկամուտ բան: Վասն զի այր իմաստուն՝ է ասել այր որ խմաստուն է. Իկարոս անկեալ կամ յանկանելն 'ի ծով նոյն է թէ ասիցի, իկարոս որ անկաւ 'ի ծով. Պոմալիոս 'ի պարտութիւն մատնեալ զՄիհրդատ' է ասել Պոմալիոս որ յաղթեաց Միհրդատայ. Անօթք ոսկեղէն կամ արծաթեղէն՝ նշանակեն անօթք որ յոսկւոյ են կամ յարծաթոյ:

Բ. Բանք յորս այլ բայ է, քան զէականն, առ հասարակ բարդ են 'ի ընէ. Ալեքսանդր յաղթեաց Պարսից, է ասել՝ Ալեքսանդր եղել յաղթող կամ յաղթական Պարսից. ուր մակդիր է յաղթող կամ յաղթական, Պարսից՝ լրումն մակդրին, իբրև 'ի մի գլուխ բովանդակելով ասել պարսկայաղթ: Նոյնակէս՝ Պարսիկք յաղթեցան յԱլեքսանդրէ, է ասել՝ Պարսիկք եղեն յաղթեալք յԱլեքսանդրէ, ուր յԱլեւանդրէ է լրումն մակդրին՝ յաղթեալք⁴⁸:

Դ. Այս լրումն մակդրի որ կոչի և լրումն բանի, բազում ուրեք անորիշ բայիւ կամ գերբայիւ և եկամուտ բանիւ յայտնի. որպէս, Աստուած հրամայէ ներել կամ զի ներեսցուք թշնամեաց. ուր հրամանն Աստուծոյ յաշակս ներելց թշնամեացն է, և զայս նշանակէ բանն՝ Աստուած հրամայէ զներումն թշնամեաց:

Ի. Են բառք որ թէալէտ ըստ ձայնին պարզ են, այլ բարդ ըստ մտացն. զի բաց 'ի յատուկ գաղափարէ իւրեանց յարուցանեն 'ի Փիտու և այլ ինչ կիցնմին. օրինակ իմն յա-

սելն Ավրիկեցին, 'ի միտ գայ գաղափար Ակիպիոնի, յԱւ-
գոստոսն ասել՝ Ոկտաւիանոսին :

Այս ամենայն պիտանի է ոչ միայն յընտրութիւն բարդ
և պարզ բանի, այլ և որ կարեռագոյն է՝ յորոշել՝ ի խօսա
թէ որ բառք որոյ բանի իցեն : Առանց այսր հմտութեան՝
անհնարին է գտանել զուղղութիւն նոցա կամ՝ զծոռու-
թիւն, մանաւանդ եթէ բարդ բանն բազմաբառ հանդի-
պեսցի, որպէս յաճախ լինի՝ յորժամ խօսք մի երկար 'ի
մի կամ յերկուս բանս բովանդակի :

Բայց յընտրութիւն ճշմարտութեան կամ ստութեան
բարդ բանից՝ կարեռ է ևս գիտել, թէ յաւելուածք, յա-
րակեցք և Ծորդք յորոց բարդի մասնն՝ մերթ ամիտին
և սահմանեն զնշանակութիւնն, և մերթ զարդարեն մի-
այն : Յասելն՝ Մեծն Ալեքսանդր՝ անպարտելի արութեամբ
այր, խորտակեաց սակաւ արամբ զանթիւ զօրս Պարսից,
յաւելուածն մէջ որոշիչ է, Ճշգիւ յայտ արարեալ զԱ-
լեքսանդր զորմէ բանն է. նոյնալէս յաւելուածն Պարսից
ցուցանէ զզօրսն զոր խորտակեաց . իսկ անորոշութելի արա-
մետի այր՝ ոչինչ յաւելուած առնէ յորոշումն Ալեքսան-
դրի մեծի կամ այլոյ. նոյնալէս և անմիւ ոչ սահմանէ ըզ-
զօրմն պարսիկս լինել քան թէ այլ . և առաջն արամբն
նմանապէս ոչինչ յաւելու կամ պակասեցուցանէ 'ի բայն
խորտակեաց : Վասն որոյ երեք այս յաւելուածք՝ չեն կա-
րեռ պէտք բանին, և մարթի ասել զնոսա պատահա-
կանս . իսկ մէծն և Պարսից հարկաւորք են երկոքեան :

Արդ 'ի ճշմարտութիւն գլխաւոր բանին՝ հարկ է ամե-
նայն կարեռ Ծորդացն ճշմարտս լինել. զի յայտնի իսկ
ստութիւն է ասել Ալեքսանդր որդի Պրիամու խորտա-
կեաց զզօրս Պարսից, կամ Ալեքսանդր մեծն խորտակեաց
զզօրս Հոռոմոց : Իսկ եթէ պատահական յաւելուածքն
սուտ իցեն առ հասարակ, չեղծանի ճշմարտութիւն գըլ-
խաւոր բանին . զոր օրինակ մարթի սուտ լինել թէ մեծն
Ալեքսանդր՝ այր եղեալ իցէ անխորտակելի արութեամբ,
և զօրք Պարսից անթիւ, և սակաւ արամբ վանելն . բայց 'ի
վերայ այսր ամենայնի հաւաստի լինել, թէ Ալեքսանդր
մեծն եհար զզօրս Պարսից ⁴⁹ :

Արժան է ևս ազգ առնել, զի 'ի բարդ բանս որ եկա-
մուտն թուի՝ այն է երբեմն բուն գլխաւորն, և որ գլխա-
ւորն կարծի՝ յաւելուած է եկամտին : Օրինակի վասն, յա-

սելն Հաստատեմ ես, կամ Յուցեալ է թէ ամենայն ծառնօթութիւնք և գաղափարք սկիզբն՝ ի զգայութեանց ունին, բուն գլխաւոր բան է Ամենայն ծանօթութիւնք և դաղափարք՝ ի զգայութեանց ունին սկիզբն. իսկ ես հառարարեմ կամ ցուցեալ է, սոսկ յաւելուածք են հաստատութեան բանին, որ նոյն մնայ եթէ ասիցի՝ Ամենայն ծառնօթութիւնք և գաղափարք՝ ըստ իմոյ բանի կամ որպէս ցուցեալ է՝ սկիզբն առնուն 'ի զգայութեանց ^{ՅՈ}:

Ի գիտելեաց աստի երկու կարեւոր օրէնք ելանեն. մի վասն բանից զոր մեքս յօրինեմք, և միւս՝ վասն որոց լսեմքն կամ ընթեռնումք: Ի մերմն, զի յամենայնի ճշմարտութիւն փայլեսցէ ըստ արժանի առն իմաստնոյ և արդարոց, պատկառ կալ ուղղութեան համօրէն յաւելուածոցն կարեւորաց, հոգ տանել և պատահականացն ստուգութեան. և եթէ անհաւաստի ինչ թուիցին՝ ընկեցիկ առնել, որ միշտ է համարձակելի, զի չեն ինչ հարկաւոր, կամ թէ չափաւորել երկրայութեան յեղանակաւ: Յայլոց բանս, ընտրել նախ ընդ կարեւոր յաւելուածմն և ընդ պատահականսն, և ապա 'ի վերայ բերել թէ գլխաւոր բանն իցէ ճշմարիտ կամ սուտ, եթէ յարակիցն:

ԳԼՈՒԽ Բ.

ԲԱՋՄԱՄԱՍՆ ԿԵՐ ԽԵՂԻՆ ԲԱՆ

Ամենայն բան որոյ ենթակայ կամ մակդիր առաւել է քան զմի, բազմամասն է, և հաւասար այնչափ պարզ բանից որչափ են մասունքն, այս է ենթակայքն կամ մակդիքն: Օրինակ իմն, ըստ ենթակային բազմամասն է այս բան, Արիստոտէլ և Պլատոն էին իմաստասէրք. և ըստ մակդիրին այս, կիկերոն էր իմաստասէր և ճարտարախօս. իսկ ըստ երկոցուն այս, Մանիլիոս և 'Լուկրետիոս եղեն իմաստասէրք և բանաստեղծք:

Վեց են գլխաւոր բազմամասնութիւնք բանի, շաղկապական, անջատական, կցորդական, պատճառական, համեմատական և զատական, զորոց համառօտեսցուք զկարերսն:

• Շաղկապական են որոց բազում են ենթակայք կամ մակդիբք շաղկապեալք՝ հաստատելով, որպիսի վերոյ- դրեալքդ են, կամ ուրանալով որպիսի է այս, Ոչ փառք, ոչ մեծութիւն, ոչ պատիւ, ոչ հանգիստ և ոչ հեշտու- թիւնք բաւական են երջանկացուցանել զշարագործն : Յուղղութիւն այսպիսի բանից յայտ է թէ պահանջի ՚ի հաստատականս՝ ամենայն մակդրաց անվուել պատշա- ճել համայն ենթակայից, իսկ յուրացականս՝ և ոչ միոյ մակդրի պատշաճել ումեք յենթակայիցն :

Բ . Անջատական են յորս ենթակայք կամ մակդիբք յօ- դին առ միմեանս անջատական շաղկապօքն իտմ, և իտմ, իտմ ներ . որպէս, Ամենայն գոյակ է հոգեղէն կամ մարմնա- ւոր: Ի ճշմարտութիւն սոցա հարկ է ճշդիւ՝ ՚ի համար ար- կանել զամենայն մասունս բոլորին զորմէ խօսիմք, և հաս- տատութեան կամ ուրացութեան պատշաճել միումն ՚ի մասանց անտի, այլ ոչ և այլոցն միահաղոյն: Վասն որոյ սխալ է ասել, Ամենայն ձեւ է քառակուսի կամ բոլորչի, զի այլ ևս բազմապատիկ ձեք են. սուտ է թէ Առ երջան- կութիւն հարկաւոր է ազնուականութիւն կամ մեծու- թիւն, զի չէ և ոչ մին. Թիւր է թէ ՚ի փրկութիւն բաւա- կան են հաւատք կամ գործք բարիք. զի երկոքեան պա- հանջին:

Գ . Կցորդական կամ պայմանի են, որ թէ ճշմարտեսցի մի մասնն, նովին պայմանաւ հարկ է ճշմարտել և միւսոյն կից նմին. որպէս, Եթէ հոգին աննիւթ է ՚ի բնէ, ապա և անմահ է: Յուղղութիւն այսց բանից պահանջի զի հե- տեւութիւն պայմանին հարկաւ ելանիցէ ՚ի նմանէ, իբրև յօրինակիդ: Բայց չէ հարկ թէ պայմանն ինքնին ճշմա- րիտ իցէ. նա աւանիկ ՚ի ցոյց ստութեան իրիք՝ ճարտարու- թիւն մի և այն է, ցուցանել զանտեղութիւն ճշմարտու- թեան նորա. որպէս, Եթէ տիեզերք ամենայն լի և հոծ էին բոլորովին, չշարժէր և ոչ մի մարմին :

Դ . Պատճառական են կապեալքն զի, +անկի շաղկա- պօք, և որ ՚ի նոյն սակի, յորս մին զպատճառ կամ զդի- տաւորութիւն միւսոյն յայտ առնէ. որպէս, Զէթ յերեսս ջրոյ կայ, քանզի թէթեագոյն է. Մարդ յընկերութիւն եղաւ, զի իւրօց նմանեացն լիցի պիտմի: Յայտ է թէ առ ճշմարտութիւն բանիցս՝ ճշմարիտ պարտի լինել պատ- ճառն կամ դիտաւորութիւնն :

Ե. Համեմատական կոչին՝ որ զերկուց առ իրեարս համեմատութիւն ցուցանեն. զոր օրինակ, իրախել մարմնոց, ըստ ազդեցութեան միոյն է և անդրէն ընդդէմ ազդեցութիւն միւսոյն։ Ուղղութիւն բանիցս հաստատի՞ի շափ համեմատութեան երկոցուն համեմատակցացն։ Եթէ էական և անփոփոխ համեմատութիւն է, միշտ և պարզաբար ճշմարիտ են բանքն, որպէս յեղեալ օրինակիդ։ Իսկ եթէ համեմատութիւնն չիցէ էական, անհնար է արձակաբար ճշմարիտ լինել բանին, այլ չափաւորել պարտ է. զոր օրինակ, Մարդոց որպիսի են կեանք, այնպիսի սովոր է լինել և մահ։

Դ. Զատական են յորս զմի և նոյն ենթակայէ հաստատի մակդիր ինչ, և ժիստի այլ իմն. կամ մի և նոյն մակդիր ընծայի ենթակայի միում, և հատանի յայլմէ. օրինակ իմն, Ծնողաց արժան է գժած և սիրայորդոր առ մանկունան լինել, բայց ոչ անխօրհրդաբար մեղկաղէտս և ներողամիտս. Ոչ ազգատոհմ կամ մեծութիւն, այլ գիտութիւն և առաքինութիւն են ճշմարիտ պարծանք։ Ճմարթի այսց բանից ուղիղ լինել, եթէ որ հաստատին և ժիստի չիցեն անվրէպ ճշմարիտք։

ԳԼՈՒԽ Գ.

ԲԱՆՔ ՈՐ ԸՆԴ ԲԱՐԴՍ ԵՒ ԸՆԴ ԲԱԶՄԱՄԱՍՆԵՑՑՍ

ԴԱՍԻՆ, ԱՅՍԻՆՔՆ ԵՆ ՊԱՏՄԱՆԵԿՈՐՔ ԵՒ

ՊԱՐՁԵԼԻՔ

Ի վերայ բանիցս այսոցիկ յոյժ ճոխանային Դպրոցականք. և անժխտելի իսկ է օգուտ հմտութեան սոցա 'ի հաւաստի ընտրութիւն ճշմարտութեան բանից այլոց, և յանվրէպ ուղղութիւն մերոցն։ Այլ մեք առանց 'ի պիտանեացն ինչ դերեւ առնելոց՝ կարճառօտիւք անցցուք ընդ սոսա։

Յ Օ Դ ՈՒ Ա Ծ Ա .

Պայմանաւոր բանք .

Պայմանաւոր ասացան բանք՝ յորս ՚ի յայտ կան պայմանք հաստառութեան կամ ուրացութեան հանդիսութեան երկուց իրաց : Չորք պայմանք նկատին հանդիսութեան կամ անհանդիսութեան . — հարկի , հանդիպման , հնարաւորութեան և անհնարութեան : Ուստի և քառեակ պայմանաւ բանք որոշին . հարկաւ , Հարկ է լինել՝ տիեզերս առաջին պատճառի . ըստ հանդիպման , Դէպ լինի և խորագէտ մարդկան ՚ի պատրանս ըմբռնել . հնարաւոր , Մարթ է անկերակուր կեալ բազում ժամանակ . անհնարին , Անկար է նիւթոյ խորհել :

Այլ քանզի հնարաւորութիւն և անհնարութիւն , և ըստ նոցանէ հարկ և հանդիպումն , է զի բնազանցական է , է զի բնական և է զի բարոյական , որպէս յառաջին գիրմն ասացեալ է , ապա յորժամ պիտոյ լինիցի ճշդիք և անվոքպ ցուցանել՝ թէ յոր միտս առնումք զհարկն կամ զհանդիպումնն , զհնարաւորութիւնն կամ զանհնարութիւնն , ոչ է շատ ասել միայն հարկ է կամ պատահէ , հնար է կամ անհնար է , այլ արժան է յաւելուլ ևս , բնազանցօրէն՝ թէ բնաբար և թէ բարոյապէս իցէ հարկն և որ ՚ի կարգին : Սակայն ՚ի խօսս և ՚ի գիրս իսկ՝ հազիւ ուրեք այսքան ճշդութեան պէտք լինին . մանաւանդ թէ բազում ուրեք չպիտի իսկ ասել հարկ է , դէպ լինի և կամ այլ ինչ , այլ ինքնին ՚ի բանէն իմանի : Յասելն , Եւ խորագէտք ՚ի թակարդ անկանին , ապաքէն ոչ ոք համարիցի հարկի պայմանաւ զայդ ասացեալ . իսկ յասելն թէ ի ՚ի տիեզերս առաջին ոմն պատճառ , ամենայն ոք տիրապէս հարկաւ լինել իմանայ : Բայց լաւ է գիտել զայդոցիկ որոշմունս՝ վարել ըստ պէտս , մանաւանդ իբրև զդէմ ոք ունիցի բանից մերոց : Զի որում անհաճոյ է ընդունայն բանակուռութիւն , բազում ուրեք պարտի բացայայտել ճշդիւ՝ յոր միտս հաստատէ ինչ կամ ժիտէ :

Յ Օ Դ Ա Խ Ա Ծ Բ .

Պարզեցի բանք .

Են բանք որ 'ի վերին երեսս պարզ են , բայց յիմաստսն խառն բանից հաւասարեն : Յասելն Աստուած միայն է ամենակալ , բան է հաւասար երկուցս , Աստուած է ամենակալ , և չե ոք այլ : Այսպիսի բանք 'ի Հակածառից պարզելի կոչին . վասն զի , ըստ մատենագրի Արուեստին խորհելոյ , ծածկեալն 'ի նոսա մասն՝ պէտո ունի մեկնութեան և պարզելոյ : Այլ թողեալ զյորջորջումն անուանն , չորք են երևելի զանազանութիւնք բանիցս , առանձնական , տրոհական , համեմատական , և սկզբնաւորական կամ վախճանական :

Առանձնական ասին , յորս ցուցանի թէ մակդիրն միում ևեթ ենթակայի պատկանի , կամ թէ այնպէս պատկանի ենթակային մի ևեթ մակդիր , մինչեւ յայլոց ամենեցունց 'ի բաց որոշել . որպիսի է նախասացեալ բանն , Աստուած միայն է ամենակալ . և այս ես , խանդումանդ ոչինչ այլ ձգէ քան զերկաթ : Այս բանք ստին՝ յորժամ նոյն մակդիր պատշաճիցի և այլում ենթակայի . կամ յորժամ բաց 'ի միոյ անտի միայնոյ և այլ մակդիր պատշաճիցի ենթակային : Վասն որոյ ծուռ է ստոյիկեանցն վըճիռ , թէ ճշմարիտ ցաւք՝ հոգւոյն միայն են : Քանզի և մարմնոց ցաւք ճշմարիտ են : Կոյնակէս սուս լինի այժմ ասել , թէ աւագ մոլորակք չեն աւելի քան զվեց , այսինքն են փայլածու , արուսեակ , երկիր , հրատ , լուսնթագ , երեակ . զի այլ ևս քառասուն և վեց երեւցան առ մեօք քառասուն և չորք 'ի վեր քան զՆրատ , և Ուրանոս և Կեպտուն անդր քան զԵրեակ :

Բ . Տրոհական են , յորս հաստատեալ ինչ զամենեցունց միանգամայն , ժխտեմք ապա զմիոյ իմեքէ որ 'ի նմին կարդի : Այսպէս ստոյիկեանքն ասէին զամենայն մարդ յիմարլինել բաց յիւրեանցն իմաստնոյ : Սուս լինին այս բանք , եթէ որ զայլոցն հաստատի՝ այնմ ևս պատշաճիցի զոր 'ի

բացն տանիմք : Վասն որոյ կարծեալ իմաստունն ստոյի կեանց՝ որ անհոգութեամբ ոչինչ զգայցէ ամենեին , ոչ սէր , ոչ ատելութիւն , ոչ երկիւղ , ոչ յոյս և ոչ այլ ինչ՝ կարեաց , և զամենայն կարծրագոյն տանջանս ոչ խոստովանեացի չարիս լինել , և ինչ որ արտաքոյ է իւրոյ հոգւոյն՝ մինչև զմարմին իւր անդամ՝ օտար համարեսցի յանձնէ , արդարեւ 'ի խելագարութենէ մեծէ մեկուսի ոչ է : իսկ անկատար լինին , եթէ ոչ առհասարակ հանցին 'ի բաց՝ որ զատուցանելիքն են : Որպէս ահա անկատար է բանս , Ամենայն հրահալք , բաց յոսկւոյ , լուծանին 'ի թթուուտ բորակային . վասն զի 'ի բաց տանել պարտ է և զլմնոսկի որ նմանաբար նմին չլուծանի , և զանագ՝ որ փոխանակ լուծանելոյ 'ի կիր փոխարկի :

† . Համեմատական են յորս 'ի կշիռ մուծեալ երկու ինչ ընդ միմեանս , միումն տամք զառաւելութիւն . որպէս , Անանց բարիք հանդերձելոյ կենացն առաւել լիցին մեզ փափաքելիք քան զանցաւոր բարիս աստի կենացս : Եւ յայտնի իսկ սուտ լինին բանքս , եթէ ոչ որում արժանն է հաւաստեալ տացի առաւելութիւնն :

† . Ակզբնաւորական կոչին՝ յորս սկիզբն իրիք նշանակի . և վախճանական՝ յորս դադարումն կամ վախճանն . զոր օրինակ , Հրեայք յեօթն դարու հասարակ թուականութեանս սկսան խեցնեղեփօք վարել 'ի նշան ճայնաւորաց . Հոռոմոց ինքնակալութեանն յարեմուտս զրաւ եղև 'ի հինգ դարու , և յարեելս 'ի հնգետասանին : Եւ սոքասուտ լինին , եթէ սկիզբն և վախճան իրացն ոչ ըստ արդեանցն նշանակեսցին :

ԳԼՈՒԽ Դ.

ԱՆՌԻԵՆԵՍԼ ՈՐՍԿ ԵՒ ՔԱՆԱԿ ԲԱՆԻ . ԱՅՍ Է՝

ՀԱՍՏՏՏԱԿԱՆ , ԺԽՏԱԿԱՆ , ԸՆԴՀԱՆՈՒՐ ,

ՄԱՍՆԱԿՈՐ ԵՒ ԵԶԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Հաճոյ թուեցաւ Դալրոցականաց որակ անուանել բանից զհաստատութիւն և զուրացութիւն նոցա . և քանակ՝ զշափ ընդարձակութեան նոցա , իմա զընդհանրութեան : Յաղագս որակի սակաւ ինչ ունիմք ասել . զի յառաջաւդյն ասացաք , թէ հաստատական կոչին յորս մակդիրն յարի յենթակայն հաստատելով զհանդիտութիւնն . որպէս , Աստուած է յաւիտենական . իսկ ժխտական՝ յորս մակդիրն անջատի յենթակայէն ուրանալով զհանդիտութիւնն . որպէս , Աստուած ոչ է մահկանացու : Մնայ գիտել թէ բազում բանք առ երեսս հաստատականք , ՚ի բնի ժխտականք են ³² . և այս լինի յորժամ մակդիրն ժխտադան բառ է . զի յայտ է թէ նոյն է ասել՝ Անկարելի է և Ոչ է կարելի . և թէ Տեղի ամենեին խաւարչտին է և Զիք ՚ի նմա լցու ամենեին : իսկ զի երկու ուրացութիւնք հաւասար հաստատութեան են , այն ամենեցուն յայտ է . զի նոյն է Զիք անհնարին՝ ասել , և Հնարին է :

Հստ քանակի բանք լինին ընդհանուր , մասնաւոր , եզական : Ծնդհանուր ասին , յորժամ հաստատի ինչ կամ ժխտի զբոլոր սեռէ կամ զբոլոր տեսակէ . որպէս , Ամենայն մարմին է էակ յօդուածով : Մասնաւոր ասին , յորժամ հաստատի կամ ժխտի ինչ զոմանց միայն ՚ի սեռէն կամ ՚ի տեսակէն . որպան , Են մարմինք որ թափանցիկ են : Եւ եզական կոչին , յորժամ զմիոյ միայնոյ ինչ հաստատիցի կամ ժխտիցի . զոր օրինակ , Լուսին է մարմին դիմահար անթափանց :

Այժ գիտելի է ա , զի յընդհանրութիւն բանի չէ հարկ յաւելու միշտ զվերադիրմն ամենայն , բոլոր , իսրաւանելու . քանզի եթէ մակդիրն յայտնապէս պատշաճի բու

վանդակ կարգին զորմէ բանն է . զանց զնոքօք օրէն է առնել . զի ամենայն ոք ընդհանուր իմանայ զբանս , Մարմինք են էակք յօդաւորք . թէպէտ և հատեալ է 'ի բայ վերադիրն ամենայն :

Բ . Երկու են ընդհանութեան տեսակք , պարզաբար և բարյապէս : Պարզաբար ընդհանուր են բանք՝ յորս հաստատութիւնն կամ ժխտումն ձգի խսկապէս առ իւրաքանչիւրս միոյ կարգի . որպիսի է յառաջասացեալ բանն , և այս եւս . Մարդիկ առ հասարակ մահկանացու են : Բարյապէս ընդհանուր են , յորժամ հաստատութիւն կամ ուրացութիւն ոչ առ մէն մի իւրաքանչիւր տարածանիցի , այլ առ մեծ մասն եեթ . որպէս , Մարդիկ ախտիւք վարին քան բան բանիւ . որ թէպէտ և առ բազումն բազում անգամ ճշմարտի , բայց զամենեցունց և յամենայնի ճշմարիտ համարել անհնար է : Բարյապէս ընդհանուր բանք թէպէտ և յաճախ առեալ են 'ի խօսս , և օրէն խսկ է առնուլ համարձակ' ուր անյերկուանալի իցէ ընդհանութեանն իմաստ , սակայն յերկբայելիսն զգուշալի է . այլ փոխանակ մեծամեծս կոտորելոյ ամենայն և Քլոն ասելով , համ դնել և ասել մեծ կէմն կամ յոլովք , և կամ այլ ինչ այսպիսի չափաւորութիւն :

ԳԼՈՒԽ Ե .

ԸՆԴԻՒԴԻ ՄԱԿ ԲԱՆՔ

Երկու բանք ընդդիմակ ասին միմեանց , յորժամ զնոյն ենթակայէ 'նոյն մակդիր 'ի միումն հաստատի և 'ի միւսումն ժխտի . որպէս , բուստք են տունկ . բուստք չեն տունկ : Բայց քանզի բանք այսպիսիք՝ է զի երկոքին միանդամայն ընդհանուր են , է զի մասնաւոր և է զի եզական , կամ մին այսպէս և միւմն այնապէս , նմին իրի երրեակ ընդդիմակ բանք զանազանին . հակառակ , ներհակ , հուպ ներհակ :

Հակառակ կոչին յորժամ ընդհանուր բան և մասնաւոր , կամ երկու եզականք միմեանց ընդդէմ ելանեն . որ-

պէս, Ամենայն գաղափարք սկիզբն 'ի զգայութեանց առանուն, Ոմանք գաղափարք չառնուն սկիզբն 'ի զգայութեանց . Երկիր շրջի զարեգակամբ, Երկիր ոչ շրջի զարեգակամբ :

Ներհակ, յորժամ երկու ընդհանուրք ընդդեմ կան իրերաց . Հիկէն, Ամենայն ոք է անիրաւ, Ոչ ոք է անիրաւ :

Հուպ ներհակ, յորժամ երկու մասնաւորք դիմամարտին ընդ միմեանս. որգոն, Այլ ոմն է համեստ, Այլ ոմն չէ համեստ :

Ի քննութենէ զօրութեան բանիցդ առ ժամայն տեսանի առ զի 'ի հակառակն' եթէ մին ճշմարիտ իցէ, միւսն հարկաւ սուտ է. ապա թէ ոչ նոյն մի իր լինի միանգամայն և չլինի :

Բ. Ի ներհակն լինին և երկորեան սուտ, որգունակ 'ի տուեալ օրինակիդ. կամ մին ճշմարիտ և միւսն սուտ, որպէս թէ ոք ասիցէ, Ամենայն ախտք են զգուշալի . Եւ ոչ մի ախտ է զգուշալի . այլ երկոյուն միանգամայն ճշմարիտ լինել անհնար է :

Դ. Խակ 'ի հուպ ներհակն լինին և երկորիտ ճշմարիտ, որպէս յառեալ օրինակին . և մին ճշմարիտ և միւսն սուտ, զոր օրինակ յառելն, Այլ մի է մահկանացու, Այլ մի չէ մահկանացու . բայց երկաքանչիւրոցն անհնարին է սուտ լինել ^{ՅՅ} :

ԳԼՈՒԽ Զ.

ԱՆԴՐԱԴԱՏՐ ԿԱՄ ՇՐՋՈՒԽՆ ԲԱԽԱՔ

Անդրադարձ կոչին բանք որ 'ի շրջելն զնոսա և 'ի փոփոխել զմակդիրն յենթակայ և զենթակայն 'ի մակդիր, տակաւին ճշմարիտ մնան. որպէս, Եռանկիւն է ձեւ երեքանկիւնի և եռակողմ. Ձեւ երեքանկիւնի և եռակողմ է եռանկիւն: Այս դարձուածք կամ փոփոխութիւնք՝ երրակի լինին, զօր Դալրոցականք կոչեն սոսկապէս, ըստ պատահման և ըստ դիմադրութեան :

Սոսկապէս անդրադարձ ասին բանք որ ճշմարիտ մնան

սոսկ փոփոխմամբ ենթակային 'ի մակդիր և մակդրին յենթակայ , առանց այլ ինչ յաւելուածոյ կամ փոփոխութեան: Զայն օրինակ դառնան ա , ամենայն ընդհանուր ժխտականք . վասն զի եթէ ճշմարիտ է թէ Զիք ինչ քառակուսի բոլորակ , ապա ճշմարիտ է ևս թէ Զիք ինչ բոլորակ քառակուսի :

Բ. Ամենայն մասնաւոր հաստատականք . զի թէ ճշմարիտ է , թէ Եռանկիւն մի՝ է ձե հաւասարակողմեան , ճշմարիտ է ևս թէ Զե մի հաւասարակողմեան է եռանկիւն :

Գ. Ամենայն եզական ժխտականք . քանզի եթէ իտալիա ոչ է Գրալիա , ապա և Գրալիա չէ իտալիա :

Բայց ընդհանուր կամ եզական հաւանողականք և մասնաւոր ժխտողականք ոչ փոխին առ հասարակ ըստ այսմ օրինի : Զառաջնան չէ հնար շրջել , բայց միայն եթէ մակդիրն սահման իցէ ենթակային . և յայնժամ նոյնաբանութիւն լինի . և կամ թէ ցուցանիցէ հանգամանս ինչ այնմ ենթակայի և եթ պատշաճեալս : Օրինակ իմն , քաջ է ասել ըստ որում և 'ի վեր անդր , զի թէ Ամենայն եռանկիւն է ձե երեքանկիւնի և եռակողմ , ապա Ամենայն ձե երեքանկիւնի և եռակողմ է եռանկիւն . և թէ Ուղիղ գիծն է կարճագոյնն յորոց ճգին ընդ երկուս կէտս , նոյնպէս Գիծն կարճագոյն ընդ երկուս կէտս՝ է ուղիղ : Այլ անմարթ է ասել նոյնպէս , զի թէ ամենայն եռանկիւն է ձե , ապա ամենայն ձե է եռանկիւն . և ոչ , եթէ կեսար էր հռովմայեցի , ապա ամենայն հռովմայեցի էր կեսար : Վասն զի 'ի ըանս յայսոսիկ առ յոյժ ընդհանրութեան մակդրին քան զենթակայն , ենթակայն ստոյդ պարունակի 'ի դասուանդ զոր մակդիրն նշանակէ . այս է՝ ամենայն եռանկիւն բովանդակի 'ի սեռի ձեռոց , կեսար 'ի թիւս հռովմայեցւոց : Բայց անհնար է թէ ամենայն ձեք ամփոփիցին 'ի տեսակ եռանկեանց , կամ ամենայն հռովմայեցիք 'ի կեսար : Ի շրջել զբանս զայսոսիկ՝ պարտ է 'նրբել զնշանակութիւն մակդրին , և 'ի մասնաւոր զբանն դարձուցանելով ասել , Զե ինչ է եռանկիւն . Հռովմայեցի մի էր կեսար . և այս դարձուած կոչի ըստ պատահման :

Զմասնաւորսն ժխտողականս՝ մարթ է շրջել սոսկաբար , եթէ ենթակայն չբովանդակիէ զամենայն ընդարձակութիւն մակդրին . որպէս , Մարդ ոմն ոչ է թշուառ . Ոմն թշուառ

ոչ է մարդ . ուր ենթակայն մարդ՝ չբովանդակէ զամենայն թշուառս : Բայց անհնար է այդմ լինել , եթէ ենթակայն հաւաստեաւ բովանդակիցէ զմակդիրն ողջոյն : Զի չեք ոք որ ասիցէ , թէ քանզի ոմանք կենդանիք չեն մարդ , ապա մարդիկ ոմանք չեն կենդանի . որ է ժխտել թէ տեսակն պարունակիցի ՚ի սեռին : Յայսպիսիս , եթէ հարկ լինիցի՝ որ գուն երբէք պատահէ , պարտ է փոխել զժխտումն ՚ի բայէն ՚ի մակդիրն , և ասել , Ոմանք չմարդիկ են կենդանիք . և այս է անուանեալն անդրադարձութիւն ըստ դիմադրութեան :

ԳԼՈՒԽ Է .

ԱՅԻ ԵՒՍ ԶԱՆ ՍԶԾՆՈՒԹԻՒՆՔ ԲԱՆԻ ՄԾՆ ՍԻԱԽԴ
ՀԱՏ ԵՐԿՐՄՉԱՓԻՑ

Յետ կարեռագունիցն ցուցանելոյ յաղագս զօրութեան և պիտառութեան բանից , յաւելուլ կամմմ զբացատրութիւն անուանցն , յորս իմաստամերք և մանաւանդ երկրաչափք որոշեն առանձինն զոմանս ՚ի նոցանէ :

Այդ այս Սահման կոչի բանն յորում յայտնի բնութիւն իրի կամ նշանակութիւն անուանն . օրինակ զայս , Քառակուսի է ձեւ ուղղագիծ չորեքանկիւնի և ՚ի քառից հաւասար կողմանց պարագրեալ³⁴ :

Բ . Առած ասի յատուկ և վճիռ , որ առաջի առնէ զՃ՛ըշմարտութիւն ինքնին յայտնի . որպէս , Բոլորն մեծ է քան զիւրաքանչիւր մասն իւր :

Գ . Խնդիր , յորում պահանջի հաւանել հնարաւորութեան աներկբայելի ինչ իրի . զոր օրինակ , ի մատչելի մակարդակի հնար է ձգել գիծ ուղիղ՝ կիտէ ՚ի կէտ :

Դ . Հայեցողութիւն և տեսութիւն , յորում առաջի դնի Ճշմարտութիւն ցուցանելի , պէս զայս օրինակ . Եթէ երկու գիծք հատցեն զմիմեանս , ընդդիմագագաթն անկիւնք հաւասարք են :

Ե . Առաջարկութիւն կամ առարկուած , յորում խնդրի առնել ինչ . սմին օրինակ , Հատանել զգիծ կամ զանկիւն յերկու հաւասար մասունս :

Ա. Առումն յորջորջի բան նախադասեալ հայեցողութեան կամ առաջարկութեան, որ 'ի պէտս է նոցա, և ունի յինքեան ճշմարտութիւն՝ զոր հարկ է ցուցանել յառաջագոյն : Ըստ այսմ օրինակի, եթէ 'ի ցուցանել թէ երեք անկիւնք ամենայն ուղղագիծ եռանկեանց հաւասար են երկուց ուղղոց, զզուգահեռականն ՚ի ձեռն առցուք, արժան է կարդել նախ առումն, թէ ի հատանել երկուց զուգահեռականաց յերրորդէ իմեմնէ գծէ, փոխադարձ անկիւնքն զոր գործէ՝ հաւասար են միմեանց . նոյնպէս հաւասար են ներքին և արտաքին համակողմեանքն :

Ե. Հետեանք անուանի՝ բանն որ յայտնէ զճշմարտութիւն անընդմիջաբար 'ի հայեցողութենէ կամ յառաջարկութենէ ելեալ. օրինակի վասն, 'ի հայեցողութենէն թէ Երեքին անկիւնք ուղղագիծ եռանկեանց միանգամայն հաւասար են կրկին ուղղոց, ինքնին յառաջ գայ՝ թէ ամենայն անկիւն հաւասարակող եռանկեան, որ 'ի հարկէ և հաւասարանկիւն է, հաւասար է երրորդ մասին կրկին ուղղոց, կամ երկուց երրորդաց միոյ ուղղոյ :

Զ. Պարապումն, որ յարի 'ի հայեցողութիւն կամ յառաջարկութիւն՝ վասն առաւել բացայայտելոյ զնոսա, կամ առ 'ի պէտս ինչ 'ի կիր արկանել: Ըստ այսմ հայեցողութիւնք յատկութեանց եռանկեանց 'ի գործ պիտոյից պատշաճին, յուտուցանել զօրէնս չափելոյ զբարձրութիւն աշտարակի 'ի գետնոյ, զլայնութիւն գետոյ յափանց իւրոց, այլովքն հանդերձ :

ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

ԱՊԵՑՈՅՑՔ

Շար բանից յորում ցուցանի ինչ, ապացոյց կոչի . և պատճառք 'ի ցոյց նորին ածեալք, փաստք և հաւաստիք, ընծայութիւնք և հաւանութիւնք ասին ³³:

Ցուցեալ է կանխաւ (յէջ 86), թէ նմանութիւն և ան-նմանութիւն երկուց գաղափարաց յորժամ անընդմիջա-բար ոչ գայ 'ի յայտ, համեմատեմք զերկոսեան ընդ այ-լում երրորդի . զի 'ի նմանութենէ և յաննմանութենէ նո-ցա ընդ սմա՝ իմացուք և զնոցին ընդ միմեանս նմանու-թիւն և զաննմանութիւն ըստ այնմ մասին . և զայս ասա-ցար լինել խորհուրդ մնաց և խելամտութիւն : Այս հա-մեմատութիւն և անհամեմատութիւն երկուց գաղափա-րաց ընդ երրորդին՝ է փաստ և հաւաստիք . և շար բանից որով 'ի համեմատութենէ անտի և յանհամեմատութենէ գաղափարացն ընդ երրորդին՝ ցուցանեմք և զնոցայն ընդ իրեարս յայնմ կարգի, կոչի ապացոյց : Զոր օրինակ, ցու-ցանել կամեցեալ թէ ատելի է գատարկութիւն, առնում երրորդ գաղափար զնասակարութիւն, և ատեմ . Դատար-կութիւնն է ատելի, վասն զի վնասակար է . և ամենայն վնասակար ատելի է :

Սովորական ոճ ապացուցի և ընտանի 'ի խօսս և 'ի գիրս, այդ իսկ է զոր եղաք, որ և առաւել բնական է . զի բնա-կան կարգն պահանջէ առաջի գնելնախ զոր կամք են ցու-ցանել, և կցել զկնի զփաստն : Բայց Հակաձառիցն հա-ճոյ թուեցաւ շրջել վեր 'ի վայր առնել զկարգդ, և նմին հակառակ լաւ համարեցան ասել խոտորնակի, Ամենայն վնասակար է ատելի, դատարկութիւնն է վնասակար, ա-պա դատարկութիւնն է ատելի : Զայս եղանակ ապացուցի

անուանեցին նորա շարաբանութիւն կամ՝ հաւաքաբանութիւն ՅԵ³⁶. և կարգեցին 'ի վերայ նորա անթիւ օրէնս մեծաւ մասամբ անպիտանս, և ըստ առաւելագոյն մասին խաւարայինս :

Արտաքոյ այդորիկ և այլ ևս զանազանութիւնք են պացուցից առ նոսա. որ են եղառած, փաստորդ, երկսայրաբանութիւն, համաբարդութիւն, բազմաբարդութիւն, մակածութիւն և յարացոյց. այլ սոքա առ հասարակ 'ի շարաբանութիւն դառնան : Ասացուք զմոյ միոյ կարեւորան առ 'ի ճանաչել զնոսա և բարւոք վարել 'ի պէտս, եթէ հարկ ինչ ուրեք լինիցի : Ոչ զանց առնեմք անցանել սղագունիք և զտեղեօք ապացուցից կամ զաղբերօք . թէպէտ և արդի տրամաբանք թուի թէ ոչ առնուն յանձն միել յայս խոյզ և ինդիր, ճարտասանից թողեալ բովանդակ :

ԳԼՈՒԽ Ա.

ԸՆՐԱԲՆԱՌԻԹԻԿՆ, ԵԶԱՌԱՋ ԵՒ ՓԵՍՏՈՐԴ.

Շարաբանութիւն և հետեւաբանութիւն է ապացոյց կազմեալ յերից բանից այնպէս դասաւորելոց, զի յերկուց առաջնոցն օրինօք բոլսէ երրորդն. որպէս է տեսամնել 'ի նախակարգեալ օրինակին, և յերկուս յայսոսիկ .

1. Ամենայն խոհուն էակ՝ է պարզ.

Հոգին է էակ խոհուն,

Ապա հոգին է պարզ:

2. Ամենայն ծանր է մարմին.

Օդն է ծանր,

Ապա օդն է մարմին :

Եղառած է շարաբանութիւն յորմէ հատեալ է մի յերկուց առաջնոց բանիցն վասն ինքնին լոելեայն դիւրիմաց գոլոյ : Որպէս յառաջին շարաբանութենէն հատեալ զերկրորդ բանն, առեմք միայն

Ամենայն խոհուն էակ՝ է պարզ,
Ուրեմն հոգին է պարզ:
Եւ յերկրորդէն զեղչեալ զառաջինն, ասեմք սոսկ
Օդն է ծանր,
Ուրեմն օդն է մարմին :

Փաստորդ³⁷ է շարաբանութիւն յորում առ մի յեր-
կուց առաջին բանից կամ առ երկաբանչիւրսն մերձ դնի
փաստ իւր, եթէ պէտք իցեն, այսինքն եթէ ինքնին չիցեն
քաջայայտ: Չոր օրինակ յառաջնում շարաբանութեանն՝
փաստի կարօտի առաջին բանն Ամենայն խոհուն էակ՝ է
պարզ. և փաստն այն է, զի էակ որ ոչ պարզ իցէ, չմարթի
լինել՝ ինմա միամնաբար գիտութիւն բազում գաղափա-
րաց, ուստի և ոչ համեմատութիւն, ոչ գատումն և ոչ
խորհուրդի ինչ մտաց չմարթի առնել: Յերկրորդումն փաս-
տի է կարօտ երկրորդ բանն թէ Օդն է ծանր. որ և 'ի գի-
տողութեանէ ելանէ, զի օդ 'ի ծանրաշափին ամբառնայ զարն-
դիկն, և 'ի ձգողական ջրհանս զջուրն, և որ 'ի նոյն բերին:

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Ա.

Շարաբանութիւնը առհասարակ .

Երկու առաջին բանք շարաբանութեան առաջարկու-
թիւնք կոչին կամ լաւ ևս առաձք³⁸. մին մեծագոյն, և
միւսն փոքրագոյն. զի սովորաբար մին ընդհանուր բան է,
և միւսն մասնաւոր կամ եղական: Երրորդն ասի հետեւու-
թիւն և հետեւանք, հետեւաբանութիւն, վախճան, աւարտ
և կնիք, զի երկուց առաջնոցն զհետ գայ, և ապացոյցն
կնքեալ յաւարտումն հասանէ:

Ի շարաբանութիւնս՝ երեք մասունք և գլուխք որոշին
ըստ երից գաղափարացն համեմատելոց. փոքրագոյն, որ
զենթակայ բանին յայտ առնէ. մեծագոյն, որ զմակդիրն
հաստատեալ կամ ժխտեալ զենթակայէն. միջնորդ, որ
զերրորդ գաղափարն ընդ որում համեմատին երկու առա-

ջինքն : Ահա 'ի վերջին շարաբանութեան անդ , օդ՝ է փոքրագոյն , մարմին՝ մեծագոյն , ծանր՝ միջնորդ :

Հաստատական կոչի շարաբանութիւնն , եթէ հետեանքն է հաստատութիւն , որպէս 'ի վերոյգրեալ օրինակադ . և ուրացական՝ եթէ հետեանքն է ուրացութիւն , իբրև յերկոսին 'ի սոսա .

1. Ամենայն խոհուն գոյակ՝ է պարզ .

Նիւթն ոչ է պարզ ,

Աղա նիւթն ոչ է գոյակ խոհուն :

2. Եւ ոչ մի յօդուածոյ բնութիւն կարող է խորհել .

Նիւթն է յօդուածոյ բնութիւն ,

Աղա նիւթն չէ կարող խորհել :

Շարաբանութիւնն զանազանի եւ 'ի պարզ և 'ի խառն , ըստ որում զի 'ի պարզ բանից իցէ կազմեալ , կամ թէ մի յայնցանէ խառն իցէ : Ակսեալ յառաջնոցն անցցուք ասլայերկորդան :

ՅՈՒԽԱԾ

Պարզ շարաբանութիւնք .

Այնագոյնս ընդարձակեցան Հակաճառք 'ի կցկցել զօրէնս պարզ շարաբանութեանց , բազմացուցեալ զնոսայանբաւս . այլ զբուն և զմիայն ճշմարիտ և զհասարակացնոցա օրէնս՝ որ 'ի նմին խակ շարաբանութեանն բնութենէ բղիսէ , թուի թէ չիք ուրեք ամենեին տեսեալ նոցա :

Ամենայն պարզ շարաբանութիւնն ըստ բնութեանն կազմի յընդհանուր բանէ , որով հաստատի կամ ժխտի թէ այս ինչ դասու իրաց յարմարիցի այն ինչ մակդիր . 'ի մասնաւոր կամ յեղական բանէ , որով հաստատի կամ ժխտի թէ իրն զորմէ բանքն են՝ իցէ 'ի նմին դասու . և 'ի հետեւութենէն , որով ցուցանի՝ թէ ուրեմն և իրին զորմէ խնդիրն է , պատշաճի կամ չպատշաճի մակդիրն :

Աղա 'ի հաստատական շարաբանութեան , հետեւու-

թիւնն՝ որով հաստատի յարմարութիւն մակդրին ընդ իրին, ճշմարիտ լինի հաւաստեաւ՝ եթէ ստոյգ՝ ի նմին դասու իցէ իրն, և մակդիրն հասարակ յարմարիցի այնմ դասու: Վասն որոյ ճշմարիտ է թէ պարզ է հոդին. վասն զի ստոյգ խոհուն էակ է հոգի, և ամենայն խոհուն էակ պարզ է ի հարկէ: Հաւաստի է նոյնպէս մարմնաւորութիւն օդոյ, զի օդ ծանր է ճշմարտիւ, և ամենայն որ ծանր է, մարմին է:

Իժխտական շարաբանութեան՝ առ ճշմարտութիւն հետեւութեանն մի յերկուց աստի պայմանաց պահանջի: Կամ զի առաջի եղեալն իր՝ չիցէ յայնմ դասու, որում միայնոյ պատշաճի մակդիրն. ուստի ուղիղ հետեւի, թէ նիւթն չէ խոհուն գոյակ, զի նիւթ չէ պարզ, և ամենայն որ խոհուն գոյակ է, հարկ է թէ պարզ է: Եւ կամ զի իրն, զորմէ բանքն են, յայնախիտ դասու ուրեք իցէ, որում չպատկանիցի մակդիրն: Վասն որոյ գեղեցիկ է հետեւութիւնն, թէ նիւթ չէ կարող խորհել, վասն զի նիւթ է գոյակ յօդուածով, և ոչ մի ինչ յօդուածոյ գոյակ խորհել կարող է:

Սովոր և եթօրինոք համարձակ որոշի ուղղութիւն ամենայն պարզ շարաբանութեան, թէպէտ հաստատութեան իցէ թէպէտ ուրացութեան. և չեն ինչ պէտք խառնախորթ խուժանին զոր հանճարեցին Հակաճառք, և մեք ապախտ առնեմք, զի մի մնուուովք և չնչիւք ծանրացուսցուք զբանս: Այլ զի դուքտ ամօթ ինչ ումեք թուեսցի, գոնէ իբրև հմտութեան իմիք անգիտանալ այնոցիկ, որ այնքան ժամանակ բռնակալեցին ի գպրոցս, ծախեսցուք առ այդ յաւելուած մի ի վախճան գլխոյս, փոքր ի շատէ ճաշակս տալ ընթերցանելեացն:

Մնայ ազդ առնել, թէ երբեմն երկոքին առաջարկութիւնք շարաբանութեան մասնաւոր են կամ եղական, առանց իրիք ընդհանուր բանի. և յայնժամ թերեւս կարծիցի թէ ի մէնջ աւանդեալ օրէնքն չունիցին տեղի: Այսպիսի են օրինակ իմն երկու այս շարաբանութիւնք.

4. Գումար երկուց և երից՝ հաւասար է հնգի.

Գումար չորից և միոյ նոյնպէս հաւասար է հնգի,

Վպա գումար երկուց և երից՝ հաւասար է գումարի չորից և միոյ:

2. Հոգին է գոյակ խոհուն .

Նիւթն ոչ է գոյակ խոհուն ,

Ապա հոգի և նիւթ չեն մի գոյակ :

Սակայն այսպիսի շարաբանութիւնք , ինքնին իսկ յայտ է , զի թէպէտ և զշարաբանութեան տան ցոյցս , բայց 'ի բնէ եզառաձք միայն են , յորս մեծագոյնն՝ իմա ընդհանուր բանն՝ լւելեայն իմանի , և փոքրագոյնն յերկու բան բաժանեալ է . որպէս ահա յառաջնումն յայտնապէս իմանի զօրութեամք , թէ Ամենայն գումարք յորոց մի և նոյն թիւ ժողովի , հաւասար են միմեանց . եղեալ զայս բան , բուն շարաբանութիւն լինի :

Ամենայն գումարք յորս ժողովի մի և նոյն թիւ , հաւասար են միմեանց .

Իսկ արդ 'ի գումար երկուց և երից , և չորից և միոյ ժողովի թիւն հինգ ,

Ապա գումարք երկուց և երից , և չորից և միոյ հաւասար են միմեանց :

Նոյնպէս յերկրորդումն զօրութեամք իմանի , թէ Որոշեալքն յիսկական յատկութեան չեն նոյն գոյակ . զոր յաւելեալ 'ինման զբանս զայս , ձեանայ ճիշդ շարաբանութիւն .

Որոշեալքն յիսկական յատկութեան չեն նոյն գոյակ .

Հոգի և նիւթ իսկապէս որոշին , այնու զի մին է խոհուն և միււն ոչ ,

Ապա հոգի և նիւթ ոչ են նոյն գոյակ :

Յ Ո Ւ Խ Ա Ծ Գ .

Զառանցանք կամ ծերաբանութիւն ,

և պատճառք նորին .

Զառանցանք կամ ծերաբանութիւն է մոլար ապացոյց , թիւր շարաբանութիւն , որ կրկնակի լինի ըստ Հակաճառից . մի ' եթէ սխալէ 'ինիւթն , և միււ ' եթէ 'իտեսակն : Նիւթ զնոյն ինքն զբանսն իմանան կամ զառաջարկութիւնս , և տեսակ զշարահիւսութիւն նոցա ըստ օրինաց :

Եւ թիւր է շարաբանութիւն ըստ նիւթոյն, եթէ մի յառաջարկութեանցն սուտ իցէ. և թիւր ըստ տեսակին, եթէ հետեւութիւնն ոչ ըստ օրինի հանցի յառաջարկութեանցն : Այլ իբրև թէ անօգուտ ինչ էր ցուցանել զվիւպանս շարաբանութեան ըստ նիւթոյն, զհետ եղեն միայն աւանդել զայլ և այլ օրինակս թիւրութեանն ըստ տեսակին : Իսկ ինձ թուփ թէ յանքան ծեքաբանութեանց զոր լսեմք զօրհանապազ՝ սակաւք են որ սխալիցեն՝ ի տեսակին, իսկ ՚ի՞նիւթն՝ բազումք : Եւ ո՞ արդարեւ այնքան խօսթամիտ որ յերկուց ուղիղ և օրինաւոր առաջարկութեանց՝ չգիտիցէ անվուեալ ածել զհետեւութիւնն, կամ թիւր ինչ կամիցի բերել : Յերկուց աստի առաջարկութեանց

Ամենայն առաքինութիւնն է սիրելի,

Բարերարութիւնն է առաքինութիւնն,

ո՞ այն որ չգիտիցէ յառաջ բերել զհետեւութիւնն, Ուրեմն բարերարութիւնն է սիրելի . կամ ո՞ այնպէս անմիտ՝ որ զհակառակին կամիցի հանել, թէ Ուրեմն բարերարութիւնն չէ սիրելի :

Ապա շարաբանութեանց սխալ՝ բազում այն է զի ՚ի թիւրութենէ առաջարկութեանցն լինի, մանաւանդ մեծագունին՝ որով իմանամ՝ աստանօր զընդհանուր բանն, թէպէտ և Հակաճառքն մեծագոյն սովոր են կոչել զառաջին բանն, եթէ ընդհանուր իցէ, եթէ մասնաւոր և եթէ եղական : Շարաբանութիւնս, Ամենայն որ ունի բուն և ոստո՝ է տունկ, բուստք ունին բուն և ոստո, ապա բուստք են տունկ⁵⁹, թիւր է շարաչար . ոչ վասն տեսակին, այլ վասն զի թիւր է ընդհանուր բանն, այն թէ բուն և ոստք շատ իցեն՝ ՚ի տունկ լինել, կամ թէ ամենայնի՝ որոյ իցեն բուն և ոստք՝ ընդհեռիւթ, առիւծք են կենդանիք, ապա առիւծք են վագերք . Յովազ ոչ է վագք, յովազ ոչ է առիւծ, ապա յովազ է ընձառիւծ . մոլար շարաբանութիւնք են երկոքեան, ոչ ՚ի տեսակէն՝ որպէս կարծեն Հակաճառողքն, այլ ՚ի նիւթոյն, իմա ՚ի սխալութենէ ընդհանուր բանին, որ լոելեայն կայ ՚ի նոսս : Քանզի որպէս սակաւիկ մի յառաջ ցուցաւ, չեն դոքա ճշմարիտ շարաբանութիւնք, թէպէտ և այնպէս ինչ թուիցին՝ յերից բանից զկազմութիւնն ունելով . այլ եղառածք են, որոց յառաջնումն իմանի զօրութեամբ ընդհանուր բանս, Ամե-

նայն կենդանի է նոյն . և յերկրորդումն՝ Ամենայն որ չէ վագր կամ առիւծ , է ընձառիւծ : Արդ յաւելեալ 'ի նոսա զերկոսին բանքս , կազմին երկու շարաբանութիւնք . Ամենայն կենդանի է նոյն , իսկ վագերք և առիւծք են կենդանիք , ապա վագերք և առիւծք են նոյն . Ամենայն որ չէ վագր և ոչ առիւծ է ընձառիւծ , իսկ յօվազ չէ առիւծ և ոչ վագր , ապա է ընձառիւծ : Բայց ահա և ոչ միոյ 'ի շարաբանութեանց աստի խճբիծ ինչ կայ 'ի տեսակին . ապա վրիպակ նոցա ոչ 'ի տեսակն , այլ 'ի նիւթն է , այս է 'ի ստութեան ընդհանուր բանիցն երկոցունց , թէ Ամենայն կենդանի է նոյն , և թէ Ամենայն որ ոչ վագր է կամ առիւծ , ընձառիւծ է : Եւ ռամիկն ինքնին , որ լոկով առաջնորդութեամբ խելաց քաջիկ ևս քան զՀակաճառան երբեմն գիտէ ուղղաբանել , տեսանեմք զի իմանայ զվրիպակ կարծեալ շարաբանութեանցդ 'ի նիւթն լինել , և ոչ 'ի տեսակն : Զի թէ ցուցանել կամիցիմք նմա առաջնովն , թէ վագր և առիւծ քանզի կենդանի են երկոքեան , են նոյն մի ինչ . տացէ անդէն պատասխանի . Ոչ ամենայն կենդանի է նոյն : Եւ թէ երկրորդաւն առցուք ցուցանել , թէ յօվազ՝ զի չէ վագր և ոչ առիւծ , ապա է ընձառիւծ , ընդդէմ կրկնեսցէ . Ոչ ամենայն որ չէ վագր կամ առիւծ՝ հարկ է թէ ընձառիւծ է : Հակաճառախիցն անտես զքննութեամբ արարեալ ճշմարիտ և կերպարանեալ շարաբանութեանց , ասացին՝ զսիսալ երկոցուն դոցա 'ի տեսակին լինել : Իբրև զի յերկուց մամնաւոր բանից , որպիսի են առաջարկութիւնք առաջնոյն , չէ հնար հետեւցուցանել ինչ , և յերկուց ժիտական առաջարկութեանց՝ որպիսի երկրորդին են , անմարթ է հաստատական ինչ ածել հետեւութիւնն : Եւ այսպէս ստեղծին երկուս օրէնս , որ թէպէտ և բազում ուրեք ճշմարտեսցին , այլ բազում ուրեք և սուտ գտանին , որպէս 'ի յաւելուածին ցուցցուք :

Յայնժամ միայն ճշմարտապէս պիտակն շարաբանութիւնք 'ի տեսակին , յորժամ առ խարդախութեան կամ 'ի վրիպակէ սալրդեսցի 'ի նոսա աւելի քան զերիս մասունս կամ գլուխս համեմատելիս . որպիսի է այս . Աղծեալ միտ տայ ըմպել , ըմպելն շիջուցանէ զծարաւ , ապա աղծեալ միտ շիջուցանէ զծարաւ : Ուր ըմպելն եղեալ է նախ իբրև գործ ծարաւոյ եղելոյ յապիտայն , և ապա իբրև զովացուցիչ պապակման . և ապուխտ նախ առեալ է ծարաւեցու-

ցիչ, և ապա բժշկիչ ծարաւոյ: Կոյնալիսի է և այս, Որ վառէ է հուր ճշմարիտ, խանդն և աժխոյժք վառեն զմիտս, ապա խանդն և աժխոյժք են հուր ճշմարիտ. յորում վառեն եղեալ է նախ ՚ի յատուկ միտս և ըստ ձայնին, և ապա փոխաբերելով յեռանդն հոգւոյ:

Ապա մեծաւ ինամով զգուշանալ պարտ է, զի մասունք շարաբանութեանն յամենայն համեմատութիւնս ՚ի նոյն միտս առցին անվրէալ: Զի դատումն մտաց, որպէս ասացեալ է, է համեմատութիւն երկուց գաղափարաց ընդ երրորդի, զի ՚ի հանգիտութենէ և յանհանգիտութենէ նոցա ընդ երրորդին, ՚ի միտ առցուք ըստ այնմ մասին և զնոցա ընդ միմեանս հաւասարութիւն և անհաւասարութիւն: Ապա նոյնապէս և շարաբանութիւն ոչ այլ ինչ է, բայց ցուցանելթէ երկու առաջին գաղափարքն հանգէտ են երրորդին, կամ թէ ոչ: կամիմք ցուցանելթէ օդն է մարմին. զերկոսին գաղափարսդ միաբանս և համեմատս ցուցանեմք գաղափարի ծանրութեան, և ՚ի շարաբանութեանն զոր ՚ի դոյն պէտս յօրինեմք, երեք մասունք միայն են ըստ երից գաղափարացն համեմատելոց, այս է փոքրագոյն՝ օդ, մեծագոյն՝ մարմին, միջնորդ՝ ծանր: Իսկ եթէ մի ՚ի մասանցն, և մանաւանդ միջնորդն՝ յորում ստէպ լինի սխալել, յերկուս զանազան միտս առցի, ոչ ևս երեք մասունք լինին, այլ չորք, յորոց ոչ ինչ է հնար հետեւցուցանել: Վասն զի մեծագունին և փոքրագունին չկը ինչ յայնժամ հասարակէտ համեմատութեան, և ոչ չափ հասարակաց:

Սակայն և զայսալիսի չորեքմասնեայ շարաբանութեանցն զվրիպակս, եթէ ստոյգ շարաբանութիւնք իցեն և եթէ կարծեօք և կերպարանօք, գիւրաւ է ՚ի միտ առնուլ քննութեամբ միայն ընդհանուր բանին, որ յայտնի կամ զօրութեամբ կայ ՚ի նոսա: Քանզի ահա յառաջնում անդ նախեղեալ շարաբանութեանցն՝ լուելեայն իմանի, թէ Ամենայն որ արբուցանէ կամ տայ ըմպել, յափուցանէ զպառքումն. որ սուտ է. զի ոչ յարբուցանելոյ՝ այլ յըմպելոյ զովանայ պասուքն: Իսկ յերկրորդին խեղաթիւր է բանն, Որ վառէ՝ հուր ճշմարիտ է. զի վառելն կրկին միտս տայ, հարազատ և այլաբանական: Լաւ ևս յայտ եղեւ աստի, թէ զոր յընտրութիւն ճշմարտութեան և ստութեան պարզ շարաբանութեանց աւանդեցաք օրէնս, բոլորեցուն նոցա հասարակաց ՚ի դէպ գայ, որպէս զիարդ ինչ և կաղմեալ իցեն:

Յ Յ Ո Ւ Ա Ծ Դ .

Խառն շարաբանութիւնք .

Խառն կոչին շարաբանութիւնք որոց մեծագոյն առաջարկութիւնն է խառն բան : Ի խառն բանից սովորական ՚ի շարաբանութիւնս են կցորդական ասացեալքն , շաղկապականք և անջատականք . և ըստ երից այդոցիկ յերիս տեսակս հատանին խառն շարաբանութիւնք :

Ա . Կ Ց Ո Ր Դ Ա Կ Տ Ա Ք

Կցորդական են որոց մեծագոյնն է բան կցորդական , պայմանաւ . որպէս , եթէ իցեն ուրեք խանձողք հրաբուխց և չեշաքարինք և այլ նշանք հրաբուխի , եղեալ է անդ երբեմն հրաբուղխ . իսկ արդ նշանք այսպիսի գտանին ուրեք ճշմարտութեամք , ապա եղեալ է անդ հրաբուղխ :

Ի կցորդական բանի՝ մասն որ զպայմանն յայտնէ , նախադաս կոչի . և որ զհետեանս պայմանին , հետեօրդ : Յուղիղ հետեութիւն շարաբանութեանցս պիտոյ է հետեօրդին հարկաւ յառաջագայել ՚ի նախադասէն . այս է , զոր յեղեալ պայմանէն յառաջ բերեմք՝ պարտի հարկաւ հետեւել . որպիսի է եղեալդ ՚ի վերոյ շարաբանութիւն , և այս , Եթէ չգոյր տիեզերաց արարիչ , չգոյին և տիեզերք . այլ գոն տիեզերք , ապա զոյ և նոցին արարիչ : իսկ չէ ուղիղ ապացոյց ասելն , Եթէ մոլորակ է լուսինն , բնակիչք են ՚ի նմա . իսկ արդ ճշմարիտ մոլորակ է , ապա են ՚ի նմա բնակիչք . զի զի՞նչ հարկ մոլորակի բնակս ունել ՚ի բնէ , թէպէտ և չէ ինչ յանհնարից : Եւ տարապարտ շաղփաղփէին Ճեմականք , թէ Եթէ չգոյր ՚ի մարմինս սիրելութեան աղապատանք , խանդումանդ և երկաթ ոչ ճգէին զմիմեանս . այլ սոքա ճգեն զիրեարս , ապա ախտակցութիւն և աղապատանք են ՚ի մարմինս : Զի ճգումն խանդումանդի և երկաթոյ զի՞նչ մօտ իցէ ՚ի կիրսն զոր դնեն , զի՞ կայ նորա և սոցա :

Բ . ԸՆԴԿԱՊԱԿԱՆՔ

Նաղկապական ասին շարաբանութիւնք , որոց մեծագոյնն է բան շաղկապական և ժխտական . որգունակ , Ոչ ոք կարէ 'ի նմին ժամու լինել 'ի Հռովմ' և 'ի Փարիզ . իսկ այս անուն յայս նիշ ժամու էր 'ի Հռովմ' , ապա չեր 'ի Փարիզ :

Առ ճշմարտութիւն սոցա հարկ է երկոցուն իրացն անմիամնականս գոլ և զմիմեանս խափանել , զի 'ի միզյն կալմի կացցէ միւսն . ուստի թիւր է ասելն , Ոչ ոք կարէ լինել միանգամայն ադահ և շռայլ . իսկ արդ այս ոք շռայլ է , ապա չե ադահ . զի ոչ սակաւք են , որ զնդան յիրս ինչ , չարաչար կծծութեամբ կարկամին և ժլատին , և առ նմին յայլս ընդարձակեալ վատնեն անխնայ :

Գ . ԱՆ ԶԱՏԵԿ ԱՆՔ

Անջատական են շարաբանութիւնք յորժամ մեծագոյնն է բան անջատական . որպէս , Ամենայն գոյակ՝ նիւթական է կամ աննիւթ , այլ հոգին չե նիւթական , ապա է աննիւթ . կամ այսպէս , Հոգին է աննիւթ , ապա չե նիւթական : Ըստ յետին օրինակիդ անջատականք գիւրաւդառնան 'ի շաղկապական՝ փոխելով զմեծագոյնն . ահա այժմու ասացեալ՝ շաղկապական լինի յասելն . Զիք և ոչ մի գոյակ որ միանգամայն նիւթական և աննիւթական իցէ : Այլ հոգի է աննիւթական , ապա նիւթական ոչ է :

Յուղղութիւն սոցա պահանջի , զի երկոքին անջատեալքն ճշմարտիւ անմիամնականք իցեն , և զի չիցէ ինչ այլ ընդմէջ նոցա : Վասն որոյ խաղոյ բանք էին որով Դիոդոր Կրոն մեգարեան իմաստակ կարծէր անհնարաւոր ցուցանել զարժումն , այսպէս ասելով . Ի շարժել իրիք կամ ուր էն անդ շարժի , և կամ ուր չեն . իսկ չմարթէ շարժել ուր չեն , և ուր էն անշարժ կայ , ապա չիք ինչ որ շարժիցի⁶⁰ . Վասն զի անդ իսկ սկսանի շարժումն մարմնոյ՝ ուր էն , և գայ անցանէ՝ ուր ոչն է : Նոյնպէս ծաղու իրք են ասելն , Ճենք կամ քրիստոնեայ են կամ մահմետական . այլ չեն քրիստոնեայ , ապա են մահմետական . զի ո դիտէ հրեայք իցեն կամ կուապաշտք , որպէս և ենն իսկ դիցակրօնք :

Յ Օ Դ Ա Խ Ա Ծ Ե .

Զի և խառն շարաբանութիւնք ընդ հասարակաց
օրինօք պարզիցն են .

Եւ յամենայն իսկ խառն շարաբանութիւնս գոյ բան
ընդհանուր յայտնի կամ լոելեայն . և ճշմարտութիւնն
ստութիւննոցա յառաջ գայ մանաւանդ՝ ի ճշմարտութեւ-
նէ և 'ի ստութենէ այնք բանի . վասն որոյ զոր յընտրու-
թիւն պարզիցն աւանդեցաք, նոյն օրէնք են և որոց խառն
իցեն :

Ի շաղկապական և յանջատական շարաբանութիւնս ինք-
նին յայտնի են իբքն . զի անշուշտ ընդհանուր բանք են, Ու
ոք կարէ 'ի նմին ժամու 'ի Հոռվմ լինել և 'ի Փարիզ . Ամե-
նայն գոյակ՝ նիւթական է կամ աննիւթական : Ի կցորդա-
կանմն դիւրին է նոյնակես ցուցանել, թէ մեծագոյնն՝ յու-
րում պայմանն է, զընդհանուր բանի զօրութիւնն ունի
միշտ : Վանզի յառաջնումն ընդհանուր բան է, Ուր խան-
ձողք հրաբուխից են և չեչչաքարինք և այլ նշանք հրա-
բուխի, եղեալ է անդ երբեմն հրաբուղիս . յերկրորդին,
Չմարթէ լինել գործ առանց ուրուք գործելց, կամ Չիք
գործ առանց պատճառի : Եւ ճշմարտութիւն յառաջա-
սացեալ շարաբանութեանցն 'ի ճշմարտութենէ ընդհա-
նուր բանիցս ելանէ . որպէս և ստութիւն այլոց երկուցն
պատճառս ունի զստութիւնն ընդհանուր բանիցն որ ծած-
կեալ կան 'ի նոսա, այն թէ Ամենայն մոլորակաց հարկին
ընակիչք իցեն . և թէ, Չիք մարմին որ առանց սիրելու-
թեան և աղապատանաց ձգեսցէ կամ ձգեսցի :

Ապա յընտրութիւն ուղիղ շարաբանութեանց և թիւ-
րոց՝ չպիտի այլ ինչ քան զհասարակաց օրէնսն առ . 'ի մէնջ
աւանդեալս : Եւ զի թիւրութիւնն առաւել յընդհանուր
բանին սովոր է լինել կամ 'ի մեծագոյնն, այնմ առաւել
միտ դնել արժան է : Ի ուրեք զի և 'ի փոքրագոյնն գտանի
թիւրութիւն, այսինքն 'ի մասնաւոր կամ յեզական բա-
նին . այլ քանզի սորա գործ է միայն յայտնի կացուցանել

զդաս ենթակայի բանին , դժուարին է սխալէլ յայնմ : Զի գրեթէ ամենայն ոք հմուտ է կարդի սեռից և տեսակաց իրաց . և դոյզն ինչ գիտութեամբ ոք զկաղնին չասէ երբէք կենդանի , կամ տունկ զվագր , կամ զուկի՝ քար , կամ զբոհար ակն՝ հրահալ , կամ զագահութիւն՝ լաւութիւն , կամ չարութիւն՝ զբարերարութիւն : Իսկ յընդհանուր բանս դիւրին է յոյժ մոլորել . զի որովհետեւ ընդհանուր դաղափարք և ծանօթութիւնք գումարութիւնք են յօդեալք առ ՚ի մէնջ մասնաւոր գաղափարք հանգամանացն զոր ՚ի բազում իրս հասարակ տեսանեմք , դիւրին է թէ յընդհանուր դաղափարի դասու իրիք ոչ ամփոփիցեմք զամենայն հանդամանս նորա , կամ զոմանց ևեթ զյատուկսն ժողովիցեմք՝ զոր բովանդակ դասուն գրել ոչ է օրէն . աշպա ամենեցուն իսկ վկայութեամբ դիւրաւ սպրդէ յոլով վրիսակ :

Յ Ռ Ո Ւ Ա Ծ Զ .

Եղառած .

Եղառած է , որպէս ասացաք , շարաբանութիւն յորում լուեմք զմի յառաջարկութեանցն , յորժամ ինքնին զօրութեամբ հեշտեաւ իմանի . որպէս , Հոգին է պարզ , ապա է անապական . ուր զօրութեամբ իմանի մեծագոյնն , Ամենայն որ պարզական և սուղական բնութիւն է , անապական է . և կամ այսպէս , Ամենայն աննիւթ գոյակ՝ անմահ է , ուրեմն հոգին անմահ է . ուր լոելեայն կայ փոքրագոյն , Հոգին է գոյակ աննիւթ :

Քանզի երկու միայն են բանք եղառածի , առաջինն կոչի նախադաս , երկրորդն հետեւորդ կամ հետեւութիւն :

Ճշմարտութիւն և ստութիւն եղառածի նովին օրինօք ընտրի , զոր յաղագս շարաբանութեանց եղաք ՚ի վերադոյնսն :

Ցաւելցուք թէ փոխանակ շարաբանութեան լաւ է եղառած վարել , եթէ մի յառաջարկութեանցն ստոյգ իցէ և դիւրիմաց ՚ի զեղչելն . զի այսպէս համառօտեալ և սերտեալ ապացոյցն՝ արագագոյն հարկանէ զհակառակորդն

և գիւրահաս լինի : Երբեմն և եզառածն իսկ 'ի մի բան ամփոփի , կոչեցեալ վճիռ եզառածեան և կարճաբանութիւն . որպիսի է արիստոտելեանն այն , Մահկանացուդ , մի պահեր ոխս անմահս . որ հաւասար է եզառածիս , Մահկանացու ես գու , ապա մի անմահ քէն պահեր . ընդ որով իմանի զօրութեամբ ընդհանուր բանս , Որ մահկանացու ոք է , չպարտի անմահ ոխս ունել : Իսկ եթէ մի յառաջարկութեանցն դժուարիմաց իցէ կամ անստոյդ , վնաս է լուելն . ուստի սխալ գործէ որ ասէն միայն , Հոգին խորհի , ապա է գոյակ պարզ : Վասն զի խորհրդոց և պարզութեան խոհուն էակի ոչ ինչ է յստակ և յայտնի հաւասրութիւն , զի ընդ լուելն՝ ամենեցուն իմասցի : Եւ ոչ իսկ հերիք է աստանօր յաւելուլ միայն զընդհանուր բանն , թէ Ամենայն խոհուն գոյակ՝ պարզ է հարկաւորապէս . այլ արժան է 'ի հետ յարել և զհաւաստիմն , և 'ի շարաբանութենէ առնել փաստորդ :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Է .

Փաստորդ .

Որպէս կանխաւն ասացաք , փաստորդ է շաբաբանութիւն՝ յորում առ մի յառաջարկութեանցն կամ թէ առերկուեանն իսկ մերձ դնի հաւաստիքն , եթէ ինքնին չիցեն պարզ և յայտնի . զօրինակսն եղեալ է անդանօր :

Զուղղութիւն և զթիւրութիւն փաստորդի դիւրին է դատել 'ի զօրութենէ փաստիցն , որք 'ի ցոյց առաջարկութեանցն առեւալ են :

Զմայ ինչ այլ ասել առ այս , բայց զի սա է թերես սովորական և յաճախեալ 'ի պէտս քան զամենայն ապացոյցս . նա 'չիք ճառ և խօսք և գրուած , որ 'ի փաստորդ ոչ դարձցի : Վասն որոյ՝ խորհելոյ Արուեստին մատենագիր նմանագոյնս խորհի , թէ ճառն կիկերոնի վասն Միլոնի դառնայ բովանդակ յայս փաստորդ . Որ գարան գործէ կենաց ուրուք , արժանապէս սպանանի 'ինմանէ . զոր հաստատէ կիկերոն յիրաւանց բնութեան և ազգաց և օրինա-

կօք . իսկ արդ կլաւդիոս դարան գործեաց կենաց Միլոնի ,
զոր ցուցանէ 'ի կազմածոցն , 'ի սպառնալեաց և 'ի սպառա-
զինաց որ ընդ նմա էին . ապա կլաւդիոս յիրաւի սպանաւ
'ի Միլոնէ : Նոյնապէս ողջոյն մատեան նեւտոնեան ծանրո-
զութեան կամ ձգողութեան բովանդակի յայս փաստորդ .
Որ ինչ միօրինակ վկայեալ է յիրացն ընութենէ , ընդու-
նելի է 'ի բնագիտութեան . իսկ նեւտոնեան ձգողութիւնն
յամենայն շարժմանց լուսաւորացն վկայեալ է միաբան ,
որպէս 'ի քննութենէ նոցին յայտ է . ապա ընդունելի է
նեւտոնեան ձգողութիւնն :

ՅԱՒԵԼՈՒՄԾ

ՕՐԻՆՎ ՇԱՏՏԵՎՈՒԹԵՍՆ ԲՈՏ ՀԱԿԵՑՄՈՒՑ

Հարկ մեծ թուեցաւ Հակածառիցն մանրախոյզ լինել
՚ի վեր քան զամենայն քանի ձես և քանի եղանակս հնար
իցէ ունել շարաբանութեան, իմա քանիպատիկ խառնի-
խուռն ժխորել: Զե իմանային զպէսպէս դասաւորութիւն
և զզանազան գործս միջնորդական մասին յերկոսին առա-
ջարկութիւնսն: Եւ զի լինի ենթակայ ՚ի մեծագոյնն և
մակդիր ՚ի փոքրագոյնն, մակդիր յերկաքանչիւրմն, են-
թակայ յերկաքանչիւրմն, ենթակայ ՚ի փոքրագոյնն և
մակդիր ՚ի մեծագոյնն, չորս ձես սահմանեցին շարաբա-
նութեան, և այն ոչ առանց բազում խազմի և հզօր կը-
ռուոյ յաղագս չորրորդին, զոր կէսք ընդունելի ասեին, և
այլք ըմբոստացեալ ընդդէմ ՚ի վսեր գային: Եղանակ ի-
մանային զպէսպէս շարադրական խառնումն ընդհանուր
և մասնաւոր յանձնառական և հրաժարական բանից ՚ի շա-
րաբանութեանն. զոր և ամփոփեցին յիննեւտամն, բովան-
դակեալ յառաջիկայ մոգական ոտանաւոր տողս, զորոց ՚ի
դէալ իցէ արդեօք ասել ըստ Պեռնեայ զուարծախօս քեր-
դողի, տաղք որ դիւահարեն զշունս.

Պլատիուսն +, վետոնորիկւլ, հանդիցի, իւտեցօղ.

Պլատոնիու, վելամես, հարիցի, իւտեստօտ +, իւտեստօտ.

Չետոնիւլ, չափեցի, իւտեցօղ, պարօտօտ +.

Հալոտի, իւտեպօք, հիստոփիս, հարցիու, պրօտօտօղ, իւցիս +:

Մի ոք խոժոռեսցի թէ չհասկանայ ինչ յիմաստուն բա-
նից այտի. զի ահա նոցա մեծապէս սիրով գթացեալ, ազդ
առնեն՝ մի ինչ ամենելին միտ դնել իմաստից բառիցն, իւր-
բե թէ հնար իցէ միտս ինչ գտանել ՚ի նոսա, այլ հայել
միայն ՚ի ձայնաւորս նոցին: Արդ Ացուցանէ ասեն ընդհա-
նուր բան հաւանողական, զոր նոքա նախադասութիւն
ստորասական ասեն. Ե ընդհանուր բան ուրացական, զոր
ինքեանք բացասական կոչեն ըստ խօսից իւրեանց աշխար-
հին. Ի մասնաւոր բան հաստատութեան, 0 մասնաւոր

քան ուրացութեան. այլ 'ի դիւր յիշատակի տողեալ են զայդոսիկ 'ի սքանչելի ուսանաւորս հոմերական.

Այն ընդհանուր սուրածուին :

Են ընդհանուր բացառուին :

Ինին մասնաւոր սուրածուին :

Օն մասնաւոր բացառուին :

Կարաբանութիւն 'ի պարկարանին զայն ասէին, որոյ երեքին ևս ըանք ընդհանուր հաստատական են. և զայն 'ի վարագիւն, որոյ առաջնն և երրորդն ընդհանուր ժխտղական են, և երկրորդն ընդհանուր հաստատական. այսպէս և որ 'ի կարգին :

Բայց զի մի ոք տարակուսեսցի, եթէ լինիցի արգեօք ուղիղ շարաբանութիւն երիւք ընդհանուր բանիւք, ձանուցանէին սիրողաբար՝ թէ և եղականքն ընդհանուր են: Զի որովհետեւ ենթակայ նոցա եղական է, նմին իրի իսկ հարկաւ ըստ ամենայն ընդարձակութեան իւրոյ առեալ լինի. և այս է ըստ նոցա յատուկ բնութիւն ընդհանուր բանի. որպէս զի օրինակ իմն Եսովպոս եր գաճաճ, և այդմ իսկ ընդհանուր բան անուանել:

Եւ քանզի յիրաւի եր ումեք զարմանալ, զի յոմանս 'ի դիւթական ձայնից անտի նոյն ձայնաւորք կան նովին կարգաւ, որպէս 'ի վարագիւն, վարագիւն, մինչ զի կարծել անհմտագունիցն խորհրդոյ զօրութեան գեղեցիկ արուեստին՝ թէ նոյն եղանակք կրկնեալք իցե՞ն, անդէն աճապարեալ նոցա զառաջս առեալ զեկուցանէին, թէ նոյն եղանակ ոչ ևս է նոյն, յորժամ այլոյ ձեռյ է: Առ բարւոք իմանալոյ զայս, գիտելի է զի ոչ շատ թուեցաւ չակաճառից աւանդել միայն զամենայն եղանակս շարաբանութեան, այլ կարեւոր դատեցան յոյժ խոյզ և ինսդիր լինել, քանիք յեղանակաց անտի ընդ անցնիւք ձեռվ անկանիցին. և զի մի և նոյն եղանակ ընդ բազմօք անկանի, հարկ համարեցան կարգել ընդ միով միով, բայց և որոշումն դնել այլ և այլ բառիւք, զի մի յանհնարին վնաս խառնակեսցի սորայս ընդ նորայն :

Որք զչորրորդ ձեն տարագիր արարեալ վտարանդի ըստ աշխարհն իւրեանց հանին, ինն եղանակս բաժանեցին առաջնոյն. չորս ուղիղս, պարկարանին, վարագիւն, հանդիցի, վերեցող. և հինգ անուղիղս, պաժառիու, վարագիւն, հարկիցի, իրկունիու, իսունիու: Բայց զայս հինգ անուղիղս հարը-

տահարութեամբ մեծաւ բարձին այլք յառաջնոյ անտի, և
ետուն չորրորդին . երկրորդին վիճակեցան չորք, վեստիւլ,
շափեացես, իւսւինօղ, պարօտօտ. և վեց՝ երրորդին, հալտոյի,
իւրապէք, հիստիւլ, հորցիւլ, պրօտարօղ, իւշիւօտ:

Ազդ այժմ սովին յառաջածանօթ տեղեկութեամբք,
եթէ հաճեսցի Աստուած, մարթեմք իմանալ, թէ վե-
նարիւլ, վելսմես, վեստիւլ թէպէտ և զնոյն մի ձե կացու-
ցանեն ի հատպէս, այսինքն ըստ ընութեան և շարակարգու-
թեան բանիցն, բայց ոչ պարզունական ար և բայց անիտ-
ուիս, իմա ոչ ըստ ամենայնի: Վասն զի վենարիւլ է ուղիղ
եղանակ առաջնոյ ձեւոյն, վեստիւլ երկրորդին, և վելսմես՝
ըստ ոմանց ծանրագլուխ վարժապետաց՝ է անուղիղ ա-
ռաջնոյն, և ըստ այլոց ոչինչ ընդհատ մեծագլուխ պատ-
կառելեաց՝ չորրորդին: Իսկ թէ քանիօն իցէ մեծաշահ
օգտութիւն և լուսափայլութիւն 'ի խարութիւնս յայսո-
սիկ, այն ամենեցուն քաջայայտ կայ:

Ապաքէն կարի իսկ դատարկապորտք և ընդվայրայածք
էին Հակաճառոք՝ յայսպիսեաց քննութիւնս ժամավաճառ
լինել. կամ թէ այնպէս թուեցաւ նոցա, զի որ ցուցանել
կամիցի ոք, թէ զարգանակ չէ պարտ ըմպել ջերմաջերմ,
քանզի խարշատէ, գիտել պարտիցի ընտրել յառաջա-
գոյն, զապացոյն 'ի հալոպէն արդեօք կարգիցէ, եթէ 'ի
իւշիւօտ կամ 'ի իրիւտիօտ:

Բաց յառանձին օրինաց իւրաքանչիւր եղանակաց շա-
րաբանութեան ըստ զանազան ձեւոցն, ճոռումացան Հակա-
ճառոք և յայլ ինչ օրէնս հանրականս, յորոց կէսք այն-
շափ յայտնի են ինքնին՝ զի ակնարկել միայն շատ էր. և
կէսք, գոհութիւն Աստուծոյ, սուտ իսկ են: Յաղագս ա-
ռաջնոցն, ո՞է որ ոչ տեսանիցէ, թէ որովհետեւ շարաբա-
նութիւն է համեմատութիւն երկուց իրաց կամ մասանց՝
ընդ այլում երրորդի, չպարտին լինել 'ի նմա աւելի քան
զերիս մասունս: Եւ թէ, քանզի միջնորդող մասնն է՝ որ
համեմատի ընդ այլ երկուսն յառաջարկութիւնն, ինքն
շմտանէ ամենելին 'ի հետեւութիւնն և ոչ իւիք: Եւ զի և ոչ
զմի 'ի մասանց անտի ընդհանրագոյնս պարտ է առնուլ 'ի
հետեւութեանն քան յառաջարկութիւնն, ապա թէ ոչ,
ոչ ևս երեք մասունք լինին, այլ չորք և հինգ: Եւ զի յեր-
կուց յանձնառական առաջարկութեանց անհնար է հրա-
ժարական հետեւանս յառաջ ածել: Եւ զի եթէ մի յառա-

ջարկութեանցն ժխտական իցէ՝ 'ի ցոյց անհանգիտութեան միոյ ուրուք՝ 'ի մասանցն ընդ միջնորդին, յայնժամ և հետեւութիւնն հարկաւ ժխտողական է. և եթէ մին յառաջարկութեանց մասնաւոր իցէ, այնպիսի լինի և հետեւութիւնն : Զայս երկու ինչս յայտ առնեին նոքա ասելով, Հետեւութիւնն ըստ խոնարհագոյն մասին լինի. կամ ըստ նոցա խաղողալուր բառին, Եղբայրաց անունն այսորոնց մասին պարուի հետեւիլ:

Յաւելին և այլ այսպիսի օրէնս, է որ իբրև վճիռ, և է որ իբրև հետեւանս . զոր օրինակ՝ թէ մասնաւոր բանք բովանդակին յընդհանուրմն, ոչ ընդհանուրքն 'ի մասնաւորս. թէ ենթակայն է որ զբանն մասնաւոր կամ ընդհանուր առնէ, այնու զի 'ի մասնաւոր կամ յընդհանուր միտս առեալ է. թէ որ ինչ հաստատի կամ ժխտի հասարակաբար զբովանդակ դասէն, հաստատի կամ ժխտի և զմիոյ միոյ իւրաքանչիւր 'ի նմա պարունակելոց. ուստի որ հաստատէ զբովորն, հաստատէ և զմաննն : Եւ այլ ևս սորին սակի բանք՝ ճշմարիտք, բայց մնութեաց և չնչենոց ինդիբք :

Յայս ամենայն յաւելին այլ ևս երկուս, որ թէպէտ և բազում ուրեք ճշմարիտ պատահեցեն, բայց և յոլով ուրեք 'ի սուստ ելանեն. այն թէ, ոչինչ է մարթ հետեւեցուցանել յերկուց ժխտողական բանից, և ոչ յերկուց մասնաւորաց : Վասն ժխտականացն կամէի գիտել, յորժամ ոչ բարի իցէ ինչ և ոչ միջակային, մի թէ չկարիցեմ ուղիղ զհետ բերել, թէ չար է ուրեմն. և յորժամ կէտ մի ոչ 'ի սկիզբն գծին իցէ և ոչ 'ի վերջն, չիցէ համարձակ ասել թէ ուրեմն 'ի միջոցի անդ երկուցն է: իսկ յաղագս մասնաւորացն նմանապէս չգիտեմ զիարդ յուրաստ կայցեն Հակաճառք իւրեանցն օրինօք, թէ երկու գումարք հաւասարք հնգի կամ այլում որոյ թուոյ և իցէ, չիցեն հաւասար միմեանց : Ոչ ինչ օգնէ ասելն, թէ յապացուցի աստ երկորին բանքն եղական են քան մասնաւոր . ապա թէ ոչ, հարցուած զայս մատուցանեմ, եթէ երկու եղական ուղիղ բերեն զհետեւութիւնն յապացուցի աստ, զիարդ կամ էր ում չբերիցեն և յայլսն. առ ի՞նչ արդեօք իբրև ասիցեմ Զարեհ է մարդ, Ներսեհ է մարդ, ոչ ունիցիմ զնովիմք ածել, թէ Զարեհ և Ներսեհ են նոյն մի ինչ, մարդ : Կա զի 'ի նմին իսկ ապացուցի և յայլ նոյնպիսին՝ առ ձեռն է տալ երկոցուն առաջարկութեանցն զկերպա-

բանս մասնաւոր բանի, և սակայն ուղիղ ածել զհետեւութիւնն : Որ ասիցէ . Են թիւք՝ որոց գումար է երկոտասան . են և այլք՝ որոց բազմապատկութիւն է նոյնակէս երկոտասան . ապա են թիւք՝ որոց գումար հաւասար է բազմապատկութեան այլոց ոմանց . միթէ ոչ առնէ ուղիղ ապացոյց : Աակայն առաջարկութիւնքն երկոքեան ահա մասնաւոր են անշուշտ առանց ընդ բանս ինչ ածելոյ : Այս մինչև ցայսվայր :

Մատենագիրն Արուեստին խորհելոյ , որ յառաջնոց անտի թուի , որք 'ի վերայ հասին' թէ ոչ ստութեան , գեթ անպիտանութեան բազմաց յօրինաց աստի , բայց ապա՝ որպէս երեկի այդ յաճախ 'ի մարդիկ՝ իւրում անձինն ընդ հակառակս ելեալ , ընդարձակ ճոխանայ քան զայլն 'ի մեկնաբանել և 'ի ցուցանել մանրամասնաբար զամենայն գաղտնածնածուկ խորհուրդս եղանակաց և ձեոց , 'ի կարգ արկեալ յառաջագոյն զամենայն առածս և վճիռս և ընդհանրական օրէնս , և հանեալ ապա 'ինոցանէ մի ըստ միոջէ զամենայն հետեւանս որչափ և հնար էր : Զինի այնր ամենայնի գնէ օրէնս մի ընդհանուր , որ միայն առաւելարժէ քան զայլ ամենայն խառնամբոխ խուժան օրինացն : Եւ զգօնութիւն մեծ այն էր , շատանալ նովին , և մի այնպէս լիածեռն վատնել բազում վաստակ և հանճար 'ի փցուն և 'ի փանաքի խնդիրս , որք արդարե չէին արժանի զբաղեցուցանել զայնքան այր կորովի և յանօսր տեսութիւնս ուժաւոր : Օրէնքն այս ինչ է , թէ յամենայն շարաբանութիւնս մի յառաջարկութեանցն բովանդակէ զհետեւութիւնն , և միւսն ցուցանէ՝ թէ հետեւութիւնն բովանդակեալ կայ յառաջարկութեան անդ : Օրէնքդ թերեւս չիցեն այնպէս բացայայտ՝ որպէս յընդհանրական օրինացն պահանջի , որոց զայլն ամենայն 'ի մոռացօնս դարձուցանել հանդերձեալ իցեն : Օրինադիրն ինքնին յերկբայս կայ , թէ 'ի յանճնառական շարաբանութիւնն բովանդակիչ բանն մեծագոյնն իցէ արդեօք եթէ փոքրագոյնն , եթէ երկոքեանն իսկ : Իսկ 'ի հրաժարականս՝ յայտնապէս հաւանեալ է ժխտողական բանին : Վասն որոյ և այս օրէնք ոչ ինչ օգտէ առ աչս կերպարանեալ շարաբանութեանց , որ յաճախ են 'ի սովորութեան . սակայն որպէս զիարդ և իցէ , լաւագոյն է քան զայլն ամենայն զոր մինչև ցայնժամ հնարեցան Հակաճառք :

ԳԼՈՒԽ Բ.

ԵՐԿՍՍՑՐԱԲՏԱՆՈՒԹԻՒՆ, ՀԱՄԱԲԱՐԴՈՒԹԻՒՆ.

ԲԱԶՄԱԲԱՐԴՈՒԹԻՒՆ, ՄԱԿԱԾՈՒԹԻՒՆ

ԵՒ ՑԱՐԱՑՈՅՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Երկսայրաբանութիւն.

Երկսայրաբանութիւն է խառն ապացոյց, յորում անշատական բանիւ նշանակեալ զայլ և այլ մասունս բոլորին, ցուցանեմք թէ նոյն և զբոլորէն հաստատի միշտ ըստ ամենայն մասանց։ Որպիսի է հռչակաւոր երկսայրաբանութիւնն Տերտուլիանոսի առ Տրայիանոս կայսր, որոյ պատուէր տուեալ էր մի ևս 'ի հարցիորձ քննութեան մատուցանել զբրիստոնեայս, սակայն եթէ յայտնեսցին՝ պատիժ պատուհասի 'ի վերայ դնել։ Կամ վնասապարտ են, ասէ, քրիստոնեայքդ, և կամ արդար։ Եթէ վնասակար, ընդէ՞ր արգելուս 'ի հարցափորձէ. իսկ եթէ անպարտ, հիմ դատապարտես։ Որ հակաճառական օրինակաւ 'ի սոյն յանգի. Պատուէրդ 'ի վերայ քրիստոնէից անիրաւ է ամենենին, թէպէտ յանցաւոր իցեն և թէ անմեղ. զի թէ յանցաւոր, զմէ խափանես 'ի քննութենէ. Եթէ անմեղ, էր վասն առնես պարտաւոր։

Այս ապացոյց եթէ ըստ կարգի լինիցի՝ զօրաւոր է յոյժ, զի ամենայն ուստեք անփախուստ արգելեալ պաշարէ զհակառակորդն։ Առ այս կարեոր է

ա. Ուղիղ բաժանել զբոլորն 'ի մասունս իւր, և զամենեսեան զնոսա 'ի համար արկանել։ Զի թէ մնացուսցէ ինչ ոք, առ ոչ ինչ զօրէ երկսայրաբանութիւն նորա. որպէս

ոմանց 'ի նախնի իմաստասիրացն, որ կարծէին թէ ցուցանեն ոչ ինչ ահաւոր զմահ լինել, ասելով. Ի վախճանել մարմնոցն կամ ոչ ևս կեան ոգիքն կամ լաւագոյն կեանս կեան. յառաջնուամն ոչ ինչ զգան, յերկրորդուամն երանելի ևս են. ապա չիք ինչ երկիւղ՝ 'ի մահուանէ : Բայց արտաքոյ թողին զերրորդն՝ որ երկիւղալի առնէ զմահ, այն թէ գուցէ 'ի չարագոյն կեանս փոխեսցին :

Է . Զի հետևութիւնքն զոր հանեմք յիւրաքանչիւր մասնց՝ ճշմարիտ իցեն և 'ի հարկէ : Վասն որոյ թիւր խորհէր և խօսէր որ երբեմն ձեռնթափ կամելով առնել զոմն ՚ի հաղորդութենէ գործոց տնտեսութեան աշխարհին, առէր. կամ բարի առնես, և մարդկան յաշաց ելանես. կամ չար գործես՝ և աստուածոց յատելութիւն դառնաս. ապա 'ի բաց կաց ամենեին : Վասն զի ոչ հարկաւ զհետ է բարերարելոյն յաշաց ելանել մարդկան. և եթէ ամպարշտացն յերեսաց անկանիցի, բարեգործացն ընդ միտ մտանէ և զիւրե զնոսա ածէ, որոց հաճոյ լինել առաւելցանկալի է առն բարւոյ :

Է . Զգոյշ լինել, գուցէ փաստն շրջեսցի 'ի գլուխ խօսողին, որպէս դիպաւ Պրոտագորայ, ասէ Աւլոս Գելիոս : Զի ուսուցանել յանձն առեալ զճարտասանականն արուեստ Եւաթլոսի ումեմն, սակ արկ նմա՝ զկէս պայմանեալ վարձուն հատուցանել՝ 'ի սկզբան, և զմիւս կէսն՝ իբրև յաղթող ելցէ յառաջին դատաստանէն զոր վարեսցէ : Եւաթլոսի ոչ կամեցեալ վճարել զսակն, չարկ երբէք ձեռն ՚ի դատ : Բողոք բարձեալ սպառնացաւ Պրոտագորաս յատեան քարշել զնա . Եւ յայնժամ, ասէ, կամայ թէ ակամայ՝ սակայն հատուցես ինձ. զի կամ յաղթահարես, և ըստ պայմանին վճար արացես . և կամ նկուն լինիս, և վզենկեալ տուժեսցիս ըստ վճռոյ ատենին : Ոչ ինչ բնաւտաց քեզ, ասէ Եւաթլոս. զի կամ պարտեմ զքեզ, և արձակէ զիս ատեանն ՚ի պարտուց . կամ յաղթիմ, և ոչ ինչ այնուհետեւ պարտիմ քեզ ըստ դաշինդ :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Բ .

Համարդարդութիւն և բազմարդարդութիւն .

Համաբարդութիւն է շար բանից, որ այնպէս յեռեալ և կապեալ են ընդ միմեանս, զի զոր 'ի վերայ յետին ենթակային ածեմք հետևութիւն՝ նոյն զառաջնոյն հաստատի: Օրէն կազմութեան ապացուցիս այն է, զի մակդիրք առաջին բանիցն լինիցին մի ըստ միո՞ջէ ենթակայ զկնեացն, մինչև 'ի վերջէ ուրեմն ենթակայ առաջնոյն միացի ընդ մակդրի վերջնոյն: Ըստ սմին օրինակի կամեցեալ ցուցանել զանմահութիւն հոգւոյ, ասեմք. Հոգին է պարզ, պարզն է առանց մասանց, որ առանց մասանցն է՝ անբաժանելի է, անբաժանելին է անապական, անապականն է անմահ 'ի ընէ: Այս ազդ ապացուցի, որպէս ասենն, յԵւբուլիդեա, հնարեցաւ յաշակերտէ Եվկլիդեայ մեգարացւոց, որ գլուխ և առաջնորդ եկաց իմաստակաց. և յաճախ իսկ ՚ի կիր առնուին զաս իմաստակք, զի դիւրին է խաբել սովաւ: Յայն սակս ազդ առնեն տրամաբանք, թէ առ ճշմարտութիւն հետևանացն՝ ամենայն բանքն պարտին անընդմիջաբար 'ի միմեանց բղխել, և ոչ միոյ իրիք սոտոյ կամ երկբայելոյ 'ի ներքս խառնել: Սակայն թուփ ինձ թէ սովին ևեթ օրինօք դժուարին է յանդիմանել զստութիւն համաբարդութեան թիւմիստովիլի, որով ասէր ընդ կատակս թէ որդի իւր մանուկ երկեմեան իշխսէ ամենայն աշխարհին Յունաց: Իմ որդին, ասէր, իշխսէ մօր իւրում, մայր իւր ինձ, ես ողջոյն աշխարհին Յունաց, ապա որդի իմ երկեմեան իշխսէ բովանդակ Յունաց աշխարհին: Վասն զի 'ի համաբարդութեան աստ ամենայն բանք ընդելուզեալ են և զմիմեանց ունին առանց իրիք միջնորդի, և ինքնին ճշմարիտ են առ հասարակ: Ապա յաւելցի ուրեմն և աստ զոր զշարաբանութենէն ասացաք, թէ մասունք բանին 'ի նոյն միտս առցին միշտ: Որում առաւել հոգ տանել պարտ է 'ի համաբարդութեան, զի 'ի շարս բազմադէմ բանից դիւրա-

գոյն է այլ ընդ այլոյ ինչ առնել: Աստի է խաբեռութիւն թեմիստոկլեան համաբարդութեանն. քանզի գրեսցուք թէ որդին իշխեր մօրն, և մայրն թեմիստոկլի, սակայն այլազգ էր. յոյժ նոցա իշխելն, և այլ իշխանութիւն թեմիստոկլի 'ի վերայ ամենայն Յունաց. որդւոյն ճշիւ և ժողովեամբ, մօրն գգուանոք և աղերսանոք, իսկ թեմիստոկլին սաստիւ և զօրութեամբ տուեցելով նմա 'ի հասարակեն:

Ի կշտամբութիւն այսպիսի պատրանաց՝ անստերիւր հաւաստիք այս է, ընդ միոյ միոյ ենթակայի անցնիւր բանից՝ փոխանակել զբուն զառաջին ենթակայն: Եթէ և այնպէս անսխալ ճշմարտեսցին բանքն, ահա բարի է համաբարդութիւնն. իսկ եթէ ոչ, թիւր: Աւասիկ յառաջնում օրինակին զոր եղաք՝ ամենայն ճշմարտութեամբ կարեմք ասել. Հոգին է պարզ, հոգին է առանց մասանց, հոգին է անհատ և անքակտելի, հոգին է անեղծ, հոգին է անմահական: Իսկ 'ի թեմիստոկլեայն չիք ասել նոյնպէս. Որդի իմ երկեմեան տիրէ մօր իւրում, որդի իմ երկեմեան տիրէ ինձ, որդի իմ երկեմեան տիրէ ամենայն Յունաց. զի զանազանութիւն տիրելոյն անդէն 'ի յայտ ելանէ:

Բազմաբարդութիւն կամ կուտակութիւն է ազգ ինչ համաբարդութեան, յորում հետզհետէ ընծայեմք առաջին ենթակային զայն ամենայն զոր մի ըստ միոջէ զիւրաքանչիւր ենթակայիւ կարգեալ բերեմք հետեւութիւնս: Ապա տիրապէս խօսելով հաւաստիք համաբարդութեանն է, զոր արդ իսկ աւանդեցաք. ուստի և օրինակ այնր համաբարդութեան փոխի 'ի բազմաբարդութիւն յասելն. Հոգին է պարզ, իսկ պարզն է առանց մասանց, ապա հոգին է առանց մասանց. իսկ որ առանց մասանցն է անլուծանելի է, ապա հոգին է անլուծանելի. իսկ անլուծանելին է անեղծական, ապա հոգին է անեղծական. իսկ անեղծականն է անմահ, ապա հոգին է անմահ:

Յ Օ Դ Ա Խ Ա Ծ Ա Ռ Դ Ւ Յ Ն Ի Վ Ա Ր Ա Ծ Ո Յ Ե Ր .

Մակածուրիւն և յարացոյց .

Ա պակածութիւն է ապացոյց յորում ասացեալ ինչ մի ըստ միովէ զամենայն տեսակաց սեռին կամ զանցնիւրցն 'ի տեսական եղելց, զնոյն հաստատեմք ապա զբովանդակ սեռէն կամ զտեսակացն: Զոր օրինակ, Տղայի, մանկան, պատանւոյ, երիտասարդի, առն, ծերոյ և զառամելց իւրաքանչիւր կարիք են. ապա ամենայն հասակաց են կարիք:

Առ այս հարկ է զի մասանցն թուռումն անթերի և կատարեալ լինիցի, և որ զբովրէն ինչ ասի՝ իւրաքանչիւր մասանցն ճշմարիտ պատկանիցի: Վասն որոյ թիւր է ասել. Երկաթ, կապար, անագ, պղինձ և արծաթ լուծանին 'ի թթուռուտ բորակային, ուրեմն ամենայն հրահալք լուծանին 'ի նոյն թթուռուտ. վասն զի պակասէ 'ի կարգի անդ ուկի և լսնուկի, որ անփորձ մնան 'ի նմա:

Յ արացուցի ապացոյց զայն ասեմք, յորժամ յեղելց ինչ իրաց՝ զոր 'ի նոյն դէպմն լինելց է իմաստասիրեմք. և սովորաբար բազմաբարդութեան ապացուցիւ վարիմք 'ի սոյն, յայտնի կամ լուելեայն: Ըստ այսմ բժիշկն ասէ. Այստես այս ամենելին նման է այն ինչ ախտի, ապա ըստ նմին և բժշկիցի. իսկ արդ նա այս նիշ դեղով բժշկեցաւ, ապա և սա նովին բժշկեցի:

Առ ուղղութիւն հետեւութեանն ամենեցուն խոստովանելի է, թէ պահանջի կատարեալ նմանութիւն յերկոսին 'ի դէպմն, զի մուտ լինիցի համեմատութեան օրինին, թէ 'ի նման պատճառաց նման գործք լինին, և նման գործոց նման պատճառք :

Յ Յ Ո Ւ Ա Ծ Դ .

Թ է ամենայն ազգի ազգի ապացոյցք փոխին
ի շարադրանորիւն .

Թ է պէտ և Երկսայրաբանութիւն , համաբարդութիւն ,
բազմաբարդութիւն , մակածութիւն և յարացոյց այլազգ
ինչ դարձուածունել թուեցին քան զարաբանութեանն ,
սակայն ամենեքեան հեշտեաւ փոխին 'ինոյն :

Երկսայրաբանութիւնն սովորաբար եղառած է որոյ մե-
ծագոյնն զօրութեամբ կայ , այս ինքն է բանն ընդհանուր՝
որ զբոլորն 'ի մասունս իւր բաժանեալ ցուցանէ : Վասն ո-
րոյ յերկսայրաբանութեանն Տերտուլիանոսի իմանի զօ-
րութեամբ , Ամենայն հրաման 'ի բարի չարագործաց և յե-
ղեռն արդարոց՝ անիրաւ է միշտ . առաջարկութիւն մեծա-
գոյն , որոյ զհետ գայ փոքրագոյն . Իսկ արդ հրաման Տրա-
յիանոսի եթէ չարագործ են քրիստոնեայք , նոցա 'ի բա-
րի է , զի արգելու զհարցուփորձ , և թէ անմեղ են , այն
նոցա առ եղեռանէ լինիցի , զի պատուհաս պատուէր տայ .
ապա ամենայն իրօք անիրաւ է հրամանն :

Մակածութիւնն սոյնավէս եղառած է , յորում լոելեայն
իմանի նոյն բան ընդհանուր , որ զբոլորն 'ի մասունս իւր
ցուցանէ բաժանեալ : Որպէս ահա յառաջածեալ օրինակի
անդ լոելեայն կայ , թէ Մասունք հասակաց մարդոյ են
տղայութիւն , մանկութիւն , պատանեկութիւն , երիտա-
սարդութիւն , արութիւն , ծերութիւն և զառամութիւն :
Յոր յարի փոքրագոյն . Իսկ արդ տղայ , մանուկ , պատա-
նի , երիտասարդ , այր , ալեւոր և զառամ ունին իւրաքան-
չիւր կարիս . ապա ամենայն հասակաց մարդոյ իւրեանց
կարիք են :

Համաբարդութիւնն յայտնապէս իսկ կուտակ է եղա-
ռածից , յորս մեծագոյնն զօրութեամբ իմանի . սակա որոյ
յեղեալ օրինակի անդ լոելեայն կայ , թէ Ամենայն որ
պարզ է , նա և առանց մասանց է . զոր առեալ 'ի մեծա-

գոյն, առաջին շարաբանութիւնն լինի, Որ պարզ ինչ է, նաև և առանց մասանց է. պարզ է հոգին, ապա հոգին է առանց մասանց : Երկրորդն լինի. Որոյ մասունք չեն, նա ինքն անըաժին և անհատ է. իսկ հոգւոյ ոչ գոն մասունք, ապա անհատ և անըաժին է հոգի : Այսպէս և որ այլ ևս մի ըստ միոջէքն ամենայն :

Այս կուտակ եզառածից յայտնագոյնս երեխ 'ի բազմաբարդութեան, որ կատարեալ շարաբանութեամբ սկսանի, որպէս 'ի վերագոյն եղելուն յայտ է : Գնոյն և զյարացուցէն իմա, որոյ ապացոյն 'ի բազմաբարդութիւն դառնայ . միայն 'ի սկիզբն սորա սովորաբար իմանի զօրութեամբ 'ի տեղի ընդհանուր բանի նոյն ինքն համեմատութեանն օրէն, թէ նման գործոց նման և պատճառքն են, և նման պատճառաց գործք նմանք :

Այսպէս զամենայն ապացոյց 'ի շարաբանութիւն փոխարկելով, առաւել զօրաւոր լինին առ ամենեսեան օրէնքն՝ զոր աւանդեցաք յընտրութիւն ճշմարտութեան նոցին և ստութեան : Վասն այնորիկ 'ի բնաւան յայտնի կամ լուելեայն ընդհանուր բանին առաւել միտ դնել արժան է, զի 'ի նմա առաւել թաքուցեալ կայ վրիպակն, որպէս ասացեալս է . ապա տեսանել ևս, թէ ընդհանուր բանն ուղիղ յարմարութեամբ առեած իցէ 'ի վերայ ենթակային . քանզի է երբեմն զի այնպիսի անյարմարութիւն պատճառատպայ մոլորութեան :

ԳԼՈՒԽ Գ.

ԱՂԲԵՐՔ ԱՊԵՏՑՈՒՑԻՑ

Քանզի նախնի Հակաճառքն սաստիկ անկան 'ի կիրթ է, 'ի վարժ ապացուցից, ոչ անփոյթ արարին և զալըերս նոցին ցուցանել, զորս Տեղիքն կոչէին : Գրիչն Արուեստին խորհելոյ լաւ համարեցաւ 'ի հարեւանցի ևեթ նշանակել զնոսա, և ճոխանալ 'ի ցոյց ունայնութեան և անշահութեան այսց ճառից : Իսկ որ յետ նորա Հակաճառք, կամ 'ի զօրութենէ բանից նորա և կամ յայլմէ իմեքէ՝ գոգցես

Յ Օ Ւ Խ Ա Ծ Ա .

Ապացոյցք գոյուրենան և անգոյուրենան իրի
և գործոյ .

Որ յաղագս գոյութեան իրաց և գործոց բանք իցեն , 'ի
մի յօդուած բովանդակեմք . զի ցոյց գոյութեան գործոյ
ոչ այլ ինչ է , բայց ցոյց գոյութեան արարող պատճա-
ռին , կամ արդեանց իրացն և կամ երկոցուն միանգա-
մայն :

Ե . ԳՈՅՈՒԹԻՒՆ ԴՐԱՑ ԵՒ ԳՈՐԾՈՑ

Քանզի ամենայն ինչ կամ աննիւթական է և կամ նիւ-
թական , զցոյց գոյութեան իրաց սկսցուք նախ յաննիւ-
թից : Անհնար է , որպէս ասացեալ եմք , անժխտելի ցու-
ցանել ումեք զգոյութիւն հոգւոյ խրոյ , եթէ ոչ 'ի ներ-
քին գիտակցութենէ մտացն վկայելոյ . զի որում գիտէն
թէ խորհի , չմարթի անգիտանալ՝ թէ է ինչ 'ի նմա էակ
խոհուն : 'Կոյնապէս զգոյութիւն ոգւոց այլոց մարդկան և
կենդանեաց՝ ոչ իւիք ասացաք մարթ է ցուցանել , բայց
եթէ համեմատութեամբ պատշաճութեան , այսինքն է 'ի
նշանաց զգայութեան , մտածութեան և այլոց՝ որ 'ի նո-
սայն երևին հոգւոյ միայն պատշաճեալ զօրութիւնք :

Յաղագս գոյութեան Աստուծոյ ասացեալ է նոյնապէս ,
թէ ուղղորդ ապացոյց 'ի գոյութենէ մերոյ հոգւոյս ելա-
նէ : Քանզի ծանուցեալ սորա զիւրն էութիւն , և զի ոչ իւ-
րով ինչ զօրութեամբ ունի զէանալն , հարկ է ապա թէ է
ոնն առաջին պատճառ . էական , իւրոյ գոյանալցն գոյա-
րաբ : Եւ այս սկիզբն պատճառաց հարկ է զի էական իցէ ,
ինքնակաց և անպատճառ . ապա թէ ոչ 'յաւիտեան գործք
լինիցին առանց սկզբնապատճառի , որ է՝ ամենեին իսկ ա-
ռանց իրիք պատճառի . զի թէ առաջինն ոչ իցէ , և ոչ
այլքն զինի լինիցին , որ անհնարութեան իրք են : Բայց և

Յ Օ Ւ Խ Ա Ծ Ա .

Ապացոյցք գոյուրենան և անգոյուրենան իրի
և գործոյ .

Որ յաղագս գոյութեան իրաց և գործոց բանք իցեն , 'ի
մի յօդուած բովանդակեմք . զի ցոյց գոյութեան գործոյ
ոչ այլ ինչ է , բայց ցոյց գոյութեան արարող պատճա-
ռին , կամ արդեանց իրացն և կամ երկոցուն միանգա-
մայն :

Ե . ԳՈՅՈՒԹԻՒՆ ԴՐԱՑ ԵՒ ԳՈՐԾՈՑ

Քանզի ամենայն ինչ կամ աննիւթական է և կամ նիւ-
թական , զցոյց գոյութեան իրաց սկսցուք նախ յաննիւ-
թից : Անհնար է , որպէս ասացեալ եմք , անժխտելի ցու-
ցանել ումեք զգոյութիւն հոգւոյ խրոյ , եթէ ոչ 'ի ներ-
քին գիտակցութենէ մտացն վկայելոյ . զի որում գիտէն
թէ խորհի , չմարթի անգիտանալ՝ թէ է ինչ 'ի նմա էակ
խոհուն : 'Կոյնապէս զգոյութիւն ոգւոց այլոց մարդկան և
կենդանեաց՝ ոչ իւիք ասացաք մարթ է ցուցանել , բայց
եթէ համեմատութեամբ պատշաճութեան , այսինքն է 'ի
նշանաց զգայութեան , մտածութեան և այլոց՝ որ 'ի նո-
սայն երևին հոգւոյ միայն պատշաճեալ զօրութիւնք :

Յաղագս գոյութեան Աստուծոյ ասացեալ է նոյնապէս ,
թէ ուղղորդ ապացոյց 'ի գոյութենէ մերոյ հոգւոյս ելա-
նէ : Քանզի ծանուցեալ սորա զիւրն էութիւն , և զի ոչ իւ-
րով ինչ զօրութեամբ ունի զէանալն , հարկ է ապա թէ է
ոնն առաջին պատճառ . էական , իւրոյ գոյանալցն գոյա-
րաբ : Եւ այս սկիզբն պատճառաց հարկ է զի էական իցէ ,
ինքնակաց և անպատճառ . ապա թէ ոչ 'յաւիտեան գործք
լինիցին առանց սկզբնապատճառի , որ է՝ ամենեին իսկ ա-
ռանց իրիք պատճառի . զի թէ առաջինն ոչ իցէ , և ոչ
այլքն զինի լինիցին , որ անհնարութեան իրք են : Բայց և

այլք յարարածոցն յապացոյց գան էութեանն Աստուծոյ . և չիք բոտոտ աղկաղկ , ոչ տերեւ և ոչ ծաղիկ , ոչ խոիւ և ոչ կրկուտ , որ 'ի ձեռս իմաստասիրին զնոյն մեզ ոչ հաւատարմացուսցէ :

Իսկ գոյութեան այլոց հոգւոց , զհրեշտակաց ասեմ , բազում ուրեք բանք եղեն թէ 'ի յայտնութենէն Աստուծոյ և թառումք ապացոյցս , և ոչ այլ ուստեք . բայց և սորա զօրութիւն լի բովանդակ է յանխաբութենէն Աստուծոյ :

Գոյութիւն հանուր զգալի արարածոց ցուցանի յազդելոյ նոցա 'ի մեզ , մանաւանդ 'ի հակառակելոյ նոցա ընդ կամն մեր , զոր մեր ինչ գործ համարել ոչ ունիմք : Իսկ յաղագս իւրաքանչիւր մարմնոց գոյութեան , զօրագոյն ապացոյց առ այլս է 'ի ներքոյ գնել զնոսա զգայութեանց նոցին . զի անձամբ զփորձ առնուցուն զգալի արդեանց իրացն ստուգութեան : Բայց հասանէ բազում անգամ և զգոյութիւն այնոցիկ յայտ ածել , որ զգայնոց ոչ զնին . որպէս զգոյութիւն տարրեղէն հրոյ կամ զելեկտրաշոգույն 'ի մարմինսն լինելոյ , որ զգայութեան ոչ ազդիցի , չիք հաւաստել ըստ դմին օրինակի : Ապա յայնժամ լաւագոյն ապացոյցք գոյութեան նոցա են արդիւնք նոցին և արգասիք : Մատուսցի ջերմաչափ 'ի մարմինսն , և ժիպակին ծաւալեալ՝ ցուցցէ ոչ միայն զգոյութիւն տարրական հրոյն 'ի նոսա , այլ և զչափն ևս . ձգումն թեթեւ և մանրիկ մարմնոց և բացատութիւն թելից ելեկտրաշափին՝ ցուցցեն զելեկտրաշոգույն գոյութիւն : Կմանապէս էութիւն այլ և այլ գոյացութեանց որ 'ի տարրումն միոյ մարմնոյ յօդանան՝ ցուցանի 'ի տարրախուզզից զանազան արդեամբքն որ լինին 'ի նոցանէ , յորժամ մարմինն ընդ փորձ անցանիցէ հրոյ կամ լուծողականաց : Պարզաբար ասել , ամենայնի սովորական ապացոյց է 'ի բնազննութեան՝ զգոյութիւն իրին յարդեանցն ցուցանել :

Որպէս յարդեանց գոյութիւն պատճառին 'ի յայտ գայ , է ուրեք զի և 'ի պատճառէն գոյութիւն արդեանցն իմանի . բայց այս ոչ միշտ ստուգութեամբ , այլ միայն եթէ յայտ իսկ անհնար իցէ անգործ կալ պատճառին : Գիտեմ 'ի տեղւոջ ուրեք հրաբուղին երբեմն բորբոքեալ . զհետ բերեմ , թէ գոն ուրեմն անդէն խանձողք հրաբըլնի կամ չեչաքարինք , կամ սեաւ կինք , կամ կաւարծաթ

և ապակիք կամ հող հրայրեաց և կամ որ այլ ինչ սովորական արգասիք իցեն հրաբղւից : Գիտեմ զի և զարդիս վառին Ետնէ և Վեսուբ . ապա գոն ասեմ 'ի նոսա նիւթք հրացեալք , լուծեալք , ապակեցեալք , և որ 'ի կարգին : Նոյնպէս յանմեղկելի ցրտութենէ բեեռային շրջանակաց՝ իմանամ յաւէժ սառնապատ զվայրսն լինել : Մինչդեռ արեգակնն 'ի յեղյեղակն այծեղեր գտանիցի 'ի դեկտեմբերի , 'ի միտ առնում թէ 'ի հարաւային կիսագնտին ծաղիկք փթթեալ են և պտուղք ամարայնց խայծեալք :

Սակայն եթէ պատճառին ընդ արգեանց չգուցէ հարկաւ կցորդութիւն , 'ի նորա էութենէն ոչ ևս անշուշտ իւմանի գոյութիւն արդեանցն : Ո՞ւ որ 'ի ծառոյն լինելոյ , 'ի հարկէ և զպտուղն ասիցէ գոլ . հաւանութիւն է թէ լինիցի այն երբեմն , այլ ոչ անշուշտ ստուգութիւն : Ապա 'ի պատճառաց զայն արդիւնս միայն օրէն է գուշակել՝ որ հարկաւ անվրէալքն իցեն , ոչ որ 'ի դիպաց արգասիքն , որոց մարթի լինել և չլինել օրպէս զիարդ ինչ դեպին տայցէ :

Եւ զի ապացոյցք են որ 'ի յառաջագունէ են , և են որ 'ի յետնագունէ , ըստ դպրոցական բառին , այսինքն է՝ 'ի պատճառէն առ արդիւնսն կամ յարդեանցն առ պատճառն , յայտ է թէ 'ի բնականս առաւել սովորական է երկրորդն քան զառաջինն : Մանաւանդ զի յանձանօթս գոլով բուն էութեան մարմնոց և բազում հանգամանաց նոցա , առանց յառաջագոյն արգասեացն գիտութեան՝ առյապա արդեանց նոցուն դուռեք հասանեմք : Բայց և այս ապացոյց յարդեանց առ պատճառն , ոչ է միշտ անսիալ . առ անվրէալ ստուգութիւն նորին պահանջի նախ , զի արդիւնքն 'ի պատճառէ անտի լինիցի՝ յորմէ կարծին . և միւս ևս՝ զի յայլմէ իմեքէ չմարթիցէ լինել : Յի՞նչ պատճառաց չգործիցի խառնակութիւն 'ի կազմածի ուրեք , մանաւանդ 'ի խառնախաղտեալն , ևս առաւել 'ի մարմնի մարդոյ , որ քան զամենայն է բազմահատուած և հրաշակերտ . իւ և կործանումն տանց , անպտղութիւն անդաստանաց , և որ այլն ևս : Ապա չէ հնար յարդեանց աստի զգոյութիւն պատճառին ցուցանել , եթէ ոչ տեղին և իւրացն դէպք 'ի հարկէ յայտ առնիցեն , թէ արդարե նորուն արգասիք իցեն :

Բաց յայսցանէ , զորս մարթ է ասել ներքին ապացոյցս , 'ի հաւասատիս գոյութեան իրաց զօրին և արտաքին ապա-

ցոյցք, որք առ հասարակ 'ի մի բովանդակին, 'ի վկայութիւն այլոց։ Եւ զի անտի առեալ ապացոյցք՝ առաւել 'ի ցոյց գոյութեան գործոց են, յայնս եկեսցուք։

Օրէն է և զապացոյցս ինչ գործոց կոչել ներքինս։ Վաղժամանակեան գործոց բուն ստոյգ հաւաստիք են արդինքն երեեալք և հետք զոր թողին։ որպէս զգայուեալ խանձողք հրաբոլիսի և այլ արդասիք՝ ապացոյց մեծ է վաղեմի հրդեհի հրաբոլիսից 'ի տեղիս տեղիս։ ծովային մարմինք և խեփորք 'ի լերինս գտեալք, նշանաւոր ապացոյցք են ծովու անդ եղելց երբեմն։ Կա և արդի գործոց բուն և զօրաւոր ապացոյցք նշմարք արդեանցն են։ զոր օրինակ աւերակք 'ի հրկիզութենէ մնացեալք, 'ի գետնաշարժէ, 'ի ջրհեղեղէ, 'ի շանթէ, 'ի կարկտէ, և որ այլ ևս։ Արտաքին ապացոյցք ելանեն յանդիր աւանդութենէ և 'ի գրաւոր, որոց ականատես զանձինս ասեն իրացն եղելց։ Զսոցա զօրութենէն ոչինչ յաւելումք աստանօր 'ի նախաճառեալն Ճոխաբար յառաջին գիրսն (յէջ 159)։ Ա.Հ. յաղագս ապացուցից անդոյութեան իրի և գործոց ասացուք ինչ։

Բ. ԱՆԳՈՑՈՒԹԻՒՆ ԴՐԱՑ ԵՒ ԳՈՐԾՈՑ

Առաջին ապացոյց անդոյութեան կարծեալ իրաց՝ է ցուցանել զի բնէ անհնարութիւննոցա։ Այսպէս ցուցանի անդոյութիւն բազմաստուածոց, զի և ոչ ոք լինի Աստուած, ըստ որում հաւաստաբանէ մեզ ընականն աստուածաբանութիւն։

Բ. Հաւաստարմացուցանել զգոյութիւն այլոյ իրիք, որ հարկաւ մերժիցէ զմիւմն։ Եւ յիրաւի ով երբէք ասասցէ սառամանիս լինել 'ի տեղով անդ, ուր ցուցանիցեմք թէ հուր բորբոքեալ կայ։

Դ. Հաւաստել թէ տեղին կամ ժամանակին կամ այլ դեպք և հանգամանք իրացն չառնուն յանձն զգոյութիւն իրին և չներեն նմա կալ։ Եթէ ասասցէ ոք, թէ փիզք կան 'ի Լապոնիա, կամ թէ մարդագետինք նորա ծաղկաւետին 'ի յանուարի, ոչ ապաքէն դիւրեաւ յանդիմանի ստութիւնն։ Քննութիւն հանգամանաց պիտանի է յոյժ մանաւանդ 'ի ցրել եղծանել զգործմն։ Այսպէս նշաւակի ստութիւնն, թէ Դիտով կարքեղոնացւոց դշխաղն զիւրովին եր-

թեալ իցէ առ սէր ինեայ, զի երեքարիւր ամառ կրտսերէ նա քան զսա: Այսպէս և 'ի քերել յումեքէ զգողութեանն բասիր, կամ զսպանութեան և կամ զայլս իրիք վնասու, հզօր իրաւունք այն են, ցուցանել թէ 'ի ժամանակի ոճիր չարեացն գործելս իտար աշխարհ գտաներ այլն:

Դ. Ի բազում շատ է և ցուցանել միայն, զի թէպէտ չեն ինչ անհնարինք, սակայն ընդդէմ են կարգի օրինաց բնութեան. որպէս այն թէ կիկլոպայք գուցեն՝ հսկայք միականիք 'ի ճակատու, կամ թէ արք շանագլուխիք կայցեն:

Ե. Եթէ գործք՝ որով ցուցանէ ոք զգոյութիւն իրիք, սուտ իցեն կամ անհամեմատ ընդ նմա, կամ թէ այլ ինչ նոցա պատճառք իմասցին, այն իսկ զօրաւոր ցոյցք են՝ յաղարտել զգոյութիւն նորին: Ըստ այսմ սուտ հանեմք զգոյութիւն յորձանաց նուրբ նեւթոյն, զոր կարգեսիոս հնարեցաւ 'ի մեկնել զճախրագայութիւնս աստեղաց. զի այն շարժմունք անհամեմատ են յորձանացն: Սուտ ցուցանեմք զգոյութիւն ցրտաբեր մասանց, որ զինքնաբուն ցրտութիւն բերիցեն տանիցեն այսր անդր. քանզի հաւաստիք կան, թէ 'ի թողանալս մրայն ջերմութեանն լինի ցրտութիւն:

Վ. Բազում անդամ և լոկ յանդիմանութիւն անբաւականութեան ապացուցիցն որովք հաստատէ ինչ ոք, շատ է 'ի ջրել զայն, կամ գոնէ յերկրայս արկանել: Այսպէս ահա ընդ օդս ցնդեցան գոյացական տեսակք, ընդհանուր բնութիւնք, աղապատանք կամ սիրական համբոյքը և չհամբոյք, և փոխան դիմակալութիւնք ձեմականաց, պլատոնական և սուոյիկեան հոգին կամ շունչն տիեզերաց, ուրուապատկերք կամ անօսր կերպարանք և երեսք իրաց զորս 'ի մարմնոց հատանել ասէին եպիկուրայքն և գալ կազմել զգաղափարս մտաց մերոց, ընածին գաղափարքն կարգեսեանց, և որ 'ի նոյն համարի:

Աստանօր 'ի միտ առնուլ է, զի տկարութիւն փաստից ուրուք 'ի ցոյց գոյութեան իրի կամ գործոյ, թէպէտ և իրաւունս տայ մեզ չհաւանել բանից նորա, զի որ կամի ոք հաւատարիմ զբանման առնել, պարտի դէպեդէալ ըստ արժանի ցուցանել, բայց չտայ միշտ իրաւունս բացէ 'ի բաց յուրաստ լինելոյ, թող թէ զհակառակն հաստատելս: Ի ցոյց անգոյութեան իրիք, բաց 'ի ցուցանելս թէ պակասեն փաստք զօրաւորք 'ի հաւաստիս գոյութեանն, որ կոչի պա-

կասական ապացոյց, հարկ է և իսկական ապացոյցս յառաջ մատուցանել, որք ուղղակի ցուցանիցեն՝ զի ոչ գոյ ճշմարտութեամբ, կամ զի անդամ՝ և կարէ իսկ ոչ գոյ յութիւն ունել, որ զօրաւորագոյն է յապացոյցս :

Ե. Անգոյութիւն իրի և գործոյ ցուցանի և արտաքին ապացուցիւք, պակասաւար՝ առ. 'ի չգոյէ վկայից և յաննմանութենէ մատուցելոցն, և իսկապէս՝ քաջ 'ի դէալ բանիւք այլոց վկայից, որ ժխտիցեն զայն կամ զհակառակն հաստատիցեն :

Յ'Օ Դ Ո Ւ Ա Ծ Բ .

Ապացոյցք հանգամանաց իրաց .

Հանգամանք որ ինքնին առանց միջնորդի 'ի ծանօթութիւն գան զգայութեանց, որպէս հոտ, համ, ձայն, գոյն, ձե, կշիռ, և այսպիսիք, աներկբայարար հաւաստին՝ յորժամ զգայութեանցն 'ի փորձ դնիցին իբրն, յորոց զգացմունքն և իմացուածքն լինին : Իսկ որ զգայարանաց անզննելիք ենչ իցեն, հաստատութեամբ ցուցանին յարդեանցն՝ որոց մին 'ի յայտ գայցէ : Օդոյ ծանրութիւն 'ի Ճնշմանէն ցուցանի՝ զոր գործէ 'ի մնոդիկ ծանրաչափին . ծանրութիւն մնդկի քան զջուր և քան զձեթ՝ և առանց կշռելոյ յայտնի լինի յանսխալ փորձոյ . զի թէ երեքին հեղանիւթքն յաման արկանիցին, մնդիկն իջանէ 'ի յատակն, 'ի վերայ նորակայ ջուրն, և ջրոյն 'ի վերայ ձէթն : Կազդուրիչ և մեղկիչ հանդամանք զանազան դեղոց ընդ փոքր և ընդ շատ, յարդեանցն հաւաստարմանան՝ զոր ցուցանեն 'ի մարմինս կենդանեաց որոց պաշտին :

Գոյսութիւն հանգամանաց իրիք իմանի յաճախ 'ի գոյութենէ այլոյ իրիք, որ զայն հարկաւ պահանջէ . որպէս 'ի խոհականութենէ հոգւոյ յառաջ գայ պարզութիւն նորա, և 'ի պարզութենէն անեղծութիւնն : Խյայտ գայ ըստէպ և պատշաճութեամբ սեռի կամ տեսակի իրին . օրինակ զայս ցուցանի զգայութիւն ունել որդանն անարգի . վասն զի զգայունութեան հանդամանաց ամենայն շնչաւորք

բաժանորդք են : Ընդ հակառակս 'ի հաւաստիս անգոյութեան իրիք հանգամանաց հզօրագոյն ապացոյց է այն ; թէ ընդդէմ ելանէ այլում՝ որ անշուշտ կայ յիրի անդ : Այսպէս 'ի խոհականութենէ հոգուոյ անհնարին ցուցանի 'ի նմա տարածումն մասանց, զի տարածումն և խորհուրդ հակառակ միմեանց են : Այնպէս ցուցանի 'ի հակառակէն, թէ անհնար է նիւթոյ խորհուրդ :

Անգոյութիւն հանգամանաց հաւաստի և 'ի չգոյէ սովորական արգասեաց նոցա, և 'ի հակառակացն երեւելոյ : Ըստ այսմ մարմին որ փոխանցիչ է ելեկտրաշոգւոյ յայլս, ոչ է 'ի բնէ ելեկտրական . երկաթ շփեալ ընդ խանդումանդ՝ եթէ ոչ ձգիցէ զերկաթ, չէ զգեցեալ զզօրութիւն խանդումանդի :

Նա և համեմատութիւն պատշաճութեան իրաւունս տայ ժխտելոյ զհանգամանս իրիք, յորոյ գասակարգէն օտար են այն հանգամանք, կամ այլում գասակարգի ուրոյն են՝ յորմէ ինքն չէ : Առվաւ յուրաստ կամք արդարապէս թէ բոյսք և հանք և ամենայն խոկ անշնչականք չեն զգայուն :

Եթէ ոք զհանգամանս ինչ 'ի դիտողութենէ, 'ի փորձոյ և 'ի վկայութենէ ցուցանիցէ, հերքին հակառակ ընդդէմ դիտողութեամբ, փորձով և վկայութեամբ :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Գ .

Ապացոյցք համեմատորեանց իրաց .

Այնութիւն իրի հաւաստի 'ի նոյնութենէ առաջին և վերջին հանգամանացն . ապա թէ ոչ, փոխեալ է կամ որիշ՝ Կմանութիւն և աննմանութիւն իրաց գտանի քննութեամբ հանգամանացն յորս միաբան են կամ օտար :

Համեմատութիւնք քանակի, յորս՝ որպէս ասացեալ է յառաջին գիրս, բովանդակի տարածութիւն, թիւ, տեղի, ժամանակ, շարժումն, և ամենայն ինչ որ աճումն և նուազութիւն առնու, որք և ժողովին առ հասարակ 'ի հաւասարութիւն, ցուցանին հարկա-

նելով լնդ միմեանս : Զափաքերք , որոց գիտութիւն է բովանդակ՝ 'ի համեմատութիւնս յայսոսիկ , սկիզբն առնեն 'ի հաւասարութենէ և յանհաւասարութենէ պարզիցն , իբրու ասել երկուց գծից , երկուց անկեանց , երկուց եռանկեանց . և այն սկսմունք լինին նոցա յետոյ 'ի տեղի փաստից՝ ցուցանել զբանս և զշամեմատութիւնս խառն քանակաց :

Զգողութիւն և վանողութիւն , ընտանութիւն և ներհակութիւն այլ և այլ գոյից , զոր մեք համեմատութիւն միայն իմանամք , մինչեւ յայտնեսցին պատճառք նոցա , ոչ ինչ իւկիք ցուցանին , բայց միայն յարդեանցն :

Յաղագս համեմատութեանց ամենայն պատճառաց և գործոց , և ապացուցից նոցա խօսեալ բաւականութեամբ յառաջին գիրսն , (յէջ 148) :

Համեմատութիւնք պարտականութեան , որպէս 'ի տեղով անդ նշանակեալ է , (յէջ 160) , ցուցանին 'ի բնական իրաւանց , 'ի գրական կամ դրիւ անուանեալ իրաւանց՝ որ են աստուածային և մարդկային օրէնսդրութիւնք , և յիւրաքանչիւր դաշնաց և ուխտից :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Դ Ի Վ .

Այլ ևս աղբերք ամենայն ապացուցից .

Տեղիք ապացուցից յորս պատաղեալ թարթափէին հին Հակաճառքն , էին առ , ստուգաբանութիւնն անուանց և ծագումն բառից . բ , մեռ , տեսակ , տարբերութիւն , յատուկ , պատահումն , սահման և բաժանումն . գ , պատճառ և գործ , բոլոր և մասն , նմանութիւն և աննմանութիւն , ընդդիմաքննութիւն , ներհակութիւն և հանդամանք : Առաջինքն 'ի տեղեաց աստի 'ի կլաւբերգիոսէ ումեմնէ քերականականք կոչեցան , երկրորդքն՝ բանականք , երրորդքն՝ բնազանցականք : Իբրեւ զի զստուգաբանութիւն և զածանցութիւնն բառից զորս նոքա լծորդս կոչէին , քերականութեան է աւանդել զառէ և զտեսակէ և զորոց 'ի կարգին Դպրոցականք 'ի բանական արուեստին ճառէին . իսկ ըզ-

սպատճառէ և զգործոյ և զայլոց՝ 'ի բնազանցութեան կամ՝ յանուանեալ մասինն էակաբանութիւն :

Այլ յաղագս ապացուցից 'ի սեռէ և 'ի տեսակէ, և 'ի տարբերութենէ՝ որ որոշումն և զանազանութիւն է տեսակացն, 'ի յատկութենէ և 'ի պատահից, և զորոց 'ի պատճառէ և 'ի գործոյ, 'ի նմանութենէ և յաննմանութենէ, 'ի ներհակութենէ և 'ի հանգամանաց, բաւական են յառաջագոյն ասացեալքն : Մնայ ասել ինչ համառօտս յաղագս ստուգաբանութեան, ածանցման, սահմանի, բաժանման և ընդդիմաքննութեան :

Ստուգաբանութիւն է յայտնել զնունդս բառից. որպէս իմաստասէր, 'ի ձայնիցն իմաստ և սէր. միայնակեաց, 'ի բառիցն միայն և կեաց : Աստի ապացոյցք ելանեն 'ի ցուցանել զնախնեացն միտս, յորմէ եկին այնպիսի անուանս դնել իրացն, կամ 'ի հաստատել զոր կամիմքն, այնու զի իրքն համեմատ լինիցին անուանցն : Այսպէս ցուցանի, թէ որ կամի իմաստասէր անուն ժառանգել, պարտի ճշմարիտ սիրող լինել իմաստութեան . և սուրբն Հերոնիմոս ասէր առ միայնակեաց ոմն, Զի՞ կայ քո և ամբոխին, որ մինաւորդ ես :

Ածանցեալ ասին բառք, որոց արմատք են այլք, ընդորս իմա և զբարդս և զամենայն յօդուածոյս և զկցուածոյս. որպէս մարդկային, 'ի մարդոյ . ողորմածութիւն՝ յերկուց, ողորմ և ածեմ: Ըստ այսմ մարդ է յարմարել, թէ մի՛ ոք 'ի բնաւորականաց մարդկային ընութեանս զանձն ազատ համարեսցի. որպէս Տերենտի բանն ասէ . Մարդ եմ, և զմարդկայինմն յանձնէ ոչ օտար համարիմ. և թէ արժանի գթոյ է չուառն, զոր միւս բանն ունի . Զի՞նչ արժանի ողորմածութեան քան զողորմելին :

Սահման է որ ամիսփէ և պարագրէ զգաղափարսն ընդնովին ձայնիւ արկեալս: Եւ աստի առնումք ապացոյցս, եթէ ասացեալն զիրէն բովանդակիցի թէ ոչ 'ի ձանօթութեան կամ 'ի գաղափարի անդ իրին :

Բաժանումն է որով հատանեմք զբոլորն 'ի մասունս . և տայ ապացոյցս 'ի հաւաստել, թէ ճշդիւք բաժանեալ իցէ բոլորն, և թէ այն ինչ գտանիցի արդեօք 'ի բոլորումն, թէ ոչ: Այլ օրէնք սահմանի և բաժանման՝ 'ի վեց պրակին կացցեն մեզ իրեւ 'ի գիպան տեղւոջ խօսել:

Ծնդդիմաքննութիւն, որ և բաղդատութիւն, առեալ է

աստանօր միայն իբրև նշան գուշակութեան առնելոյ ՚ի հաւասարէ կամ ՚ի բազմէ և ՚ի նուազէ : Եւ սովաւ լինին ապացոյցքն կոչեցեալք ինմանւոյ կամ ՚ի հաւասարէ , ցուցանել թէ որ պատշաճի իմիք , և նմանւոյ նորա և հաւասարին պատշաճեսցի . անուանեալքն ի փոքուէ առ մեծ , որ ցուցանեն՝ թէ որ եղեն ՚ի փոքր պատճառէ , ևս առաւել ՚ի մեծէն լինիցի . ի մեծէ առ փոքր ասացեալքն , որովցուցանի , թէ գործ որ ոչ գործեցաւ ՚ի մեծ պատճառէ , ևս առաւել չմարթի ՚ի փոքուէն :

ՊՐԱԿ ԶՈՐՈՈՐԴ

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆՔՆԵՐ

Իմաստակութիւն կամ իմաստագարութիւն 'ի հարազատ միտս է խաբերայութիւն , պատրողաբանութիւն , ապացոյց թիւր՝ կերպարանօք ճշմարտութեան և 'ի խորհուրդս չարութեան առ . 'ի զայլս խաբելոյ : Եւ առեալ է յանուանէ նախնի իմաստակացն , որոց արուեստ էր այնպիսի բանիւք պաշարել և շացուցանել զայլս : Իսկ ոմանք յընդարձակ միտս իմաստակութիւն իմանան զամենայն մոլար ապացոյց , եթէ առ խորամանգութեան եղեալ՝ որ ոչ երբէք վայելէ լաւի առն , և եթէ վրիպակաւ ևեթ և յանդգաստից , որ ամենեցուն մարթի թէ պատահիցէ , բայց յայնժամ տիրապէս առանցանք կոչի , կամ ծեքեալ բան :

Բայց թէպէտ և 'ի զգուշութիւն իմաստակութեանց և ծեքաբանութեանց բաւական թուին օրինագրեալքն , որով ուսուցաք զուղիղ կարգս հաւաստաբանութեան , զոր օրինակ շատ է ցուցանել ուղևորին զարահետն որ տանի զնա 'ի տեղի իւր , այլ որպէս գեղեցիկս զեկուցանէ մատենագիրն Արուեստին խորհելոյ , քանզի խեթ վտանգին առաւել աղդողադոյնս խրատէ քան զպատուիրանն , օգուտ համարիմ նշանակել զգլսաւոր պատճառս թիւր և մոլոր ապացուցից . որպէս զի մեզէն ինչ 'ի նոյն շաղեալ վարակիցիմք կամ գլորիցիմք , և մի յայլոց խարդաւանել 'ի հաղըս , այլ խայտառակել զնոսա : Եւ քանզի յիմաստակութեանցն՝ է որ 'ի բառան դարանեալ կայ , և է որ յիմաստան , ասացուք զոր առ երկաքանչիւրմն կարեոր թուին մեզ զգուշութեան խրատք :

ԳԼՈՒԽ Ա.

ԿՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԲԱՌԻՑ

Աակաւ են սոքա , և բազում անդամ դիւրաւ երեխն .
բայց և ոչ սակաւ պաշարեն զանգգաստսն և 'ի բազում
պատրանս ընկենուն :

Առաջին է վարել երկդիմի . և հոմաձայն բառխէք , այս
ինքն որոց նշանակութիւն անստոյգ է կամ 'ի կրկին միտս :
Զայս արարին Հոռոմք , որպէս 'ի զբոյցն կայ , զի ստիպես-
ցեն զԱնտիոքոս հատանել ընդ մէջ զամենայն նաւս իւր :
Նորա յուխտ մտեալ էր և դաշինս կռեալ՝ տալ նոցա զկէս
նաւացն , իմանալով զկէս համարոյն . իսկ նոքա պահան-
չեցին զկէս իւրաքանչիւր , որպէս զի զբնաւմն կորուսցեն ,
և այնպէս միջարեկ և քամակակոտոր զինքնին իսկ զթա-
դաւորն կացուսցեն :

Ծնդ սովաւ է և պիտակութիւն տարտամ բառից կամ
այլաբանելոց , որ է զի յայս և է զի յայն միտս հարկանեն .
զորոց բերեալ է օրինակս քանի մի (յէջ 218) : Յաւելցի
ընդ նոսս և ապացոյցն ստոյիկեանց , որով զնչաւորու-
թիւն աշխարհի ցուցանել նկրտեին . այն թէ բոլոր տիե-
զերք միով հոգւով շնչաւոր իցէ իբրև զմարդ : Շնչաւոր ,
ասէին , լաւագոյն է քան զանշունչ . իսկ աշխարհ լաւա-
գոյն է յեղականացս , ապա շնչաւոր է աշխարհս : Բազում
թիւրութիւն բառից ծածկեալ կայ աստանօր . նախ 'ի մե-
ծագոյնն՝ շնչաւոր իմանի էակ ինչ առանձինն , որպիսի
մարդ . և 'ի փոքրագոյնն ոչ ևս առանձինն ինչ գոյակ ի-
մանի լաւագոյնն , այլ բովանդակութիւն ամենայն էից , որ
ինքնին անմարմին և անիրան գաղափար միայն է : Երկրորդ՝
շնչաւոր 'ի մեծագոյնն նշանակէ միայն որ ունի հոգի . զոր
ապաքէն լաւ իցէ ունել քան չունել . իսկ 'ի հետեւութեան
ցուցանէ սոսկ՝ որ ունի մի ևեթ հոգի , իբրու այն թէ բա-
զումն ունել , զի և բազում իսկ են յաշխարհի ոգիք , այն-
պէս ինչ իցէ՝ որպէս թէ ամենելին չունել :

Երկրորդ իմաստակութիւն է երկխօսութիւն , յորում

այնպէս կարգին բառքն, զի իւրաքանչիւր լինել ենթակայ
և մակդիր, գործող և կրող։ Այսպիսի է, օրինակ իմն,
հրաման պատասխանւոյն առ Պիւռոս ՚ի պատգամախո-
սէն, զոր վասն պատերազմին իւրոց ընդ հռովմայեցիս ե-
հարց՝ յաջողեսցի՞ թէ ոչ. ասէ,

Քիւ իշտեան ասեմ յարենել հունացացաց.

որով խրախուսեալ խիզախեաց յաղթական լինել, սա-
կայն ՚ի պարտութիւն մատնեցաւ. այլ քուրմք ցուցին նմա-
թէ պատգամն զհակառակն ազգէր : Այսպիսի էին գրեթէ
ամենայն պատասխանիք պատգամախօսաց. զոր շեղապէս
յարմարէին քուրմք, զի որպէս զիարդ և պատահեսցեն
ելք իրացն՝ կարող լինիցին ասել, ճշմարիտ գուշակեալ
պատգամին :

Երրորդ իմաստակութիւնն է զբաժանեալ միտսն առնուլ
՚ի մի, և զմիաւորեալ բաժանել. զոր Դիպրոցականք խա-
րէութիւն մրաւորութեան և բաժանման անուանեն : Զոր
օրինակ աւետարանական բանն Յիսուսի յաղագս իւրոց
սքամնելեացն, Կոյլք տեսանեն, խուլք լսեն, կալք գնան,
՚ի բաժանեալ միտս իմանալի է, թէ որ յառաջն կոյր էին
և խուլ և կաղ, այժմ տեսանեն, լսեն և գնան ողջանդամ։
Եւ որ ՚ի մի միտս առնուլ ոք կամիցի, իւրե թէ կոյրքն
կուրութեամբն տեսանիցեն, և բաղայս եդեալ զայն ՚ի բիծ
տանիցի տերունեան գրոյն ստութեան, կարի անմիտ է։
Իսկ զԱռաքելոց ասեն, Ոչ ադահք, ոչ արբեցողք, ոչ
բամբասողք և ոչ յափշտակողք զարքայութիւնն Ասոու-
ծոյ ոչ ժառանգեն, իմանալի է ՚ի միացեալ միտս, այս է
ցործամ՝ ՚ի նոյն մեղմն կայցեն, և ոչ ՚ի բաժանեալ միտս,
եթէ ապաշխարիցեն և ՚ի բաց կացցեն։ Եւ նմին գունակ
յիմար է որ զբանիւքդ ածիցէ, թէ որ բամբասեաց ոք միան-
գամ, կամ զայլոց ինչ եհան, կամ ադահեաց, այնպիսւոյն
հատեալ է յոյս փրկութեան :

ԳԼՈՒԽ Բ.

ԻՄԱՍՏՈՎԱԿՈՒԹԻՒՆՔ ԻՄԱՍՏԻՑ

Իմաստովակութիւնք որ ոչ՝ ի թիւրութենէ բառից միայն լինիցին, այլ և իմաստից կամ իրաց, այսինքն՝ ի թիւր ակրզբանց և օրինաց գնելոյ, կամ՝ ի ծուռ հետեւութեանց հանելոյ, յաէտ բազմաթիւ են և առաւել արթուն և մտատես զգաստութեան կարօտ՝ ի յանդիմանութիւն։

Առաջինն, ի ձեմականաց անգիտութիւն խնդրոյ ասացեալ, այն է յորժամ պայման խնդրոյն փոխի, և յայլ կերպարան յեղաշրջի բանն։ Այս իմաստովակութիւն էր կարդեսեանց, որ խճքծեալ պախարակեին զնեւտոնեանսն, թէ ձգողութեամբն իւրեանց յարուցանեն զգաղանի ուրական ձեմականաց։ Իբրու այն թէ նեւտոնեանք ձգողութեամբ մեկնել կամիցին, որպէս ձեմականքն աղապատանօք, զգատճառս բերման մարմնոց առ իրեարս. ուր նոքա ձգողութեամբ ոչ ինչ իմանային, բայց զարդիւնս իրացն՝ գիտողութեամբք և փորձիւք հաստատեալ. այս է՝ զնոյն ինքն զըերումն և զձկուումն մարմնոց և առ իրեարս գալ։

Երկրորդն է սուտ վարկածն ասացեալ. յորժամ ապացոյցք հաստատին յայն ինչ որ չէ, և գոյ կարծի սոսութեամբ։ Սորին սակի էին ամենայն աղանդասար գուշակութիւնք աստեղանշմար և նշանադէտ ախտարակաց և ժամադէտ ծննդաբաշխից, զոր՝ ի զանազան դիմաց աստեղացն հմայէին՝ ի վարս,՝ ի բարս,՝ ի բախտ և՝ ի վիճակ մարդկան և՝ ի պէսապէս պատահարս նոցին. իբրև թէ այն ամենայն յաստեղացդ ազերցութենէ գործիցի, որոց չիք ինչ ամենեին ընդ նոսա։

Բազում սուտ վարկածք փոխանակ՝ ի պատճառն ելանելոյ,՝ ի բուն իրն կրթին։ Պլուտարքոսի լուեալ թէ մըտրուկք հալածեալք երբեմն՝ ի գայլոյ՝ արագաթուիչ են քան զայլսն՝ ի վազս, յերկուց զգատճառսն իմանայ. զի թերեւս յամբաքայլքն՝ ի բուռն անկեալք իցեն, և թեթելնթացքն

միայն ճողովրեալ, և կամ զի առ ահին թեթևացեալք յայնժամ, սովորութեամբ՝ 'ի նմին յարանայցեն . բայց ապա զնովիմբ ածէ, թէ ո գիտէ և իրն ինքնին 'ի գլխովին չիցէ հաւատատի: Զայս վերջին բան Պլուտարքեայ 'ի գլուխ բազում պատմութեանց արժան էր կարգել, որ անսովոր և հրաշանշան իրաց զրոյցս տան: Աակայն մարդկան 'ի զըւարձութիւն զարմանալեաց հրապուրեալ, բազում այն է զի սիրեն հաւատալ նոցա, և ապա գուն ընդ վայր գործեն կարկատել ինչ պատճառանս անգոյիցն. և այսգունակ զօր ամենայն նորանոր յառնեն առասպելք :

Իրրորդ է զեղծումն կամ կրկնումն սկզբան. հաստատել զապացոյցն 'ի սկիզբն ինչ կամ յօրէնս, որ ինքն իսկ կարօտ է ապացուցի: Այսպիսի էր այն, որով ճգնեին Ճեմականք ցուցանել զերկիր 'ի միջակէտ տիեզերաց կացեալ որպէս զեկոյց Գալիլէոս: Ամենայն ծանունք, ասէին, դիմեն 'ի միջակէտ աշխարհի: Խոկ տեսանեմք զի ամենեքեան 'ի միջակէտ երկրիս դիմեալ են. ապա միջակէտ երկրիս՝ միջակէտ է և աշխարհի: Այսպիսեաւ վարեցան և կարգեսեանք, որով համարեցանն ցուցանել զզանազանութիւն հոգւոյ 'ի նիւթոյ . այնու զի բնութիւն նիւթոյ է տարածութիւն, և հոգւոյ բնութիւն՝ խոհականութիւն: Այլ եթէ չէին մեզ առ ձեռն այլ հաւաստիք խտրութեան հոգւոյ և նիւթոյ, այն ինքն է հարկաւ պարզութիւն միոյն և յօդաւորութիւն միւսոյն, 'ի նոցա ապացուցէն վայ էր մեզ: Զի զիարդ էր կարելի կարգեսեանցն՝ բնութիւն նիւթոյ ցուցանել զարածութիւն, որ հանգամանք ինչ ևեթէ է 'ի նորայոցն. մանաւանդ թէ, որպէս այլուր ցուցցի, սոսկ համեմատութիւն. զի չէ ինչ տիրապէս, բայց համագոյութիւն բազում մասանց, որ է բազում իրաց շարադրելոց⁶²:

Չորրորդ է յոռի շըջան ասացեալն. յորժամ առաջինն երկրորդաւն ցուցանի, և երկրորդն դարձեալ առաջնովն: Որպէս եթէ ասիցէ ոք. Գիծ ինչ կարճագոյն է ընդ մէջ երկուց կիտից, վասն զի է ուղիղ. և հարցեալ՝ ընդէր ուղիղ իցէ, տացէ պատասխանի. Փանզի կարճագոյն է:

Հինգերորդ է 'ի պատճառ գրել զոր չէն, անուանեալ 'ի Դալրոցականաց Ոչ պատճառ իբր պատճառ: Այսպէս Ճեմականք զվերելս ջրոյ 'ի ճգողական ջրհանս՝ հարկանէին 'ի մտացածին խորշումն կամ 'ի զարհուրանս բնու-

թեան յերեսաց դատարկի : Կարծէին թէ սառն և պաղ մանուցու ՚ի ցրտաբեր մասնկանց , որ ընդմուեալ ՚ի ջուրն պնդիցեն զմասունսն . և թէ շանթն ՚ի ծծմբային հրկիզութեանց գոյանայ յօդս պատահէլոց . և թէ այսպիսի վառմունք են հիւսիսայդն և դիսաւորքն . թէ սորա և լուսաւորացն խաւարմունք պատճառք են սրածութեան , պատերազմաց , սովոյ , մահու իշխանաց : Եւ մրով բանիւ բովանդակ ասացեալ , ամենայն վրիպախօսութիւնք որով ՚ի վերայ ածէին երբեմն և տակաւին ածեն բազումք , թէ այն ինչ յայնմ իմեքէ ունի սկիզբն , զի զնորա կնի եկն երեւցաւ , զոր Դալրոցականքն կոչէին Յետ այսորիկ , ասկա վասն այսորիկ :

Զսոյն իմաստակութիւն մեղանչեն և որ անծանօթ գործոց պատճառս կամելով գտանել , աննշան ձայնիւք դրդը ջել սկսանին : Այսպիսի իմն եր գրեթէ բովանդակ բնախօսութիւն Դալրոցեանց . եթէ հարցանեիր . Առ իմ խորշիցի ջուր ՚ի ձիթոյ . տային պատասխանի . Զի այս երկու բնութիւնք առ ատելութեան չհամըուրին ընդ միմեանս : Ընդէր երկաթ առ խանդումանդ ձգիցի . Վասն զի սորա ընդ նմա ախտակցութեան աղապատանք և սիրելութեան համբոյքք են : Ե՞ր աղապաւ թմբիր ածէ խաշխաշ . Քամնզի զօրութիւն է նորա թմբը բարար : Զիսարդ լուանայ աճալ զփոր . Վասն զի մաքրողական ունի զօրութիւն . և որ այն ևս : Եւ համարէին այսու քաջայայտ իմանալ պատճառս այսմ ամենայնի արդասեաց . բայց այդ զնոյնս այլով բառիւք երկրորդել է , և ոչ այլ ինչ . ջուրն մերժի ՚ի ձիթոյ , քանզի մերժի . երկաթ դիմէ առ խանդումանդ , վասն զի դիմէ . խաշխաշն զմրեցուցանէ , զի զմրեցուցանէ , և որ ՚ի կարգին : Այլ յետ խափանելոյ դալրոցական իմաստասիրութեանն , տակաւին չե ՚ի սպառ դադարեալ այս իմաստակութիւն : Բազմաց ամօթ մեծ թուի , յորժամ զպատճառս ինչ իրաց հարցանիցին , խոստովան լինել ազատագէմ զտգիտութիւն իւրեանց . յիմաստութիւն իմն պատճառին , և ընտրեն դիմակս առնուլ զերեսօք շատխօսութեամք բանիւք մնութովք և անհամութեան , քան անոպատրուակ դաւանել , որ գովելին է և գեղեցիկ , թէ չգիտեն՝ զոր ոչն արգեօք գիտեն :

Ի սոյն իմաստակութիւն գլխի և ընծայելն ինչ միոյ ևեթ պատճառի , որ ՚ի բազմաց իցէ : Զոր օրինակ , միում արատ

դնել վասն իրէք գործոյ՝ յոր բազում իցեն գործակիցք . 'ի մի միայն պատճառ հանել կուտել զբամբասանս նուազութեան տարեւոր հնձոց, անյաջողութեան գործոց, վեասակար արկածից ախտի, որ 'ի յոգունց եղանիցին, թեւրեւ և եղեալ իսկ իցեն: Իսոյն բերի և զառիթն պատճառ ասել գործոյ . որպէս եթէ ոք զբրիստոսակրօն հաւատովքն բարուրս կարկատեալ բիծմ շփեսցէ զայնչափ անչափ մահունսն որ պատճառանօք նորա և հակառակ իւրում վարդապետութեանն գործեցան:

Վեցերորդ իմաստակութիւն է անկատար թուումն մասանց: Ինոյն գան ամենայն անջատական բանք, որոց բաժանումն թերի է և մասանցն թուումն . զօրինակմն եղեալ եմք (յէջ 221):

Եօթներորդ՝ անուանեալ 'ի Դալրոցականաց խաքէութիւն պատահման, այն է յորժամ 'ի հարկէ ինչ ոք համարիցի զառ 'ի դիպացն արգասիս: Սովին պատրանօք մեղադիր լինել համարեցաւ Որուսո և խոտան ցուցանել զամենայն գիտութեանցն հոյլս, և հանդերձ բոլոր արհեստիւքն հետ աղլսաղլսեալ վարել մերժել 'ի մարդկանէ իւրեւ ապականիչս բարուց: Որպէս եթէ անառակ ստահակութիւնք մեփական ինչ և 'ի հարկէ արգասիք իցեն արուեստից և գիտութեանց, և ոչ ըստ հանդիպման պատահար նորիմք զեղծելցն: Օրինակ իմն, որպէս ոք զի անդոսնել և վտարել կամիցի 'ի բժշկականութենէ զարնդիկ, զշոյզ խաշխաշի և զծարրաքար, զայն ինչ նոցա բիծ եղեալ զի երբէք երբէք տիմարաբար առեալք 'ի կիր՝ անհնարին գործեն տոյժոս: Իսոյն մեզս կան և որ յամենայնի ճշմարիտ համարին ինչ որ մի անգամ՝ հաւատարմացեալ է ըստ դիպացն պատահելոյ: Զոր օրինակ թէ ծածկագիտութիւն կարող է գուշակել զժիւս վիճակի, իրբեւ զի երբեմն պատահմունք 'ի դէպ ելին գուշակելեացն. կամ թէ անուրջք հանդերձելոյ ինչ իրաց իցեն նախագիտութիւնք, զի յեղելոյ ինչ երբեմն 'ի ճահ պատահեաց երազոցն :

Ութերորդ՝ առնուլ զբոլորն փոխանակ մասանց, զպատկանեալն ոմանց միայն 'ի մասանցն 'ի վերայ բոլորին ածեալ հետեւութիւն: Ըստ այսմ Պլատոն զբնաւ քերդողմն 'ի մի ջոլորեալ յիւրմէ քաղաքականութենէն տարագիր և հալածական յաքսորս հանել կամեցաւ, զի են 'ի

նոցանէ որ վնասակարք են։ Ամին նման լսեմք զօր հանապազ խառն բամբասեալ զհամագումար միաբանութիւն ինչ ժողովոյ մարդկան, կամ զկարդ մի ողջոյն, այլ և զքաղաք մի համօրէն և զժողովուրդ և զազդ՝ յաղագս ուրուք ուրուք յոռութեանց և ապիրատութեանց միահամուռ. 'ի վայր հարեալ և դատափետեալ։ Աստի են և ամենայն թիւր և ստահակ ապացոյցք 'ի մամաւորէ առ ընդհանուր, որ և յաճախեալ իսկ են. քանզի առ հանրական մակածութիւն կազմելց՝ սովորաբար շատ թուին մարդկան երկու կամ երեք օրինակք։

Իններորդ՝ անսահմանաբար ընծայել իմիք զոր ոչն յարմարի նմա առանց պայմանի կամ չափոյ, զոր Դալրոցականք կոչէին զըստ իմիքն պարզաբար ճշմարիտ գնել։ Այսպիսի է վնասակարն 'ի ընէ ասել զպտուղ, որ վնասէ միայն խակակութ կերեալ կամ փուտ կամ անչափ. զմարդ մահկանացու ասել բոլորովին, զի մահկանացու է մարմնով։

Տամներորդ՝ կարելսոյն 'ի վերայ բերել զարդեանցն ճըշմարտութիւն. իմաստակութիւն սովորական։ Ի՞ ինչ որ կարելի է, ուրեմն ճշմարիտ է։ Ոչ ինչ հակառակ կայ թէ իցեն հսկայք սոսկավիթխարք ազգաւ, ապա ուրեմն գոն. Մարթի հոգւոյ խորհելմիշտ, և 'ի քուն ևս, թէ պէտ և յետոյ ոչ ինչ յիշեցէ 'ի խորհեցելոցն, ուրեմն միշտ խորհի։ Այսպիսի է երբեմն և իմաստախրացն ուղղախոհութիւն, թող թէ ռամպին։ Ոչ ինչ գոյր ասել, եթէ առ այսոսիկ կարծեօք ևեթ վարեին, կամ գեթ իբրև ուրեք երբեք հաւանականս ունեին. համայն նոքա ընդ հաւաստին կարգեն։

Մետասանն է զեղծումն օրինակաց և նմանութեանց, յորս առաւել զառածանի խաժամութն. անբաւական գոլով 'ի խորազնին քննութիւն իրացն, չատ են նմա նշմարանք ինչ նմանութեան իրաց, և անդէն զմիոյն ընդ միւս սոյն խառնակէ. զսմանէ ասացաւ և (յէջ 185)։

Արտաքոյ այսոցիկ նշանակէ 'Լոք այլ ևս երիս իմաստակութիւնս. զորս նենգութիւն և խարդախութիւն 'ի դէալ է ասել քան իմաստակութիւն, և յաճախեալ են առ մարդիկ։

Առաջին, զոր ինքն կոչէ ապացոյց 'ի պատկառանաց, այն է՝ յորժամ առ 'ի չգոյէ այլոց փաստից 'ի մէջ առնուցուոք, բազում այն է զի և ստութեամբ, զբան և զվկայու-

թիւն արանց՝ ընդ որս չիշխէ ոստին՝ ի վէդ մտանել, պատկառեալ յանուանէ նոցա կամ յաշտիճանէ կամ յընտանութենէ :

Երկրորդ՝ յորջորջեալ առ նմա ապացոյց 'ի տգիտութենէ, այն է՝ զի ոք պահանջիցէ 'ի հակառակորդէն հաւան լինել ընդ իւր 'ի կարծիսն, ապա թէ ոչ՝ զլաւագոյնն 'ի մէջ մատուցանել: Որպէս թէ ըստ կարգի ուղիղ իցեն մեր կարծիքն, յորժամ ախոյեանն տկարանայցէ լաւագոյն ինչ այլ յառաջ ածել: Զոյգ սմին է իմաստակութիւն, եթէ սուս գրեսցէ ոք զգոյութիւն իրիք, վասն թագուն օրինակաւ ազդելոյն, կամ զշանգամանաց ինչ վասն պատճառին անյայտ լինելոյ: Որպէս եթէ զչոգւոյ գոյութիւն ոք ժխտիցէ, այնու զի անհաս է օրինակ ազդելոյ նորա 'ի մարմին: կամ զշանրական ձգողութիւն մարմնոց, զի անդէտ եմք իրացն լինելութեան:

Երրորդն անուանի 'ի նմանէ ապացոյց 'ի մարդոյ կամ առ մարդ, և այն է որ 'ի նեղ արկեալ ստիպեմք զոք ըստ իւրոց օրինացն ընդունել զմեր կարծիսն: Այս ապացոյց ծանօթ էր և հնոցն նովին անուամբ⁶⁵, բայց չհամարեալ յիմաստակութիւն. և չէ իսկ, յորժամ ցուցանել միայն ումեք կամբցիմք, թէ յիւրոց իսկ օրինացն սիսալէ. այլ մանաւանդ իւրով զինուն զնա հարկանել է: Բայց յիմաստակութիւն գնայ, եթէ յիւրոյ օրինացն՝ մերոց բանիցս հաւաստիս առնուցումք. զի գուցէ սուս իցեն օրէնքն, և զոյգ նոցին բանք անիրաւ գտանիցին:

ՊՐԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վ.Ի.Ճ.Ս.Բ.Ա.Ն.ՈՒԹ.Ի.Ի.Վ.

Ոչ ամենեքին նովին կերպարանօք տեսանեն զիրս , և ամենեցուն 'ի մի կարծիս միաբան լինել անհնարին է . ուստի և երկպառակ կարծեաց և հակառակութեանց չիք երբէք վախճան 'ի կաճառս : Աակայն է ուրեք զի օգտակար գտանի այդ . քանզի 'ի մրցել կարծեաց , և 'ի շահատակել փաստից աստի անտի յասպարէս խաղացելոց , ճշմարտութիւնք որ 'ի մթան և 'ի մթաքնութեան խառնավնդոր և երկբայելի կային , տակաւ զերծեալք և 'ի խաւարի կապանաց արձակեալ 'ի լցո ելանեն : Բայց պիտոյ է նախ , զի վէճքն յիրս օգտակարս լինիցին , և մի յանշահ խնդիրս երկրորդ՝ կարգ ունել և շաւիդ վայելքական , և մի որպէս լինի բազում անգամ յընդունայն ամբոխ աղաղակի երթալ վախճանել : Վասն որոյ դիցուք նախ զգուշութիւնս 'ի վերայ ամենայն վիճաբանութեանց , և ապա ասացուք ինչ յաղագս ազգի ազգի օրինակաց վիճմանց :

ԳԼՈՒԽ Ա .

ՀԱՄԱՐՈՏ ԿԵՐԴ ԱՄԵՆԱՅՑ Վ.Ի.Ճ.Ս.Բ.Ա.Ն.ՈՒԹ.Ե.Ա.Ց

Կախ քան զամենայն , միայն սէր ճշմարտութեան և ցանկութիւն ճանաչելոյ զնոյն կամ այլոց 'ի ծանօթս ածելոյ՝ առաջնորդեսցէ մեզ 'ի վիճաբանութիւն , և մի շահ ինչ անձին և մարդահաճոյ կողմնաւոր կամօք աշառել երեսաց . մի կոյր և շամբուշ նախանձայուզութիւն , և կամակոր յամառութիւն 'ի մտահաճութիւնս . մի խեղաթիւր

սովորութիւնք և կանխակալ օրէնք մտաց . մի մնուի փառասիրութիւն՝ զանձն յերեան տալը , և մոլեգնութիւն ոստիսելոյ առ ամենայն և ընդ հենդն ելանելոյ . զի սոքա են մայր յոլով բանակուուութեանց և պատերազմաց , քան զոր չիք ինչ չար :

բ . Առվին խոհական խորհրդով կարգեալ զմաքառումնն , սկսանելի է յատակ և ճիշդ առաջի առնել զկարծիսն որում ջատագովել առեալ եմք , զի ուղիղ կարգաւ ընթասցուք : Ի մեկնութեանն մի մոցէ բառ աղօտ , կեղակարծ և երկդիմի , մի շեղ ինչ երկխօս կամ խառնակութիւն ձայնից : Առցին բառք ճշգրտագոյնք և յատակագոյնք , և այնպէս կարգեսցին 'ի շարի , զի հարազատ իմաստքն անդէն յանդիմանաբար ակներև կայցեն :

շ . Եթէ զանյայտից ինչ խնդիրք իցեն , կամ յաղագոմիոյ իրիք յաննիւթական ծանօթութեանց՝ որ ըստ մարդկան այլ և այլք են , ճշգրտեսցին նախ զգուշութեամբ գաղափարքս մեր , ցուցեալ զոր իմանայցեմքն ընդ նովին բառիւ . զի մի , որպէս ստէպ պատահէ , բովանդակ բառից իցեն վիճանք և ճառատանք , և միայն յուղեսցին 'ի խռովախուժ ճայնս թիւրիմացս :

թ . Եթէ խնդրոյն բազում իցեն մասունք , բաժանեսցին ճշդիւ . և սկսեալ 'ի միոյն , մի լիցի յայլմն անցանել՝ մինչ չեկատարեալ այնմ և 'ի գլուխ ելեալ հաստատութեամբ :

է . Ցուցեալ յայտնապէս զպայման խնդրոյն , երկոքին կողմանքն եկեսցին 'ի փաստս , հաւաստել զիւրաքանչիւր կարծիս : Եւ բնական կարգն պահանջէ , զի որ հաստատէինչ նա լիցի առաջին 'ի բերել զհաւաստիս հաստատութեանն . և որ ժիտէն՝ հերքեսցէ նախ զփաստս հակառակորդին , ապա թէ ունիցի ինչ այլ ևս յիւրմէ թերէն՝ յառաջ առնուլ և զայնս :

չ . Ի ցուցանելն զկարծիս իւրեանց՝ երկաքանչիւր կողմանքն զգոյշ լինիցին յիմաստակութենէ և 'ի խրթին մանուածոյ բառից . մի տարապարտ ըստ խնդիրն ելանել , այլ անսասան 'ի կարգին կալ , և հաւաստաբանել բուռն և զօրաւոր և անաղարտելի փաստիք , բայց և ճիշդ և աննենգ :

դ . Մի կողմն մի ընդմիջեսցէ զիսօս միւսոյն , մինչ չեկատամբանեալ . բայց ևս չափաւոր լիցի 'ի բանսն և համառօտս հատցէ . զի մի կարծիս տացէ ինքեան ևեթ կամել խօսելոյ :

Ը. Իբաց կացցեն պոռոտախօս խազմարաք կառաջմունք, զի մի այնպէս ինչ թուիցի՝ եթէ սաստկութեամբ աղաղակի լուծանելոց լիցէ ինդիրն և ուժգնութեամբ թոքոց : Հեռի լիցի և աւելորդ և անպարտ զերմութիւն, զի մի որ 'ի գիւտ ճշմարտութեան շարժեցաւ ինդիր, 'ի յայտնի մարտամբոխ պատերազմ կրթեսցի, գայթագութեամբ հանդերձ, որպէս բազում անդամ պատահէ :

Ե. Անհետ լիցին և կծանող զբոյցք, հենգն և երգիծանք և վաշ և յայ արհամարհու բարբառք, և ինչ որ խոժոռութիւն և զայրացուկս ածէ ախոյենին կամ ընդակն խոցէ, զի չվայելէ բարեխրատ անձանց : Եւս առաւելքացէ 'ի բաց հերքեսցին թշնամանք և լուտանք և յիշոցք, որ գոեհկաց և սինլքոր խուժանին են այդ սանդաստակք քարուականք :

Ճ. Ի վազել հակառակորդին զինդրովն, օրէն է դարձուցանել զնա անդրէն քաղաքավար քաղցրութեամբ, և 'ի նմին հաստատուն պահել : Եւ յորժամ երեկոցի թէ փոխել կամի զիմացուած բառիցն, յոր հաշտ և հաւան միաբանեալ էր յառաջն, յուշ առնել զայն նմա : Եթէ ամենեքին 'ի սմին զգուշութեան պինդ կային, բազում պայքարք 'ի սակաւ բանս վճար առնուին, և ոչ որպէս յաճախ տեսանի՝ այնքան ահագին կազք և կռիւք լինեին զոշոնչոց, մինչև զկնի սակաւ ինչ բանից երկոցուն կողմանցն անկանել 'ի խառնամառն բաւիղ, որ յայլ ինչ ամենեւին յորմէ սկսանն հանէ զնոսա :

Ճ. Մի ոք յամբարհաւաճ անձնասիրութեան կամ 'ի վայրապար ամօթոյ հրապոյրս անկեալ վէս և յամառկոտ լիցի 'ի կարծիս, զի և յետ 'ի միտ առնցոյ զսխալն՝ տակաւին 'ի խժդան և յօխորտի կալ և ջատագով մոլորութեան իւրոյ արձանանալ, քան խոնարհել պարկեշտութեամբ և յետս 'ի մրցարանէն նահանջ լինել : Ախալել ամենայն մարդոյ է, բայց խոնարհ խոստովանութիւն կամ խորագէտ հրաժեշտ՝ առաւելք փառս բերէ յայնժամբ քան զկամշոտ յամառութիւն պինդութեան :

Ճ. Եւ որ արդարանայ 'ի բանս իւր յաղթող ելեալ 'ի հանդիսէն, մի բարձր յօնիւք կոկողավիզ գոռողութեամբ զքիթմն 'ի վեր տարցի և ոտնհար լինիցի ոսոխին. այլ հնարեսցի մանաւանդ ըստ կարի զպարտութեանն կեղտ քերել 'ի նմանէ և կանգնել զկորանան : ինքնին ծածկեսցէ

կամ ամոքեսցէ զանախորժ կերպարանս քաջութեան յաղ-
թանակին. ինքն անձին իւրում մեղ գիցէ, ստգիւտ լիցի՝
թէ գուցէ 'ի սկզբանն ոչ բարւոք յայտնեաց զմիտո իւր,
ապա թէ ոչ հաւանեալ է, թէ և հակառակորդն ՚ի նոյն
կարծիս միաբան լինէր: Ի հաւանականսն միայն, ասասցէ՝
բամ ես ըստ իմոց փաստից այսպէս իմանամ զբանն, այլ
թերեւ և ես ինքն ՚ի խաբս լիցեմ: Խսկյանժխտելի ստու-
գութեան իրաց, իւրեւ տեսանէ զի կողմ տուեալ խուսա-
փէ ախոյեանն, մի զշետ պնդեսցի և վանեսցէ, մինչև սուր
՚ի փող առնելնմա և տապաստ արկանել: Մանաւանդ թէ
ընդ նշմարելն ՚ի նմա ապառում հետութիւն ըմբոստ և
անխոննարհելի՝ առ որ չգնան բանք, ինքն տեղի տուեալ
մեկնեսցի իմաստութեամբ ՚ի կոռւանոցէն:

Զայս ձեւ օրինակի բարեկարգ և հրահանդ տուրեառք
վիճմանց գովելի են և օգտակար. ապա թէ ոչ, պարսա-
ւելի և զենակար:

ԳԼՈՒԽ Բ.

Ա.Զ.Գ Ա.Զ.Գ Վ.Դ.Տ.Ս.Բ.ԸՆ.Ո.Ւ.Թ.Ե.ԸՆ.Ց

Ա իճաբանութիւնք կրկին են, առտնին՝ որ 'ի զրուցատ-
րութիւնս յառնեն, և հրապարակաւ՝ որ առնին յատենի
դատաստանաց կամ 'ի դպրոցս: Առտնին վէճք 'ի զրու-
ցատրութիւնս սովորաբար կատարին բերան 'ի բերան խօ-
սակցութեամբ, ուր այր իւրաքանչիւր ըստ մոտի հարցուածս
մատուցանէ և պատասխանիս: Ատենական կաճառմունքն
լինին ճառիւ, յորում դատախազն՝ ոսոխ և ամբաստան՝
սկիզբն առնէ տալ զամբաստանութիւնն, առաջարկել և
ցուցանել զբանս իւր ամենայն փաստիք իւրովք: Կողմն
որ 'ի դատ վարեալ և յատեան ճգեալ է, և կոչի պարտա-
ւոր՝ ամբաստանեալ դատափետ և ատենաքարշ, պատաս-
խանի առնէ փաստից ոսոխին, և յաւելու զիւրմն: Կրկնէ
անդրէն ոսոխն և աղարտէ զշելը ըստումն նորա և զփաստս, և
այլ ինչ թէ ունիցի յատեան հանէ, կամ զառաջինսն հաս-
տատէ: Յաւելու և դատափետեալն տալ պատասխանի,

զոր կրկնումն ասեն , ցրելով զնոր փուրսիշ ամբաստանութեան դատախաղն և նորանոր ընծայութիւնս 'ի դիմի հարեալ նմին յիւր ջատագովութիւն : Ապա յետ այնորիկ ելանէ վճիռ 'ի դատաւորէն :

Ի դպրոցս սովորաբար կրկնակի լինին վիճաբանութիւնք . շարաբանօրէն ձեռվ և կաճառօրէն , որ է նոցա անուանցն որոշումն ⁶⁴: Յառաջնումն առարկուն՝ որ և դիմախօս ասի , առեալ մի 'ի բանից հակառակորդին՝ որ ջատագովն կոչի , կազմէ 'ի վերայ նորա շարաբանութիւն կամ եղառած , ցուցանել թէ սուտ է բանն այն : Զատագովն երկրորդէ նախ 'ի բերան զդիմադրեալ շարաբանութիւնն կամ զեղառած , յայտ արարեալ թէ քաջ 'ի միտ առեալ է : Ապա միւսանդամ սկիզբն արարեալ ասէ զմեծագոյնն , և 'ի հաւան գայ՝ եթէ ճշմարիտ իցէ , կամ ժխտէ՝ եթէ սուտ գտանիցի . իսկ եթէ երկրայելի կամ երկդիմի թուիցի , զանազանութիւն դնէ . նոյնպէս եթէ 'ի մասնէ ճշմարիտ իցէ և 'ի մասնէ սուտ . իսկ եթէ ոչ համարիցի զայն ըստ կարգի և առանձինն պատշաճեալ առ խնդիրն , զանց առնէ : Զնոյն գործէ յետոյ և ընդ փոքրագոյնն : Եւ երկրորդեալ ապա զհետեւութիւնն՝ ժխտէ բոլորովն , եթէ զմեծագոյնն կամ զփոքրագոյնն արձակ արձակ ուրացեալ իցէ , կամ ըստ մասնէ՝ եթէ զանազանութեամբ ըստ մասանց ևեթ ուրացեալ իցէ զայնս : Լինի երբեմն հաւանել երկոցուն առաջարկութեանցն , և յուրաստ լինել 'ի հետեւութենէն , որ ոչ ըստ օրինի ելեալ իցէ յառաջարկութեանց անտի : Որպէս թէ ոք ասիցէ , Փայտ ոչ զգայ , քար ոչ զգայ , ապա չիք ինչ զգայուն : Եւ խոստովանել զամենայն , բայց վիխական ասել զապացոյնն , յորժամ յայլ ինչ արտաքոյ խնդրոյն վախճան առնուցու : Զոր օրինակ եթէ 'ի ցոյց մահկանացութեան ոգւոց ասիցէ ոք . Որ ոչ անարար է և ինքնագոյ , չէ մշտնջենաւոր . իսկ ոգիքն չեն անարար և ինքնեղ , ապա չեն մշտնջենականք . մարթէ յանձին ունել զամենայն , բայց ժխտել թէ այնու մահկանացութիւն ոգւոցն ցուցանիցի : Սակայն 'ի շարաբանութեամբ վարելն այս երկու ինչ ոչ պատահէ , եթէ առարկուն իւրում արուեստին ամենեւին անհմուտ ոք ոչ իցէ , և ոչ յայտ յանդիմաննենգաւ խորամանգել խնդրիցէ . երկոքեան եպերանք անհնարին : Իսկ յեղառածին լինի երբեմն յանձն առնուլ զնախադասն , և մերժել զհետե-

ւորդն , և այս առանց ինչ զառարկուաւն քամահանս ածելոյ . զի յայնժամ 'ի լոելեայն բանէն հրաժարեմք՝ յորմէ հետեւորդն ելեալ է : Որպէս եթէ ասիցէ ոք . Ոգիքն չեն անեղականք , ապա չեն անմահք , ընկալեալ զնախաւամն ուրանամք զհետեւորդն , որոյ ստութիւնն է 'ի լոելեայն բանէն , թէ Որ անեղ ոչ է , նա և ոչ անմահ է : Վասն որոյ ուղիղ փաստաբանութեան սիրողն զգոյշ լիցի չտալ տեղի հաւանելոյ նախադասին և ժխտելոյ զհետեւորդն . զի մի անմտութեան տացէ կարծիս , կամ չարարուեստ խորամանգութեան՝ գողանալոյ զատութիւն լոելեայն բանին . որով յոր կոյս և դարձցի , դորով լինիցի և փաշաման կրեսցէ ,

Երկարեցաք զառաջին ապացուցէն , զի այն է այլոցն ամենեցուն օրինակ : Արդ առեալ առարկուին զպատասխանի առաջին ապացուցին , զերկրորդն յառաջ մղէ , այլ իմ շարաբանութիւն կամ եղառած , որով 'ի թիկունս հասանէ ճշմարտութեան իւրոյ բանին , զորմէ նայն յուրաստ եղեւ : Եւ ջատագովն կրկնեալ անդրէն զապացոյցն զայն ողջոյն , դառնայ երկրորդէ զնոյն միւսանգամ մամն առ մամն , դաւանէ , ուրանայ , զանազանէ և կամ 'ի յետ ընկենու ըստ պատշաճի պիտոյիցն : Յորժամ խնդիրն ճեռվ լուծանելի իցէ , 'ի նոյն ստէպ կան , մինչեւ այլ ոչ ևս կարողասցի ջատագովն ուրանալ և ոչ զմի ոք 'ի դիմադրեալ բանիցն , և բռնադատեսցի գալ 'ի խոստովանութիւն ճշմարտութեան բոլորիցն . կամ առարկուն ոչ ևս մարժասցի հաւաստել զբանսն յորոց միւսն յուրաստ կայ : Այլ հազիւ ուրեք թէ հասանիցէ բանն յայդ սահման , կամ թէ և բնաւ իսկ ոչ . զի յետ փոքր 'ի ջատէ ճեռվ ապացուցից , լինի անցանել յանուանեալն Արտաձեւ : Ուր ցուցեալ առարկուին զվերջին բանն՝ զորմէ միւսն յուրաստ եղեւ , յառաջ վարէ առանց շարաբանութեան և կարգաւոր բանիւ զայլ ամենայն ընդդիմադրութիւնս իւր . և ջատագովին համառօտեալնախ զայն ամենայն , լուծանէ կարգաւ մի ըստ միուջէ , կնիք ածեալ 'ի վախճանի զճշմարտութիւն բանին որում պաշտպան կանգնեցաւ :

Կաճառօրէն վիճաբանութիւնք նման են ամենելին ճեռվ վիճաբանցն , բաց միայն զի յետ միոյ և երկուց շարաբանութեանց կամ եղառածից՝ ետ ընդ ետ մուտ առնի յարտաձևն :

ԳԼՈՒԽ Գ.

ԴԻՊԱԳՈՅՆ ՕՐԻՆԱԿ ՎԻՃԱԲԸՆՈՒԹԵՑՆ
Ի ՀԱՏՄՍՏԵԼ ԶՃԾՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Տեսեալ զազգ ազգ բանակռուութեանցն, ասասցուք
ոյր առաւել և ոյր նուազ է պիտանութիւն՝ ի յայտ յան-
դիմանութիւն ճշմարտութեան, որ միայն պարտի լինել
վախճան ամենայն բանամարտութեան։ Ինձ լաւագոյն
քան զամենայն թուի շարաբանօրէն ձեն, եթէ վայե-
լուչ կարգօք և օրինօք լինիցի, և ՚ի տոկ անկեալ ձգեսցի
միահետ մինչև ցվերջին հետեւութիւնն՝ առանց յարտա-
ձեւ ինչ փոխելոյ։ Զի որովհետեւ ՚ի սմա ամենայն բանք
յստակ են և ճիշդ և ինքնին յեռեալ ընդ միմեանս և զի-
րերաց ունին, վաղվաղակի յետ սակաւ ինչ հաւաստեաց՝
լիցի միոյն զպարտութիւն խոստովանել։ Սակայն յայժ-
մու սովորական օրինակն հայեցեալ, իշխեմ ասել զսա
յոռեգոյն քան զամենայն ՚ի լուսաւորութիւն և ՚ի ստու-
գութիւն ճշմարտութեան։ Զի այն ինչ հասեալ ՚ի դը-
ժուարութիւն խնդրոյն, անցանեն յարտաձեն, և առաջին
ձեւաոր ապացոյցք լինին անօգուտ ինչ հանդերձանք և
ձանձրալի կրկնաբանութիւնք. զորս մարթ է ՚ի մի կամ
յերկուս ամփոփել⁶⁵։ Եւ արտաձեւ մի ևեթ թողեալ ա-
ռարկուին, չտան նմա թոյլ կրկնել թէ և հարկ լինիցի
խնդրոյ իւրում։ և այսպէս ստիպի չեւ ևս նկուն եղեալ՝
յետս կալ ՚ի հանդիսիցն ասպարիսէ։ Նոյն բանք են և
զկածառօրէն պայքարմանցն, յորս միայն շարաբանու-
թեանցն տաղուուկ ոչ է։

Այլ ասասցէ ոք թերեւս. այս վիճաբանութիւնք չառ-
նին ՚ի հանդէս ճշմարտութեան, այլ ՚ի կորզան կրթու-
թեան մանկաւոյ, զի սերտեսցին ՚ի գուեալ ճշմարտու-
թիւնսն, կամ զի զուսելոցն ինչ ընծայեսցեն ճաշակս։
Սակայն և այնպէս անօգուտ համարեսցի ձեւդ առ կատա-
րումնն՝ յոր ՚ի լինէ կարգեալ են վիճական մաքառմունք. և
մնայ տեսանել իցէ արդեօք դիպողագոյն և ՚ի նպատակ
անդը՝ յոր գեռ փոխեցան. զոր ՚ի յաջորդ յաւելուածիդ
քննեսցուք։

իման առ բան մրցութիւնք ըստ սոկրատեան օրինի, զոր առ Պլատոնի յաճախ տեսանեմք, խիտ առ խիտ հարցուածովք և պատասխանեօք՝ զոր հետ զհետէ ճշդիւ տալ ստիպի հակառակորդն, և կամ թէ ազատ և արձակ օրինօք, որպէս յիմաստասիրական շարագծած կիկերոնի երևին, և սովոր են 'ի կենցաղակից կաճառս, օգտակար են 'ի յայտնել զշմարտութիւն, եթէ միայն յուսալի իցէ պահել անվրէպ երկոցուն կողմանցն 'ի հակաճառելն զկարգ օրինին զնչանակեալն 'ի վերոյ յառաջին գլուխն, և ոչ ուրուք խոտորել 'ի բուն խնդրոյն ըստ արտուղի անկեալ զրահետ, կամ միջամուխ խնդրովք որ յօտարակողմն կուսաց ամենուստ 'ի վերայ դղորդիցեն. և եթէ հենն և աղաղակ և անժուժութիւն ունկն զնելը փաստից միւսոյն, և մարմաջ և կտղանք խրոցն յառաջ խթելը, թոյլ արացեն՝ ոչ ասեմ զինդիրն լուծանելը, այլ գոնէ զերկաքանչիւր կողմանցն իմանալ զիօսս :

Ապա 'ի բազմաց աստի վիճաբանութեան օրինակաց, օգտակար զայն է ասել 'ի գիւտ ճշմարտութեան, զոր 'ի փուրշիշն վարեն : Քանզի երկոցուն կողմանցն ազատ կացեալ անհատ 'ի մեջ մատուցանել յառաջին խօսսն զամենայն փաստս խրեանց, ազատ և յերկրորդան՝ 'ի պատասխանել ամենայն առարկութեանց միւսեանց, դիւրին է 'ի միտ առնուլ զպայման խնդրոյն, և զմէտ կշուռութեան փաստիցն : Ամին այսր իրի աղագաւ յամենայն դատարանս՝ ուր հաւաստի խելամուռթիւն ճշմարտութեանն պահանջի առ 'ի զվճիռ վարկին արդարապէս հատանելը, այս ազդ վիճման ընկալեալ է ձայնիւ կամ գրով : Բայց թէպէտ և 'ի սմին իսկ պաճուճեալ բանք պերճախօսացն ճարտարլեզուութեան ցայն զօրեն արդարե ստուերածս ածել աչաց դատաւորացն, մինչև ընդդէմ արդարոյ՝ յանիրաւին կողմն տալ զդատակնիքն, և իրաւունս թուի զլարիսպագին աթենացւոց այսրէն դարձուցանել զկարգ և զօրէնս՝ 'ի բաց զամենայն դաւ և զհնարս հալածելով ըզճարտասանացն արուեստգիտութեան . սակայն ոչ կարգի ոճոյն են այդ պարսաւանք, որ հանգոյն Արիսպագին անտար այդոցիկ խորամանգութեանց է, այլ կամ միոյ կողմանն՝ որ ոչ գիտէ տեսանել և ըմբռնել զհակառակորդն 'ի նենգութեան իւրում, և կամ դատաւորացն անզգաստութեան՝ որով որս մատնին 'ի ծուղակս խարէութեանն :

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԱՌՏՆԻՆ ԵՒ ՀՐԵՊԵՐԱԿԱՍԻ ՎԻՃԱԲԸՆՈՒԹԻՒՆԻՑ

Ի ՎԱՐԺ ԿԱՄ Ի ՓՈՐՉ ՀԱՄԲԱԿԱՑ 66

ՅՈՒԻԱԾ Ա.

Առաջնին վիճարանուրիւնք՝ ՚ի վարժ
համբակաց .

Վիճաբանութիւնք՝ յորս հրահանգին մանկունք վար-
ժարանին, թէպէտ և օգտակար լինիցին այլ և այլ օրի-
նակաւ, սակայն տարակուսանք են ինձ, թէ արդեօք և ո-
րով վարիմքս յաճախաբար՝ ցուցանիցեն զպտուղ իւրեանց
որչափ ակն ունիմք։ Կարեւոր տեսանեմ վարժել զաշա-
կերտեալն յառաջարկել յստակ և ճիշդ զծշմարտու-
թիւնսն՝ որոց հաւանեալն են, և ապա ցուցանել ճշգր-
տիւ. կարեւոր դատիմ մարզել զնոսա ՚ի գտանել արագ
զվրիպանս թիւր ապացուցի առարկուին, եթէ՝ ՚ի տարտա-
մութեան բառիցն զօղեալ կայցեն, և եթէ յանստուգու-
թեան և յանհարազատութեան՝ որպէս լինի բազում ան-
գամ, և եթէ յայլում իսկը գթիցեն։ Աակայն չգիտեմ
ընդէ՞ր իցէ կրթել զնոսա ՚ի դոյն՝ շարաբանականն ձեռվ,
զոր յետ միանգամ՝ ՚ի դալրանոցէն ելանելոյ՝ ոչ ևս բնաւ
վարեսցեն յամենայն ՚ի կեանս իւրեանց։ Քանզի չտեսա-
նեմ ո՞ր այն ուրեք ակումք արանց ընտրականաց, որ զիւընդ-
րոց յուզելոց անդադար յերաստա նոցին ՚ի ճարակ զրու-
ցատրութեան, շարաբանութեամբ երբէք խօսեսցի, ըն-
դուանիմ ասելով, ուրանոտ, զանազանիմ, և ցուցոնի մէջու-

իոյնու, ցուշանի կուրախոյնու: Առ իմե՞ծ չմարզիցին մանաւանդ յայն տարագ խօսից, զոր յամենայն ժամ՝ 'ի գործ արկանելոց են:

Հաւանիմ, եթէ այնպէս կամք իցեն, թէ բարւոք է գիտել աշակերտին առնել ըստ տեղւոյն ուղիղ ինչ շարաբնութիւն, եզառած կամ երկսայրաբանութիւն, յորժամ օգնեսցէ 'ի հատանել զհանգոյց խնդրոյն, կամ յանձկի զռուխն կացուցանել, որ ըստ խնդիրն արտաքս արշաւել կամրիցի, և 'ի բանս տարապարտ զրահետ վարել: կամրմ ևս քաջակիրթ զնա գոլ յուղիղ զանազանութիւն: բայց ոչ ըստ խաղտախուղլու և խափարաձայն հագագայիցն նիւանինառապես, որինառանուբար, էրտինառապես, զծրութենուբար, փաղուրանինառապես, ներընդունառանինառաբ որպէս լինը երբեմն յամենայնի առ 'ի շտոքանել զամենայն: Այլ այնպէս, զի բուն վրիպակ բանին 'ի վեր ելանիցէ, եթէ բառքն ոչ պարունակիցեն զուղիղ գաղափարս ընդ նոսապատշաճեալս, և թէ ընդարձակելով կամ ճշդելով քան զարժան խնդրոյն առեալք իցեն: Խցէ թերեւս պիտանի ուսանել և զուղիղ կարգ ձեռվ վիճաբանութեանց, և տեսանել օրինակս ինչ զնոցա, զի զհամ առցեն. և եթէ դիպեսցին ուրեք, մի անտեղեակս երևեսցին. և գիտասցեն դատաստան առնել զնոցանէ, և եթէ պէտք լինիցին ինքնին ևս 'ի վար արկանել:

Սակայն ցանդ 'ի ձեռվ պայքարումն թերել զնոսա, և զայն միայն գիտութիւն համարել տալ, վեսսակար թուի ինձ քան շահաւեւտ: Քանի նախ բովանդակ այն ժամանակ զոր 'ի պատրաստութիւն և 'ի զբաղանս նոցին ծախեն, կորուստ է ամենելին. փոխանակ զի կարեին ուսանել ինչ յայնժամ: Եւ ոչ ինչ են բանք ասել, թէ նովաւ սերտին յուսմունան. զի լաւ ևս կատարի այդ յաճախ քաղուածով, կամ դարձադարձ կրկնութեամբ դասուն համարոյ, կամ թէ այլազգաբար ինչ վիճմամբ, առ որ փոքու ժամանակի պէտք իցեն կազմութեան:

Բ. Առարկուն՝ քանզի ըստ օրէնս պաշտամանն՝ տկարագոյն կողման պաշտպան մտեալ է, պարտի ըստ այնմ և թեթե փաստիք 'ի թիկունս կալնմա. զի անհնար է ճշմարտութեան յերկուս հակառակ բանս գտանել, որպիսի են առարկուին և ջատագովին. որով յանզգայս վարժի յիմաստակութիւն, 'ի խարդախութիւն և 'ի ստութիւն:

Դ. Եւ քանզի օրէնք են՝ յետ միանգամ խոստովանելց զբան ինչ, ոչ ևս 'ի մեջ առնուլ զայն միւսանգամ 'ի զանազանել կամ՝ 'ի ժխտել, և չէ իսկ մարթ տեսանել միշտ 'ի բազմաթիւ շարաբանութիւնս՝ թէ յու արդեօք տանիցի հաւանեալ բանն, այսպէս փոքր փոքր առ երկիւղի զեղծանելց ոստիսին իւրով հաւանութեամբն, յամենայն իսկ 'ի բանս կասկածաւոր ուսանի, սակաւ իմիք հաւան լինել և այն ահիւ և դողութեամբ, բիւր զանազանութիւնս մնութիս զմիմեամբք կուտակել վարկպարազի, ժխտել ստէպ և զյայտնիս. և այս ամենայն ըստ հռչակաւոր օրինի ձեռով վիճաբանութեանց, Դուն ուրեք հաւանեա, զանազանեա ստէպ, ուրացիր յաճախ:

Դ. զի սովորակի երկոցուն պատերազմողացն կէտ ցանկալի գիտաւորութեան ոչ ճշմարտին է խոյզ խընդրոյ, այլ միցանակին պսակ, երկոքեան առ հասարակ զամենայն ծիգն իւրեանց յայն ժողովեն: Եւ որում յաջողէ հարկանել զախոյանն, համարի զանձն յիրաւանցն թէեր կացեալ, ողն առեալ նազի սէգ պարծանօք և վիզ ամբառնայ. ոչ ինչ յուշ տարեալ ամեննեին, անձի՞ն ինչ քաջութեամբ՝ եթէ առ անաւագութեան և անկածութեան ոստին ստուերամարտիկ ընդ օդս կուտեալ տարաւ զյաղթութիւն. ուղղութեամբ արդեօք՝ եթէ մանկաւ, հաւաստի՞ փաստիք՝ եթէ պատրանօք, պատճառօք՝ թէ աղմբեալ աղաղակաւ: Որ և առաւել պատահէ այդ, յորժամ 'ի զերծ ինչ տեղի 'ի կոուարան իջանիցեն և միայն ընդ միայն կոուեալ մենամարտիկ ոգորիցին. ուր չէք որ մարտիցն ոստիկան կայցէ, յանդիմանել զթիւրն և զթերին, և յուղիղն առաջնորդել: Իսկ թէ այդիւ քանի օրէնք թիւրք և քանի սուտ վճիռք մտանեն ներկանին 'ի փրացեալ միտս խրոխտապանծ խայտացելցն պատիր յաղթանակաւն, և որոց յունկնդրութիւն նոցին կան ընկերք 'ի կացրդին, որք առ չգիւտ անվրէպ գատաստանի վերտեն և դիւրահաւանք են յոյժ և ճարտարակք 'ի հայթայթանս բանից, փարաւագ տալ, վաշ դրուատ կեցցէ ճայնել յաղթականին, զայն ես ոչ ունիմ ասել:

Արդ՝ համառօտեալ զցայսվայր ասացեալքս, օգտագոյն թուի ինձ 'ի հրահանգութիւն համբակաց՝ պարապեցուցանել զնոսա 'ի քաղուած և 'ի յաճախ կրկնութիւն ուսելցն: զի խոր տարրացին 'ի միտս նոցա, և կարող լիցին

արագ յիշատակել և վարել 'ի պէտս : Զամենայնի պահանջել 'ի նոցանէ հարցաքնութեամբ զհաւաստի համարս , զի յորժամ հարկ լինիցի' մարթասցեն և այլոց ցուցանել : Վարժել զնոսա 'ի գիւտ տիրական գժուարութեան բազմամանուած խնդրոց , և 'ի հատանել զնոսա 'ի սակաւբանս , յեղառած , 'ի շարաբանութիւն կամ 'ի փաստորդ : Ընդդիմաբանել նոցա 'ի վերայ ուսեալ ձշմարտութեանցն , և զի շարաբանօրէն և է զի այլազդ . մերթ ևս խաբկանօք բանս պատիրս զայն նոցա ընդդէմ սրել . զի 'ի վարժի կացցեն և փորձ է տցին աջողակաբար լուծանել զամենայն կընճիւն , և գտանել զբուն վրիպակն և զպատճառս խոտելոյ պալացուցից՝ եթէ թիւրոցն , և եթէ կերպարանելոց կամ անհաւանելեաց : Ի կիրթ արկանել զնոսա երբեք երբեք և 'ի պայքար ընդ միմեանս մտանելոյ . բայց ըստ սովորութեան օրինաց՝ զոր առաւել պարտին ուսանել . ցուցեալ նոցա միանգամայն՝ ոչ միայն զկարդն վաղ հասանելոյ յուղիղ հետեւութիւն , այլ և զարժանաւոր և զվայելչական օրինակ պայքարելոյ բարեկիրթ անձանց : Հրահանգել զնոսա երբեմն և 'ի շարաբանօրէն ձեռվ ընդ իրեարս կառառել , առաւել 'ի գիտել թէ զինչ է , քան թէ ուսումնինչ և սովորոյթ առնել անձանց :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Բ .

Հրապարակաց վիճաշանուրիւնը 'ի միորանամբ բակակաց .

Որպէս յառատնին , նոյն և 'ի հրապարակաւ պայքարս բանից , որք առնին զի մանկտին զուսման իւրեանց տացենինչ զփորձ , ոչ ունիմ ասել թէ սովորական ոճս ընտրելագոյն իցէ : Տեսանեմ զի քաղ հանեն 'ի խնդրոց երիս և թէ ևս քաջ չորս , և յայնս 'ի վարժի կան հարուստ միժամանակ , զայն ամենայն ապախտ և գրեթէ 'ի սպառ մոռացօնս արարեալ : Բազում այն է , զի և զպատասխանին դիմադրութեանց խնդրոցն ինքնին հրահանգիչն ստիպի

պատրաստել. և բովանդակ քաջութիւն և շնորհ ջատագովին է միայն անծեղաց պէս 'ի բերան առնուլ և կարկաչել: Գովեսցեն այլք զարագութիւն նորա յերկրորդել զապացոյցսն, և 'ի գնել ըստ տեղւոյն դէպ զանազանութիւնս. սակայն քաջ գիտեն ամենեքեան, զի և այդ պարձանք անհաստատ են: Լուեալ իսկ է իմ զումեմնէ բազում գովութիւն ժառանգեալ երբեմն 'ի մասինդ յայդմիկ, վասն ընդ այլում ամենայնի անբաւական լինելոյ: Այնչափ էր սա աղքատ յուշմութենէ, զի իբրև հանդերձեալ էր յայս փորձ մատչել, չյուսացեալ վարժապետին՝ ոչ թէ իցէ ինչ ատակ երկրորդել միայն ապացոյց մի յանպատրաստից, այլ և ոչ իսկ գոնէ երկրորդել ևեթ, բայց եթէ յերկար ընդ հրահանգս ելանիցէ և քաջ 'ի միտ առնուցու սերտողաբար, յանձն առ՝ ինքնին յօրինել կազմել բազում ամսովք յառաջ զամենայն ապացոյցսն, և անհաւատալի երկայնմտութեամբ արար նմա 'ի բերան առնուլ մի ըստ միոնէ: Իբրև մերձեցան աւուրք հանդիսին, աղաչեաց այրն զբարեկամն, զորս ընտրեալ էր յառարկուս, ոչ զի ծանուսցեն նմա զհակաճառութիւնսն՝ զոր հանդիսել կամեին, որ և այդ ոչ անսովոր ինչ է, այլ զի ինքեանք յիւրմէն առնուցուն զոր պատրաստեալն էր, և ինքեանք 'ի միտ առցեն զայնս: Զարմանք նոր, այլ զի արդեօք եղև: Կատեալ առարկուացն իմաստիւքն միայն, ոչ հարկ համարեցան մինչև 'ի ճայնաւոր խեցիսեղեփս բառիցն հաւատարիմ լինել: Միամիտ ջատագովն, որ ընդ բոլոր աշխարհի ոչ փոխանակէր նշանախեց մի վրիպեցուցանել 'ի բառից անտի իւրոց, երկրորդէր բայ զամենայն ապացոյց հարազատ ըստ իմաստիցն, սակայն այլաձայն բառիւք ամենեին ըստ որում սերտեալն էր 'ի հարուստ ժամանակաց: Ունկնդրացն անտեղեակ պատահեալ իրացն եղելոց, և տեսեալ թէ համարձակ խելամուտ լինի ամենայն ապացուցի, և զնչեաց ակումբ բազմականին մեծաձայն ծափահարութեամբ: Խակ պարզամիտ պատանեակն յայնքան 'ի փառան իւրում զամօթի հարեալ կայր կոր 'ի գլուխ և զերկիր նշանարէր, գիտելով չափ քանիօն արժանաւոր իցէ այնպիսում ծափահարացնութեան:

Զոր օրինակ դէպ լինի այսպէս թանձրագոյն պապկայի

սքանչելի և վեհ երեւել՝ ՚ի հանդիսի, նոյնպէս յետս ընդ-
դէմքն մարթի թէ հանդիպեսցին մտացեաց և քաջուշիմ
պատանեաց, որ չառնուցուն յանձն հպատակել հնարա-
գէտ հայթայթանաց, ՚ի շիփս լինել և ձեռս ՚ի դլուխ ե-
լանել խայտառակ և ակնկոր: Եւ փոքր մի ահա պատա-
հէր այդ ումեմն, որ սակայն անխոնջ ճգնութեամբ քաջ
տեղեակ էր եղեալ և խելամուտ իրացն, և ամենայնի ընդ-
կիրթ անցեալ: Առ այլով դրութեամբքն ջատագովել ա-
ռեալ էր և զՊոերհաւին յաղագս հաւասար ծաւալման
տարրական հրոյ ըստ միջոցաց, որ սովորական էր. առ բնա-
գէտս ժամանակին: Եւ այս փորձ է յորմէ եկն Պոերհաւ
յայն կարծիս: Եղեալ՝ ՚ի սենեկի ուրեք այլ և այլ մարմինս
հաւասարս քանակաւ և ձեռվ, բայց զանազանեալս բնու-
թեամբ և խտութեամբ, որ փայտեայ, որ երկաթի, որ ՚ի
քարէ, և որ այլ ինչ, և կախեալ՝ ՚ի մէջ նոցա զջերմա-
չափն. յետ ժամանակի՝ մինչեւ հուրն հաւասարապէս սրփ-
ուեսցի ՚ի նոսա՝ եթէ առ մի մի ՚ի նոցանէ մերձեցուցես
զջերմաչափն, շարժումն ինչ ամենեսին ոչ ցուցանէ: Ո-
րով յայտ է, ասէր նա, զի թէպէտ և զանազանեալ են
խտութեամբ մարմինքն, սակայն վասն հաւասարութեան
քանակին ծծեալ են նոյնչափ հուր: Արդ սկսաւ առար-
կուն մերժել զայդ հետևութիւն, զօր հանեալ էր Պոեր-
հաւ ՚ի փորձոյ աստի իւրմէ, որ հիմն է դրութեանն: Այդ
փորձ, ասէ, ցուցանելցուցանէ թէ իւրաքանչիւր մարմին
առեալ է մասն ինչ հրոյ ըստ իւրում բնութեանն չափոյ,
այլ ոչ եթէ յանցնիւրան զուգաչափ իցէ մասնդ: Զի եթէ,
օրինակ իմն, երկաթոյ երկոտասան չափը պատկանին,
մնդկի տամն, ութ քարի և վեց փայտի, յամենեսին այլ
և այլ չափով է հուրն. բայց քանզի յիւրաքանչիւրան այն-
չափ ինչ կայ որչափ անկանի նմա, ՚ի մերձենալ զերմաչա-
փին՝ չիք տեղի թէ մնդիկ նորա թողացուսցէ ՚ի նոսա մասն
ինչ յիւրմէն, կամ նոքա մասն ինչ յիւրեանցայոցն ՚ի սըն-
դիկն. վասն որոյ անխլիքտ մնայ ՚ի գործովն: Ի միտ առ
ուշիմ ջատագովն զգօրութիւն ապացուցին, առ որ չունէր
պատրաստ գտանել՝ ՚ի պատասխանիս. նա զի և չիք բնաւ-
մուտ գոռութեան բանից: Ըստ բախտի պատահար ՚ի գէտ
եկեալ նմա, վերջնն գտաւ այս յընդդիմադրութիւնս ոսո-
խին, և արտաքոյ ձեռյն. վասն այնորիկ ասպարէզ լայն և
ընդարձակ ունելով ՚ի պատասխանիս նախկի առարկու-

թեանցն, իբրև եկն՝ ի վերջինս յայս՝ մարթաց սայթաքել զայն և հարեանցիկ առնել, կուռ և անհետ թօժափեալ զանազան օրինակս փոփոխութեանց ջերմաչափի՝ ի հպել իւրում յայլ և այլ մարմինս, յորս ազգի ազգի չափով կայ հուրն. և ապա զնովիմք ածեալ, թէ նոյնակես լիներ և՝ ի փորձի անդ յիշատակեալ մարմինս, եթէ այլով և այլով չափով էր՝ ի նոսա հուրն։ Եւ այսպէս առանց ուրուք իրազգաց լինելոյ քողարկեաց զտկարութիւն պատախանուոյն։ Ապ' եթէ ոչ, եթէ ապացոյցն՝ ի սկզբանն էր առարկեալ, վտանգ մեծ մօտալուտ ի վերայ կայը նմա, քայ յամենայն վնասուէ, գումարել և ափ ի բերան մնալ ծանր թեթևութեամբ։

Այդ ոճոյն է վնաս և ստովիւտ։ Զիա՞րդ է հնար խամ՝ նորաթեք պատանույ կազմ՝ կալ յոտնկելեաց անտի ՚ի պատշաճ և յօդաւոր պատախանիս, գոռալ՝ ի վերայ ամենայն յեղակարծ առարկուածոյ՝ որ ընդ նորա դէմ ընկեցի։ Ո՞այն ոք և՝ ի հմտագոյն մարդկանէ, որ ձեռն յանձին հարեալ արտաքոյ յանդգնութեան դատաստանի ժըտեցի ՚ի հրապարակ անդը տալ զանձն, չասեմ՝ ի վերայ երից կամ չորից դրութեանց, այլ և միոյ եեթ, մանաւանդ յանստոյգ և՝ ՚ի հաւանական միայն խնդիր, ՚ի հարցիւր և յանպատրաստ պատախանատուութիւն որոց վեճաբար ՚ի ներքս դայցեն։ յաշօ եղեալ զամենայն ընդդիմադրութիւն, զոր կարեն այլը գտանել կամ հնարել, և ոչ ինքն գուշակօրէն ՚ի կարծիս լինել։

Ապա լաւ իցէ, ըստ իս, ՚ի պատիւ և յօդուտ համբակացն, յայս ամենայն փորձ քննութեան՝ ոճ զայն ունել, որ վարի յաշխարհագրութեան, ՚ի ժամանակագրութեան, ՚ի պատմութեան և ՚ի չափարերութեան։ Ի խընդիրս յորս պարապեալ իցէ մանկսին, այնք ՚ի հանդիսի անցցեն, յատեան կոչեսցին, և ՚ի վերայ նոցա ՚ի խուզափորձ մատիցեն, և ապահանջեսցին զհաւաստի համարս ուսմանցն. զի այս միայն խնդրի ՚ի նոցանէ, և ոչ այլ ինչ աւագ բան։ Սովորն օրինակաւ ոչ յերիս կամ ՚ի չորս ինչս միայն, այլ ՚ի բազումս, մանաւանդ թէ և ՚ի բոլորեսին իսկ ՚ի վարդապետեալն կարող են կազմ՝ գտանել. իսկ զշահ օգտի այսր քաղուածոյ ոչ ինչ ՚ի հարկ ասել։ Յայտնագոյն փայլեն առն առն իւրաքանչիւր վաստակք քաջութեան, և նենդութիւն չլինի ՚ի նոսա դամագիտ, յորմէ չգիտեմ.

քանիօն կարեւոր իցէ վաղագոյն ամրացուցանել զհամը-
բական 'ի զգուշութեան պահելով։ Որպէս որ մարձիչք և
հանդերձիչքն իցեն նոցա 'ի փորձ նահատակութեանն թե-
թեանան ոչ սակաւ 'ի ծանր և տաղտուկ աշխատութենէ
յոր կապեալ կան այժմ, նոյնպէս և որոց անուամբ իւիք
հանդիսատես լինել հասանիցէ 'ի լսարանին, վճարին 'ի
բազում ձանձրութենէն, որ չէ ինչ անսովոր. և եթէ պի-
տանի ինչ խնդիրքն իցեն և կարեւոր 'ի բնէ, ընդ ձանձրյն
փոխանակ և հեշտութեան հանդիպեսցին։

ՊՐԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

Ո Շ'

Զամենայն կարգ և զյեղանակ գործելոյ իրիք ո՛ճ ա-
նուանեմք այժմ։ վասն որոյ ո՛ճ է կրթանաց, ո՛ճ է ուսա-
նելոյ, ո՛ճ քննելոյ զՃշմարտութիւն և ո՛ճ ուսուցանելոյ
զնոյն։ Ա.Յ.Լ.'ի սկզբանէ ո՛ճ ոչ ինչ այլ էր իմանալ, բայց
զօրէնս և զհանգամանս վարդապետելոյ ինչ ումեք. որոց
կրկին են գլխաւորք, շարադրական և վերլուծական։ Շա-
րադրական ո՛ճն սկսանի յընդհանրոց և գայ իջանէ՝ի մաս-
նաւորս. իսկ վերլուծականն սկիզբն՝ի մասնաւորաց ա-
ռեալ՝ գնայ ելանէ յընդհանուրս։ Զիրաքանչիւրոցն ա-
սասցուք ինչ նախ առանձինն, և ապա տեսցուք ո՛քան զո՞
յերկոցունցն ըստ տեղւոյն նախամեծար իցէ։

ԳԼՈՒԽ Ա.

ՀԱՐԱԴՐԱԿԱՆ Ո Շ'

Ինախնի երկրաչափից, մանաւանդ յԵւկլիդեայ առա-
ւել պատուեցաւ ո՛ճն շարադրական, զոր այլով իւիք ան-
մարթ է յայտնի կացուցանել, բայց որով վարեցանն նո-
քա օրինակաւ։

Արդ Եւկլիդէս սկիզբն առնէ՝ի Աահմանաց բառիցն,
զորս՝ի կիր առնու յառաջն վեցեակ դիրս սկզբանցն. յորս
բովանդակի մակարդակ երկրաչափութիւնն. այս ինքն են
կէտ, գիծ, մակերեսոյթ, մակարդակ, անկիւն, ձև, այլովք
հանդերձ։

Առցա զհետ գան խնդիրք, զորս դիւրին է կատարել. զոր

օրինակ՝ ձգել գիծ ուղիղ կիտէ 'ի կետ, երկայնել զեղեալ ուղիղ գիծն, 'ի միջակիտէ իմեքէ անջրապետութեամբ իւիք գծել բոլորակ :

Զկնի սոցա յաջորդեն Առածք կամ Վճիռք, իմա ընդհանուր և ինքնին յայտնի ճշմարտութիւնք . զոր օրինակ թէ Բոլորն մեծ է քան զման իւր. Ի հաւասար քանակս յաւելքալ այլ հաւասար քանակս, կամ բարձեալ 'ի նոցանէ, կան մնան հաւասարք . Եթէ երկու քանակք հաւասար իցեն այլում երրորդի, հաւասար են ընդ միմեանս, և որ 'ի կարգին. թէպէտ և զյետինդ ընդ հայեցողութիւնս արժան է դասել քան ընդ առած, որպէս տեսաք յառաջն գիրսն (յէջ 109) 'ի 21 տեղեկութեան :

Զհետ անցանեն Հայեցողութիւնք և Առաջարկութիւնք, որ են մասնաւոր բանք որ ընդհանրօք և միմեամբք ցուցանին : Ի հայեցողութիւնսն նախ առաջի դնի ցուցանելին, և զկնի յարի ապացոյցն. իսկ յառաջարկութիւնսն նախ որ ինչ գործելցն է կարգի, ապա աւանդի տարագ գործելցն, և յետոյ ցուցանի թէ բարւոք գործեցաւ :

Ի հայեցողութեանց և յառաջարկութեանց կարգեալ դան Հետեանքն ինքնին հարկաւ 'ի նոցանէն յառաջ բըզ-խեալք : Եւ եթէ յաւելուլ ինչ պիտոյ լինիցի 'ի բացայատել զհայեցողութիւնն և զառաջարկութիւն, կամ առ 'ի գործ ինչ պիտոյից պատշաճեցուցանել զնոսա, կարգի և այն զկնի հետեանցն Պարապումն անուն առեալ :

Եթէ առ հայեցողութիւնն կամ առաջարկութիւն պահանջեսցի այլ ինչ բան ինքնին անյայտ և չցուցեալ կանխաւ, աւանդի այն յառաջագոյն քան զայն՝ Առումն կոչելով :

Այդ կարգ է աւագիկ երկրաչափիցն, զոր ոմանք՝ մանաւանդ Քրիստիանոս Վոլփիիս, մուծին և յայլ գիտութիւնս:

Յայտ եղեւ թէ շարադրական կարգն վեր 'ի վերոյ նոյն իսկ շարաբանականն է, յորում սկիզբն լինի յընդհանուր բանէ, զհետ գայ մամաւորն կամ եղական, և հուսկ յետոյ գայ հետեւութիւնն : Յայտ ոճ կարեւոր քան զամենայն է ճշգրտութիւն նախակարգեալ սահմանացն և բաժանմանց. վասն որոյ մինչ չե յայլ մասունսն անցեալ, զոցանէ ասասցուք :

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Ա .

Ասհման .

Սովորութիւն է սահման ասել զբան յայտարար իրի կամ նշանակութեան անուան . ուստի և բաժանի 'ի սահման իրի և անուան : Այլ տիրապես ամենայնն է սահման անուան . զի առ անգիտանալոյ գլուդաբոյս բնութիւն իրաց , չմարթեմք մերով սահմանօքս 'ի յայտ բերել զնոցա զիսկն , այլ զոր իմանամքն միայն անուամբ նոցա : Եւ ով բաւական իցէ ասել զինչ է ոսկի կամ արծաթ 'ի ընութեան իւրում : Եթէ ասեմք , ոսկի է հրահալ ամենածանր , գեղին , տարածուն , կռանելի , և այլն , ոչ ինչ ասեմք , այլ թէ ոսկւոյ անուամբ իմանամք գոյացութիւն , որոյ այս յատկութիւնք են : Բայց քանզի չճանաչեմք զամենայն մարթելի յատկութիւնս ոսկւոյ և ոչ զբուն էութիւն նորա , և այլում ծանուցանել ոչ ոնիմք : Եւս առաւել եթէ ոչ առանձինն զոսկւոյ իցեն ինդիբը , այլ զամենայն հրահալից . և ևս առաւել եթէ ոչ զմարմնոց , այլ զիմանալի էակաց իցէ բանն , որպէս զառաքինութենէ և զչարութենէ , զարուեստէ և զգիտութենէ : Զի որովհետեւ արտաքոյ մեր ոչ ինչ է սեռ և ոչ տեսակ , այլ սոսկ յօրինուած մերոց գաղափարացս , որպիսի են և ծանօթութիւնք իմանալի էակաց , ընդհանուր անուամբ հրահալի կամ հանածոյի , և չանձնաւոր անուամբ արուեստի կամ գիտութեան ոչ ինչ ցուցանեմք բաց 'ի յօրինուածոյ անտի գաղափարացն , զորս ընդ անուանն եմք կապեալ . վասն որոյ և անուան սահմանք են նոցայքն :

Դմնդակ պատերազմն որ երբեմն 'ի ձեմականսն գըրգռեցաւ յաղագս սահմանի իրի և անուան , անտի էառ ըսկիզբն , զի զանմարմին տեսութիւնս իւրեանց ընդ անձնաւոր բնութիւնս կամեցան կարգել . և համարեցան թէ իրօրէն արտաքոյ ինքեանց գուցեն ընդհանուր բնութիւնք , գոյացական տեսակք , սեռք , տեսակք , և էութիւնք , որպէս գոյին 'ի խելս իւրեանց : Աակայն ըստ

մատենագրի Արուեստին խորհելոյ , զզանազանութիւն սահմանի անուան և իրի մարթ է տակաւին պահել ուրեք . անուան սահման իմանալով զնշանակութիւն առանձին իմացուածոյ բառին ըստ ումեմն , և իրի սահման՝ զհասարակաց իմացուած ամենեցուն : Յայս միտու անուան սահմանք տեղի գտանեն միայն 'ի յայտնութիւն նորդ իրիք , յորմէ ստիլի ոք անուան նոր 'ի ներքս մուծանել , կամ հնոյն նոր միտու տալ արտաքոյ սովորութեան , որ զգուշալի է յոյժ . և յայնժամ միայն համարձակելի , եթէ օգնէ 'ի ճշդել և 'ի հաստատել զանյայտ և զտարտամ իմացուած անուանցն :

Առ լաւութիւն սահմանի անուան և իրի՝ երեք պայմանք պահանջին . ա , բացայայտութիւն , յստակ և յայտանկատ տեսութեամբ առաջի առնել զիրն զոր սահմանէ . որպէս խաւարումն լուսնի սահմանի , Նոեմութիւն լուսնոյ 'ի ստուերէ երկրի որ կշիռ գէպ արեգական և լուսնի պատահիցէ : Ըստ այսամ մասին յոռի են նախ ամենայն սահմանք , յորս են բառք՝ որ ոչ և մի յստակ տեսութիւն առաջի ոչ առնեն . այսպիսի է որով սահմանեաց Արիստոտէլ զշարժումն , Ներգործութիւն էակի 'ի կարողութեան ըստ որում է 'ի կարողութեան . զի 'ի բառից այտի ոչ ոք ըստ ևս իմանայ զշարժումն : Նոյնալիսի էին և արիստոտէլեան սահմանքն չորութեան և խոնաւութեան , ջերմութեան և ցրտութեան , և որ այլն ևս : Ինոցա սակի է և սահման ուղիղ գծին 'ի Պլատոնէ աւանդեալ , թէ Յորում ծագք հովանի առնեն միջոյն . զի անիմանալի է , զիարդ անհատ և անքանակ կէտ ստուեր արկանիցէ այլոց անբաժին և անիրան կիտից : Երկրորդ յոռի են սահմանք , եթէ սահմանեալ իրն մտանէ 'ի սահման անդր . որպիսի է եւկլիփեան սահման ուղիղ գծի , թէ հարթհաւասար ձգի ընդ մէջ ծագաց իւրոց . որ զայս միայն տայ իմաստս , թէ ամենայն կէտք նորա ուղիղ կան 'ի մէջ երկուց ծագաց , որ է ասել ուղիղ գիծն է ուղիղ գիծ : Ինոյն առցեսինձ և զարքիմիդեանն , թէ Ուղիղ գիծ է կարճագոյնն ընդ երկուս կէտս . քանզի 'ի չափել զայն պարտ է 'ի ձեռն առնուլ զայլ գիծ ուղիղ . իբրև թէ ասէր , ուղիղ գիծ է որ չափեալ այլով ուղղով գտանի կարճագոյնն ընդ մէջ երկուց կիտից : Երրորդ յոռի են զրեթէ ամենայն սահմանք սոսկ ուրացականք , յորս ցուցանի թէ զինչ չէ իրն , և ոչ

թէ զինչ է . որպէս եթէ ոք զարուեստն բանական սահմանիցէ , Արուեստ որ ոչ ճառէ զհիւանգութեանց , և ոչ զպատերազմէ . առանց ասելոյ զորմէ ճառիցէ ⁶⁸ : Բայց ոչ այսպէս է երբեմն , յորժամ ուրացութիւն միոյն հարկաւ բերէ զհաստատութիւն այլոյ . որպէս յատելն , Պարզէ որ ոչ 'ի մասանց յօդանայ . առանց մասանցն ասել ինքնին հաստատութիւն է սոսկ միեղինութեան :

բ . Ճշգութիւն և Ճշգրտութիւն . ողջոյն սահմանելոյ իրին պատշաճել և նմա միայնոյ : Վասն որոյ ոչ է ուղիղ սահմանել զեռանկիւն , Զել յերից հաւասար կողմանց և յանկեանց . զի ոչ ամենայն եռանկեանց է այդ 'ի դէպ : Եւ քառակուսին ոչ ուղիղ սահմանի , Զել 'ի չորից հաւասար կողմանց . զի այդ և տարանկեանցն յարմարի : Առաջինն յանցանէ ըստ առաւելութեան , զի յաւելու յատկութիւնս անպատեհօս ամենայն եռանկեանց . և երկրորդն ըստ նուազութեան , զի ոչ բերէ զամենայն պատկանեալն քառակուսւոյ :

։ Անդրադարձութիւն կամ փոխադարձութիւն ընդ սահմանելոյն , որպէս զի մարթ իցէ դնել միշտ զսահմանն 'ի տեղի անուան իրին : Որպէս յասելն , Եռանկիւն է ձե երեքանկիւնի և եռակողմ , մարթ է ասել և ներբուստ 'ի վեր ընդ հակառակս , Ամենայն ձե երեքանկիւնի և եռակողմ 'է եռանկիւն : Իսկ որ ասէն թէ փառակուսի է ձե 'ի չորից հաւասար կողմանց , ոչ ունի ասել և ընդ հակառակս , Ամենայն ձե 'ի չորից հաւասար կողմանց 'է քառակուսի :

Բայց գիտուն լիցի , զի թէպէտ և անդրադարձութիւն կարեւոր յատկութիւն է սահմանի , այլ ոչ բաւական . կամ թէ ասել , ամենայն ուղիղ սահման անդրադարձ է , այլ ոչ ամենայն անդրադարձ՝ ուղիղ : Սահմանեալ զեռանկիւնն ձե յերից հաւասար կողմանց և յանկեանց , կարեմք ասել անդրադարձութեամք՝ ամենայն ձե յերից հաւասար կողմանց և յանկեանց է եռանկիւն . այլ ոչ այնու ուղիղ իցէ սահմանս : Նման սմին անդրադարձ են առ հասարակ որք մեղանչենն ըստ առաւելութեան , բայց ոչ ինչ պակաս յոռի են :

Իսկ կատարեալ են 'ի սահմանի երեքին պայմանքն , ըստ կիկերոնի , եթէ 'ի մերձաւոր սեռէն և 'ի վերջին տարբերութենէն կազմեալ իցէ . այսինքն յայտ արասցէ զսեան

կամ զտեսակն մերձաւոր յորում կարգի է իրն, և զտարքերութիւնն որով որոշի յայլոց ամենեցունց որ 'ի նմին սեռի չ'ամ' 'ի տեսակի: Այսին վասն բարոք սահմանի մարդ կենդանի բանական. զի մերձաւոր դասիւ կայ 'ի սեռի կենդանեաց կամ շնչաւորաց, և բանիւ զանազանի յամենեցունց որ յայնմ սեռի: Բայց ոչ ուղիղ սահմանի կենսաւոր բանական. զի կարգ կենսաւորաց սեռականագոյն է, ընդ իրեւ ունելով և զպարզ հոգիսն: Ոչ ուղիղ սահմանեցաւ և 'ի Պլատոնէ, կենդանի երկոտանի և անփետուր. զի չէ բաւական տարբերութիւնդ մեկնել զնա յայլոց կենդանեաց, որ է զի 'ի բնէ անփետուր են և երկոտանի, որպէս մարդավայրիք կամ մարդաճիւաղըն ասացեալ ազգ կապկաց, և է զի արուեստիւ առնին այնպիսիք: Զոր և արար խոկ Դիոգենէս շնական ընդ հենգս նմին և 'ի տնագ. զի առեալ ընկէց առաջի նորա հաւ մի ողջ փետեալ, և ասէ, Աւասիկ մարդն պլատոննեան:

Անդստին 'ի ընութենէ սահմանին յայտնի է բաւական, թէ զպարզ ծանօթութիւնս և զգաղափարս անմարթ է սահմանել: Փանզի սահման է տիրապէս 'ի յայտ բերել զպարզ ծանօթութիւնս և զգաղափարս պէսպէսս, որ յօդեալ կան 'ի խառն ծանօթութեան և 'ի գաղափարի. զոր անհնար է առնել, եթէ ինքն խոկ ծանօթութիւնն և գաղափարն պարզ և առանց մասանց իցէ: Սակայն եթէ պիտոյ լինիցի, մարթ է այլ և այլ օրինակաւ՝ թէ ոչ սահմանել գէթ խմանալի գործել և զայնոսիկ: Առաջին՝ յանդիման առնել զիրսն յորոց գան այն գաղափարք և ծանօթութիւնք. զոր օրինակ ասել, թէ կանաչ ասի երանդ դալարեաց, և կարմիր՝ արեանն գոյն: Երկրորդ՝ յայտ ածել իւ յայնս հասանեմք. որպէս ասել, թէ ձայն է ազդումն զոր զգամք ընդ լսելիս: Երրորդ՝ որ ինչ առ նոսա ոչ պատկանի 'ի բաց քեցել. ըստ այսմ կէտն ասի անբաժանելի ինչ կամ անչափական, իմա որոյ ոչ երկայնութիւն է, ոչ լայնութիւն և ոչ խորութիւն: Այլ լաւ ևս 'ի գիտութիւն գայ կէտն, եթէ փոխանակ պակասական ծանօթութեանց՝ խկական ինչ յառաջ առցուք ասելով, կէտ է ծագ գծի, առեալ զծագն իրեւ սպառուած միայն, և ոչ իբրեւ մասն գծի:

Յ Օ Դ ՈՒ ԽԱԾ Բ.

Բաժանումնեւն .

Յորժամնիւթ ճառիցն բազմամասնեայ է , հարկ է ըաժանել՝ առ ՚ի յստակ և պարզ տեսութիւն իրին և մասանց նորա : Հնգեակ է բաժանումն . առ Յօդուածոյ ենթակայն բաժանի ՚ի մասունս իւր . որպէս տարին յեղանակս , աշխարհ ՚ի նահանգս , ՚ի գաւառս :

Բ . Սեռն հատանի ՚ի տեսական որ ընդ իւրեւ . զոր օրինակ գոյացութիւն ՚ի մարմին և ՚ի հոգի , կենդանի ՚ի մարդ և յանասուն :

Գ . Փոխանակ անուան տեսակացն նշանակին ընտրութիւնք այլ և այլ կերպարանացն . որպէս , ամենայն գոյացութիւն պարզ է կամ յօդաւոր . ամենայն կենդանի բանաւոր է կամ անբան :

Դ . Նշանակին ընդդիմակ պատահմունքն որոց մարթի լինել . օրինակ ինն , ամենայն մարմին կամ ՚ի շարժման է կամ ՚ի դադարման :

Ե . Հանգամանք կամ պատահումն բաժանի ըստ ենթակայիցն յորս գտանի . զայս օրինակ չարիք որոշին ՚ի քրեականս և յառանձնականս . հեշտութիւնք ՚ի զգալիս և յիմանալիս , կամ ՚ի հեշտութիւնս մարմնոյ և ՚ի հեշտութիւնս հոգւոյ :

Բազում անգամ մասունք բաժանմանն կրկին բաժանին . զոր օրինակ բաժանեալ նախ զգաղափարսն ՚ի պայծառ և յաղօտ , պայծառքն ստորաբաժանին ՚ի կրկնամասունս կամ ՚ի ներքնարաժինս , ՚ի յստակ և ՚ի շփոթ . յստակքն ՚ի կատարեալ և յանկատար . կատարեալքն ՚ի ճշգրիտ և վեր ՚ի վերս :

Օրէնք ուղիղ բաժանման այս են . առ Զի կատարեալ իցէ . այս ինքն՝ մասունք բաժանմանն բովանդակեացեն զբաժանեալ ենթակայն ըստ ամենայն ընդարձակութեան իւրոյ : Որպէս ահա կատարեալ է բաժանումն թուոց ՚ի դար և կոճատ , գոյացութեանց ՚ի պարզ և յօդաւոր . իսկ

ոչ բարւոք բաժանի մարդ յառաքինի և յախտաւոր, զի բազումք չեն և ոչ մին տիրապէս:

Է. Անդամք կամ կողմանք բաժանմանն դիմագրեսցին միմեանց և մերժեսցեն զիրեարս, որպէս դար և կոճատ, պարզ և յօդաւոր: Վասն որոյ ոչ ուղիղ բաժանին զուգահեռագիծք յուղղանկիւնս, 'ի շեղանկիւնս, 'ի քառակուսիս և 'ի տարանկիւնս. զի յուղղանկիւնսն բովանդակին քառակուսիք, և 'ի շեղանկիւնսն տարանկիւնք:

Դ. Մասոնք բաժանմանն լիցին յստակ և ճիշդ, և մի տարտամ և անյայտ. ուստի ծաղրականն է բաժանել զգիծս յերկայն և 'ի կարծ, զմարդիկ 'ի յաղթանդամ և 'ի նկնահասակ:

Պ. Ըստ կարի համառօտ լիցի բաժանումն, զի դիւրահաս լինիցին մասունքն. վասն այսորիկ անդէպ է ջոկել զանասունս 'ի շուն, կատու, ձի, ոչխար, այծ, առիւծ, գայլ, արծուի, և այլն: Առաջին բաժանումն ցուցցէ միայն զընդհանուր ջոկսն. և ապա ջոկ ջոկ իւրաքանչիւր վերստին արոհին յազգս ազգս, ազգք 'ի ցեղս, և ցեղք յայլ և այլ զարմազանութիւնս :

Բայց մի ճղճիմ ոք լինիցի խղճիւ պինդ ունել զօրէնսն Ռամոսի, թէ ամենայն բաժանման և ստորաքաժանման երկու ևեթ լինիցին մասունք, և թէ սոքա երկու երկու գնայցեն թափօրապէս: Ըստ որում ինքն զտարած քանակն փոխանակ ընդ այլոց 'ի գիծ, 'ի մակերեւոյթ և 'ի հաստատուն բաժանելոյ, ասեր նախ՝ մեծութիւն է գիծ կամ գծաւոր ինչ, և ապա թէ գծաւոր է մակերեւոյթ կամ հաստատուն: Մարթի լինել մասանցն երիս, չորս և աւելի ևս, բայց միայն մի քանի զարժանն կոտորեսցին: Ոչ ոք ըստզըտանէ զմեզ, եթէ բաժանեմք զերկիր 'ի հինգ մասն, Եւրոպէ, Ասիա, Աֆրիկէ, Ամերիկա և Ավկիանիա. կամ ըզտարին յեղանակս չորս, և զիւրաքանչիւր եղանակ յերիս երիս ամիսս:

Յ Ռ ՈՒ Ի Ա Ծ Գ .

Առածք , խնդիրք , հայեցողորիւնք ,
առաջարկորիւնք , և այլն .

Ոչ յամենայն գրուածս պիտոյ լինին խնդիրք . զի ոչ յա-
մենայն խնդրելոյ պէտք են առնել ինչ . բայց յամենեսին
գտանին վծիռք և առածք , իմա ակներե ճշմարտութիւնք
որ հիմն են ճառիցն :

Երկու ինչ նկատել կայ յառածմն . զի ինքնին առանց
ապացուցի յայտնի իցէ ճշմարտութիւն նոցին , և զի յոր-
ժամ այնպիսիք իցեն՝ մի ժամավաճառ և սնավաստակ լի-
նել 'ի ցուցանել զնոսա : Առաջին յատկութիւնն պակասէ
յառածից աստի Եւկլիդեայ . Երկու ուղիղ գիծք հատեալք
յայլմէ երրորդէ , եթէ գործեսցեն 'ի նմին կողման երկու
ներքին անկիւնս փոքրագոյնս քան զկրկին ուղիղս , յեր-
կայնելն ըստ նմին կողման կցին ընդ միմեանս . Երկու ու-
ղիղ գիծք չպարագրեն ինչ միջոց . Երկուց ուղիղ գծից
չմարթի ունել հասարակ հատուած : Այս ամենայն ա-
ռածք ապացուցի կարօտին , մանաւանդ յետ այնպիսի յո-
ռի սահմանի ուղիղ գծին , զոր ետ Եւկլիդէս : Վրէալ են 'ի
բացայայտութենէ և երկու առածք մատենագրի Արուես-
տին խորհելոյ , այն թէ Որ ինչ պարունակի 'ի պայծառ և
յստակ գաղափարի իրիք , ճշմարտութեամբ ընծայի նմա .
որ որպէս տեսաք յառաջին գիրս (յէջ 412) , բազում ու-
րեք սխալէ . և թէ Մարմին զմարմին չկարէ շարժել , եթէ
ոչ նախ ինքն շարժիցի . որ ոչ ճշմարիտ թուի 'ի վերայ ան-
շարժ մարմնոց որ ձգեն կամ մղեն զայլ մարմին : Զի չէ
յայտ , թէ պատճառ շարժման ձգեալ կամ մղեալ մարմ-
նոյն 'ի նմա՞ իցէ , եթէ 'ի ձգողն կամ 'ի մղեն կամ թէ յայ-
լում ումեք ազդողի : Յերկրորդ պայմանէն սիսալեաց Վոլ-
ֆիոս , որ 'ի նամնիր աշխատ եղեւ ցուցանել , թէ բոլորն չու-
նի փոքր լինել քան զմասն իւր . մինչեւ գողցես երկբայու-
թիւն իմն արկանել 'ի վերայ քաջայայտ ճշմարտութեանն ,
եթէ էր ինչ հնար տարակուասնօք ընդ այն հայել :

Հհայեցողութիւնս յատակաբար կարգել արժան է, և ճշդիք ցուցանել՝ ի սահմանաց, յառածից և յայլոց ճըշմարտութեանց ցուցելոց յառաջին հայեցողութիւնսն, կամ՝ ի պահանջեալ պայմանաց հայեցողութեանցն, և 'ի նոցին կազմութենէն :

Իսկ ապացոյցք՝ են որ ուղղորդ են, և են որ անուղղորդ. ուղղորդ՝ յորժամ ցուցանեն զպատճառս լինելոց իրին որ ինչ ասի գոլ. անուղղորդ՝ յորժամ անտեղի միայն ցուցանեն զչլինեն այնպիսի : Արդ ըստ մարթելոյ ընտրելի են ուղղորդ ապացոյցք. զի բաց՝ ի ստուգութենէն բացայսյու ևս են. տես գիրք Ա. (Էջ 445). և բաց՝ ի խելամտեցուցանելոյ, լուսաւորեն և կրթեն ևս զմիտս : Այսմ ոչ միշտ զգուշացաւ Եւկլիդէս. զի բաղում ուրեք անուղղորդ ապացուցիք վարի, փոխանակ զի ուղղորդքն անդէն դիւրադէպ մօտ առ կուրծս կային :

Յառաջարկութիւնսն փոյթ լիցի զի ըստ կարի հեշտընկալ և պարզ իցէ լուծումնն, և յաջայայտ ցուցիք հաւաստեսցի :

Հետեւանք մի հանցին 'ի հայեցողութեանց և յառաջարկութեանց, բայց եթէ ինքնին ելանիցեն իբրև ինքնեկ և յայտնի հետեւութիւնք. ապա թէ ոչ, զհետ բերել և զապացոյցն :

Պարապումն օգտակար է, եթէ զպէտս ինչ հայեցողութեանցն և առաջարկութեանց ուսուցանիցէ, կամ հմտութիւնս ինչ կարեւորս. իսկ եթէ յումպէտս զմատեանն խռկիցեն, անշահ են :

Այլ զայս ամենայն ջանալի է պատշաճագոյն կարգաւդասաւորել. զնիւթս ճառիցն վայելչապէս բաժանել և յիրեարս ընդելուզանել. 'ի դիւրիմաց և պարզ բանից ոտն ոտն 'ի գժուարինան անցանել և 'ի մանուածոյս : Ի կարգէ աստի հեռի գտանին սկզբունք Եւկլիդեայ, որոյ 'ի ձեւացութենէ հաւասարակող եռանկեան հաւարեալ, ապա գայ ուսուցանէ ճպել գիծ մի ուղիղ հաւասար այլում, և յերկուց անհաւասար ուղղոց եղելոց՝ հատանել 'ի մէծէն մասն ինչ հաւասար փոքուն :

ԳԼՈՒԽ Բ.

ՎՃՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

Ո՞չ վերլուծական և ո՞չ գիւտի ասացեալ, կարդ ունի՝
ամենեին հակառակ շարադրականին : Զի սա զընդհանուր
սկզբանց բուռն հարկանէ, անտի հանել զմանաւոր հե-
տեւութիւնս . իսկ վերլուծականն 'ի քննութենէ մասնաւո-
րացն արարեալ սկիզբն, հետազօտեալ ճանապարհ հորդէ
յընդհանուրս : Ի շարադրականն ամենայն ինչ սահմանի
և բաժանի և բաշխի 'ի հայեցողութիւնս, յառաջարկու-
թիւնս, 'ի հետեւանս և յայլն ըստ կարգի : Իսկ 'ի վերլու-
ծականին չիք գրեթէ և ոչ մի սահման, և ոչ բաժանումն.
ոչ յիշատակ հայեցողութեան, ոչ առաջարկութեան, և
ոչ հետեւանաց . այլ բովանդակն է միայար և անհատ, և
ամենայն ինչ կարդ ըստ կարգէ արձակի գայ 'ի մանր կըրկ-
տելոյ անտի իրացն, որ 'ի քնին առեալք իցեն :

Արդ փոխանակ 'ի գլուխ ճառիցն կարգելոյ զանուանս
իրացն և սահման 'ի վերայ նոցա ածելոյ, յայս ո՞չ սովո-
րութիւն է աւանդել նախ զպարզ ծանօթութիւնս և զգա-
ղափարս, յորոց յօդուածոյքն կազմին, և ապա զանուանս
նոցա : Կամեցեալ, օրինակ իմն, վերլուծաբար ճառել զներ-
գործութեանց մտացն, ասեմք՝ թէ յորժամ արտաքին իրք
ազդ ինչ առնիցեն 'ի մեզ, ցնցեն զթելոն՝ որ յուղոյ գրւ-
խոյն 'ի դուրս սփոխն 'ի մասունս մարմնոյ՝ զգայունք կոչե-
ցեալս : Այս թելք, որ նեարդք և ջիլքն ասին, զագե-
ցեալ ցնցումնն տանին յուղիդ անդր, և անդիտելի օրինա-
կաւ անցանէ 'ի հոգին . և յաջողութիւնն որով զգայ զայն
հոգին, այն իսկ է որ զգացումն յորջորջի : Յաւելումք ա-
սել, թէ յորժամ խառն զգացմունք իցեն 'ի հոգւոջն, մերթ
յայս մերթ յայն առանձինն և ուշի ուշով պարապի . և այս
գործ է որ կոչի մտադրութիւն . և որ 'ի կարգին մի ըստ
միոջէ :

Փոխանակ բաժանման 'ի թիւ արկանին մասունք բոլո-
րին, և ապա կարգի անուն բոլորին : Որպէս խօսել առեալ

զերկրաւորացս, սկսանիմք ասել, թէ կէպ 'ի սոցանէ գործարանաւորը են, ինքնաշարժք և զգայունք, զօր օրինակ մարդ, շուն, ոչխար, եղն. այլք գործարանաւորք միայն, առանց ինքնաշարժութեան և զգայութեան, որպէս ծառք, բանջարք, արմոտիք, ունդք. իսկ ոմանք և 'ի գործարանաց և յինքնաշարժութենէ և 'ի զգայութենէ անբաժ են, որդոն քարինք, հողք, աղք, հրահալք: Այսոցիկ զկնի յարեմք, թէ առաջինքն կոչին շնչաւորք, երկրորդքն բոյսք, երրորդքն հանք. և բոլորեքեան միահամուռ անուանակոչին երեք ցեղապետութիւնք կամ վիճակք և բաժինք բը նութեան :

Յապացոյցն սակաւ ուրեք գայ 'ի պէտս շարաբանութիւն. և անդ ևս բանն մասնաւոր կամ փոքրագոյնն միշտ յառաջ դնի. Զոր օրինակ, եթէ ցուցանել կամք իցեն թէ զպատկառուկ անունեալ տունին չէ օրէն ճշմարիտ զգայուն ասել, աստի սկսանելի է. Յայս տունի կան ամենայն նշանակք՝ լոկ ևեթ բուսականաց սեփականք. և ապա, թէ Ոչ ումեք 'ի բուսոց պատշաճեցաւ երբեք զգայութիւն. ապա և սմա ոչ պատշաճի: Իսկ զի 'ի շօշափելն ամփոփէ զտերեւմն, մերկ ազգեցական և անշնչական բռնի խորը տելոյ մանրաթելիցն խոստովանեսցի այն:

Առաւել 'ի գործ ածի մակածութիւն և համաբարդութիւն. որպէս ահա հանդամանք ընդհանուր դասուց, ծառոց կամ կենդանեաց, մակածութեամք ելանեն՝ թուելով զմանաւոր տեսակն կամ զմի մի իւրաքանչիւր յորս այն հանդամանք երեւնն: Եւ յապացոյց անմահութեան հոգւոյն բուռն հարեալ, պարտ է նախ ըստ օրինի համաբարդութեան (որ յէջ 255) ցուցանել, թէ հոգին խորհի. ապա թէ խոհուն գոյակն 'ի հարկէ պարզ է. և ապա թէ պարզն բնութեամք՝ անբաժանելի է, զի է առանց մասանց. յետոյ թէ որ անբաժանելին է, հարկ է թէ և անապական է, զի ապականութիւն է խարիսարումն և քայքայումն մասանց. յորմէ հուսկ վերջին յառաջ բերցի բան, թէ անապական 'ի բնէ ելով հոգին, անմահ և բնութեամք է:

Յայս ոճ ամենայն խնամոյ պէտք են, զի վերլուծութիւնքն ճշգրիտ լինիցին և անթերի: Եթէ 'ի տան զծանօթս բառի' անտես առնիցին ինչ 'ի գաղափարացն, եթէ 'ի թուել մասանց բոլորի' մոռասցի մի 'ի նոցանէ, եթէ 'ի մակածութեան ուրեք ոչ միշատակեսցին ըստ բաւականին

տեսակք կամ առանձնաւորք, որոց պատշաճիցի մակդիրն՝
զոր համօրէն սեռին և կամ տեսակին կամիմք ընծայել,
թէ յաղսաղսեալ հետեւութիւնսն կամ թէ ասել 'ի հա-
մարարդութեանն չիցեն ամենայն բանքն ինքնին քաջա-
յայտք և կամ ցուցիւք հաւաստեալք, բովանդակ վերլու-
ծութիւնքն յոչինչ լուծանին. և անկար է իմանալ 'ի նո-
ցանէ և ոչ ինչ:

ԳԼՈՒԽ Գ.

ԲԱՐԴԱՑՈՒԹԻՒՆ ԸՆՐԱԴՐԱԿԱՆ ԵՒ

ՎԵՐԱՌՈՒԾԱԿԱՆ ՈՃՈՑ

Առած էր առ հինսն, թէ ոճն վերլուծական 'ի գիւտ
Ճշմարտութեան միայն է պիտանացու, իսկ յառաջարկել
զայն և 'ի ցուցանել շարադրականան վարելի է: Քոնտիյ-
լեաք ուժգին 'ի գիմի հարաւ վճռոյս այսմիկ, պնդեալ աստ
անդ յաճախակի 'ի մատեանս իւր, թէ վերլուծականն է
միայն ուղիղ ոճ, ոչ 'ի գիւտ ևելթ Ճշմարտութեան, այլ
և յուսուցանել զնոյն: Այնիւ միայն է, ասէ, հասանել 'ի
բուն սկզբունս իրաց, բերել զնոցա ստոյգ և հաւաստի
գաղափարս, ցուցանել զնոտանութիւննոցա և զազդակ-
ցութիւն առ իրեարս, և ուղիղ ածել 'ի նոցանե հարազատ
հետեւութիւնս :

Թէպէտ և այս ամենայն վկայեալ է վերլուծական ոճոյն
շնորհ, բարւոք թուի ինձ յառաջ քան զընարութենէ միոյն
վճիռն հատանել, խարոց 'ի մէջ արկանել ճառելի իրացն
և անձանցն առ որս ճառքն են: Իբանս խորին վարդապե-
տութեան առ մտավարժմն և տեղեակս փոքր 'ի շատէ ճա-
ռելեացն, ոճ լաւ քան զվերլուծականն չիք ուրեք: Նա
միայն է անստերիւր առաջնորդ 'ի բուն և յանսայթաք
հմտութիւն իրացն. նա միայն հաւաստի և անսխալ լու-
ծանէ զնոսա 'ի տարերս իւրեանց, և ընդ հետս գիւտին
ընթանալով 'ի քաղցր զբօսանս կախարդէ զընթերցողն և
զլսելին. զի թուի թէ Ճշմարտութիւնքն ինքնին ակնյան-
դիման նոցա 'ի դուրս արձակիցին, կամ թէ նոքա անձամբ

գտանիցեն զնոյնս մի ըստ միովէ, քան թէ յայլմէ ուսանիցին: Իսկ եթէ բանքն՝ ՚ի պէտս դոյզն ինչ տեղեկութեան իցեն, որպէս համառօտութիւնքն, կամ առ անձաշակն և դեռավարժութիւնքն, որպէս յոլովք ՚ի սկզբնաշւիդ տարերցն ուսմանց, չիշխեմ պատեհադոյն ասել զիսիստ և զանվրէպ վերլուծականն: զի ՚ի կարծառօտս անհնարին է կատարեալ վերլուծութիւն: Եւ ես լաւ համարիմ բնաւ ձեռնապահ լինել, քան կիսակատար ինչ կցկցէլ: Իսկ անփորձ և տրմուղ համբակք, մանաւանդ պատանեակք, ևս առաւել մանկունք, ոչ կարծեմ թէ բաւականք իցեն ըստ արժանի խելամուտ լինել: Անկիրթ եղելցն ՚ի մոտածութիւն, դժուարին է անցանել ընդ երկայնաստղ հետեւութիւնն վերլուծականս, զորոց զքազմացն անհնարէ տեսանել զկատարածն յոր տանին, մինչեւ անդր հասանիցեն. և եթէ խզեսցի թելն տողանին, նոյն որ յուլունն պատահիցէ և անդ, բոլորիցն ցան և ցիր վայրավատին լինել: Սակայն ինձ այսպէս թուի, թէ ՚ի տարերս գիտութեանց լաւագոյն ոճ խառն վարել է զշարադրականն և զվերլուծական: Անդէն ՚ի նախադրումս բանին բարդել զեղջակոյտ սահմանաց, խնդրոց, առածից, ըստ շարադրական օրինին, տարածամ ծանրաբեռնել համարիմ զուշն կուտակօք անուանց և հատակոտոր կցկտուր իրաց. որ և նմին իրի դժուարաւ գանձին ՚ի մոտի, և ուսանելն տաղտուկ և ձանձրոյթ. զի դեռ ևս առ ժամն ոչ երեխ պիտանութիւն նոցին: Նոյնպէս և բաժանելն և ստորաբաժաննել զբոլորն անդստին ՚ի սկզբանէ ՚ի հազար մասունս, և որպէս Անենեկա ասէ՝ ՚ի փոշի լուծանել, ինձ առաւել աղմուկ շփոթի արկանել թուի, քան յստակ տեսութիւն: Իսկ զակիզբեն խօսիցն զնել համառօտ սահմանաւ իրին՝ զոր հանդերձեալ է ոք աւանդել, ապա հատանել զայն ՚ի գլխաւոր մասունն, յետոյ մանր մանր զիւրաքանչիւր մասն ՚ի ձեռն առեալ կարգել նախ և զնորա սահման. յաւելուլ, եթէ հարկ լինիցի, և զերկրորդ բաժանումն յես մանր մասունս. այս լաւագոյն թուի շաւիդ տանել զհամբակն ՚ի պայծառ տեսաւորութիւն իրացն, քան թէ վերլուծօրէն հապճեպով վազս առեալ ընդուստ մուծանել զնա յաշխարհ անձանօթ, և անդէն առաջնորդելնմա ընդ երկայն ուղեռորութիւնս անծայր և անզրաւ, զորոց չդիտէ իսկ բնաւ յուառեալ հանիցեն զնա:

Վասն երկուց պատճառաց նախամեծար ընտրեմ՝ ի սկզբ
բունս գիտութեանց զՃշգրիտ սահման քան զՃարտարանս
վերլուծութեան։ Կախ զի ՚ի լսել և յընթեռնուլ համբա-
կին անուն նոր, մոտադիւրագոյնս անսայ առ հետաքրքրու-
թեան գիտելոյ զիմաստ անուանն, քան յորժամ մանրա-
կոփու առաջի տեսանիցէ կանխաւ զգաղափարսն՝ զորոց
չտեսանէ ուրեք զվախճան, և ապա զանուանսն լսիցէ։
Երկրորդ անգամ, զի դիւրին է ՚ի մտի ունել զահման քան
զվերլուծութիւն։ Եթէ ասիցեմք ցնա. կամք է զօրութիւն
անձնիշխանական հոգւոյ՝ որով հաւանի ընդունել ինչ կամ
՚ի բաց մերժել, և յերկուց ընտրել զմին։ յորժամ հարցա-
նիցի թէ զինչ է կամք, կամ զանունն միայն լսիցէ, անդէն
կարէ տալ պատասխանի այլց և անձին, երկրորդելով
զահմանն։ Խակ եթէ ասասցեմք. ի փորձոյ և ՚ի վկայու-
թենէ մտաց յայտ է հանապազօր, զի յընդառաջել իմիք՝
իշխանութիւն ունիմք ընդունել զայն կամ մերժել. և եթէ
երկու ինչ միանդամայն հանդիպեցն, նոյնպէս իշխա-
նութիւն ունիմք ընտրել զմին և խոտել զմիւն. արդ այս
ինքնիշխան զօրութիւն է կամ անձնիշխանութիւն որ կամքն
կոչի. ոչ գիտեմ թէ իրեւ պահանջիցի համբակն՝ եթէ
զինչ է կամք, կարող իցէ՝ որպէս որ զահմանն ՚ի միտ առ-
խակ և խակ պատասխանի առնել, թէպէտ և կարի քաջ
մտադիր եղեալ իցէ և խելամուտ վերլուծութեանն։ Վասն
զի յիշողութիւնն նովին կարգաւ յուշ ածէ զգաղափարսն
որով և ուսեալն է, և ոչ հակառակ ընդդէմ ներքուստ ՚ի
վեր։ Զայս և ամենայն ոք յանձին փորձոյ ունի հաւաս-
տել. օրինակ իմն՝ թէ իցէ արդեօք ատակ նովին համար-
ձակութեամք որպէս յուղեղ կարգի ասել ներքուստ ՚ի
վեր խոտորնակի զհռչակաւորս զայս տող վերգիլեան,

Զայս դրա ու անլին խորագույն արևու + դից մի լինել անարդունա.

Նմանապէս և ՚ի բաժանման դիւրաւ առնու. ՚ի միտ համ-
բակն թէ քանարար բաժանիցի ինդիրն, յորժամ լսիցէ
նախ զանուն բոլորին և ապա զմասանցն, քան թէ նախ
զանուանս մասանցն և ապա զբոլորին։ Զոր օրինակ, զզօ-
րութիւնս հոգւոյ բարւոք իմանայ թէ քանի իցեն, իրեւ
լսիցէ թէ վեց են, զգալ, մոտածել, ճանաչել, յիշել կա-
մել և գործել, քան յորժամ երկար վերլուծութեամբ ցու-

ցանիցեմք, թէ յազգելիրիք 'ի զգայունս, կարողութիւն է հոգւցն իրազեկ լինելոյ, և այս է զօրութիւն զգալոյ. և թէ յորժամբազում զգացմունք միանդամայն իցեն՝ ինմա, կարող է յառել զուշն յայս քան յայն, և այսր անդր տարութերել, և այս է զօրութիւն մտածելոյ, և որ 'ի կարգին:

Ցաղակս խնդրոց, առածից և այլոց այսպիսեաց ասացեալ եմք յառաջագոյն, թէ աւելորդ չու և կարաւան աղիսամաղսի թուին մեզ յառաջոյ առաքեալ, մինչդեռ չէ յայտ ուր և յինչ պիտանացու լինիցին: Իսկ եթէ պիտանի կարծիցին 'ի փոյթ ապացոյց ճշմարտութեան որ նոցա կարօտիցի, ոչինչ է ըստ իս պարաւելի նշանակել և եթ զնուին, զի ինքնին յայտնի են և անկարօտ այլում, և ըստ պատշաճ պիտոյից 'ի գործ արկանել:

Վայրապար և իմաստակաց գործ համարիմ և զբաժանելն ըստ ոմանց զբնազանցական, զբարոյական, զբաղաքական և զբնագիտական խնդիրս 'ի հայեցողութիւնս, յառաջարկութիւնս, 'ի հետեւանս և 'ի պարապմունս: Բայց բարոք թուի բաժանել 'ի գիրս, 'ի մասունս, 'ի հատածս, 'ի պըրակս, 'ի գլուխս, 'ի յօդուածս, 'ի համարս, և զի՞ մի թուեմ. և մակագրել 'ի գլուխ գրոցն, մասին և հատածոյ և այլոցն՝ զարարունակեալն 'ի նոսա. և սակաւ բանս ժողովել 'ի մի համար, 'ի յօդուած և 'ի պըրակ, որպէս զի որ ընթեռնուցուն կամ ուսանիցի՝ առժամայն հանդէալ տեսանիցէ զճանապարհն զոր գնալոց իցէ, և կարասցէ ստէալ ստէալ դուլ առնուլ և ոգի կլանել ըստ մտացն դիւրի, առանց կասկածելոյ՝ թէ ընդհատել ուսմանն կամ ընթերցանութեան գուցէ զեան գործեսցէ նմա յառաջիկայսն: Երկայն գլուխ անյօյս 'ի հանգտենէ բայց 'ի կատարածէն, յոյժ երկեղուկս արկանէ որում ընթեռնուն առաջի կայցէ. ևս առաւել հատած և մասն և գիրք ողջոյն առանց գլխակարգութեան:

Իսկ ոճ ապացուցի առաջի կացեալ ճշմարտութեանց, բայց չկամիմ զդալրոցականն զայն և զվաղեմի շարաբանական. ոչ առարիցեա, առիորիցեա, նաև առանցիցեա, ալուստաւիւնէ, և ոչ նույն այնովեա նե, սրանաւմ և զանապանէմ, զարոյ ցաւցան դարձեալ զանապանէմ ունիւ գրանույնն, այլ և ընդդէմ. բայց և ոչ կամիմ թէ ընդ մահուչափ մեղս համարեսցի շարաբանութիւն մի առնել ըստ տեղւոյն պատշաճելոյ, և զանազանութիւն մուծանել յընդդիմադրու-

թիւնն՝ առ. 'ի հատանել զկնձիոն և նշաւակել առ. տեղեաւն զպատրանս խմաստակ և խաբերայ առարկուածոյն։ Աակայն է ուրեք ուր շարաբանութիւն առցի 'ի կիր, է ուրեք ուր եզառած, է զի փաստորդ կամ երկսայրաբանութիւն, և է զի համարարդութիւն կամ մակածութիւն կամ յարացոյց զիարդ ինչ և գեպ թուիցի 'ի բրաբանչիւր ումեք որպէս և միտք իւր վարեսցեն յընտիր առնեմք։ Եւս յաճախագոյն այն օրինակ լինիցի հաւաստաբանելոյ, զոր քան զամենայն պարզ և բնական ասացաք լինել. ուղղորդ և յստակ առաջի մատուցեալ զոր ցուցանելն կամք իցեն, և 'ի վերայ բերել զպատճառն առանց ինչ Հակաճառիցն արուեստակութեան։

Զայս ոճ դոնէ 'ի գիրս սկզբնաշաւիղ տարերց գիտութեանց վայելչագոյն և 'ի կարգի համարիմ։ և թէպէտ 'ի շարադրականն յաւետ հուպ է սա քան 'ի վերլուծականն, ոչ կամիմ մերժել և զսա. նա աւանիկ ասացի իսկ խառն յերկոցունց զսա ստեղծանել։ կարդ դասաւորութեան իրաց զվերլուծականն սիրելի է ինձ ունել, մի ըստ միոջէ 'ի միմեանց հանել զամենայն, և 'ի պարզեց վերանալ հետ զհետէ 'ի յօդուածոյն, 'ի դիւրնոց առ դժուարինսն, 'ի մասնաւորաց յընդհանուրս։ Եւ եթէ վերլուծութիւն լուսաւոր առնիցէ զսահմանն, հաճոյ է մեզ նախ զայն տալ. չեմք ինչ դժկամակ երբեմն և փոխանակ սահմանի վերլուծութեամբ շատանալ մանաւանդ 'ի հեշտինս և 'ի համառօտս, վասն փոփոխութեան և 'ի հմուութիւն զայն ածելոյ։ Միայն կամիմ թէ երկոքին ոճքն այնպէս խառնեսցին ընդ միմեանս, զի առանց ընդ հարկաւ մնանելոյ միոյն կամ միւսոյն, մերժ այս և մերժ այն 'ի գործ վարեսցի, որպէս ինչ գեպ և պատեհ թուեսցի վասն հեշտի և անվըեալ խելամուութեան համբակաց։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

1. * Տրամաբանութիւնն 'ի նախնեաց և յարդեաց կոչի և Արուեստ բանական . վասն զի ամենայն գիտութիւն մարդոյ յերիս բաժանի . բանական , բարոյական , ընական : Յառաջնութիւն՝ գլուխ է ամենայնի տրամաբանութիւնն . զհետ գան քերականութիւն , ճարտասանութիւն , բանաստեղծութիւն , և այլք : Յերկրորդութիւն բովանդակին ամենայն գիտելիք բարոյական մարդոյն , որ 'ի վարս և 'ի բարս , 'ի կրօնս և յօրենս հային , յարտաքին և 'ի ներքին մարդոյն երջանկութիւն : Յերրորդութիւն են ամենայն բնախօսականքն , եթէ զգալիք և եթէ իմանալիք , որ 'ի բնութեան էլլոց հոգեղէն ինչ կամ մարմնաւոր , և չափաբերութիւնք առ հասարակ :

Արդ արուեստն ուղիղ խորհելց 'ի միտս , որով կազմի և հաստատութիւն առնու ներքին բանն և խորհուրդ մտաց , կոչի Արուեստ բանական կամ բանականութեան , Տրամաբանութիւն , Ճոշուական , իսկ արուեստն ուղիղ ճառելց արտաբերական բանիւ զխորհուրդ մտաց , որով և արտաքոյ կայութիւն առնու բանն ըստ ուղիղ խորհեցելցն , կոչի Տրամախօսութիւն , և վիճակամբն՝ Հակաճառութիւն , Ճաշեռութիւն . Դւածուական . իսկ սոյն միտս և տրամաբանութիւնն վարի առ նախնիս մեր . զի բան զներքին և զարտաքին յայտ առնէ , իսկ խօսք զարտաքինն միայն :

2. Ի բազմաց բազմօրինակ սահմանեալ է բանն կամ բանականութիւնն . զոր մեքս ընկալաք՝ ընդարձակագոյն է քան զամենայն , և զամենեան բովանդակէ :

3. Յովհաննէս Յակովի Որուսօ գենեւացի սովին կարողութեամբ կատարելութեան առաւել զանազանեալ առէր զմարդ քան զանբանս :

4. Վասն որոյ արուեստն բանական արժանապէս կոչեցաւ բանալի գիտութեանց . վասն զի բանայ զնոցա մուտսն , և առանց այնր դժուարին է մուտանել 'ի նուսա :

5. Բնատուր բանականութիւնն այն իսկ է զոր սովոր եմք ասել խելք, հասարակաց միտք:

* Այս բանականութիւն՝ բնական է 'ի մեզ, զի բնաւոր զօրութեամբ լինի. ընդարդյոս և տնկակից և բնաբոյս, զի տնկեալ է 'ի բնութեանս և բոյսք բարուցս են. ընդակից, զի յար կից կայ բնութեանս. այլ և մննդակից, զի 'ի ծնէ մինչեւ յաւագոյթ ընդ մեզ մնանի, իբրև զոչինչ մի սկսեալ ընդ մեզ աճէ և զարդանայ և 'ի կատարումն գայ: Բայց ոչ է ծննդակից և ընդածին կամ բնածին. զի ոչ և թէ 'ի ծնանելն 'ի բնէ ընդ մեզ բերեմք զոր 'ի մեզս գտանեմք այժմիկ, այլ զգայութեամբք և փորձիւ և ապա մտածութեամք ստանամք. նախուստ ոչինչ այլ 'ի մեզ բերելով, բայց զզօրութիւնն կամ թէ ասել զկարողութիւնն միայն յարարչին շնորհէ: Այս է զանազանութիւն ձայնիցդ, գոնէ ըստ մեզ:

6. Զիք ինչ, ասէ գալլիացին այն գրիչ բանական արուեստին կամ Արուեստին խորհելով, չիք ինչ պատուական քան զմիտս և քան զուղղադատութիւն մոտաց ընդ ճշմարիտն և ընդ սուտ. բայց զարմանք այն են, զի այսափակ դժուար է:

* Ոչինչ բնաւ է զարմանալ ընդ այդ. զի ամենայն պատուականմք յէիցս դոյզնապիտք են. և խելք և միտք պատուականագոյն են քան զուկի և քան զականս:

7. * Յայս միտս ճշմարիտ է և լոկ գաղափար ինչ 'ի միտսն ինքնին առանց համեմատելոյ ընդ իրմն. վասն զի է ինչ, և որ ինչ էն. իսկ թէ համեմատ իցէ իրացն 'թէ ոչ, այն բանական ճշմարտութեանն է ընտրութիւն: Սոյնպէս և արծաթ կամ ոսկի ինքնին 'ի բնութեան իւրեանց ճշմարիտ են, զի բնութիւնք ինչ են, որ զինչ և իցեն. իսկ թէ 'ի մէնջ ուղիղ ճանաչեցին և կոչիցին, եթէ թիւր, այն բանական ճշմարտութիւն է կամ ստութիւն: Զայս ախորժեցին իմաստամէքքն բնազանցական ճշմարտութիւն կոչել, բստ որում յինքեան և յէութեանն նկատէ զիրսն, առանց ինչ ընդ մեզ համեմատութեան: Զոր թերես օրէն իցէ և այլազգաբար վայելուչ ևս կոչել, կամ թէ բնաւ իսկ ընդ աւելարդ նրբութիւնս դալրոցաց գրել. զի զի կայ մեր և այնր իրի, որոյ չիք ինչ ընդ մեզ համեմատութիւն կամ կցորդութիւն. և որոյ չիք ինչ ընդ մեզ այդափիսի, ընդ անդյուն է դնելի, գէթ ըստ մեզ. զի որ է ինչ, նորա և բանիք ինչ արգեօք ընդ մեզ լինիցին:

8. * Երս Ներսէս Լամբրոնացի յերկոտասան դարու զնոյն ճշմարտութիւն յայտնի գաւաներ. զի ասէ, « Որակն և գոյնքն անմարմին է, նոյն և ձեքն. այնու զի 'ի մտածութիւնս աննիւթաբար տեսանին »: Եր ընդ եղբ :

9. Ոչ ամենայն արամաբանմք և բնազանցախօսք առնեն

զայս հաւաստի ընտրութիւն ընդ զգացումն և ընդ իմացուած կամ ըմբռնումն . այլ առհասարակ ըմբռնումն անուանեն զամենայն գործ հոգեոյ, որով իմանայ զհանգամանս ինչ զիւր : Զպիտանութիւն մերոյ խտրութեանս տեսցուք յառաջիկայտ :

10. Մտածութեան զանազան սահմանք են . զոր լիցի քննել հոգեբանութեան, որպէս և զամենայն հանգամանս մտադրութեան :

11. * Թիւպէտ և Սուաւէ ոչ բացայայտ ասէ, այլ լուելեայն երեւի ՚ի բանս նորա, զոր ոմանք յարդի իմաստափաց հաւաստի դնեն, [թէ չիք տիրապէս ժխտողական դատումն . զի որ այնպէսն կարծին, լուծանին ամենեքեան ՚ի հաստատական . որպէս ահա բոլորակն չէ քառակուսի, ետապէլ բոլորակն է չքառակուսի, բոլորակն է այլ ինչ արտաքոյ քառակուսոյ : Զայս հմտութիւն յոյժ պիտանի կարծեն ՚ի բովանդակ իմաստափառութեան :

Գիտելի լիցի ևս, զի զոր մեք ժխտական և հաստատական եղաք, այլք ոմանք բացասական և ստորասական ասացին ուսմնական լեզուաւ . և զոր մեք հաստատել, հաւանել, յանձն առնուլ ասեմք, և կամ ժխտել, ուրանալ, նորա ասեն ստորասել և բացասել :

12. * Դաւիթ անյաղթ ՚ի գիրս Սահմանաց, (էջ 159), զայս ներգործութիւն կոչէ Երեւակայութիւն . իսկ զանուանեալն ըստ մեզ երեւակայութիւն՝ Սոսկ Մտածութիւն կոչէ : Ոչ անկիրթ թուի մեզ այս ընտրութիւն Դաւիթ :

13. Գաղղափար իմանայ ՚լոք զայն ամենայն, յորս խորհին միտք . մինչեւ ընդ նովին անուամբ առնուլ՝ ոչ միայն զգաղափարս և զծանօթութիւնս անցելոց իրաց, այլ և զհանգամանս և զկերպարանս ՚ի ներկայ ազդեցութեանց ՚ի մեզ երեւեալս : ՚ի նոյն միտս առեւալ են զձայնդ և յուղվը ՚ի տրամաբանից և ՚ի ընազանցախօսաց : Սակայն եթէ է ինչ արուեստ կամ գիտութիւնն, յորում հարկ իցէ ճշդութիւն բառից և ճշգրտութիւնն, այս իսկ է: Յիւրում տեղւողն տեսցին բազմօրինակ շփոմութիւնք ծագեալք ՚ի խառնավարութենէ գաղղափար ձայնին յախուռն և անխրտիր առելց ՚ի վերայ ամենայնի :

* Զոր փոքր մի զկնի մեք յիշելութիւն ասեմք, Սուաւէ ընդ այլ երկու ընազանցախօսս ընտրեն կոչել վերանառաւուն . մեզ ոչ կիրթ թուեցաւ ձայնդ, իսկ իմաստն նոյն ընդ յիշելութեան, որպէս լիազոյն իմանալ է ՚ի ընազանցութենէ :

14. * Զոր ՚ի մեկնութեան Մատթէի Ուկելերանին ընթեռնումք հայերէն վարդապայքաղ, վրիպակ թուի գրչի . թէպէտ և հասեալ է յունկն մեր թէ առ Հնդկաբնակ

Հայս լաի ճայնն այն : Կարծեացս պատճառս տայ Եզնիկ ասելովն . « Իբրև զծովացուն զոր 'ի կովէ ելեալ ասեն , և զպայն իմն 'ի մարդկանէ . . . ոչ երեք 'ի մարդկանէ ելեալ պայն՝ եթէ առ երես (երէս) արարած իցէ » : Ուր որպէս յայտնի տեսանի , մարդախառն իմն իմանայ զպայն :

15. « Ընդ որս և մերս Դաւիթ անյաղլժ յայտնապէս խոստովանի յասելն 'ի գիրս Աահմանաց . « Ի զգայութեանց ծնանի հմտութիւն » : Եւ երանելի Ոսկիբերանն իսկ այդմ վկայէ , ոչ միայն զբոլորից զգայութեանցս , այլ և զմիոյ միայնոյ որ քան զամնեսեան պատուականագոյնն է , զաշացն ասեմ . քանզի ասէ ուրեք այսպէս , ցուցեալ թէ և Առաքեալ 'ի նոյն միտս էր . « Զոր օրինակ արեգակն 'ի վերայ ամենայն տիեզերաց լուսատու է , այսպէս և աչք 'ի վերայ բոլոր մարմնոյն . եթէ շիջուցանես զարեգակնն , զամենայն կորուսեր և շփոթեալ խառնակեցեր . և եթէ զաշ շիջուցանես , ամենայնքն անպիտանք լինիցին , և ոտք , և ձեռք , և բոլոր անձնն . վասն զի 'ի կուրանալ սոցա՝ զչետ գայցէ անգիտութիւն ամենայնին : Առօք զԱստուած Ճանաչեցաք և Ճանաչեմք . զի անսերեւոյթք նորա խոկըսնէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին , ասէ երանելի Առաքեալն : Ապա ուրեմն ոչ եթէ միայն մարմնոյն է Ճրագ աչքն , այլ և հոգւոյն է յառաջ քան թէ մարմնոյն » : ՄԵՒ. ՅԱ. 598:

16. Զոր մեք ընդ Քոնտիյլեաքայ իմանալի կամ բարոյական էակս կոչեմք՝ Լոք հանգամանս կամ կերպս անուանէ , և զատուցանէ . 'ի պարզ և 'ի խառն . պարզ զայն ասելով որ պարզ և նյոնատեսակ գաղափարաց են գումար , որպէս երկոտասանեակ մի կամ քսանեակ . և խառն՝ որ յայլայլախառն պարզ գաղափարաց են յօդուածք , իբրև գեղեցկութիւն կամ տգեղութիւն , լաւութիւն կամ յոռութիւն : Բայց թէպէտ և տիրապէս ոչ այլ ինչ իցեն այդոքիկ , այլ հանգամանք կամ կերպարանք գոյացութեանց , սակայն քանզի բազում անգամ իբրև էակս արտաքոյ ամենայն ենթակայի հրաժարեցուցեալ բանիւ տեսանեմք զնոսա , իմանալի կամ բարոյակամն էակի կոչումն յայտնագոյնս զնոսա ցուցանէ . քան հանգամանքն ասել . մանաւանդ զի յետինդ այդ յայնժամ արկանի առաւել 'ի փար , յորժամ կերպարանքն յենթակայի հաշուին քան անջատաբար :

17. Սմն իրի ոչ յոյժ իրաւամքը արար Քոնտիյլեաք , զի խափանել կամեցաւ զբաժանումն գաղափարաց յաղօտ և 'ի պայծառ , պնդեալ 'ի բանիցն վերայ , թէ մինչ ասի ումեք աղօտ ունել գաղափարս , ասելի է բնաւ իսկ չունել ամենեին : Բայց այլ է բնաւին չունել ինչ զիրիք գաղափար , և այլ այնպիսի ունել , զոր չգիտիցէ ընտրել և 'ի միտ առնուլ :

18. Այսպիսիք կոչին և էակ բանի:

19. Կամ ըստ նոր լեզուի տարրալուծից, լուծանելի ՚ի թթուուտ բորակային և ծծմբաղային, և անլուծանելի ՚ի ռոսկ թթուուտ բորակային:

20. Տես ՚ի պատմութեան իմաստասիրութեան (յէջ 39):

21. Իսկ Որ նոյն են ընդ միում երրորդի՝ նոյն են ընդ միմեանս, ոչ է յատուկ ինքնադիմաբար ճշմարտութիւն, այլ խելամտութեան կարօտ. բայց յառածն դասեցաւ, վասն զի հեշտին իմն մտախոհութեան ևեթ կարօտի:

22. Զպակասական երկբայութիւնն առաւել տգիտութիւն արժան է անուանել, քան երկբայութիւն. զի թէ հարցցի ոք, աստեղացն թիւ զի՞դ է թէ անզուդ, ապաքէն չպիտել ասիցէ քան յերկուանալ:

23. Տես ՚ի պատմութեան իմաստասիրութեան (յէջ 24):

24. Որ է ասել, թէ այլ և այլ բանիք կամ դարձուածով ոճոյ զմի և զնոյն ասեմք հանապազ. յորմէ և յառաջ գայ, թէ ուրեմն անծանօթն նոյն է ընդ ծանուցելոյն: Ոչ զայդ ասէ Քոնտիյեաք, որպէս մեք կարծեմք, և ոչ իսկ կարէր ասել. այլ ոմանք, որպէս և Սուաւէ, այնպէս իմացան զբանս նորա, կամ ցայն վայր ընդարձակեցին զիմաստս նորա: Բայց թէ չսխալեմք, հարազատ միտք Քոնտիյեաքայ այն թուի ՚ի բուն բանս նորա, թէ անծանօթն ծածկապէս պարունակեալ կայ ՚ի ծանուցելումն: Արդ այսմ հաւանեալ են ամենայն քաջախոհչք, առ որս ընդունելի է առածն թէ չիք մեզ յանձանօթ ինչ անցանել բայց եթէ ընդ ծանուցեալն. հաւան է և ինքն Սուաւէ, որպէս տեսցի զինի. զոր օրինակ (յէջ 129, 250):

25. Ոմանց ուղիղ թուեցան օրէնքդ այդ ՚ի ցոյց ճշմարտութեան քան թէ ՚ի զիւտ. այլ ես առ երկուսեան զդամիայն գիտեմ անմոլար առաջնորդ:

26. Սոքա են Պատագոն կամ Բաղակոն անուանեալ բնակիչք մագելլանեան երկրի, որոց գնեն ոմանք երկայն նորին հասակի ՚ի մետաստ ոտնաշափ:

27. Ելեքտրականութիւն ասացեալն կէս յոյն կէս հայ բառիւ՝ ոչ ուղիղ տալ թուեցաւ երբեմն մեզ զծանօթս իւրին, մանաւանդ ըստ այժմու ընախօսութեան. զի ոչ ՚ի սաթն միայն տեսանի այդ երեսոյթ, և որ ՚ի սաթին երեսի ոչ է մեծն և նշանաւորն յերեսոյթս: Իսկ ՚ի մեր բառի ոչ-ինչ իմաստս բերէ ձայնդ. ընդ որոյ ոչ անպատշաճ թուեցաւ մեզ յայնժամ փոխանակել զհայկական յօրինուածն շփհրութիւն և շփհուր, որ գէթ ՚ի յայտնագոյն երեւութէ իրացն առեալ է, այն է շփումն, առանց որոյ ոչ ազդի այդ ծածուկ զօրութիւն բնութեան, և կերպարան հրոյ և բոցոյ՝ որ բազում ուրեք ընդ նմին երեսի, և ուամելին իսկ ՚ի յայտ գայ: Զի շփմամբ ցոլմունք իբրև կայծականց հրոյ և

ցնցուղք լուսոյ հատանին, ոչ միայն յելեկարական անօթոյն, այլ և 'ի կատուին շինելոյ, և յայլոց իրաց: Եւ լաւագոյն թուին մեզ այն բառք, որ զիրն ըստ ստոյգ զդայութեան և իմացուածոյ բազմութեանն յայտ առնեն, քան թէ ըստ սակաւուց ումանց գիտնոց: Արդ մեք շփհրութիւն իմանայաք զելեկտրութիւն, և շփհուր զելեկտրաշոգին: Տես և զտեղեկութիւնն 45, յոր յաւելցի ես, թէ այսպիսի կէս յոյն կէս հայ բառք, որպէս մեքենականութիւն, քիմիականութիւն, ելեկտրականութիւն, նման են գուեհիկ ձայնիցն է+մե+նիստ-նիտ-ն, էօլուլու-նիտ-ն, լուլիւնստ-նիտ-ն, և այլն: Բայց ապա տեսեալ զբազմացն հաւանութիւն ընդ էլեկտրական ձայնն՝ միաբանեցաք, խոհականին անսացեալ սրատու, թէ 'ի բան լեզուի լաւ իցէ ընդբազմաց սխալել, քան ինքնին միայնակ գիտել ինչ:

28. Առաջին վարկածն է Փրանկլինի, երկրորդն Նոլետի:
• Առ ժամանակօք Սուաւէի դեռ 'ի վիճի կային բնախօսք, և բազումք 'ի Փրանկլինի կարծիս հաւան գտան. բայց այժմ նոլետեան վարկածն իբրև քաջ միաբան երեւութիցն, ընդունելի եղեւ առ ամենեւմք, զի այժմ բազումք հաւանեալ են ընալութեան օրինօք կատարել շարժման դնդերաց 'ի ձեռն արեւան և անօսր սղոխաց մարմնոյ, կամ 'ի ձեռն երկտրաշոգւոյ ընդ նեւարդմն խաղացելոյ. այլ այս ոչինչ ստնանէ վարկածին:

29. Այս վարկած կոչի և անուամբ ձգողութեան և ընդհանուր ծանրողութեան: Զգողութիւն նշանակէ զօրութիւն՝ որով մարմնք յինքեանս ճգեն զմիմեանս. ծանրողութիւն է զօրութիւն որով բերին և գիմեն առ իրեարս: Որպէս և վարկիցն ոք, եթէ ճգել մարմնոց զմիմեանս իւիք օրինօք, և եթէ բերիլ առ իրեարս նովին օրինօք, արդիւնքն նոյն են: Բայց ինձ ծանրողութիւնն ըստ բազում պատճառաց նախամեծար թուի. քանզի նախ ամենեցուն ծանօթ ինչ առաջի առնէ, զի ամենայն ոք գիտէ, թէ ծանր մարմինք 'ի բնէ յերկիր դիմեն, և այնու գիւրաւ ըմբռնէ զդիմել երկրորդական մոլորակաց առ գլխաւորմն, և զգըլիսաւրացն յարեգակն կոյս: Երկրորդ՝ ծանրողութիւնն զգործն ևեթ ցուցանէ, զմատչել ասեմ մարմնոց առ միմեանս, որ ճշմարիտ է և հաւասատի և ծանօթ, առանց մըտանելոյ յանծանօթ պատճառս. իսկ ճգողութիւնն վարկանել թուի, թէ գործն սկիզբն ունիցի 'ի ներքին իմն զօրութենէ մարմնոց զմիմեանս ճգելոյ: Իսկ թէ զիարդ յաջողեսցէ այն զօրութիւն՝ մանաւանդ ընդ երկայն ասպարէս, անիմանալի է: Ավակայն 'ի վերայ այսր ամենայնի զձգողութիւն առաւել 'ի կիր արկեալ տեսանեմ առ բնախօսս. և օրէնք ճգական զօրութեան, ըստ նոցա մեկնելոյ, և 'ի

պարզ և յուղիղ համեմատութեան կուտոցացն, և 'ի խոտորնակ և կրկնապատիկ համեմատութեան հեռաւորութեանցն։ Այս է, մարմին ինչ այնչափ առաւել զօրութեամբ ձգէ զմիւմն, որչափ առաւել է ձոյլ և կուտոց իւր, այսինքն քանակ, կոյտ և թանձրութիւն նիւթոյ. և որչափ փոքր է քառակուսի տարակացութեան իւրոյ, իմա արտադրեալն անջրպետութեան բազմապատկելց ինքեամբ։ Վասն որոյ եթէ կուտոց միոյ մարմնոյ իցէ իբրե 4, և միւսոյն իբրե 2, առաջինն կրկնապատիկ զօրութեամբ ձգէ զերկրորդն. և յերկուց հաւասար մարմնոց, մին հեռաւոր իբրե 5 և միւսն իբրե 2 յերրորդ իմն մարմնոյ, եթէ առաջինն կ զօրութեամբ ձգիցի յերրորդէ անտի, երկրորդն ձգի 9 զօրութեամբ։

Յ1. Զայս յօդուած վարկածից առաւել առ բնախօսնն պատշաճեցաք, զի կարի յաճախ են առ նոսա։ Բայց ոչ 'ի բնախօսութիւն և եթ են նոքա պիտանացու, այլ մուանեն և 'ի բնաղանցութիւն, 'ի բարոյականն և 'ի քաղաքականն և յայլ ամենայն գիտութիւնս. բազում գտանին և 'ի հանապազորդ գատմունս մեր և 'ի բանս։ Բարձրամիտ ամբարտաւանութիւն մարդոյ ցանկայ և փութայ զամենայնի գտանել և տալ զպատճառսն. և իբրե բունն ոչ 'ի յայտ գայցէ, քան 'ի տարտամութեան զմիտսն թողուլ՝ առաւել ախորժէ կցկցել ինչ ըստ քիմ։ Աստի ստեղծան ընդժամանակս ժամանակս այնքան մնոտի վարկածք և յօրինուածք յամենայն գիտութիւնս, և տակաւին այսու գամք զօր ամենայն 'ի հնարել յիրս իրս անհամար վարկածս սըտութեան։ Ի կարծել զպատճառս մոլորութեան նոցա այլ հնար չկը, բայց 'ի մոտի ունել զաւանդեալ օրէնսդ, և իրացն դէպ լինելոյ վայելչապէս մերձ դնել։

Յ2. Զաքարիայի Յանսէնի կամ Հանսէնի միդդէլբուրգեցւոյ։

Յ3. Օրինակ իմն, 'ի գիրս շարժաբանութեան կամ հնարագիտութեան գործեաց, զգործս լծակի, աքցանի, անուոց և այլոց, չափաբերքն այնպէս հաշուին, որպէս թէ այն անօթք ամենւեին կարծր իցեն, անընկճելի, անմաշ և առանց ծանրութեան։ Բայց 'ի գործւոյ իմեքէ զուր է ակնկալել ինդրեալ գործոյն, եթէ ոչ այն ամենայն 'ի հաշիւ արկանիցի։

Յ4. Օրդեոց բժշկաց առաւել անկ է հոգ տանել մեծապէս այսմ զգուշութեան. զի թուով են ախտք որոց մի իցէ սկիզբն և գործիչ, և ևս սակաւագոյնք՝ որ 'ի պէսպէս խառնուածոց և այլոց դիպաց, կամ 'ի զանազան բնական և բարոյական պատճառաց չլինիցին կերպարմնափոխ։

Յ5. Ստորին մատենագիրք առաւել հեշտորնկալ կարծին ոմանց, և լաւագոյն 'ի նոցանէ զսկիզբն առնել համարին։

այլ բազում ուրեք խարեռութիւն է այդ : Որոյ յստակ և ուղիղ գաղափարք չեն զառաջիկայ իրացն , որով և 'ի հարկէ անտեղեակ է և ոչ քաջահմուտ , այնպիսաւոյն և ոչ բանքն բացայստ և դիւրահաս լինիցին : Սակայն և ոչ օրէն է յայնց մատենագրաց առնել սկիզբն , որոց լայնագոյնս և խորագոյնս ճառեալ իցէ զիրսն : Բայց տարերց բազում գիտութեանց և արուեստից ոչ պակասեն գրեանք յականաւոր արանց յօրինեալք , զորոց 'ի դէպ է բուռն հարկանել ապախտ զայլսն արարեալ :

55. Ի ցրել զուշն որ և է յանկարծ փոփոխութիւնն միապէս պատճառք լինի . 'ի միջան և 'ի խոր լուսութեան շատ է փոքր մի ըստ և շնչիւն . խոկ 'ի ըստ սաստիկ և 'ի շուտկ՝ բաւական է յեղակարծ դադարումն : Բայց առաւել գործէ զայդ կրաւոր ասացեալ յիշողութիւնն . բազում անգամ՝ յառաւելն ջանալ հեռացուցանել զգաղափարս ինչ որովք ամբոխէ զիսորհուրդս մեր , նորա պնդագոյնս կան և առաջի արշաւեն մեր : Յայնմ պահու , ասէ փոնտլյլեաք , յօգնութիւն կոչել զամենայն զօրութիւնս մեր , ուշի ուշով յառել յիրն զօր ուսանիմք , 'ի ձայն բարձր երկրորդել զտեսեալսն , ստիպել զիշողականն յուշ ածել զայլնման իրս , զարթուցանել զառ 'ի նոցանէն գործեալ ազդմունս և զմեր 'ի վերայ նոցա դատմունս , 'ի բաց տանել զամենայն զդալիս , որոց է ինչ ընդ զբօսեցուցիչ խորհրդոցն , և այլն : Խոկ եթէ և այս ամենայն առ ոչինչ զօրեսցէ , լաւ է ընդմիջել զուսումնն և 'ի բաց թողուլ մինչեւ գագարեսցէ հալածանքն , քան յամառել կալ 'ի նմա վայրապար և 'ի մնաս :

56. Գեղեցիկ կրթութիւն է առ այս , և 'ի սրութիւն մտաց յոյժ օգտակար , 'ի յաւելուլ զնըրութիւն նորա և զճարտարութիւն , առնուլ զառաջարկութիւն ընտրեալ մատենին , խնդրել նախ մեզէն զլուծումն նորա կամ զապացոյց , և ապա տեսանել թէ նման գտանիցիմք մատենագրին , ո՞ւր և ո՞րպէս :

57. Ըստ զարգանալ հասակի դժուարին է մերկանալ յիւրոց մնահաճոյ ստվորութեանց , վասն որոյ կանխել պարտ է յայդ քննութիւն : Յալեսոյթ գնալով մարդկան , ասէ Մալպրանչ , ևս քան զես կարծրանան 'ի մոլորութիւնս իւրեանց 'առ ամբարհաւաճութեան կամ առ ստէպ սովորութեան զկանխակալ օրէնսն ապաւէն առնելոյ :

58. « Տեսի ետ զամենայն զբաղումն զոր ետ Աստուած որդեոց մարդկան զբաղնուլ 'ի նմա . . . նա և զամենայն յաւիտեանս ետ 'ի սիրտս նոցա . զի մի գտցէ մարդ զարարածն զոր արար Աստուած իսկզբանէ մինչեւ ցկատարած » . Ժակ. ֆ. 10. 41 :

59. Խմատութեամբ յայտնի առնէ Մալպրանչ զպատճառս դիւրահաւանութեան մարդկան և 'ի մնաւորականս :

Զդիսաւորմն նշանակեմք, որ են՝ բնաւորական տաղտկոտ պղերգութիւն մարդկան յաշխատութենէ ինքնին մտախոհ լինելը, բազմաց անհմտութիւն խոկալը՝ առ ՚ի չփոյէ իմաստից կամ՝ կրթութեան, դիւրանսաց հպատակութիւն կարծեաց այլոց՝ մանաւանդ յորժամ զկնի ախորժակացս իցեն. յոմանս անբան մեծարանք առ արեանառուս և բարեկամ, առ համակենս և հայրենակիցս. յայլ կոյր հնապատութիւն, զի հաւանեալ են բազմահմուտ քան զմեզգութիւնն. ՚ի կէսս զաշացու զարմանք ընդ ամենայն հեռաստանեայս և այլազգինորաձեռութեանց սէր՝ մինչեւ ՚ի կարծիս անդամ, և յայլ անմիտ զիջողութիւն ընդ որս տոհմիւ, գոյաւորութեամք, պատուով կամ անուամք նշանաւորք իցեն :

40. Ասաց իմաստասէր ոմն . Յօրինեմք մեզ օրէնս խորչելը զանազանս ըստ ցանկութեան շահիցն որ գօրանայ ՚ի մեզ :

41. Իպիտակութենէ աստի օրինակաց թերեւս սկիզբն կալան բազում մտացածին կարգածք : Ապակի աղօտացեալ, որ եթէ ջնջեսցի՝ ՚ի պայծառութիւն իւր դառնայ, կամ արեգակն՝ որ ծածկի և փարատեալ զիւրել զամպս լուսալիր ճառագայթէ, ազգումն ինչ թերեւս ետուն Պիթագորայ և Պլատոնի՝ կարգել թէ և ոգիքն նմանապէս մերկացեալ զնսեմազգեաց մառախուղ մարմնոցն, առնուն միւսանգամ զաղափարսն զօր ունէին յառաջ քան զիսունեն ընդ մարմնան: Փար՝ զի անվթար պահէ ՚ի տոկ ըզքանդակեալն ՚ի նմանշագիրս, թերեւս հաստատութիւն ետ կարծեացն կարդեսեանց և այլոց, որ ջատագով մտին անեղծ զաղափարաց և օրինաց ՚ի բնէ յոդիմն գրոշմելոց : Հայելի՝ զի կենդանի նկարէ զերեսս իրաց, խորչուրդ ընդ միտ արկ Մալպրամշի, թէ ՚ի նոյն տիալ նմանութեան և հոգին զամենայն յԱստուած տեսանիցէ : ՚ի նմին հայելոյ եկն և ՚Նէիբնիտիոս յիմանալ զմիութիւնս իւր, որ զտիեզերս տպացուցանեն : Զայնարձակութիւն բարելարմար լարից արուեստականաց ետ հանճարել Ծոռպինէթի զզգայական և զիմացական և զկամեցողական թելս, որ յուղիղն լարեալ անդրէն ընդդէմ կրկնիցեն միմեանց ըստ համեմատութեան երրորդի և հինգերորդի : Միաբանութիւն երկուց զուգամանակ ժամացուցից առանց նպաստ լինելը միմեանց՝ ՚ի հաւան ած զվալփիոս ուժգին ջատագով ամբառնալ լէիբնիտեան նախակարգեալ դաշնակութեան խորհրդոց հոգւոյ ընդ շարժմանց մարմնոյ, և այլն որ ՚ի կարգի :

42. * ՚ի նմանութենէ կամ օրինակօքն խորչել և դատել բազում անգամ ոչինչ աւելի է քան զիսրատն Սերենոսի Սամմոնիկոսի . որոյ լուեալ ՚ի հասարակաց խօսից ա-

ւանդութենէ, [թէ չորրորդ գիրք իլիականին Հոմերի պյն-պէս ջերմէ է՝ մինչև դիմակալել քառօրեայ տենդի, 'ի բժշ-կականէն իւրում պատուիրեաց՝ ի գեղ ջերման կապել 'ի գլուխ ախտացելոցն զշորրորդ գիրսն զայն:

45. Այդ բաժանումն մասանց բանի չէ ուղիղ. վասն զի զանուն և զվերադիր յերկուս դաս արժան էր առնել, և զդերանուն և զդերբայ կէս մի ընդ անուանս կարգել և կէս մի ընդ վերադիրս :

46. Կոյն բանք են գոգցես և զայլ ամենայն ձայնից, որ հասարակաց նոյնանշան թուին. և օգտակար վաստակ էր, թէ յիւրաքանչիւր լեզուս յօրինէր ոք բառագիրք՝ յընտ-րութիւն հարազատ և ձիշդ նշանակութեան ձայնից, ըստ որում հոգացաւ առնել ֆէռառ. 'ի գալլիականն, և զինի նորա Ռուպո և այլք, ' և առ խտալացիս Ռանպի և թօ-մազէօ :

* Խնդիր է առ իմաստասէրսն և քերդողս՝ ոչ անօգուտ, թէ իցեն արդեօք ծշմարտիւ ամենենին նոյնանշան բառք՝ ի լեզուս: Զարդեամըք լինելն այսր կամ այնր բառի 'ի լե-զուի ուրեք, դժուարին է ցուցանել. այլ թէ մարդի լի-նել, ընդ այն մեք ոչինչ յերկուանամք. թէպէտ և գի-տեմք, զի ոմանք բնաւ ժխտեցին զիրացն հնարաւորու-թիւն: Այլ յորժամ ուշիւ ոք և աւագ աչօք տեսանիցէ, զի 'ի սկզբանէ ազգ մարդկան առաւել աճեաց 'ի սերունդ որդւոց բազմութեան քան 'ի գիտութիւն իմաստից, ուս-տի և մինչ չե զարգացեալ՝ հարկեցաւ սփուել և հեռանալ 'ի բնոյն . և իւրաքանչիւր պայազատութիւնք նահապե-տութեանց ցեղից ազգաց առանձինն բարգաւաճեցան յի-մաստս և 'ի բառս ինքնագիւտս և 'ի մօտաւոր ժողովրդոց ընկալեալ. — և զի ըստ կէնցաղակից կցորդութեանն հար-կեցան մերժ զայն և մերժ զայն վարել, և վասն ե-րեւլի միութեան և ընտանութեան ազդին և բարբառոյն՝ յապա եկեալքն մի համարեցան զլեզուն. և ապա մատե-նագիրք առ ամենեցուն հաճոյ լինելոյ և հեշտընկալ խառն զնոսին 'ի գործ արկին . — և զի ոչ միշտ ծշդախօս իմաս-տասէրք եղեն սոքա, իսկ առաջինք յարուեստս բանի՝ ա-մեննին ոչ, այլ քերդողքն և բանաստեղծք, արք՝ փոփո-խութեան, ուժգնութեան, վայելչութեան և քաղցրու-թեան սիրողք. — և զի յետ մատենագրացն բովանդակե-ցաւ 'ի մի և սահմանեցաւ լեզու ազգին, և այնուհետեւ քե-րականք և բառգիրք յօրինեցան. — որ զայս ամենայն զմբ-տաւ ածիցէ, ոչինչ երկմուեացէ, [թէ նոյնանիշ ձայնից մար-թէր լինել 'ի լեզուս լեզուս: Եւ այնպիսի է հնարաւո-րութիւնդ, զի և յարդեանց իրացն ոչ յոյժ է հեռի:

45. Եթէ արդարե նոր իրքն և գաղափարքն իցեն, և նո-րոց բառից պէտք, փոյթ լիցի այնուհետեւ ըստ կարի հա-

նել յարմատոց լեզուին, և յերիւրել ըստ բնութեան և յատկութեան նորա, կամ 'ի գաւառական խօսից աշխարհին: իսկ և 'ի սոցա պակասել, եթէ յօտար բարբառոց առնուլ ինչ ոք ստիպեսցի, լաւ համարիմք Հայոցն, զի ըզմերսն ասասցուք, արտաքոյ Հայերէն խօսից 'ի Պարսից առնուլ կամ 'ի հելլենականէն. զի պարսկայինն դրացի է մերումն և առու արեան, և հելլէնն առ այնու զի վասն բառիցն բարդութեան դիւրաթարդմանելի է 'ի մերս, նաև յարուեստս և 'ի գիտութիւնս արդէն իսկ յաճախեալ է: Ոչ կամիմք արգելուլ 'ի սպառ, եթէ հարկն տագնապեսցէ, և յարդի լեզուաց առնուլ բայց և զգոյշ լինել՝ մի առ հեղգութենէ ինչ, անհմտաբար և ստամբակերէն նորասիրութեամբ, առ նորաձեռութեան և ստրկաբար նմանողութեամբ կամ հետևողութեամբ իթել և խծկել ինչ և բռնազբօսել 'ի բարբառս մեր առանց հարկի, զի մի ազգասէր լեզուասիրացն և 'ի հարկին կապեսցին ձեռք առ զգուշութեան:

Այդ ծանօթութիւն զուգաձայն այլոց ողջամտաց, Սուաւէին է, բաց 'ի բառիցն որովք զառ խոտալացիս ասացեալն առ մեղ պատշաճեցաք:

46. * Զարտարերական բանն ոմանք առ մեզ յոճ իմաստամիրական սովորեցին նախադասութիւն ասել. սակայն յունականն որօտաց և լատինն քրօպոսիտութիւն նշանակեն ճշդիւ, այլ յառաջ ձգումն և առաջադրութիւն: Ապա թուփ թէ լաւ ևս էր ասել գոնէ առաջարկութիւն. զոր և 'ի նոյն միտս յաճախագոյն գտանեմք առ նախնիս մեր քան զնախադասութիւն. թէպէտ ճշդիւ և առաջարկութիւն է որթթաղբար երկրաչափական: Մեզ անպատեհ իմն թուեցաւ, զի 'ի տրամաբանութեան և 'ի բանական արուեստի՝ ոչ ինչ ուրեք գտանիցի համբուն և ոչ դլուխ մի 'ի վերայ բանի, որոյ ուղղութեանն դիտառորութիւն է կատարումն արուեստիս: Մանաւանդ իբրև տեսաք ևս զի բաց յանուանց արուեստին՝ և շարաբանութիւն կամ հաւաքաբանութիւն 'ի նմին բառէ են կազմալ. զի և չեն ինչ այլ քան զշար երից բանից: Վասն հաստատական և ժխտական կամ ուրացական կոչելոյ բանին տես զտեղեկութիւնն ։

47. * Ստորոգել է ստորասել կամ ըստ որոյ ասել. և իմանի ընծայել, վերադրել ումեք, յոր միտս է և մակագրելն և առասելն և վերադրելն և վերաբերելն և ստորագրելն: Մեք վասն այն չընտրեցաք զայդ ձայն, վասն զի 'ի բովանդակ կարգի բանից Սոսաւէի իբրև վերադիր բացատրեալ է իրն, որպէս և է իսկ, զոր պարզ ևս մակդիրն յայտ առնէ սովորաբար. և զի հոլովքն առարկան է դերբայի:

իսկ առասութիւն, վասն զի է ասացուած 'ի դեմ ուրուք, և զի վերադիրը 'ի հասարակ և ընդհանուր անուանց են, որը են առասականք ըստ նախնեաց. մինչ զի եթէ մակդիրն մասնաւոր ինչ թուիցի և յատուկ, դարձեալ 'ի հասարակ և յընդհանուր միտն առեալ է. զի միշտ ընդհանրագոյն պարտի լինել քան զենթակայն, որպէս յառաջն ասաց և փոքր մի զինի ևս ազդ առնէ ինքն Սուաւէ 'ի բանն Բարերարութիւնն է առաքինութիւն. զոր և յայլս է տեսանել: Եւ նմին իրի ուղիղ ասի Մարդն է կենդանի, այլ ոչ թէ կենդանին է մարդ. զի որ մարդ է, հարկ է թէ և կենդանի է. իսկ որ կենդանի ինչ է, չէ հարկ թէ մարդ իցէ:

Փոքր մի զինի զծայրս կամ զեզերս բանին լաւագոյն դատեցաք ըստ մեզ մասունս և գլուխս կոչել. զի ոչ ինչ յըստակ նշանակէ 'ի մեզ Եւլրէ + նաև իւստագութեան, նաև իւստագութեան յերկուոց ժայրից կամ Եւլրաց կողմի, և այլն. իսկ ժամանակ + կամ Դլուակ + բանի, բանն յերկուոց ժամանակ կողմի կամ յերկուու նշանակածի, ամենայն ումեք դիւրաւ և պարզ իմանի: Կա զի և ըստ մերոյ լեզուի՝ սովորաբար ոչ յերկոսին ծայրան կան մակդիրն և ենթակայն, այլ յառաջ քան զբայն, թող զայլ ևս պէսսէս դասաւորութիւնս. զի ասեմք, Առաքինութիւնն սիրելի է, և առաքինութիւնն սիրելի, և սիրելի առաքինութիւնն սիրելի, սիրելի առաքինութիւնն է: Իսկ գլուխ և մամն կոչելն և այլ իմն յստակութիւն բերէ. զի 'ի բարդ բանս բազում բառքն և յաւելուածքն յերկուս գլուխս բովանդակեալ ժողովին իբրև 'ի գլխաւոր ինչ. և անաշխատ իմանայ զայդ ուսանողն, որպէս և զայն թէ զինչ բազմամասնութիւնն իցէ բանի: Առ Դաւթի մերում իմաստասիրի գտանեմք սահման կոչեալ զեզերսն և զբառս, թերեւս 'ի դէպ ևս. այլ քանի ինչ իրս սահման կոչեսցուք մեք 'ի միում գիտութեան:

48. * Ի բնագրին չիք այդ օրինակ կրաւորական բային. վասն զի առ իտալացիս ոչ գոյ յատուկ բարդ բայ կրաւորական, այլ 'ի բնէ էական բայիւ և գերբայիւ վճարի: Նոյնպէս մեկնութիւնն Պարսկայադթ' յաւելուած է 'ի մէնջ, 'ի պարզել զընագիրն, որ կամի իմն զայն ասել մեկնութեամբն՝ բայց ոչ կարէ, առ 'ի չգոյէ քերականական բարդութեան յիտալական լեզուի:

49. Գիտելի է ևս, զի եթէ անունն ինքնին կամ յաւելուածով իւիք որոշեալ իցէ ըստ բաւականին, այլ յաւելուածք 'ի վերայ բարդեալք յառաւել որոշումն, չհամարին հարկաւորք, այլ պատահականք. ուստի և մարթինոցա սուտ լինել առանց ստելոյ գլխաւոր բանին: Յասելն

Աւեծն Ալեքսանդր որդի Արամազդայ կոտորեաց զՊարսիկս, թէպէս և սուտ պարծանք էին որդին լինել Արամազդայ, բայց քանզի չէ Հարկաւոր յաւելուածդ, զի մեծն Ալեքսանդր որոշէ բաւական զդէմն, ոչ ստէ այդ զգիսաւոր բանն: Իսկ եթէ միայն ասիցի Ալեքսանդր որդի Արամազդայ, սուտ լինի. զի ոչ զոք գիտեմք ծնունդ Արամազդայ Ալեքսանդր յաղթող եղեալ Պարսից. և 'ի ճշմարտել ըզնոյն պարտ է յաւելուլ, Ալեքսանդր յանուան որդի Արամազդայ: Են և յաւելուածք որ ինքնին բաւական թուին յանվորէպ որոշումն իրացն, բայց առ զանազանութեան կարծեաց մարդկան չեն բաւական: Օրինակ իմն, յասելն ճշմարիտ կրօնք, ոչ ինչ պակաս թուի 'ի յաւելուածիդ. զի կրօնք ճշմարիտ չմարդի լինել աւելի քան զմի: Այլ քանզի ուղղադաւանք և այլաղանդք, հագարացին և հրեայն առ հասարակ զիւրեանց կրօնան միայն ճշմարիտ համարին, առանց այլոյ իրիք յաւելուածոյ բնաւ անյայտ մնայ բառն. վասն որոյ այսպիսի բառիւք բան ճշմարիտ լինի առ ոմանս, և առ այլս սուտ: Յասել ուրուք ճշմարիտ կրօնք արգելուն զգինի, բան սուտ է բատ մեզ, և ուղիղ ըստ հագարազնեայց, որ ճշմարիտ կրօնս զիւրեանցն իմանան՝ որ կարձէ 'ի գինւոյ: Իսկ առ ամենեսեան ճշմարտել զայսպիսի բանս, այլով յաւելուածով բառնաւ պարտ է զտարտամութիւն բառին. որպէս ահա աստ փոխանակ ճշմարիտ կրօնքն ասելցյ, յայտնի ասել՝ հագարացւոց կրօնքն:

50. Յոլով ուրեք և յայսպիսի բանս երկրայել է, թէ որ գլխաւորն իցէ և որ յաւելուածոյ. և անհնարին է երկմտութեանն լուծումն, եթէ ըստ տեղուոյն և 'ի բովանդակ կարգէ խօսիցն ոչ 'ի յայտ եկեսցեն միտք խօսողին: Եթէ 'ի Ճեմականաց ոք ասիցէ՝ Հասարակաց կարծիք են, թէ գոյնք, համք և, հոտք 'ի մարմննան են, գլխաւոր բան ըստ նորա է հաւաստեաւ 'ի մարմննան լինել հանգամանացդ, ըստ կարգի խօսիցն վկայելց 'որոց կնիք 'ի վերայ ածէ, թէ գոն 'ի նոտա հաւաստեաւ: Իսկ թէ յարդի իմաստասիրաց ոք զնոյն բան ասիցէ, ըստ սորա գլխաւոր այն լինի, թէ հասարակաց կարծիք են, այլ ինքն զնովիմք ածէ, թէ ամենեին սուտ են կարծիքն:

51. * Իմա յամիս 1857, զի առ Սուաեիւ չգոյր այդ ամբոխութիւն աւագ մոլորակաց յերկինս, մեզ հարկ եղեւ յաւելուլ, որ ոգիտէ և աճեսցեն ժամանակաւ:

52. * Զայս իմա ըստ կազմութեան շարագրածոյն. ապա թէ ոչ, ըստ ներքին իմաստից զհակառակին ասեն ոմանք յարգեաց և 'ի գլխաւորաց իմաստասիրացն. որպէս ակնարկեցաք 'ի ծան. 44:

53. Ընդ սոսա յաւելուն Դարքոցականք և զստորակայ կամ զստորադաս անուանեալն, որ երկոքին իսկ ճշմա-

բիտ են, բայց ընդդիմակս ասել զնոսա օրէն ոչ է, թէ պէտ և մին ընդհանուր իցէ և միւսն մասնաւոր. քանզի երկոքին ևս ժխտական են կամ հաստատական, և միւտ մին միւսոյն հարկաւ հետեւանայ. որպէս, Զամենայն գաղափարս մեզէն ստանամք. զոմանս 'ի գաղափարաց մեզէն ստանամք. զգաղափարն Աստուծոյ մեզէն ստանամք. ուր ինքնին յայտ է, զի թէ զամենայն, ապա և զոմանս, ապա և զԱստուծոյն: Կամ այսպէս, Զիք ինչ գաղափար բնածին, մի իմն գաղափար չէ բնածին, գաղափարն Աստուծոյ ոչ է բնածին. ուր նոյնպէս ակներեւ կայ, զի թէ չիք ինչ բնաւ, ապա և ոչ մի իմն, և ոչ իսկ Աստուծոյն:

54. Բազումմք 'ի տրամաբանից 'ի ճառս աստ ամենայն բանից սովոր են կարգել զառանձին օրէնս սահմանի և բաժանման, իբրև զի երկոքին բանիւ յայտնին: Ա.Յ.Լ. ինձ ոչ թուի այդ իրաւունս աստէն աւանդել զայդոսիկ, զի մի յանշափութիւն կրթեսցի ճառս. թողուք ապա ընդարձակ ճառել զայն 'ի վեց պրակին, ցուցանել և զերկաբանչեր նոյցա զպէտո:

55. Փաստ և հաւաստիք բազում 'անդամ 'ի տեղի ապացուցի ևս առեալ են. և մեք ինքնին առնումք երբեմ 'ի կարգի բանիս, ուր չիք ինչ կասկած երկրայութեան:

Զապացոյցն ոմանք և ձեռնարկութիւն կոչեցին 'ի մեզ ըստ յունին էպիչե՛րդաշ. այլ ձեռնարկելն 'ի մեզ նշանակե բուռն հարկանել, ձեռն 'ի գործ առնել, սկսանել, յօժարել. և յոյն ձայնդ այժմ՝ յատկացեալ է առ ազդ ինչ ապացուցի, զոր մեք փաստորդ կոչեցաք: Տես զտեղեկութիւնն 57:

56. Զպարծանս գիւտի շարաբանութեան կամ գէթ ըզկարգաց և զօրինադրութեանց արուեստին՝ Պարթէլլոմի գալլիացի, յՈւղեորութեան կրտսերոյն Անաքարսեայ, Արիստոտելի ընծայէ. իսկ թէ քանիօն շնորհապարտ առնա գտանիցի իմաստասիրութիւն յաշագս այնր գիւտի, ոչ գիւտեմ: Բնաւ անշահութիւն շարաբանութեան առհմուութեանցն գիւտո՝ յառաջագոյն ցուցեալ է 'ի 'լոքէ, վասն զի շարաբանութիւն յընդհանուր բանից առնէ ըսկիզբն՝ գալ անտի իշանել 'ի մասնաւորս. իսկ հմտութեանց հասանել ոչ է՝ բայց 'ի մասնաւորաց յընդհանուրս դնալով: Եւ 'ի ցոյց ճշմարտութեան, որպէս տեսաք վերադոյն, ընդդէմ բնաւորական կարգին գործէ. և հազիւ ուրեք թէ գտանիցի ոք որ 'ի խօսս կամ 'ի գիրս շարաբանականն վարեսցի ձեռով: Այն է նորա միայն պիտանութիւն, զի դիւրաւ յաղթահարեմք և նուաճեմք նովաւ զիսեռ և զինճացեալ միտս. զի 'ի հաւանել երկուց առաջնոց բանիցն, եթէ ուղիղ իցէ շարաբանութիւնն, ոչ ևս կարէ այնուհետեւ խոյս տալ յերրորդէն: Եւ ո գիտէ 'ի սոյն պէտու

իցէ զայն ճարտարեալ Արիստոտելի ընդ այն ժամանակու, յորս ընդ ամենայն աշխարհին Յունաց իմաստակացն եռային դասք : Սակայն և զայս օգուտ սորա հակաճառողբն արագ հնարեցան ունայնացուցանել . զի նրբին զանազանութեամբք գտին բիւր շաւիդ խուսափել պրծանել 'ի ձեռաց, այն ինչ մերձ 'ի բուռն անկանել թուեին . մինչև հակաճառութիւնն եղեւ առ նոսա իբրու ասել սրախաղութեան արուեստ քան կարգաբանութեան : Եւ յետ բազում հրոսելոյ մրցմանց և բախմանց և պաշտպանութեանց՝ սրանչելիք մեծ էին եթէ 'ի հետեւութիւնն ինչ երթեալ հասանէին : Բայց առաւել վնաս շարարանութեան առ ուղիղ իմաստասիրութիւնն այն եղեւ, զի ընկղմեալ առ հասարակ 'ի շարարանական արուեստակութեանցն ճարտարանս և 'ի բանակոիւ աղճատմունս զոր ընդ իւր բերէ, ոչ ևս պէտ արարին իմաստասէրք ոչ վերլուծութեան, ոչ դիտողութեան և ոչ փորձոյ : Ուստի և իմաստասիրութիւնն ընդ հարուստ դարս ժամանակաց 'ի շաղակրատ գուպարս բանամարտութեան ձայնից, 'ի փցուն և 'ի գետնաքարշնըութիւնս, 'ի մնավաստակ և յառանցեալ խնդիրս անշահից հողահեղձոյց թաղեցաւ :

57. * Գիտեմք զսա յոմանց տրամախոհութիւն կոչեցեալ, այլ անճահս . զի ամենայն ապացոյցք տրամախոհութիւնն են, այսինքն խորհուրդք մտաց . և նոցա արժան էր ևս խորութիւնն դնել ընդ այս ապացոյց և ընդ խորհուրդս մտաց, զոր սովոր են տրամախոհութիւնն անուանել : Մեզ հաճոյ թուեցաւ փաստորդ ասել զսա, առ ըգ-փաստն կից ունելոյն պատճառաւ : Հելլենական ձայնն է-պիշչը րորա անուն այսր ապացուցի, 'ի մեղ լսի ձեռնարկ, ձեռնարկումն, որ է 'ի ձեռն առնուլն, ձեռն միսելն, սկսանեն, յօֆարելն, որպէս ասացաւ 'ի ծօ :

58. * Ըստ որոյ կազմեալ է բառն եզառած, որ է միոյ առաջարկութեան ունակ . զոր և 'ի նախնեաց ունիմք փոխանակ այնր զոր Հնար ասացին յետինք : Կոյնպէս և զհետեւութիւնն ունանք եզրակացութիւնն ևս ասացին : Մեք, որպէս տեսաւ, ընդ նախնեաց եղաք եզառած և հետեւութիւնն, վամն յստակութեան : Զի ուր և գտանեմք յստակագոյն և վայելուչ և ընտանի ձայնս ըստ յատկարանութեան լեզուիս, առնումք անխստիր և անաշառ : Ծանուցանեմք ևս, զի յայս միտս պահեցաք զառաջարկութիւնն . բայց թուի մեղ, թէ զայս օրէն էր նախադասութիւնն կոչել, քան թէ զսոսկ բանն . վամն զի և այս իսկ է նախադասէալ կամ նախակարգեալ բան Praemissae . և առաջարկութիւնն է երկրաչափական Problema.

59. Զայս շարարանութիւն մարթ է և այսպէս կարգել . բուստք ունին բուն և ոստու . իսկ որոյ են բուն և ոստք՝ է

տունկ, ապա բուսատք են տունկքր: Զիարդ և կարգեսցի, յատուկ մեծագոյն է միշտ ընդհանուր բանն, Ամենայնի որոյ են բուն և ոստք, և տունկ:

60. Պատմի թէ ուս իմաստակիս ելեալ է երբեմն յանրակէն. կոչեցեալ Երովիլս վիրաբոյժ հաստատել զայն ՚ի տեղի իւր, խաղ առնէ զնովաւ՝ իւրով իսկ բանիւն, թէ անհնար է ուսոյդ խախտել՝ ՚ի տեղովչէն:

61. Տես զոր յաղագս այսորիկ ասացեալ է յէջ 211, 226:

62. * Աստանօր թուի մեզ թէ ոչ ուղիղ խորհի Սուաւէ, և ինքն ընդ անձին ոգորի. զի յօդաւորաւթիւն նիւթոյ և տարածութիւն ասել, նոյն է. և առ խոհականութիւն հարկաւ պարզութիւն պահանջի, և իմանի իսկ ՚ի բանի կարդեսեանց: Եւ եթէ հանգամանք ինչ միայն է նիւթոյ տարածութիւն, նոյնապիսի է և յօդաւորութիւնն. զի որ տարածուն ինչ է, նա և ՚ի մասանց յօդեալ է. և որ յօդաւոր մասամբք, նոյն և տարած ընութեամբ: Ապա ՚ի կարդեսեանցն բանի ոչ զայդ էր ասելի եղծումն սկզբան, այլ զայն զի հոգւոյ էութիւն զնեն վլոհականութիւն, ընդ որում և զպարզութիւնն հարկաւ. իսկ խոհականութիւն ոչ էութիւն կամ գոյացութիւն է հոգւոյ, այլ գործ և արդասիք հոգւոյ:

63. * Զայս մերն Դաւիթ ընդդիմայարակայութիւն կոչէ. այլ իցիւ թէ գոնէ չորիր մասն չորեքկանզնեան բառիդ իմաստո ինչ տայր:

64. Առ ժամանակօք առաջին տպագրութեան իմաստասիրական հրահանգաց՝ այս սովորութիւն կայր ՚ի բաղում դպրոց. այժմ խափանեալ թուի. բայց լաւ իցէ գիտել թէ զինչ էր, առ ՚ի տեսանել իրաւամբք մերժեցաւ թէ յանիրաւի:

65. Օրինակ իմն, եթէ ոք կամեցեալ հերքել զանմահութիւն հոգւոյ ասիցէ. Զիք ինչ ապացոյց ՚ի հաւաստիս անմահութեան հոգւոյ, ապա զուր կարծիք և թուելիք են. Զի որ ենն ապացոյցք, են որ ներքինք են և են որ արտաքինք. այլ երկորեան անօգուտ. ապա ոչ իւիք օրինակաւ անմահութիւն հոգւոյ ցուցանի. Վամն զի ներքինքն կամ ՚ի յառաջագունէ են և կամ ՚ի յետնագունէ. այլ ոչ ՚ի յառաջագունէ և ոչ ՚ի յետնագունէ ցուցանի անմահութիւն հոգւոյ, ապա անօգուտ են ներքին ապացոյցք. ՚ի յառաջագունէ ապացոյցք առեալ են ՚ի նմին իսկ ՚ի բնութենէ հոգւոյ. իսկ ՚ի բնութենէ հոգւոյ ոչ ելանէ անմահութիւն նորա, ապա ոչ ցուցանի այդ ՚ի յառաջագունէ. Զհոգին ՚ի բնէ պարզ համարին և անտի առնուն զանմահութիւն նորին. այլ հոգւոյ պարզութիւն չէ յայտ ամենեւին, ապա և ոչ անմահութիւնն. Պարզութիւն հոգւոյ ՚ի խոհական զօրութենէն առեալ է, այլ խոհականին զօրութեան ոչ է

հարկ պարզութիւն, ապա հոգւոյ պարզութիւն անյայտից իրք են : Կարգեաց սա այսպէս վեցեակ ապացոյցս, այլ այն զի՞ առնէ . զի ոչ ինչ աւելի ասաց քան թէ անմահութիւն հոգւոյ ոչ ծշմարտի ՚ինորին պարզութենէն, և սա ՚ի խոհական զօրութենէն . իսկ հաւաստիս առ այդ մատոյց և ոչ ինչ ամեննեին : Որչափ իցեն շարաբանօրէն ձեռվ ապացոյցք, որ զնոյնս նովիմբք յեղյեղեն անդադար, կամ չար ես. և մարթի նոցա ամփոփել ՚ի փոքու ևս քան զսոյն :

66. Իրբու զառաջինն ՚ի լոյս ել մատեանս, երկոքեան ա-

ռաջակայ յօդուածքդդ էին ՚ի. և ՚ի. զլուխը այսր պրակի.

բայց քանզի զոր ՚ինոսա հանդերձեալս եմք ասել՝ վարժա-

պետաց առաւել քան աշակերտաց է անկ, նմին իրի պատ-

շաճաւոր դատեցաք յերկրորդել տպագրութեանն հատա-

նել ՚ի կարգէ անտի, և իրբու յաւելուած զկնի յարել :

67. ՚Մի ՚ի հաղարաց նշանակեալ են ՚ի կարգիդ, այլ բաւական են միտս տալ քննողաց, զի թէ զայսոսիկ յազգս իւրեանց ձաղ և քրիջ առնենն եւրոպէացիք, որ յիւրեանց իսկ ելին և սովորեցին դարս յոլովս, նոցա զի՞նչ է ասելի, որ զօտար նորաձեռութեան տարագ ոտնիսթի յարամիի յիւրեանց հայրենի աշխարհն տեսանն մտեալ: Եւ եթէ առ նոսա տասն իցեն այնպիսի անլուր և խժական բառք, դպրոցական և Հակաճառից ոճոյն մնացորդք, առ մեզ հարիւր գտանիցին . վասն զի և հանդէալ բազում ընտանի և վայելուչ ձայնից՝ նոցա լեզուին, զհակառակն գտանեմք՝ ՚ի մեզ եղեալ յումանց օտարոտիս և դժուարալուրս առանց հարկի, զօրս յընտիր և ՚ի հայեցի շարագրածս ոչ ոք համարձակի առնուլ ՚ի կիր . ուստի և մեք աւելի ինչ քան ըզ- Առաւեն հարկեցաք ուրեք ուրեք՝ ՚ի մեզ ստգտանել: Եւ որ չառնու ոք ՚ի մէնջ ՚ի կիր զայն ձայնս, ՚ի հարկէ զհաւասարն գտանէ ՚ի լեզուին, զօրս վարէ փոխանակ նոցա. զի ոչ եթէ յերիկէ և յեռանդէ սկսաւ խորհել և իմաստասիրել լեզուն հայկական: Ապա ուրեմն կան ՚ի նմա այլ ընիկ ձայնք վայելուչք և հաւասարը օտարութեացն. բայց յումանց, որոց վկայեմք և պարծիմք ևս զի չգտանի ինչ ՚ի մեզ համեմատ, վասն անհնարին մնոտի նրբութեանն և այլանդակ մտածութեանն, որոց վասն ստեղծեալ են: Քանզի բազում բառից անշահութիւն և խորթութիւն յանշահից և ՚ի մնոտեաց և յանհեղեղ մտածութեանցն յառաջ են եկեալ. և զի՞ ընաւ պէտք են մեզ անշահիցն, և զի՞նչ հարկ այնուհետեւ բառիցն: Ոչ ոք, կարծեմք, պատիւ համարեսոցի չնչից և վեսասակարաց նախանձաւոր լինել, և ուսմնական անուամբն զոգեղութիւն նոցա բարեքել:

Այլ յետ այնքան ինքնօրէն աղատութեան, կարծեալ լեզուն այն ուսմնական դոնէ ծշդութիւն և որոշումն ու-

Նիցի բառից ըստ իւրաքանչիւր գաղափարաց· բայց չեհաս
և ոչ այնմ, որպէս ինքնին տեսանէ մոտադիր ընթերցողն։
Եւ վկայ առ ձեռն են բառքն որբաժանուած ան ինչպա՞ն, որը առ մու-
խական ինչպա՞ն, որ ու ան ինչպա՞ն, դրա ինչպա՞ն, բայց առ ինչպա՞ն, ինչ գտնաւած ինչպա՞ն, այս մտածուած ան ան ինչպա՞ն, առ առ առ ան ինչպա՞ն, գուշակ ան ինչպա՞ն, օքը առ ինչպա՞ն,
ինչը, եղաքառ ինչպա՞ն, ուստի մտածուած ան ինչպա՞ն, առ առ մտ-
ածուած, և ան ինչպա՞ն, ան ինչպա՞ն դրա առ առ ինչպա՞ն, արութուուիլ, «որ առ քո-
րութել, մոխուսիւր ան ինչպա՞ն, մոխուսիւր ան ինչպա՞ն, և այլք յոլովք·
յորոց ոմանք այլ և այլ իրս նշանակեն՝ ինմին ուսման, և
ոմանք ոչ զոր պարսն է ճշդիւ ցուցանեն։ այլք ըստ բուն
ձայնից լեզուին՝ որ մշտնջենաւոր է՝ այլ ինչ նշանակեն, և
այլ ինչ ամենեին և օտար իմաստու տան ըստ միտս և ըստ
կամս գրողին, որ այսօր է և վաղիւ չերեկի։ և կեսք այլ և
այլ ձայնիւք զմի և նոյն յայտ առնեն՝ ի բուն լեզուին, իսկ
յուսմանն զանազանին՝ զգիտեմք որպէս։ Են ևս որ ոչ ինչ
բնաւ նշանակեն, և սոցա առաւել շնորհակալ եմք, զի առ
անիմանալի գորդյն ոչ ոք թերեւս այսուհետեւ վարեսցի նո-
քօք ՚ի խանգարումն լեզուին, և զի անգունողացն իւրեանց
սակաւ աշխատութիւն հասուցանեն։

Ահա այսպէս եղեւ առ մեզ և առ այլո՛ առանց հարկի և
՚ի յայտնիս անգամ՝ յերկուս բաժանել լեզուաց, ՚ի սովորական և յուսումնականն ասացեալ. զոր այժմ Եւրոպէ
համօրէն՝ ՚ի բաց խափանել կամ յստակել ջանայ։ Աղաչի
ընթերցողն մեր վերստին յակն արկանել և որոճալ զիա-
խաշաւիդ բանական արուեստիս, զերկուս պլուիս մոլո-
րութեանց՝ որ մօտ ՚ի վախճան առաջին գրոցն, զերկրորդ
գլուխ առաջին պրակի երկրորդ գրոցս, զյաւելուած եր-
րորդ պրակին, և զտեղեկութիւնն 27, 45, 46, 47, 53,
57, 58։ Այս ամենայն յայտնի է որք առանց ակնառու-
թեան զիրս քննիցեն։ Սակայն որպէս մեր իսկ ինքնին
յանձինս մեր վկայեմք, ոչ ումեք ՚ի բարենախանձ և հայ-
րենասէր վաստակաւորացն է այս մեղ, քաւ մի լիցի, որոց
ոչ ինչ են պարսաւանք յայնքան աշխատանսն յովնել եր-
բեմն, զի ննջէ երբեմն և քաջն Հոմերոս, ասէ առակն,
այլ ժամանակին, որ ոչ ինչ զիտէ փութով և առ ժամայն
առանց բազումք գթելց ՚ի կատարումն ածել։ իսկ ՚ի լաւն
փոփոխութիւն ոչ եթէ ստգիւտ ինչ լիցէ, այլ մանաւանդ
գովութիւն։

Ի յեղյեղուկ յայսմ աշխարհի անկայուն,

Դարձք խորհրդոց միտք են յաճախ հաստատուն։

Յնառու է. 5:

68. * Աեքստոս, ներհմտականն կարդացեալ, ըստ իւ-
րում պիւռոնական իմաստակութեանն կամեցեալ ցուցա-

նել զազդ իւր և զաշխարհ, Ես, ասէ, ոչ գերմանիկ եմ,
ոչ հռուոմ, ոչ թերայիտ, ոչ Հնդիկ, ոչ եգիպտական, ոչ
սարմատ, ոչ սկիւթային, ոչ պարսիկ, ոչ թրակ, ոչ ասու-
րի, ոչ սպարտիատ, ոչ գետուլբան, ոչ կիլիկեցի և ոչ
լիբէացի: Որ կարողն է իմասցի զինչ երն: Զիդջ է մեզ
յայնքան առատութեան պատին չտեսանել «Ն մի և Հայոյն
շնորհեալ: — Զայս յառնէ իմաստափրէ եղաք օրինակ,
թէ ոչ յաւելեաց ինչ և վայրապար ազդ առնէ խրասն
Առաւեի:



ԳԵՐԶ

ՅԱՆԿ ԳԼԽՈՅ

Թագուհ Հայունի շն առ ընթերցական	5
Յառաջաբան մատուցութիւն	7

ՀԱՄԱՍՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏԱՍԻ- ՐՈՒԹԵԱՆ

ԳԼ. Ա. Խաչարութիւն նախնի ապանց	40
Քաղաքացաց	—
Պարսից և Հայոց	42
Արտիուց	43
Եփեալուցաց	—
Հրեեց	44
Փեանիէցաց	45
Հնդից	46
Ճենաց և այն այնէցաց	—
Ենուանաց, մարտի առանցաց, նրանցաց, ուիւթեացաց և իւղացաց	47
ԳԼ. Բ. Հին իւրաքանչիւն թիւն Յանցաց	48
Յանցանիւն իսմայիլան դպրոց	49
Սովորութեան դպրոց	20
Մեծարեան զանոց	22
Եւստանիւն և երսանիւն զանոց	25
Անուրիւն մեան զանոց	—
Ճենացիւն իսմայիլ առանց պատեան զանոց	25
Կինուիւն իսմայիլ զանոց զանոց	27
Սույնիւն զանոց	—

կիւ-ըեւեւեւան	29
Եղիւիւրեւան	—
ԳԼ. Գ. Խմուտուտիւնիւն և սինուց լուսուլիս	54
Պիւ-նուդուրեւան	—
Ելուտիւն	54
Պիւ-սունեւան և սիւուրիւն	56
Յուլուդ	57
ԳԼ. Դ. Յուլուդ ընորուսունուց	59
ԳԼ. Ե. Յուլուդ պլուտունուց իրսէրաց կամ յաւանուց .	41
ԳԼ. Զ. Անցանել է մոսուսունիրունեւան	42
կամ սուբունուց	42
ԳԼ. Է. Խմուտուտիւնիւն Պարուսուխունուց	44
ԳԼ. Ը. Արագիւն նորուդուրեւան իւսուսուսունեւան .	49
ԳԼ. Թ. Երիւրդ նորուդուրեւան իւսուսուսունեւան .	52
ԳԼ. Ժ. Երիւրդ նորուդուրեւան իւսուսուսունեւան .	53
Տեղիւնունեւան	67

ԱՐ ՈՒ ԵՍ ԲԱՆ ԱԿ ԱՆ

ԿԱՄ

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Նախալուստել	75
-----------------------	----

ԳԻՐՔ Ա.

Օրեն + ժամեւը և ժանաւը պահութեւան	80
---------------------------------------------	----

ՊՐԱԿ Ա.

Առանուն + կամ պօքունիւն + և դուրծ + հու- ժուն	82
ԳԼ. Ա. Զօրունիւն պիտուս և մուտեւը	85
30Դ. Ա. Զիւլ	—
Բ. Արագիւն	85
ԳԼ. Բ. Զօրունիւն մանաւլուս և ըսկուլուս	86
30Դ. Ա. Ճանաւը	—
Բ. Ցէւլ	88

Գ. Լ.	Գ.	Զօրսութիւն էամելոյ և ժորժելոյ	90
30Դ.	Ա.	Կամել	—
	Բ.	Գործել	94

ՊՐԱԿ Բ.

Գ. Լ.	Գ.	Գաղափար + և քանօթնութիւն +	95
Գ. Լ.	Ա.	Գաղափար + և քանօթնութիւն + ըստ բնու- թիւնն իւրեանց	94
30Դ.	Ա.	Նէտրութիւր + և առնեխորագութիւր +	—
	Բ.	Պարզ + և օգուստութոց +	95
	Գ.	Անցնութար + և առնեխոնցութար +	96
	Դ.	Առանութար + և ըստհանութար +	97
Գ. Լ.	Բ.	Գաղափար + և քանօթնութիւն + ըստ պես- թիւնն առաջ	98
30Դ.	Ա.	Պայշտու + և սպօդու +	99
	Բ.	Յարուի + և վարուի +	—
Գ. Լ.	Գ.	Գաղափար + և քանօթնութիւն + ըստ իրացն պարագաների մասն առանձին	101
30Դ.	Ա.	Կատարելու + և առնեխորար +	102
	Բ.	Ճշբերելու + և վերիվերելոց +	105
	Գ.	Հարուստիւր + և մոռածիւր +	104
	Դ.	Ճշբորիւր + և օսկորիւր +	105

ՊՐԱԿ Գ.

Գ. Լ.	Ա.	Հարուստ է առնեն + , զանոն զանոն առնեն + նոցին , և օրենու + գինու պի հաս առնու զանու առնեն + նոցա- կամու ար առ գի առ նենուն , սր կ առ զանու առնե- նեն	107
Գ. Լ.	Ա.	Հարուստ է առնեն + սր ին ժողովի մի և սր սաւացին + , սր սաւացին մի և սր մարտութիւն մի	108
Գ. Լ.	Բ.	Սաւացի , հասանական և երիտակի հայուն նենուն +	110
30Դ.	Ա.	Յարուի նզանու + սր առ գի առ նենուն , իսրայելոց և երիտակու առ նենուն	—
Գ.	Պարզ մասն + սր առ գի առ նենուն , իսրայելոց և երի- տակու առ նենուն	112	

ԳԼ.	Պ.	Զար սպասութիւն և համար առաջ մատուցութիւն	146
30Դ.	Ա.	Զար սպասութիւն մատուցութիւն իրաւուց ։	—
	Ա.	Անձնելու համար գոյացութիւն մատուցութիւն	147
	Բ.	Եվ ելու համար գոյացութիւն մատուցութիւն	149
	Բ.	Զար համար առաջ մատուցութիւն մատուցութիւն իրաւուց ։	121
	Պ.	Զար համար առաջ մատուցութիւն և համար առաջ մատուցութիւն կամ բարձրացութիւն իրաւուց ։	125
	Դ.	Զար համար առաջ մատուցութիւն և համար առաջ մատուցութիւն կամ բարձրացութիւն իրաւուց ։	125
	Ա.	Անձնելու մատուցութիւն և առաջ մատուցութիւն, առաջ մատուցութիւն և անձնելու մատուցութիւն, առաջ մատուցութիւն և անձնելու մատուցութիւն	126
	Բ.	Եպոյն մատուցութիւն	127
	Պ.	Համար առաջ մատուցութիւն + առաջ մատուցութիւն	128
	Դ.	Համար առաջ մատուցութիւն + առաջ մատուցութիւն	129

ՊՐԱԿԻ Դ.

		Համար մատուցութիւն + պարզ մեջ պարզ առաջ մատուցութիւն, և համար առաջ մատուցութիւն + դիմում առաջ մատուցութիւն	131
ԳԼ.	Ա.	Համար մատուցութիւն + գոյացութիւն և համար գոյացութիւն առաջ մատուցութիւն իրաւուց ։	—
ԳԼ.	Բ.	Համար մատուցութիւն + գոյացութիւն և համար գոյացութիւն իրաւուց իրաւուց իրաւուց ։	153
30Դ.	Ա.	Համար օպուր առաջ մատուցութիւն գոյացութիւն պարզ մեջ առաջ մատուցութիւն	—
	Բ.	Կարու խոր օպուր + առաջ մատուցութիւն պարզ մեջ առաջ մատուցութիւն	157
	Պ.	Վարչ իրաւուց +	140
	Դ.	Ի դեպքու գոյացութիւն +	444
ԳԼ.	Պ.	Համար մատուցութիւն + համար մեջ պարզ առաջ մատուցութիւն	146
30Դ.	Ա.	Եպոյն մատուցութիւն և առաջ մատուցութիւն	—
	Բ.	Քառականք	147
	Պ.	Պարզ մատուցութիւն և գոյացութիւն	148
	Ա.	Երեւան պարզ մատուցութիւն ինքնորդ երեւան պարզ մատուցութիւն	—
	Բ.	Երեւան պարզ մատուցութիւն գոյացութիւն պարզ մատուցութիւն	149
	Գ.	Առ ընդ + համար կամ առ օգլ օպուր մատուցութիւն	—
	Ո.	Պարզ մատուցութիւն դրա օպուր մատուցութիւն +	151

Գուրք + աղաց պատմական սեղանին	455
Գ. Պատմական սեղան	454
ԳԼ. Գ. Վերջութեան պրակիս, և «մ հանուր գնեաւ լեւան	456

ՊՐԱԿԻ Ե.

Հայութեան + զար շաբախ սահմանին, և մաս ըստ դաստիարակին	458
ԳԼ. Ա. Մաստիարակին իր +	—
ԳԼ. Բ. Արդիւն + իրաց կամ դարձ +	459
30Դ. Ա. Վիս +	460
Բ. Պատմական սեղան	465
Գ. Ցէլապատմանին +	464
Դ. Աւանդութեան	466
ԳԼ. Գ. Վայերստական սեղան իրաց և յիշապատման սեղան	467
ԳԼ. Ե. Թարժի մասաւ սեղան իրաց	469
ԳԼ. Զ. Կարդ իսմ ամ սահման	474

ՊՐԱԿԻ Զ.

Մալրաւ սեղան +	474
ԳԼ. Ա. Մալրաւ սեղան + բանիւ վայրելց	—
ԳԼ. Բ. Մալրաւ սեղան + սաւիւ վայրելց բանիւ	480

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՒԴ

Օրեն + սահմանիւ լուս և սահմանիւ լուս զարդարութեան	485
Եմիսաղանիւ	—

ՊՐԱԿԻ Ա.

Բարտ +	487
ԳԼ. Ա. Աղք + բարեկց, և իսրեարաբիցին իրացաւ նել պիտուր մատոց	488

ԳԼ. Բ.	Պետական բարգավաճառից բարեկա ըստ Հայու- ժառեց	490
ԳԼ. Գ.	Պետական և պահպանական իսկ պեղպահութեա բա- րեց	492

ՊՐԱԿ Բ.

	Բան	494
ԳԼ. Ա.	Բարդ և պարզ բան, գլուխուր և եկամուռ	496
ԳԼ. Բ.	Բարդաւաճառից իսկ իստուա բան	499
ԳԼ. Գ.	Բան + որ ըստ բարդ և ըստ բարդաւաճառից այսինքն և այսպիս պեղպահութեա + և պահ- պահութեա	201
30Դ. Ա.	Պայմանագր բան +	202
	Բ. Պարզելեա բան +	205
ԳԼ. Դ.	Աշխատական ըրաք և առանք բանի, այս և հասարակական իսկ, ժիշտական, ընդհանուր, ժամանակական և եղանակական բան +	205
ԳԼ. Ե.	Ընդունի մասի բան +	206
ԳԼ. Զ.	Աշխատաբար իսկ շրջանակ բան +	207
ԳԼ. Է.	Աշխատա պահանջանական իսկ առանք բանի՝ մասնաւոր ըստ երիքալտեց	209

ՊՐԱԿ Գ.

	Ապացուց +	211
ԳԼ. Ա.	Շարաբն անուանիւն, եղանակ և փառարդ	212
30Դ. Ա.	Շարաբն անուանիւն + ուստի հասարակ	215
	Բ. Պարզ զարդարութեա իսկ շրջանակ բան +	214
Գ.	Զարաւոր այսինքն + իսկ ժեւ + ստուգական իսկ առանք ժամանակ + և այլքն	216
Դ.	Խառնակ զարդարութեա իսկ առանք	220
	Ա. Կարգութեա +	—
	Բ. Շարաբն անուանիւն +	221
	Գ. Աշխատաբար իսկ	—
Ե.	Զի իսկան զարդարութեա իսկ շրջանակ հասա- րակաց օրէնք + պարզեցն են	222
Զ.	Եղանակ	225
Է.	Փառարդ	224

ՑԱԽԵԼՈՒԱԾ

ՕՐԵՆ+ ՀԱՐԱԲ անու-թիւն ըստ Համբաւուից 226

Գ.Լ.	Բ.	ԵՐԻԿԱՅՐ անու-թիւն, համբաւուրդ անու-թիւն, մականութիւն և յարացոց	254
30Դ.	Ա.	ԵՐԻԿԱՅՐ անու-թիւն	—
	Բ.	ՀԱՄԱԲՈՐԴ անու-թիւն և բազմաբորդ անու-թիւն .	255
	Գ.	ԱՐԵՎԱԿ անու-թիւն և յարացոց	255
	Դ.	ԹԱԿ ամենացն ապէտի ապէտի ապացոց + ինիքն ի լարաբանու-թիւն	256
Գ.Լ.	Գ.	ԱՐԲԵՐ + աղացոց ցից	257
30Դ.	Ա.	Աղացոց + գոյսու-թիւնն և անհայու-թիւնն իր և բարձոյ	259
	Ա.	Գոյսու-թիւն իրաց և բարձոյ	—
	Բ.	Անդայու-թիւնն իրաց և բարձոյ	242
	Բ.	Աղացոց + համադաստանոց իրաց	244
	Գ.	Աղացոց + համամատանու-թիւնն իրաց	245
	Դ.	Այշ և աղբեր + մենացն ապացուց ցից	246

ՊՐԱԿ Գ.

Ի.	ՀՎԱՅԱ առ ի առ թիւն +	249	
Գ.Լ.	Ա.	ԻՎԱՅԱ առ ի առ թիւն + բառակցից	250
Գ.Լ.	Բ.	ԻՎԱՅԱ առ ի առ թիւն + ի մաս որից	252

ՊՐԱԿ Ե.

Ա.	Ա կ մ ա բ ա ն ո ւ - թիւն +	258	
Գ.Լ.	Ա.	Համաօսու կարդ ամենացն վեճաբանու-թիւնոց .	—
Գ.Լ.	Բ.	Աղբ աղբ վեճաբանու-թիւնոց	261
Գ.Լ.	Գ.	Դիպակուցն օրինակի վեճաբանու-թիւնն ի հա- մաս օրին պահապահու-թիւն	264

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ա.	Առաջնական և հիմնական գլուխութեան + 'ի վարժ էսմ' 'ի փոքը համարնակաց	266
30Դ.	Ա. Առաջնական գլուխութեան վեհան + 'ի վարժ համար բարեկաց	—
Բ.	Համարնակաց գլուխութեան վեհան + 'ի փոքը համարնակաց	269

ՊՐԱԿ Զ.

	Ոչ	274
ԳԼ.	Ա. Շաբաթական սմ	—
30Դ.	Ա. Սահման	276
Բ.	Բայց առաջ մուտքածու	280
Գ.	Առաջ +, խորիք +, հայեցազուական +, առաջ զարդարեան +, և այլն	282
ԳԼ.	Բ. Վերլուաշական սմ	284
ԳԼ.	Գ. Բայց առաջապատճեան լորտորական և վերլու- աշական սմոյ	286
ՏԵՂԵԿԱՆԱԿԱՆ	294	

ՎՐԻՊԱԿԻՔ ՏՊՈԳԸՒՄ

Էջ	ՏՈՂ	ՄԽԱԼ	ՈՒՂԻՔ
39	5	ազգ աղանդոց	ազգ ազգ աղանդոց
45	55	իրներիոս	իրներիոս
124	5	լինիմք թէ գոյ	լինի թէ գոյ
126	2	բազմաւորութիւն և աննմանութիւն	բազմաւորութիւն, նմա- նութիւն և աննմանութ-
240	59	կիճք	կուճք
285	15	անունեալ	անուանեալ
299	24	զօր	զօր
500	2	ի բժշկականեան	ի բժշկականին

ԱՐԴԻՇՏԱՆ ՊՐՈՊՐԵԼ

	ՏԸՆ	ՀԸՆ	ՋԸՆ	ՔԸՆ
Արմավազ գույքը		արմավազ գույք 6	08	
Անդրեասի		անդրեասի 15	15	
Առ Անդրեասի		առ անդրեասի 5	12	
Առ Անդրեասի անձնականությունը		առ անդրեասի անձնականությունը 4	09	
Առնելունին և Հայոց պատ		առնելունին և հայոց պատ		
Առնելունին և Հայոց պատ		առնելունին և հայոց պատ	08	09
Առնելունին և Հայոց պատ		առնելունին և հայոց պատ	11	162
Առնելունին և Հայոց պատ		առնելունին և հայոց պատ	12	068
Առնելունին և Հայոց պատ		առնելունին և հայոց պատ	2	005

0025631

